

ՏՈՒՐԹ՝ ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

**ՅԱԻԵՐԺԻ  
ՃԱՄԲՈՒ  
ԿԵՐՏԻՉՆԵՐԷՆ**

ՊԵՅՐՈՒԹ - 2014

32 (47.925)  
8-59

Արևիկա համալսարանի Գրադարանի  
հշ,

Վոլոճ. Զ. Օրդոճյան  
հուն. 25/7/2017

ՏՈՒԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

2845

# ՅԱԻԵՐԺԻ ՃԱՄԲՈՒ ԿԵՐՏԻՉՆԵՐԷՆ

-Ա.-

Հրատ. Ս.Դ.Հ.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄՆԻ

ՊԵՅՐՈՒԹ - 2014

---

## ՈՐՊԷՍ ՆԱԽԱԲԱՆ

---

Հայ ազգային-ազատագրական պայքարի տարեգրության մէջ, 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի փուլն առանձնայատուկ տեղ ունի: Այն, անկախ ունեցած արդիւնքներից, հանդիսանում է հայ ազատամարտի բարձրակետը եւ կազմում է հայոց պատմութեան նոր ժամանակաշրջանի առանցքը: Այդ փուլի հետ անբաժանելիորէն կապուած են մեր ժողովրդի կեանքում շրջադարձային նշանակութիւն ունեցած խնդիրներ՝ Հայկական Հարցի արծարծում, հայրուկային շահժում, ազգային կուսակցութիւնների գործունեութեան սկզբնաւորում, համահայկական մտածողութեան ձեւաւորում եւայլն:

Վերոյիշեալ պատմափուլի հետ է առնչում նաեւ հայ աւանդական կուսակցութիւններից Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան ստեղծման ու բուն գործունեութեան հիմնախնդիրը: Հայ ազգային-քաղաքական պայքարի պատմութեան մէջ հնչակեաններն ունեն իրենց պատուաւոր ու ծանրակշիռ տեղը: Յատկանշական է, որ ի թիւս տուեալ ժամանակաշրջանում հայ հասարակութեանը յուզող գլխաւոր նպատակի՝ Հայկական Հարցի լուծման, այն է՝ արեւմտահայութեան ազատագրութեան, հնչակեաններն իրենց ծրագրային փաստաթղթերում տեսնում էին նաեւ մեր ազգի գերնպատակը՝ նրա երկու հատուածների միաւորումը եւ հայոց պետականութեան վերականգնումը: Պատահական չէ, որ իր գործունեութիւնն սկսելով Ֆիդայական կռիւներից, գլխաւորելով (կամ աշխուժօրէն մասնակցելով) հայ ազատամարտի մի շարք յայտնի գործողութիւններ՝ ապստամբական ու վրիժառական քայլեր, ցոյցեր, ինքնապաշտպանական մարտեր, կամաւորական շարժում եւ այլն, Հնչակեան Կուսակցութիւնը 1920 թ. Օգոստոսին նշանաւոր ազգային գործիչ Միհրան Տամատեանի գլխաւորու-

թեամբ փորձեց կեանքի կոչել իր ծրագրային դրոյթը՝ Կիլիկիայում հռչակելով հայկական հանրապետութիւնը:

Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան անցած ուղու, նրա փառահեղ գործիչների գործունեութեան մասին լոյս է տեսել ահռելի գրականութիւն: Հրատարակուել են բազմաթիւ յօդուածներ դեռ 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի մամուլում, մասնաւորապէս հնչակեանների պարբերականներում, յետագայում ստեղծուել են մնայուն մենագրութիւններ եւայլ: Այդ կարելոր ու շնորհակալ գործին տարիներ շարունակ նուիրուել է նաեւ լիբանանահայ հասարակական-քաղաքական գործիչ, Լիբանանի խորհրդարանի նախկին պատգամաւոր Եղիկ Ճերճեանը: Բացի Յնչակեան Կուսակցութեան եւ հայոց նոր պատմութեան կարեւորագոյն այլ դրուագները լուսաբանող ամբողջական աշխատութիւնների հրատարակումից՝ նա տարիներ շարունակ զբաղուել է (այժմ էլ շարունակում է ջանադորեւ զբաղուել) նաեւ հնչակեան նշանաւոր անհատ գործիչների մասին ուշագրաւ գործերի ստեղծմամբ: Կենսագրութիւնների այս շարքը, Եղիկ Ճերճեանը գրել է ՄԴ Յնչակեան Կուսակցութեան 125 ամեակին առիթով եւ դրանք հերթաբար լոյս են տեսել 2012-13 թուականներին Պէյրուսի «Արարատ» օրաթերթում «125 Ամեակի Կերտիչներէն» ընդհանուր խորագրի տակ:

Ինչպէս գիտական, այնպէս էլ ընթերցող լայն շրջանակներում բարձր գնահատականի են արժանացել ազգային նուիրեալ գործիչներ Պանդուխտին եւ այլոց նուիրուած Եղիկ Ճերճեանի աշխատութիւնները: Մեծ հետաքրքրութիւն են առաջացրել նաեւ հայերէնով ու արաբերէնով փանթիւրքիզմին՝ համաթուրանակաւորութեան, օսմանեան յեղափոխութեան, Առաջին Աշխարհամարտի նախօրեակին Հայկական Հարցի արժարծումների թեմաներով նրա գործերը: Ներկայ դեպքում հեղինակն ընտրել է այլ տարբերակ, ստեղծել է հնչակեան նուագ ու շատ անգամ անյայտ գործիչների գործունեութիւնը լուսաբանող կենսագրական ակնարկների ինքնատիպ ժողովածու: Կարծում ենք, այս տարբերակը եւս խիստ շահեկան է, քանի որ հայ ազատամարտի դարաշրջանից որքան հեռանում ենք, այնքան պատմական իրադարձութիւնների ու ազգային դէմքերի մասին նիւթը հետզհետեւ աւելի ու աւելի է յայտնուում ժամանակի փոշու տակ, դառնում դժուար յայտնաբերելի եւ ի վերջոյ անդառնալիքով կորչում է:

Ընթերցելով սոյն գրքոյկում տեղ գտած ամեն մի հնչակեան գործի կենսագրականը, աւելի ու աւելի ես համոզում, որ նրան-

ցից իւրաքանչիւրն իր հնարաւոր ու ուրոյն ներդրումն է ունեցել հայ ազատագրական պայքարի պատմութեան մէջ, թոյլ է տուել ժամանակաշրջանի դժուարագոյն իրավիճակով թելադրուած անխուսափելի վրիպումներ ու խոտորումներ, այրուհանդերձ, դարձեալ արժանացել է հայ ազգային գործիչների շարքին դասուելու պատուին: Յաճախ հանդիպում ես գործիչների, որոնց մասին գիտական գրականութեան մէջ բնաւ որեւէ յիշատակութիւն չկայ: Այսպէս, տարիներ շարունակ Ջաւախքի պատմութեամբ զբաղուող պատմաբանիս համար իսկական յայտնութիւն էր ախալքալաքցի նշանաւոր Օհանջանեանների տոհմից Յնչակեան Կուսակցութեան մէջ, մասնաւորապէս Արեւմտահայաստան զենքի տեղափոխման գործում կարելոր դերակատարութիւն ունեցած Յարութիւն (Արթիւր) Օհանջանեանի մասին նիւթը: Անկասկած, նմանատիպ նորայայտ նիւթերը շատ են եւ կարելոր աղբիւրագիտական նշանակութիւն կ'ունենան հայ հետազօտողների ուսումնասիրութիւնների համար:

Ուշագրաւ է, որ առանձին դեպքերում էլ ներկայացուած են այնպիսի գործիչներ, որոնց մասին կայ ստեղծուած բաւական ստուար գրականութիւն. օրինակ՝ Պանդուխտ, Մխո Շահէն, Հայկ Բժշկեան եւ այլք: Բայց տուեալ կենսագրականում տեղ են գտել նորայայտ փաստեր, որոնք լոյս են սփռում տուեալ գործի անցած ուղու վրայ եւ աւելի ամբողջացնում նրա յեղափոխական կերպարը:

Ամփոփելով մեր հակիրճ խօսքը ժողովածուի մասին՝ ընդգծենք, որ այն մեծապէս կ'օգնի մասնագետներին, ընդհանրապէս հայ ազատագրական պայքարի պատմութեան ընդհանուր խորապատկերի վրայ Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան Կուսակցութեան ունեցած տեղն ու դերը ճիշտ հասկանալու եւ գնահատելու համար: Յուսանք, որ յարգելի Եղիկ Ճերճեանը նմանտիպ երկերով յառաջիկայում եւս կը շարունակի հայ ազատամարտի պատմութեան էջերի լուսաբանման շնորհակալ գործը:

#### Աշոտ Մելքոնեան

Պատմագիտութեան դոկտոր, պրոֆեսոր  
ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէն  
Երեւան, 12.09.2013

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

**2012** թուականին, ՍԴ Հնչակեան Կուսակցութիւնը

թեւակոխեց իր հիմնադրութեան 125-րդ տարին: Դիրին չեղան անցնող տարիները: Անոնք յատկանշուեցան պայքարներով, մարտնչումներով, զոհաբերութիւններով: «Բանտ ու աքսորանք, զնդակ ու զնդան եւ մատնութիւններ, տեռորներ անվերջ»ի այդ ճամբուն վրայ, տասնեակ հազարներ, հայրենիքին ու ժողովուրդին նուիրաբերումի իրենց երդումը տուին Հնչակեան դրօշին վրայ:

Նոյն գաղափարին շուրջ բոլորուած, սակայն տարբեր կարողութիւններով եւ տարբեր յատկանիշներով օժտուած նուիրեալներ էին անոնք: Անոնց շարքերէն ծնան հայոց պատմութեան ծանօթ շատ պայծառ դէմքեր՝ մտաւորական թէ քաղաքական, գաղափարախօս թէ մարտական, կազմակերպիչ թէ ֆետայի: Հայոց նորագոյն պատմութեան քիչ թէ շատ ծանօթ ունէ մէկը, դժուար թէ գաղափար կազմած չըլլայ Աւետիս Նազարբէկեանի, Ռուբէն Խանազատի, Ստեփան Սապահ Գիւլեանի, Մեծն Մուրատի, Աղասիի, Փարամազի, Հայկ Բժշկեանի եւ նմաններուն կատարած ժողովրդա-նուէր գործին մասին: Այս կարգի անունները արդէն իսկ անցած են հայոց պատմութեան՝ իսկ ոմանց անունները, նոյնիսկ այլ ժողովուրդներու պատմութեան էջերուն:

Սակայն, 125 տարիներու վրայ երկարող վիթխարի գործը, քանի մը տասնեակի ուսերուն չէր ծանրացած միայն՝ ինչքան ալ մեծ ըլլար անոնց նուիրաբերումի ոգին: Հարիւրաւորներ էին անոնք, որոնք նոյն գաղափարէն ներշնչուած, նոյն հաւատքով տոգորուած

քալեցին արեան եւ հուրի նոյն ճամբաներէն: Անոնցմէ ոմանց անունը հազիւ կը յիշուի այսօր. ոմանց անուան ալ կը հանդիպինք խունացած արխիւներուն մէջ միայն: Մինչդէռ, անոնցմէ իւրաքանչիւրին մասին գոյութիւն ունեցող տեղեկութիւնները հաւաքելու եւ նորերը յայտնաբերելու առաջին փորձն իսկ կ'աղաղակէ, որ անոնց կատարած գործը արժեւորելու տեսակետէն մենք շատ անարդար գտնուած ենք. մեղանչած ենք պարզապէս:

Այս մտորումները պատճառ եղան, որ ՍԴՀԿ 125 ամեակը յարմար առիթ նկատենք, մեր եւ ընթերցողներուն ուշադրութիւնը վերստին բեւեռելու անոնց վրայ: Ծնաւ «125 Ամեակի Կերտիչներէն» յօդուածաշարքը: Առանց չափազանցութեան կրնանք հաստատել թէ յօդուածաշարքը գտաւ ակնկալուած ընդունելութենէն շատ աւելին: Տպագրուած իւրաքանչիւր կենսագրութենէ ետք, ընթերցողներ կը դիմէին որեւէ հարցի մասին յաւելեալ բացատրութիւն կամ մանրամասնութիւններ իմանալու փափաքով: Ուրախալին այն էր, որ այս հետաքրքրութիւնը հանդէս բերողներուն մէջ բաւական մեծ էր երիտասարդներուն թիւը՝ որոնց մօտ պատմական գիտելիքները շատ նախնական էին: Ու այս հանգրուանին ալ, բարեկամներու եւ ընկերներու յուշումներով, ծնաւ յօդուածաշարքը հատորի մը վերածելու գաղափարը:

Անուններու այս շարքը, որոնց կենսագրութիւնները կը տրուին, յատուկ սկզբունքի մը հիման վրայ կազմուած է: Այդ, երկար անլանացանկի մը մէկ մասն է միայն: Պարզապէս, այս անուններուն քիչ թէ շատ ամբողջական կենսագրութիւնը, օրաթերթի մէկ էջի սահմաններուն չափով, աւելի արագ կարելի եղաւ պատրաստել: Մինչդէռ շատ թանկագին անուններ, ինչպիսիք են Միհրան Գայեան, Մոզպետ (Մելքոն Ասիլբէկեան), Արծուիկ (Տիգրան Յարութիւնեան) եւ բազմաթիւ ուրիշներ տեղ չգտան այս շարքին մէջ, որովհետեւ անոնց մասին ձեռք բերուած տուեալները ամբողջական չէին, տակաւին կային կենսագրական «բացեր» կամ հակասութիւններ, որոնք պետք էր յստակացնել: Ուստի, սկսուած այս աշխատանքը կը շարունակուի եւ հաւանական է որ պարբերաբար, տարբեր առիթներով, լոյս տեսնեն նոյն սկզբունքներէն թեւադրուած եւ նոյն ձեռնաչափով գրուած նոր կենսագրականներ:

Ընթերցողը անշուշտ պիտի նկատէ, որ իրենց ամբողջական կենսագրութիւններով առաջին անգամ ըլլալով հանրութեան ներ-

կայացուող Արիմանի (Սարգիս Զալաշեան), Արտաւազդի (Արթիւր Օհանջանեան), Կարապետ Կեօքտէրեւեանի եւ այլոց կողքին, տեղ գտած են Պանդուխտի, Արսէն Կիտուրի, Զայկ Բժշկեանի, Գալուստ Արխանեանի սման ծանօթ անուններ: Պատճառը այն է որ, վերջիններուս կենսագրութիւնը հնարաւոր եղաւ հարստացնել ցարդ անուշադրութեան մատուած սակայն իրենց եութեամբ կարելոր եւ վաւերական տուեալներով:

Մեր աշխատանքին ընթացքին հիմք ընդունեցինք երկու սկզբունք. առաջին՝ կարելի եղած չափով խուսափիլ անձնական, ենթակայական գնահատականներէ, ոգեկոչական եւ ընդհանրական արժեւորումներէ ու յենիլ փաստացի նիւթրու (արխիւ, իր ժամանակաշրջանի մամուլ), ինչպէս նաեւ այլոց կարծիքներուն վրայ՝ միշտ նախընտրութիւն տալով ոչ-հնչակեան կարծիքներուն: Երկրորդ՝ կարելի եղած չափով լայն տեղ տալ ծանօթագրական յղումներուն, որպէսզի այն ընթերցողը՝ ուսումնասիրող, ուսանող, պատմաբան, որ ուզէ ենթակային մասին յաւելեալ տեղեկութիւններ ունենալ, իր առջեւ ունենայ սկզբնաղբիւրներու պատրաստ ցանկ մը:

Յօդուածաշարքին մէջ, կենսագրութիւններու հերթականութեան համար որեւէ սկզբունք կիրարկուած չէ: Զատորին պարագային, մեր մօտ երկմտութիւն յառաջացաւ ի՞նչ սկզբունքով դասաւորել գանոնք. այբբենակա՞ն կարգով, ծննդեան թուականներո՞ւ, թե՛ այլ: Նախընտրութիւն տուինք պատմական յաջորդականութեան, որը նաեւ ընթերցողին հնարաւորութիւն կու տայ հետեւիլ դէպքերու պատմական ընթացքին:

Յաջողա՞ծ ենք մեր մտադրութեան մէջ: Այդ կը դատու ընթերցողը, որուն կարծիքը կ'օգնէ մեզ մեր յետագայ աշխատանքներուն համար:

**Տոքթ. Եղիկ Ըրեմեան**

## ԳԱՔՐԻԷԼ ԿԱՖԵԱՆ (ՇՄԱԻՈՆ)

ՍԴ Զնչակեան Կուսակցութեան հիմնադիրներէն եւ Թուրքիոյ տարածքին յեղափոխական առաջին քիչներու կազմակերպիչներէն է Գաբրիէլ Կաֆեան՝ Շմաւոն:

Շմաւոն ծնած է Ղարաբաղի շրջանի Զադրութի Վանք գիւղը, 1860-ին:

Նախակրթութիւնը կը ստանայ Շուշիի թեմական դպրոցը, որմէ ետք կ'աւարտէ Թիֆլիսի Ռեալական դպրոցը: Թիֆլիսի եւ Պաքուի մէջ առեւտրական հաստատութիւններ ունեցող իր հարուստ եղբայրները կը մերժեն հոգալ Շմաւոնի կրթական ծախսերը, փափաքելով որ ան գայ ու միանայ իրենց առեւտրական գործին: Սակայն Շմաւոն կը նախընտրէ ուսումը շարունակել՝ թեկուզ նիւթական անցուկ պայմաններու մէջ: Կը մեկնի Վլատիկակազ ու տեղւոյն Ռեալական դպրոցը աւարտելէ ետք, բարձրագոյն ուսման համար կը մեկնի Շվեյց:

Շմաւոն Շվեյց կը հասնի այնպիսի պահու մը, երբ Եւրոպայի հայ ուսանողութեան մէջ յեղափոխական խմորումները հասած էին իրենց բարձրագոյն աստիճանին: Շմաւոն կ'ընդգրկուի այդ մթնոլորտին մէջ:

Այդ շրջանին Շմաւոնի մտաւորական հետաքրքրութիւններուն վրայ լոյս կը սփռէ «Մշակ»ի խմբագրութեան գրած անոր նամակը, ուր ան տպագրութեան փափաքով թերթին կը յղէ իր «Մամուլը եւ



Յարի Կառավարութիւնը՝ յօդուածը ու նաեւ կ'իմացնէ թէ թարգմանած է Սիւզան Գորնեզի «Երեխաները եւ Անոնց Ընկերները» գիրքը՝ տպագրութեան համար մեկեւեւս մը գտնելու ցանկութեամբ<sup>1)</sup>։

1886-ի ամառը Փարիզէն ժընեւ կու գան Աւետիս Նազարեկեան եւ Մարօ Վարդանեան ու ժընեւի խմբակին հետ կը մտածեն յեղափոխական ուսանողներու համագումար հրաւիրելու մասին։ Այդ նպատակով Շմաւոն կը մեկնի Մոնպելիէ ու իր հետ կը բերէ չորս ուսանողներ։ Կը կազմուի «Յնչակ»ի խմբակը։ 1887 Նոյեմբերին, ժընեւ համախմբուած ուսանողներով լոյս կը տեսնէ «Յնչակ»ի Ա. թիւը, որն եւ կը նկատուի ՍԴ Յնչակեան Կուսակցութեան հիմնադրութեան թուականը։

Յաջորդող տարիներուն, Շմաւոն աշխոյժ մասնակցութիւն կը բերէ Յնչակեան Կուսակցութեան ինքնահաստատման եւ տարածման աշխատանքներուն։ Անոր յեղափոխական եռանդը, Նոյնիսկ Եւրոպայի մէջ վտանգի կ'ենթարկէ գինք։ «Յնչակ»ի գլխաւոր թիրախն ու միաժամանակ դժուարութիւնը, անոր թուրքիա ներթափանցումն էր։ Այդ նպատակին համար «Յնչակ» կը տպուէր բարակ թուղթի վրայ եւ Եւրոպայի տարբեր քաղաքներէն, նամակի ձեւով, փոքր քանակներով եւ երկար ընդմիջումներով կը դրկուէր Թուրքիոյ տարբեր քաղաքները։ Այդ գործը Լայփցիկէն կը կատարէր Շմաւոն՝ ուր հաստատուած էր մակավարժութիւնի ուսանելու համար։ Շմաւոն, փութկոտութեան պատճառով «Յնչակ»ի պահարանները կը սկսի դրկել մեծ քանակներով եւ կարճ ընդմիջումներով, որը ոստիկանութեան կասկածը կ'առաջացնէ։ Կը ձերբակալուի։ Որպէս ռուսահպատակ, Ռուսաստանի դեսպանը պահանջը կը ներկայացնէ գինք յանձնելու ռուսական իշխանութիւններուն։ Խնդիրը յառաջ կը բերէ անտեղի աղմուկ։ Զարցին ազդու ձեւով կը միջամտեն գերմանացի սոցիալ-դեմոկրատները, յատկապէս Լիպկենխտ եւ կ'արգիլեն Շմաւոնը յանձնելու ռուս իշխանութիւններուն։ Շմաւոն կը հեռացուի Լայփցիկէն ու կը հաստատուի ժընեւ։

Այլ պարագայի մը, ռուս վտարանդի երկու յեղափոխականներ, «Սլաւոնական Սոցիալիստական Ակումբ»ի ղեկավարներ Դեմբա եւ Դեմբսկի, (այս ակումբը մաս կը կազմէր Պլեխանովի խմբակին, որուն կ'անդամակցէր Շմաւոն եւ այդ պատճառով ծանօթ էր անոր ղեկավարներուն)<sup>2)</sup>, Ցիւրիխի մօտակայ անտառներուն մէջ կը փորձարկեն իրենց ձեռնաշէն ուժանակները։ Փորձարկումը յաջող կ'անցնի եւ որոշ քանակի ուժանակներ փորձարկելէ ետք, անոնք անելորդ կը գտնեն իրենց մօտ եղած մնացեալ ուժանակներն ալ փորձել։ Կե-

րադարձի ճամբուն վրայ, արկածով մը ուժանակներէն մին կը պայթի։ Դեմբա կը զոհուի իսկ Դեմբսկի ծանրօրէն կը վիրաւորուի։ Լուրը անելով, Շմաւոն խումբ մը համախոհ ուսանողներով կը փութայ դէպքին վայրը։ Յաջորդող օրերուն, դէպքին վայրը այցելած բոլոր ուսանողներն ալ կը ձերբակալուին։ «ժընեւում խուզարկութեան ենթարկուեց նաեւ Նազարեկեանների քնակարանը եւ քիչ մնաց, որ «Յնչակ»ն էլ տուժէր»<sup>3)</sup>։ Ձերբակալուած ուսանողները կը հեռացուին երկրի սահմաններէն։ 1889-ին Շմաւոն կը հաստատուի Փարիզ։ Նոյն տարին Ռ. Խանազատի հետ ան կը մասնակցի Բ. Սոցիալիստական Միջազգայնականի հիմնադիր համագումարին<sup>4)</sup>։

1890 Մայիսին Շմաւոն կը մեկնի Երկիր։ Անոր առաջին հանգրուանը կ'ըլլայ Կ. Պոլիսը։ Խրիմեան Յայրիկի միջոցով կը ծանօթանայ Յարութիւն Ճանկիւլեանին, որ անգամ էր Կ. Պոլսոյ մէջ գործող յեղափոխական խմբակի Վարիչ Մարմինի։ Վերջիններս ի տես Մկրտիչ Փորթուկալեանի անգործնականութեան, սկսած էին անվստահութիւն ունենալ անոր հանդէպ։ Այս խմբակը, կը համախմբէր հայ ազգային-ազատագրական շարժման ապագայի այնպիսի յայտնի դեմքեր, ինչպիսիք էին Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան), Արամ Ալըզպաշեան, Սիիրան Տամատեան, Յարութիւն Ճանկիւլեան, Մարգար Վարժապետ (Ամիրեան), Գրիգոր Գլինճեան, Նազարթէ Լուսիկեան եւ ուրիշներ. կազմակերպութիւնը նաեւ կապեր ուներ զաւառի յեղափոխական տրամադրութեամբ երիտասարդներու հետ։ Գետզիստ Կ. Պոլիս կը հասնին նաեւ հնչակեան գործիչներ Ռուբէն Խանազատ, Յակոբ Մեղաւորեան եւ Սիմոն Նադիրեան։ Յնչակեան քարոզիչներուն եւ Վարիչ Մարմինի միջեւ տեղի կ'ունենան հանդիպումներ, որոնց որպէս արդիւնք, վերջիններս իրենց ամբողջ կազմով կը միանան Յնչակեան Կուսակցութեան։ Այդ ժողովներուն մասնակից Յ. Ճանկիւլեան, իր յուշերուն մէջ կը գրէ. «Շմաւոն հետաքրքրական անձ մ'էր։ Բաւական էր որ քանի մը օր տեսակցէր ռուս մեկուն հետ, անոր հոգեբանութեան կը թափանցէր իսկոյն»<sup>5)</sup>։

Շմաւոն երկար չի մնար Կ. Պոլիս եւ Կեդրոնական Վարչութեան որոշումին համաձայն կը մեկնի գաւառները։ Իր մեկնումէն ետք, Կ. Պոլսոյ մէջ տեղի կ'ունենայ Գում Գաբուի ցոյցը։ «Շմաւոն արդէն Պոլսոյ մէջ ցոյց մ'ընելու համամիտ էր, ուստի Սամսոնէն մինչեւ Մարզուան իր նամակներով թելադրանք կ'ընէր եւ ցոյցի մը անհրաժեշտութիւնը կը շեշտէր»<sup>6)</sup>։

Կ. Պոլսէն Շմաւոն կը մեկնի Սեբաստիա եւ կը փափաքի հաստատուիլ հին։ Սակայն, Սեբաստիոյ առաջնորդ, պահպանողական հայեացքներու տէր Պետրոս եպս. անոր հանդէպ կ'ունենայ վանդակական կեցուածք։ Կը ստիպուի հեռանալ Սեբաստիայէն։ Կարճ

Ժամանակ մը կը մնայ Թոգադ, ուր զօրաւոր մասնաճիւղի մը հիմը դնելէ ետք կ'անցնի Մարզուան՝ ուր 1885-էն կը գործեր «Փոքր Հայքի Կազմակերպութիւնը»: Կազմակերպութեան կեդրոնն էր Անաթոլիա գոլէնը, ղեկավարութեամբ փրոֆ.ներ Յովհաննէս Փայտեանի ու Կարապետ Թումայեանի եւ գործօն մասնակցութեամբ Սուրեն Սուրենեանի (Ղազարոս Կտլուզեան) եւ Թումիկ Արթիսի (Կ.Թումայեանի եղբայրը) : Ընտանի ջանքերով այս գաղտնի կազմակերպութիւնը ամբողջութեամբ կը միանայ Հնչակեան Կուսակցութեան: Ժամանակակիցներէն Ս.Սուրենեան Ընտանի մասին կը վկայէ. «Հմայող ու մազնիսացնող անձնաւորութիւն մը կար իր մէջ, պերճախօսութիւն մ'ունէր զոր յաճախ չափազանցութիւններու կը հասցներ. ինքնավստահութեան միացուցած էր ինքզինքը զովելու յատկութիւն մը, որ իր դիմացինին մէջ աւելի հիացում կը ստեղծեր քան յուսալքութիւն»<sup>77</sup>: Մօտաւորապէս նոյն կարծիքը կը յայտնէ նաեւ Յ.Փայտեան. «Ուշիմ՝ ծայր աստիճան համակրելի թիփ մըն էր Ընտան, թրքահայուն վրայ ռուսահայի իր հմայքին վրայ կ'աւելցնէր մազնիսական ոյժ մը»<sup>78</sup>:

Կ'անցնի Արաբկիր, ուր ազատական գաղափարներու տեր եզնիկ Ապահունի եպիսկոպոսին կողմէ կ'արժանանայ ջերմ ընդունելութեան: Կը նշանակուի ազգային դպրոցի տնօրէն:

Արաբկիրի մէջ Ընտան կ'ունենայ արդիւնաւետ գործունեութիւն: Անոր շնորհիւ կը բարեկարգուին դպրոցները, որոնք կը դառնան ազգային ինքնագիտակցութեան օճախներ. հայ պատանիները կը դառնան աւելի համարձակ. ժողովուրդին համար զինուժ կը դառնայ պարտադիր. կը կազմակերպուին ֆետայական խումբեր, սուրհանդակներ, գեղք փոխադրող խումբեր, մէջտեղ եւ զան զինագործներ եւ ռուսք պատրաստողներ<sup>79</sup>: Արաբկիրի մէջ կուսակցական կազմակերպուած մասնաճիւղ մը մէջտեղ բերելուն զուգահեռ, Ընտան կը կազմակերպէ նաեւ Արաբկիրի գիւղերը՝ Ամըրկա, Շեփիկ, Անջրդի, Մաշկերտ, Սաղմըկա, Վանք եւայլն, հասնելով մինչեւ Զմշկածագի շրջակայ գիւղերը՝ Սիատուն, Հագար, եւայլն<sup>80</sup>: Ան կ'այցելէ ու կը կազմակերպէ նաեւ Ամասիան, Մալաթիան, Ակնը, հարբերքը, Կիրասնը եւայլն:

Իր շրջագայութիւններուն ընթացքին Ընտան կը հանդիպի յեղափոխական քարոզիչ Ժիրայրին (Մարտիրոս Պոյաճեան), ու անոր կը բացատրէ թէ ճիշդ այդ գաղափարներու տարածման ու կենսագործման համար արդէն ծնունդ առած է Հնչակեան կուսակցութիւնը, որուն Կ.Պոլսոյ ղեկավարներն է իր կրտսեր եղբայրը՝ Սուրատ: Ժիրայր կը միանայ Հնչակեան կուսակցութեան ու կը դառնայ անոր ամենէն յայտնի գործիչներէն:

Ընտանի գործունեութիւնը կառավարութեան ուշադրութենէն չի փրկուիր: Լրտեսները կը սկսին հետապնդել զայն: Ասոնց մէջ ամենէն յայտնին կը դառնայ ոստիկանապետ Եուսուֆը, որ հնչակեաններուն կողմէ 1891 Փետրուարին ահաբեկչութեան կ'ենթարկուի: Դեպքին առիթով տեղի կ'ունենան մեծ թիւով ձերբակալութիւններ: Ձերբակալուածները, որոնց մեծ մասը դեպքէն անտեղեակ անմեղներ, կ'ենթարկուին անմարդկային շարժարանքներու<sup>81</sup>: Ընտանը հետապնդելու կոչուած այլ լրտես մը՝ Գրիգոր Խերպէկեան, նոյն ճակատագրին կ'ենթարկուի Մարզուանի ընկերներուն կողմէ<sup>82</sup>:

1891 Մայիսին, Ընտանի գլխաւորութեամբ գումարուած Արաբկիրի եւ շրջակայքի 112 տասնապետներու ժողովը կ'որոշէ դիմել ընդհանուր ապստամբութեան: Այս նախաձեռնութեան յաջողութեան համար Ընտան մեծ հաւատք կը տածէ պատրաստուած մեծ քանակի ուժանակներուն ունենալիք ներգործութեան: Որոշման մասին ան նամակներով կ'իմացնէ Փոքր Հայքի միւս մասնաճիւղերը: Մարզուանի վարչութիւնը այդ կը գտնէ անժամանակ եւ վարչական ընկերներ Արաբկիր գալով կը տարհամոզեն Ընտանը նման նախաձեռնութեան մը դիմելէ<sup>83</sup>:

Այդ շրջանին Ընտան կը յղանայ նաեւ «Մարտ» անունով յեղափոխական թերթ մը հրատարակելու գաղափարը: Ըստ հաւանաբար այս ծրագրին համամիտ կը գտնուին Մարզուանի, Ամասիոյ եւ այլ շրջաններու վարչութիւնները: Որովհետեւ, երբ Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը Ամասիոյ վարչութեան գրած էր 8 Յունուար 1893 թուակիր նամակին մէջ նման թերթի մը հրատարակութեան իր անհամաձայնութիւնը կը յայտնէ, կ'աւելցնէ թէ նախապէս նոյն առաջարկով նամակ ստացած է նաեւ Մարզուանի վարչութենէն, որուն տուած է նոյն պատասխանը<sup>84</sup>:

Տերսիմի քիւրտերուն հետ բարեկամական կապեր հաստատելու համար, Ընտան քանի մը զինակիցներով կը մեկնի Տերսիմ: Սա, Տերսիմի քիւրտերուն հետ բարեկամական կապեր ստեղծելու առաջին կամ միակ նախաձեռնութիւնը չէր: Ընտաննէն զատ, հայ ազգային-ազատագրական պայքարի շատ մը գործիչներ՝ Փիլիկ, Կարապետ Ղումրիկեան, Գալուստ Արխանեան, Ա. Ալըզպաշեան, Տերսիմի Զեռի (Ռուբէն Շիշմանեան) եւ ուրիշներ, դիմած են այդ քայլին: «Հայ յեղափոխական կուսակցութիւնների թանկագին երազներից մեկն է եղել, եւ զուցէ դեռ շարունակում է լինել, գրաւել քիւրտ ֆետտալական տարրերին իրանք կողմը եւ կանգնեցնել թիւրք իշխանութեան դէմ: Այդ ուղղութեամբ գործել է Հնչակեան կուսակցութիւնը՝ Ընտանի ձեռքով: Եւ, սակայն, բոլոր փորձերը՝ յեղափոխել քիւրտերին, տուել են ողբալի հետեւանքներ: Քիւրտերը

ոչ միայն չեն դուրս եկել թիրք բռնակալութեան դէմ, այլ նոյնիսկ մատնել են Շմաունին»<sup>195</sup>։ Իրօք, կարճ շրջանի մը համար, քիւրտերը Շմաունը կ'ընդունին բարեկամակաբար եւ սիրով։ Շմաուն եւ իր ընկերները անմիջապէս կը լծուին քիւրտերուն ուժանակ պատրաստել եւ փամփուշտ լեցնել սորվեցնելու աշխատանքին։ Սակայն երբ Խարբերդի նահանգապետը քիւրտ ցեղապետն կը պահանջէ կախանաւորել Շմաունը եւ իրեն յանձնել, քիւրտերը անմիջապէս կը կատարեն այդ հրահանգը։

Շմաուն շղթայակապ վիճակով կը դրկուի Կ. Պոլիս։ Մինչեւ Սամսունի նաւահանգիստը, Շմաունի ընկերները կը փորձեն փախցնել զինք, բայց չեն յաջողիր։ Սամսունի մէջ, Շմաուն ինքն է որ իր ճարպիկութեան շնորհիւ կը յաջողի փախուստ տալ եւ թաքնուիլ։ Խստագոյն փնտռուքները չեն յաջողիր բացայայտել անոր թաքստոցը։

Կ'անցնի Մարգուան ու շուրջ տարի մը, փախստական պայմաններու տակ կը զխաւորէ շրջանի յեղափոխական շարժումները։

Շմաունի համբաւը կը մեծնայ եւ ան կը դառնայ ժողովրդային հերոս։ Այս դէպքերէն քանի մը տարի յետոյ երբ Ռ. Խանազատ կազմակերպչական նպատակներով Ամերիկա կը մեկնի, կը հանդիպի արաբկիրոցիներու, որոնց մասին կը վկայէ. «Նիւ Եորքից գնացի Ֆիլատելֆիա։ Այստեղ հնչակեան մասնաճիւղը բաւականին ուժեղ եւ բազմանդամ էր շնորհիւ այն հանգամանքի, որ այդտեղի հայ գաղութը մեծաւ մասամբ արաբկիրոցներ էին, այսինքն՝ այն վայրից, որտեղ Կաֆեան-Շմաունն էր գործել։ Շմաունի անունը պաշտամունքի առարկայ էր արաբկիրոցների բերնում»<sup>196</sup>։ Շմաունի գործունեութեան կ'անդրադառնայ նաեւ անգլիական Կապոյտ Գիրքը ("Blue Book", թիւ 1, 1892, էջ 80)<sup>197</sup>։

Երբ հետապնդումներուն պատճառով իր գործունեութիւնը գրեթէ անհնար կը դառնայ, Շմաուն կ'անցնի արտասահման՝ Աթէնք, ուր հաստատուած էր Կուսակցութեան Կեդրոնական Կարչութիւնը, եւ որուն շուրջ համախմբուած ուսանողներուն մէջ էր նաեւ իր նշանածը՝ Նինա Զանանեանը։ Շմաուն կարճ ժամանակ մը կը մնայ Աթէնք, կ'ամուսնանայ Նինայի հետ, ապա կը շրջագայի եւրոպական կարգ մը քաղաքներ<sup>198</sup>։

Յեղափոխական եռանդով լեցուն Շմաուն կը վերադառնայ բուն երկիր եւ Մարգուանի մէջ կը ստանձնէ յեղափոխական շարժման ղեկը։ Այս անգամ սակայն ան չի կրնար փախուստ տալ ձեռքակալութենէն։ Դատարանին առջեւ Շմաուն կ'ունենայ համոզուած ու խիզախ յեղափոխականի կեցուածք։ Ան թուրք դատաւորներուն կը բացատրէ ազատագրական շարժման եւ սոցիալիզմի էութիւնը<sup>199</sup>։ Որպէս ռուսահպատակ, թրքական իշխանութիւնները զինք կը

յանձնեն ցարական իշխանութեան։ Փեթերսպուրդի դատարանին կողմէ կը դատապարտուի հինգ տարուան աքսորի, հիւսիսային Ռուսիոյ Կալուգա նահանգը։

1912-ին, երբ Ստեփան Սապահ Գիւլեան քարոզչական-կազմակերպչական նպատակով կ'այցելէ Փոքր Գայքի շրջանները, Սեբաստիոյ մէջ կը հանդիպի վաստակաշատ գործիչ Կարապետ Գաբիլեանին, որ ամեն ձեռի վտանգներ աչքն առնելով իր քով բժախնդրութեամբ պահած կ'ըլլայ Փոքր Գայքի յեղափոխական շարժումներուն հետ կապուած բոլոր փաստաթուղթերը։ Սապահ Գիւլեան, այդ թղթածրարին վրայ ակնարկ մը նետելէ ետք կը գրէ. «Ամենից հետաքրքրականն է Շմաունի ձեռքով գրուած, հարց ու պատասխանի ձեւով գրուած հետետեալ տողերը։

- Ի՞նչ է Գայկական Դատի էութիւնը։
  - Սուրբ եւ նուիրական։
  - Ինչո՞ւ համար։
  - Որովհետեւ հայ ազգի ազատութիւն, Գայաստանի անկախութիւն կայ։
  - Ո՞վ է մեր դատին արգելքը. ո՞վ է մեր սուրբ եւ նուիրական իրաւունքը ոտնակոխողը։
  - Թուրք բռնապետութիւնը։
  - Ի՞նչ պիտի անել ազատուելու համար։
  - Յեղափոխութիւն։
  - Ուժ ունե՞ք։
  - Այո՞։
  - Ո՞ր է այդ ուժը։
  - Մեր ժողովուրդի մէջ։
  - Մենք յեղափոխականներս մեծամասնութիւն ենք թե՞ փոքրամասնութիւն։
  - Գիմա փոքրամասնութիւն ենք. բայց երբ մեր ընդգրկած գաղափարները փրոփականտա անենք, ժողովուրդին գարթեցնենք, գիտակցութեան բերենք, կազմակերպենք, այն ժամանակ մենք մեծամասնութիւն կը կազմենք։
  - Ինչպէ՞ս յեղափոխութիւն պիտի կազմենք։
  - Նախ փոքր շարժումներով, հրոսակային խմբերի գործունեութեամբ, մատնիչներին, դաւաճաններին տեռորի ենթարկելով, յետոյ՝ երբ յեղափոխական գաղափարը կը տարածուի, բոլոր ժողովուրդը կը կազմակերպուի, կը զինուի եւ երբ յարմար առիթ կը ներկայանայ, այն ժամանակ Ընդհանուր Ազատամբութիւն»<sup>200</sup>։
- Պարզ լեզուով գրուած այս հարցաթերթիկը, ակներեաբար պատրաստուած է յեղափոխական շարժման նոր միանալ ցան-

կացող պարզ մարդոց համար, որ սակայն, իր խորքին մէջ կ'արտացոլէ Շմաւոնին համոզումները...:

Աքսորի ժամանակը լրանալէն ետք, Շմաւոն պաշտօն կը գտնէ «Նադիեժտա» ճամբորդական ընկերութեան մէջ եւ իր աշխատանքին բերմամբ կ'այցելէ Անդրկովկասի եւ Պարսկաստանի շարք մը քաղաքներ: Այս միջոցին ան կը մասնակցի Նաեւ ազգային-հասարակական կեանքին:

1905 Սեպտեմբերին ՍՂԿԿ Ե. Զամագումարին ընդառաջ, Պաքուի պատգամաւորներ Ահրիմանի (Սարգիս Զալաշեան) եւ Արծուիկի (Տիգրան Յարութիւնեան) հետ կը մեկնի Փարիզ ու կը մասնակցի Նախահամագումարեան խորհրդակցութիւններուն (Շմաւոն պատգամաւոր չէր): Այդ խորհրդակցութիւններուն, Նազարբեկի եւ Ռ. Խանազատի կողքին կը պաշտպանէ Անդրկովկասի մէջ Կուսակցութիւնը ամբողջապէս ռուսական յեղափոխական շարժման մէջ ընդգրկելու եւ տաճկահայ դատի հետապնդումը տաճկահայութեան ձգելու տեսակետը՝ որ Զամագումարին կողմէ չ'ընդունուիր<sup>[21]</sup>:

Նոյն տարին, մինչ Շմաւոն կը գտնուէր Փէթերսպուրկ, կը պայթի Ռուսական Ա. Յեղափոխութիւնը եւ Անդրկովկասի մէջ ծայր կ'առնեն հայ-թաթարական բախումները: Կ'այլեկոծի Նաեւ ռուսանոգութիւնը: Ռուսանոգական հաւաքներէն մեկուն ընթացքին ելոյթ կ'ունենայ Նաեւ Շմաւոն ու կը պաշտպանէ այն տեսակետը որ հայ-թաթարական բախումները ցարիզմի սադրանքներն են եւ ռուսանոգութիւնը պետք է իր պայքարը ուղղէ ցարիզմին դէմ: «*Որոտընդոստ ծափերի տակ վերջացրեց ընկ. Կաֆեանը իր կոկիկ ռուսերն լեզուով արտասանած ճառը, որի տպաւորութիւնը այնքան մեծ էր, որ Նա անդամ ընտրուեց այդ Նոյն օրը վերոյիշեալ գործադիր մարմնի մէջ*»<sup>[22]</sup>:

1908 Սեպտեմբերին Թիֆլիսի մէջ տեղի կ'ունենայ «հայ ներկայացուցչական ժողով», որուն նպատակն էր օգտուելով Օսմանեան Սահմանադրութեան ընծեռած առիթէն, կազմակերպել Անդրկովկաս ապաստանած արեւմտահայութեան տունդարձը: Գ. Կաֆեան կը մասնակցի այդ ժողովին եւ կ'ընտրուի գործադիր վարչութեան անդամ<sup>[23]</sup>:

1917 Փետրուարին կը մասնակցի Ռուսաստանի «պուրժուադեմոկրատական յեղափոխութեան»<sup>[24]</sup>: Նոյն տարուան Սեպտեմբերին, Թիֆլիսի մէջ կը մասնակցի Դայ Զամագումարին Զամախորհրդակցութեան՝ որպէս Թիֆլիսի քաղաքապետութեան ներկայացուցիչ<sup>[25]</sup>:

Վաստակաշատ յեղափոխականը կը մահանայ Թիֆլիս, 1930-ին: Այդ մասին հայ մամուլը չ'անդրադառնար:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] Շմաւոնի նամակը «Մշակ»ի խմբագրութեան, Ժընև, 1886 Դեկտ. 13: Պայտատանի Ազգային Արխիւ (յետայս՝ ԴԱԱ):
- [2] Վարդան Աւետիսեան, «Դայ Զասարակական Մտքի Զարգացման Մարքս-Լենինեան Փուլի Սկզբնաւորումը», Երեւան, 1976, էջ 228:
- [3] «Դայրենիք», 1927 Օգոստոս, թիւ 10. Ռ. Խանազատ, «Դայ Յեղափոխականի Յուշերից»:
- [4] «Դայկական Զարց», Երեւան, 1996, էջ 182: Այստեղ, «Դայկական Զարց»ի կողմէ տրուած թուականը՝ 1883, ակնբերէ թերիմացութիւն է, որովհետեւ Բ. Սոց. Միջազգայնականի հիմնադիր համագումարը տեղի ունեցած է 1889-ին, Փարիզ:
- [5] Յ. Ճանկիւեան, «Յիշատակներ Դայկական ճգնաժամէն», Պէրլուք, էջ 168:
- [6] Նոյն, էջ 169:
- [7] Արշակ Ավայաճեան, «Պատմութիւն Եւրոպիոյ Դայրց», Գահիրէ, 1952, էջ 1140:
- [8] Արշակ Ավայաճեան, «Պատմութիւն Դայ Կեսարիոյ» Բ. հտ, Գահիրէ, 1937, էջ 1353:
- [9] Անդրանիկ Փօլատեան, «Պատմութիւն Դայրց Արաբկիրի», Նիւ Եորք, 1969, էջ 660-661:
- [10] «Դայրենիք», 1957, Նոյեմբեր, թիւ 11. Յովհաննէս Աճմեան, «Զմշկածագի Կազմակերպութիւնները»:
- [11] «Զնչակ», 1891 Ապրիլ 20, 1892 Մարտ 23 եւ 1895 Օգոստոս:
- [12] «Պահակ» բացառիկ, 1921. Սուրեն Սուրենեան, «Վասակի Վարձը»:
- [13] Երուանդ Մեսիայեան, «Դրօշին Տակ», Նիւ Եորք, 1918, էջ 251. Նաեւ Ա. Ավայաճեան, ... էջ 1142-1144 եւ Ա. Փօլատեան, ... էջ 648:
- [14] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՍՂ Զնչակեան Կուսակցութեան», Ա. հտ., Պէրլուք, 1962, էջ 77:
- [15] «Երկրի Զայն», 1907 Դեկտ. 28. Ա. Սուլախ, (Արտաշէս Սուլաքեան), «Սեւ-Գիրականի Ուրուականը»:
- [16] «Դայրենիք», 1928 Ապրիլ, թիւ 6. Ռ. Խանազատ, «Դայ Յեղափոխականի Յուշերից»:
- [17] Ա. Փօլատեան, ... էջ 655-657:
- [18] «Դայրենիք», 1928 Մարտ, թիւ 5. Ռ. Խանազատ, «Դայ Յեղափոխականի Յուշերից»:
- [19] «Զնչակ», 1894, թիւ 8:
- [20] Ս. Սապահ Գիւլեան, «Փոքր Դայից Յիշատակներ», Գահիրէ, 1916, էջ 266:
- [21] «Արձանագրութիւն» խորհրդակցութեան: Զնչ. արխիւ:
- [22] «Զանդիպուներ Ընկ. Շմաւոնի Դտ», իրաւաբան Սեդրակ Աւագեան, Թեհրան, 1948 Յունուար 12: Զնչ. արխիւ:
- [23] «Դայ Ժողովուրդի Պատմութիւն», 2 հտ., 1981, Երեւան, էջ 495:
- [24] «Դայկական Սովետական Զանազգիտարան», Ե. հտ., Երեւան, 1979, էջ 354-355:
- [25] Ամատուի Վիրաբեան, «Զամահայկական Խորհրդակցութիւններ (1912-1920թ.թ.)», Երեւան, 2004, էջ 235:

# ՌՈՒԲԷՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՍԴ Յնչակեան Կուսակցութեան առաջին սերունդի գործունեայ, արդիւնաւետ եւ կարեւոր գործիչներէն է Ռուբեն Պերպերեան:

Ռ. Պերպերեան ծնած է 1873-ին, Տոնի Ռոստովի Նոր Նախիջեան քաղաքը: Հայրը՝ բժիշկ, ազգասէր եւ ուսումնասէր, եղած է Միքայէլ Նալպանտեանի գործակիցներէն:

Պատանի տարիքէն հանդէս կը բերէ սէր եւ նախաձեռնութիւն դէպի հասարակական աշխատանքը: 1889-ին, կը խմբագրէ ազգայնական ուղղութեամբ «Տարերք» աշակերտական երկշաբաթաթերթը (իւրաքանչիւր թիւ երկու ձեռագիր օրինակ), որ Ռ. Պերպերեան կարողալ կու տայ քաղաքի հայ աշակերտութեան<sup>1)</sup>: Շուրջ տարի մը անց, ձեռքը կ'անցնի «Յնչակ»ի թիւ մը. կը տարրուի անոր գաղափարներով. անմիջապէս 3 ռուպլի նուէր եւ յօդուած մը կը յղէ «Յնչակ»ի խմբագրութեան (որ չի տպագրուիր գաղտնապահական պատճառներով): Կը դադրեցնէ «Տարերք»ի հրատարակութիւնը եւ իր ընկերներով կը դառնայ «Յնչակ»ի քարոզիչ:

1890-ին, բարձրագոյն ուսման համար Ռ. Պերպերեան կը մեկնի ժընեւ եւ կը հետեւի քիմիագիտութեան: Տակաւին ուսման առաջին աստիճանները ուղք չկոխած, կը շտապէ հնչակեան կեդրոնատեղին: Կը ծանօթանայ Աւետիս Նազարբէկի եւ այդ շրջանին «Յնչակ»ի



շուրջ համախմբուած ուսանողներուն՝ Ալեքսանդր Աթաբէկեան, Յունան Դաւթեան, Բարսեղ Չաքարեան եւ այլն: Կը յաճախէ ուսանողական երեկոներուն, ուր կը քննարկուին ընկերային հարցեր: Ընդլայնուած հաւաքներուն կը դասախօսէր Պլեխանով: Այդ դասախօսութիւններուն եւ յամառ ընթերցումներու շնորհիւ (Պերպերեան կը գրէ. «երբ սկսեցի ծանօթանալ ընկերվարութեան գաղափարներին, յափշտակուամ այնքան մեծ էր, որ եւ ընթերցանութեան նուիրեցի օրական 10-12 ժամ»<sup>2)</sup>, ան կը դառնայ համոզուած եւ խորացած ընկերվարական: Ռ. Պերպերեան «Յնչակ»ի խմբագրութեան եւ Կեդրոնական Վարչութեան գրասենեակին մէջ կը կատարէ գրագրային աշխատանքներ եւ աւելի ուշ կ'աշխատակցի «Յնչակ»ին եւ «Գաղափար»ին:

1891-ի ամրան, Ռ. Պերպերեան կը ստանայ իր առաջին կուսակցական յանձնառութիւնը: Ան, Կեդրոնական Վարչութեան կողմէ կը լիազօրուի, ամառնային արծակուրդի ժամանակ, Ռուսաստանի եւ Անդրակովկասի տարբեր քաղաքներուն մէջ կազմել հնչակեան մասնաճիւղեր, ինչպէս նաեւ կատարել հանգանակութիւններ, Արեւմտահայաստանի ազատագրութեան նպատակին: Դէպի իր ծննդավայրը վերադարձի ճամբուն վրայ, առաջին հերթին ան կ'այցելէ Փեթերսպուրկ, ուր իր շուրջ կը համախմբէ շուրջ 50 ուսանողներ եւ աչքի ինկող հայեր: Անոնց կու տայ շարք մը գեկուցումներ: Կը կազմուի Փեթերսպուրկի հնչակեան մասնաճիւղը, «Բելոն» անուամբ: Դրական արդիւնք կու տայ նաեւ հանգանակութիւնը: Այս աշխատանքներուն մէջ իրեն կ'օժանդակէ փրոֆ. Վարդան Վարդանեան (Մարո Նազարբէկի եղբայրը): Փեթերսպուրկէն յետոյ կ'անցնի Մոսկուա ուր իրեն օգնականներ կ'ունենայ Սիւսա Պերպերեանը (իր մեծ եղբայրը), բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրեանը եւ արդէն հանրածանօթ բանաստեղծ Սմբատ Շահագիզը: Վերջինս կը նախագահէ նաեւ հրաւիրուած ժողովները: Նոյն յաջողութիւնները կ'արձանագրուին նաեւ հոս: Ապա, շուրջ մէկ ամսուան ընթացքին կ'այցելէ Արմաւիր, Ստավրոփոլ, Թագանրոզ, Ենսկ, Եքաթերինատար, Մայկովի, Խալար եւ Մոզոդոք քաղաքները: Ամենուրեք, նոյն խանդավառութեամբ, կը կազմուին հնչակեան մասնաճիւղեր: Այս շրջապտոյտի վերջին հանգրուանը կ'ըլլայ իր հայրենի Նոր Նախիջեանը ուր Ռ. Պերպերեան կ'իջեանի հօրենական ամառանոցը: Նոր Նախիջեանի եւ շրջակայ գիւղերուն մէջ եւս ան կը կազմէ հնչակեան մասնաճիւղ (250 հոգի): Այս աշխատանքին խանդավառ մասնակցութիւն կը բերէ Ռաֆայէլ Պատկանեանը (Գամառ Բաթիպա), որ մինչ այդ, «Յնչակ»ի թիւերէն ծանօթ էր Յնչակեան Կուսակցութեան:

Այս աշխատանքներն ենք, Ռ.Պերպերեան կը կատարէ ուշագրաւ ընդհանուր եզրակացութիւն մը. ան կը գրէ. «*Ես ունեմ բազմաթիւ առարկայական տուեալներ, որոնք ինձ թոյլ են տալիս գալ հետեւեալ եզրակացութեան. եթէ ութսունական թուականների կէսերից սկսած չձնուէին նախ հնչակեան, ապա դաշնակցական կուսակցութիւնները ու եթէ յետագայում դրանք քսան-երեսուն տարիներ չհրահրէին իրենց յեղափոխական գործելակերպով հայ ժողովուրդի ազատութեան եւ Դաշնաստանի անկախութեան խնդիրը, ռուսահայ ազգաբնակչութիւնը տասը-քսան տարուայ ընթացքում անհետ կորսուած կը լինէր ռուս համայնակուլ ալիքների մէջ»<sup>61</sup>:*

1892-էն, իր ուսումը կը շարունակէ Փարիզի համալսարանին մէջ եւ յաջորդող երեք տարիներուն, մինչեւ 1894, իր ամառնային արձակուրդներուն ընթացքին, կը շարունակէ կատարել նոյն առաքելութիւնը: «*Մինչեւ 1894 թ. ձմեռը շարունակ 91, 92, 93, 94 տարիների ամառները 2-3 ամիսներ, ամէն անգամ՝ Կեդրոնի համաձայնութեամբ ու յանձնառութեամբ, ես ուղեւորուում էի ռուսահայ քաղաքները եւ հիմնում էի Զնչակեան Կուսակցութեան մասնաճիւղեր, կազմակերպում էի յեղափոխական խմբակներ, տարածում էի ժընետու կամ Աթենքում մեր հրատարակած թերթերը, դիմում էի նոյնպէս նիւթական ժողովարարութեան (հանգանակութեան. - Ե. Ծ.) յօգուտ յեղափոխական գործին»<sup>62</sup>. - կը գրէ ան իր յուշագրութեան մէջ:*

Վերադառնալով իր ուսման, Ռ.Պերպերեան ամփոջապէս կը լծուի Կեդրոնական Վարչութեան կից աշխատանքներուն: Կը նշանակուի ընկերվարական գրականութիւնը հայերէնի թարգմանելու յանձնարանին անդամ՝ Ա.Նազարբէկի, Բարսեղ Չաքարեանի (Լեւոն) եւ Սարգիս Աղամիրզեանի (Սաքո) կողքին: Ռ.Պերպերեան, հետաքրքրական ձեւով կը ներկայացնէ թէ ինչպիսի դժուարութիւններու կը հանդիպէին, երբ առաջին անգամ ըլլալով կը փորձէին հայերէն համարժեք գտնել քաղաքա-տնտեսական այնպիսի եզրերու՝ ինչպիսիք էին plusvalue, capital, chomage, salariat, nastionaliser, եւայլն:

1891-ի վերջաւորութեան, հնչակեան կեդրոնատեղին, շարք մը գործանակ եւ կատառումներով, ժընետէ կը տեղափոխուի Աթենք: Ա.Նազարբէկ, Ռ.Պերպերեանին կը թելադրէ շարունակել Կուսակցութեան կապերը Եւրոպայի ընկերվարական կուսակցութիւններուն հետ, եւ օգտագործել վերջիններուս մամուլի օրկանները հայկական հարցի քարոզչութեան համար: Ռ.Պերպերեան աշխոյժ ձեւով կը կատարէ այս յանձնառութիւնը յատկապէս Ֆրանսայի եւ Գերմանիոյ սոցիալիստ կուսակցութիւններուն հետ: Ան անձնական սերտ կապեր կը հաստատէ Եւրոպայի ընկերվարական շարժման յայտնի ղեկավարներ Ժյւլ Կետի, Փօլ Լաֆարգի, Օկուստ Պէպլի,

Լաւրովի, Պլէխանովի, Կաուցկիի, Ժան Լոնգէի, Վայեանի, Սամբայի, Ռակովսկիի եւ այլոց հետ: 1893-ին, նախքան արձակուրդով իր ծննդավայրը վերադառնալը, Ռ.Պերպերեան կը մեկնի Աթենք՝ Կուսակցութեան կեդրոնատեղին, որուն հրահանգով կը մեկնի Կ. Պոլիս: Այցելութեան նպատակն էր, որպէս քիմիքոս, ուժանակներու պատրաստութեան նոր ձեւեր բացատրել Կ.Պոլսոյ ընկերներուն, ինչպէս նաեւ նոր ծածկագիրներ (շիֆր) տալ անոնց, որովհետեւ կասկած կար թէ գործածուող ծածկագրերը ոստիկանութեան կողմէ արդէն բացայայտուած են:

1894-ին, Ռ.Պերպերեան Զնչակեան Կեդրոն Ա.Նազարբէկին գրած նամակին մէջ, կը գտնէ թէ հայ յեղափոխական կուսակցութիւնները պէտք է վերանային իրենց մարտավարութիւնը, որովհետեւ այդ ուժերու յումպէտս վատնում է եւ արեւմտահայութեան ազատագրութեան չի տանիր: Ռ.Պերպերեան կ'առաջարկէ հրաւիրել համագումար եւ այս հարցը քննարկել հոն: Ա Նազարբէկ իր պատասխան նամակին մէջ Ռ. Պերպերեանի արտայայտած միտքերը «լուրջ»<sup>63</sup> կը նկատէ, սակայն ճիշդ այդ պահուն երբ կուսակցութեան բոլոր ուժերը ամբողջապէս ներգրաւուած են Կ. Պոլսոյ, Կիլիկիոյ, Փոքր Դայքի եւ Սասունի յեղափոխական շարժումներուն մէջ, համագումար հրաւիրելը գործնական նկատառումներով կը գտնէ անժամանակ:

Ռ.Պերպերեան իր մէջ կատարուած գաղափարական շրջադարձը կը բացատրէ երեք գործոններով.

1. Ան սերտ յարաբերութիւններ կ'ունենայ Եւրոպացի ընկերվարականներու հետ: Վերջիններս կը համոզեն Ռ.Պերպերեանը որ հայկական յեղափոխական պայքարը ազգայնական շարժում մըն է եւ վերջին հաշուով անյարիր ընկերվարական գաղափարախօսութեան: Եթէ անհնար է Օսմանեան Կայսրութեան մէջ ընկերվարական քարոզչութիւն կամ պայքար կազմակերպել, նախընտրելի է որ հայ ընկերվարականները իրենց ճիգերը միացնեն ռուս ընկերվարականներուն եւ առաջին հերթին պայքարին Ռուսիոյ մէջ ցարիզմը տապալելուն, որն ինքնաբերաբար կը փութացնէ հայ ժողովուրդին ազատագրումը օսմանեան լուծէն: Այս տեսակետը արմատաւորուած տեսակէտ մըն էր այդ շրջանի Եւրոպայի ընկերվարական ղեկավարներուն մօտ: Նշենք թէ, երբ դիմում կ'ըլլայ Ֆ. Էնգելսին «Կոմունիստ Կուսակցութեան Մանիֆէստը» երկի հայերէն թարգմանութեան յառաջարկը գրելու, Էնգելս կը մերժէ այդ առաջարկը, գտնելով թէ ինք ծանօթ չէ հայ իրականութեան, ուստի չի կրնար հայ ընթերցողին թելադրական խօսք ըսել: Էնգելս իր պատասխան նամակը կ'եզրակացնէ. «*Բայց եթէ անկեղծօրէն*

ասենք, իմ անձնական կարծիքն է, որ Հայաստանի ազատագրումը թուրքերից, հնչպես նաեւ ռուսերից հնարաւոր կը լինի այն օրը, երբ կը տապալուի ռուսական ցարիզմը»<sup>61</sup>:

Պետք է ըսել որ, այդ շրջանին, հնչակեան գործիչները, Եւրոպայի ընկերվարականներուն հետ իրենց յարաբերութեան ժամանակ, Հայկական Հարցի ըմբռնման տեսակետէն յաճախ կը բախտին գաղափարական դժուարութիւններու: Այդ, մէկ կողմէ արդիւնք էր Եւրոպացի ընկերվարականներուն հայ ժողովուրդի իրավիճակին ոչ ամբողջական իմացութեան եւ միւս կողմէ հայ ազգ.-ազատագրական շարժումները միայն ընկերային-դասակարգային պարունակի մէջ տեսնելու անոնց գաղափարական համոզումներուն<sup>62</sup>: Ստեփան Սապահ Գիւլեան, յամառ ջանքերէ ետք, կը յաջողի տարիամոզել Ուիլիէմ Լիպկնեխտը (Կարլ Լիպկնեխտի հայրը) եւ ժան ժորեսը իրենց նախնական համոզումներէն<sup>63</sup>: Այնիչ կը յաջողի կատարել Ս.Սապահ Գիւլեան, հակառակը կը պատահի Ռ.Պերպլերեանի մօտ եւ ան կ'իյնայ Եւրոպայի ընկերվարականներուն ազդեցութեան տակ:

2. Ռ.Պերպլերեան, իր ազգական, ռուսական բանակի բարձրաստիճան սպայ եւ պաշտպանութեան նախարարութեան մէջ արեւելեան ճակատի ռազմագետ Պօղոս Սուլթան-Շահէն կ'իմանայ օսմանեան բանակի տեղակայութեան, հնարաւորութիւններուն, ուժին եւ կառուցուածքին մասին մանրամասնութիւններ: Չինուորական գաղտնիք նկատուող այդ տեղեկութիւնները Պօղոս Սուլթան-Շահ Ռ.Պերպլերեանին կը փոխանցէ հայ յեղափոխականներուն հանդէպ համակրանք ունենալուն պատճառով: Այդ տուեալները օսմանեան բանակի իրական վիճակին մասին, «շատ աւելի էր քան մենք ամենքս կարծում էինք» կը գրէ Ռ.Պերպլերեան<sup>64</sup>:

3. Ֆրանսացի յայտնի ընկերվարական Փօլ Լաֆարգ (Կ.Մարքսի կրտսեր աղջկան ամուսինը), Ռ.Պերպլերեանին կը ծանօթացնէ գաղտնի համաձայնագրի մը հետ, կնքուած 1887-ին Գերմանիոյ, Աստորիոյ եւ Իտալիոյ միջեւ, ուր յիշեալ երկիրները կը համաձայնին պահել Օսմանեան Կայսրութեան status quo-ն: Փօլ Լաֆարգի համոզմամբ, հայ յեղափոխականները պետք է համոզուին որ Հայկական Հարցի հետապնդման ճամբուն վրայ իրենց թշնամի ունին ոչ միայն Թուրքիան, այլեւ Անգլիան եւ Ռուսիան:

Այս պատճառներով, Պերպլերեան 1894-ին, կը հեռանայ արեւմտահայութեան ազատագրութեան գործնական պայքարէն: Սակայն, կեանքի բերումով, ան յաջորդող քանի մը տարիներուն «գործնապէս» կը շարունակէ մնալ «հնչակեան»:

1895-ին, ւարտելէ ետք ուսումը կը տեղափոխուի Պաքու: Աշ-

խատանքի կողքին կը շարունակէ քաղաքական-յեղափոխական գործունէութիւնը: Պաքուի մէջ կը ստեղծէ հայ բանուորներէ կազմուած քանի մը խումբեր, որոնք կը զբաղին ընկերվարութեան պարապմունքով: Իր յաճախակի այցելութիւններով սահմանամերձ Արտապիլ հայաքնակ գիւղը, պարսկական սահմանի երկու կողմերուն վրայ եւս կը ստեղծէ յեղափոխական բջիջներ: Այս բջիջները կարելի էր կը կատարեն արտասահմանէն յեղափոխական գրականութիւնը գաղտնօրէն Անդրկովկաս եւ Ռուսաստանի կեդրոնական քաղաքներ տեղափոխելու գործին մէջ: Հնչակեան հրատարակութիւնները (որոնց հետ նաեւ ռուս յեղափոխականներու հրատարակութիւնները) ազատօրէն կը ստացուէին Թաւրիզի մէջ, ուրկէ կը տեղափոխուին Արտապիլ, այդտեղէն գաղտնօրէն կը տեղափոխուին մինչեւ Օստա, Փեթերսպուրկ, Քիւեւ եւայլն: Փաստօրէն, Ռ.Պերպլերեան կը կատարէ այն ինչ որ կ'անկախուէր հնչակեան գործիչէ մը:

1895 Օգոստոսին, մինչ Ռ.Պերպլերեան այցելութեան համար կը գտնուէր իր ծննդավայրը, տեղի կ'ունենայ Անդրկովկասի հնչակեան ղեկավարութեան ձերբակալութիւնը: Կը ձերբակալուի նաեւ ան: Ձերբակալուածները՝ Ռ.Խանազար, Ղազարոս Աղայեան, Ատրպետ, Շիրվանզադէ, Աւետիք Իսահակեան, Սեւ Սանդո (Ալեքսանդր Ստեփանեան), Սաքո Աղամիրզեան, Աշոտ Խումարեան, Խաչիկ Վարդանեան, Արմենակ Շահմուրադեան (որպէս արեւմտահայ կը յանձնուի թրք. իշխանութիւններուն եւ բանտակից կ'ըլլայ Արամ Արամեանին) եւ ուրիշներ կը մէկտեղուին Թիֆլիսի Մետեխի բանտը, ուր ամիսներ ամբողջ տեղի կ'ունենայ անոնց հարցաքննութիւնը (Ռ.Խանազարի հարցաքննութիւնը կը տեւէ շուրջ մէկուկէս տարի): Ձերբակալեալներուն կը տրուի երեք տարի ացտրի դատավճիռ: Ացտրակալները իրենց կրնային ընտրել իրենց ացտրավայրը, պայմանաւ որ այդ ըլլայ Կովկասէն հեռու: Զանի որ Ռուստով-Նախիջեանը հեռու էր Կովկասէն, Ռ.Պերպլերեան ացտրավայր կ'ընտրէ իր հայրենի ծննդավայրը...: Ռ.Պերպլերեանի օրինակին կը հետեւին եւ Ռուստով-Նախիջեանը իրենց ացտրավայրը կ'ընտրեն Ռ.Խանազարը, Ղ.Աղայեանը, Ատրպետը, Ա.Խահակեանը, Խ.Վարդանեանը, Սեւ Սանդոն: Ացտրուած մտաւորականները կ'որոշեն կազմակերպել գրական-քաղաքական երեկոներ՝ քնական է գաղտնի պայմաններու տակ: Անոնց կը միանան տեղաքնիկ հայ մտաւորականներ՝ Գերոզ Չուբար, Ջաւատ Բէկ Բալուդեան, Ունոփրիոս Անտեան, Գրիգոր Զալխուշեան, Միխաս Պերպլերեան, Երուանդ Շահազիզ եւ ուրիշներ ու կը կազմեն 20-30 հոգիւնց մտաւորականներու պատկառելի խումբ մը, որոնք կը մասնակցին գրական-քաղաքական այդ երեկոներուն: Ռ.Պերպլերեանին

պարտականութիւն կը տրուի զեկոյցներ պատրաստել ընկերային հարցերու շուրջ: Ան, իր մասնագիտութեան վերաբերեալ գիտական յօդուածներով կ'աշխատակցի Նաեւ ռուսերէն «Պրիագովսկի Կրայ» թերթին:

1899-ին, աքսորի ժամանակը վերջանալէն ետք, Ռ. Պերպերեան իր կնոջ ու զաւկին հետ կը հաստատուի Փարիզ: Դոն կը խորացնէ իր ընկերային գիտելիքները եւ երկու տարի տընաջան աշխատանքէ ետք, 1902-ին, Փարիզի Զասարակական Ընկերութեան մէկ նիստին կը կարդայ «Տնտեսական Կեանքի Ազդեցութիւնը Նախնական Արուեստի Վրայ» զեկոյցը, ու կ'ընտրուի ընկերութեան իսկական անդամ: Կը վերահաստատէ իր անձնական բարեկամական կապերը Ֆրանսայի ընկերվարականներուն հետ եւ հայկական նիւթերով կ'աշխատակցի անոնց օրկան "La Petite Republique"ին ինչպէս նաեւ Պաքոյ հրատարակուող «Պաքիսկի Իզվեստիա» թերթին: 1900-ին, որպէս "La Petite Republique"ի թղթակից կը մասնակցի Երկրորդ Սոցիալիստ Միջազգայնականի Բ. համաժողովի նիստերուն: Փարիզ գտնուած միջոցին կը մտերմանայ Նաեւ աշխարհահռչակ գրաքննադատ փրոֆ. Բրանդէսի հետ:

1903-ին կը վերադառնայ Ռոստով-Նախիջեան: Կ'աշխատակցի Մոսկուայի «Ռուսկայա Միսլ», Փետրսպուրկի «Նովի Պոյտ» եւ Ռոստովի «Դոնսկայա Ռէչ» թերթերուն: Իր անձնական գործերուն պատճառով տարին քանի մը անգամ կ'ացյելէ Մոսկուա եւ Փետրսպուրկ ուր կը հաստատէ անձնական լայն կապեր: Դոնստայի դեսպանին հետ ունեցած անձնական բարեկամութեան շնորհիւ, վերջինիս կողմէ կը նշանակուի հարաւային Ռուսիոյ եւ Կովկասի Դոնստայի հիւպատոս (աւելի ուշ ցարական իշխանութիւնները կը միջամտեն եւ այդ պաշտօնը յետ կոչել կու տան):

1918-ին կը կազմակերպուի Նոր Նախիջեանի եւ շրջակայ հայ գիւղերու Զայ Ազգային Խորհուրդը: Ռ. Պերպերեան կ'ընտրուի խորհուրդի նախագահ: Ազգային խորհուրդը մեծ զարկ կու տայ կրթական-մշակութային կեանքին. կը հրատարակէ «Զայ Զամայնը» գրական-մշակութային շաբաթաթերթը:

Ռ. Պերպերեան ի սկզբանէ դէմ էր ընկերվարութեան մէջ Լենինի պարզած տեսութիւններուն: Ռուսական յեղափոխութենէն ետք, ան Փետրսպուրկի մէջ երկարօրէն կը տեսնուի իր հին ծանօթ Պլեխանովի հետ եւ իր մօտ կը խորանայ պոլշեփկներու հանդէպ բացասական վերաբերմունքը: Գործնական գետնի վրայ եւս, ի տես կատարուած սխալներուն, անհանդուրժողութեան ու անտեղի բռնութիւններուն, Ռ. Պերպերեան վերջնականապէս կը հեռանայ Ռոստովէն ու կը հաստատուի Փարիզ: Կը շարունակէ իր մտաւորական

գործունեութիւնը եւ հայ մշակոյթի եւ գրականութեան մասին կը գրէ արժեքաւոր ուսումնասիրութիւններ:

Կը մահանայ 1942-ին:

*Ռուբէն Պերպերեան «որպէս մտաւորական հմուտ քնազետ էր եւ միաժամանակ բարեխղճօրէն ու հիմնապէս ուսումնասիրել էր հանրային-տնտեսական գիտութիւնները: Նա կատարեց բազմաթիւ պրպտումներ մարքսեան վարդապետութեան շուրջ եւ կարողացաւ քննական-գիտական ակնոցներով մօտենալ մի շարք որոյթներին: Դիմնովին ուսումնասիրեց հայ, ռուս եւ եւրոպական գեղարուեստական գրականութիւնը ու թատրոնը՝ յայտնաբերելով նորը գեղագիտական ճաշակ: Բազմաթիւ յարաբերութիւններ նա մշակեց միջազգային յայտնի դէմքերի հետ, որոնք միշտ յարգանքով վերաբերուեցին իրեն, որպէս զարգացած, կրթուած եւ պարկեշտ մտաւորականի: Եղաւ յեղափոխական գործիչ Զնչակեան Կուսակցութեան շարքերում, իսկ յետագային, դուրս գալով կուսակցութիւնից, մնաց հաւատաւոր ընկերվարական: Ուր որ կարողացաւ, քերաւ իր արժեքաւոր օգնութիւնը Զայ Դատի փրոփականտին»<sup>[10]</sup>:*

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Վեմ», 1937, Յուլիս-Յուլտ., Ռ. Պերպերեան, «Պատրանքների Շրջակից»:
- [2] «Վեմ», 1938, Նոյեմբեր-Յունուար:
- [3] «Վեմ», 1938, Յունիս-Յուլիս:
- [4] «Զայրենիք», 1939, Փետրուար. Ռ. Պերպերեան, «Երկու Դարերի Շեմին»:
- [5] Նոյն:
- [6] Վարդան Աւետիսեան, «Զայ Զասարակական Սոցի Զարգացման Մարքս-Լենինեան Փուլի Սկզբնաւորումը», Երեւան, 1976, էջ 254:
- [7] «Նոր Դար», 1896, Յուլիս 11. Ս.Սպահ Գիւլեան «Նամակ Ֆրանսիայից»: Նաեւ «Երկրի Զայն», 1907, Նոյ. 18. Ա. Աթանասեան, «Պեպելը եւ Թիւրքահայ Զարցը»:
- [8] Ս.Սպահ Գիւլեան, «Պատասխանատուները», Պէրուրթ, 1974, էջ 185-187:
- [9] «Զայրենիք», 1939, Փետրուար:
- [10] «Զայրենիք», 1952, Դեկտեմբեր. Ս. Թորոսեան, «Ռուբէն Պերպերեան (Մահուան Տասնամեակին Առթիւ)»:

# ԲԱՐՍԵՂ ՉԱՔԱՐԵԱՆ (ԼԵՒՈՆ)

Հայ ժողովուրդի ազատագրության համար իր կեանքը նուիրաբերելու պատրաստակամ երիտասարդներու տիպարներն է Բարսեղ Չաքարեան:

Բ.Չաքարեան ծնած է Շուշի, 1870-ին:

Նախակրթութիւնը կը ստանայ Շուշիի մէջ: Այդ տարիներուն Բ.Չաքարեանի պատանեկան հետաքրքրութիւններուն մասին իր դասընկերը, ապագային ՀՅԴ-ի յայտնի դեմքերէն Միքայէլ Վարանդեան կը վկայէ. - «Չեղբէ ձեռք կ'անցընէին մանաւանդ «Կայծեր»ը: Օր մը Բարսեղ Չաքարեանն ինչպէս արքունական դպրոցի դասընկերս - յուզուած ծայտնով ըսաւ ինծի, որ մէկ գիշերուան մէջ վերջացուց այդ գրքի երկու հատորներու ընթերցումը: Միտուն աչքերը մարտը էին յոգնութենէն եւ բիբերը կարմիր արցունքներէն»<sup>61</sup>:

Բ.Չաքարեան միջնակարգ կրթութիւնը կը ստանայ Պաքուի Ռէալական դպրոցին մէջ:

1890-ին կը մեկնի ժընեւ եւ կ'ուսանի ժընեւի համալսարանի ընկերային գիտութիւններու բաժնի մէջ:

Ազատագրական պայքարի ոգիով տոգորուած Բ.Չաքարեան, անմիջապէս կը միանայ «Հնչակ»ի Կեդրոնին: Կը ստանձնէ Կեդրոնի քարտուղարութեան պաշտօնը: Այդ մասին Ռուբէն Պերպլերեան կը վկայէ. - «Լեւոն Բարսեղեանին եւ ինձ յանձնել էին «քարտուղա-



րական» պարտականութիւններ. Լեւոնը արձանագրում էր ստանձնուող ու առաքուող նամակները եւ կապոցները, զումարները եւ օգնում էի նրան կամ փոխադրում: Լ.Բարսեղեանը գրում էր գեղեցիկ եւ շատ արագ»<sup>62</sup>: Այդ շրջանին, Բ.Չաքարեան «համարեայ միշտ»<sup>63</sup> ներկայ կ'ըլլայ Պլեխանովի շուրջ համախմբուած ուսանողներու տեսական հաւաքներուն:

Նոյն շրջանին, Բ.Չաքարեան՝ Աւետիս Նազարբեկեանի, Սարգիս Աղամիրզեանի (Սաքօ) եւ Ռուբէն Պերպլերեանի հետ մաս կը կազմէ կեդրոնական վարչութեան կից գործող յանձնախումբին, «որի նպատակն էր հրատարակել ընկերվարութեան վերաբերեալ ժողովրդական գրքոյկներ հայերէն լեզուով»<sup>64</sup>:

Սակայն Չաքարեանի տարերքը Արեւմտահայաստան մեկնիլ եւ գործնական պայքարին մասնակցիլն էր: Երբ Ա.Նազարբեկ Չաքարեանին կ'առաջարկէ կազմակերպչական նպատակներու համար Ռուսաստանի հայաշատ քաղաքները մեկնիլ. - «Չաքարեանը (Լեւոն Բարսեղեան) բացարձակապէս յայտարարեց, որ ուզում է գործել միայն թրքահայ գաւառներում. դա նրա կեանքի նպատակն է եւ այդ մտքով այնտեղ գործելու համար է նա պատրաստում իրեն»<sup>65</sup>:

Խօսքէն անցնելով գործի, 1892-ի ամառնային արձակուրդին, Բ.Չաքարեան ժընեւէն կը մեկնի Աթէնք՝ ուր հաստատուած էր Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան գրասենեակը ու կ'առաջարկէ Թրքահայաստան մեկնելու իր պատրաստակամութիւնը: Այս մասին Ռուբէն Խանազատ կը յուշագրէ. - «Եւրոպայում համալսարանական ամառնային արձակուրդները սկսելուն պէս, այդ նոյն 1892 թուին Աթէնք եկան Սարգիս Աղամիրզեանը (Սաքօն), որն արդէն վերջացրել էր Գրինեմի երկրագործական բարձրագոյն դպրոցի դասընթացը, նաեւ Բարսեղ Չաքարեանը ժընեւից: Վերջինը համալսարանի 2-րդ թէ 3-րդ կուրսի ուսանող էր դեռ: Սրանք երկուսն էլ եկել էին Հայաստան անցնելու նպատակով»<sup>66</sup>: Սակայն, Բ.Չաքարեան իր նկարագրով եւ խառնուածքով աւելի մտաւորական կազմաւորում ունէր քան մարտական: Ընկերները շատ խանդավառ չէն ըլլար անոր առաջարկով: «Ես դեռ անցեալ Մայիսին Աթէնքում նախազգացել էի, որ մեր Լեւոնի Սարգուան ուղարկելը արկածախնդրութիւն է, որ աղէտով կարող է վերջանալ: Երբ կեդրոնի միւս ընկերներին կարողացայ համոզել, փորձեցի Լեւոնի վրայ ազդել՝ համոզելով որ այդ ծրագիրը վնասակար է եւ մեր գործի եւ իր կեանքի համար: Լեւոն Բարսեղեանը լուռ էր եւ միայն ասում էր. - «Եթէ նախասահմանուած է որ գոհուեմ, գերադատում եմ, որ Հայաստանի հողի վրայ լինի»<sup>67</sup>:

Նոյն տարին Բ.Չաքարեան ափ կ'ելլէ Մերսինի նաւահանգիստը: Առաջին օրէն իսկ ան թրքական գաղտնի ոստիկանութեան ուշադրութեան կ'արժանանայ: Կը շրջի Կիլիկիոյ շրջանի հայաշատ ավանները՝ Այնթապ<sup>98</sup>, Չորք Մարգպան, Ալեքսանտրեթ<sup>99</sup>, եւ այլն, ամենուր տարածելով ազատագրական պայքարի գաղափարախօսութիւնը եւ կազմելով յեղափոխական բջիջներ: Կը հանդիպի նոյն նպատակներով ասպարեզ իջած, յեղափոխական յայտնի գործիչ ժիրայրին (Մարտիրոս Պոյաճեան) հետ<sup>100</sup>: «Ուր որ կ'երթայ Չաքարեան՝ կ'ընդունուէր որպէս Կեդրոնի առաքեալ՝ համապատասխան յարգանքով: Իր դիրահաղորդ բնաւորութեան եւ խօսելու կարողութեան շնորհիւ՝ ան կարճ ատենուան մէջ կը դառնայ երիտասարդութեան փնտռուած գործիչի եւ անձնագոհ յեղափոխականի կերպարը»<sup>101</sup>:

Բ.Չաքարեանի վրայ գաղտնի ոստիկանական հսկողութիւնը կը խստանայ եւ ան Ալեքսանտրեթի մէջ որոշ շրջան մը թաքնուած մնալը ետք կը վերադառնայ Աթէնք:

Երկար չի մնար հոն: Կը վերադառնայ «Յայաստան»՝ այս անգամ հաւանաբար մուտք գործելով Սամսոնի նաւահանգիստն<sup>102</sup>: Բ.Չաքարեան կը նշանակուի Մարգուանի շրջանի գործիչ՝ ուր կը գործէ տարիէ մը աւելի: Կը նշանակուի Մարգուանի դպրոցի տնօրէն: Անոր սերտ գործակիցներէն կ'ըլլայ բողոքական քարոզիչ Յարութիւն Թումայեան: Հովուի տարագին տակ ծպտուած, երկու յեղափոխականները կը շրջին գիւղէ գիւղ ու կը համախմբեն ազատասեր երիտասարդները: Հաւաքատեղի ընտրելով Խըտրլըզ գիւղի մօտակայ դաշտը, երկու գործիչները կը յաջողին իրենց շուրջ համախմբել հայրենասեր եւ մարտունակ երիտասարդներու ցանց մը: Կը կազմուի Մարգուանի հնչակեան ֆետայական խումբը, որ կապի մէջ կը մտնէ Սամսոնի շրջանին մէջ գործող Միհաս Օղլուի հռչակաւոր խումբին հետ: 1 Հոկտ. 1892 թուակիր նամակին մէջ Աւետիս Նազարբէկեան Բ.Չաքարեանին կը գրէ.- «Ինչպէս դու արդէն գրում ես թէ՛ սուրբ գործի լծուած եք: Աշխատեցէք ոյժ տալ այծերին դէպի լեռները շուտ քշել, կարելիին չափ խմբուած: Այդ դեռ բաւական չէ, հարկաւոր է նրանց մանրամասնօրէն բացատրել իրենց դերերը եւ ցոյց տալ անմիջական մի գործ իրենց համար: Այս վերջին կետի վրայ քու առանձին ուշադրութիւնն եմ հրաւիրում: Մի մոռնար, որ ոչ-գաղափարական մարդու համար, շատ դժուար է հաւատարիմ մնալ գործին, եթէ նրա ձգտումների գործադրութեան համար անմիջական գործ չի տրուում: Նա կը ձանձրանայ»<sup>103</sup>:

1893 Սեպտ. 8-ին, լրտեսները կը մատնեն Չաքարեանի խումբին թաքստոցը: Մեծ թիւով թրքական զօրքը արագ ներխուժումով կը

մտնէ Մարգուանի թաղերը եւ կը պաշարէ Չաքարեանի հայրուկային խումբը: Բռուն եւ երկարատեւ փոխհրածգութենէ մը ետք, կը նահատակուին խումբին եօթը անդամները, որոնց մէջ յայտնի ֆետայիներ Մխիթար Տեր Նշանեան եւ Միհրան Չենկիւճեան: Մի քանի տեղէ վիրաւոր եւ ուժասպառ Բ.Չաքարեան կ'իյնայ գերի: Չարչարանքներու միջոցով կը ստիպեն Բ.Չաքարեանին խոստովանութիւններ կատարել: Վերջինս կը մնայ անդրդուելի: Վեց ժամ տեւող տաժանքէն յետոյ, Բ.Չաքարեան կը նահատակուի արիւնաքամ:

Նոյնամասն ճակատագրի կ'արժանանայ Բ.Չաքարեանի զինակիցը՝ Յ.Թումայեան, որ Մարգուանի դէպքէն ետք կ'անցնի Ամասիա: 1894 Մարտին թրքական զօրքը կը պաշարէ Թումայեանի թաքստոցը: Փոխհրածգութեան ժամանակ կը նահատակուի Թումայեանի զինակիցը՝ Մարգուանի Ամերիկեան Գոլճեի շրջանաւարտ Միհրան Մանիսաճեան, իսկ ինք կը վիրաւորուի եւ կը ձերբակալուի: Չարչարանքներու միջոցով կը փորձեն Թումայեանէն գաղտնիքներ կորզել՝ բայց ի գուր: Կալանատան մէջ առանց բժշկական օգնութեան մնացած յեղափոխականը, քանի մը ժամ ետք անօգնական կը մահանայ:

«Դրօշակ», Բ.Չաքարեանի նահատակութեան մասին կը գրէ.- «Սրանից մի քանի ամիս առաջ Մարգուանում տեղի ունեցած արիւնահեղ կռուի ժամանակ զոհ գնաց ժընեի նախկին ուսանող Բ.ՉԱՔԱՐԵԱՆԸ: Հանգուցեալը ոգեւորուած հանրամարդկային վսեմ գաղափարներով եւ համոզուած՝ որ այդ գաղափարները հասարակական կեանքում կարելի է իրականացնել միայն արիւն թափելով, դեռ շատ վաղ, 22 տարեկան հասակում, երես ձգեց կռուի դաշտը, ուր, աւաղ, երկար չապրեց. նա ընկաւ, քայքայար պաշտպանելով իր ընկերներին»<sup>104</sup>:

Տարիներ անց, հայ ազգ.-ազատագրական շարժումը գնահատելու իր փորձին մէջ, Միքայել Վարանդեան Բ.Չաքարեանի մասին կը գրէ.- «Ահա Չաքարեանը... մի ճոխ ու շարժուն իմացականութիւն, որ կոչուած էր մեր մտաւոր կեանքի զարդերից մինը լինելու: Չաքարեանը- ահա Կանտի «Զաղէկօրիկ Իմբերադիվի» անձնաւորումը: Այդ նրբամիտ եւ կրթուած երիտասարդը, դեռ նոր բազմած բախտի բերմամբ համալսարանական նստարանի վրայ, ծանուցանում է բարձրաձայն, որ ժամանակակից հայ սերունդին վիճակուած չէ պարզելու ուսման ու «կուլտուրականութեան» որոշանքը, այլ որ կայ մի աւելի բարձր, հրամայական պարտականութիւն- Թրքահայոց ազատագրական պայքարը- որին պէտք է հպատակուին եւ որի շուրջը պիտի կեդրոնանան մեր բոլոր ուժերն ու ճիգերը: Եւ նա

ինքը տալիս է առաջին օրինակներից մինը. նա ինքը դառնում է այդ քաղեկօրիկ հրամայականի ողջակերը... Չաքարեանը՝ արեան դաշտում, թելուզ քարոզչի պաշտօնով... թուն էր անեթետիզացիան, ֆենոմեն... մի մարդ, որին ատրճանակի տեսքն անգամ արհաւիրք էր ազդում... Շուշու արքունական դպրոցի մէջ 80-ական թուականներում ընկերներին պետք էր լինում շարունակ հսկել, պաշտպանել նրան խուժողուժ տարրերի սովորական յարձակումներից. այդ քնքշատիպ եուրոները բնաւ ստեղծուած չէր արկածաւոր ու ահաւոր մարզանքների համար. բայց կեանքը նրան էլ կերպարանափոխեց... 90-ական թւերի արշալոյսին «ձայնը հնչեց Էրզրումի լեռներէն» եւ այդ ձայնի հետ հնչեց նաեւ թրքահայոց հեծօժանքը: Չաքարեանը ժընել է գալիս կարծես միայն վերջնականապէս հաստատուելու իր համոզման մէջ՝ որ բարձր ուսումն ու զարգացումը սահմանուած են մեր ապագայ սերունդներին միայն: Կիսատ է թողնում համալսարանը եւ... դէպի երկիր... գնալն ու նահատակուելը համարեայ թէ մէկ է լինում... Ecce homo!... Բնութիւնն ամեն բան տուել էր նրան՝ կեանքը վայելելու եւ փայլուն, նախանձելի դիրք ստեղծելու, բայց նա իր ներքին հրամայականի մղումով՝ գրեթէ անզեն նետուեց արիւնտտ արկածների դաշտը, թոյլ՝ ֆիզիկական կարողութեամբ, բայց ուժեղ՝ իրաւունքի գիտակցութեամբ: Բռնակալութեան գռեհիկ ձեռքը հնձեց այդ ընտիր ծաղիկը եւս, ընդամենը 24 տարեկան հասակում... Խեղճ Չաքարեան նա կարող էր Մեծ Յեղափոխութեան օրերի լացող Անտրէ Շենիէի պէս բացականչել.-

Յագիւ սկսուած կեանքի խնճոյքին՝  
Մէկ վայրկեան միայն իմ շրթունքները  
Սեղմեցին ձեռքիս բաժակը՝ դեռ լեցուն...»<sup>19</sup>:

Աւետիս Նազարեկեան եւս, Բ.Չաքարեանի նահատակութեան առիթով «Յնչակ»ի մէջ կը գրէ.- «Յայութեան կրթուած ծաղիկ երիտասարդութեան մէջ Չաքարեաններ շատ քիչ կան: Նրա մէջ համոզումների հաստատութիւնը միախառնուում էր զգացումների ջերմութեան հետ, դատողութեան պաղարհիւնութիւնը գործելու եռանդի հետ. ընտրած ճանապարհի բոլոր արհաւիրքների գիտակցութիւնը՝ դէպի գործը ունեցած վառվռուն յափշտակութեան հետ: Նա տէր էր մէկ ազնիւ բնաւորութեան, ուղղամիտ, լուրջ մտածող, սիրող, մեղմ, անաչառ: Նա յարգուած ու սիրուած էր իր բոլոր ընկերների կողմից: Չարգացած կարողացած ու խելացի իր 22 տարեկան հասակի համեմատ շատ ու շատ աւելի՝ նա հասուն երիտասարդ էր եւ միշտ մեծ ուշադրութեամբ էր յարգուում նրա իւրաքանչիւր կարծիքն ու

դատողութիւնը: Ընդունակ կազմակերպող յեղափոխական խմբերի, իր զարգացման ու լրջութեան շնորհով նա օրինակելի փրփականտիստ էր նաեւ ինչպէս ընդունակ վիճաբանող: Նա տաղանդ չէր, բայց նա մէկ ոյժ էր, հասարակական մի կարելոր ոյժ, որպիսիներ շատ չեն հայ երիտասարդութեան մէջ: Նա մէկ ոյժ էր դրական, հաստատ, ինքնավստահ, տոկուն, ինքնուրոյն: Յայ երիտասարդութեան լաւագոյն տպերից մէկն էր նա: Իր միակ մտածումը գործն էր, իր մշտական մտատանջութիւնը կուսակցութեան ներքին գործերի հոգսն էր: Իր սեփական անձը նա մոռցած էր, անձնականը, ամոռնութիւն, նիւթական սուղ վիճակ, մինչեւ իսկ համալսարանական ուսումը, որ նա պաշտում էր, բոլորը նրա համար ոչինչ դարձան, երբ նա զգաց իրան պատրաստ եւ ընդունակ ծառայելու հայ ժողովուրդի դատին: Այդ արիւնալից ասպարեզում, այդ ջղային, վտանգալի գործունեութեան մէջ նա ամփոփուած էր տեսնում իր ձգտումների արտայայտութիւնը, իր գոյութեան իմաստը, իր հոգու բաղձանքը, աշխատելով ինքն էլ բերել մի քար այն հասարակական շէնքի կառուցման համար, որ պետք է մէկ օր իրականացնէ իր պաշտած գաղափարները եւ որի համար մղուած կուում նրա ճակատը, աւաղ տարածամ կերպով պետք է պսակուեր նահատակի փշէ պսակով: Մահի մասին նա չէր մտածում, բայց միշտ սպասում էր նրան, քաջ գիտնալով, որ ազատութեան մեծ, բայց անհաւասար կուում մահը միշտ ներկայ է: ...Կառավարութիւնն իր անզօր կատաղութեամբ՝ տեսնում էր իր տկարութիւնը յեղափոխականների դիմաց, մանաւանդ երբ Մարգուանի տեռորական փաստերը յաջորդուեցան նոյնպիսի գործողութիւններով Ամասիայում եւ ուրիշ տեղերում, որպէս նաեւ մի քանի «վտանգաւոր» յեղափոխականների յաջող փախուստով նոյն կողմերի բանտերից: Կառավարչական սպիտակ տեռորը խիստ էր, յեղափոխականների վիճակը շատ բարդուած: Այդպիսի հանգամանքներում Չաքարեանցի մնալը Մարգուանում այլեւս ծայրայեղ յանդուութիւն էր, կառավարութիւնը կատաղութեամբ փնտռում էր «Ֆեսատ-պաշի (սպասումբապետ) ռուսաստանցին»: Ընկերները չէին դադրում գրել նրան հեռանալ Մարգուանից: Անձնուրաց գործիչը խոստանում էր, բայց եւ շարունակում էր մնալ: Իր տարածամ մահից մէկ երկու օր առաջ ընկերներին ուղղած նամակում այդ պնդումների նկատմամբ նա գրում է ի միջի այլոց հետեւեալը.- «Այժմ կարող եմ ասել, որ վիճակս արդարեւ շատ քրիդիքական է, բայց ասացեք, խնդրեմ, ի՞նչպէս թողնեմ Մարգուանը կրակի մէջ եւ ամենակարելոր գործեր գրեթէ առկախ: Ես դեռ պետք է մնամ այստեղ գէթ կարճ ժամանակով, յեղափոխութեան հազարաւոր զինուորնե-

րից մէկը չե՞մ արդեօք- իմ տեղս դեռ այստեղ Մարզուանն է»:  
 Վեհանձն քաղաքացիական արիութեամբ շնչող խօսքեր, բայց ևս  
 ո՛չ թէ «հազարաներից մէկն» էր, այլ ինքը մինակ՝ հազար էր, մի  
 բան, որ իր համեստութեամբ չէր հասկանում»<sup>[8]</sup>:

Ու յեղափոխութեան հազարաւոր զինուորներէն այդ մէկն ալ, որ  
 ինքնին հազար էր, առ յաւետ կը մնայ Մարզուան...:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ


- [1] «Յայրենիք», 1929, Մայիս, թիւ 7. Մ.Վարանդեան, «ՐԱՖՅԻ-Մահուան  
 Զառասանմեակի Առթիւ»:  
 [2] «Վեմ», 1938, Յունուար-Մայիս, 2. տարի թիւ 2. Ռ.Պերպերեան,  
 «Պատրանքների Շրջակից»:  
 [3] «Վեմ», 1938, Նոյ. - Յունուար:  
 [4] «Վեմ», 1938, Յոկտ. - Դեկտ.:  
 [5] «Վեմ», 1938, Յունիս. - Սեպտ.:  
 [6] «Յայրենիք», 1928, Մարտ. Ռ.Խանազատ, «Յայ Յեղափոխականի  
 Յուշերից»:  
 [7] «Յայրենիք», 1943, թիւ 1 (234), ԻՎ տարի. Ռուբեն Պերպերեան, «Ի՞նչպէս  
 Յեռացայ Յնչակեան Կուսակցութիւնից»:  
 [8] Արսէն Կիտուր, «Պատմութիւն Ա.Գ.Յնչակեան Կուսակցութեան», Ա. հտ.,  
 Պէյրուզ, 1962, էջ 164:  
 [9] Նոյն, էջ 169:  
 [10] Նոյն, էջ 92:  
 [11] Նոյն:  
 [12] Նոյն, էջ 86:  
 [13] Նոյն, էջ 68:  
 [14] «Դրօշակ», 1894, Փետրուար. «Չոհեր»:  
 [15] Մ.Վարանդեան, «Վերածննդող Յայրենիքը եւ Սեր Դերը», Ժընեւ, 1910, էջ  
 44-46:  
 [16] «Յիսնամեակ Ա.Գ.Յնչակեան Կուսակցութեան», Փրովիտենս, 1938.  
 Լեռնց, «Բարսէղ Չաքարեանց»:

## ՄԻՄՈՆ ՀՈՎԻԵԱՆ (Ս. ՏԱՇԻՐ)

Դժուարին պահերուն պա-  
 տասխանատուութիւն վերցնե-  
 լու պատրաստակամ նւիրեալ-  
 ներէն եղած է Ս.Տաշիր (Միմոն  
 Յովեան):

Ս.Տաշիր ծնած է Լոռիի  
 Արդուի գիւղը, 1869-ին: Գիւղի  
 ծխական դպրոցն ետք, 1887-ին  
 կ'աւարտէ Թիֆլիսի Ներսէս-  
 եան վարժարանը: 1890-էն  
 ուսուցչութիւն կը կատարէ  
 Պաքուի Մեսրոպեան եւ Յովի-  
 սիմեանց դպրոցներուն մէջ:

Երիտասարդ տարիքէն հա-  
 կումներ ցոյց կու տայ դէպի  
 գրականութիւն եւ արուեստ-  
 ներ: Կը գրէ բանաստեղծու-  
 թիւներ, մաս կը կազմէ թա-  
 տերախումբերու, ինչպէս նաեւ  
 Գարա Մուրգայի երգչախումբին՝ որուն հետ կ'ունենայ ելոյթներ  
 եւ համերգային շրջապտոյտներ: Գարա Մուրգայի միջոցով կը ծանօ-  
 թանայ գրող Ատրպետին (Մարգիս Մուպահաճեան), որուն ազդե-  
 ցութեան տակ, 1891-ին կը մտնէ Յնչակեան Կուսակցութեան շար-  
 քերը: 1892-93-ին, Միկիտան Եագոր ստորագրութեամբ զաւելչա-  
 կան մանրապատումներով կ'աշխատակցի «Նոր Դար»ին. 1895-էն,  
 Նոյն թերթին մէջ, «Չուռնա-Տմբլա» ընդհանուր խորագիրին տակ,  
 Տմբլաչի Խաչան ծածկանունով կը ստորագրէ լուռուայ բարբառով  
 գրուած երգիծական «Ֆելլիետոն»ներ: Մշակութային կեանքին  
 հանդէպ իր ունեցած այս բազմակողմանի հետաքրքրութիւնները  
 ան կը պահէ մինչեւ կեանքին վերջը՝ ու կը զարգացնէ աւելի:



Օրինակի համար, անոր թողած հարուստ արխիվին մեջ կը մնայ «շախմատի պատմության եւ հայ շախմատիստների գործունեութան հետ կապուած յօդուածներ, տեղեկութիւններ, ցուցակներ, նկարներ» թղթածրարը<sup>15</sup>:

1890-ականներու սկիզբներուն, Ս.Տաշիր, փրոկիմազիայի եւ Ռիալական դպրոցի աշակերտներով կը կազմէ խումբ մը: «Այդ խմբի հետ ես մօտ 4-5 տարի պարապում էի հայոց պատմութիւն, կարդում էի Փեթերսպուրկի հայ ուսանողութեան հրատարակած ազատագրական բովանդակութիւն ունեցող (գլխաւորապէս պուլկարական ապստամբութեան ժամանակներից) գրքեր՝ յեղափոխական պրոշիւրներից, առանց բացայայտ կերպով յայտարարելու իմ հնչակեան լինելու հանգամանքը՝ որովհետեւ գործը բացուելու դէպքում շատերը կարող էին հեռանալ իրենց ծնողների պահանջով, կամ այլ խոչընդոտների հանդիպել» - կը գրէ Ս.Տաշիր իր յուշերուն մէջ<sup>16</sup>: Աշակերտական այդ միութիւնը կը հրատարակէ Ս. Տաշիրի առաջին թարգմանական գործը, իտալացի գրող ճովահիրլիի «Սպարտակ» վէպը, որուն 1500 տպաքանակը կը սպառի շատ շուտով: Աշակերտական խումբէն գատ, Ս.Տաշիր կը կազմէ նաեւ աշխատաւոր պատանիներէ կազմուած երկու խումբեր Պաքուի եւ Սեւ Քաղաքի մէջ՝ որոնց հետ ան կ'ունենայ նոյն պարապմունքները՝ ի հարկէ անոնց մտաւոր պատրաստութեան համապատասխան: «Այդ երկու խմբերն էլ արդիւնաւոր «բիւրներ» հանդիսացան մեր ապագայ հնչակեան կազմակերպութեան համար, թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս»<sup>17</sup>. - կը գրէ ան:

1894-ին, Պաքուի Մեսրոպեան եւ Զոհիսիմեանց դպրոցներուն մէջ պաշտօնավարող, նախկին Ներսէսեանցի խումբ մը երիտասարդ հնչակեան ուսուցիչներ՝ Ս.Տաշիր, Արամ Նազարեան, Սեդրակ Պալաեան, Սահակ Մատինեան, Սիսակ Օհանեան եւ Մկրտիչ Բեզլարեան, խնայողաբար ապրելու համար, միասնաբար կը վարձեն երեք մեծ սենեակներէ բաղկացած բնակարան մը: Այդ յարկին տակ, երեկոները անոնք կ'անցնեն ազգային, գրական, հասարակական թէ քաղաքական կեանքը յուզող հրատապ նիւթերու շուրջ գրոյցներով: Այդ երեկոներուն, մնայուն բնակիչներէն գատ կը մասնակցին նաեւ գաղափարակից այցելուներ: Շուտով, այդ հաւաքը կը կոչուի «Օճախ»: «Յիշեալ խմբակցութեան հանրակացարանը՝ «Օճախ»ը, որոշ իմաստով, Պաքուի հնչակեան կազմակերպութեան անլեկալ ակումբն էր»<sup>18</sup>: Այդպէս կը պատահի ինքնաբերաբար, առանց նախածրագրումի: Նոյնիսկ, Պաքուի «Ընկեր» մասնաճիւղը կը բողոքէ Կեդրոնական Վարչութեան, որ իր շրջանէն ներս, առանց իր գիտակցութեան սկսած է գործել կուսակցական այլ մասնաճիւղ

մը: Այս հարցը շուտով կը հարթուի եւ «Օջախ»ը կը շարունակէ իր գործունեութիւնը:

«Օճախ»ը կ'ունենայ իր «արտասահմանեան» հիւրերը, որոնց շարքին՝ կուսակցական առաքելութեամբ Թիֆլիսէն Պաքու ժամանած Ղազարոս Աղայեանն ու Յովհաննէս Թումանեանը: Յատկանշական կ'ըլլայ «Օճախ»ի սեմին Յ.Թումանեանի հանդիպումը իր ընկերներուն՝ ուր ան կ'ըսէ սա երկտողը-

*Ես եկայ ձեր օճախը*

*Դնելու ձեր պունճիսը*

Ապագային, Յ.Թումանեան կը գրէ «Օճախ»ը բանաստեղծութիւնը:

Հայ երկու մեծանուն գրողներուն կողքին, «Օճախ»ի հիւրեր կ'ըլլան եւ անոր «պատուաւոր անդամ» կը նշանակուին Շիրվանզանդէն, դերասան Գրիգոր Աւետեանը, հրապարակախօս Սիմոն Դախումեանը եւ ուրիշներ: Այս այցելուներուն շնորհիւ, հանրութեան աչքին «Օճախ»ին վարկը կը բարձրանայ, անոր երեկոներուն ներկայ եղողներուն թիւը կ'աճի, ուստի կարգ մը երեկոյթներ տեղի կ'ունենան ասելի ընդարձակ բնակարաններու եւ նոյնիսկ վարձու սրահներու մէջ: Կ'ընտրուի «Օճախի քաղաքի վարչութիւն»ը՝ Ս.Տաշիրի գլխաւորութեամբ: Կը կազմուին օժանդակ յանձնախումբեր (կանանց, տնտեսական, պատասխներու, եւ այլն) : Կը կազմակերպուին նաեւ հասութաբեր ձեռնարկներ, որոնց հասոյթը կը փոխանցուի Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան: Հրապարակային ձեռնարկները տեղի կ'ունենան որեւէ բարեսիրական նպատակի անուան տակ, իսկ խումբերու հանդիպումները՝ գաղտնի:

Ս.Տաշիր կ'անդամակցի եւ աշխոյժ գործունեութիւն կ'ունենայ նաեւ Պաքուի Մարդասիրական Ընկերութեան մէջ: Անոր քանքերուն շնորհիւ, Մարդասիրական Ընկերութիւնը մնայուն ամսականներ կու տայ Յ.Թումանեանին, Ղ.Աղաբեանին եւ Շիրվանզանդէին:

Պաքուի շրջանի կուսակցական կեանքի բուռն վերելքը իր վայրէջքը կ'ապրի 1896-ին: Այդ թուականին Պաքու կը հասնին համիտեան ջարդերէն ճողոպարած հայ գաղթականները եւ Կուսակցութեան Ա. Դամազումարին կ'արձանագրուի պառակտում: Այս իրողութիւնները ժխտական կ'անդրադառնան Պաքուի հնչակեաններուն վրայ: Ընթացք առած այս թուլացման դիմաց, շարքերուն ետանդը պահպանելու համար, Պաքուի հնչակեան վարչութիւնը 1897-ի ամրան, կ'որոշէ Ս.Տաշիրը որպէս լիազօր գործիչ ուղարկել գաւառային շրջանները:

Ս.Տաշիր իր ուղեւորութիւնը կը սկսի Թիֆլիսէն, որ ձերբակա-

լութիւններու, հետապնդումներու եւ ներքին թուլութեան պատճառով, դադրած էր Կուսակցութեան Անդրկովկասի շրջանի միջ ոյժը դառնալու իր առաքելութենէն: Կ'անցնի Ջաւախք՝ Ախալքալաք, ապա Ալեքսանդրապոլ, Կարս՝ ուրկէ կապի մէջ կը մտնէ Կաղզուանի հետ, Ղարաքիլիստ, Պաթում եւ Արդուի: Այս դժուարին շրջապտոյտին մասին Ս.Տաշիր իր յուշերուն մէջ կը գրէ. «Երեւոյթն ընդհանուր էր, համատարած. ոչ մի ելակետ չէի կարողանում գտնել, նրանց խրախուսելու կամ քաջալերելու համար. մասսան սպասում էր «Ազատ Յայաստան» տեսնել, իսկ դրա փոխարէն կոտորած, սարսափներ, կուսակցական պառակտում... Ինչ նիւթ տար յեղափոխական գործիչը»:

Կուսակցական-կազմակերպչական գործունեութեան կողքին, Ս.Տաշիր կը շարունակէ իր գրական հետաքրքրութիւնները եւ նոյն տարին կը թարգմանէ Լերմոնտովի «Յաճի Աբրէք» պոեմը:

1898-ին, բարձրագոյն ուսման համար կը մեկնի Գերմանիա: Նոյն նպատակով իրեն կ'ընկերակցի իր գաղափարի ընկերը՝ Սարգիս Կասեան (Սարգիս Տէր Գասպարեան): Այդ երկար ճամբորդութեան առաջին հանգրուանը կ'ըլլայ Նոր Նախիջեանը, ուր անոնք կը հանդիպին հոն աքսորուած իրենց գաղափարակիցներուն՝ Ռ. Խանազատ, Ղ.Աղայեան, Ատրպետ, Աւետիք Իսահակեան, Ռ. Պերպերեան, Խ.Վարդանեան եւայլն:

Լայիցիկի եւ Յալէի համալսարաններուն մէջ քիմիագիտութեան հետեւելու կողքին, Ս.Տաշիր ամբողջապէս կը ներգրաւուի կուսակցական աշխատանքներու մէջ:

1901 Յոկտեմբերին, Լոնտոնի մէջ կը մասնակցի Յնչակեան Կուսակցութեան Բ. Յամագումարին:

1902-ին, դարձեալ Լոնտոնի մէջ կը մասնակցի Կուսակցութեան Գ. Յամագումարին՝ ուր փորձ կ'ըլլայ վերամիացնել յառջ եկած «հին» եւ «վերակազմեալ» հատուածները: Ս.Տաշիր կը նշանակուի Միացեալ Կեդրոնական Վարչութեան անդամ<sup>65</sup>:

1903 Սեպտեմբերին, Լոնտոնի մէջ կայացած Կուսակցութեան Դ. Յամագումարը (որուն կը մասնակցի նաեւ Ս.Տաշիր), Ռ.Խանազատի (Նշան Ղամբուրեան), Բ.Վարազդատի (Յակոբ Թիւրաբեան), Ա.Ռուբէնի (Եփրեմ Կաճառեան) եւ Արամ Ալըզպաշեանի կողքին Կեդրոնական Վարչութեան անդամ կ'ընտրէ Ս.Տաշիրը:

Նորընտիր Կեդրոնական Կարչութիւնը, որուն երկու անդամները կը գտնուէին արտուսահման (Ա.Ալըզպաշեան՝ Թուրքիա, Ռ.Խանազատ՝ Պարսկաստան), իր աշխատանքները կը սկսի ծանր մթնոլորտի մէջ: Յամագումարէն անմիջապէս յետոյ, վերակազմեալներու կողմէ կը սպաննուին Պաքուի եւ Պաթումի պատգամաւորներ

Ապուլի (Սաղաթէլ Գեորգեան), Որսորդ (Տիգրան Իզմիրլեան) եւ Պամր (Արամ Գրիգորեան): Կեդրոնական Վարչութիւնը, Ս. Տաշիրի ատենապետութեամբ (որ այդ շրջանի կուսակցական նամակներուն տակ կը ստորագրէ Գ.Բագրատունի ծածկանունով)<sup>66</sup>, կը գտնուի քարոզչական ծանր աշխատանք տանելու ստիպողութեան տակ: Ան, բաւարարելու համար մասնաճիւղերուն պահանջը, ոճիրներուն շուրջ բացատրագիրներ պետք էր տար: Այդ շրջաբերականներով եւ նամակներով, պետք է բարձր պահուէր շարքին կորովը, միաժամանակ գայն հեռու պահելով վրէժխնդրական արարքներ:

1902-1904 «Յնչակ»ի մէջ լոյս կը տեսնեն յեղափոխական պայքարէն ներշնչուած Ս.Տաշիրի ոտանաւորները, հայկական հարցին նուիրուած գերմանական մամուլէն կատարած թարգմանութիւններն ու հայ ազգ.-ազատագրական պայքարին մասին վերլուծական յօդուածները:

1904 Յունուար-Յունիս, Ս.Տաշիր Յնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչի հանգամանքով կը շրջի Անդրկովկասի մասնաճիւղերը, կը տանի քարոզչական եւ կազմակերպչական աշխատանքներ ու կը կատարէ նուիրահաւաք՝ դէպի Երկիր զէնք փոխադրելու նպատակին համար:

1905 Սեպտեմբերին, Ս.Տաշիր Փարիզի մէջ կը մասնակցի ՍԴԿԿ 5-րդ Յամագումարին ու կը պաշտպանէ կուսակցութիւնը մէկ ու միասնական պահելու տեսակետը<sup>67</sup>:

1909-ին, քիմիագիտութեան տղջորթի կոչումով վկայուելէ ետք կը վերադառնայ Թիֆլիս: Ախալքիսայի, Պաքուի եւ Էջմիածնի մէջ կը կատարէ տարբեր աշխատանքներ: Այդ միջոցին կը շարունակէ իր հասարակական եւ կուսակցական գործունեութիւնը:

1915 Ապրիլ 4-7, Թիֆլիսի մէջ տեղի կ'ունենայ խորորդաժողով Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերուն միջեւ: Ժողովին կը մասնակցին պատգամաւորներ Թիֆլիսի, Ատրախանի, Ենգելիի, Թաւրիզի, Պաթումի, Կարսի, Երեւանի, Շուլաւերի, Ելիզաւետապոլի, Ղարաքիլիսայի, Պաքուի, Էջմիածնի եւ Ալեքսանդրապոլի մասնաճիւղերէն: Ս.Տաշիրի կողքին (Էջմիածնի պատգամաւոր), ժողովին ներկայ կը գտնուին կուսակցութեան յայտնի դէմքերէն Մարս (Վահան Մարտեան), Լազօ (Յակոբ Ղազարեան), Առաքել Պատմագրեան, Գուլուկ (Զրիստափոր Վարդանեան), Գուրգէն (Գարեգին Մկրտիչեան), Մալխաս (Գրիգոր Զացախեան), Էմիլ ճոն (Միքայէլ Ստամպոլցեան), Պանդուխտ (Միքայէլ Սերեան), Սոսի Գուգարք (Արտեմ Նաղիբեան), Ֆլորա Վարդանեան, Մոզպետ (Մելքոն Ասիլբէկեան), Իսահակ Յովսէփեան (Ս.Տաշիրի եղբայրը), Շահէն (Ասատուր Ռոստոմեան) եւ ուրիշներ:

Ս. Տաշիրի նախագահութեամբ, գաղտնի պայմաններու տակ գումարուած խորհրդաժողովը, Համաշխարհային Ա. Պատերազմի լոյսին տակ կը քննարկէ Անդրկովկասի քաղաքական եւ զինուորական կացութիւնը, կամաւորագրութեան հարցը, շրջանին մէջ կուս. մամուլ ունենալու հարցը եւայլն: Ժողովը Անդրկովկասի, Ռուսաստանի եւ Պարսկաստանի համար կ'ընտրէ հինգ հոգիներ գործադիր մարմին մը, որուն մէջ կը մտնեն Ս.Տաշիր, Լազո, Գուրգու, Էմիլ Ճոն եւ Գորգէն: Գործադիր մարմինը, կամաւորական եւ զինուորական գործերը կարգաւորելու համար կը նշանակէ Ռազմական Խորհուրդ՝ կազմուած Երկաթէ (Արշակ Պապեան), Ս.Տաշիր եւ Լազոյէ:

Միս կողմէ, 1913 Կեստենչի 7-րդ Համագումարէն ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը կը գտնուէր դժուարութեան առջեւ: Կեդրոնական Վարչութեան երեք անդամներէն Փարամազ ձերբակալուած էր. Բ.Վարազդատ կը գտնուէր Փարիզ՝ եւրոպական շրջանակներուն հետ յարաբերութիւն պահելու եւ «Հնչակ»ը հրատարակելու համար. Սապահ Գիւլեան, սկզբնական շրջանին Եգիպտոսի եւ ապա ԱՄՆ-ի մէջ ամբողջապէս կլանուած էր գաղթաշխարհի մէջ կամաւորագրութեան եւ նուիրահաւաքի աշխատանքներով ու կը խմբագրէր «Երիտասարդ Հայաստանը»: Ի դիմաց թաւալելու ընթացող դէպքերուն, Կեդրոնը ինքտ գումարելու հնարաւորութիւն չունէր: Համագումարի մասին մտածելն անգամ աւելորդ էր: Այս պայմաններուն տակ, նկատելով որ արագընթաց դէպքերու ծանրութեան կեդրոնը տեղափոխուած է Անդրկովկաս, 1916-ին Թրոյի մէջ գումարուած ԱՄՆ-ի արտակարգ պատգամաւորական ժողովը, արտասահմանեան մասնաճիւղներուն հետ համախորհուրդ, ռեֆերանտումով Ռազմական Խորհուրդին կու տայ Կեդրոնական Վարչութեան ամբողջական լիազօրութիւն<sup>95</sup>: Յաջորդ տարի, 1917 Յունիս 16-ին, դարձեալ Թիֆլիսի մէջ գումարուած խորհրդաժողովը, որուն կը մասնակցէր նաեւ Ս.Տաշիր, այս կազմին վրայ կ'աւելցնէ Վահան Մարսեանի անունը<sup>96</sup>, որն եւ իբրեւ ՍՂՀԿ Կեդրոնական Վարչութիւն կը գործէ մինչեւ 1924՝ ՍՂՀԿ Ը. Համագումարը:

1916-17, Ս. Տաշիր մաս կը կազմէ Թիֆլիս հրատարակուող կուսակցական օրկան «Գաղափար» թերթի խմբագրական կազմին:

1917 Սեպտ.-Հոկտեմբերին, Թիֆլիսի մէջ կը մասնակցի Հայ Ազգային Համախորհրդակցութեան, ուր կը քննարկուին ստեղծուած քաղաքական նոր իրադրութեան մէջ հայ ժողովուրդի առջեւ դրուած կենսական հարցերը: Ս.Տաշիր, քարտուղարի պաշտօնով կ'ընտրուի ժողովի դիւանին անդամ, մաս կը կազմէ «դպրոցներու ազգայնացման եւ ազգ. ծխական ու հոգեւոր դպրոցների դրութեան հար-

ցերը մշակելու յանձնախումբ»ին, ու այս նիւթով զեկոյց կ'ունենայ ժողովին առջեւ<sup>97</sup>:

1919-ին, դարձեալ Թիֆլիսի մէջ, կը խմբագրէ կուսակցութեան օրկան «Գործաւոր»ը:

Ս. Տաշիրի ՍՂՀԿ Ռազմական Խորհուրդին եւ ապա Կեդրոնական Վարչութեան անդամութեան տարիները՝ 1915-1924, հայ ժողովուրդին, Հայաստանին ու ՍՂ Հնչակեան Կուսակցութեան համար կ'ըլլան ամենէն փորձնաշատ տարիները. -Հայկական Յեղասպանութիւն, թրքական բանակներու յարձակում Արեւելահայաստանի վրայ, ռուսական յեղափոխութիւններ, Հայաստանի Ա. Հանրապետութեան ծնունդ, հայ-թրքական պատերազմ, Խորհրդային Հայաստանի ծնունդ, ՍՂՀԿ-Կոմիւնէրն յարաբերութիւններ, Հնչակեան Կուսակցութեան լուծարք Խորհրդային Միութեան տարածքին, եւայլն: Իրադարձութիւններու այս շղթային մէջ, Ս.Տաշիրի անուան մնայնօրէն կը հանդիպինք կուսակցական խորհրդաժողովներուն, ղեկավար մարմիններու կազմերուն, համազգային թէ միջ-կուսակցական ժողովներուն մէջ: Ու տրամադրելի սկզբնաղբիւրներէն դատելով, բոլոր պարագաներուն ալ, Ս.Տաշիր կը ներկայանայ որպէս հանդարտաբարոյ, հաւասարակշռուած, համեստ, յանձնառու եւ պարկեշտ գործիչ մը:

1935-38, Ս.Տաշիր, «Նամակ Խորհրդային Հայրենիքից» (կամ Հայաստանից), ընդհանուր խորագրին տակ կ'աշխատակցի «Հնչակ»ին: Միակը, որ այդ ծանր տարիներուն, Խ.Հայաստանէն բացայայտ ձեւով կ'աշխատակցէր հնչակեան մամուլին: Իր այդ «համարձակութեան» համար ան սուղ չի վճարէր, հաւանաբար այն պատճառաւ, որ այդ յօդուածները առաւելաբար Խ.Հայաստանի տնտեսական, գիտական եւ մշակութային ձեռքբերումները կը ներկայացնէին:

Ուղի մը՝ որուն ջերմ հաւատադրողներէն էր ան: Կը մահանայ Երեւան, 1942-ին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] Գոհար Ազնաուրեան, «Ուղեցոյց Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Գրական Ֆոնտերի», Երեւան, 1962, էջ 94:

[2] Սիմոն Դովեանի Յուշերը: ԴԱԱ:

[3] Նոյն:

[4] Արամ Ինճիկեան, «Յովհաննէս Թումանեան», Երեւան, 1969, էջ 377:

[5] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Գնչակեան Կուսակցութեան», Ա. հտ., Պէրոլթ, 1962, էջ 278:

[6] ՍԴԳԿ Կեդրոնական Վարչութեան Ա. Նիստի արձանագրութիւնը. 1903 Նոյեմբեր 6: Գնչ. արխիւ:

[7] Ա. Կիտուր, ... էջ 291:

[8] «Յրաւեր-Շրջաբերական Ութերորդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի Սոցիալ Դեմոկրատ Գնչակեան Կուսակցութեան Բոլոր Շրջաններուն», Պոսթոն, 1924 Յունիս 3: Գնչ. արխիւ:

ՍԴԳԿ Կանոնագրութիւններուն մէջ «ռեֆերանտում» հասկացութիւնը չկայ: Այսուհանդերձ, ըստ այս հասկացութեան, երբ համագումար հրաւիրելով Կեդրոնական Վարչութեան Նոր կազմ յառաջացնելու հնարաւորութիւն չկայ, շրջաններու վարիչ մարմինները, պաշտօնական Նամակագրութեամբ, իրենց վստահութիւնը կը յայտնեն խումբ մը ղեկավար ընկերներու, որոնք հաւաքաբար կը ստանան իբրեւ Կեդրոնական Վարչութիւն գործելու լիազօրութիւն: Այս ձեւը, վերոյիշեալ պարագայէն զատ, օգտագործուած է երկու անգամ եւ՝ ՍԴԳԿ Ժ (1938) եւ ԺԱ (1965) համագումարներուն միջեւ ինկած միջոցին:

[9] «Շրջաբերական ՍԴ Գնչակեան Կուսակցութեան Ռուսաստանի Կովկասի եւ Պարսկաստանի Մասնաճիւղերին եւ Ընկերներին»: ԴԱԱ:

[10] Ամատունի Վիրաբեան, «Համահայկական Խորհրդակցութիւններ (1912-1920)», Երեւան, 2004, էջ 154, 160 եւ 242:

## ԱՐԹԻՒՐ (ՅԱՐՈՒԹԻՒՆ) ՕՀԱՆՋԱՆԵԱՆ (ԱՐՏԱԻԱԶԴ)

Գնչակեան Կուսակցութեան առաջին հանգրուանի Նշանակալի դերակատարներէն եղած է Արթիւր Օհանջանեան:

Արթիւր ծնած է Ախալքալաք: Նախակրթութիւնը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք, բարձրագոյն ուսման կը հետեւի Օտեսայի համալսարանին ֆիզիքա-մաթեմատիքական բաժանմունքէն ներս:

Ինչպէս ժամանակաշրջանի շատ ուսանողներ, Ա. Օհանջանեան եւս կը համակուի յեղափոխական եւ ազատագրական գաղափարներով: Սակայն, պարագաներու բերումով, անոր անցած յեղափոխական ճամբան կ'ըլլայ իրաւատուկ եւ կը տարբերի ուրիշներէն:

Այդ շրջանին Օտեսա կը բնակէր ծագումով հայ, բայց հայութենէն հեռացած, օտարացած, պետարապիացի մեծահարուստ հայ այրի տիկին մը՝ Անուշ անունով: Ա. Օհանջանեան անձնական դասեր կու տայ տիկ. Անուշի աղջկան եւ այս ճամբով կը դառնայ անոնց ընտանեկան բարեկամը: Ժամանակի ընթացքին Ա. Օհանջանեանի ազդեցութիւնը կը մեծնայ տիկ. Անուշին վրայ եւ այս ազդեցութեան տակ կը վերագարթնին տիկնոջ ազգային զգացումները եւ համակրանքը դէպի արեւմտահայ ազատագրական շարժումը:



1889-ին, Փարիզի մեջ տիկ. Անուշ կը հանդիպի Մինաս Չերազին եւ Գրիգոր Արծրունիին, որոնք եւս կը հրահրեն անոր ազգային զգացումները: Հայկական երեկոյթի մը ընթացքին, խանդավառ մթնոլորտի մը մեջ, տիկ. Անուշ 10 հազար զէնք կը խոստանայ Հայաստանի ազատագրութեան: Այս տեղեկութիւնը Գ.Արծրունի կը հաղորդէ Հնչակեան Կուսակցութեան հիմնադիրներէն Ռուբէն Խանաբազանին, իր կողմէ անոր տալով նաեւ տիկ. Անուշին յղուած յանձնարարագիրը:

1890-ին, Թիֆլիսի մէջ հայ յեղափոխական խմբակցութիւններու եւ անհատ մտաւորականներու միջեւ տեղի կ'ունենան հանդիպումներ, որոնց նպատակն էր հայ յեղափոխական ուժերը համախմբել մէկ դրօշի տակ. ծնունդ կ'առնէ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը: Այդ հանդիպումներուն, Հնչակեան Կուսակցութեան կողմէ կը մասնակցի Ռ.Խանաբազատ: Սկզբնական շրջանին, Հնչակեան Կուսակցութիւնը մաս կը կազմէ այդ դաշինքին: Միացման այդ կարճ ժամանակամիջոցին, Ռ.Խանաբազատ կը դառնայ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան քարոզիչներէն: 1891 Փետրուարին, ան Հնչակեան Կուսակցութեան հետ, կազմակերպչական նպատակներով կը մեկնի Օտեսա, ուր հայ ուսանողներով, որոնց մէջ՝ Ա. Օհանջանեան, հիմը կը դնէ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան տեղւոյն մասնաճիւղին: Ռ.Խանաբազատ կ'այցելէ նաեւ տիկ. Անուշին ու ՀՅԴ-ի անունով անոր կը յիշեցնէ իր կատարած խոստումը: «Տիկին Անուշը եւ ուսանողները, թէւ արդէն մի որոշ հասկացողութիւն ունէին «Հնչակ»ի ու հնչակեանների մասին, թէկուզ հենց ռուսական թերթերից, բայց մենք բոլորին էլ բացատրեցինք, որ Հնչակեան Կուսակցութիւնն այլեւ առանձին գոյութիւն չունի եւ որ նա էլ միացել է ՀՅԴ Դաշնակցութեանը»<sup>27</sup>. - կը գրէ Ռ.Խանաբազատ իր յուշերուն մէջ:

1892-ին Հնչակեան Կուսակցութեան եւ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան միջեւ տեղի կ'ունենայ խզում՝ եւ յետայդ անոնցմէ իւրաքանչիւրը կը գործէ որպէս ինքնուրոյն կուսակցութիւն: Տիկ. Անուշի մօտ երկամտութիւն կ'առաջանայ. որուն՝ Նուիրէլ խոստացած զէնքերը: Հարցին մէջ կը ներգրաւուին իրենց աքսորի ժամանակամիջոցը Օտեսայի մէջ անցնող Սիմոն Չաւարեանն ու Զրիստափոր Միքայէտեանը: Վերջիններս կը փորձեն տիկ. Անուշը համոզել որ ճիշդ ձեւը այդ զէնքերը ՀՅԴ-ին տալն է, որովհետեւ ՀՅԴ-ն արդէն այդ զէնքերը Թրքահայաստան տեղափոխելու ծրագիր նախապատրաստած է, որն է՝ զէնքերու տեղափոխութիւնը կատարել Պարսից Ծոցի վրայ գտնուող Պենտեր-Պուշիկ նաւահանգիստէն դէպի Վան գծով: Միւս կողմէ Ա. Օհանջանեան, որ երկու կուսակցութիւններու խզումէն ետք հնչակեան մնացած էր, ՀՅԴ-ի նորագոյն պատմագիրներէն Գեորգ Խուտինեանի տարօրինակ տրամա-

բանութեան համաձայն, լոկ «մրցակից կուսակցութեանը շուտափոյթ կերպով վնաս հասցնելու դիտաւորութեամբ»<sup>28</sup>, կ'աշխատի համոզել տիկ. Անուշը, որ հնչակեաններուն ծրագիրը անելի իրագործելի է, որն էր՝ զէնքերը աստրիական Թրիեսթ նաւահանգիստէն տեղափոխել յունական կղզիներէն մէկը եւ այնտեղէն յոյն մաքսանենքներու օգնութեամբ Կիլիկիոյ ափերը: Այս ծրագրի իրագործման համար հնչակեանները ապահոված էին 1825 թ. հ յունական ապստամբութեան յայտնի հերոս Մարկոս Բոցարիսի երբօր, «Արեւելեան Դաշնակցութեան» նախագահ, Յունաստանի մէջ մեծ յարգանք վայելող զօր. Բոցարիսի օժանդակութիւնը: Տիկ. Անուշ, փարստելու համար իր շփոթը, Արթուրը կը դրկէ Լոնտոն՝ Մ. Չերազի մօտ եւ Թիֆլիս՝ Գ. Արծրունիի մօտ, վերջիններու կարծիքը եւս իմանալու համար: Ի վերջոյ հարցը կը լուծուի յօգուտ հնչակեաններուն, որուն մէջ էական դեր կը խաղայ Ա. Օհանջանեան: «Երբ Օհանջանեանը վերադառնում է Օտեսա ու երբ որոշում է՝ չտալ իրացանները Դաշնակցութեանը, այլ հնչակեաններին, խիստ մեծ զայրոյթ է յառաջանում տեղական ուսանող դաշնակցականների մէջ, իրենց երկուան ընկեր Օհանջանեանի դէմ: Չայրոյթն այն աստիճանի է հասնում, որ մի գիշեր էլ խմբով յարձակում են Օհանջանեանի վրայ ու մի լաւ ծեծում»<sup>29</sup>:

Տիկ. Անուշ եւ Ա. Օհանջանեան ժնեի մէջ կը տեսնուին նաեւ Անտոն Լազարբեկեանի հետ՝ խոստումը իրականացնելու համար: Այդ հանդիպման մասնակից Ռուբէն Պերպերեան կը գրէ. - «Տիկ. Անուշը առաջարկեց զէնքի համար տաս հազար ռուպլի, զէնքը (իրացանները եւ փամփուշտները) աստրիական թէւ հին ձեւի, բայց լաւ վիճակի մէջ, զինուորական պահեստից էր գնուելու, այն ժամանակուան փողով մօտ 7-8 ռուպլի հատը, հաշուած այդ գնի մէջ եւ Կիեննայից մինչեւ աստրիական ծովափնեայ Թրիեսթ քաղաքը տեղափոխելու ճանապարհածախքը»<sup>30</sup>:

Չէնքերը, որոնք աստրիական «շաքօ» տիպի էին, կը փոխադրուին Թրիեսթի նաւահանգիստը. բայց անոնք տեղափոխութիւնը այդտեղէն կը հանդիպի գործնական եւ նիւթական լուրջ դժուարութիւններու: Ա. Լազարբեկեանի, Ռ. Խանաբազատի եւ Ա. Օհանջանեանի միջեւ փոխանակուած նամակները, բաւական լոյս կը սփռեն այդ դժուարութիւններու ընդոյթին մասին:

Ա. Լազարբեկեանի նամակը Հ. Օհանջանեանին (Թրիեստ). Աթէնք, 20 Հոկտ. 1892: «Հարցս վերաբերում է ապսպրուած զէնքերի մասին: Բանը նրանումն է որ դուք եւ Լշանը (Ռ. Խանաբազատ. - Ե. Ճ.) այստեղ՝ Կուլգարիսի ասելով՝ չէք խօսացել զէնքերի մինչեւ տեղ հասցնելու ծախսի մասին: Չէք պայմանաւորուել նաեւ ամպալաժի (փաթաթել) եւ դրա ծախսի մասին: Չէնքերը անձրեւից պաշտպանելու համար պէտք է մուշամպայի (մուլաթ) մէջ փաթաթել:

Հինգական հրացան, կանխապես նրանց վրայ քսելով յատուկ իւր եւ այլն պետք է մի կերպ ձեռք բերել այդ գումարը: Երկրորդ՝ պետք է վարձել մի առագաստանաւ եւ զենքերը դրկել նպատակատեղը, Կիպրոս, որին կ'ընկերանայ մեզմէ մէկը: Ճանապարհածախսին յատկացուած 2880 ֆրանկն ամենեւին բաւական չէ: Գործը ծանր է: Պէտք է լաւ կշռել եւ ապա գործել: Ունիկը բարեկամ առագաստանաւի նաւապետ մը: Կ'ուզէ՞ք հասցեն դրկեմ Ձեզ, իմացուցէք»:

Բ- Ա.Նազարբեկեանի նամակը Ա.Օհանջանեանին (Թրիեստ). Աթենք, 22 Նոյ. 1892: «Ձէքերը պետք է ուղարկուին Կիպրոս, ուր նախապես պետք է գնայ մեզկից մէկը: Ապրանքները պետք է փոխադրուեն կոնդրապանդով (զադոսօրէն, առանց մաքսի), որովհետեւ Կիպրոս այդ ապրանքին մուտքը խստիւ արգիւնուած է: Լաւագոյն է դուք եւ հանը այստեղ գաք, որ հիմնական կարգադրութիւններ անենք»:

Գ- Ռ.Խանազատի նամակը Ա.Օհանջանեանին (Թրիեստ). Աթենք 7 Դեկտ. 1892. «Ընդհուկից բաց նամակս անշուշտ ստացար: Այսօր երրորդ օրն է Աթենքումն եմ: Անցեալ տարուան ծրագիրս՝ զենքերը փոխադրել Յունաստանի փոքր կղզին, այս տարի գործադրելու շատ յարմարութիւն կայ: Ուղարկիր իսկոյն 300 ֆրանք ճանապարհածախս. ես ճանապարհ կ'ընկնեմ դէպի Կիպրոս եւ ամէն բան կը կարգադրեմ: Միայն իմացիր թէ առագաստանաւը մինչեւ Կիպրոս ի՞նչ կ'արժենայ»:<sup>105</sup>

Ի վերջոյ կը յաջողուի զենքերը փոխադրել Աթենքի նաւահանգիստը ու այդտեղէն Կիպրոս, ուր նախապես այցելած էր Ռ.Խանազատ եւ թանկագին ապրանքը ապահով թաքցնելու համար համաձայնութեան եկած Ս.Մակարայ վանքի վանականներուն հետ<sup>106</sup>:

Ամենէն դժուար մասը սակայն, այդ զենքերուն Թուրքիա մուտքն էր: Այդ կը կատարուի տարբեր ձեւերով: Հրացաններէն որոշ քանակ մը կը փոխարինուի ատրճանակներու եւ Թուրքիա մուտք կը գործէ Կիրաստիի նաւահանգիստէն<sup>107</sup>: Ձէքի մէկ այլ բաժին, առագաստանաւերով Կիպրոսէն կը տեղափոխուի Սուէտիոյ ծովափնեայ շրջանը, առ իր պատրաստութիւն Չէյթունի ապստամբութեան<sup>108</sup>:

Ձէքի այլ բաժին մը Թրքահայաստան մտցնելու յանձնառութիւնը կը ստանձնէ ինքը՝ Արթիւր: Ան, Փարիզէն Լոնտոն կու գայ եւ Յնչակեան Կեդրոնին կը յայտնէ Երկիր երթալով գործնական պայքարին մասնակցելու իր պատրաստակամութիւնը: «Հրացանների պատճառով իր համալսարանական ընկերների հետ կուուած միջոցին սա խոստացել էր ապացուցել, որ ինքը կը գնայ Հայաստան աշխատելու, իսկ նրանք քարիերիստներ դուրս կը գան: Այժմ համալսարանն աւարտած լինելով, նա եկել էր իր տուած խօսքը կատարելու»<sup>109</sup>. - կը գրէ Ռ. Խանազատ: «Լսած էի միայն, որ Յնչակի Կեդրոնը յանձնարարել էր Օհանջանեանին փոխադրել զենքերը

պարսից սահմաններից Հայաստան»<sup>110</sup>, կ'աւելցնէ Ռ. Պերպրեան իր յուշերուն մէջ:

1895 Մարտին, Արթիւր Թիֆլիսի վրայով կ'անցնի Պարսկաստան: Այս մասին Սիմոն Չաւարեան, «Դրօշակ»ին յղած իր նամակին մէջ կը գրէ. «Օհանջանեանը եկաւ եւ գնաց Պարսկաստան: Արիստակէսը առում է որ ուղտերով ապրանք են բերելիս եղել Պուշիրից, բռնուած է. երեւի դրա համար է գնացել, թէեւ սան է, որ իբրեւ մտադիր է Մուշ անցնելու: Չեմ հաւատում»: Ապա, իր յաջորդ նամակին մէջ Ս.Չաւարեան կը տեղեկագրէ. «Ի միջի այլոց, այն 15 հոգին, որ բռնուած են Մահմուտի մօտ Հ.Եր են (ինչակեաններ. - Ե.Ճ.): Նրանց մէջ է հռչակուած Օհանջանեանը - դրանով իր առաջուան մեղքը քաւեց (խօսքը կը վերաբերի տիկ. Անուշի զենքերը հնչակեաններուն յանձնուելուն. - Ե.Ճ.):»<sup>111</sup>

Իրօք, 1895 Յունիսի սկիզբը, Արթիւր 13 հոգինց խումբով մը, գնեց ու զինամթերքի հարուստ պաշարով, Պարսկաստանի սահմանէն կ'անցնի դէպի Վան: Հոս կը կատարուի ճակատագրական սխալ մը, երբ գիշերուան մութին եւ տեղատարափին պատճառով խումբին «վալադ»ը<sup>112</sup> եզիտական Չիբուխլու գիւղը կը շփոթէ հայկական գիւղի մը հետ: Տղաքը անվտանգ կարծելով, հանգիստ կը մտնեն գիւղ, բայց անմիջապէս կը պաշարուին ու կը ձերբակալուին: «Յնչակ», անդրադառնալով Արթիւրի մասին կը գրէ. - «Ձարութիւն Օհանջանեան, Յնչակեան: 1895 թ. Յունիսին 13 ընկերներով նա ձերբակալուած է Վանայ նահանգի եզիտի Չիբուխլու գիւղում, ուր նրանք ստիպուել էին գիշերել, խուսափելով կարկտախառն խիստ անձրեւից եւ սարսափելի բուրբից: Մատնութեամբ՝ գիշերով նրանք յանկարծ պաշարուած են յիսունից ւալի թուրք ոստիկաններով, ձերբակալուած եւ ապա 200 զինուորով, անպատմելի նեղութիւններ քաշելով տարուած են Վան, ուր նրանց ամենքին շարունակ ենթարկուած են ամենախիստ տանջանքների: Նրանց վրայ գտած են լինում մի-մի հրացան, մի-մի ռեվոլվեր, մի-մի դաշույն, մեծ քանակութեամբ զանազան փամփուռներ, յետոյ՝ զնդակ թուփելու, փամփուռ լցնելու եւ այլ գործիքներ, վիրակապներ, «Յնչակ»ի, «Ապտակ»ի եւ Յնչակեան Կուսակցութեան ուրիշ հրատարակութիւնների բազմաթիւ օրինակներ, հեռագրիտակներ, լուսանկարչական գործիք, եւ այլն: Օհանջանեանի, որպէս եւ իր ընկերների տուած հարցաքննութիւնը միանգամայն խելացի ու համարձակ էին: Արանից մօտ մէկ ամիս առաջ ամենքը բերուեցան Կ.Պոլիս՝ դատի ենթարկելու, երբ վերջերս մի շարք քաղաքական յանցաւորների հետ նրանք էլ ազատ արձակուեցան: Վանից մինչեւ Կ.Պոլիս ճանապարհներին խիստ նեղութիւններ են կրել, որի պատճառով նրանցից մէկը, արդէն տեղաբացած նախկին տանջանքներից, մեռնում է՝ դեռ Կ.Պոլիս չհասած»<sup>113</sup>:

(Արսեն Կիտուրի համաձայն, Ա.Օհանջանեան որոշ ժամանակ մը կը գործէ Վանի մէջ, ուր կազմակերպչական աշխատանքներուն կողքին կ'ունենայ նաեւ դասախօսական ելոյթներ<sup>194</sup>): Մենք այս վարկածը հաւանական չենք գտնել):

Արթիւր կը կրէր Ռիլլէմ անունով անգլիական անցագիր եւ անգլիական թերթերու թղթակիցի փաստաթուղթ. հակամանքներ՝ որոնք կը թէթեցնէն անոր յանցանքը<sup>195</sup>: Յունիս 13-ին սուլթանական ներուժով ազատ կ'արձակուին հնչակեան յեղափոխականներ Միհրան Տամատեանը, Անտոն Ռշտունին, Մարգար Վռամեանը (Ատոմ Ասլանեան), Պետրոս Մարիմեանը, Ա.Օհանջանեանը եւ ուրիշներ<sup>196</sup>:

Արթիւր Կ.Պոլիսէն չի հեռանար եւ Արտաւազը ծածկանունով կը շարունակէ իր կուսակցական գործունեութիւնը: Կը նշանակուի Կեդրոնական Վարչութեան Կ.Պոլսոյ ներկայացուցիչը: Այդ պաշտօնով կը մասնակցի 1895 Սեպտ. 18-ի Պապ Ալիի յայտնի ցոյցին կազմակերպման: Նոյնիսկ լուրեր կը տարածուին որ ան ցոյցի ընթացքին սպաննուած է<sup>197</sup>: «Այդ շրջանին Կ.Պոլսոյ Գնչակեան Կուսակցութիւնը ուներ վարչական մարմին մը, որուն անդամներն էին Լեւոն Մկրտիչեան, Արփիար Արփիարեան, Սուրէն Սուրենեան եւ ուրիշներ, որոնք կը գործակցէր Կեդրոնի ներկայացուցիչ Արտաւազ Օհանջանեան (Արթիւր) եւ գործադիր մարմին մը: Բայց այս երկու մարմիններէն զատ կային բանտերէն արձակուած հին գործիչները՝ Անտոն Ռշտունի, Մարգար Վռամեան եւ Միհրան Տամատեան, որոնք հետ սերտ յարաբերութեան մէջ էր Կեդրոնի ներկայացուցիչ Ա.Օհանջանեանը, ինքն ալ բանտէ արձակուած հնչակեան գործիչ մը: Յոյց կատարելու որոշումը տրուեցաւ Կեդրոնի ներկայացուցիչին, վարչական մարմինն է երեք հին գործիչներուն միասին խորհրդակցութեամբ: Իսկ անոր գործադրութիւնը յանձնուեցաւ մասամբ գործադիր մարմնոյն եւ մասամբ երեք հին գործիչներուն»<sup>198</sup>:

Արտաւազի Կ.Պոլսոյ մէջ ունեցած գործունեութեան մասին երուանդ Օտեան կը գրէ. - «Արթիւր Օհանջանեան անձնապէս այնքան համակրանք կը ներշնչէր որ իրեն պատճառաւ շատեր հնչակեան եղած են, որոնք մին էր եղբայրս՝ Գրանդ Օտեան, որ Արթիւրը տակաւին չճանչցած՝ բնաւ յեղափոխական շարժումին հեռուէն կամ մօտէն մասնակցած չէր. եւ որ թունդ հնչակեան եւ վարչութեան անդամ եղաւ մէկէն ի մէկ: Իր (Արթիւրին. - Ե.Ճ.) մեկնումը մեծ կորուստ մըն էր բոլորիս համար եւ ընդհանուր լքում մը յառաջ բերաւ»<sup>199</sup>: Ե.Օտեան Արտաւազին կը վերագրէ նաեւ իր օրին աղմուկ հանած, ազգ. քաղաքական ժողովի ատենապետ Սիմոն Մաքսուտ պէլի ահաբեկչութեան կազմակերպումը: Այս վերագրումը շփոթութիւն յառաջ կը բերէ Ա.Օհանջանեանի կենսագրութեան մէջ: Յայտնի է որ Սիմոն Մաքսուտի ոճրափորձը տեղի ունե-

ցած է 1894 Մայիսին,<sup>200</sup> մինչդեռ Արթիւր Վանի մէջ կը ձեռքակալուի եւ Կ.Պոլիս կը տեղափոխուի 1895 Յունիսին: Արդեօ՞ք նախապէս Արթիւր գտնուած է Կ.Պոլիս: Այս վարկածը կը զօրացնէ Սեդրակ (իր իսկական անունով մեզի համար ցարդ անձանօթ, բայց իր ձգած յուշագրութեամբ վաւերական հնչակեան գործիչ մը), երբ իր վերոյիշեալ յօդուածին մէջ, կը գրէ. - «Ոստիկանութեան նախարար Նազըմ փաշան ճանաչում է Արտաւազին»: Բայց ոստիկանապետը ուրկէ՞ պիտի ճանչնար Արթիւրը, երբ առաջին անգամ կը հարցաքննէր անոր...:

Պապ Ալիի ցոյցէն ետք, Արթիւր եւս, հնչակեան շարք մը գործիչներու եւ մտաւորականներու նման կ'անցնի արտասահման: Կը հաստատուի Լոնտոն ու կը զբաղի թարգմանչութեամբ (ան հայերէնի կողքին կը տիրապետէր ռուսերէնին, անգլերէնին եւ ֆրանսերէնին), միաժամանակ իր մասնակցութիւնը բերելով ազգ.- հասարակական կեանքին:

1896-ին, Լոնտոնի մէջ կը մասնակցի Գնչակեան Կուսակցութեան Ա. Զամագումարին:

Արթիւրի քոյրը՝ Ֆլորան, կ'ամուսնանայ հնչակեան յայտնի գործիչ Խաչիկ Վարդանեանի հետ ու ամուսնոյն կողքին կարեւոր մասնակցութիւն կը բերէ Պարսկաստանի եւ Անդրկովկասի յեղափոխական շարժումներուն:

Ա.Օհանջանեանին մօտէն ծանօթ եւ գործակից Ռուբէն Պրպէրեան անոր կը բնութագրէ որպէս աւելի արկածախնդիր՝ քան թէ յեղափոխական, աւելի «ֆանֆարոս, քան թէ համեստ գործիչ», «բազմաշարճար Գայ Յեղափոխութեան փրփուրներից մէկը»<sup>201</sup> Ստաւորապէս նոյն կարծիքը կը յայտնէ նաեւ Ե. Օտեան<sup>202</sup>:

Մենք, Արթիւր Օհանջանեանին անձնապէս ծանօթ մարդոց կողմէ տրուած բնութագիրները վիճարկելու հարց չունինք: Պիտե՞նք նաեւ որ հայ ազգ.-ազատագրական շարժումը ունեցաւ իր «ֆանֆարոսներն» ու «մակաբոյծները»: Բայց երբ մէկը, որ իր անփոխարինելի դերակատարութիւնը կ'ունենայ հայ ազգային-ազատագրական շարժումը մեծաքանակ գէնքով ապահովելու գործին մէջ ու ապա անձնական օրինակով կը մտնէ Երկիր, կը ճաշակէ օսմանեան բանտին արհաւիրքը, փախստական պայմաններու տակ կը գլխաւորէ Կ.Պոլսոյ յեղափոխական ու ահաբեկչական գործերը՝ դժուար թէ միայն ցուցամուրօթեամբ տարուած ըլլալ:

Ֆանֆարոսները, փրփուրներն ու մակաբոյծները այսպիսի դժուար ճամբաներէ չեն քալեր: Անոնք բուն պայքարին հետ կապ նոյնիսկ չեն ունենար:

Արդեօ՞ք Արթիւրին մէջ նկարագրի երկու գիծեր կային...:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] «Հայրենիք», 1928 Փետր., թի 4, 2. Տարի. Ռ.Խանազատ, «Հայ Յեղափոխականի Յուշերից»:

[2] Քեորզ Խուտինեան, «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Ծնունդը», Երևան, 2000, էջ 182:

[3] «Հայրենիք», 1928 Մարտ, թի 5, 2. տարի:

[4] «Վեմ», 1938 Յունիս-Սեպտ., թի 3, 2. տարի. Ռ.Պերպրեան «Պատմութեան ճրջանից»:

Չէնքի քանակին մասին, տարբեր յուշագիրներու եւ պատմագիրներու կողմէ տրուած են տարբեր թիւեր: Ռ.Պերպրեանի վերեւ նշած թիւերն կարելի է եզրակացնել որ խօսքը կը վերաբերի շուրջ 1500 հրացանի: Ռ.Խանազատ խոստացուած զէնքին քանակը կը գնահատէ 10000 (այս թիւին վրայ կանգ կ'առնէ նաեւ Գ.Խուտինեան): Աղասի եւ Ա.Կիտուր զէնքին քանակը կը գնահատեն 5000 կտոր: Յամեսայն դեպս, ինչ ալ ըլլար քանակը, այդ կարեւոր օժանդակութիւն մըն էր հայ ազգային ազատագրական շարժման, որուն նմանը, միանուագ ձեւով, ապագային չկրկնուցաւ:

[5] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՄԴ Հնչակեան Կուսակցութեան», Ա.Խո, Պէրոպ, 1962, էջ 71:

[6] «Հայրենիք», 1928 Մարտ, թի 5, 2. տարի:

[7] «Վեմ», 1938 Յունիս-Սեպտ., թի 3, 2. տարի:

[8] «Հայրենիք», 1928 Ապրիլ, թի 6, 2. տարի:

[9] Նոյն:

[10] «Վեմ», 1938 Յունիս-Սեպտ., թի 3, 2. տարի:

[11] Հրաչ Տասնապետեան, «Սիմոն Չաւարեան», Բ. Խո., Պէրոպ, 1992, էջ 33-34:

[12] «Վալարները» շրջակայքին ծանօթ առաջնորդներ էին, ընդհանրապէս ջիւրտ կամ աորիի, որոնք փոխան վարձատրութեան կ'առաջնորդէին խումբը: Երկիր մտնող հայ ֆիտայական եւ զինատար խումբերը յաճախ օգտուած են «վալար»ներու ծառայութենէ:

[13] «Հնչակ», 1895 Օգոստոս «Ցուցակ կրճակուած քաղաքական Յանցաւորներին»:

[14] Արսէն Կիտուր, ... էջ 203:

[15] - «Երիտասարդ Հայաստան», 1907, Յունուար 30. Սեղրակ, «Փշուրներ իմ Յիշողութիւնից»:

[16] - Սուլթանական այս ներումը (որոնք պարբերաբար կը կրկնուէին) իր օրին կասկածներ եւ հարցադրումներ յառաջ կը բերէ: Հարցադրումներն մէկ այն էր որ ինչո՞ր Մեծն Մուրատ, Յարութիւն Ճանկիլեան, Գալուստ Արիանեան եւ այլն ներման չեն արժանանար, իսկ ուրիշներ՝ այո: Սուլթանական այս ընդհանուր ներումը կը կատարուէր 1893-95 հայկական ջարդերու ընթացքին, երբ Եւրոպայի հանրային կարծիքը զոգոտած էր Սուլթան Համիտի հանդէպ: Համիտ կ'ուզէր ցոյց տալ թէ ինչ արիւնարբու չէ, այլ այնքան զթափուր որ կը ներէ նոյնիսկ իր դէմ զէնք բարձրացնողները: Այս ձեւով ան նաեւ կասկածամտութիւններ յառաջ կը բերէր յեղափոխական շարժման մէջ:

[17] Հ.Տասնապետեան, էջ 39: Ա.Չաւարեանի նամակը «Դրօշակ»ին. 1895 Հոկտ.:

[18] Պերոպ Տեփոյեան, «Միտան Տամատեան», Պէրոպ, 1964, էջ 83:

[19] Ե.Օտեան, «12 Տարի Պոլսէն Ղուրս», Պէրոպ, 1937, էջ 27:

[20] «Հնչակ», 1894 Յունիս 10, «Մաքսուտ Սիմոն Պէ» եւ Կացին, «Դատակիճ Սիմոն Մաքսուտի Կիրաւորողներուն եւ Անոց Մեղակիցներուն»:

[21] «Վեմ», 1938 Յունիս-Սեպտ., թի 3, 2. տարի...:

[22] Ե. Օտեան, ... էջ 204:

## ՓՐՈՖ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՅԱԵԱՆ

Հայ ազգային ազատագրական շարժման, ինչպէս նաեւ Հնչակեան Կուսակցութեան առաջին սերունդի մտաւորական գործիչներն է փրոֆ. Յովհաննէս Գայաեան:

Յ. Գայաեան ծնած է Մարգուանի Հաճի գիւղը, 1864-ին:

Նախակրթութիւնը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք, 1881-ին կը յաճախէ Մարգուանի Բարձրագոյն Վարժարանը (1886-էն՝ Անաթոլիա Գոլէճ): Շրջանաւարտ ըլլալէ անմիջապէս ետք, 1884-1893 կը պաշտօնավարէ միեւնոյն հաստատութեան մէջ, նախ որպէս օգնական՝ փրոֆ. Կարապետ Թումայեանին, եւ ապա որպէս ուսուցիչ հայերէն լեզուի եւ մատենագրութեան: Կը դասաւանդէ նաեւ Հայ Աւետ. Աղջկանց Բարձրագոյն վարժարանին մէջ<sup>[1]</sup>:

1885-ին Մարգուանի մէջ կը հիմնուի գաղտնի պայմաններու մէջ գործող «Փոքր Հայքի Կազմակերպութիւնը», որուն նպատակն էր հայ երիտասարդներուն մօտ վառ պահել հայրենասիրութեան եւ պայքարի ոգին: «Կազմակերպութեան» կեդրոնատեղին էր Անաթոլիա Գոլէճը: Անոր հիմնադիրն ու ղեկավարը՝ Յ. Գայաեանը, գործակցութեամբ Կ.Թումայեանի: «Կազմակերպութեան» հիմնական անդամները կ'ըլլան Անաթոլիա Գոլէճի աշակերտներն ու շրջանաւարտները, որոնք իրենց զոյգ ուսուցիչներուն շունչին տակ արդէն ստացած էին հայրենասիրական դաստիարակութիւն: «Կազմա-



կերպութիւնը», Մարզուանէն դուրս կապեր կը հաստատէ շրջակայ գիւղերու եւ աւաններու երիտասարդութեան հետ:

1889-ին, 4.Պոլսոյ մէջ լոյս կը տեսնէ Յ.Գայաեանի բանաստեղծական առաջին հատորը, «Առաջին Մրմունջը» խորագրով<sup>[2]</sup>:

1891-ին, երբ Շմաւոն Մարզուան կու գայ, «Փոքր Յայքի Կազմակերպութիւնը», իր ամբողջ կազմով կը միանայ Յնչակեան Կուսակցութեան: Շմաւոն կը մեկնի Արաբկիր, իսկ Յ.Գայաեան կը դառնայ Յնչակեան Կուսակցութեան Մարզուանի մասնաճիւղի ղեկավարը: Ան մնալուն կապի մէջ կ'ըլլայ Ժիրարիի (Մարտիրոս Պոյաճեան) եւ Շմաւոնի հետ:

1891 Մայիսին, Մարզուանի հնչակեան վարչութիւնը կ'որոշէ, որ փրոֆ.ներ Գայաեան եւ Թումայեան, իրենց ամառնային արձակուրդին Չորումի ճամբով շրջագայութիւն ընեն Ալաճա, Եոզղատ, Կեսարիա, Կէմերէկ եւ հարակից հայկական գիւղերը: Այս շրջակայութեան նպատակն էր «ինքննապաշտպանութեան յորդորել հայերը. [անոնք] պիտի բանակցին նաեւ զզրւպաշներու եւ պէկթաշիններու հետ, համերաշխութիւն մը ստեղծելու համար»<sup>[3]</sup>:

Որպէս յեղափոխական գործիչ, Յ.Գայաեան կ'ըլլայ շրջահայեաց եւ հանդարտաբարոյ ու նախընտրութիւնը կու տայ կազմակերպչական-նախապատրաստական աշխատանքներուն քան թէ ըմբոստ ելոյթներու:

1892 Դեկտեմբերին, Փոքր Յայքի շատ մը քաղաքներու եւ գիւղերու պատերուն վրայ, նոյն գիշերով կը փակցուին հակաուլթրա-նական միեւնոյն կոչերը: Թրքերէն այդ կոչերը իրենց բովանդակութեամբ յայտնի չէին ընէր որ հայերու կողմէ գրուած էին. սակայն անոնց միաժամանակեայ երեւումը իրարմէ հեռու քաղաքներու պատերուն վրայ, կ'ապացուցէր թէ այդ կազմակերպուած կուսակցութեան մը գործն է: Պատմութեան մէջ «Եաֆթաներու Դէպքը» անուանով յայտնի հնչակեան այդ ցուցական նախաձեռնութեան կը յաջորդեն մեծ թիւով ձերբակալութիւններ: Մարզուանի եւ Կեսարիոյ բանտերուն մէջ տեղի ունեցած նախնական հարցաքննութիւններէն ետք, որոնց կ'ընկերանայ սոսկալի ծեծն ու չարչարանքը, ձերբակալուածներէն 50 հոգի՝ Փոքր Յայքի հնչակեան կորիզը՝ որուն մէջ Յ.Գայաեան, կը փոխադրուին Անգարա, դատավարութեան համար: «Փրոֆ. Թումայեան եւ Գայաեան երբ Էնկիւրի (Անգարա. - Ե.Ճ.) կը հասնէին, շատ քիչ տեղ կար իրենց մարմնոյն վրայ որ ոստիկաններուն խարազանին տակ կապտած ըլլաւ: Իրենց ձեռքերուն եւ ոտքերուն շղթաները արդէն մինչեւ ոսկորներուն իջած եւ վերքերը թունաւորման վտանգին տակ էին»<sup>[4]</sup>: Այս վայրագ չարչարանքներուն ձգած ծանր տպաւորութիւնը այնքան մեծ կ'ըլլայ, որ անոր լուրը դուրս կու գայ Փոքր Յայքի սահմաններէն ու

տեղ կը գտնէ եւրոպական մամուլին մէջ. այնպէս որ «կառավարութիւնը ուզեց, որ այդ աննպաստ լուրերը ուրացող ու ջնջող գրութիւն մը ստորագրեն բանտարկեալները»<sup>[5]</sup>:

Անգարայի դատարանին վճիռները կ'ըլլան շատ անողոր: 17 հոգի կը դատապարտուի մահուան, 6 հոգի՝ 15 տարի բերդարգելութեան, 9 հոգի՝ 10 տարուան բերդարգելութեան եւ 10 հոգի՝ 7 տարուան բերդարգելութեան: Յ.Գայաեան, որպէս Մարզուանի յեղափոխական կազմակերպութեան ղեկավարներէն, ինչպէս նաեւ յեղափոխական միտքեր, «Յնչակ» եւ այլ արգիլեալ գրականութիւն տարածող կը դատապարտուի մահուան<sup>[6]</sup>: Մահուան կը դատապարտուի նաեւ Կ.Թումայեան: Վերջինիս զուիցերիացի կինը, աներծագը՝ տղթթ. Յոֆման եւ Անաթոլիա Գոլժեի տնօրէն տղթթ. Յերիք, Լոնտոնի եւ Կ.Պոլսոյ մէջ ազդու միջամտութիւններ կը կատարեն ու կը բեկանեն Կ.Թումայեանի եւ Յ.Գայաեանի վճիռները: Մահապատիժը ի գորու կը մնայ միայն Չելլոյի խումբի իննգ անդամներուն համար, զոր կը գործադրուի 1893 Յուլիս 18-ին:

Բանտէն ազատուելէ ետք, Յ.Գայաեան կը մեկնի Եսիւնպուրկ, ուր կը հետեւի մակկավարժութեան, հոգեբանութեան եւ համեմատական լեզուաբանութեան:

Այդ շրջանին, Յ.Գայաեան կապ կը պահէ Յնչակեան Կուսակցութեան Կեդրոնին հետ: (Ռուբէն Խանազատ, իր յուշերուն մէջ կը գրէ թէ ինք մէկ անգամ հանդիպած է Յ.Գայաեանին, Լոնտոնի Յնչակեան Կեդրոնին մէջ)<sup>[7]</sup>:

Աելի ուշ, 1899-ին, երբ Ռ.Խանազատ Անդրկովկասի Յնչակեան ղեկավարութեան հետ (Ղ.Աղայեան, Ատրպետ, Խաչիկ Վարդանեան, Սեւ Սանդրո (Ալեքսանդր Ստեփանեան), Աւետիկ Իսահակեան, Ռուբէն Պերպէրեան եւայլն) որպէս աքսորական կը գտնուէր Ռուստով-Նախիջեան, աքսորականներուն այցելութեան կու գան Պաքուի մասնաճիւղերու լիազօր Յրահատ Կամար (Գրիգոր Վարդանեան) եւ Չէթունի ապստամբութեան հերոսներէն Յրաչեայ Մարալ (Գրիգոր Ղարիպեան): Կը գումարուի խորհրդակցական ժողով, որուն նպատակն էր լուծում մը գտնել տագնապի մէջ գտնուող Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան: Նպատակայարմար կը գտնուի գումարել արտահերթ համագումար. իսկ յաջորդ Կեդրոնական Վարչութեան անդամութեան յարմար թեկնածուներու անուններուն շարքին կը շօշափուի նաեւ Յ.Գայաեանի անունը<sup>[8]</sup>:

Իրօք, 1902 Մարտին, ՍԴՅԿ Գ. Յամագումարը Ռ.Խանազատի եւ Արամ Աջըզպաշեանի կողքին Յ.Գայաեանը կ'ընտրէ Կեդրոնական Վարչութեան անդամ: Սակայն, այս Կեդրոնական Վարչութիւնը չի մէկտեղուիր: Ռ.Խանազատ կը գտնուէր Թաւրիզ, իսկ Ա.Աջըզպաշեան՝ Շապին Գարահիսար: Այլպէս ալ, Գ. Յամագումարը իր աւար-

տին, հրաւեր կը ստանայ Վերակազմեալ հատուածէն, վերամիացման համար բանակցութիւններ սկսելու: 1903 Սեպտեմբերին կը գումարուի Դ. Գամազումարը՝ երկու կողմերուն հաւասար մասնակցութեամբ: Գամազումարը ծնունդ կու տայ երկու կողմերէն նշանակեալ ժամանակաւոր Գործադիր Մարմնի մը, որ կը գործէ մինչեւ յաջորդ համագումար:

Այս տարիներուն Յ.Գայաեան, իր կարգ մը համախոհներով (Մինաս Չերազ, Յարութիւն Ճանկիւեան), կը նուիրուի հայ յեղափոխական կուսակցութիւնները միաձուլելու աշխատանքին<sup>101</sup>: Իր երազած արդիւնքին չհասնելէ ետք ան կը հեռանայ քաղաքական-յեղափոխական ասպարէզէն եւ ամբողջապէս կը նուիրուի կրթական, մտաւորական, գրական կեանքին: Յաջորդաբար կը դասախօսէ Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Չուիցերիոյ համալսարաններուն մէջ<sup>102</sup>: Եւրոպա գտնուած միջոցին «Մխիթար Պոնտացի» անուան տակ կը հրատարակէ երկու հատոր քերականութեան գիրքեր<sup>103</sup>:

Յ.Գայաեան, *Օսմ. սահմանադրութենէն ետք ալ չի վերադառնար երկիր: Այս մասին «Բիւզանդիոն» կը գրէ. «Յայ ազգը եւ Պետութիւնը այս վերածնունդի օրերուն մէջ պետք ունին իրենց արժանաւորագոյն զաւակներուն գործակցութեանը: Ինչո՞ւ համար փրոֆ. Գայաեանի պէս հմուտ ճեթթմէն մը, մայր հայրենիքին մէջ չվարձատրուի, եւ անոր ոյժերը արտասահմանի մէջ վատնուի: Փրոֆ. Գայաեան քաջ հայկաբան մըն է: Լաւ սորված է գաղիերէնը եւ անգլիերէնը, եւ Գերմանիոյ մէջ ուսած է մանկավարժութիւնը: ... Արդեօք պատուարժան խնամակալութիւնը ինչո՞ւ չի փութար իր պարտականութիւնը կարատելու, Փրոֆ. Գայաեանի պէս բոլոր աշակերտներուն սիրոյն առարկայ, բոլոր ընթացաւարտներու եւ կիսաւարտներու համակրութեան արժանի եւ հայութեան անկեղծ սերը վայելող պատուական հայու մը պաշտօնական կոչում մը տալու մէջ»<sup>104</sup>:*

1910-ին կը հաստատուի Եգիպտոս՝ Աղեքսանդրիա եւ կը վարէ տեղւոյն Ազգ. Պօղոսեան դպրոցի տնօրէնութիւնը: 1912-ին Աղեքսանդրիոյ մէջ կը հրատարակէ բանաստեղծական երկրորդ հատորը «Մի Ռոման Չիս» խորագրով: 1913-ին, դարձեալ տնօրէնի պաշտօնով կը տեղափոխուի Գահիրէ: «Յոն կը սարքէ մանկավարժական եւ ծնողական ժողովներ: Յաճախ կը հրաւիրուի միութեանց հանդէսներուն, ուր կը բանախօսէ հռետորական շունչով եւ կը ստեղծէ իր շուրջ համակիրներու լայն շրջանակ մը»<sup>105</sup>:

Գամազիարիային Ա. Պատերազմին, Յ.Գայաեան կը ծաւալէ հասարակական աշխոյժ գործունեութիւն: «Բայց փրոֆ. Յ.Գայաեանը սահմանափակ մասնագետ չէր. նա միաժամանակ նուիրուած էր հանրային գործունեութեան, զբաղուած էր նաեւ գրական աշխա-

տանքով: Պատերազմի շրջանում նա Եգիպտոսի Գայ Ազգային Միութեան հոգին էր եւ, մանաւանդ, մեծ արժանապատուութեամբ ներկայացնում էր հայ ժողովուրդը օտարների առջեւ. նրա ջանքերի արդիւնքն էր եւ Ռոբապաշտպան Միութիւնը, իսկ վերջին տարիները նաեւ Գայ ժողովրդական Միութիւնը: Գայաստանի անկախութեան շրջանում փրոֆ. Գայաեանը Գանրապետութեան ամենա-նուիրուած ջատագովներից մէկն էր եւ ոչ մի ծիգ չէր խնայում նպաստելու համար հայ պետականութեան ամրապնդման»<sup>106</sup>:

1918-24, Յ.Գայաեան հայերէն լեզուի դասեր կու տայ Գահիրէի Ամերիկեան Գոլէճին մէջ եւ ապա հինգ տարի կը դասաւանդէ Ինկիլիժ Սկուլի մէջ:

Փրոֆ. Յ.Գայաեան, որպէս փնտռուած յօդուածագիր, կ'աշխատակցի հայկական շատ մը թերթերու: «Նրա տաք եւ հայրենաշունչ յօդուածները հայերէն թերթերում եւ հանդէսներում կարդացում էին հետաքրքրութեամբ: Կատարում էր եւ բանասիրական պրպշտումներ, ինչպէս եւ թարգմանութիւններ անգլերէն եւ գերմաներէն լեզուներից»<sup>107</sup>:

Յ. Գայաեան կ'ըլլայ կամաւորական շարժման ջերմ կողմակիցներէն: 1918-ին երբ կը կազմուի Գայկական Լեգէոնը, ան գործնական այցելութիւններով կը խրախուսէ հայ կամաւորները ու կը բարձրացնէ անոնց կորովը: Ան նոյնիսկ կ'առաջարկէ «բոլոր երիտասարդական ակումբներուն փակումը եւ երիտասարդներուն Լեգէոն մեկնումը, իբր դրական ապացոյց արձանագրելով բոլոր ակումբներուն փակ դուռներուն վրայ «մեկնեցա՛ն» բառը»<sup>108</sup>: Կամաւորական շարժման մասին, հին յեղափոխականին ունեցած ապրումներուն մասին գաղափար մը տալու համար, ստորեւ կը մէջբերենք հատուած մը սիմանաթայական կշռոյթով գրուած անոր «Գայ Կամաւորներուն» գրութենէն.-

«Պուք, որ հայրենիքի փրկութեան սեղանին վրայ պատարագուելու կը խոյանաք՝ մրրիկներու պէս արագ, գիտէ՞ք արդեօք որ ձեզի, ձեզի համար այս գիշեր հեւ ի հեւ կը ձերմկնան մարմարները՝ երկրիս ալքերուն մէջ, անհամբեր՝ լոյս արեւ տեսնելու եւ ձեր փառքովը գգաստարուրելու:

Պո՛ւք, որ վրեժին օծումը կրեցիք, կրակով մկրտուեցաք, յաղթանակին խնթութեամբը գինովցաք, եւ Գաղափարին մոլեռանդ պաշտամունքով մահը լացուցիք, մտածեցի՞ք երբեք որ ձեր արիւնին արշալուսային կարմիրովը փառքի ծիրանի մը պիտի յօրինեիք սգաւոր Արարատի մերկ ուսերուն:

Պո՛ւք, երջանիկ աստղերու ծնունդներ, օրինեա՛լ մայրերու աչքի լոյսեր, Տառապանքի Գայրենիքին գեղածիծաղ ջահեր, ինչպէ՛ս, ինչպէս յաջողեցաք տարիներով ձեր պանծալի կուրծքերուն տակ

կրել վրեժի մարտագոռ փոթորիկումները, անծայրածիր Սիրոյ խորունկ հրաբուխները եւ գերասուրբ խռովքներու շղթայուած ջրվեժները:

Օրը հասաւ, նորածին ոսկեղարու տնջալի՞ օրը, ուր ձեր փոթորիկները պայթեցան, ձեր հրաբուխները ժայթքեցան, ջրվեժները խոյացան եւ դուք, պողպատին հետ եղբայրացած, շանթերու դաշնակցութեամբ գօտեպլդուած, թնդանթներու շարականներն մագնիսացած, վառօդին խուսկովը արքշիռ, նպատակին միայն ակնապիշ՝ փայլակօրէն կ'արշաւէք դէպի փառքին յուռթի հորիզոնները, ձեր կրունկներուն հարուածներովը հայկուլ բռնապետութեան դագաղին կափարիչը գամելէն: Համբո՛յր ձեր բարերար կրունկներու:

Ո՛վ Գաղափարի խնկելի զինուորներ, ո՛վ կամքի ահեղաշուք մրրիկներ, ո՛վ խոշտանգուած Ազգին աստուածընտիր հերոսներ, ո՛վ փառքի, բարութեան, գեղեցկութեան գմայլելի ռահիլրաններ, ո՛վ հայ նսեհին սքանչագործ արարիչներ, մեզի, մեզի՛ ալ շնորհեցէք կաթիլ մը՝ ձեր վեհութենէն, շամադաղ մը՝ ձեր աննական կամքէն, կայծ մը՝ ձեր հրաշալի սիրտերուն աստուածներէն:

Ու ջրվեժօրէն կը յառաջանաք փառքին դաշտերուն վրայ. ձեր օծուած սուրբերուն ու սուհններուն շկահիւնը, հայ հովիտներուն արծազանգի թեւերուն կառչած, փրկութեան ծնունդին աւետիսը կը փութացնէ տառապանքի ժողովուրդին, հին եւ նոր նահատակներուն հաւատացեալ ոսկորները կը սարսռան, կը ցնծան, Արարատ, Մասիս, Տարսու կը խայտան, Արաքս, Տիգրիս, Եփրատ պար կը բռնեն, Մեծ ու Փոքր Հայք, Կիլիկիա, Արտասահման կը ծափեն, կը կայթեն, կը հրճուին, կու լա՛ն, կու լա՛ն՝ սգաւոր երանութեան արցունքներով թաթաւուն...:

Եւ ո՛վ է աւ, որ պիտի ժպրիտ խափան հանգիստանալ ձեր անտառացած կրործներուն ներդաշնակ ծփանքներուն, ձեր հոգիներուն մէջ բիւրեղացած դարաւոր վրեժին շղթայագերծումին, ձեր արփիահարաշ աչքերուն շանթարծակումին, ձեր արդարագործ ոտքերուն անդառնալի վճիռին ու ձեր կամքին անգթօրէն հոյակապ նուաճումներուն: Ո՛չ ոք, եւ ո՛չ ինչ պիտի յանդգնէր կասեցնել ձեր հրաշագործ ուժին ջրվեժները՝ իրենց յաղթական թաւալումներուն մէջ...:

Յառա՛ջ, ուրեմն ո՛վ Հայ կամքին շքեղ ու ահաւոր կոհակներ, յառա՛ջ ո՛վ երկիւղածօրէն երագուած արշալոյսներ, գեղածիճաղ կեանքի ամեհի հեղեղներ. յառա՛ջ, ով փրկութեան սուրհանդակներ, ով եղեմագործ ճարտարապետներ, ով եղերաբախտ ազգին բախտաւոր անմահներ, յեղակարծօրէն սահմկեցուցիչ ձեր խոյանքներուն մէջ մրրիկներուն ու փայլակներուն հիացումը կորգե-

լէն՝ յառա՛ջ անընդհատ յառա՛ջ անվիատ:

Ու հեռուներէն խուժող ձեր քայլերգին սարսուռները կը դղրդեն մեր եութիւնը, կը խնթեցնեն մեր ջիղերը, ձեր վրեժխնդիր երիվարներուն սմբակներուն դոփիւնը թունդ կը հանէ մեր ծոյլ սիրտերը, անոնց ասպանդակներուն դաշնաւոր շօնիւր ժօռատ բռնակալութեան մահուան աւետիսը կը ղօղանջէ, ձեր վառօդին բուրումնաւետ ամպերուն մէջէն Նոր Օրոտան փառքի արեւիկն քառասմբակ խոյանքը կ'ընդշմարեք... Ու անդիէն Բախտը, Փառքին հետ ժամադիր, ճերմակ ձիու վրայ աշտանակուած, ոսկեղջիւրը ձեռքին մէջ, ճառագայթի մը պէս կը հասնի, վար կ'իջնէ ու ափ կ'առնէ Հայոց Աշխարհին դուռը...:

Լայնցէ՛ք, տարածուեցէ՛ք, գեղեցկացէ՛ք, ո՛վ փառքի պողոտաներ, արժանաւոր հանդիսաւորութեամբ ընդունելու համար հայ կամքին իրեղէն հեղեղները: Աստղեր ու ժայռեր, վիհեր ու սարեր, դաշտեր ու հովիտներ, բարեւի՛ կեցեք կամքի հայկազուն հերոսներուն առջեւ...»<sup>17</sup>:

Յ.Գայեանի թարգմանչական աշխատանքին որպէս արդիւնք լոյս կը տեսնեն «Ամէնօրեայ Առաջնորդ»ը, Նշանաւոր քարոզիչ Ֆազուլիքի «Աղօթքի Նշանակութիւնը», ինչպէս նաեւ հոգեւոր երգեր Հայ Աւետ. Հոգեւոր Երգարանին մէջ<sup>18</sup>: Սակայն, Յ.Գայեանի մտաւոր աշխատանքին լաւագոյն արգասիքը կը մնայ «Բառարան-Գանձարան Հայ Լեզուի Հոմանիշներու» աշխատութիւնը (Գահիրէ, 1938), զոր մեծապէս կը գնահատուի հայ բառարանագէտներուն կողմէ:

Փրոֆ. Յովհաննէս Գայեան կը մահանայ 1934-ին, Աղեքսանդրիա:

Լայնախոհ եւ հանդարտաբարոյ, հայ մշակոյթի նուիրեալ, հին ու վաստակաշատ յեղափոխական իր կտակին մէջ կը գրէ. «Յիստուն տարի կեանքս նուիրեցի ազգիս, եւ աւելի ծանայեցի Լուսաւորչական Համայնքին, քան՝ Բողոքական. կարծեմ թէ այսքանին իրաւունք ունիմ. իմ միակ փափաքս է որ ամէն հայ եղբայրանայ ոչ միայն հաւաքական գործերու, այլ նաեւ կրթական լայնախոհութեան մէջ»<sup>19</sup>:

Փրոֆ. Գայեան՝ իր ուսուցիչ եւ գաղափարակից փրոֆ. Կ. Թումայեանին նուիրուած մեծարանքի նախածեռնութեան մը առիթով կը գրէ. «Յարգելի յոբելէարը, 80-ի դուռը ափ առած, դեռ կը գործէ յուսալից, որովհետեւ, ինծի նման շատ մը լաւատեսներու պէս, կը հաւատայ որ, թէւ մեր երագած Հայաստանը առանց Հայու մնաց, բայց Հայը չի կրնար առանց Հայաստանի մնալ...»<sup>20</sup>:


Իմաստասիրական միտք:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Չարթթօնք», 2004, Յուլիս 24. Երուանդ Յ.Քասունի, «Փրոֆ. Յովհ.Թ. Գայատան (1864-1934)»:
- [2] «Հայաստանի Կոչնակ», 1934, Օգոստոս 11. Ա.Կ.Կիլպենկեան, «Փրոֆ. Յովհաննես Թ. Գայատան»:
- [3] Արշակ Ալպոյաճեան, «Պատմութիւն Եղովկոյ Հայոց», Գահիրէ, 1952, էջ 1143:
- [4] Արշակ Ալպոյաճեան, «Պատմութիւն Հայ Կեսարիոյ», Գահիրէ, 1937, էջ 1523:
- [5] «Հայրենիք», 1953, Յունուար թիւ 1 (323).Մ.Գ.Ֆերահեան «Յեղափոխական հմորումներ (1890-1896)»:
- [6] Անգարայի դատավարութեան նիւթերը, իր օրին տպուած են «Ճեղատի Մեհաքիմ» («Պատարանային Թերթ») պաշտօնաթերթին մէջ, որմէ թարգմանաբար արտատպած են «Արեւելք» եւ «Հայրենիք» (թիւ 521-565) թերթերը: Հայաստանի Ազգային Արխիւին մէջ կը գտնուի դատավարութեան արեւելահայերէն մեքենագրուած մէկ թարգմանութիւնը: Դատավարութեան նիւթերը տպագրուած են Պետրոս Միխայելեանի «Պատմագիրք Կիւրիի» գիրքին մէջ (Պէյրուս, 1974, էջ 352-363): Այդ նիւթերը լայնօրէն օգտագործուած են Փրոֆ. Թահա Նիզաքի Քարաճալի "Yozgatta Ermeni Ayaklanmalari: Birinci Yozgat Ayaklanmasi (6 ocak 1893)" («Եղովկոյ Հայկական Ըմբոստութիւնները. Եղովկոյ Առաջին Ըմբոստութիւնը») ուսումնասիրութեան մէջ. ("Ermeni Arastmalari" 2003-2004, No 12-13): Անգարայի դատավարութեան նստարանը է նաեւ Հնչակեան Կուսակցութեան թիւ 10 հրատարակութիւնը եղող «Բնութեան Դեմ-Գաղատիոյ Դատավարութիւն» գիրքը (Աթէնք, 1894):
- [7] «Հայրենիք», 1928, Հոկտ. թիւ 12 (72). Ռ.Խանազատ, «Հայ Յեղափոխականի Յուշերից»:
- [8] Նոյն:
- [9] Հրաչ Տասնապետեան, «Ռոտոմ-Նամականի»», Պէյրուս, 1999, էջ 225:
- [10] «Հայաստանի Կոչնակ», 1934 Յուլիս 14. «Փրոֆ. Գայատանի Մահը»:
- [11] «Հայաստանի Կոչնակ», 1934 Օգոս. 11:
- [12] «Բիւզանդիոն», 1914, Մայիս 3/16. «Փրոֆ. Թումանեան»:
- [13] «Հայաստանի Կոչնակ», 1934 Սեպտեմբեր 8. Յովսէփ Թըզըրեան, «Անհետացող Դեմքեր-Փրոֆ. Յովհաննէ Յ.Գայատան»:
- [14] «Վեմ», 1934, Բ. տարի թիւ 3, Մայիս-Յունիս. «Փրոֆ. Յ.Թ.Գայատան»:
- [15] Նոյն:
- [16] Մարգիս Պողոսեան, «Թըքահայ Սպայի Մը Օրագիրք», Բ. հտ., Փարիզ, 1947, էջ 162:
- [17] Սուրեն Պարթեան «Արարա-Հայկական Լեգիոնը», Աղեքսանդրիա, 1919. Յ.Գայատան, «Հայ Կամարները»:
- [18] «Չարթթօնք», 2004 Յուլիս 25. Ե. Քասունի, «Փրոֆ. Յովհ.Թ.Գայատան»:
- [19] «Հայաստանի Կոչնակ», 1934 Սեպտ. 8:
- [20] «Հայաստանի Կոչնակ», 1930 Մայիս 17. Յ.Թ.Գայատան, «Փրոֆ. Կ. Թումանյանի Յորեւանի Առթիւ»:

## ԳԱԼՈՒՄՏ ԱՐԽԱՆԵԱՆ (ՀԱՃԻ ՊԷՅ)

«Մեր անհաւասար, մեր անողոր պայքարին մէջ Գալուստը եղաւ այն դեմքերէն մին, որ իրենց անբացատրելի անձնութեամբ ցոյց տուին թէ ինչ գերբնական, ինչ արտասովոր զոհաբերութիւններու ոյժ կայ ժողովուրդի ցաւերու բողոքը մարմնացնող, անոր իտեալին դրօշակակիր եղող զինուորներու սրտին մէջ: Անձնութեամբ անյոյս հոյակապ հոյակապ, այդպիսի շքեղ օրինակներու յիշատակին առջեւ անսահման յարգանքով կը խոնարհինք եւ անապ մը եւս կ'ամրապնդենք մեր մէջ այն հաւատքը թէ այդպիսի զոհաբերութիւններու ընդունակ ժողովուրդը անպատճառ



իր փայփայած նպատակին պիտի հասնի վաղը կամ ուշ»: Այս տողերով է որ «Հնչակ» կ'անդրադառնայ ֆետայական շարժման առաջին կազմակերպիչներէն Գալուստ Արխանեանի մահուան<sup>11</sup>:

Գալուստ Արխանեան (Հաճի Պէյ) ծնած է Մեծուր գաւառի (Գուրուչայ) Փոքր Արմտան գիւղը 1872-ին, ունեւոր ընտանիքէ: Հայրն ու հորեղբայրը Կ.Պոլսոյ մէջ ունեցած են փուռեր:

Ճննդավայրի ծխական դպրոցը աւարտելէ ետք կը մեկնի Կ.Պոլիս եւ իր հօր փուռին մէջ կը շարունակէ պապենական արհեստը:

Պատանի տարիքէն ցոյց կու տայ կարեկցանք դէպի արքատն ու թշուառը:

Կը ծանօթանայ հնչակեան գործիչներու եւ կը մտնէ Հնչակեան Կուսակցութեան մէջ:

Մինչ Գ.Արխանեան Կ.Պոլսոյ մէջ կը տարուէր ազատագրական գաղափարներով, անդին ամբողջ Փոքր Յայքի շրջանը, Ներառեալ իր ծննդավայրը, կը դառնայ այդ շարժման կարեւոր հնոցներէն մին: Արմտանի մէջ կը կազմուի հնչակեան մասնաճիւղ մը, կազմուած առաւելաբար յանդուգն եւ տաքարին երիտասարդներէ, որոնք գործունէութեան հիմնական ձեւ կ'ընտրեն գիւղացութիւնը կեդեցող հայ թէ թուրք շահագործողներու ինչքերը հրկիզելն ու փճացնելը: Այս գործը կը ղեկավարէր Սարգիս Նախուրեան, որ նաեւ կապ կը պահէր Արաբկիր գտնուող Շմաւոնի (Գաբրիէլ Կաֆեան) հետ: Գործող խումբերու տասնապետներու ժողովներէն մէկուն ընթացքին կը կարդացուի նաեւ Գ.Արխանեանի Կ.Պոլսէն գրած նամակը, ուր ան կ'ըսէ. - «Պուք ցանցեք արտերը, եւ անմշակ մի թողուք, ժամանակն է: Ես լսելով ձեր մասին շատ ուրախ եղայ: Կը խնդրեմ մինչեւ իմ գալստ աշխատեցէ որչափ որ կրնաք: Ընկերներս մէկը գալու է մօտակայ քաղաք մը կազմակերպութեան համար: Ես անոր նամակներ կու տամ: Ծանօթացէք ու մէկտեղ գործեցէք»: Նոյն ժողովին, գաղտնի քուտարկութեամբ, կ'ընտրուի երկու մարմին՝ վարչական եւ դատական, որոնք «Արմտանի հայկական իշխանութիւնը կազմեցին»<sup>91</sup>:

Իրապէս ալ, կարճ ժամանակ մը անց, Գ.Արխանեան կը վերադառնայ Արմտան եւ Խաչատուր Զերմեանի հետ կը ստանձնէ շրջանի կազմակերպութեան ղեկավարութիւնը: Բացի Մեծ ու Փոքր Արմտան գիւղերէն, Գ.Արխանեանի ջանքերով յեղափոխական բռնիքներ կը սկսին գործել Տերիկ, Չիմառա, Թողուտ, Ապուշտա, Յասան Օվա, Լիճք եւ Ակն գիւղերուն մէջ, որոնք իրար հետ կ'ունենան մնայուն կապ:

Չինման հարցը կ'ըլլայ շրջանի հնչակեաններուն զլխաւոր մտահոգութիւնը: Արդիական զենքեր ձեռք ձգելու նպատակով, Գ.Արխանեան, մեծ մասամբ նախնական զենքերով զինուած խումբով մը կը կազմակերպէ դարան, զենք փոխադրող կառավարական զօրախումբի մը ղեմ: Այս համարձակ քայլը չի յաջողիր, որովհետեւ պետական փոխարարխումբը մինչ այդ անցած կ'ըլլայ նախատեսուած կիրճէն: Կարճ ժամանակ անց, Արխանեան կը կազմակերպէ ինը հոգիինց թիւրտ աւազակախումբի մը պաշարումն ու զինաթափումը<sup>92</sup>: Զենքեր ունենալու այլ նախաձեռնութեամբ մը Նշան Բէշիշեան կը դրկուի Կ.Պոլիս, ուր պանդխտած արմտանցիներուն նիւթական օժանդակութեամբ եւ գործնական օգնութեամբ ձեռք կը բերէ 10 ատրճանակ եւ 500 փամփուշտ: Սակայն Կ.Պոլսոյ արմտանցիներուն մէջ գտնուող լրտես Բերդլիբէ Զեօտեան, կը մատնէ եղածը: Կիրասոնի նաւահանգիստին մէջ Ն.Բէշիշեան կը ձերբակալուի եւ զենքերը կը գրաւուին<sup>93</sup>: Գ.Արխանեան կաշառքի եւ իրեն ծանօթ ազդեցիկ պաշտօնատարներու միջոցով կարճ ժամանակի մէջ կը յաջողի բանտէն ազատել Նշան Բէշիշեանը<sup>94</sup>: Հաւանաբար այս պատճառով Գ.Արխանեան կ'այցելէ

Կիրասոն, ուր կը տանի նաեւ յեղափոխական աշխատանք. այս մասին ականատեսը կը վկայէ. «Շմաւոնի Կիրասոնէն հեռանալէն լեմ յիշէր քանի ամիսներ անցած էին, երբ մեր մէջ ունեցանք արմտանցի Նշանաւոր յեղափոխական Գալուստ Արխանեանը, որ երեք օր մնալէ յետոյ Նոյնպէս մեկնեցաւ ջորեպան Ղուկասին հետ հայրենիք: Իր Կիրասոն ներկայութեան միջոցին, քաղաքի առաջաւոր երիտասարդները ժողով գումարեցին մեր տունը: Եւ երբ անոնք ժողովատեղին ձգելով մէկ մէկ կը մեկնէին, կը նկատուի թղթի ղեմքին վրայ ուրախութեան եւ վստահուիւթեան արտայայտութիւններ»<sup>95</sup>:

1891 Օգոստոսին, Լիճք գիւղին մէջ լրտես Պետրոս Պուտաքեանի ցուցմունքով կը ձերբակալուի գիւղի կազմակերպութեան պատասխանատու Խաչատուր Մելքոնեան վարժապետը, որուն մօտէն կը գրաւուին կարգ մը թուղթեր: Գ.Արխանեան, ղեպքերու գէշ ընթացքին առաջքը աննելու համար, յանձնարարականով մը Արմտանէ Լիճք, լրտեսին մօտ միջնորդ կը դրկէ Խաչատուր Զերմեանը:

Պուտաքեան ասոր եւս ձերբակալուել կու տայ: Տեղի կ'ունենան համատարած խուզարկութիւններ եւ ձերբակալութիւններ: Կը խուզարկուի Գ.Արխանեանի բնակարանը: Կը ձերբակալուին 18 անձեր: Կաշառքի միջոցով ձերբակալուածները ազատ կ'արձակուին:

Մթնոլորտը տակաւին չհանգստացած, Հոկտեմբերին Սարգիս Նախուրեան ահաբեկչութեան կ'ենթարկէ Էօմէր Փեփիլեան անունով լրտեսը: Մթնոլորտը դարձեալ կը շիկանայ: Կը ձերբակալուին 12 հոգի, որոնցմէ Նշան Կենճեան կը խոստովանի թէ յեղափոխականներուն մեծը Գ.Արխանեանն է<sup>96</sup>:

Ձերբակալելու կու գան նաեւ Գ.Արխանեանը, որ ճարպկօրէն փախուստ կու տայ: Մինչ այդ, Ղուկաս Ծանիկեան (Ծանիկ կամ Ճիւկօ) ահաբեկչութեան ենթարկած էր մատնիչ Պետրոս Պուտաքեանը (մատնիչը վիրաւորուած էր բազուկէն) եւ Լեւ պպատանած<sup>97</sup>: Անոր միացած էին երկու փախստական հնչակեաններ՝ Մկրտիչ Թիւթիւնճեան եւ Արիստակէս Ընեւզեան: Գ.Արխանեան, իր երկու զինակիցներուն՝ Նշան Բէշիշեանի եւ Չաքէ Գլըճեանի հետ կը միանայ անոնց. կը կազմուի «Մսձուրի Առիձ»-ին (Արխանեանին տրուած ծածկանուններէն մին) յայտնի ֆետայական խումբը:

Գ.Արխանեանը հալածելու եւ ձերբակալելու համար, Արմտան կու գայ բանակային զօրախումբ մը: Կը սկսի խուզարկութիւններու, ձերբակալութիւններու, այլան-թալանի եւ բռնարարքներու երկար շարք մը: Ձերբակալուածները կ'ենթարկուին անլուր տանջանքներու: Ծանր չարչարանքներու կ'ենթարկուին յատկապէս Արխանեանի ընտանիքին անդամները: Երեք անձեր կը մահանան չարչարանքներու տակ: Խոստովանութիւններ չկատարելուն պատճառով չարչարանքներու տակ դաժան մահ մը կ'ունենայ Մկրտիչ Ղարամըկըրեանը, որ Արխանեանի խումբին եւ Արմտանի միջեւ կապն էր:

Դեպքերու այս ընթացքին զուգահեռ, Արխանտանի խումբը կը շարունակէ իր գործունէութիւնը: Սանդուխ լերան վրայ ան կը վերացնէ Մեծտառ անունով թուրք լրտեսը: Չաթլը Չայ կոչուած գետակին մօտ, խումբը կը պաշարուի ոստիկանական ջոկատի մը կողմէ: Յաջող մարտէ մը ետք, խումբը անվնաս կը նահանջէ դէպի անելի ապահով բարձունքներ:

1892 Յունիսին, Ապուշտա բերդին մօտ ձեռք կ'անցնեն յարգի որս մը՝ լրտես Մերովք Բեօտեանը: Վճիռը անխուսափելի էր: Յունիսին խումբը կը պաշարուի կանոնաւոր զօրքի եւ պաշտօնագումարի կողմէ: Կռիւր կը տեսէ շուրջ 10 ժամ. հակառակորդի կողմէն կ'իյնան շատեր. Արխանտան կ'որոշէ նահանջել Սամա-Սայ: Ընդհանուր նահանջին, իր անյարմար դիրքին պատճառով Մկրտիչ կը յամենայ ու կը ձերբակալուի: Կ'ենթարկուի ծանր չարչարանքներու եւ ապա 10 տարուայ բանտարկութեան: Իր նոր եւ անելի յարմար դիրքերէն խումբը կրակի տակ կ'աննէ իր ետեւէն յառաջացող ջոկատը, որ կը ստիպուի նահանջել: Իր այս պարտութիւնը ծածկելու համար, ջոկատի հրամանատարը, շրջաններ յղած իր հեռագիրներուն մէջ հայ ֆետայիներուն թիւը կը գնահատէ 36 հոգի<sup>91</sup>:

Շրջակայ ոստիկանատուներէն եւ զօրանոցներէն զինուորական նոր ուժեր կը հասնին օգնութեան: Հոն կը փութան նաեւ քիւրտ աւազակապետը Դեմօն, Ազիզը, Պօշնագը եւ Գուրաօղլուն: Ֆետայիներու խումբը, այս բոլորէն աննկատ, կ'ապաստանի Թուրուտ գիւղը, վստահելի ընկերներու մօտ: «Ամէն անգամ որ թուրք ոստիկաններն Արխանտանի պահուցումը տեղն իմանալով՝ լեղապատառ հոն կը վազեն, նա արդէն մի քանի ժամ առաջ նոյն տեղէն հեռացած կ'ըլլար, որով շվորած ոստիկանք կը ստիպուին ետ դառնալ ձեռնունայն: Այսպէս, իր փոքրաթիւ խմբովը նա միշտ կը յաջողէր խուսափիլ զինուորական իշխանութեան կազմակերպեալ հետապնդումներէն եւ իր վրէժխնդրական քաջագործութիւններովը կը շարունակէր ան ու սարսափ ազդել այն կողմերու հայոց բոլոր թշնամիներուն»<sup>92</sup>:

Օգոստոսի մէջ, խումբը դարձեալ դեմյանդիման կու գայ զինք հալածող մեծաթիւ զօրքի մը: Կռիւն խուսափելու միակ միջոցը, ցից եւ անանցանելի ժայռերէն կախուելով դէպի ձոր իջնելն էր: Այդպէս ալ կընեն: Սակայն, արկածի մը հետեւանքով, ինքնաշէն ռումբ մը կը պայթի եւ Գ.Արխանտան ու Ղուկաս ճինկօ ծանրօրէն կը վիրաւորուին: Վիրաւորները կը տեղափոխուին մօտակայ գիւղ մը: Խումբը ժամանակաւորապէս կը ցրուի: Գ.Արխանտան ապաքինելէ ետք, իր հետ ունենալով Լշան Բէշիշեանն ու Եէկէն Պաղտասարը, կը շարունակէ իր արկածալից թափառումները: Այս միջոցին, շրջակայ թուրք թէ հայ գիւղացիները, Արմտան բանակած զօրքի հրամանատարին մօտ վստահելի երեւնալու եւ չարչարանքներ գերծ մնալու համար, ամեն օր տուտ մատուցելու մը կը կատարեն, թէ իբր խումբը տեսած են այսինչ լերան վրայ... չմոռնալով խումբ

ին թիւը մեծ չափերու հասցնել: Ու ամէն անգամ որ նման լուրի մը հիման վրայ բանակային զօրագունդ մը հետազօտութեան կ'երթայ, բնականաբար կը վերադառնայ ձեռնունայն: Գ.Արխանտան կը ստանայ անձեռնմխելի հերոսի հռչակ: Ապագային, Գ.Արխանտանի այս կերպարի հիման վրայ, Կրթանես Փափագեան կը գրէ «Հաճի Պէկ» վիպակը<sup>93</sup>:

Ղուկաս եւ կ'ապաքինի եւ Արիստակէս ճէնագեանի հետ կը մեկնի Ակն: Տեղի հնչակեան վարչութիւնը երկու կողողները կը դրկէ Տերսիմ, մասնակցելու համար քիւրտ ցեղապետ Գոչօղլու Սիմատի պարզած ապստամբութեան: Ղուկաս մեծ ներդրում կ'ունենայ ապստամբութեան մէջ եւ Տերսիմի քիւրտներուն մօտ հռչակ կը ստանայ որպէս քաջ կռուող: Չորս ամիս մասնակցելէ ետք ապստամբութեան, Ղուկաս կը վերադառնայ Արաբկիր ուր իրեն կը միանայ Տերսիմի ապստամբութեան մասնակից եւ փախստական Սահակ ժամկոչեան (ճանիկ):

Այդ ձեռք Գ.Արխանտան կ'անցնէ Սեպուի լերան վրայ գտնուող Ս.Լուսավորիչ վանքը, ուր կը գտնուին իր վաղեմի զինակիցը՝ Ռուբէն Շիշմանեան (Տերսիմի Բեռի) եւ այլ ֆետայիներ: Վանքի հայրենասէր վանահայր Վարդան վրդ. Բրոխորեան, նախապէս եղած էր քահանայ եւ ունեցած աղջիկ զաւակ մը: Կնոջը մահէն ետք ան ընդունած էր կուսակրօնութիւն: Բեռին եւ փոքր եղբայրը կորնէր, վանաօր թոռնիկներն էին. իսկ վանքը վերածուած էր հայ ֆետայիներու թացստոցին եւ հանդիպման վայրին:

Գարնանամուտին, Արխանտան կը վերադառնայ Արմտան ու իր մօտ կը հրաւիրէ փորձուած հայրուկներ Ե.Բէշիշեանը, Չաքէն, ճանիկը, Գեորգ Վելլեանը եւ Միքայէլ Տիլպերեանը: Վերջին երկուքը, Պօղոս Էլպէկեանի հետ ոճրափորձի ենթարկած էին յայտնի լրտես հաճի Գեորգը ու կը մնային փախստական: Կը կազմուի նաեւ օժանդակ խումբ մը Միսաք Գլըճեանի գլխավորութեամբ:

Շրջան կու գայ նաեւ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան Փոքր Հայքի լիազօր գործիչ Արամ Ալըզպաշեան, որ Մնծուրի եւ Երզնկայի կռուող ուժերը խորհրդակցութեան կը հրաւիրէ Ս.Լուսավորիչ վանքը: Խորհրդակցութեան որպէս արդիւնք, կը կազմուին երկու խումբեր Գ.Արխանտանի եւ Բեռիի խմբապետութեամբ: Արխանտանի խումբին մաս կը կազմեն ակնցի Սահակ ժամկոչեան (տասնապետ), ակնցի Ղուկաս ճանիկեան, երզնկացի կորնէն Շիշմանեան, արմտանցի Գեորգ Վելլեան, արմտանցի Միքայէլ Տիլպերեան եւ արմտանցի Չաքէ Գլըճեան: Արխանի խումբը պետք է գործէր Մնծուրի շրջանին մէջ, իսկ Բեռիի խումբը Շապին Գարահիսարի շրջանին մէջ: Բեռիի այս խումբին հիման վրայ, քանի մը տարի անց կը վերակազմուի անոր հանրայայտ ֆետայական խումբը<sup>94</sup>: Ասոնցմէ գաւտ, Շապին Գարահիսարի շրջանին մէջ կը գործէր նաեւ Դանիէլ Չաւուշի խումբը:

Ա.Ալըզպաշեան կը բացատրէ իւրաքանչիւր խումբին ընելիքները

եւ կարգ մը այլ ծրագրային եւ գործնական հարցեր<sup>13</sup>։ Սեպուհ լերան անմատչելի ժայռերուն մէջ կը պատրաստեն զինապահեստ, կը կատարեն զինավարժութիւններ: Խումբերը, համաձայն իրենց տրուած ծրագրին, կը հեռանան վանքէն, ու կ'անցնին «գործի»:

Կարճ ժամանակ մը անց, Արխանտանի խումբը Արմատանի մէջ կը պաշարուի գերակայ զօրքի մը կողմէ: Կռիւով կը կտրեն պաշարման օղակը եւ կ'ապաստանին մօտակայ Ս. Եղիա բլուրը: Փամփուշտներու տարափին պատճառով, անտրամաբանական կ'ըլլայ փորձել Գարապուտագ գետը անցնիլ: Ուստի կ'ամրանան Չիրմա քարայրը ու կ'որոշեն կռուիլ մինչեւ արեան վերջին կաթիլը: Խորէն, որ մինչ այդ վիրաւորուած էր ոտքէն, դիրք կը բռնէ քարայրէն դուրս ու կը մտնէ կռուի մէջ: Յաջորդ վերջը սակայն մահացու կ'ըլլայ: Խումբի մնացեալ անդամները փոխնիփոխ, քարայրի մուտքէն կը դիմադրեն գերակայ թշնամին: Կռիւը կը տեւէ երեք օր: Կը սպառի հայդուկներուն պաշարն ու ջուրը: Կը վիրաւորուի ևս եւ Ղուկասը: Փախուստի ոչ մէկ հնարաւորութիւն կար: Արխանտանի մայրը, կինը եւ Տ. Յակոբ քահանան կը միջամտեն որպէսզի յանձնուին: Արխանտան առաջին միջամտութիւնը կը մերժէ եւ կռիւը կը շարունակուի: Բայց երկրորդ միջամտութեան, երբ կ'իմանայ թէ անմեղ զինուորացիները հալածանքներու կ'ենթարկուին՝ խումբը կը յանձնուի: Այդ տեղի կ'ունենայ 1893 Յունիս 26-ին: Գ.Արխանտանն ու ընկերները կը կայանաւորուին եւ երգնկա կը տեղափոխուին արժանապատուօրէն: «Ամէնը շատ մեծ յարգանքով կը վերաբերուէին դէպի նա, չհամարձակելով կապել անոր ձեռներ, ոտերը: Գայմագամը մինչեւ իսկ կ'առաջարկէ Դաճի Գալուստին իր ձին, ինքը նստելով բռնակկիր ձիու վրայ»<sup>14</sup>:

Գ.Արխանտանի խումբին մաս կազմելու, անոր օգնելու կամ անոր հետ կապ ունենալու պատրուակով կը ձերբակալուի շուրջ 50 անձ: Դատավարութիւնը կը սկսի 1894 Ապրիլ 13-ին եւ կ'ըլլայ բացայայտօրէն կողմակալ: Օրինակի համար, երբ ամբաստանաւորները կը պահանջեն որ իրենց դէմ սուտ վկայութիւններ տուողները գան եւ դատարանին առջեւ տան իրենց վկայութիւնները, դատաւորը կը մերժէ, գտնելով որ.- «Եթէ ձեր երեսին բերեմ, վախերնուն չպիտի վկայեն, գիտնալով որ ձեր դէմ վկայութիւն տուողը կոմիտէն կը սպաննէ»<sup>15</sup>: Վճիռը կը կայանայ 3 Դեկտեմբերին. 24 անձ էր դատարարուող մահուան, 5 անձ ցկեանս բանտարկութեան եւ 22 անձ տարբեր տարիներու բանտարկութեան: Վճիռը դաժանօրէն խիստ էր. նկատի անենք որ իր ամբողջ գործունէութեան ընթացքին Արխանտանի խումբին մասնակիցներու թիւը 20-ը էր անցած: Տեղի կ'ունենան արտաքին միջամտութիւններ եւ վճիռը կը մեղմանայ: Մահավճիռները կը վերածուին ցկեանս բանտարկութեան:

Բանտը, իրականութեան մէջ դժոխք մըն էր: Աղտոտութիւն, զարշահոտութիւն, հիւանդութիւններ, ոճիրներ բանտարկեալներուն միջեւ, մուլութիւններ, կաշառակեր պաշտօններ եւայլն: Արխան-

տան եւ ընկերները, դուրսի ընկերներու օգնութեամբ, քանիցս կը փորձեն փախուստ կազմակերպել. կ'ըլլայ դէպք, երբ գետնի տակէն անցք բանալով, անոնք դուրս կու գան բանտի պարիսպէն դուրս. բայց միշտ ալ, վերջին պահուն կը մատուին, կը ձերբակալուին ու վերստին բանտ բերուելով անոնց վիճակը ւայել կը ծանրանայ: Բանտին մէջ, Գ.Արխանտան եւ ընկերները կը ստիպուին մնալուն կերպով արհեստի կռիւներ ունենալ ոճրածին թուրք բանտարկեալներու հետ՝ որոնք կը վայելէին բանտապահներուն հովանաւորութիւնը<sup>16</sup>:

Գալուստ Սիւրմենեան, որ այդ շրջանին իր պատանեկան տարիքին մէջ կը գտնուէր, կը վկայէ. «Ասոնց բանտ մտնելու օրէն իսկ՝ Երզնկայի բանտը տեսակ մը ուխտատեղի եղած էր երզնկացիներուն համար: Կիրակի ու տօնական օրերուն, ամէն ոք, ուստիցիներով բռնաւորուած կը վազէր բանտ, հերոսները կերակրելու եւ անոնց դէմքը տեսնելու համար: Թեւ շատ քիչերուն կը յաջողէր այդ, բայց դարձեալ բանտի հաստկեկ ճաղերէն ներս անոնց մէկն ու մէկին շուքն անգամ տեսել մեծ բաւականութիւն էր այցելուներուն համար»<sup>17</sup>:

Գ.Արխանտան 12 տարի կը ճաշակէ թրքական բանտին արհաւիրքը: Երգիչը կ'երգէ.-

*Ազատութեան որդին եմ,  
Արխանտան Գալուստն եմ,  
Երբ որ բանտէն ազատուեմ,  
Դարձեալ խումբեր պիտ' կազմեմ:*<sup>18</sup>

Դժբախտաբար, կը սխալէր երգիչը: Արխանտան առիթ չ'ունէր սոր խումբեր կազմելու:

18 Նոյեմբեր 1905-ին, Գ.Արխանտան կը մահանայ բանտին մէջ, տարափոխիկ հիւանդութեան պատճառով: Իր փափաքով կը թաղուի Երզնկայի հայոց գերեզմանատան մէջ, իր զինակիցին, Տերսիմի Զեռիին գերեզմանին վրայ, որ իր մօտէն առաջ, 10 Յունիս 1903-ին կախարան հանուած էր Երզնկայի մէջ:

«Երզնկացիներս Ծնունդի եւ Չատիկի գիշերները սովորութիւն ունէինք եկեղեցիէն երթալ ուղղակի գերեզմանատուն, այցելելու մտեալներուն, սոմեր վառելով անոնց գերեզմաններուն վրայ: Ծառախիտ ընդարձակ գերեզմանատունը լոյսերու մէջ կը շողար, իր թէ հեթանոսական մեհեանի կրակի պաշտամունքն էր, որ տեղի կ'ունենար: Ամէն ոք իր ընտանիքին գերեզմանին այցելելէ ետք, կ'երթար մոմ մը կը վառէր Արխանտանի, Զեռիի եւ պոմպայի երեք նահատակներու շիրիմներուն վրայ: Գերեզմանատունէն մեկնելէ ետք, հեռուն կը տեսնէիք սոմի պլպլացող լոյսերը, ինչպէս եթէ աստղեր իջած ըլլային մասնաւորաբար նահատակներուն դամբարանին վրայ»<sup>19</sup>:

## ՕՂԼՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Յնչակ», 1906 Յուն.- Փետր. Կորին, «Գալուստ Արխանես»:
- [2] «Նոր Կեսեք», 1898, Դեկտ. 1. Արփիար Արփիարեան, «Ժամանակակից Պատմության Էջեր - Հրոսակի Մը Յիշատակներն»:
4. Արխանեսի հաւատարիմ զինակիցներէն Նշան Քէշիշեան, կ'ըլլայ Արխանեսի ֆետայական խումբէն միակը որ չի ձերբակալուիր ու կ'անցնի արտասահման: Իր մահէն (1897) կարճ ժամանակ մը առաջ, ան գրի կ'առնէ Արխանեսին հետ իր ունեցած գործունեութիւնը: Ն.Քէշիշեանի մահէն ետք, Արփիար Արփիարեան այդ ձեռագիրը կը խմբագրէ եւ վերոնշեալ վերնագրին տակ, 12 շարունակականով կը հրատարակէ «Նոր Կեսեք»ի 1898 Նոյ.15-1899 Մայիս 15 թիւերուն մէջ: Այդ յօդուածաշարքին մէջ, կարգ մը անուններու փոխարէն օգտագործուած են կեղծանուններ, որովհետեւ, ինչպէս կը գրէ Արփիարեան «յայտնի անունները ոմանց տեղ ծածկանուններ դնելով. չեմ գիտեր ո՞վ ողջ է ո՞վ մեռած. ո՞վ հայրենիքը կը գտնուի ո՞վ բաւտը»: Այս պարագային Գալուստ Արխանես անուն փոխարէն օգտագործուած է Երուանդ Պէլլերեան:
- [3] Գաբրիէ Սալմանեան (Սամուէլ), «Ազատագրութեան Զահակիրները», թերթ «Արարատ»ի թիւ 31, Պէյրուս, 1960 էջ. 330-334:
- [4] «Նոր Կեսեք», 1898, Դեկտ.15:
- [5] Գ.Սալմանեան... էջ 328:
- [6] «Հայրենիք». Վահան Մազմանեան, «Յուշեր Յեղափոխական Անցեալէն»:
- [7] «Դրօշակ», 1895 Ապրիլ. «Արմտանի խնդրոյն Տեղեկագիրը (Նամակ Երզնկայից)»:
- [8] «Արարատ», 1954 Սեպտ. 3 եւ 5, Ա. Կիտուր, «Գալուստ Արխանես (Հաճի Պէկը)»:
- [9] «Նոր Կեսեք», 1899 Փետր. 15:
- [10] «Բիւզանդիոն», 1908 Դեկտ. 22|4 Յուն. 1909. Գիմինի, «Սկիւտարի «Արխանես» ընթերցատունը»:
- [11] Վ.Փափագեան, «Հաճի Պէկ», թերթ «Արարատ»ի թիւ 32, Պէյրուս, 1961:
- [12] Մամիկոն Ազնաւորեան, «Երզնկայի Յեղափոխական Խմորումները եւ Քեռիի Խումբին Կազմութիւնը», Տիբորոյտ, 1973, էջ 15-16:
- [13] Արիկ Վարդանեան, «Մեծուրի Առիւծը», թերթ «Արարատ»ի (Ա. տպագրութիւն Գ.Պոլիս, 1911), Պէյրուս, 1960, էջ 429-431:
- [14] «Դրօշակ», 1893 թիւ 5. «Նամակ Երզնկայից»
- [15] «Դրօշակ», 1895 Յունիս:
- [16] «Նոր Դար», 1895 Սեպտ. 8. Մենտոր, «Կռիւ Երզնկայի Բանտին Մէջ (Նամակ Երզնկայից)»:
- [17] Գ. Միւրմենեան, «Երզնկա», Գահիրէ, 1947, էջ 31-32:
- [18] «Հայրենի Երգարան», հրատ. ՄԴՀԿ «Փոքր Հայք» մասնաճիւղի, Պէյրուս, 1957, էջ 87:
- [19] Գաբրիէ Լազեան, «Դեմքեր Հայ Ազատագրական Շարժումէն», Գահիրէ, 1949, էջ 27:

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՆԱՍԵԱՆ (ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ)

Հայ ֆետայական շարժման ամենէն արդիւնաւետ դեմքերէն է Մինաս Օղլու:

Մինաս Օղլու ծնած է Չարչամպայի Գաբու-Գայա գիւղը: Չարչամպան, խառն բնակչութեամբ՝ թիւրք, քիւրտ, հայ, աւշար, չերքեզ, յոյն, լազ՝ գաւառ մըն էր, ուր ազգամիջեան հակառակութիւններուն կողքին կը գործէին նաեւ աւազակաբարոյ խումբեր: Նշանաւոր կը դառնան Մէվլետի եւ Շիրիս Ալիի աւազակախումբերը: Այս խումբերը կը յարձակին նաեւ Գաբու-Գայայի վրայ: Մինաս Օղլու, իր հետ ունենալով երկու եղբայրները՝ Մինաս եւ Պօղոս՝ ու իր մայրը, համագիւղացի երիտասարդներու հետ կը կազմակերպեն գիւղին ինքնապաշտպանութիւնը<sup>[1]</sup>:

Երբ այս երեւոյթը կը կրկնուի, շրջակայ գիւղերէն պատուիրակութիւն մը՝ հայ, թիւրք, յոյն՝ կը դիմէ Մինաս Օղլուին, որ ստանձնէ նաեւ շրջակայ գիւղերուն պաշտպանութիւնը: Գաւառապետը եւս այս ծրագրին իր համամտութիւնը կու տայ: Մինաս Օղլու կը կազմէ պատժիչ խումբ մը եւ պետական միջոցներով զինուելով կը հալածէ աւազակախումբերը: Խումբին կազմութենէն երեք ամիս անց, Գրոն Արմուտ թրքական զիւղին մէջ, երբ Շիրիս Ալիի խումբը իր հերթական աւարառութիւնը կը կատարէր, Մինաս Օղլուի խումբը աննշար կը մօտենայ գիւղին ու կը պաշարէ աւազակախումբը: Տասը ժամ



տեւած կռիւի միջոցին Շիրին Ալին եւ երկու աւագակներ կը սպանուին: Շիրին Ալիի եղբայրը՝ Սօլլա Սուլէյման կը ձերբակալուի իսկ միւսները փախուստ կու տան: Աւագակախումբը կը ցրուի:

Այս դէպքէն քանի մը շաբաթ ետք, փետրուարեան ցուրտ օր մը, Միւսա Օղլու Մեվլետի խումբը կը պաշարէ Օրթա գիւղի մօտ գտնուող բարձր լեռան մը քարանձաւարներուն մէջ: Կռիւը կը տեւէ անելի քան մէկ օր: Մեվլետ եւ չորս աւագակներ կը սպանուին եւ խումբը կը ցրուի:

Միւսա Օղլուի անունը կը ստանայ մեծ հռչակ:

Ժողովուրդը մտահոգուելով որ աւագակախումբերը կրնան վերակազմուիլ, կը խնդրէ Միւսա Օղլուէն որ ան ոստիկանի պաշտօն ստանձնէ: Մ.Օղլու կ'ընդառաջէ ու որպէս հեծեալ ոստիկանապետ, շուրջ երկու տարի կը իսկէ շրջանի անդորրը:

1892-ին շրջան կը հասնի Նշան ծածկանունով առաջին հնչակեան քարոզիչը, որ իր շուրջ կը համախմբէ մարտունակ երիտասարդութիւնը: Կը կազմուի շրջանի հնչակեան վարչութիւնը Նշան Պէյիւնեանի գլխաւորութեամբ: Երիտասարդութեան մարտական պատրաստութիւնը բարձրացնելու եւ ֆետայական խումբեր կազմելու համար, վարչութիւնը կը մտածէ յեղափոխական շարժման մասնակցելու հրաւիրել Միւսասեան եղբայրները: Բայց սա շատ նուրբ հարց մըն էր, որովհետեւ Միւսասեանները մտած էին պետութեան ծառայութեան մէջ: Առաջարկը կ'ըլլայ զգուշաւոր ձեւով եւ ուրախութիւն բոլորին, Միւսասեանները «անձնուիրաբար պատրաստակամ եղան մեր գաղափարը ընդունելու, մինչեւ իսկ ունեցած զէնքերը չուզեցին վերադարձնել կառավարութեան: Բայց ո՛չ, պետք էր որ զէնքերը յանձնէին եւ յանձնելով զէնքերը վերադարձան գիւղ»<sup>21</sup>: Միւսա Օղլու եւս այդ մասին կը յուշագրէ. - «Ես ու եղբայրներս, ամենայն սիրով եւ պատրաստակամութեամբ այդ առաջարկէն ընդունեցինք, երդուեցինք մինչեւ մեր արեան վերջին կաթիլը մեր ժողովուրդի ազատութեան գործին տալ»<sup>22</sup>:

Չարշմպայի գիւղերու հնչակեան խումբերուն միջեւ կապերը ամրապնդուելէն ետք, շրջանը հաղորդակցութեան մէջ կը մտնէ Սամսոնի եւ Մարգուանի մասնաճիւղերուն հետ: Սամսոնի մասնաճիւղէն կը ստանան զէնք, որոնցմով կը կազմուի Միւսա Օղլուի ֆետայական խումբը, որ կը սկսի հարուածներ իջեցնել «հայ ժողովուրդին հալածող պէկերու կալուածատէրերի գլխին»<sup>23</sup>: Միւսասեան եղբայրներու այս դիմաշրջութիւնը, բնականաբար լաւ աչքով չի դիտուիր իշխանութեան կողմէ: Վերջիններս դաւադրաբար կը սպաննեն Միւսա Օղլուի կրտսեր եղբայրը՝ Պօղոսը: Իշխանութիւնները կը կազմեն նաեւ Միւսա Օղլուի խումբը հետապնդող յատուկ զօրագունդ մը, յիսնապետ Լօղմանի ղեկավարութեամբ: Երկու կողմերու առաջին բախումը կ'աւարտի Լօղմանի, Զիւլիկ Դասանի

եւ տասն անելի զինուորներու զգետնումով:

Չարշմպայի գաւառապետը կ'աշխատի Միւսա Օղլուի դէմ նոր խումբ մը դրկել, սակայն ոչ ոք կը համարձակի այդ գործը ստանձնել:

Միւսա Օղլու իր խումբով կ'անցնի Մարգուանի եւ Սամսոնի շրջանները, իրեն կը միանայ Մարգուանի հնչակեան խումբը եւ շատ մը երիտասարդներ: «Որքան որ կառավարական հալածանքը շատանում էր, մենք էլ այնքան յանդգնութիւն էինք ցոյց տալիս, երբեմն նոյնիսկ օրը ցերեկով գիւղերն էինք մտնում, կառավարական պաշտօնեաներին պատժում եւ կառավարութեան հարկաթղթերն ու հրամանագրերն անելով պատռում էինք եւ գիւղացիներին յորդորում, ո՛չ կառավարութեան հարկ տալ, ո՛չ էլ կալուածատէրերին»<sup>24</sup>.- կը գրէ Մ.Օղլու:

Չարշմպայի, Սամսոնի եւ Մարգուանի գաւառապետութիւնները յառաջ կը բերեն զօրագունդ մը, որ հազարապետ Օսման պէլի գլխաւորութեամբ պաշտօն կը ստանայ հրապարակէն վերացնել Միւսա Օղլուի խումբը: Կողմերը իրար կը հանդիպին Տէյիւրմէն Տէրտիի մէջ: Կռիւը կը տեւէ երեք օր. այդ միջոցին, հայ ֆիտայիները կը յաջողին կազմակերպուած նահանջով եւ թշնամիին բազմաթիւ զոհեր պատճառելով հասնիլ Տաւշան Տաղի գագաթը՝ որմէ յետոյ կռիւը անելի դիւրին էր իրենց համար: Օսման պէլի զօրախումբը յուսահատ կը վերադառնայ:

Ձմռան, Մ.Օղլու խումբը կը բաժնէ խմբակներու եւ զանոնք կը դրկէ ապահով վայրեր՝ ձմեռը անցընելու համար. իսկ ինք, իր ընկերոջ՝ Պաղտասարին հետ կ'ապաստանի Մատիլ գիւղը՝ ընկերոջ մը տան ներքնայարկը: Կարճ ժամանակ անց տունը կը պաշարուի: Փոխհրաձգութեան ժամանակ Պաղտասար կը նահատակուի եւ Միւսա Օղլու կը վիրաւորուի ու կը ձերբակալուի: Կը տարուի Սամսոնի բանտը, ուր արդէն բանտարկուած էին մայրը, կինը, երկու որդիներն ու աղջիկը: Բանտին մէջ կը հիւանդանայ ու անխնամ ձգուելով կը մահանայ որդին՝ Կարապետը:

Բանտ գտնուած միջոցին, Միւսա Օղլուի խումբը կը վերածուի փոքր խմբակներու: Անոնցմէ մէկը, որ կը գլխաւորէ իր եղբայրը՝ Միւսասը, կը գործէ Սիւնպի շրջանին մէջ: Մէկ այլ խումբ կը ղեկավարէ Յակոբ Ուրումեանը: Միւսա Օղլուի շունչին տակ իրենց փորձառութիւնը ձեռք բերած ֆետայիներէն կազմուած այս խումբերը, անոր բացակայութեան եւս, յաջող հարուածներ կը հասնցնեն կանոնաւոր բանակին եւ աւագակախումբերուն: Բախումներէն մէկուն ընթացքին սակայն կը նահատակուի միւս եղբայրը՝ Միւսասը:

Ձերբակալութիւնները կը խստանան եւ Սամսոնի բանտը կը լեցուի հնչակեան յեղափոխականներով: Մ.Օղլուին բանտակից կըլլան Նշան Պէյիւնեան, Սողոմոն Կարմիրեան, Յովսէփ Յակոբեան եւ ուրիշներ: Մ.Օղլու եւ Յովսէփ, որոնք արդէն դատապարտուած

էին 15 տարուայ բանտարկութեան, կ'որոշէն փախուստ կազմակերպել: Սամսոնի մասնաճիւղին օգնութեամբ ձեռք կը բերեն սղոցիկներ (հացի մէջ պահուած) եւ Յովսէփ, որպէս վարպետ երկաթագործ, կը սղոցէ զուգարանին յատակի երկաթները: Բանտարկեալները փախուստ կու տան: Պահակները կրակ կը բանան եւ փախուստի դիմողներուն մէկ մասը կը սպաննուի: Մ.Օղլու, Յովսէփ եւ Եուսուֆ, ապահով կը հասնին լեռ ու կը վերամիանան իրենց ընկերներուն:

Միևսա Օղլուի վերերելումը, ֆետայիներուն մէջ յառաջ կը բերէ նոր եռանդ եւ ոգեւորութիւն: Կռուողներուն ընդհանուր թիւը կը հասնի 150-200-ի, որոնցմէ 50-ը մնայուն զէնքի տակ իսկ մնացեալը՝ ի պահանջեալ հարկին: Միևսա Օղլու գանոնը կը բաժնէ փոքր խումբերու եւ կը գծէ իւրաքանչիւրին գործունեութեան սահմանները. - Քիւրտ Սարգիսի (Սարգիս Գետրգեան) խումբ, Ֆնտըզճեան հաջիկի խումբ, Զգանեանի խումբ, Յակոբ Ուրումեանի խումբ, Յակոբ Խանքերեանի խումբ, Զարացի Յովսէփի խումբ, Արմենակ Չակուճեանի խումբ եայլն: Իւրաքանչիւր խումբ շուրջ 30 կռուող: «Խումբերը կառավարութեան զգացնել պիտի տային, որ նա անպաշտպան եւ անզեն ժողովուրդի դէմ չէ որ գործ պիտի ունենայ, այլ Փոքր Դայքի ամբողջ տարածութեան վրայ փռուած, լաւ զինուած եւ վարժ կռուող զինեալներն»<sup>91</sup>. - կ'ըսէ Միևսա Օղլու:

Խումբերուն եւ զօրքին միջեւ տեղի կուրենան բազմաթիւ բախումներ: Նշանաւորներէ կ'ըլլայ Քիւրտ Սարգիսի խումբին ընդհարումը Սօքուտերեսիի մէջ, ուր բանակային ստորաբաժանում մը կրցած էր ձեռք ձգել Սամսոնի եւ Սարգուանի մասնաճիւղերէն ֆետայիներուն դրկուած զինամթերքը: Դայ ֆետայիները անակնկալ յարձակումով մը գրաւուած զէնքը ետ կը վերցնեն: Այլ առիթով մը Գայագճի Օղլու Ալիի եւ եղբոր Արիֆի կողմէ գլխաւորուած ոստիկանական խումբ մը կը պաշարէ Միևսա Օղլուի Խումբը Քապա Ճելիզ գիւղին մէջ: Կռիւին որպէս արդիւնք ոստիկանապետ եղբայրները ու շատ մը ոստիկաններ կը սպաննուին: Այլ պարագայի մը Մ.Օղլու 5 ընկերներով կը պաշարուի Քուրչանլու գիւղին մէջ: Մէկ օր տեւող փոխիրաձգութենէն ետք, հայ ֆետայիները կը յաջողին կտրել համիտիչ գունդին պաշարման օղակը, հասնիլ մօտակայ անտառը եւ միանալ Յակոբ Խանքերեանի խումբին, տալով միայն մէկ նահատակ՝ Սարգիս Ալթըզուլանճեանը:

Միևսա Օղլուի կողմէ ղեկավարուած խումբերուն բախումները կառավարական զօրքերուն եւ աւագակախումբերուն հետ կը շարունակուին մինչեւ 1896 գարուն, երբ Սուլթան Դամիտի կողմէ կը յայտարարուի ընդհանուր ներում: Խառն պատուիրակութիւն մը, կազմուած իշխանութեան ներկայացուցիչներէն, Սամսոնի հնչակեան վարչութենէն եւ երեւելի անձնաւորութիւններէ կը դիմէ Մ.

Օղլուին, որ օգտուի ընդհանուր ներումէն եւ զէնքերը ցած դէ: Միևսա Օղլու երէք օրուան ժամանակ կը պահանջէ, որուն միջոցին նա խորիդակցութիւններ կ'ունենայ խումբերուն եւ Փոքր Դայքի մասնաճիւղերու վարչութիւններուն հետ: Ընդհանուր եզրակացութիւնը կ'ըլլայ օգտուիլ ներման հրամանագրէն: Մ.Օղլու կը լուծարէ խումբերը, կռուողները կը դրկէ ապահով վայրեր ու ինք, հինգ զինակիցներով, ամբողջապէս զինուած կը ներկայանայ Սամսոնի նահանգապետին: Միևսա Օղլուին չեն զինաթափեր: Ան կը վերադառնայ իր գիւղը եւ կը լծուի խաղաղ աշխատանքի: Անոր տունը կը վերածուի շահագործումներու զոհ դարձած գիւղացիներու բողոքատեղիի մը, որոնց դատերը ան կը լուծէ ամենայն արդարամտութեամբ:

1897-ին Միևսա Օղլու կը մեկնի Եգիպտոս: Իր հռչակը իրմէ առաջ արդէն հասած էր Աղեքսանդրիա, ուր մեկէ աւելի կեղծ Միևսա Օղլուներ կը չարաշահէին ժողովուրդին ազգասիրական զգացումները: Երուան Օտեան, հետեւեալ ձեւով կը ներկայացնէ այդ իրավիճակը. - «Յետոյ ունեցանք նաեւ մէկ քանի կեղծ Միևսա Օղլուներ, այն քաջարի հրոսպետը որ այնքան շահատակութիւններ (իմա՝ սասպատակութիւններ. - Ե.Ճ.) գործած է Սամսոնի եւ Սեբաստիայի միջեւ եւ հայկական կեանքեր փրկած՝ ահ ու սարսափ ազդելով վայրագ աւագակներու: Միջոց մը նոյնիսկ երկու Միևսա Օղլուներ ունեցանք Աղեքսանդրիոյ մէջ, ուրիշ մէկ քանի կեղծ Միևսա Օղլուներ էտք: Երկուքն ալ իրենց հարազատութեան վրայ կը պնդէին ու փոխարձարձաբար զիրար կ'ամբաստանէին իբր խաբէբայ: Որո՞ն հաւատալ. «գո՞րն առնել եւ գորն թողուլ»: Շատեր երկուքն ալ կը մերժէին իբրեւ անվաւեր բայց ուրիշներ, երկու խումբի բաժնուած, իր Դաճի Միևսա Օղլուի հարազատութեան վրայ կը պնդէր. այս հակամարտ կիրքերէն բնականաբար կ'օգտուէին երկու խաչագողները, որոնք ամէն տեսակ օգնութիւն կը գտնէին իրենց մոլեռանդ կուսակիցներուն կողմէ: Այդ միջոցին սակայն վրայ հասաւ բո՞ն իսկ հարազատ Դաճի Միևսա Օղլուն, յանձնարարագրով, պաշտօնական վաւերաթղթերով եւ վերջ դրաւ կատակերգութեան մը որ ալ միօրինակ դառնալ կը սկսէր: Բուն Միևսա Օղլուն, որուն հետ ծանօթանալու հաճոյքը ունեցայ, երկայնահասակ, նիհար, կորովի դիմագիծերով, համեստ ու պատուական անձ մըն էր: Դակառակ կեղծներուն՝ որոնք իրենց երեսակայական քաջագործութիւնները կը պատմէին առտուընտ մինչեւ իրիկուն, սրճարաններուն անկիւնը, Միևսա Օղլու երբեք չէր սիրեր իր ըրածներու մասին խօսիլ, հակառակ գինքը խօսեցնելու համար ըրած մեր քանգերուն: Ճշմարիտ հերոսի մը պէս, այդ մարդը զրեթէ խօսիլ չէր գիտեր եւ կարծես արհամարհանք մը ունէր խօսքին հանդէպ: Նաեւ չափազանց վեհանձն էր: Բաւական Աղեքսանդրիա մնաց առանց իր նկիւթական վիճակին

վրայ տեղեկութիւն տալու եւ մենք ամէնքս այնպէս կը կարծէինք թէ ապրուստի միջոցներ ունէր: Յետոյ դիպուածով լսեցինք թէ մարդը անօթի է եղեր գրեթէ ու այն ատեն յիշեցինք թէ ո՛չ ոք, օր մը ճաշարանի մէջ անոր կերակուր ուտելը տեսած էր: Եկեղեցին ուզեցին իրեն նիւթական օգնութիւն մը ընել, մերծեց: «Եթէ գործ մը գտնաք՝ կ'աշխատիմ»,- ըսած էր: Յետոյ, Հայկ Էֆենտի Էքզիլերի Գահիրէի մօտերը ունեցած մէկ ագարակին պահապան կարգուեցաւ ու հոն գնաց՝ ուր բաւական ժամանակ մնաց կարծեմ»<sup>71</sup>:

Եգիպտոսի մթնոլորտը հեղձուցիչ կու գայ Միկաս Օղլուին ու ան կ'որոշէ վերադառնալ իր լեռներն ու ձորերը: Սակայն, Սամսոնի նաւահանգիստին մէջ, անոր թոյլ չեն տար մտնել Թուրքիա եւ ան կը վերադառնայ Եգիպտոս: Կարճ ժամանակ մը անց, 1903-ին, կը տեղափոխուի Պաթում եւ ապա կը հաստատուի Սոխումի:

Այդ շրջանին, Սեւ Ծովու ափերը ապաստանած էին 1895-ի համիտեան ջարդերէն փախստական շուրջ 2500 հայ: Տատաշ պէկ անուով աւազակապետը, իր աւարառութիւններով դարձած էր հայ գաղթականութեան պատուհարը: Աւազակապետը զսպելու ռուսական կառավարութեան քանի մը փորձերը կ'անցնին անյաջող: Միկաս Օղլուի անցեալի փորձին ծանօթ ժողովրդային պատերազմութիւն մը, կը դիմէ անոր որպէսզի զսպէ աւազակները: Միկաս Օղլու կ'ընդառաջէ: Կը կազմէ քսան հոգիսնոց պատժիչ խումբ: Առաջին իսկ բախումին Տատաշ պէկ կը սպաննուի եւ աւազակախումբը կը ցրուի:

1905-ի Ռուսական Ա. Յեղափոխութեան, Մ.Օղլու իր խումբով կ'անցնի յեղափոխականներուն կողմը: 1906-1907 յետաշրջութեան տարիներուն, Մ.Օղլու բախումներ կ'ունենայ «Սեւ Հարիւրակայիններուն» հետ: Այդ ժամանակաշրջանին կառավարութիւնը կ'որոշէ հայ գաղթականութիւնը վերադարձնել Թուրքիա: Սա կը նշանակէր Սուլթան Համիտի ողորմածութեան յանձնել անպաշտպան գաղթականները: Ժողովուրդը կ'ընդդիմանայ: Այս հարցով ժողովուրդին վրայ բռնութիւններ գործադրող պաշտօնեաներուն դէմ պատժիչ գործողութիւններ կատարելու համար Մ.Օղլու վերստին կը կազմէ խումբեր ու կ'ապաստանի մօտակայ լեռները: Անոր հարուածներուն տակ մէկը միւսին տեսէն կ'իյնան շատ մը ցարական պաշտօնեաներ: Կոզակական զօրախումբեր կը հալածեն Միկաս Օղլուն: Կռիւներէն մէկուն ընթացքին Մ.Օղլու, իր հին գինակից Յակոբ Ուրումեանի խումբին հետ, կը յաջողի երկու կրակի տակ աննել կոզակական զօրախումբը, որ ամբողջական ոչնչացումէ խուսափելու համար փախուստ կու տայ: Այս կռիւին, Մ.Օղլու վեհանձնաբար գերի չի վերցնէր կոզակ հրամանատարը: Այս ծիրէն ներս, 1907 Փետրուարին, Սոխումիի հնչակեան մասնաճիւղի որոշումով ահաբեկութեան կ'ենթարկուին Ազանրա գիւղի

գիւղապետ յոյն Արիսիլէն ու անոր թիկնապահները:

Օսմանեան սահմանադրութենէն ետք Միկաս Օղլու կը վերադառնայ իր ծննդավայրը: Ան կ'արժանանայ ժողովրդային շեքմ ընդունելութեան եւ յարգանքի:

1912-13-ին, Ստեփան Սապահ Գիւլեան հակաիթթիհատական քարոզչութեան եւ կազմակերպչական աշխատանքներու համար կ'այցելէ Փոքր Հայքի շրջանները: «Չարշամկայում, բախտն ունեցայ անձամբ տեսնելու Յովհաննէս Մինասեանին (հռչակաւոր Միկաս Օղլու) եւ ընկեր Հաճի Կարապետ Մանուկեանին: Պատական այդ հերոսները, դեռ իրենց կռուի կորովը պահել էին, միշտ աննկուն մնալով, հակառակ իրենց գլխով անցած հազարաւոր փորձանքներին»<sup>72</sup>: Ս.Սապահ Գիւլեանի հրապարակախօսութիւններուն եւ կազմակերպչական աշխատանքներուն շնորհիւ շրջանի մասնաճիւղերը կ'ընդլայնին նորագիւր երիտասարդ ընկերներով: Միկաս Օղլու, երիտասարդ ընկերներուն հետ կը կատարէ զինավարժութիւններ եւ փորձառու հայրուկապետի իր փորձը կը փոխանցէ անոնց:

Միկաս Օղլու 1914 Ապրիլին գոհ կ'երթայ դառնակալ գնդակներու: Անոր սպաննութեան անդրադարձող կարգ մը հեղինակներ, այդ գործին համար կասկածի տակ կ'ամենն հայեր, ու կը յիշատակեն Թոփճեան ընտանիքին հետ Մ.Օղլուի ունեցած հակառակութիւնները: Բացառուած չէ որ Միկաս Օղլու գոհ գացած ըլլայ Իթթիհատի դառնակալ գնդակներուն, որովհետեւ Իթթիհատ այդ շրջանին հայ հասարակական-կուսակցական յայտնի դէմքեր գաղտնագողի սպաննելէ ետք, կը փորձէր ոճիրը վերագրել ներհայկական կամ միջկուսակցական տարակարծութիւններու:

Միկաս Օղլուի սպաննութեամբ անոր մտրտական ոգին չի մեռնիր. այդ կը փոխանցուի իր տասնութամեայ որդիին՝ Նշանին: 1915-ին Նշան կը վերցնէ իր հօր ժառանգ թողած գէնքը ու խումբ մը գաղափարակից երիտասարդներով կը բարձրանայ լեռ: Նշան կը քալէ իր հօր ոտնահետքերով: Ասլան անուով հրամանատարը, իր զօրախումբով ի գուր կը փորձէ ընկնել հայ փախստականները: Անոնց թիւը կը շատնայ փախստական նորաստեղծ երիտասարդներով, որոնք մինչեւ համաշխարհային պատերազմի աւարտը, յաջող ձեւով կը դիմակայեն բոլոր յարձակումները: Պատերազմին աւարտն ալ խաղաղ ելք մը չ'ըլլար փախստական երիտասարդներուն համար: Նշանի զխաւորութեամբ անոնք կը ստիպուին կռուիլ քեմալական յորդաններուն դէմ մինչեւ 1923, երբ Մուստաֆա Էմեալի հրահանգով փախստականներուն ճամբայ կը տրուի որ անցնին ռուսական սահմանը: Նշան իր զինակիցներով կը հաստատուի Սոխումի, ուր կ'անցնէ կեանքին մնացեալ մասը:

Միկաս Օղլուի բարի յիշատակը երկար կը մնայ շրջանի հայ,

թուրք, յոյն եւ այլազգի գիւղացութեան մօտ: Օրինակի համար երբ 1915-ին կառավարութիւնը կը փորձէ համոզել Գարու Գայա գիւղի բնակիչ Քեսկէն Օսման Չաուուշի գաւակները, որպէսզի միանան Եշան Մինասեանը հետապնդելու արշաւին, անոնց մայրը արգելք կը կ'ենայ ըսելով.- «Տղա՛քս, եթէ դուք Մինասեանին տղուն վրայ գնդակ նետէք, տուածս կաթը ձեզի հարամ կ'ընեմ: Մինասեանը եղած է անցեալի մէջ ձեր հայրը պաշտպանող Շիրին Ալիէն եւ ուրիշ թշնամիներէ. եւ դուք այսօր անոր տղան կ'ուզէք սպաննել»<sup>[9]</sup>: Այսօրինակ վկայութիւն մը կը կատարէ նաեւ Սեբաստացի Մուրատ, երբ 1915-ին Սեբաստիայէն իր առասպելական փախուստի ճամբուն վրայ կ'իջեւանի յունական գիւղեր, ուր յոյն գիւղացիներուն կողմէ կ'արժանանայ սիրալիր ընդունելութեան: Յոյն գիւղացիները կը պատմեն թէ ինչպէս 1895-ի կոտորածներուն Մինաս Օղլու պայքարած էր կառավարութեան դէմ, «սարսափեցուցած էր շրջակայքի բոլոր աւազակները եւ որուն քաջագործութիւններու վրայ թուրքերն անգամ հիացումով կը խօսէին»<sup>[10]</sup>: Յոյն գիւղացիները Ս.Մուրատին կը տեղեկացնեն նաեւ որ Ս.Օղլուի տղան այժմ փախստական է եւ իրենք մեծ յոյսեր դրած են անոր վրայ:

Երբ մէկ կողմէ թուրք, յոյն եւ այլազգի գիւղացիները յարգանք կ'արտայայտեն ժողովուրդին ցասումը մարմնաւորող քաջ ֆետայիին յիշատակին, անդին, պահպանողական մտածելակերպի դասական ներկայացուցիչներէն Արշակ Ալպոյանճեան, Մինաս Օղլուի գործունութիւնը կ'որակէ «յիմար շարժումներ»...<sup>[11]</sup>:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] Ստեփան Սապահ Գիւլեան, «Փոքր Հայքի Յիշատակներ», Պէյրութ, 1956, էջ 243:

[2] «Յուշարձան Լուիրուած ՍՂՀԿ Զառասնամեակին», 1930, Եշան Պէլիեան «Հնչակեան Յայտնի Ֆետայի Մինաս Օղլու»:

[3] Ս.Սապահ Գիւլեան, ... էջ 247:

[4] Լոյն, էջ 249:

[5] Լոյն, էջ 251:

[6] Լոյն, էջ 259:

[7] Երուանդ Օտեան, «12 Տարի Պոլսէն Դուրս», Պէյրութ, 1937, էջ 140-141:

[8] Ս.Սապահ Գիւլեան, ... էջ 240:

[9] «Զառասնամեակ...», էջ 232:

[10] Հապէլ Եսայեան, «Մուրատի ճամբորդութիւնը», Երեւան, 1990, էջ 76-77:

[11] Ա.Ալպոյանճեան, «Պատմութիւն Եւրոպոյի Հայոց», Գահիրէ, 1952, էջ 1182:

## ՄԽԻԹԱՐ ՍԷՖԵՐԵԱՆ (ՄԽՕ ՇԱՀԷՆ)


Հնչակեան ֆետայիներու երկար շարքի ինքնատիպ կերպարներէն է Մխօ Շահէն: Ֆետայի մը, որ աղմուկ հանեց որեւէ այլ բանէ անելի իր մահաւան պարագաներով:

Մխօ Շահէն ծնած է Մշոյ Տրեղանք գիւղը, 1866-ին:

1884-87 կը մեկնի Թիֆլիս, ուր կ'աշխատի որպէս մշակ:

Ճնշկավայր վերադառնալէն ետք, «Երիտասարդներ ընկերութիւն մը կազմեցինք, մեր նպատակն էր գիւղական շահերը պաշտպանել, չթողուլ որ քրտերը մեր տաւարը տանին, արտերը աւրեն, նպատակ ունէինք նաեւ աղքատները պաշտպանել գիւղացի հարուստ աղաներէն».- կը պատմէ Մխօ Շահէն<sup>[1]</sup>: Այս նպատակին համար, Մ.Շահէնի մշտական ընկերները կ'ըլլան Արաբօ (Առաքել Մխիթարեան), Խուլփեցի Առաքել, Շենիկցի Գրգօ (Գրիգոր Մոսեան) եւ Ալիզոնացի Լեւոն: Խումբը յարաբերութիւն կը հաստատէ Վարդէնիսի, Արտուքի եւ Խորսի համանման խումբերու հետ:

1891-ին Մ.Շահէնի ընկերներուն մեծ մասը, մատնութեան զոհ երթալով կը ձերբակալուին: Շրջան մը փախստական մնալէ ետք, կը ձերբակալուի նաեւ Մ.Շահէն: Ծեծով ու անարգանքներով զինք կը տանին Մուշի բանտը, ապա Պիթլիսի բանտը: Հոն ծեծի տակ կը փորձեն Մ.Շահէնէն խոստովանութիւններ պոկել, բայց չեն յաջողիր: Վերստին ճամբայ կը հանեն դէպի Մուշ: Ճամբան, Աւգաստ գիւղին մէջ, հանգիստի պահու մը, Մխօ կը յաջողի փախուստ տալ:



երեք շաբաթ փախստական, գիւղէ-գիւղ թափառելէ եւ ամենագաղտնի թաքստոցներու մէջ պահուըտելէ ետք կը ձերբակալուի: Ծեծ ու յարլարանքներէ ետք կը փոխադրուի Պիթիսի բանտը: Ձեւական դատավարութենէ մը ետք կը դատապարտուի 15 տարուայ բերրորգելութեան: Եօթը բանտարկեալներու հետ շղթայակապ և խիստ հսկողութեան տակ կը փոխադրուի Տրապիզոն: «Մեր երկրին սահմաններէն դուրս հանեցին մեզի, ծանօթ տեսարանները փոխուեցան, մեր ետեւ մնացեր էին ազգական, սիրելի, յոյս, երջանակութիւն, շղթայէն գատ ուրիշ բան մը չունէինք, զինուորներու հարուածով վիրաւոր՝ ոտքերնիս իրար խառնուած՝ թշուառ մարդակոյտ մը՝ յառաջ կը գլորեինք: Բանտ-բանտ, գիւղէ-գիւղ կ'երթալիսք նոյն յամառ սողունութեամբ»<sup>71</sup>:

Տրապիզոնէն կը փոխադրուի Կ.Պոլիս ուր երեք ու կէս ամիս բանտ մնալէ ետք կը ղրկուի Աքիայի բերդը:

Աքիայի բանտին մէջ Մ.Շահէն կը ծանօթանայ հնչակեան յեղափոխականներուն՝ Յարութիւն Ճանկիւլեան, Կարապետ Սօջոտրէլեան, Պետրոս Մարիմեան, Գրիգոր Գլինճեան, Պետրոս Վեդապետեան եայլն ու անոնցմէ հայերէն գրել-կարդալ կը սորվի: Այս մասին ան կը գրէ.- «Բանտը ինձ դպրոց եղաւ, հոն սորվեցայ կարդալ-գրել. առաջին անգամ հոն ըմբռնեցի հայկական շարժումին ոգին: Դասատուներս յեղափոխականներն էին, գաղափարի մարդիկ, ես գործի, կռիւի մարդն եղեր էի: Բանտին մէջ հասկացարի թէ ինչքան հզօր է գաղափարը եւ թէ ինչպէս ան կրնայ ինծի պէս մարդոց ուժը կրկնապատկել: Մինչեւ Աքիա, տեսակ մը բնագոյումով գործեր էի: Ազատութեան բնական սերն ունէի, թշնամին կ'ատէի, ընկերներու համար հոգիս տալու յօծար էի, սակայն Աքիայի ընկերներս սորվեցուցին ինծի թէ զգացումի հետ մտածումն ալ պէտք է, թէ քաջութիւնը միայն բաւական չէ՝ Հայրենիքին ծառայելու,- պէ՛տք է խնջելով կազմակերպուիլ»<sup>72</sup>: Յարութիւն Ճանկիւլեան, իր յուշերուն մէջ Մ.Շահէնը կը նկարագրէ որպէս «շատ ուշիմ եւ լուրջ մէկը», որ «գրել, կարդալ չէր գիտեր, բայց շատ փափաք ուներ եւ երկու տարուան մէջ սորվեցաւ... Մխիթար գիտեր որ զինքը շատ կը սիրէի եւ չափէն անելի կը համակրէի»<sup>73</sup>:

Երեք տարի Աքիայի բանտը անցընելէ ետք, Յ.Ճանկիւլեանի օգնութեամբ, արկածալից փախուստ մը կ'ունենայ բանտէն ու Պէյրուսի վրայով կը յաջողի անցնել Կիպրոս՝ Նիկոսիա:

Մ.Շահէնի Կիպրոս հասնիլը կը զուգահիճի այն պահուն երբ Ամերիկայէն Լոնտոնի վրայով Կիպրոս եկած հնչակեան կամաւորներու խումբը, Կիլիկիա մեկնելու վերջին պատրաստութիւնները կը տեսնէր: Բանտէն արդէն հնչակեան դուրս եկած Մ.Շահէն կը ծանօթանայ Ապահին (Պետրոս Գմզըմեան) եւ կը միանայ խումբին:

1895 Ապրիլին, Ապահի առաջնորդութեամբ կամաւորներու Ա.

խումբը (28 հոգի), որուն մէջ Մ.Շահէն, առագաստանաւով ափ կ'ելլէ Սուէտիոյ ծովեզերքը եւ կը միանայ Ադասիին (Կարապետ Թուր Մարգիսեան):

Մ.Շահէն, սկզբնական շրջանին Ադասիի խումբին հետ կը գործէ Սուէտիոյ շրջանին մէջ: Ապա, Ադասիի խումբին հետ կը մեկնի Արեգին: Վեց օր տեղը այս վտանգալից ուղեւորութեան ընթացքին, խումբը չորս անգամ կռուի կը բռնուի թրքական բանակի ստորաբաժանումներու հետ, ինչպէս նաեւ կ'աւարարէ Պազարճըզ դաշտին քիւրտ ցեղախումբը:

Չէյթունի ապստամբութեան նախապատրաստութեան համար Ապահ, Մ.Շահէն եւ Ծին Թորոս կը մեկնին Յաճըն, ուր արդէն կը գործէր Յնչակեան մասնաճիւղ մը, Տեր Թորոս քին. Սաթամեանի ղեկավարութեամբ: Յնչակեան վարչութիւնը համաձայն կ'ըլլայ մասնակցի ապստամբութեան: Սակայն, կը նախընտրէ խորհրդակցի քաղաքի երեւելիներուն հետ: Վերջիններս, գաղտնի ժողովի մը ընթացքին, իրենց կասկածամտութիւնը կը յայտնեն նման ապստամբութեան մը յաջողութեան հանդէպ<sup>74</sup>:

Ապահ, Մ.Շահէն եւ Ծին Թորոս, իրենց հետ ունենալով հաճընցի փորձառու յեղափոխական Միհրան Գայեան, կը վերադառնան Արեգին՝ Ադասիի մօտ (որ մինչ այդ նոյն նպատակով այցելած էր Մարաշ եւ Այնթապ) ու կը շարունակեն ապստամբութեան նախապատրաստութիւնը: Այս նպատակին համար, հայ ֆետայիները կ'աւարարեն Արուս գիւղի, Չլկանցի եւ Ազ Սուի քիւրտ ցեղախումբերը՝ որոնք տասնեակ տարիներ, իրենց է որ աւազակային յարձակումներ գործած էին հայ գիւղացիներուն վրայ: Աւարարութեան գործին մէջ աչքի կը գարնէ Մ.Շահէն: Ադասի կը վկայէ թէ Մ.Շահէն «անգուրթ եւ անողորմ կողոպտիչ մըն էր: Իր սիրած պաշտօնը իր փափաքին համաձայն իրեն յանձնած էինք», ապա, այլ տեղ մը, Ադասի կը շարունակէ.. «Ինքը բողոքական հայ մըն էր. քանի որ պատուելի չէր եղած ուսման պակասութեամբ, աւազակ եղած էր եւ սակայն ամէն երեկոյ Աւետարան կը սերտէր: Ցալլա-տին (Կարապետ Ղըր Փանոսեան) հակոտեան էր. բարքով-անգուրթ, կողոպտիչ, աչ ու ձախ գարնող, չի խնայող ու նախանձոտ. հասակով կարճ, չիլաղէմ, թուխ բայց քաջ»<sup>75</sup>:

Մ.Շահէն Չէյթունի ապստամբութեան նախօրէին կը հեռանայ Ադասիի խումբէն ու կը փորձէ անցնիլ Ալեքսանդրէթ: Կը ձերբակալուի: Ալեքսանդրէթի ընկերները կը փախցնեն զինք ու կը ղրկեն Չորք Մարգպան:

Չորք Մարգպան կը գտնուէր նաեւ Կիպրոսի խումբով Կիլիկիա եկած հնչակեան գոծիչ Կարդանը (Յարութիւն Խանկիւլեան): Երկու գործիչներուն միջեւ կը ստեղծուի սերտ համագործակցութիւն: Անոնք կը լրացնեն զիրար: Ականատեւը այդ մասին կը վկայէ.- «Առաւելելական քաջութեամբ օժտուած էր Միսո Շահէն: ... Ես իր մասին լսած էի Պոտրումի բերդին մէջ, իրեն բանտակից եղած յոյն յեղա-

փոխականներն: ...հօսելու համար քիչ կը բանար բերանը՝ զոր գոցած էին իր լայնանիստ պեխերը: Չէնքի մարդ էր Մխո Շահեն, մինչ Վարդան տրիբուն էր. համոզիչ լեզու ուներ ու կը քարոզեր հայրենասիրության, ազգասիրության, քաջության, միության ու համերաշխության՝ վտանգին հանդեպ: ...Գիտակից երիտասարդությանը հուսալուծած էր երկու յեղափոխականներուն շուրջ: Մխո Շահեն կը մարզեր զանոնք զինարձակութեան համար, իսկ Վարդան կը դաստիարակէր ազգային առողջ ոգիով»<sup>71</sup>:

Մ.Շահենի Չորք Մարզպան գտնուած միջոցին, համիտեան ջարդերու ալիքը կը հասնի շրջան: Մ.Շահեն եւ Վարդան, այդ երիտասարդներուն զուլիջ անցած, որոնք արդէն կը գործին որպէս Յնչակեան Կուսակցութեան շրջանի մասնաճիւղը, կը կազմակերպեն Չորք Մարզպանի ինքնապաշտպանութիւնը: Մ.Շահենի գլխաւորութեամբ կը կազմուի «ինքնապաշտպանութեան կոմիտե»: Կը կառուցուին պատնէշներ, տեղի կ'ունենան դիրքերու բաժանում եւ այլն: Առաջին հերթին, կազմակերպուած ձեռով Չորք Մարզպան կը բերուին Օճազըի եւ Եօզերլիի բնակչութիւնը: 1895 Նոյ. 12-ին խուճանը կը փորձէ մտնել Չորք Մարզպան, բայց կը հանդիպի լուրջ ընդդիմութեան: Կռիւները կը տւեն շուրջ մէկ շաբաթ, որուն ընթացքին Մ.Շահեն անձնապէս կը ղեկավարէ ճակատները: Նոյ. 20-ին նահանգապետին նախաձեռնութեամբ տեղի կ'ունենայ հաշտութիւն եւ Չորք Մարզպան կը փրկուի ստոյգ աւերումէ<sup>72</sup>:

Ինքնապաշտպանութենէն անկիցապէս ետք, Մ.Շահեն կը ձգէ Չորք Մարզպանը եւ խուճի մը զինակիցներով լեռ կը բարձրանայ: Կը փորձէ անցնիլ Ալեքսանդրէթի կողմերը, ուր կը ձերբակալուի եւ կը տարուի Յալէպի բանտը: Այդ միջոցին Յալէպի բանտը կը գտնուին նաեւ Սուեւիոյ շրջանի հնչակեան յեղափոխականները, որոնք Չեյթունի ապստամբութենէն ետք, երուրպակա երկիրներու մշամտութեան պատճառով յանձնուած էին իշխանութիւններուն եւ կը սպասէին իրենց խոստացուած ընդհանուր ներմանը: Մխո Շահեն կը միանայ անոնց եւ 1896 Դեկտեմբերին, օգտուելով ընդհանուր ներումէն ազատ կ'արձակուի: Կ'անցնի Կիպրոս, ապա Եգիպտոս եւ վերջապէս Ամերիկա: Կը հաստատուի Փրովիտենս:

1903-ին, Ամերիկայի շրջանի Յնչակեան վարչութեան որոշումով, Մ.Շահեն, Կիլիկիոյ շրջանի իր հին զինակից՝ Սմբատ Ռստիկեանի հետ, ճամբայ կ'ելլէ դէպի Կիլիկիա՝ կազմակերպչական նպատակներով:

Այդ ճամբուն վրայ, Եգիպտոսի մէջ, Վերակազմեալ հատուածի պարագլուխներէն Վահէ (Ալեքսան Արուտեան) կը համոզէ Մ.Շահենը, որ փոխէ իր ճամբան եւ Կովկաս մեկնի, հնչակեան շարքին մօտ վերակազմեալ հոսանքին ի նպաստ քարոզչութիւն կատարելու համար: «Վերջապէս, Արզուեանը յաջողեցաւ խաբել Մխոն, որ Կովկաս երթայ»<sup>73</sup>:

Մ.Շահեն, Կովկասի տարբեր քաղաքներու մէջ՝ Օստես, Նովո-

րոսիսկ<sup>74</sup>, Եայլա, Փօթի<sup>75</sup> եւայլն, հնչակեան մասնաճիւղերուն մօտ ի նպաստ վերակազմեալ հերձուածին կը սկսի քարոզչութիւն կատարել: Անոր հրապարակային ելոյթները կ'ըլլան անվայել ոճով եւ հայիոյախառն: Ան, տեղի ու անտեղի կը կրկնէ վերակազմեալ ղեկավարներէն լսած քանի մը լոզունգներ ու բոլորովին անտեղի կերպով ռուսահայի-թրքահայի հարցեր կ'արձարծէ: Ամենէն ցաւալին սակայն կը պատահի Փօթիի մասնաճիւղի ժողովին: Մ.Շահեն ելոյթ ունենալով կը ստեղծէ ջղազրգիւ մթնոլորտ մը: Ժողովականները կ'ընդդիմանան ու կը հակաճառեն: Յարցը կը հասնի ձեռնամարտի: Մ.Շահեն դաշոյն կը բարձրացնէ: Սակայն, կը գտնուին անելի ճարպիկներ՝ նոյնպէս մշեցի: Մ.Շահեն կ'իյնայ դաշունահար:

Եղածէն դաս չբաղելով, երկու ամիս ետք, վերակազմեալները Կովկաս կը դրկեն, այս անգամ իրենց ծանօթ հռետորներէն Գարեգին Զիթեան՝ որ կը փորձէ նոյն լոզունգներով կովկասեան մասնաճիւղերը թեքել դէպի վերակազմեալ շարժումը: Զիթեան կ'ենթարկուի նոյն ճակատագրին:

Մ.Շահենի ոճիրը, քարոզչական նպատակներով լայնորէ կ'օգտագործուի վերակազմեալ հատուածին կողմէ: Իբրեւ «փոխվրժ», վերակազմեալները կը դիմեն ոճիրներու շարքի մը: 1903 Յուլիս 7-ին, Պոսթոնի մէջ ոճրափորձ կը կատարուի Ս.Սապահ Գիւլեանի դէմ: Յուլիս 19-ին, ոճրափորձ կը կատարուի Ա.Նազարբէկի դէմ՝ Չուիցեղիոյ մէջ: Յուլիս 26-ին՝ Սազունի (Սաղաթէլ Գեորգեան), Նոյ. 4-ին՝ Որսորդ (Տիգրան Իզմիրլեան) եւ Յամր (Արամ Գրիգորեան), կը սպաննուին Նոնտոնի մէջ (Կուսակցութեան Դ. Յամագումարին Պաքուի եւ Պաթումի պատգամաւորները):

Մ.Շահենի ոճիրը, եւ անոր յաջորդող քանի մը ամիսներու ընթացքին տեղի ունեցած ոճրափորձերու շղթան, շատ մը հարցադրումներ կ'առաջարդէ:

Մխո Շահեն գաղափարական պատրաստուածութիւն կամ քարոզչական ծիրը չունէր: Ան, այրուբէնը տակաւին նոր սորված քաջ հայրուկ մըն էր: Այս մասին ճիշդ կը նկատէ ոճրաշարքի գոհերէն Սազունի երբ կը գրէ. - «Սակայն սպաննուողը կարող էր, գուցէ, դէռ օգտակար լինել, եթէ նրան չթելադրէին փրոփականտիստի դերի մէջը մտնելու, որ սակայն իր գործը չէր եւ դրա համար պահանջուած անհրաժեշտ յատկութիւնները չունէր, նա ուրիշ տեղի համար պետք կարող էր զալ եւ անելի պատուաւոր կերպով մեռնելու բախտը ունենալ»<sup>76</sup>:

Վերակազմեալները, իրենց մամուլով, կը ճգնին ապացուցել թէ Մ.Շահենի ոճիրը նախաձեռնարկուած էր<sup>77</sup>: Սակայն պարզ տրամաբանութեամբ ալ կարելի է եզրակացնել, որ Մ.Շահենի (նաեւ Գ. Զիթեանի) սպաննութիւնը նախաձեռնարկուած էր: Կանխատեսուած ոճիրի պարագային, ոճրագործը ինքն է որ կը հետապնդէ իր գոյը, կ'երթայ անոր ետեւէն ու աննկատ վայրի մը մէջ կը գործադրէ իր մտադրութիւնը: Մինչդէռ Մ.Շահեն ինքն է որ զնաց Կովկաս եւ

սպանությունը տեղի ունեցաւ բազմամարդ ժողովի մէջ, բուն վիճաբանութիւններէ ետք: (Վերակազմաւերու կողմէ կատարուած ոճիրներուն պարագային, ահաբեկիչները բոլորն ալ Ամերիկայէն եկած էին եւրոպա եւ ոճրափործերը տեղի ունեցած էին բազմութիւն հետո, անկէտ վայրերու մէջ):

Վերակազմաւերը հրապարակ կը նետեն այն սուտը, թէ Յնչակեան Կեդր. Վարչութիւնը պատրաստած է վերակազմաւեր 13 պարագլուխներու անուանացանկ մը, որոնց հանդէպ ահաբեկչութիւն պիտի գործադրուի: Սա, իրենց ոճիրները արդարացնել միտող պարզունակ յերիւրանք մըն էր: Դժբախտաբար, դէպքերէն աւելի քան երեսուն տարի ետք, Արշակ Չոպանեան, փորձելով արդարացնել վերակազմաւերու ոճիրները, իր մտաւորական խառնուածքին անվայել եւ հարցերու խորքը թափանցելու կարողութեան անյարիր կերպով կը գրէ.- «Լոնտոնեան փոխ-վրէժի արարքները գէթ սա հետեւանքն ունեցան որ տասերեք տարի սպանութեանց ծրագիրը մէկդի դրուեցաւ»<sup>[14]</sup>:

Յնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւնը այդպիսի ծրագիր չունէր: Եթէ ունենար, վերակազմաւերու ոճիրները այդ ծրագիրի գործադրութեան յաւելալ պատճառաբանութիւն եւ արդարացում կու տային միայն: Բայց այդպէս չէրաւ: Ալեկիս, Դ. Գամազումարէն տորընտիր Կեդր. Վարչութիւնը, իր Բ. Նիստին մէջ, երբ տակաւին Գամրի եւ Որսորդի թաղման արարողութիւնները չէին կատարուած, կ'որոշէ.- «Որոշուեցաւ մի շրջաբերական նամակով յայտնել ինչ. բոլոր մասնաճիւղերին Սազունու, Գամրի եւ Որսորդի սպանուելը, հրահանգել խաղաղ մնալ, լինել պաղարիւն եւ երբեք չհետեւել եղբայրասպանների օրինակին եւ յայտնել նոր Կեդր. Վարչ. ընտրութիւնը»<sup>[15]</sup>: Յաջորդող ժողովներուն եւս, ամեն անգամ որ մասնաճիւղի մը նամակ յղելու պէտքը կ'ըլլայ, Կեդր. Վարչութիւնը կը շեշտէ գրգռութեանց զոհ չերթալու եւ փոխվրէժի չլիմելու անհրաժեշտութիւնը:

1903 թուականի ընթացքին կատարուած այս ոճրաշարքը ունէր իր նախնախնայը: Այդ ոճրաշարքը կը սկսի 1903 Փետր. 22-ին, երբ Վերակազմաւերու ներքին պառակտման հետեւանքով (Արզուեանական-Արփիարական), Վենետիկի մէջ ոճրափործ կը կատարուի Արփիար Արփիարեանի դէմ: Ա.Արփիարեան լաւ գիտէր իր դէմ եղած ոճրափործին հեղինակը. ան, իր բարեկամ Երուանդ Օստանին յղած նամակին մէջ կը գրէ.- «Ինչպէս որ արդէն գրած էի, Վահէին (Ա.Արզուեան. - Ե.Ճ.) գործն է այս»<sup>[16]</sup>: Ա.Արզուեանի գործն էր նաեւ մեծահարուստ հայեր Ունճեանի եւ Թաւաշաճեանի սպանությունները, երբ վերջիններս կը մերժեն Վերակազմաւեր Յնչակեան Կուսակցութեան դրամ տալ, չես գիտեր անոնց ո՞ր յեղափոխական գործին համար...: «Արզուեան գիտէր նաեւ թէ Միտո Շահէնի եւ Գ. Չիթճեանի նման սիրուած երկու կեանքերու գնով պիտի յաջողէր հայ ժողովուրդի թուն զայրոյթը գրգռել Գին Յնչակեան Կեդրոնին

դէմ եւ արդարացնել իր ծրագրած հետագայ վրէժխնդրութիւնը, որ տեղի ունեցաւ Լոնտոնի մէջ»<sup>[17]</sup>:

Այսպիսին էր Ա.Արզուեանի գործելանոճը: Ու Միտո Շահէն կ'ըլլայ անոր միամիտ գոհերէն մէկը:

«Միտո Յնչն էր այն ուժերէն, լեռներու մէջ գէնքը ձեռքին ասպատակն էր. Յնչակեան Կուսակցութիւնը դրա գէնքը անոր ձեռքին մէջ եւ իւր կողունը շեշտեց, եւ նա իրեն հաւատարիմ գինուոր քալեց իւր ուղին, կերտեց իւր հոյակապ անցեալը: Յնչակեան դրօշին տակ էր, որ այն հայրենաստերը եղաւ յեղափոխական, ասպատակը՝ հերոս, պահելով վրէժի կայծը սրտին մէջ, բողոքի մրմունջը շրթներուն վրայ... Առին անոր ձեռքէն թշնամուն դէմ ուղղուելիք գէնքը, դրին սուր մը երկսայրի որ իր ընկերների դէմ կը գործածուէր, որ իւր անձի դէմ ուղղուած էր: Եթէ յաջողէր իւր ընկերը գլորել հոն՝ հերոս մ'էր իսկ եթէ ինք իյնար՝ նահատակ մը, երկու պարագային ալ պիտի շահագործէին իւր արիւնը կամ իր թափած արիւնը»<sup>[18]</sup>:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] Արսէն Տիրան, «Միտո Շահէն Սեֆերեան», Պոսթոն, 1903, էջ 11:

[2] Նոյն, էջ 27:

[3] Նոյն, էջ 29:

[4] Յ. Ճանկիլեան, «Յիշատակներ Դայակական ճգնաժամէն», Պէյրութ, էջ 414-415:

[5] Յակոբ Պօղոսեան, «Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը», Լոս Անճելոս, 1942, էջ 554-557:

[6] Արսէն, «Մոռցուած Գործեր», Պէյրութ, 1952, էջ 257 եւ 274:

[7] Մարտիրոս Տէր Ստեփանեան, «Զաքերու Դայրենիքը (Դրուագ մը Գերոսական Չորը-Մարգարանէն)», Պէյրութ, 1984, էջ 77-79:

[8] Տոքթ. Միլաս Գոճայեան, «Պատմութիւն Չորը-Մարգարանի (Տօթթ-Եղ) Գիւղաքաղաք մը Կիլիկիոյ մէջ», Լոս Անճելոս, 2006, էջ 55-56:

[9] «Դայրենիք», 1958 Մայիս, թիւ 5, Լ.2 տարի. Սմբատ Ռստիկեան, «Յնչակեան Միտո Շահէնի Գետ»:

[10] «Երիտասարդ Դայաստան», 1903 Յուլիս 4. Գեղարդ «Նամակ Փօթիից»:

[11] «Երիտասարդ Դայաստան», 1903 Մայիս 23. Յուլիս «Նամակ Եայլայից» եւ Մշեցի «Նամակ Փօթիից»:

[12] «Երիտասարդ Դայաստան», 1903 Մայիս 23. Սազունի «Դայաղաները»:

[13] Նոյն:

[14] «Անահիտ», 1935 թիւ 3-4. Ա.Չոպանեան, «Կիլիկեան Երազը եւ Ալեքսան Արզուեան»:

[15] Կեդր. Վարչութեան Նիստ 2-ի արձանագրութիւն. 9 Նոյ. 1903: Յնչ. արխիւ:

[16] Ստեփան Շահպագ, «Արփիար Արփիարեան», Պէյրութ, 1987, էջ 226:

[17] «Դայրենիք», 1958 Մայիս, թիւ 5, Լ.2 տարի:

[18] «Երիտասարդ Դայաստան», 1903 Յուլիս 6. Ա.Վարագեան, «Արիւնն Ալ Կը Շահագործեն»:


# ՄԱՐԳԻՍ ՔԱԼԱՇԵԱՆ (ԱՀՐԻՄԱՆ)

ՄԴ Յնչակեան Կուսակցութեան Անդրկովկասի շրջանի կազմակերպչական, գաղափարական, քարոզչական եւ մարտական գործունեութեան վրայ իր որոշմը ձգած գործիչներէն է Ահրիման:

Ահրիման ծնած է Ալեքսանդրապոլ (Գիւմրի), 1879-ին:

Կը յաճախէ ծննդավայրի Ս. Փրկիչ եկեղեցւոյ ծխական դպրոցը: Մայրը՝ Մարգարիտ, 1890-էն կ'անդամակցի Յնչակեան Կուսակցութեան եւ Ահրիման պատանի տարիքէն կը ծանօթանայ մօրը կողմէ տուն բերուած հնչակեան յեղափոխական գրականութեան: Դպրոցը կ'աւարտէ 1894-ին եւ որպէս յառաջադէմ աշակերտ, բարեսիրական ընկերութեան նպաստով կը ղրկուի Թիֆլիս, ուսումը շարունակելու Արիեստաւորաց Դպրոցին մէջ: Երկուք եւ կէս տարի ուսանելէ ետք կը հիւանդանայ եւ կը ստիպուի վերադառնալ ծնողքին մօտ: Այս միջոցին, Թիֆլիսի մէջ կը միանայ Յնչակեան Կուսակցութեան: 1897-ի վերջերը, ընտանիքին տնտեսական հոգը թեթեւցնելու համար աշխատանքի կը մեկնի Պաքու: Աշխատանք կը գտնէ Պաքուի արուարձաններէն Պիպի Յեյպէթի Մանթաշեանի նաւթահանքին մէջ:

Պաքուի մէջ Ահրիման ամբողջապէս կը ներգրաւուի կուսակցական-յեղափոխական գործունեութեան մէջ: Այդ շրջանին Պաքուի եւ



արուարձաններուն մէջ կը գործէին հնչակեան երեք մասնաճիւղեր. բուն Պաքու քաղաքին մէջ՝ «Բանուոր», Պալախանիի մէջ՝ «Մուրատ» եւ Պիպի Յեյպէթի մէջ՝ «Ընկեր»: Ահրիման կը դառնայ «Ընկեր» մասնաճիւղի ղեկավար դէմքը: Մասնաճիւղերուն կազմակերպչական կառոյցը բանուորական խումբերն էին: 1905 Ապրիլին կայացած «Ընկեր» մասնաճիւղի առաջին պատմագաւորմական ժողովին, որ կը գումարուի Ահրիմանի նախագահութեամբ, կը մասնակցին բանուորական 30 խումբերու պատգամաւորներ եւ կը քացակային 7 խումբերու պատգամաւորներ<sup>[1]</sup>: Այդ շրջանին Ահրիման հոգ կը տանի նաեւ իր ինքնազարգացման եւ կը հետեւի օտար լեզուներու դասընթացքներու:

Իր կազմակերպչական ծիրքին, յանդգնութեան եւ աշխոյժ քննադրութեան պատճառով, Ահրիման բանուորութեան մէջ ձեռք կը բերէ մեծ հեղինակութիւն: Այդ տարիներուն Յնչակեան Կուսակցութեան միացած եւ այդ պատճառով Ահրիմանին մօտէն ծանօթ Դաւիթ Անանուն (Տէր Դանիէլեան) կը վկայէ. «Ահրիմանը մեծ հռչակ ունէր Պաքուում եւ մեծ էլ հմայք բանուորների մէջ: ...Համեստ էր նրա մտաւոր պաշարը, բայց համեստ չէր եռանդն ու ձգտումը ոտքի հանելու թմրած հայ բանուորներին եւ յեղափոխելու նրանց միտքը: Նա միշտ մտաւոր պաշար էր որոնում իր համար եւ այդ պաշարից լիարժուք բաժին հանում հայ բանուորներին: Չէր կանգնում մի նուաճած ճշմարտութեան վրայ: Թռիչքներ էր գործում եւ պէտք է ասել, որ իր անձնական հմայքի եւ ծայրայեղ նուիրուածութեան շնորհիւ այդ թռիչքներին մասնակից էր դարձնում նաեւ բազմաթիւ բանուորների՝ սկզբում բացառապէս հայերի, յետագայում նաեւ վրացիների ու ռուսների»<sup>[2]</sup>: Տարբեր չէ նաեւ Ռուբէն Խանազատի կարծիքը, որ Ահրիմանի մասին կը գրէ «Պաքուի հնչակեան բանուորների շրջանում, շնորհիւ իր յանդուգն գործունեութեան ու եռանդի, մեծ համարում եւ ազդեցութիւն էր վայելում»<sup>[3]</sup>:

1903 Օգոստոսին, Ահրիման կը մեկնի Լոնտոն, մասնակցելու համար կուսակցութեան Դ. համագումարին: Իր քացակայութեան, ցարական իշխանութիւններուն կողմէ տեղի կ'ունենայ հայ եկեղեցապատկան կալուածներու բռնագրաման փորձը: Ի շարս հայաքնակ այլ քաղաքներու, կ'ըմբոստանայ նաեւ Պաքու: Ահրիմանի եւ իր ընկերներուն միջեւ փոխանակուած նամակները ցոյց կու տան որ ան ինչքան մանրամասն կը հետեւէր անցուղարձերուն: Այս կապակցութեամբ, Պաքուի հնչակեան գործիչներէն Կարօ-ի (Յովսէփ Սարաֆեան) գրած նամակը Ահրիմանին կու տանք ստորեւ՝ նախ այն պատճառով որ նամակը ծածկանայ եւ եւ այդ կարելի է կարողալ միայն հայելիի միջոցով ու նաեւ այդ ժամանակաշրջանին վրայ յաւելելալ լոյս սփռելու համար (նամակին մէջ տեղ գտած լեզուական սխալները մեր կողմէ սրբագրուած են). «Սիրելի Ահրիման: Ամսոյս

2-ին լուր տարածուեց, որ Պաքուայ եկեղեցու կալուածները կամ լսարանը պետք է յանձնուի կառավարութեանը: Առաւօտ ժամը 9-ից սկսեցին մարդիկը ժողուել եւ պատրաստ դրութեան մէջ սպասում էին. ժամադիր էր ժամը 12-ը. բայց ոչ մի դիմում չեղաւ կառավարութեան կողմից. ամբոխը լիքն էր փողոցները, եկեղեցու բակը մինչեւ ժամը 7 երեկոյեան: Յանկարծ ենիչերիները (բնագրին մէջ «ինչինիրը»՝ որ նկատի ունի կողակական պահակագունդը. - Ե.Ծ.) յարձակուեցին ամբոխի վրայ: Այդ ժամանակ սկսուեց ցոյցը. կարելի է ասել որ մինչեւ հարիւր ատրճանակ դուրս եկաւ: Ատրճանակները արձակելով ենիչերիներին փախցրին եւ ոստիկաններին միասին: 2 ժամ ուղիղ ոչ ոք չէր կարողանում եկեղեցին մօտենալ: Ժամը 9-ին եկեղեցին շրջապատեցին զինուորներով եւ սկսեցին կրակել դէպի եկեղեցին, մարդիկ հեռացան եկեղեցուց: Ժամը 12-ից մինչեւ 4-ը առաւօտեան զոհուեցին 4 մարդ, վիրաւորուեցին վեցը: Ձերբակալուած է 30 մարդ: Եկեղեցին պաշարուած դրութեան մէջ է. պարապետում (հրսապարակին վրայ. - Ե.Ծ.) եւ եկեղեցու սրահու մեծ քանակութեամբ զօրք կայ: Բռնուած մարդիկը չէզոքներ են, մերոնցից մէկը վիրաւորուած է. երեքը բռնուած: Պատրաստում ենք փոքր ցոյցեր անել: Այս դէպքերը (իմա՝ նմանօրինակ դէպքեր. - Ե.Ծ.) եղել են Գանձակում, Տիփլիսում, Երեւանում, Ալեքսանդրապոլում, Նուխիում, Շուշում եւ վերջապէս գիւղերում: Վերջաւորութիւն կը գրեմ: Կարօ: Յ.Գ. Եկեղեցու բակը զինուորով լցրել են. նմանապէս պարապետը: Մենք էլ լուրջ կերպով պատրաստում ենք: Մի ուրախալի երետոյթ, թուրքերն էլ են պատրաստում. ասում են, որ ամսոյս 15-ին ցոյց պիտի անեն. գլխաւորապէս նրանք այս ցոյցում մեզ օգնում էին: Նորութիւն լինելիս կը գրեմ: Ընկերական համբոյրս՝ Կարօ: Շուտով սպասում ենք մեծ ցոյցի բանուորների կողմից»<sup>64</sup>:

1903-ի վերջաւորութեան Արիման կը վերադառնայ Պաքու եւ անմիջապէս կ'անցնի կուսակցական-յեղափոխական բուն գործունեութեան: Դեկտեմբեր 6-ին կը գլխաւորէ Պաքուի մասնաճիւղերուն միջ-վարչական ժողովը<sup>65</sup>: Յաջորդող ամիսներուն, բանուորական խմբակներուն անդամակցող մեծ թիւով բանուորներ կը մտնեն Յնչակեան Կուսակցութեան շարքերը: Երդման արարողութիւնները կ'ընդունի «փրօփականտիստ» Արիման: Որպէս պատմական հետաքրքրութիւն, կու տանք այդ շրջանին օգտագործուած կուսակցական երդումագիրը՝ հաւանաբար պատրաստուած Արիմանի կողմէ: «Երդում ենք Ս. Երրորդութեան անունով, Աւարայրի դաշտում ընկած 1036 վկաների արիւնով, երդում ենք Յայաստանում եւ Կովկասում ժողովուրդի ազատութեան համար նահատակուած հնչակեան հերոսների, 300.000 անմեղ զոհերի արիւնով, երդում ենք բոլոր երկրներում յանուն սոցիալիզմի իրականացման զոհուած անմահ հոգիների սրբազան արիւնով, երդում ենք այդ Ս.

Գաղափարով որ այսօրուանից մտնելով Յնչակեան Սոցիալիստ Յեղափոխական Կուսակցութեան շարքերի մէջ, մինչեւ մեր արեան վերջին կաթիլը, մինչեւ մեր վերջին շունչը հաւատարիմ կը մնանք այդ կուսակցութեանը սկզբունքներին արիւն թափելով, կռուելով ոռու բռնակալ կառավարութեան միապետական կարգերի դէմ՝ այդ կուսակցութեան դաւանած սոցիալիզմի իրականացման համար: Իսկ եթէ դաւանենք դրանց, թող հնչակեան զինուորի սուրը մեզ կտոր-կտոր անէ: Ի նշան մեր ուխտադրութեան եւ հաւատարմութեան դնում ենք մեր ձեռքը հնչակեան ծրագրի, ատրճանակի, դաշոյնի, խաչի եւ Ս. Անտարանի վրայ եւ ստորագրում մեր իսկական ձեռքով»<sup>66</sup>:

Ի տես Պիպի Յեյալթի մէջ Արիմանի շնորհիւ կազմակերպչական գործի յաջող ընթացքին, Պաքուի «Սուրատ» մասնաճիւղի վարչութիւնը նամակով կը դիմէ անոր, որպէսզի ան քարոզչական-կազմակերպչական նոյն աշխատանքը տակի նսեւ Սեւ Քաղաքի «Լոռի», «Փայլակ», «Կայծակ», «Մագնիս», «Վան» եւ «Ոստան» խումբերուն հետ<sup>67</sup>:

1904-ի աւարտին, Արիման կը մեկնի Ռումանիոյ Ռուսնոք քաղաքը, հայերէն լեզուով ընկերակցական գրքոյկներ հրատարակելու համար, որոնց կարիքը մեծ էր հայ բանուորներուն մօտ: Ան, կարծ ժամանակի մը մէջ, որպէս «Յնչ. Յեղափ. Սոցիալ-Դեմոկրատ. Կ.-ութիւն» մատենաշար եւ «Յրատ. «Ընկեր» մասնաճիւղի», իր թարգմանութեամբ կը հրատարակէ վեց գրքոյկներ. - Ս. Կորգիի «Կեանքի Դիմաց» եւ «Գարնանային Մեղեղիներ», - Կ. Կարոցկիի «Չուարճութեան Տօներ եւ Տօներ Կռուի», «Միլիթարիզմը եւ Բանուոր Դասակարգը», Պլեխանովի «Կապիտալ եւ Աշխատանք», «Ազգերի Մայիսեան Տօնը», ինչպէս նաեւ Ա. Նազարբեկեանի (Լեռնեց) «Դարբները» աշխատութիւնները: Մեր տրամադրութեան տակ եղած «Միլիթարիզմը եւ Բանուոր Դասակարգը» գրքոյկին ընթերցումը կը հաստատէ թէ, Արիման գաղափարախօսական բնոյթի այդ աշխատութիւնները կրցած է թարգմանել բանուորութեան համար մատչելի, միաժամանակ մշակուած հայերէն լեզուով մը:

Յնչակեան կերպունը կը հրահանգէ Արիմանին ձգել հրատարակչական գործը եւ «զնալ այնտեղ, ուր ձեր ներկայութիւնը շատ անելի կարեւոր են համարում ընկերները»<sup>68</sup>: Արիման կը վերադառնայ Պաքու: Եւ իրօք, 1904 Դեկտեմբերին Պաքուի բանուորութեան ընդհանուր գործադուլը կայծ կ'ըլլայ, որպէսզի պայթի Ռուսաստանի Ա. Յեղափոխութիւնը: Պաքուի բանուորութիւնը գինեւու եւ անոց յեղափոխական ելոյթները ղեկավարելու համար, Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատ Բանուորական Կուսակցութեան (ՌՍԴԲԿ) եւ ՍԴԳԿ-ի միջեւ կը կազմուի խառն մարմին մը: Արիման աշխույժ ձեւով կը մասնակցի յեղափոխական ելոյթներուն: ՍԴԳԿ-

ՈՍԴԲԿ այս գործակցությունը վերջիններուս համար կը ստանայ յատուկ նշանակություն: Հարցը այն էր, որ մինչ այդ, ՈՍԴԲԿ-ն կը մերժեր ազգային կազմով սոցիալիստական կուսակցություններու գոյությունը, այդ գտնելով անյարիր բանուորական շարժման միջազգայնական եուրթան: ՈՍԴԲԿ-ն կը դժկամակեր գործակցիկ ազգային կազմով սոցիալիստական կուսակցություններուն հետ, զանոնք նկատելով բանուորական շարժման պառակտիչներ: Մինդեռ, ՈՍԴԲԿ-ՍԴԳԿ գործակցությունը կու գար ապացուցելու որ այդպիսի գործակցությունները արդիւնաւետ են: ՈՍԴԲԿ-ի համար հարցը կը ստանայ տեսական բնոյթ: Խօսելով բանուորությունը զինելու անհրաժեշտութեան պարագային ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցություններու հետ գործակցութեան հնարաւորութեան մասին, Ստալին, վրացատառ «Պրոլետարիատիս Բրժն-լա» (Բանուորի Կռիւն) թերթի իր յօդուածին մէջ (1905, Յուլիս 15), կը բերէ Հնչակեան Կուսակցութեան օրինակը գրելով. «Այդպիսի վտորձ արդէն եղել է Պաքուս, որտեղ փետրուարեան կոտորածից յետոյ մեր կոմիտեն, «Պալախան-Պիպի Հէյպեթեան» խումբը եւ հնչակեանների կոմիտեն իրենց միջից զինման կազմակերպական յանձնաժողով առանձնացրին: Անպայման անհրաժեշտ է, որպէսզի այս դժուարին ու պատասխանատու գործը ընդհանուր ջանքերով կազմակերպուի, եւ մենք կարծում ենք, որ ֆրակցիոնական հաշիւներն ամենից անելի քիչ պէտք է խանգարեն բոլոր սոցիալ-դեմոկրատական ուժերի միաւորման այս հողի վրայ»<sup>91</sup>: Ալոյշա Ջափարիժէ եւս, ՈՍԴԲԿ 3-րդ համագումարին իր ունեցած ելոյթին մէջ, Հնչակեան Կուսակցութեան հետ զինական այդ գործակցութեան կու տայ դրական գնահատական:

Ռուսական Ա. Յեղափոխութեան միջոցին, դարձեալ Պաքուէն սկիզբ կ'առնեն հայ-թաթարական բախումները, որոնք կը տարածուին Անդրկովկասի ամբողջ շրջանին վրայ: Հնչակեան Կուսակցությունը այդ բախումները կը նկատէ ցարիզմին սադրանքը՝ ժողովուրդը յեղափոխական յորձանքէն հեռու պահելու նպատակով<sup>92</sup>, ուստի, կոչ կ'ընէ չմասնակցիկ ազգամիջեան այդ բախումներուն<sup>93</sup>: Սակայն, կարճ ժամանակ անց, ի տես ազերի խուժանին կատարած խժոժություններուն, Հնչակեան Կուսակցությունը կը կազմէ զինեալ ջոկատներ ու կը նուիրուի հայ բնակչութեան պաշտպանութեան: Արիման, Պաքուի մէջ թէ այլուր կը գլխաւորէ հնչակեան խումբերը: Այդ կռիւներուն ընթացքին, 1905 Փետրուարին, ան ծանրորէն կը վիրաւորուի: Մեկուկէս ամիս կը մնայ հիւանդանոց եւ այդքան ժամանակ ալ բուժումը կը շարունակէ տան մէջ:

1905 Սեպտեմբերին, Կուսակցութեան 5-րդ Համագումարին (Փարիզ), ԱՅրիման եւ Արծի (Տիգրան Յարութիւնեան) կը ներկայացնեն Պաքուի մասնաճիւղերը (Արիման՝ նաեւ Սիմֆերոպոլի

մասնաճիւղը): Համագումարը կը քննարկէ Ա.Նազարբեկի կողմէ ներկայացուած գործունեութեան նոր ծրագիրը, որուն համաձայն, կուսակցությունը պէտք է բաժնուեր ամբողջապէս ինքնուրոյն երկու մասերու. Կովկասի շրջան՝ որ միայն պէտք է տաներ սոցիալիստական պայքար եւ թրքահայաստանի՝ որ պէտք է տաներ ազգ-ազատագրական պայքար: Նախագիծին շուրջ յառաջ կու գան թեր ու դէմ կարծիքներ եւ բուն վիճարկութիւններ: Արիման կըրտ ձեռով կը պաշտպանէ նոր ծրագիրը: Ռ.Խանազատի վկայութեամբ. «Ժողովի չափազանց ձգձգուելու ու խիստ ջղայացնող բնաւորութիւն ստանալու հետեանքով, պատգամաւոր Ս.Արիմանը, որ Պաքուի բանուորներից շատ երես առած ու շփացած երիտասարդ էր, չէմ յիշում ինչ առիթով նկատողութիւն ստանալով օրուան նիստի նախագահից, սաստիկ վիրաւորուեց ու հեռացաւ, հրաժարուելով ոչ միայն այնուհետեւ նիստերին մասնակցելուց, այլեւ իր պատգամաւորական կոչումից»<sup>94</sup>: Համագումարը նուազագոյն ծայրով կ'ընդունի կուսակցությունը մէկ եւ միասնական պահելու տեսակետը:

Պաքու վերադառնալէն ետք, Արիման դուրս կու գայ հնչակեան շարքերէն: Ան, իր հրաժարական նամակը կ'եզրափակէ այսպէս. «Միայն ունենալ տոկոսութիւն ու կամք, աշխատելու ընդունակութիւն ու սեր, եռանդ եւ անձնագոհութիւն - թէկուզ մէն միակ: Այդպէս էի ե՛ր իմ առաջին յեղափոխական աշխատանքիս օրերին: Այդպէս մի՞նակ հեռանում եմ այժմ»<sup>95</sup>:

Շատ չ'անցնիր եւ Արիմանի եզրափակիչ խօսքի տողատակին թաքնուած միտք բանին անելի յստակ կը դառնայ:

Ռուսական Ա. Յեղափոխությունը կը ճնշուի ցարական իշխանութեան կողմէ: Կը սկսի «ստոլիպինեան ռիակցիա»ի ժամանակաշրջանը: Հրապարակ կու գան ռուս ծայրայեղ ազգայնական, միապետական խմբաւորումներ, որոնք ոստիկանութեան կողքին հաշիւեյարդար կը տեսնեն յեղափոխական ուժերուն հանդէպ: «Սեւ Հարիւրակային» կոչուող այս ուժերուն որպէս հակազդեցութիւն, յատկապէս Պաքուի մէջ ծնունդ կ'առնեն ծայրայեղ ձախ-անարխիստական խմբաւորումներ, որոնք ընդհանուր անունով կը կոչուին «Կարմիր Հարիւրակայիններ»: Արիման (որ այդ շրջանին կ'օգտագործէ նաեւ Սեւունի ծածկանունը) կը դառնայ «Կարմիր Հարիւրակային» խմբաւորման պարագլուխը: Վերջիններս ահաբեկչական գործողութիւններ կը կատարեն պետական պաշտօնեաներու եւ հարուստներու հանդէպ: Անոնք նաեւ սպանագիրներով իրկազին կը պահանջեն հարուստներէն: Շարժումը դուրս կու գայ իր գաղափարական հունէն: «Ինքը (Արիմանը.-Ե.Ը.) ապրում էր կարօտութեան մէջ եւ իրար ետեւից թռուցիկներ ու գրքոյկներ հրատարակում անարխիզմին նուիրուած: Բայց նրա համախոհները դարձել

էին արհեստաւոր պորտաքոյձներ, որոնք նիւթական անսպառ միջոցների համար նորանոր գոհեր էին պահանջում»<sup>164</sup>։ Կարգ մը հարուստներու դէմ կատարուած անտեղի եւ չարդարացուող անարեկումները, «Կարմիր Զարիւրակային»ներուն դէմ կը հանէ ամբողջ քաղքենի դասակարգը, որոնք հովանաւորութեամբ ԶՅ Դաշնակցութիւնը անոնց դէմ պայքարի կը հանէ մարտական խումբ մը՝ «Կանաչ Զարիւրակայիններ»ը։ Այս խումբը կը ղեկավարէ հին ֆետայի, հասնաորի արշաւանքին մասնակից Թադէոս Ամիրեանը։

«Կանաչ Զարիւրակայիններ»ուն կողմէ կը սպաննուի նաեւ Արիւման։ Այս մասին «Մշակ» կը գրէ․- «Յոկտեմբեր 5-ին Պաքում, ցերեկուայ ժամը 12:00-ին, Կոլուպաքիսկի փողոցի վրայ, հայոց եկեղեցական տան մօտ ատրճանակի գնդակի մի հարուածով անյայտ մի անձ վիրաւորել է Ս. Զալաշեանցին քներակից որ Միքայէլեան հիւանդանոց տարուելուն պէս մեռել է։ Այս առիթով «Պաքու» լրագիրը հարորդում է, որ Զայ Յեղափոխական Դաշնակցութեան Պաքուի քաղաքային կոմիտէն մի թուրքիկ է բաց թողել, որով հերքում է քաղաքի մէջ տարածուած փրովիքացիական լուրերը, որ իբր թէ հանգուցեալ Զալաշեանցին սպաննել է Դաշնակցութեան անդամներից որեւէ մէկը»<sup>165</sup>։ ԶՅԴ-ի Թիֆլիսի օրկան «Երկիր»ը, տալէ ետք լուրը կ'աւելցնէ․ «Զայ Յեղափոխական Դաշնակցութիւնն ի նկատի ունենալով, որ իբր թէ այդ սպանութիւնը ԶՅԴ տերօրն է, հրատարակել է այսօր ի գիտութեան Պաքուայ հասարակութեան հետեւեալ ազգը․ «Ի նկատի ունենալով, որ հասարակութեան գանազան խաւերում խօսուում է, որ իբր թէ հանգուցեալ Զալաշեանի սպանութիւնը կատարուել է ԶՅԴ գիտութեամբ, մենք մեր պարտականութիւնն ենք համարում սորանով հերքել այդ փրովկատորական լուրը, յայտնելով ի գիտութիւն քաղաքացիների, որ մենք ոչ միայն մասնակցութիւն չունենք, այլ յայտնում ենք մեր գայրոյթը սպանողին խորին ցաւակցութիւն նրա սպանման առթիւ, որ մի յեղափոխական եւս պակսեց Ռուսաստանի յեղափոխականների շարքերից։ 2ոհ գնաց Զալաշեանը, եւ այդ բոլորը նրա համար, որ նա որոշ ուսմունքի գաղափարակից էր։ O tempora o mores»<sup>166</sup>։ ԶՅԴ պաշտօնաթերթը «Դրօշակ»ը, աւելի թափանցիկ կ'անդրադառնալ հարցին գրելով․ «Այդ խմբակները («Կարմիր Զարիւրակային»․- Ե. Ծ.) այնքան ծայրայեղութեան հասցրին, որ դաշնակցութեան տեղական կոմունէ ստիպուած եղաւ դրանց հետեւիլ ու խալածել եւ մի քանիսին արդէն զինաթափ է արել ու ցրուել»<sup>167</sup>։ Այս բոլորով հանդերձ, հանրային կարծիքին մօտ կը մնայ այն հաստատ համոզումը, որ ոճիրին հեղինակը «Կանաչ Զարիւրակային»ն էր։ Սակայն տարիներ անց, Ս. Լօրէլի (Սուրէն Երզնկեան) կը գտնէ թէ Արիւմանին «ինչպէս ենք մերկադրուած եղան ենթարկել տեռորի»<sup>168</sup>։ Այս վարկածը մենք ամբողջապէս անհնար կը գտնենք։

Արիւմանի սպանութիւնը, ձխի-անարխիստական խումբերու գործունէութեան վերջ չի դնէր։ Ընդհակառակը. գաղափարական Արիւմանի բացակայութեամբ, անոնք ամբողջապէս կը վերածուին ապաքաղաքական աւազակային խմբակներու։ «Անիշխանականների պարագլուխ Արիւմանի ողբերգական սպանութիւնից յետոյ՝ քաղաքում մէկը միւսից յետոյ սկսեցին երեւան գալ սրիկայական, աւարառու, կողոպտիչ խմբեր՝ ծածկուած անիշխանական անուան տակ։ Կառավարութիւնը ամենափոքր կասկածուողին անգամ սկսեց ձերբակալել։ Ընդհանուր կարծիքն է, որ այս վերջին բոլոր ձերբակալութիւնները հետեւանք են մութ ուժերի մատնութիւնների։ Ինչ էլ որ լինի, անիշխանականները լորպէս գաղափարական շարժում գրեթէ արմատախիլ եղան»․- կը գրէ «Յնչակ»<sup>169</sup>։ Սօտաւորապէս նոյն կարծիքը կու տայ նաեւ այդ շրջանին Պաքուի հնչակեան գործիչ Զայլ Բժշկեան․ «Քաղաքում անիշխանականների պարագլուխ Ս. Զալաշեանի (Արիւման) ողբերգական մահից յետոյ, այդ խումբը, աւելի շուտ խմբակը, մնաց բոլորովին անտէր, չունենալով քիչ թէ շատ գիտակից ղեկավարներ, փորձուած առաջնորդներ, սկսեց բաժնուել տասնեակների, իւրաքանչիւրը գանազան կեղծ մականուններով կնքելով իրան, օր. «Չորնի Կարօն», «Կարմիր Զարիւրակ», «Կրուպպա Տեռոր», եւայլն։ Ահա այդ օրից հասարակութեան անդորրութիւնը սկսեց խանգարուել. օր չի անցնում որ տասնեակներով մարդիկ չկողոպտուեն, չթալանուեն, չգոհուեն»<sup>170</sup>։ Միւս կողմէ, «Կանաչ Զարիւրակայիններ»ն ալ, իրենց հերթին կը վերածուին անհակակշռելի, սանձարձակ խմբաւորման մը ու անարեկութիւն-հակահաբեկչութիւն պայքարը կ'երկարի մինչեւ 1907։

Ճիշդ է, որ Արիւման իր յեղափոխական եռանդին պատճառով կը սայթաքի ու իր կեանքի վերջին տարին կը գործէ Զնչակեան Կուսակցութենէն դուրս եւ կուսակցութեան կողմէ դատապարտուած ձեւերով, բայց այն իրողութիւնը որ ան իր գիտակցական ամբողջ կեանքի ընթացքին գաղափարական նուիրումով կը ծառայէ Կուսակցութեան կազմակերպչական-յեղափոխական աշխատանքներուն՝ զինք կը դարձնէ ՍԴ Զնչակեան Կուսակցութեան պատմութեան յիշարժան դէմքերէն մին։

Պատմական հետաքրքրութեան համար ըսենք թէ «Կանաչ Զարիւրակայիններ»ու պարագլուխը՝ Թադէոս Ամիրեան, կը շարունակէ իր կուսակցական գործունէութիւնը մինչեւ 1918 ու կը մասնակցի Պաքուի ինքնապաշտպանութեան կռիւներուն։ Երբ Ստեփան Շահումեան եւ իր ընկերները «ցենդրոկլասսիի» կառավարութեան կողմէ կը բանտարկուին, Թ. Ամիրեան կը նշանակուի անոնց բանտապահը։ Պաքուի անկումի օրերուն, ձերբակալուած պոլշեիկները ազատ կ'արձակուին ու անոնց կը տրամադրուի նաւ մը՝ քաղաքէն հեռանալու համար։ Պոլշեիկներուն հետ նաւ կը բարձրանայ

Նաև Թ.Ամիրեան: Եւ երբ անգլիական մարտնասները կը կեցնեն պոշտիկներուն նաւը ու ապա կը գնդակահարեն Ս.Շահումեանն ու իր ընկերները, անոնց մէջ կը գնդակահարուի Նաեւ Թ.Ամիրեան ու այդ ձեւով պատմութեան մէջ կը յիշատակուի որպէս «Պաքուի 26 Կոմիսարներէն» մին:


Պատմութեան ծիծաղելի պատահականութիւններէն...:

## ԾՂՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Արծանագրութիւն Պիպի Բեյաթի Պատգմ. Ժողովին», 1905 Ապրիլ 23: ԶԱԱ:
- [2] «Նորք», 1922, թիւ 2. Դ. Անանուն, «Յնչակեանների Գարունը Ռուսաստանի Յեղափոխութեան Ու Սոցիալիզմին»:
- [3] «Հայրենիք», 1929 Ապրիլ, թիւ 6 (78). Ռ. Խանազատ, «Հայ Յեղափոխականի Յուշերից»:
- [4] ԳՅԶԿԿՊ, ֆ. 4045, ց.1, գ.38, թ. 26-27: «Կարօ-ի Նամակը Ահրիմանին», Պաքու, 1903, Սեպտեմբեր 4:
- [5] «Արծանագրութիւն Պաքուի Ռայոնի Զոյր Մասնաճիւղերից Բաղկացած Խառն Ժողովին», 1903, Դեկտեմբեր 6: ԶԱԱ:
- [6] «Երդմնագիր Գիւղական Ռայոնի» թիւ 2, 4, 5, եւ 6, 1904 Փետրուար 22, 25 եւ 26: ԶԱԱ:
- [7] «Յնչակեան Հայ Սոց. Յեղափոխական Կուսակցութեան Մուրատ Մասնաճիւղի Նամակը Ահրիմանին», Պաքու, 1904 Օգոստոս 17: ԶԱԱ:
- [8] «Կեդր. Վարչութեան Նամակը Ահրիմանին», Փարիզ, 1904 Դեկտեմբեր 7: ԶԱԱ:
- [9] Ստալին, «Ընդհանուր Երկեր», Ա. հտ., Երեւան, 1946, էջ 152:
- [10] «Յնչակ», 1906 Յունիս. Թղթակից, «Նամակ Թիֆլիսից»:
- [11] « Կոչ Պաքուայ Հայ Եւ Թուրք Հասարակութեան», Յնչակեան Կուսակցութեան «Ընկեր», «Մուրատ» եւ «Բանուոր» մասնաճիւղեր, Պաքու, 1905 Փետրուար 12: ԶԱԱ:
- [12] «Հայրենիք», 1929 Մայիս, թիւ 7 (79). Ռ. Խանազատ, «Հայ Յեղափոխականի Յուշերից»:
- [13] «Ահրիմանի Նամակը (Յնչկ. Կուս.) Նախկին Պաքուի Ռայոնի Կոմիտէին», Պաքու, 1905, Դեկտեմբեր 17: ԶԱԱ:
- [14] «Նորք», 1922, թիւ 2:
- [15] «Մշակ», 1906, Դոկտեմբեր 11:
- [16] «Երկիր», 1906 Դոկտ. 10. Յ.Լազարեան, «Անարխիստի Սպանումը»:
- [17] «Դրօշակ», 1906, Դոկտեմբեր. «Ընթացիկ Դեպքերը Պաքուում»:
- [18] «Երիտասարդ Հայաստան» 1954, Փետր. 19: Ս.Լօրելի, «Ո՛վ է Ս.Լօրելի եւ Ս.Վրացեան Ու Ընկերութիւնը»:
- [19] «Յնչակ», 1906 Դեկտեմբեր. Պաքուեցի, «Նամակ Պաքուից»:
- [20] «Երիտասարդ Հայաստան», 1907, Ապրիլ 3. ԲԺՂեան, «Նամակ Պաքուէն»:

# ՊԵՏՐՈՍ ՄԵԼԻՔ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ (ՊԵՏՐՈՍ ԽԱՆ)

Երբ առաջին անգամ կարդացի Զուրո Չաքուրիի "The Armenians of Iran" գիրքին «ձօնը», ուր կ'ըսուի թէ գիրքը նուիրուած է «ի յիշատակ Պետրոս Ս.Անդրէասեանին՝ պարսկահայ սահմանադրական, կախաղան հանուած ռուսերու կողմէ Թաւրիզի մէջ»<sup>[1]</sup>, ներհակ զգացում ունեցայ: Երբ մէկ կողմէ օտար մը, այս պարագային պարսկական ծագումով ամերիկացի պատմաբան փրոֆ. Զ.Չաքուրի այսքան բարձր կը գնահատէ եւ յիշարժան կը գտնէ հայ յեղափոխականի մը մասնակցութիւնն ու նահատակութիւնը Պարսկաստանի սահմանադրական յեղափոխութեան, միւս կողմէ, այսօր քանի՞ հայ տեղեակ է Պետրոս Մելիք Անդրէասեանի մասին...: Աւելին. Չաքուրի, հանդէս բերելով պարկեշտ պատմաբանի մը յատկանիշները, կը գրէ թէ ինք առաջին պատմաբանը չէ որ կ'անդրադառնայ Պարսկաստանի սահմանադրական յեղափոխութեան մէջ հայերու մասնակցութեան եւ այդ ծիրէն ներս առաջինը չէ որ կը յիշատակէ Պետրոս Մելիք Անդրէասեանի անունը: Իրմէ շատ առաջ, 1918 Փետրուարին, պատմաբան Է[տտուարտ] Կ[րանվիլ] Պրաուն, Բրիտանական Ակադեմիային առջէն տուած դասախօսութեան մէջ, վեր առնելով հայերու



մասնակցութիւնը այդ յեղափոխութեան, յիշատակած է Պետրոս Անդրեասեանի անունը<sup>[7]</sup>:

\*\*\*

Պետրոս Մելիք Անդրեասեան հաւանաբար ծնած է 1879-ին, Թաւրիզի մօտ Մուժամբար հայկական գիւղը: Նախնական կրթութիւնը կը ստանայ Թաւրիզի հայկական դպրոցին մէջ: Կ'աշխատի հայ առեւտրականի մը քով որպէս գործակատար: Կը փոխադրուի Ռաշտ, ուր կը սկսի Պետրոսի երկրորդ կեանքը՝ յեղափոխական կեանքը:

«Յառաջդիմական ձգտումներով եւ ոգելորդութեամբ կուսակցական (ինչակեան) Պետրոսը շատ էր հետաքրքրուում նաեւ հանրային աշխատանքներով: Խիստ ոգելորդած պարսկական սահմանադրական շարժումներով, Պետրոսը Ռաշտի ապստամբութեան հենց առաջին օրերին կազմում է իր փոքր խումբը եւ միա՛նում Եփրեմին: Նա ջերմ մասնակցութիւն է ունենում Եփրեմի վարած սկզբի կռիւներին: Մասնաորոպէս Թեհրանի գրաման յարթանակին, նա քաջութեան ու նուիրումութեան գեղեցիկ օրինակ է հանդիսանում».- կը գրէ դաշնակցական գործիչ Յ.Էմար (Յովսէփ Յովհաննեսեան)<sup>[8]</sup>:

Խորքին մէջ, ակնարկուած «փոքր խումբը» այդքան ալ փոքր չէր. եւ այդ Պետրոսի անձնական նախաձեռնութիւնը չէր:

Իրականութիւնը այն էր, որ 1906-ի կէտերէն, Պարսկաստանի մէջ խստօրէն կ'աճի Մոզաֆէրէտտին Շահի դէմ բողոքի ժողովրդային ալիքը: Շահը տեղի կու տայ եւ նոյն տարուան վերջաւորութեան կը բացուի Պարսկաստանի առաջին խորհրդարանը որն էլ կը վաւերացնէ երկրին սահմանադրութիւնը: Կը կազմուի քաղաքային խորհուրդներ (անջոման): Մոզաֆէրէտտին կը մահանայ 1907-ին: Գահին կը բազմի իր որդին՝ Մուհամմէտ Ալի Շահը: Վերջինս կը վերադառնայ բռնատիրութեան եւ 1908 Յունիսին կը սմբակոծի խորհրդարանի շէնքն ու կը լուծարէ զայն: Երկրի ամբողջ տարածքին յեղափոխական տրամադրութիւնները կը վերագարթին:

Պարսկաստանի սահմանադրական շարժման այս հանգրուանին, հայկական երկու յեղափոխական կուսակցութիւնները, որոնք մինչ այդ Պարսկաստանի մէջ ունեին իրենց մասնաճիւղերը եւ գինեալ խումբերը, իրարմէ անջատ, կ'որոշէն մասնակցիլ յեղափոխական շարժումներուն:

Այս ծիրէն ներս, 1908 Նոյեմբեր 27-ին, «դաշնաթուղթ» մը կը կնքուի ՍՂՅԿ-ի եւ պարսկական սահմանադրական շարժման ամենէն ազդեցիկ եւ զօրաւոր կուսակցութեան՝ Էջթիմաիունի Ամիունիի միջեւ: Դաշինքը կը կնքուի Թիֆլիսի մէջ, որովհետեւ այդ շրջանին Թիֆ-

լիսի մէջ կը գործէր ՍՂՅԿ Ռուսաստանի եւ Անդրկովկասի գործադիր յանձնախումբը, որ կը ղեկավարէր ու կը համադրէր տուեալ տարածաշրջանի մասնաճիւղերուն գործունեութիւնը: Գործնական նկատառումներով Պարսկաստան վարչականօրէն կապուած էր ղեկավար այս մարմինին: Միւս կողմէ, Էջթիմաիունի Ամիունիի ղեկավարութիւնն ալ կը գտնուէր Պաքուի մէջ: Ինը կէտեր պարփակող այդ համաձայնագրով, ստորագրող կողմերը կը պարտաւորուին ունենալ համատեղ գործունեութիւններ, իսկ 4-րդ կէտին համաձայն, առանձնաբար «Յնչակեան Կուսակցութիւնը յանձն է առնում խառն ժողովների որոշումների հիման վրայ, Պարսկաստանի շարժման յաջողութեան համար տալ հարկաւոր եղած ռազմական, նիւթական ու ֆիզիքական ուժերը, որն է զէնք, փող ու կռուող ուժեր»<sup>[9]</sup>:

Այս հիման վրայ, Յնչակեան Կուսակցութիւնը պարսիկ յեղափոխականներուն կը տրամադրէ բաւականաչափ քանակի զէնք, զինամթերք, ինչպէս նաեւ ռումբեր որոնց համար կը ստանայ համապատասխան ստացականներ<sup>[10]</sup>: ՍՂՅԿ-Էջթիմաիունի Ամիունի խառն մարմին մը, բանակցութիւններ կ'ունենայ Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատ Բանուորական Կուսակցութեան հետ, որուն որպէս արդիւնք, ՌՄԴԲԿ-ի կողմէ երկու մարտական խումբեր, Օրշոնիկիծէի եւ Վալիքոյի գլխաւորութեամբ կը մասնակցին Պարսկական յեղափոխութեան<sup>[11]</sup>: Պարսիկ յեղափոխականներուն թիկունք կենալու համար, ՍՂՅԿ-ի կողմէ կը կազմուի նաեւ մարտական խումբ մը, Պետրոս Խանի գլխաւորութեամբ:

Կը կազմուի յեղափոխական բանակ, որուն առաջին գործը կ'ըլլայ Ռաշտ քաղաքին գրաւումը, 1909 Յունուար 26-8 Փետրուարին: Կը կազմուի Ռաշտի Յեղափոխական Կոմիտէ, որուն մէջ ՍՂՅԿ-ի ներկայացուցիչ կը նշանակուի Խահակ Յովսէփեան<sup>[12]</sup>: Թաւրիզի Յեղափոխական Կոմիտէին մէջ ՍՂՅԿ-ը կը ներկայացնեն Ռաֆայէլ Մովսէսեան եւ Ֆլորա Վարդանեան<sup>[13]</sup>: Ռաշտի գրաւումէն ետք, յեղափոխական բանակը, դաշնակցական եփրեմ Խանի (Դաւիթեան) գլխաւորութեամբ, կը շարժի դէպի Թեհրան եւ շարք մը յաղթական մարտերէ ետք, 1909 Յունիսին կը գրաւէ զայն: Շահը գահընկէց կ'ըլլայ. կը յաջորդէ անոր 12-ամեայ որդին՝ Ահմատ Միրզա շահը: Ռաշտէն մինչեւ Թեհրան, յեղափոխական բանակի բոլոր կռիւներուն իր խումբով կը մասնակցի Պետրոս Խան: Ան, Թեհրանի գրաւումէն ետք, Էնզելիի իր ընկերներուն յղած զեկուցագրին մէջ կը գրէ. «Ռաշտից մինչեւ Թեհրան 10 ընդհարում է եղել: Դազուիկը տեսել է 18 ժամ, իսկ Թեհրանը 4 օր է գիշեր է տեսել, իսկ մնացած 8 ընդհարումները եղել է Դազուիկի եւ Թեհրանի շրջակայքում, որը

տել է 3 ժամից մինչև 10 ժամ: ...Բոլոր ռազմաթերթը ժողովուրդի ձեռքումն է: Ժողովուրդի տրամադրությունը բաւական լաւ է: Տեղիս մեր ընկերները լաւ մասնակցութիւն ցոյց տուեցին: Մ...ը այստեղ է եւ շատ լաւ է: Մանուկը (Մոզեսը) մի քանի հոգով ուրիշ տեղ է գնացել: Թեհրանի կոռուի օրերում նրան երկու անգամ տեսել եմ: Ի... էլ այստեղ է, ընկերները ողջ եւ առողջ են, ես էլ մինիստրութեան կոմիսիոնի ցանկում (պատերազմական կոմիսիոն) անդամ եմ ընտրուած, մի հայ էլ կայ Մաթէոս Խան Մելիքեան անունով: Լաւ գործում ենք, բայց ափսոս, որ ես երկար չեմ կարող մնալ, որովհետեւ ուզում եմ մեկնել դէպի Թաւրիզ Զանջանի վրայով: Եթէ մինչեւ իմ գնալս մեր զինուորները զինաթափ չեղան, մնացին գէլքի տակ, գէլքերը ստանալը կը յանձնեմ այստեղի ընկերներին որ ստանան: Դայ զինուորի մեծ կարիք է զգացում: Մեզ թոյլ չեն տալիս գնանք: Դայերի վարկը երկինք է բարձրացել»<sup>16</sup>:

Յեղափոխական ուժերը Ռաշտէն-Թեհրան իրենց յաղթական արշաւին ընթացքին կը կատարեն բռնարարքներ, կողոպուտ եւ ալան-թալան: Երեսոյթ մը, որ շարժման մասնակից գաղափարական կազմակերպութիւններու ղեկավարութեան մօտ զայրոյթ յառաջ կը բերէ: Այս պատճառով, ռուս եւ վրացի յեղափոխականները կը մերժեն մասնակցիլ յեղափոխութեան յետագայ ընթացքին ու կը հեռանան<sup>17</sup>: Խորունկ տարակարծութիւններ կ'առաջանան ԶՅԴ ղեկավարութեան եւ Եփրեմի միջեւ: Նոյն պատճառներով հնչակեան ղեկավարութիւնը կ'որոշէ լուծարել իր մարտական ջոկատը: Պ. Մելիք Անդրեասեան կը մերժէ զինաթափուիլ:

Թեհրանի գրաւումէն ետք, Եփրեմ իր յեղափոխական հանգամանքին կից կը ստանձնէ նաեւ վարչական պատասխանատուութիւններ: Ան կը նշանակուի Պարսկաստանի ընդհանուր ոստիկանապետ<sup>18</sup>: Դատարկուած պետական սնտուկը լեցնելու համար ան կը հաստատէ տուրքեր ոգելից խմիչքներուն եւ աֆիոնի վրայ: Եփրեմին կողմէ Պետրոս Խան կը նշանակուի ոգելից խմիչքներու տուրքի վարչութեան պետ, որ իր օրին կը նկատուի «իւզալի» պաշտօն մը: Եփրեմ եւ Պետրոս կը դառնան սերտ գործակիցներ: «Զար լեզուներ», մանաւանդ իրենց պատկանած կուսակցութիւններուն մէջէն, կը սկսին բամբասել ինչպէս Պետրոս Խանը, այնպէս ալ Եփրեմը<sup>19</sup>: Այս շրջանին Պ.Մելիք Անդրեասեան կ'ընտրուի նաեւ Ատրպատականի խորհուրդի անդամ եւ Լիվայի դպրոցի հոգաբարձու:

Թեհրանի գրաւումով յեղափոխութիւնը չ'աւարտիր: Գահընկէց շահը, Ռուսիոյ թիկունքը վայելելով, սահմանադրական ուժերուն հանդէպ կ'անցնի հակայարձակման: Սկզբնական որոշ յաջողու-

թիւններէ ետք, հակասահմանադրական ուժերը տեղի կու տան: Այս միջոցին, Թաւրիզ գտնուող ռուսական զօրքերը յեղափոխական ուժերուն հանդէպ կը ձեռնարկեն վայրագ դատաստաններ: «Զերբակալում են 21 յայտնի յեղափոխականներ, որոնց թում նաեւ Պետրոս Խանը: Նրան մի քանի օր բանտարկում են Բաղ է Շումայում, որից յետոյ կայանում է դատավճիռը՝ մահապատիժ: Այդ մասին հանգամանօրէն գրել է տղթթ. Մալիքզադէն իր «Սահմանադրութեան Պատմութիւն» աշխատութեան 6-րդ հատորում»<sup>20</sup>: Այդ մասին իր օրին կ'անդրադառնալ նաեւ «Պաքու» ռուսատար թերթը<sup>21</sup>:

Պետրոս Խանի «մեղադրական ակտը ասում են, որ 3 կէտերից է կազմուած. մէկ այն, որ կոռուի օրերին եղել է Բերդում եւ դիրքեր է ամրացրել, երկրորդ՝ պահել ու պատսպարել է Մուրատ Սուլթանին (տեղիս նախկին ոստիկանապետին) եւ երրորդ՝ խորհրդակցել է խռովարարների հետ»<sup>22</sup>:

Վճիռը կը գործադրուի 1912 Յունուար 20-ին, Միջնաբերդի պատին կից: Առաջին անգամ ջուանը կը փրթի. Պետրոս կախաղան կը հանուի երկրորդ անգամ<sup>23</sup>: «Դակառակ ռուսների բարձրացած կախաղաններին ու տարածած ահ ու սարսափին, հակառակ Շուքա-օղ-Տովլաի (ռուս զինուորական իշխանութեան կողմէ նշանակուած Ատրպատականի նահանգապետ, - Ե.Ը.) կատարած ահաւոր նախճիրին, Թաւրիզի հայ երիտասարդութիւնը մեծ ցոյց է կատարում միջնաբերդի մօտ, Պետրոսի կախաղանի առաջ: «Ակնցի ցարիզմը», «մահ բռնակալներին» բարձրացող աղաղակները թնդում են միջնաբերդի շրջակայքում: Ռուսական բանակից անմիջապէս հասնող ռուս զինուորները բռնում են հայկական թաղի բոլոր փողոցները եւ հրացանի կոթերով հազիւ են կարողանում ցրել յանդուգն այդ երիտասարդներին»<sup>24</sup>:

Պետրոս Խանի կախաղանումը, Ատրպատականի հայութեան կողմէ կը նկատուի ռուսերու կողմէ դարբնուած հակահայ գրգռութիւն մը: Այս կապակցութեամբ, «Ազատամարտ» իր «Ռուսական Սարսափները Թաւրիզի մէջ (Դայերու Վիճակը Տազնապալից)» թղթակցութեան մէջ կը գրէ. «Պատերազմական ատեանին կողմէ կախաղան հանուեցաւ հայ մը (որուն անունն է Անդրեասեան, ինչպէս յայտնի է երէկուան հեռագիրներէն. - Ծ.Խ.) հակառակ անոր որ գինուած ոչ մէկ դիմադրութիւն ցոյց տուած էր ռուսներուն: Ժողովուրդը յուսահատութեան մատնուած է: Մահապատիժին յաջորդ օրը ռուս հիւպատոսը պաշտօնական գրութիւն մը ուղղեց Դայոց առաջնորդին, սպառնալով մէկ վիրաւորուող կամ սպաննուող ռուս զինուորի փոխարէն՝ տասը հայ մահուան դատապարտել: Լուրեր տարածուեցան որ իբր նոյն օրը ռուսական հիւպատոսը անանուն

Նամակ մը ստացած է, որով մահուան սպառնալիք կ'ըլլայ իրեն՝ եթէ հայեր կախաղան հանուին: Այլես իրողութիւն է որ ամէն տեսակ գրգռիչ միջոցներ գործ կը դրուին, յառաջ բերելու համար հայկական կոտորածներ»<sup>[6]</sup>:

\*\*\*

Այս բոլորէն ետք, հայոց պատմութեան մէջ բանավեճի նիւթ կը դառնայ Պարսկաստանի Սահմանադրական Յեղափոխութեան հայ կուսակցութիւններուն մասնակցութեան հարցը: Երեւոյթը մեկնաբանելու համար կը տրուին շատ մը բացատրութիւններ: Պահպանողական հոսանքի պատմաբանները, այդ մասնակցութիւնը աւելորդ կը նկատեն, գտնելով թէ հայ կուսակցութիւնները իրենց ներուժը պէտք է օգտագործին միայն արեւմտահայութեան ազատագրութեան գործին: Տրուած բոլոր մեկնաբանութիւններուն մէջ դիպուկ կը մնայ Գուրի Պերպլերեանիւնը՝ որ Պարսկաստանի Սահմանադրական Յեղափոխութեան մէջ հայերու մասնակցութեան վերաբերող գիրքերուն մէջ լաւագոյններն են ամբողջականներն նկատուող իր "Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911"<sup>[9]</sup> գիրքին բնաբան կ'ընդունի "The Love For Freedom Has No Fatherland" լոզունգը:

Ազատասիրութիւնը հայրենիք չունի:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] Cosroe Chaqueri, "The Armenians of Iran", 1998, էջ 0:  
[2] Նոյն, էջ 127:  
[3] Յ.Էլմար, «Եփրեմ», Թեհրան, 1964, էջ 192:  
[4] Սոկրատ Խան Գելոֆեանց, «ԿԱՅՑ-ՍԴ Զնչ. Կուսակցութեան Գործունեութիւնից, Թող Փաստերը Խօսին», 1915, էջ 5-6:  
[5] Նոյն, էջ 6-8:  
[6] «Չայրենիք», 1938 Յուլիս, թիւ 9 (189), Գրիգոր Եղիկեան, «Իմ Յիշողութիւններից»:  
[7] «Չայրենիք», 1939, Ապրիլ, թիւ 6 (198) Եղիկեան, «Չնչակեանները եւ Երանց Պոլշեիկների Զեռ Միանալու Փորձերը»:  
- Իսահակ Դովեան, ՍԴԳԿ Կեդր. Կարգութեան անդամ Ս. Տաշիրի (Սիմոն Զովեան) եղբայրն է, որ երկար տարիներ ըլլալով Պաթումի մասնաճիւղի պատասխանատուներէն մասնակցած է Անդրկովկասի յեղափոխական շարժումներուն ու ձեռք ձգած կազմակերպչական եւ մարտական փորձ:  
[8] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Զնչակեան Կուսակցութեան», Ա. հտ., Պէրլութ, 1962, էջ 399:

[9] Սոկրատ Խան Գելոֆեանց, ..., էջ 1821:

- Մանուէլ Մոզես, ծնած 1875-ին Սեբաստիա: Աւարտել էր Սեբաստիոյ Աւետարանականներու դպրոցը, ուսումը կը շարունակէ Կ. Պոլսոյ Կեդրոնականին մէջ: Կը մասնակցի Կ. Պոլսոյ յեղափոխական ելոյթներուն: 1896-ին կ'անցնի արտասահման՝ Պուլկարիա, Չուլիցերիա, Եւրոպական այլ երկիրներ, Եգիպտոս: 1904-ին կը հաստատուի Պարսկաստան: 1909-ին, ՍԴԳ Դաշտի եւ Ենզելիի մասնաճիւղերուն կողմէ կը նշանակուի Գիլանի Չինուրական կորուրդի ներկայացուցիչ: Թեհրանի եւ Դազուիկի մէջ կը մասնակցի յեղափոխական պայքարներուն: Սամատ Խան կեղծանունով կը ղեկավարէ Արաշ Նահանգի սահմանադրական ուժերը: Կ'աշխատակցի «Ճերիտ Շարքի» (Կ. Պոլիս), «Չնչակ», «Չայրենիք», «Արշալոյս», «Պարտեզ», «Շարժում», եւ «Շուէցերիչէ Փռօթեանը Բլատ» թերթերուն («Կոհակ», 1911, Յուլիս 31-13 Օգոստոս): 1911-ին, երբ գահընկէց շահ Մահմետ Ալի սահմանադրական ուժերուն դէմ կ'անցնի հակաարձանական, անոր գիւնակիցներէն Սալար-օղ-Տովկան Քիրմանշահի մէջ կը գլխաւորէ հակաշեղափոխական ուժերը: Մ.Մոզես, իր հետ ունենալով Տիգրան Գագանճեանը, կը մեկնի Քիրմանշահ, Սալար-Օղ-Դովլէն անաբէկութեան ենթարկելու համար: Սակայն ծրագիրը չի յաջողիր եւ ան կը ձերբակալուի ու կախաղան կը բարձրացուի:  
[10] Նոյն, էջ 15-17: Նաեւ Գ.Եղիկեան, ..., «Չայրենիք», 1938 Յուլիս:  
[11] «Չայկազեան Չայագիտական Զանդես», թիւ 18, Պէրլութ, 1998. Լեւոն Գ. Մինասեան, «Իրանի 1906 թ. Սահմանադրութիւնը եւ Չայրերի Բերած Մասնակցութիւնը 1906-11 թ. Սահմանադրական Յեղափոխութեան»:  
[12] «Չայրենիք», 1952 Փետր., թիւ 2 (313). Յ. Էլմար, «ՉՅ Դաշնակցութիւնը եւ Պարսից Սահմանադրական Շարժումը»:  
[13] «Արարատ» քաջամիկ, 1990. Ա.Սիւնեցի (Արման Բուրաղեանց), «Պետրոս Խան (Պետրոս Մելիք Անդրիասեան)»:  
[14] Զրաչիկ Սիմոնեան, «Ազատագրական Պայքարի Ուղիներում», հտ. Դ., Երեւան, 2010, էջ 721:  
[15] Երուանդ Փամպուրեան, «Նիւթը ԶՅԴ Պատմութեան Զամար», հտ. Թ., Պէրլութ, 2012, էջ 111: «ՉՅԴ Ատրպատականի Կ.Կոմիտէի Նամակը Թեհրանի Կոմիտէին», 8 Յունուար 1912:  
[16] «Ժամանակ», 1912 Փետր. 3/16. «Պետրոս Խան Տէր Անդրասեանի Կախաղան Բարձրանալուն Մասին»: Նաեւ Յունուար 26/8 Փետր. «Դաւրեժի մէջ Կախուած Տէր Անդրասեանի Չուրչը» եւ Յունուար 28/10 Փետր. «Անդրասեանի Կախաղան Զանուելուն Շուրչ Նոր Մանրամասնութիւններ»:  
[17] Յ. Էլմար, ... էջ 193:  
[18] «Ազատամարտ», 1912 Յունուար 11/24:  
[19] Hourli Berberian, "Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911", Colorado, 2001:

# ՄՈՒՐԱՏ ՏԵՐՏԵՐԵԱՆ

(ԽՈՐՈՒՆՑԻ ՄՈՒՐԱՏ, Ս.ՄՈՒՐԱՏ)

ՄԴ Յնչակեան Կուսակցութեան մարտական գործիչներու եւ կազմակերպիչներու փառանգին կը պատկանի Խորոխոնցի Մուրատ, (Ս.Մուրատ):

Ս.Մուրատ ծնած է Սեբաստիոյ Խորոխոն գիւղը:

Պատանի տարիքին ընտանիքով կը տեղափոխուին Կ. Պոլիս: 1896-ին, Պապ Ալիի ցոյցին յաջորդող թրքական վայրագութիւններուն զոհ կ'երթան Ս.Մուրատի հայրն ու կրտսեր եղբայրը: Աւելի ուշ՝ բժշկութիւն ուսանելու համար Ամերիկա մեկնած մեծ եղբայրը զոհ կ'երթայ թրքախտի: Ս. Մուրատ կը մնայ իր մօր հետ:

Կը յաճախէ ամերիկեան Ռապըթ Գոլէճը: Երիտասարդութեան սանդխամատին կը մտնէ Յնչակեան Կուսակցութեան շարքերը: Յնչակեան Կուսակցութեան Պոլսոյ Վարիչ Մարմինը, ուսման համար Ս.Մուրատը կը դրէ Լոնտոն, ուր ան իր օժանդակութիւնը կը բերէ Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան աշխատանքներուն:

Ի տես Ս.Մուրատի կարողութիւններուն, Կեդրոնական Վարչութիւնը Ս.Մուրատը որպէս լիազօր գործիչ կը դրէ Պարսկաստան, փոխարինելու համար Փարամազը՝ որ իր խումբով արդէն անցած էր Վան:



Պարսկաստանի մէջ Մուրատ կը ստանձնէ Փայաջուկ գիւղի դպրոցին աւագ ուսուցիչի պաշտօնը եւ միաժամանակ կ'ունենայ կուսակցական-կազմակերպչական արդիւնաւետ գործունեութիւն:

Այդ շրջանին, Յնչակեան կուսակցութեան գործունեութեան կարեւոր բնագաւառներէն էր գէնքի եւ զինամթերքի մէկտեղումը Պարսկաստան, այդ Արեւմտահայաստան տեղափոխելու հեռանկարով: Մուրատ անձնապէս կը գլխաւորէ այդ աշխատանքը, իրեն գործակից ունենալով Ս.Ստեփանոս Նախավկայ վանքին վանահայր Պիծակ վարդապետը: Չինատարական այդ ճամբուն զինք ձերբակալելու պարտականութիւնը ստանձնած պարսիկ Զեթ Խիւտա Խանը<sup>1)</sup>: Պարսկաստանի շրջանի հնչակեան յայտնի ղեկավարներէն Ալեքսանդր Տեր Վարդանեան կը վկայէ. «Չինեալ խումբը գէնքերու փոխադրութեան գործը կը տանէր ձմեռ ժամանակ, կառավարութեան լրտեսներու աչքէն հեռու մնալու համար: Անգամ մը գէնքով բեռնաւորուած, ռուսական սահմանէն՝ Արաքս գետին վրայէն՝ կ'ուզէն անցնիլ: Գետը սառած կ'ըլլայ: Մեր շալակաւորները ապահով զգալով սառի կարծրութիւնը վրայէն կը քալէն: Գետին կիսուն սառը կը կոտրի եւ շալակաւորները կ'իյնան ջուրը: Բաւական չարչարուելէ վերջ, դուրս կու գան, բայց մինչեւ ցամաք ելլելը արդէն բոլորն ալ կը դառնան սառէ-մարդ: Ահագին տառապանքով անոնք կը շարունակեն իրենց ճամբան մինչեւ կը հասնին որոշուած սահմանամերձ գիւղ մը...: Ս.Մուրատի եւ ընկերներուն ոտքերը կը դնեն տաւարի աղբի մէջ, որպէսզի մոյկերը կակուղնան, բայց այդքանով ալ չէր վերջանար տղայոց միմուռը: Ս.Մուրատին գուլպաները զրեթէ միսին միացած կ'ըլլան: Մինչեւ գուլպաները կը փրցնեն՝ ոտքերու կաշիներն ալ հետը կը փրօթին, որու հետեւանքով անոր ֆիզիքականը բաւական կ'ազդուի եւ ամիսներով կը տառապի, մինչեւ որ նոր կաշի կու գայ եւ զգայնութիւնն ալ կը վերահաստատուի»<sup>2)</sup>:

Այդ շրջանին, հնչակեան ֆետայական խումբերը կեդրոնացած էին Պարսկաստանի կարգ մը հայկական գիւղերուն մէջ՝ Փայաջուկ, Սաւրա, Սալամբրիկ եւայլն, ինչպէս նաեւ պարսկա-թրքական սահմանագիծին վրայ: Յնչակեան խումբերու ընդհանուր պատասխանատուն էր իմբապետ Աւօն (Աւետիս Գասպարեան): «Ս.Մուրատի անմիջական աջակիցն ու զինակիցն էր իմբապետ Աւօն: Անոնք զիրար կը լրացնէին եւ միասին անպարտելի ոյժ մը կը ներկայացնէին: Սալմաստցիք չափազանց կը յարգէին եւ կը սիրէին այդ երկու տիպար յեղափոխականները եւ անոնց հեղինակութիւնը

շատ մեծ էր բոլոր գիւղերուն մէջ»<sup>97</sup>:

Դժբախտաբար, այդ շրջանին հնչակեան եւ դաշնակցական «գիւնտրներուն» միջեւ նաեւ տեղի կ'ունենային բախումներ: 1899 Սեպտեմբերի երեկոյ մը, երբ Մուրատ եւ Աւօ կազմակերպչական գործերով Փայաջուկէն կ'ուղղուէին դէպի Սաւրա, դառնակալ գնդակներու տարափ մը կը տեղայ անոնց վրայ: Աւօ կը նահատակուի իսկ Մուրատ վիրաւոր վիճակի մէջ դիրք կը գրաւէ փոսի մը մէջ ու կը դիմադրէ<sup>98</sup>: Աւուրի անտեղի նահատակութիւնը ծանր հարուած էր հայ ազատագրական շարժման: Ան մշեցի քաջ կոռուղ մըն էր, Սասունի, Կ.Պոլսոյ եւ Կովկասի մէջ մասնակցած էր յեղափոխական շարժման, եղած էր Մեծն Մուրատի կարեւոր գիւնակիցներէն, Փարամագի խումբով անցած էր Երկիր ու գործած Կանի մէջ, վիրաւորուած ու բանտարկուած: Աւուրի յանդուգն մէկ գործն ալ կ'ըլլայ իր սպանութենէն շուրջ տարի մը առաջ: Ինը հոգինոց դաշնակցական ֆետայիներու խումբ մը կ'անցնի Պարսկաստան եւ Մելիամ գիւղին մէջ մատնուելով կը ձերբակալուի. պարսկական իշխանութիւնները, հայ ֆետայիներուն հետ անսխալընթաց եւ ամբողջապէս անբացատրելի հաշուեյարողար կը տեսնեն գլխատելով զանոնք<sup>99</sup>: Աւօ վրեժխնդիր կ'ըլլայ մատնիչ Չաքեի հանդէպ եւ գիշեր մը մտնելով անոր տունը կը սպաննէ զայն ու ընտանիքին բոլոր անդամները:

Պարսկաստանի շրջանի հնչակեան ծանօթ գործիչներէն Վահան Մարտեանի վկայութեամբ «Մուրատ լման չապաքինած, սկսած էր ուսուցչական գործին, երբ ենթարկուեցաւ երկրորդ մահափորձի մը»: Դպրոցի բակին մէջ, դաշոյններով զինուած խումբի մը կողմէ յարձակման կ'ենթարկուի, բայց պատահականօրէն վրայ հասած իր ընկերներէն մէկուն հետ կը դիմադրեն եւ յարձակողները փախուստի կը մատնեն, անոնցմէ մի քանին վիրաւորել է ետք<sup>100</sup>:

Ս.Մուրատ «մասնաճիւղերու գործերու զարկ տալու համար» կ'այցելէ Թաւրիզ եւ Էնզելի<sup>101</sup>:

Վ.Մարտեան կ'ընէ նաեւ այլ ուշագրաւ վկայութիւն մը. «Սեբաստիացի Մուրատը (չշփոթել Մուրատ Խրիմեանի հետ- Ե.Ե.) որոշ գործի համար Կովկաս կանչուելով կը դրկուի Տաճկաստան»: Ինչ գործով Մուրատ կը դրկուի Տաճկաստան. դժբախտաբար այս մասին, Վ.Մարտեան տեղեկութիւններ չի տար: Այս մասին, ՍԴՅԿ Կեդր. Վարչութեան նիստերու ատենագրութեան մէջ, որպէս որոշում, կը պահպանուի հետեւեալ արձանագրութիւնը. «Պատասխանել Պրն. Մուրատին, որ իւր առաջարկութիւնը եւ Երկրի մէջ գործունեութեան համար յայտնած ծրագիրը անկախաբար լայն բանէն

որը Պատգ. Ժող.ը (Համագումարը.-Ե.Ե.) ի նկատի ունեցած էր, այդ մասին, նաեւ իւր դիտողութիւններու համար մանրամասն կը տեղեկանայ Կեդր. Վարչ. ներկայացուցիչէն, որ շուտով պիտի ուղեւորուի Կովկաս»<sup>102</sup>: Հաւանաբար Մուրատ Կովկաս կը կանչուի Կեդր. Վարչութեան ներկայացուցիչին հետ տեսակցելու համար՝ որ այս պարագային Սիմոն Հովեանն էր: Միայն Թեոդին է որ կու տայ քիչ մը անելի լայն բացատրութիւն գրելով. «Կը վարէ մարտական խումբեր Պարսկաստան եւ Թուրքիա, մանաւանդ այն արշաւախումբին որ կ'անցնէր Հայաստան, երբ Անդրանիկի 1904-ի Սասնոյ շարժումներէն յետոյ՝ այդ շրջանի ժողովուրդը կը մնար անպաշտպան»<sup>103</sup>:

Ըստ երեւոյթին Մուրատ երկար չի մնար Արեւմտահայաստանի մէջ, որովհետեւ 1905-ին, հայ-թաթարական բախումներուն ժամանակ, ան կ'երեւայ Թիֆլիսի մէջ, Սոլուլակ փողոցի պաշտպանական դիրքերուն վրայ: Հաւանաբար այդ շրջանին է, որ Մուրատ կը ծանօթանայ ու կը մտերմանայ նախկին հնչակեան, ապա ՌՄԴԿ-ին միացած եւ անելի ուշ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի (ՀՕԿ) նախագահ Գրիգոր Վարդանեանին հետ որ իր մասին կը գրէ. «Ս.Մուրատ մեր տան յարգամեծար հիւրն էր: Այս տողերը գրելու պարագային աչքիս առջեւ կու գայ իր պարթեւ հասակը, ազնուական դիմագիծը, որու համար չեմ կարող լացս բռնել: Արցունքոտ աչքերով կը գրեմ այս տողերը, ա՛յս թէ պատեհութիւն ունենայի զինք ներկայացնելու իր հարուստ գործունեութեամբը, որ քիչերու վիճակուած է»<sup>104</sup>:

Օսմանեան Սահմանադրութենէն ետք Մուրատ կը վերադառնայ Կ.Պոլիս ու կը շարունակէ ազգային-կուսակցական գործունեութիւնը: 1909 Մարտին, խումբ մը ընկերներով (Յակոբ Արծրունի, Գրիգոր Ծելալ) եւ կամաւոր երիտասարդներով կ'օժանդակէ Բերայի շրջանէն մայրաքաղաք մտնող Ազատարար Բանակին<sup>105</sup>: Նոյն տարին կը մասնակցի ՍԴՅԿ Կ.Պոլսոյ 6-րդ համագումարին եւ յաջորդող տարիներուն Տաճկաստանի շրջանի պատգամաւորական ժողովներուն: Կ'ընտրուի ՍԴՅԿ Տաճկաստանի Գործադիր Մարմին անդամ:

1911 Մայիսին, Մուրատ կ'ընկերանայ Ստեփան Սապահ Գիւլեանին դէպի Փոքր Հայք կատարած անոր քարոզչական-կազմակերպչական ուղեւորութեան, որ կը տեւէ շուրջ չորս ամիս: Այդ ընթացքին անոնք կ'այցելեն նաեւ Մուրատի ծննդավայրը՝ Սեբաստիա: Ու ինչպէս կը վկայէ Ս. Սապահ Գիւլեան, երբ կը մօտենան Սեբաստիոյ. «Ընկ. Մուրատը սկսել է իր ծննդավայրի հոտը առնել. ընկել է հոգեկան մի ալեկոծ վիճակի մէջ. իր կերպարանքը թէ տխրութիւն, թէ ուրախութիւն է արտացոլացնում: Հոգւոյ երկու լարերն էլ միա-

ժամանակ թրթռում են: Ու երգում է իր մանկության ժամանակից սովորած Քեռ-Օղլու երգը, որի բերդը ժամանակին դրուած է եղել այդ լերան գագաթի վրայ. հետքերը տակաւին նշմարում են: Մուրատ երգում է մէլամաղծոտ, ուժեղ, հնչուն ձայնով, աչքերին թէն արտասուք չկայ, բայց որոշ է՝ հոգին լալիս է, որքան աշխատում է իրեն պահել՝ անկարելի է լինում, կուրծքի ելեւեջը, երգի ոլորակները ամէն ինչ յայտնում են...»<sup>172</sup>: Սեբաստիոյ մէջ, Մուրատ հնչակեան հին եւ յանդուգն ֆետայի Բարսեղ Դարբինեանի հետ կ'այցելէ շրջակայ գիւղերը «կազմակերպելու եւ ինքնապաշտպանութեան վերաբերեալ պէտք եղած միջոցները ստեղծելու՝ այդ մասին մշակուած ծրագրին համաձայն»<sup>173</sup>:

Սեբաստիա այցելութիւնը ճակատագրական կ'ըլլայ Մուրատին համար: Ան կը ծանօթանայ Նազենի Դարբինեանին, կ'ամուսնանայ անոր հետ եւ 1913-ին կը հաստատուի Սեբաստիա: Դոն եւս Մուրատ կը շարունակէ իր ազգային-հասարակական գործունեութիւնը: Սեբաստիոյ Ազգային Առաջնորդարանին կողմէ կը նշանակուի կրօնական ժողովի ատենապետ:

Ս.Մուրատ աւելի շատ ծանօթ կ'ըլլայ որպէս գէնքի մարդ՝ քան գրչի: Ան շատ քիչ կ'օգտագործէ գրիչը որպէս պայքարի միջոց: Այդ քիչ պարագաներուն սակայն, անոր գրիչը կ'ըլլայ խիստ ու հատու: 1912-ի օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն մասին անդրադառնալով, ան Կ.Պոլսոյ Կուսակցութեան օրկան «Նոր Աշխարհ» օրաթերթին մէջ կը գրէ. «Այն բերանները, որոնք դեռ մինչեւ երէկ Իթթիհատը կը փառաբանէին, այսօր անեծք կը կարդան: Բայց սահկա անկեղծութեան յայտարար նշան մը չէ: ...Կ'ըսեն, թէ Իթթիհատը գիրեք խաբէր է եւ հայ ազգի թուին համեմատ ներկայացուցիչներ չէ տուած: Զանի որ Իթթիհատն է փշրանքներ տուողը, բնական է որ նա պիտի տար այնքան, որքան որ ինքը կը ցնակար: ...Ե՛րբ, ո՞ր ժամանակ հայութիւնը որպէս մէկ ամբողջութիւն Իթթիհատին է դիմած եւ անոր հետ համաձայնութիւն կնքած: Դետեաբար, ի՞նչ իրաւունքով կը պահանջուի այն, ինչ որ Իթթիհատը չէր կրնար տալ՝ իրաւունքի տեսակետով որովհետեւ հայ ազգը իր հետ որեւէ համաձայնութիւն կնքած չէ: Եթէ խաբէրայ մը կայ, այն ալ Դաշնակցութիւնն է, որ Իթթիհատի հետ խօսեր է, որպէս հայ ազգի ներկայացուցիչ»<sup>174</sup>:

1914 Սեպտեմբերին Զնչակեան ղեկավարներու ձերբակալութիւնը գէշ նախազգացումներով կը համակէ Սեբաստիան: «Սեբաստիան չէր քնանար: Գնէլ վրդ. Գալեմբեարեանի գլխաւորութեամբ Ս. Նշան վանքին մէջ գիշերային գաղտնի ժողովներ տեղի կ'ունե-

նային: Ս. Մուրատն ալ որպէս պատասխանատու գործիչ կը մասնակցէր այդ ժողովներուն»<sup>175</sup>: Ու օր մը, բնաւորութեամբ գաղտնապահ Մուրատ, իր կնոջ կ'ըսէ. «Մեր ժողովներուն մէջ յաճախ կը խօսուի, մաս մը կտրիճներով ապաստանիլ Պարտիզակ կամ Պախչեճըքի լեռներն ու մթնածոր պուրակները, մինչեւ որ ժողովուրդը արթննայ եւ հետեւի մեզի: Դոն դիմադրութեան ճակատ կազմելու մեծ հնարաւորութիւններ կան»<sup>176</sup>:

Եղած կանխատեսումները տեղին էին: Պատերազմի սկսելէն յետոյ, գերի ինկած ռուս սպայի մը փախուստը Սեբաստիոյ հիւանդանոցէն, պատրուակ կ'ըլլայ որ շրջանի հնչակեան եւ դաշնակցական պատասխանատուները հրաւիրուին Նահանգապետին մօտ: Այդ քաղցրաբարոյ հրաւերը կը վերածուի ձերբակալութեան եւ բանտարկութեան, որոնք մէջ նաեւ Մուրատ: Այսքանը ճիշդ է, որովհետեւ Մուրատի կինը կը վկայէ թէ նամակագրական կապ ունեցած է իր ամուսինին հետ, անոր բանտ գտնուած ժամանակ: Ապա, Մեծ Եղեռնին, տեղի կ'ունենայ բանտարկուած հայերուն սպանոցը: Առաջին տպաւորութիւնը այն կ'ըլլայ, որ Մուրատ եւս, իր բանտակիցներուն հետ բռնած է սպանդի ճամբան<sup>177</sup>: Սակայն, ժամանակի ընթացքին կը պարզուի, թէ իրականութիւնը այլ է:

Մուրատ կը յաջողի փախուստ տալ կալանքէն եւ բարձրանալ լեռ: Այս վարկածին որպէս առաջին փաստ կը բերուի այն նամակը որ Մուրատ գրած է Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութեան ղեկավար իր ընկերոջ Դուկաս Արբարին (Տօձլեթեան): Նամակին մէջ կ'ըսուի. «Ընկ, Դուկաս, մենք ինքնապաշտպանութեան համար լեռ բարձրացանք: Ինչ-ինչ պատճառներ թելադրուած՝ Սեբաստացի Մուրատ իր քանի մը ընկերներով անյայտ եղած է: Այժմ մենք կը գտնուինք Էնտերէի լեռները: Մեզի միացած են Զառա-Կովտուն-հնժաղի-հորախուն-Կավրաց-հորսանա եւ Զմշկածագի փախստական հայերը: Տրամադրութեանս տակ ունիմ հազարէ աւելի զինուած երիտասարդութիւն մը եւ տասնեակ հազարէ աւելի ժողովուրդ: Խմբապետներու համաձայնութեամբ նպատակ ունինք ուղղուիլ դէպի ռուսական սահման: Կարելի եղած արագութեամբ եկէք միացէք մեզի: Զնչակեան խմբապետ հորոխոնցի Ս.Մուրատ: 1915 Ապրիլ 23»<sup>178</sup>: Դժբախտաբար, այս կարեւոր նամակին սկզբնաղբիւրը նշուած չէ: Միւս կողմէ սակայն, մամուլին մէջ երեւցած երկու լրատուական հրապարակումներ, յստակ լոյս կը սփռեն Մուրատի կեանքի վերջին ողբասկանին վրայ: Թիֆլիսի հնչակեան օրկան «Գաղափար»ը կը գրէ. «Ռուս-թրքական պատերազմի նախօրեակին, ամերիկահայ թերթերը յայտարարեցին, որ հնչակեան

700 հոգի է բաղկացել խումբ մը առաջնորդութեամբ Ս.Մուրատի եւ Աւոյի Շապին-Գարահիսարի մէջ լեռ եւ բարձրացել: Ներկայիս մեզ հասած ստոյգ տեղեկութիւններն այդ մասին հետեւեալներն են, զոր կը պատմէ նոր փախած ականատես մը: Ս.Մուրատի խումբը մինչեւ 1915 թ. Սեպտեմբեր 22-ը, կողուելով կ'անցնի Տերսիմ: Երբ ջարդարար խուժանին ձեռքէն հագիւ ազատուած հատ ու կտոր հայերին թիրքերը դարձեալ հալածելով կ'ուզէն Քեմալի կիրճէն անցնիլ, կոտորելու համար, հող վրայ կը հասնի Մուրատի խումբը, իր հետ ունենալով բազում տերսիմցի քիւրտեր, յարձակում կը գործեն հայերը փոխադրող զօրքին վրայ ու բոլոր հայերը կ'ազատեն: Մահուան ճակէն հագիւ ճողոպրած, խեղճ ու թշուառ հայերը դեռ մինչեւ այսօր ողջ կը մնան Տերսիմի մէջ, շնորհիւ ազատարար խումբին եւ քաջարի հերոս Մուրատին: Բայց դժբախտաբար հոն է, որ խմբապետ Մուրատը կը սպաննուի հերոսաբար, իր բաժին ինկած պարտականութիւնը կատարելէ վերջ եւ սակայն ամբողջ խումբը եւ տերսիմցի քիւրտերը, բոլորուելով հերոսի դիակին շուրջ կ'երդուին, որ ամբողջ Տերսիմը իրենց հետ միասին գործեն ի նպաստ հայ ժողովուրդի»<sup>[10]</sup>:

Քանի մը տարի ետք ալ Ամերիկայի հնչակեան օրկան «Երիտասարդ Հայաստան»ը այս մասին կը իրապարակէ ականատեսի մը վկայութիւնը ուր կ'ըսուի. «Կ'աւետեմ ձեզ, Սեբաստիոյ քաջ կորիւններէն երեք խումբերու մնացորդներու ազատումը: ... Չեմ կրնար նկարագրել մեր քաշածները, վասնզի կարելի չէ, անկարելի է միայն կու գամ ձեզ աստել, որ Ս.Մուրատի խումբէն ազատուեցան 17 կորիւններ, Բ. Գամբարձումեանի խումբէն 15. մեր խումբը որ 57 հոգի կը բաղկանար, 32 հոգի մնացինք. սեբաստացի կռուող հազարի մօտ գունդէն 64 կորիւններ միայն անցանք Կովկաս: Միւսները մնացի՞ն թէ՞ մեռան, հիմակ ու հիմակ մի հարցնէք, վասնզի լուր տանելը հնար չէ»<sup>[20]</sup>:

Ու այդպէս, այսօր պատմութեան կողմէ ապացուցուած կարելի է սեպել, որ «Տերսիմ անցնելով քաջ լեռնական քիւրտերու հետ Մուրատ կը յարձակի Երզնկայի ճամբով Կարիւնէ-Մուսուլ տարուող հայ աջտրեալներու կարաւանին վրայ որոնցմէ կ'ազատին մօտ վեց հարիւր հոգի, մեծ մասամբ կիներ եւ փոքրիկներ: Եւ այդ կռիւներուն մէջ տասնեւվեց տարուան յեղափոխական աննկուն գործունեութենէ մը յետոյ, Տերսիմի բարձրիկ սարալանջերուն վրայ միշտ զէն ի ձեռին, միշտ կռուողի դերին մէջ, իբրեւ Խորխորունեաց արժանաւոր մէկ զաւակը, Մուրատ կ'իյնայ հերոսական մահով»<sup>[21]</sup>:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Երիտասարդ Հայաստան», 1936 Նոյ. 7. Կարնօ, «Խորխորունցի Մուրատ»:
- [2] Նազենի Ս.Մուրատ եւ Առաքել Եղիկեան, «Խորխորունցի Ս. Մուրատ», Պէրլուք, 1969, էջ 21-22:
- [3] Արսէն Կիտուր, «Պատմութիւն Ա.Գ. Հնչակեան Կուսակցութեան», Ա. հտ., Պէրլուք, 1962, էջ 407:
- [4] «Հնչակ», 1902, Նոյեմբեր 1. «Անօ (Աւետիս Գասպարեան)»:
- [5] «Դրօշակ», 1898, Նոյեմբեր 30. «Պարտքի շոհերու հնը Ընկերների Նահատակումը Սալմաստում» եւ 1899 Յունուար 31, «Մալխամի Նահատակների Յիշատակին»:
- [6] Արսէն Կիտուր, ..., էջ 408:
- [7] «Հնչակ», 1935, Օգոստոս. Բ. «Հնչակեան Գործունեութիւնը Սալմաստ-Ուրմի Գաւառներուն մէջ»:
- [8] Ս.Գ.Կ. Կեդր. Կարչուրեան 1904 Յունուար 5-ի 26-րդ նիստի ատենագրութիւնը: Հնչ. արխիւ:
- [9] Թեղիկ, «Յուշարձան Ապրիլ (11) Զսանչորսի», Պէրլուք, 1985, էջ 60:
- [10] Ն.Մուրատ եւ Ա.Եղիկեան, ..., էջ 24-25:
- [11] «Ազատարար Շարժուն Բանակին Յաղթական Մուտքն Ի Կ.Պոլիս», Կ.Պոլիս, 1909, էջ 164:
- [12] Ա.Սապահ-Գիւլեան, «Փոքր Հայքի Յիշատակներ», Գահիրէ, 1916, էջ 346-348:
- [13] Նոյն, էջ 320:
- [14] «Նոր Աշխարհ», 1912, Ապրիլ 19/2 Մայիս. Ս.Մուրատ, «Օրուան Հարցերը»:
- [15] Ն.Մուրատ եւ Ա. Եղիկեան, ..., էջ 47:
- [16] Նոյն, էջ 48:
- [17] Կարապետ Գաբիկեան, «Եղեռնապատում», Այթիլիս, 2002, էջ 63-64:
- [18] Գերսամ Ահարոնեան, «Յուշամատան Մեծ Եղեռնի», Պէրլուք, 1965. Խորէն Այվազեան, «Շապին-Գարահիսարի Հայութեան Գոյամարտը», էջ 774-775:
- [19] «Գաղափար», 1916, Մայիս 3. Աստուածատուր, «Շապին Գարահիսարի Հնչակեան Մուրատի Խումբը եւ Տերսիմի Քիւրտերուն Ապստամբութիւնը»:
- [20] «Երիտասարդ Հայաստան», 1919, Փետրուար 12. Սարգիս Օսնիկեան, «Նամակ Ռուսիայէն - Սեբաստիայէն Կովկաս Սեբաստացի Հնչակեան Ուժերը եւ Զօրավար Անդրանիկ»:
- [21] «Երիտասարդ Հայաստան», 1936 Նոյ. 18. Կարնօ, «Խորխորունցի Մուրատ»:

# ԳՐԻԳՈՐ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ (Ս. ՎԱՀԱԳՆ)

Հայ ազգային ազատագրական պայքարի ամենն փոթորկոտ եւ հայ ժողովուրդի գոյութեան սպառնացող բոլոր ճակատներուն վրայ կռուած բացառիկ դէմքերէն է Ս.Վահագն:

Ս.Վահագն ծնած է Սեբաստիա, 1872-ին:

Հազիւ տասներեք տարեկան, կռուի կը բռնուի թուրք պատանիի մը հետ եւ կը սպաննէ զայն: Հարազատները զինք կը փախցնեն Կ.Պոլիս, ուր կը գտնուէր հայրը:

1890-ին կը միանայ Հնչակեան Կուսակցութեան եւ կը մասնակցի Գում Գաբուի ցոյցին:

1894 Յունիսին, Կուսակցութեան որոշումով կ'ահաբեկէ յայտնի լրտես Սեւ Գարեգինը:

11 օր փախստական մնալէ ետք կը ձերբակալուի: Սակայն, մինչեւ ոստիկանատուն տարուիլը, կը յաջողի փախչի: Կ'անցնի Ռումանիա եւ Սամսոնի վրայով կը վերադառնայ Սեբաստիա:

1895 Սեպտեմբերին կը մասնակցի Պապ Ալիի յայտնի ցոյցին՝ որպէս խմբապետ<sup>[1]</sup>:

1896 Օգոստոսին, երկու ընկերներով կը մասնակցի Պանջ Օթոմանի գրաւման գործողութեան, ուր Մեղրեցի Միսաքի ռումբին պայթումին հետեւանցով<sup>[2]</sup>, անոր ձախ թելը ծակորտն կը վնասուի: Պանջը գրաւող յեղափոխականներուն արտասահման (Մարսել) մեկնումէն ետք, հինգ վիրաւոր յեղափոխականներ, որոնց մէջ Ս.



Վահագն, կը տեղափոխուին Կ.Պոլսոյ ռուսական հիւանդանոցը: Տաս ամիս կը մնայ հիւանդանոց. կ'ապաքինի, սակայն ձախ թելը կը մնայ կէս անդամալոյծ: Այս միջոցին Ս.Վահագն կը սորվի խօսակցական ռուսերէն, որ յետագային օգտակար կ'ըլլայ Անդրկովկասի մէջ անոր յեղափոխական գործունեութեան:

Հիւանդանոցէն դուրս գալէն ետք, կարճ ժամանակ մը կը հաստատուի Եգիպտոս ու 1898-ին կը մեկնի Սոխումի:

Ս.Վահագն, Սեւ ծովու քաղաքներուն մէջ կ'ունենայ կուսակցական բեռնակցութիւններ: Սոխումիի, Սոչիի, Անապայի, Արմաւիրի, Նովորասիսկի, Մենառայի, Տուափսայի եւ շրջակայ գիւղերուն մէջ կը կազմակերպէ հնչակեան մասնաճիւղերն ու խումբերը: Սերտ գործակցութիւն կ'ունենայ շրջանին մէջ գտնուող Փոքր Հայքի նշանաւոր հայրուկապետ Մինաս Օղլուին հետ:

Տուափսայի մէջ տեղի ունեցած ոճիրի մը պատճառով կը ձերբակալուի եւ վեց ամիս կը բանտարկուի: Ապացոյցներու անբաւարարութեան պատճառով ազատ կ'արձակուի:

1903-ին, հայկական եկեղեցապատկան գոյքերու բռնագրաւման որոշման դմ կը կազմակերպէ սեւծովեան քաղաքներու հայ բնակչութեան հակացարական ելոյթները: Հարցը կը հասնի զինեալ բախումներու: «Ես կառավարութեան գաղտնի ոստիկանութեան աչքին ընկայ» կը գրէ Ս.Վահագն իր յուշերուն մէջ<sup>[3]</sup>: Կը ստիպուի անցնիլ Օտեսա, ուրկէ Եգիպտոս, ապա Ֆրանսա (Մարսել, Փարիզ), Չուիցերիա, Անգլիա (Լոնտոն, Մանչեսթըր, Լիվըրպոլ), Պերլին, Ռումանիա եւ Պուլկարիա: Վառնայի, Ռուսոնցի եւ Ֆիլիփպոլի մէջ կը կազմէ «Սեբաստիոյ հնամակալ ընկերութեան» մասնաճիւղեր:

1905-ին, Մարսելէն կ'ուղեւորուի Պաթում: Կ.Պոլսոյ, Սամսոնի եւ Տրապիզոնի նաւահանգիստներուն մէջ կը հանդիպի գաղտնի ոստիկանական հետապնդումներու: Իր ճարպիկութեամբ եւ ընկերներու օգնութեամբ կը յաջողի դուրս գալ Պաթումի նաւահանգիստէն ու հասնիլ Թիֆլիս:

Մինչ այդ, հայ-թաթարական կռիւներուն պատճառով ՍՂՀ Անդրկովկասի եւ Ռուսաստանի Գործարար Մարմնին կողմէ ծնունդ առած Զինուորական Մարմնին կողմէ կը ղրկուի Շուլաւէր՝ «Հայ գիւղացիներու պաշտպանութեան համար»- կը գրէ Ս.Վահագն: «Պուլանըխի Լիզ գիւղացի հնչակեան 45 զինակիր տղաներով կ'անցնի Շուլաւէր՝ Պոռչալուի գաւառը, ուր Կովկասի Էն արիւնկալ եւ արիւնարբու թաթարները կը գտնուին»<sup>[4]</sup>:

Կ'անցնի Էջմիածին ու 13 հոգինոց ծիաւոր խումբով մը Էջմիածնայ վանքն ու շրջակայ գիւղերը կը պաշտպանէ թաթարական յար-

ծակումներն: Ս.Վահագնի այս շրջանի գործունեության նուիրում է Աշուղ Ջիւանիի «Ձօն Առ Վահագն» ծանօթ երգը: Նոյն միջոցին կը պաշտպանէ նաեւ Մաստարայի շրջակայ գիւղերը:

Կը վերադառնայ Սեւ ծովու ափերը՝ Պաթում, Փոթի, Սոխումի, Նովորասիսկ, Քերչ, Անապա :

1907-ին կը մասնակցի Թիֆլիսի մէջ գումարուած ՍՂՀ Բուսաստանի եւ Անդրկովկասի Պատգամաւորական ժողովին՝ որպէս Նովորասիսկի (Քարահանք) շրջանի պատգամաւոր: Ժողովէն ետք, Բ.Սիւնիքի (Բագրատ Աւետեան) հետ կը մեկնի Չանգեզուր եւ Շուշի «գիւնուորական գործերը դասաւորելու համար»:

Թիֆլիս վերադառնալէ ետք, ծիաւոր 23 հոգինոց խումբով մը կ'անցնի Իգդիրի, Կարսի, Երեւանի եւ Վաղարշապատի շրջանները՝ «կազմակերպչական գործերով»:

Հայ-թաթարական բախումներէն ետք, «կռիւի մասնակցող այս այն կուսակցութեան, եւ ոչ կուսակցական գիւնուորներէն ոմանք խմբեր կազմած գիւղերը, զանազան դրամական դիմումներ կատարում, գիւղացիք նեղում են, քանզի փող չտալու դէպքում սպանութիւններ են գործում: Չանազան տեղերից դիմումներ է կատարում ինձ որ հալածեմ այդ աւազակային խմբերին: Մենք հետեւում ենք դրանց. մի մասս Ալեքսանտրապոլի շրջանը, մի մասս Վաղարշապատի: Բռնում ենք շատերին, գիւնաթափում, բանտարկում գիւղերում եւայլն».- կը յուշագրէ Ս.Վահագն: Այդ շրջանին ցաւալի բախումներ տեղի կ'ունենան նաեւ հնչակեան եւ դաշնակցական խումբերուն միջեւ: Այդ ընդհարումներուն առաջքը առնելու համար, ՍՂՀ Կեդրոնական Վարչութեան կողմէ Անդրկովկասի եւ Բուսաստանի Նորանշանակ Գործադիր Յանձնախումբը, Փարամագի գլխաւորութեամբ, կ'որոշէ լուծարել հնչակեան խումբերը: Կը լուծարուի նաեւ Ս.Վահագնի խումբը:

1907-ի վերջերը, ՍՂՀ Պարսկաստանի Գործադիր Մարմնին առաջարկով Ս.Վահագն, խումբ մը փորձուած կողուղներու հետ կ'անցնի Պարսկաստան, ուր սկսած էր Սատտար խանի յեղափոխական շարժումը: Թաւրիզի մէջ կը միանայ յեղափոխականներուն: «Մեր մասնակցութիւնը Սատտար խանի հետ Ներքին կերպով էր. հրապարակով չէինք կարող, քանզի մնացած տեղերու հայութեան պահպանողականների կողմից վտանգ կը սպառնար», կը գրէ Ս.Վահագն: Միւս կողմէ, ան միջնորդի դեր կը խաղայ, որպէսզի հանդարտեցնէ հնչակեան եւ դաշնակցական խումբերուն միջեւ առկա լարուած մթնոլորտն ու բախումները:

Օսմ. Սահմանադրութենէն ետք կը մեկնի Թիֆլիս, ապա Պաթում եւ նաւով Կիրասն՝ ուր առաջնորդարանի շէնքին մէջ կ'արժանա-

նայ ժողովրդային ընդունելութեան: Կը հանդիպի Կ.Պոլիս, որմէ իր ծննդավայրը՝ Սեբաստիա: Հայրենակիցներուն կողմէ կ'արժանանայ ջերմ ընդունելութեան:

1909-ին կը մասնակցի ՍՂՀ, Կ.Պոլսոյ 2. Համագումարին:

Ատանայի ջարդէն ետք, Ս.Վահագն կը լծուի կազմակերպչական եւ ինքնապաշտպանական եռուն գործունեութեան: 1910 Յունուարին կը մասնակցի Մարզուանի մէջ գումարուած ՍՂՀ Փոքր Հայքի շրջանային պատգամաւորական ժողովին եւ կ'ընտրուի Գործադիր Յանձնախումբի անդամ<sup>65</sup>: Այս պաշտօնով ան կը շրջի Մարզուան, Թոգաղ, Նիքսար, Չիլէ, Ամասիա, Ենի Խան, Սեբաստիա, Գոչասար, Մալաթիա եւայլն: Ամենուր «նորանոր խմբեր ու մասնաճիւղեր կազմեցի, գրադարաններ, կանանց արհեստանոցներ հիմնեցի»: 1911-ի սկիզբը, մինչ ան կը գտնուէր Մալաթիա, որպէս գործիչ Տիգրանակերտ գտնուող Փարամագ կը կանչէ զինք: Երկու գործիչները շրջանին մէջ կ'ունենան քարոզչական-կազմակերպչական արդիւնաւետ գործունեութիւն: Տիգրանակերտի մէջ կը բացուի ակումբ-գրադարան: Ս.Վահագն կը շրջի Մատեն, Չնքուշ, Ձերմիկ, Վերա, Հայնի, Լըճէ, Ֆարսիս եւ այլ գիւղեր: Մերտիկի մէջ կը կազմակերպէ ասորիները: Փաստաբան ընկ. Սայիտի հետ արաբերենին կը թարգմանէ հնչակեան ծրագիրը՝ որ կը ցրուուի քլաւսիներուն: Փարամագի եւ Ս.Վահագնի գործակցութեան մասին Բենիամին Ժամկոչեան կը վկայէ. «Փարամագ՝ ո՛ր որ գնաց, հետը լոյս, ջերմութիւն, զարգացում տարաւ: Լըճէի մէջ ա՛յնքան գրաւեց ժողովուրդը, որ քիւրտերն անգամ իրենց միջեւ գոյութիւն ունեցող դատերուն համար իրեն դիմել սկսան՝ իր եւ ընկեր Վահագնի միջնորդութիւնը խնդրելով («միջնորդ» բառով պատմուածները չափաւորել կ'ուզէն, այլապէս ըրածները միջնորդութենէ շատ աւելի էին): Իր վախճանը հանրածանօթ է: Ս.Վահագն, համեստ հնչակեան գիւնուոր-գործիչ մը, միշտ յեղափոխական էր: Աւելի շիտակը, ընկերվարական շունչով լեցուն՝ ընկերացած էր Փարամագի»<sup>66</sup>: Տիգրանակերտէն ետք կ'այցելէ Ուրֆա, Խարբերդ, Արաբկիր եւ Պաֆրա:

1912-ին, օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն ընդառաջ, հակաիթթիհատական քարոզչութիւն կատարելու համար, ՍՂՀ Տաճկաստանի Վարիչ Մարմնին կողմէ լիազօր գործիչ կը նշանակուի Տիգրանակերտի եւ Խարբերդի նահանգներուն<sup>67</sup>:

Պալքանեան պատերազմի ժամանակ, շրջան կը բերուի մեծ թիւով պոլկար գերիներ: Հայերը կը զգուշանան յարաբերութեան մէջ մտնել անոնց հետ: Ս.Վահագն, կը կազմակերպէ անոնց հետ կապը, նիւթական օժանդակութիւն կը հասցնէ անոնց եւ ամենակարեւորը՝ գերիներուն գրած նամակները գաղտնօրէն կը ղրկէ



սկսած էին կամաւորագրութեան աշխատանքները: Ան, սկզբնական շրջանին համաձայն չ'ըլլար կամաւորական շարժման հետ, գտնելով թէ այդ էական դեր մը չի կրնար խաղալ պատերազմի արդիւնքին վրայ: Կ'առաջարկէ այլ ծրագիր մը, մարտական փորձուած ուժերով կազմել խումբ մը, որ լաւապէս զինուած վիճակով պատրաստ գտնուի Պաթումի մէջ ու հարմար պահու մը, Սեւ ծովու վրայով մոթորանաւով թըքական բանակին թիկունքը անցնելով, համարէ իր կազմը արեւմտահայ մարտական ուժերով ու հարուածներ հասցնէ թըքական բանակի թիկունքին: Թիֆլիսի ռուսական բանակի հրամանատարութիւնը իր հաւանութիւնը կու տայ այս ծրագրին: Կը մեկնի Սեւ ծովու ափեր: Կամաւորական շարժման մասին իր կարծիքները Պաթումի եւ Սոխումիի ընկերներուն կողմէ կը մերժուին: Կը վերադառնայ Թիֆլիս: Կամաւորական շարժման հնչակեան պատասխանատուներ Զաճի Նազիկէն եւ Նշան Միրաքեանէն կ'իմանայ, թէ Կուսակցութիւնը որոշած է իր հովանաւորութեան տակ կազմել առանձին կամաւորական զունդ մը. (այս որոշումը առնուած էր այն պատճառով, որ Ազգ. Բիւրոյի կողմէ գլխաւորուած կամաւորական համագգային շարժումը վերածուած էր կուսակցական քարոզչութեան): Ս.Վահագն կ'ընդդիմանայ նաեւ այս որոշման, գտնելով թէ կամաւորական շարժումը պետք է պահել իր համազգային ձեւին մէջ:

Միւս կողմէ սակայն, շատ մը կամաւորներ եւ ընկերներ կը պնդեն, որ ան որպէս փորձառու մարտիկ միանայ կամաւորական շարժման եւ իրենք կռուին անոր հրամանատարութեան տակ: Ս.Վահագն կը մեկնի Կարս եւ Սարիղամիշ. կը հանդիպի Զեռիին (Արշակ Գաֆաֆեան), մօտէն կը ծանօթանայ կամաւորական շարժման անցուդարձներուն, կը վերադառնայ Թիֆլիս, կը կազմէ կամաւորներու խումբ մը եւ Ալեքսանդրապոլի մէջ կը միանայ Վարդանի (Սարգիս Մեհրապեան) գլխաւորած Արարատեան զօրաջոկատին: (1915 Ապրիլին, ռուսական հրամանատարութիւնը, հայկ. կամաւորական Բ., Գ., Դ., եւ Ե. զունդերը միաձուլելով, ստեղծած էր ռուսական բանակի կազմին մէջ գործող Արարատեան զօրաջոկատը): Կը Նշանակուի հարիրապետ եւ պարենափոխարման պատասխանատու: Արարատեան զունդին հետ կը հասնի Վանի պաշարուած հայութեան օգնութեան: Կ'իջեանի իր գաղափարակից, Վանի ինքնապաշտպանութեան գերագոյն խորհուրդի անդամ Զրանդ Գալիկեանի տունը: Կը միանայ Վարդանի գլխաւորած ծիւղոր խումբին եւ կը հասնի մինչեւ Արտամետ եւ Դատվան: Մեծ ներդրում կ'ունենայ Վանի ընդհանուր նահանջը կազմակերպուած կատարելու գործին մէջ: Երեւանի մէջ կը վերամիանայ Վարդանի ծիւ-

լորներուն: Կ'իմանայ թէ արկածալից ճամբորդութենէ մը ետք Սեբաստացի Մուրատ (Խրիմեան) հասած է Թիֆլիս: Անմիջապէս կը մեկնի Թիֆլիս, ուր Ս.Մուրատ կը պարզէ իր ծրագիրը, որն էր կազմել 20-30 փորձուած մարտիկներով ծիւղոր խումբ, մտնել Արեւմտահայաստան եւ ռուսական սահմանէն այս կողմ բերել շարդերէն ճողոպրած բեկորները: Ս.Վահագն հաւանութիւն կը յայտնէ. սակայն Ազգ. Բիւրօն ծրագիրը չի հովանաւորեր: Ստիպուած, Ս.Մուրատ, Ս.Վահագն, Սեպուհի (Արշակ Ներսեսեան) եւ Կաթակ Առաքել (Տիգրան Ապաճեան) փոքրաթիւ խումբով մը կը մեկնին Պիթլիս, Անդրանիկին միանալու համար: Երկու ամիս կը ստանձնէ Անդրանիկի բանակին երկրորդ վաշտի հրամանատարութիւնը: Ռուսական բանակին հետ իրենք եւս կը նահանջեն մինչեւ Պաղ գիւղ: Կը մեկնի Կարին եւ Երզնկա: Օգտուելով այն առիթէն, որ ռուսական բանակը տակաւին Երզնկա կը գտուէր, Ս.Վահագն 1916-ի վերջերէն կը Նախածնունէ լեռները ցրուած հայու բեկորները հաւաքելու եւ փրկելու աշխատանքին: Այս նպատակին համար կ'անցնի Տերսիմի քիւրտերուն մօտ, անոնց հետ կը ստեղծէ բարեկամական կապեր ու կաշառքի միջոցով կ'ազատէ մեծ թիւով հայ որբեր: Այդ օրերուն, հայկական մամուլին մէջ լոյս կը տեսնէ «մէկ հայ ազատելու մէկ ոսկի» լոզունգով հանգանակութեան կոչը, որմէ գոյացած զումարը կը յատկացուի քիւրտերու մօտէն հայեր ազատելու նպատակին:

Կեդրոնատեղի ունենալով Չանձիկ գիւղը, Ս.Վահագն իր մօտ կը համախմբէ 7-15 տարեկան որբերը: Եղանակը խիստ ձմեռ ըլլալուն, որբերուն տեղափոխութիւնը կ'ուշանայ. ուստի, «նրանց այնուրեքն դաս եմ տալիս, մի կողմից զբաղում ունենալու միւս կողմից փոքրիկներուն լեզուն վարժեցնելու», կը գրէ ան: Այս աշխատանքը կը շարունակուի մինչեւ 1917-ի սկիզբը: Չմեռնալին խիստ պայմաններու տակ իր կատարած թափառումներուն պատճառով, Ս.Վահագնի ականջը կը ցրտահարուի: Սոսկալի ցաւերէն բուժուելու համար կը մեկնի Թիֆլիս: Դոս եւս բուժումը անհնար կ'ըլլայ: Ընկերներէն Պաղտասար Զորօլլեանին բարերարութեամբ կը մեկնի Մոսկուա եւ ամիսներ ամբողջ կ'ենթարկուի բուժման:

Բուժումէն ետք կը վերադառնայ Թիֆլիս, ուր գրեթէ ամենօրեայ յարաբերութեան մէջ կ'ըլլայ զօր.Անդրանիկին հետ:

1917 Մայիսին, Երեւանի մէջ կը մասնակցի Անդրանիկի նախագահութեան տակ կայացած Արեւմտահայ Ա. Զամազումարին, որպէս Սեբաստիոյ շրջանի պատգամաւոր:

1917 Նոյեմբերին երբ արդէն ռուսական բանակի համատարած նահանջը սկսած էր, Ս.Վահագն հեռագիր կը ստանայ Ս.Մուրատ-

տեն, հաւաքել 500 տղայ եւ գալ իր մօտ Երզնկա, թրքական բա-  
նակի յառաջխաղացքին դէմ դնելու համար: Ա.Վահագն Ազգ. Բիւ-  
րոյին մօտ աշխատանք կը տանի այս ծրագրին իրականացման  
համար: Ի գուր: Ազգ. Բիւրօն անճակած էր: Վերջինս, օգտագործե-  
լու համար Անդրանիկի հեղինակութիւնը, անոր գլխաւորութեամբ  
կ'ուզէ կազմել զօրաբանակ մը եւ դրկել ռազմաճակատ: Անդրանիկ  
չի ճանչնար Ազգ. Բիւրոյի գերակայութիւնը, կը դժկամի բանակ  
կազմել ու իրեն յատուկ տաքարիւնութեամբ կը հակադրուի անոր:  
Յանձնախումբ մը միջնորդութեան կ'երթայ Անդրանիկի մօտ, ուր  
Տոքթ. Չարեան Անդրանիկին կ'ըսէ. «Անդրանիկ, նկատի ունեցիր  
րոպէն: Ահա քանիտրորդ անգամն է հեռագիր կու գայ Մուրատն  
(Երզնկայէն): Ոչինչով կրցանք պատասխանել անոր: Այժմ, յուսա-  
հատ մեր ընթացքէն, Մուրատ դիմեր է Վահագն Նալպանտեանին,  
որ եկած է այսօր Ազգային Բիւրոյի մօտ»<sup>109</sup>... եւայլն: Ի վերջոյ Անդ-  
րանիկ կը յօժարի, եւ Չայաստանի Երկրապահ Չօրամատը կազմե-  
լու համար ճամբայ կ'ելլէ դէպի Երզրում: Ա.Վահագն կը միանայ  
Անդրանիկին: Կը հաստատուին Սարիղամիշ: Ճակատին վրայ կը  
տիրեր անիշխանականութիւն, խառնաշփոթութիւն եւ քաոս: Անդ-  
րանիկ եւս չի յաջողիր կարգ ու կանոն հաստատել: Միւս կողմէ, Ա.  
Մուրատ Երզնկայէն եւ Սեպուհ Բաբերդէն անընդհատ օգնական  
ուժեր կը պահանջէին: Չօրամատի կազմութեան անյետաձգելի  
գործերով Անդրանիկ կը ստիպուի վերադառնալ Թիֆլիս, ուրկէ ութ  
օր անց Ա.Վահագնին կը հրահանգէ Թիֆլիսէն նոր ճամբայ ելած  
144 տղաներն ու Սարիղամիշ գտնուող զինուորները առնելով  
մեկնիլ Կարս, կատարել նոր համալրում եւ անցնիլ Երզրում: Ա.  
Վահագն կը գործադրէ հրահանգը եւ 800 զինուորներով կը հասնի  
Երզրում: Այս միջոցին, Երզրումի զինուորական խորհուրդը, 4  
Փետրուարին կ'որոշէ նահանջել: Սա կը նշանակէր Ա.Մուրատի եւ  
Սեպուհի փոքրաթիւ խումբերն ու անոնց ապաւինած բազմահա-  
զար գաղթականութիւնը լքել անօգնական եւ միւս կողմէ ռուսա-  
կան բանակի հարուստ պահեստները ձգել թրքական բանակին:  
Ա.Վահագն կոպիտ ձեւով կ'ընդդիմանայ այս որոշումին: Անոր  
նպատակն էր ռազմաճակատին վրայ գտնուող իր բոււ մը զինա-  
կիցներուն անմիջական օգնութեան հասնիլ: Այս նպատակին  
համար, ան Երզրում հասած օրն իսկ, բաբերդցի 80 կամարներ  
կը դրկէ Բաբերդ՝ Սեպուհի օգնութեան, ապա, ինք եւս, սպայ Մելիք  
Փարսաղանեանի հետ 50 ձիաւորներու զուխը անցած, կը փութայ  
ռազմաճակատ: Բռնակապանի մէջ կը հանդիպի Սեպուհին, որ իր  
հիմնական ուժը ճակատին վրայ ձգած 14 ձիաւորներով կը շտա-  
պէր դէպի Երզրում, օգնական ուժեր բերելու համար: Այդ շրջանին

Ա.Մուրատ կը նահանջէր Դերճանէն, իր ճամբուն վրայ կրակի տա-  
լով ռուսական զօրապահեստները: Սեպուհ եւ Ա.Մուրատ հեռա-  
խօսով կը համաձայնին հանդիպիլ Գարսալըզգի մէջ եւ միասին  
երթալ Երզրում: Սեպուհ ռազմաճակատի հրամանատարութիւնը  
կը յանձնէ Մելիք Փարսաղանեանին: Վերջինս կը տատամսի նման  
պատասխանատու պարտականութիւն կը ստանձնել: Այս մասին  
Սեպուհ կը գրէ. «Մելիք Փարսաղանեան չէր ուզէր որ մեկնէի, չէ՛մ  
գիտեր ինչն'է: Ան գոհ չէր որ այս լեռան գլուխը կը մնար եւ պա-  
տասխանատուութիւն կը ստանձնէր: Եւ Մելիք Փարսաղանեան կը  
վախնար, կը կմկմար էր չէր ուզէր մնալ: Վահագն, այդ հինաւուրց  
ֆետային, բարբառեցաւ եւ ըսաւ անոր. «Գնա, մենք կը մնանք այս-  
տեղ եւ կը պաշտպանենք այս դիրքերը, եւ կը նահանջենք միայն  
այն ատեն, երբ հրաման կը ստանանք: Այս սրտապնդիչ խօսքերուն  
վրայ Մելիք Փարսաղանեան ռզելորուեցաւ եւ խոստացաւ մնալ ու  
կռուիլ թշնամիին դէմ եւ նահանջել այն ատեն, երբ տեղը պաշտ-  
պանել այլեւս անկարելի կը լինի»<sup>110</sup>:

Մինչ Ա.Մուրատ եւ Սեպուհ կը գտնուէին Գարսալըզգի մէջ, թրքա-  
կան լայնածաւալ յարձակումը կը սկսի: Ա.Վահագն, շատ դժուարին  
պայմաններու տակ, կը ստիպուի նահանջել Բռնակապանէ: Կոնկա-  
կոխ կոնսերով կը նահանջէ Կարքմա եւ ապա Երզրում: Մինչ այդ,  
17 Փետրուարին, Անդրանիկ դարձեալ փոքրաթիւ ուժով մը (6-700  
կռուող), Սարիղամիշէն կը հասնի Երզրում՝ կազմակերպելու հա-  
մար անոր պաշտպանութիւնը: Անդրանիկի հրամանով Ա.Մուրատ  
եւ Ա.Վահագն կ'երթան յառաջապահ դիրքերը, կատեցնելու համար  
թշնամին: Սակայն հայկական զօրքին մէջ բարոյալքումն ու դա-  
սալքութիւնը համատարած էր: Ա.Վահագն մեծ ճիգերով կը յաջողի  
մշցի 40 տղաներով պարիսպին դռները պաշտպանել: Փետրուար  
28-ին Երզրում կ'իյնայ: Ա.Վահագն կը բռնէ քալլ այլ քալլ նահանջի  
ճամբան: Կ'անցնի Չասան Դալէ, Սարիղամիշ, Բասեն եւ 170 ձիա-  
ւորներով կը պաշտպանէ Բասենի ճակատը: Թրքական զօրքին  
հարուածը կը կեղորոնակայ Դարադուրտի ուղղութեամբ, ուր տեղա-  
կայուած կանոնաւոր զօրքը կը նահանջէ առանց տեղեակ պահելու  
Ա.Վահագնը: Ա.Վահագն կ'իյնայ վտանգաւոր պաշարման մէջ:  
Միակ ելքը Արաքսը անցնիլն էր: 19 Մարտի այդ արկածալից նա-  
հանջին մասին գաղափար մը կու տայ Միսաք Թորլաքեան. «Սե-  
պուհի եւ Մուրատի զինուորներէն, մօտ 350 հոգի, կը գտնուէին  
Արազի միւս կողմը. Պաշքէօյ: Մուրատը անոնց դէպակարն էր նշա-  
նակած հնչակեան Վահագն Նալպանտեանը: Չիաւոր խումբ էր: ...  
Երբ շրջուեցանք լեռան միւս կողմը, թուրքերը սկսան տեղացնել  
արագահարուածի ու թնդանօթի գնդակներ: Ուղղակի կը մարդէն

ամեն ինչ: Ետ փախանք...:

Արագէն անցնելու ատեն խումբը տուա մօտ 30 գոհ: Բոլորն ալ խեղդուեցան: Անոնց կէսէն աւելի խտտորջուրցիներ էին: Հասանք Չատրուան գիւղը, ուր կը գտնուէին նաեւ Սեպուհի եւ Մուրատի խումբերը, որոնք եկած էին հակառակ կողմէն: Այստեղ միացանք ասոնց»<sup>172</sup>:

Ռազմաճակատին վրայ գործող հայկական զորամիւտները կը նահանջէն Կարս: Վերջին նահանջողը կ'ըլլայ Ս. Վահագն: Անոր ձիաւոր խումբին մուտքը Կարս կ'ըլլայ շքեղ եւ որոշ չափով ալ ցուցադրական՝ ժողովուրդին կորովը բարձրացնելու նպատակով: Այս մասին Սեպուհ կը գրէ. «Մեր Կարս հասնելէն երկու օր յետոյ, Սարիղամիշի հրամանատարութենէն իրաւունք ստացանք ետ կանչել մեր ձիաւորները եւ հանգստանալ: Հետեւաբար հրահանգ դրկեցինք Վահագն Նալպանտեանին, որ անմիջապէս Կարս գայ: Մեր հրահանգը ճշդութեամբ կատարեց Նալպանտեան եւ ձիաւորները մտան Կարս: Ամբողջ ժողովուրդը դուրս թափեցաւ տեսնելու զանոնք: Այս մուտքը տեղի ունեցաւ մեծ շուրջով եւ Վահագն Նալպանտեան արժանացաւ այնպիսի ծափահարութիւններու, որոնց նմանը երբեք տեսած չէր իր կեանքի օրերուն: Ձիաւորներու առջեւէն կու գար ան, հեծած զեղեցիկ նժոյգի մը վրայ, իսկ իրեն հետեւող երկու շարքով ձիաւորները, թիւով 350-էն աւելի, ահագին տարածութիւն կը բռնէին եւ ժամէն աւելի շրջեցան քաղաքը եւ ամէն կողմէ ծափերով եւ կեցցէներով դիմաւորուեցան: Ապա գացին եւ տեղաւորուեցան իրենց յատկացուած զօրանոցը»<sup>173</sup>:

Հայ կամաւորները կ'արժանանան բանակի հրամանատարութեան անարդար վերաբերմունքին: Անոնց մէկ մասը կը զինաթափուի: Խմբապետները կը մեղադրուին բանակի հրամանատարութեան հրահանգներէն դուրս գործած եւ թրջական գիւղերու վրայ անտեղի յարձակումներ կատարած ըլլալու մեղադրանքներով: Ամիսներ ամբողջ թրջական յարձակումին դիմաց միայնակ մարտնչած շատ մը հայդուկապետներուն վրայ այս մեղադրանքները ժխտական կ'անդրադառնան: Ս.Մուրատ եւ Սեպուհ կը մեկնին Թիֆլիս: Սա կ'ըլլայ նաեւ պատճառներէն մէկը, որ անառիկ թուացող Կարսը, 10 Ապրիլին իյնայ առանց դիմադրութեան: Ս.Վահագն, Անդրանիկի նամակին ընդամառջելով կը մեկնի անոր մօտ՝ Ալեքսանդրապոլ: Անդրանիկ, որ կը բողոքէր Տրապիզոնի բանակցութիւններէն, կ'առաջարկէ Ս.Վահագնին միանալ իրեն եւ անցնիլ Պարսկաստան: Ան, պարտականութիւն կու տայ Ս.Վահագնին այս մասին համոզել Ս.Մուրատն ու Սեպուհը՝ որոնք կը գտնուէին Թիֆլիս: Ս.Վահագն կը մեկնի Թիֆլիս:

Ճակատի խուճապը հասած էր նաեւ Թիֆլիս: Արեւմտահայ հանրաճանաչ հայդուկապետներուն ներկայութիւնը հոն, գրգռիչ եւ անբաղձալի կը նկատուի: Սեպուհ եւ Մուրատ չեն համաձայնիր երթալ Անդրանիկի մօտ: Հասարակական կարծիքին առջէ տեղի տալով Ս.Վահագն, Ս.Մուրատ, Սեպուհ, Ստեփան Ծաղիկեան, Տոքթ. Արշակ Պօղոսեան, Գրիգոր Ամիրեան իրենց հետ ունենալով Երուանդ Կաթանասեան եւ ուրիշներ, վարձու երկու ինքնաշարժերով կ'ապաստանին Վլատիկավկաս: Ապա, շոգեկառքով կը մեկնին Արմաւիր: Հոս եւս վիճակը վտանգաւոր եւ խառնակ էր: Ամբողջ տարածաշրջանը բաժնուած էր երկու մեծ բանակներու՝ պոլշեիկներ եւ սպիտակներ, որոնք փոխադարձ յարթանակներով անխնայ պայքար կը մղէին իրար դէմ: Սկիզբը միտք կը ծագի երթալ Յարիցին, այնտեղէն Մոսկուա, հանդիպիլ Լենինին «եւ Հայաստանի անուսով խնդրէին անկէ թոյլատրութիւն ու միջոցներ կազմելու մի բանակ, եւ միանալով Պաքուի ուժերուն, քայլէինք հարաւ-արեւմուտք եւ վերագրաւէինք այն հողամասերը զորս գրաւած էին թուրքերը»: Սակայն, «Յարիցիից Մոսկուա գնալ նշանակում էր սանդարամետի բաւիղներով անցնել, մահուան ուրուականը հալածել: Մուրատն ու Սեպուհը ընդմիջու հրաժարեցան ուղեւորութիւնից, Լենինի հետ տեսակցելու մտքից»<sup>174</sup>: Շուրջ մէկ ամիս կը մնան Յարիցին: Ի վերջոյ կ'որոշեն կապ պահել Պաքու, Ստեփան Շահումեանին հետ «որ օրուէ դիւրացներ մեր ծրագիրը եւ ա'լ պէտք չտեսնայինք Մոսկուա գնալու: Ուստի, որոշեցինք Գրիգոր Ամիրեանը եւ Վահագն Նալպանտեանը նամակներով դրկել Պաքու: Նկատի ունէինք մանաւանդ Վ.Նալպանտեանը, որ լինելով հնչակեան, իբրեւ թէ մօտէն ծանօթ էր Ս.Շահումեանին»<sup>175</sup>:

Այս նախաձեռնութիւնը անհիմն չէր: Ծիշդ այդ օրերուն, մէկ այլ հնչակեան գործիչ, վաղեմի մարտիկ Տիգրան Գագանճեան, Ս. Շահումեանի յանձնարարականով՝ յղուած Ստալինին, Հիւսիսային Կովկասի մէջ յաջողած էր վերագինել Թիֆլիսի մէջ մենշեիկեան իշխանութեան կողմէ զինաթափուած իր 500 զինուորները (կամաւորական 2. գունդի մնացորդացէն), որոնք Պաքու գալով, արդէն իսկ կը մասնակցէին Պաքուի պաշտպանութեան կռիւներուն<sup>176</sup>: Ուստի, Ս.Վահագն առանց տատանելու, Յունիսի սկիզբը Յարիցիէն Վոլկայի վրայով նստով կը մեկնի Աստրախան եւ անկէ Պաքու: Կը հանդիպի Ս.Շահումեանին եւ անորմէ կ'իմանայ Պաքուի քաղաքական եւ զինուորական դրութիւնը եւ կը բացատրէ իրենց մտադրութիւնը: Շահումեան անմիջապէս կու տայ 9 Յունիս թուակիր յանձնարարագիր մը, ուր կ'ըսուի. «Հայ հերոսներ՝ Մուրատը, Սեպուհը եւ ընկ. Վահագնը գալիս են ձեզ մօտ հայկական ուժերը

կազմակերպելու՝ Պաքուին օգնություն հասցնելու նպատակով: Խնդրում եմ ամենալայն աջակցությունը ցոյց տալ»<sup>177</sup>: Ս.Վահագն կը հանդիպի նաեւ Պաքուի Ազգ. Բիւրոյին եւ Դաշնակցութեան պատասխանատուներուն, որոնք այս ծրագրին համաձայն չեն ըլլար. (անոնք արդէն տրամադիր էին Պաքուն յանձնել անգլիական բանակին): Յունիս 18-ին Աստրախանի վրայով Ս.Վահագն կը վերադառնայ Յարիցին: Տրուած յանձնարարականներով կ'ընդկայանան պոլշելիկ ղեկավարներուն, որոնք սիրայօժար կ'ընդունին տրամադրել ամէն ձեւի օգնութիւն՝ մանաւանդ որ անոնք այս կապակցութեամբ արդէն ստացած էին Ս.Շահումեանի հեռագիրը: Սակայն, քաղաքացիական կռիւներուն ընդարձակման պատճառով ճամբաները կը փակուին եւ ծրագիրը կը ձախողի: Միւս կողմէ տարակարծութիւններ կը ծագին նաեւ այս խմբակի անդամներուն միջեւ: Ի վերջոյ, Ս.Վահագնի առաջարկով, վեց հոգի, որոնց մէջ Ս. Մուրատ եւ Սեպուհ կը մեկնին Պաքու:

Պաքուի մէջ Ս.Վահագն կը նուիրուի քաղաքի պաշտպանութեան աշխատանքին եւ սերտօրէն կը գործակցի Ս.Շահումեանի հետ: Օգոստոս 4-ի առաւօտեան, ճակատային գիծը կատարած այցելութեան ժամանակ, Ս.Մուրատ կը նահատակուի: Ս.Վահագն անմիջապէս կը շտապէ դէպքի վայրը: Կրկնակի ցաւը այն էր, որ Մուրատ զարնուելէն ետք գլտորած էր բլրուած վար եւ դիակը կը գտնուէր թշնամի դիրքին շատ մօտիկ: Դիակը ձեռք ձգելու բոլոր փորձերը կ'անցնին ապարդիւն: Միակ ճարը գիշերուան սպասելն էր: Սեպուհ, գիշերային այդ փորձը այսպէս կը նկարագրէ. «Յասալ ցանկալի ժամը: Թշնամի խարոյկները վաղուց հանգած էին: Յրամայեցի, որ շարժիք յառաջ: Եւ ահա նոյն րոպէին, Ստեփան [Ճահիկեան] ու Վահագն Նալպաստեան ըմբոստանալով՝ կտրուկ կերպով պահանջեցին, որ Տոքթ. Արշակ եւ ես ետ մտանք ու ջնկերանանք իրենց: Ինչո՞ւ եւ ի՞նչ նպատակ կար այս ըմբոստական պահանջին մէջ, անոնք մերժեցին բացատրել մեզի: Եւ այդ ըմբոստ ոգիները առաջացան դէպի պառկած հսկան: Ժամ մը հագիւ անցաւ, ահա հրացաններն սկսան նորէն պայթիլ, շուտով ուժեղ կռիւի մը փոխակերպուելու հաւանականութեամբ: Լեռ ու ձոր կը դողդար ու կը թնդար: Ամբողջ գիտնորութիւնը, կազմ ու պատրաստ, նոր պայքարին մասնակցելու կը սպասէր: Երկար չտեսց այս կացութիւնը: Մեր ըմբոստները երեւցան ու եկան, բայց ձեռնունայն: Անկարելի եղած էր մօտենալ Մուրատի դիակին, որուն ճիշդ մօտերը թշնամին դիրք բռնելով, անհնար կը դարձնէ մեր կողմէ որեւէ փորձ»<sup>178</sup>:

Այդ փնձակը կը շարունակուի երեք օր. որմէ ետք. - «Շահումեանը

կարգադրեց ընդհանուր յարձակողականի դիմելու ամէն ճակատների վրայ, այդ յարձակման ժամանակ միայն մեզ յաջողում է Մուրատի դիակը ազատել», կը գրէ Ս. Վահագն<sup>179</sup>:

Պաքուի անկումին, Ս.Վահագն գաղթական բազմութեան հետ նաւով կ'անցնի Էնզելի: Ապա, Տոքթ. Արշակ Պոզոսեանի հետ կը մեկնի Դագուի «անկէ Գամատանի վրայով Պաղտատ անցնելու համար: Անոնք գլխաւոր նպատակն էր որոնել իրենց կորսուած պարագաները եւ Մուրատի ընտանիքն ու զաւակները»: Կարճ ժամանակ անց լուրեր կը հասնին, որ «Տոքթ. Արշակը եւ Վահագն միասին մեկնէր էին Պաղտատ եւ Պաքուպա»<sup>180</sup>:

Չինադադարին, Ս.Վահագն կը վերադառնայ Պաքու, ապա Պաթում եւ ծովու ճամբով Կ.Պոլիս: Ան, կը մասնակցի Մեծ Եղեռի ընթացքին դաւաճան եւ լրտես հայերը՝ որոնք շարքի գիւք մատուող Գ.Արամեանցն ու Պէշիկտաշի թաղապետ Յարութիւն Մկրտիչեանը մէջտեղէն վերացնելու գործողութիւններուն<sup>181</sup>:

Մինչ այդ, քեմալական շարժումը սկսած էր եւ կիլիկահայութեան գոյութեան հարցը դարձած էր հրատապ խնդիր:

Ս.Վահագն կը մեկնի Ֆրանսա, կը հանդիպի գօր. Անդրանիկին եւ անոր կ'արաջարկէ իր ծառայութիւնը՝ եթէ Չորապաղը ստանձնէ Կիլիկիոյ հայկական ոյժերու հրամանատարութիւնը<sup>182</sup>:

1920-ի սկիզբը Ս.Վահագն կը մեկնի Ամերիկա ու կը լծուի Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան համար նուիրահաւաքի եւ կամաւորագրութեան աշխատանքին: Շատ չանցած, ամերիկահայ 20 կամաւորներու գլուխը անցած, ինք եւս կը փութայ Կիլիկիա<sup>183</sup>: Այս մասին «Պալքեսեան Մամուլ» կը գրէ. «Ընկ. Ս. Վահագն եւ ՍԴ Յնչակեան կամաւորներ Կիլիկիա կը մեկնին. (սեփական հետգիրը)՝ Լիւ Եոքթ, 13 Յուլիս 1920: Այսօր կամաւորներու առաջին խումբը՝ ընկ. Ս. Վահագնի հրամանատարութեան տակ եւ Մ[արգար] Զեպապճեանի ընկերակցութեամբ, Մարսելի վրայով Կիլիկիա մեկնեցաւ»<sup>184</sup>:

Ս.Վահագն կը հաստատուի Իզմիր, ուր կը հաւաքագրուին կամաւորները, ապա ծովու ճամբով Մերսին մեկնելու համար: «Իզմիրէն հետզհետէ հասան կամաւորական հինգ՝ «Մուրատ», «Չալլատ», «ժիրայր», «Պանդուխտ», եւ «Փարամագ» խումբերը: Ընկ. Ս. Վահագնի հետ պիտի ցամաքեն ուրիշ կամաւորներ: Երէկ քաղաքս (Մերսին. - Ե.Ճ.) ժամանեց Ամերիկայի շրջանի ՍԴ Յնչակեան կամաւորներու «Աւարեան» խումբը, ընկ. Մ. Զեպապճեանի հետ միասին: Ոգեւորութիւնը աւելի քան քաջալերական է: Խումբը նախ հանդիպում ունեցաւ տեղիս ընկերներուն հետ»<sup>185</sup>:

Իզմիր գտնուած միջոցին Ս.Վահագն կը մասնակցի ՍԴԳԿ Նի-

կոմիդիոյ շրջանի (Իզմիդ, Պարտիզակ, Օվանդզ, Արսւանպէկ, Ատապազար, Մեծ Գիւղ, Եւայլն) շրջանային պատգամաւորական ժողովին, ուր կը ընտարկուի ընտալական շարժման սպառնալիքը ու նկատի առնելով 1914-18 թուականներու ինքնբաշտպանութեան յաջող փորձը, կ'որոշուի կազմել մարտական ուժ եւ այդ վերստին ղեկ ընկ. Տօնիկ Տօնիկեանի հրամանատարութեան տակ <sup>[26]</sup>:

1921-ի սկիզբը Ս.Վահագն կուսակցական գործերով դարձեալ Փարիզ է <sup>[27]</sup>: Յաջորդ ամիս ան Իզմիդ է <sup>[28]</sup>: Տարեւերջին՝ Ռումանիա <sup>[29]</sup>: Իր գտնուած բոլոր շրջաններուն մէջ Ս.Վահագն կազմակերպչական (յատկապէս մարտական բնոյթի) աշխատանքներուն կողքին, կ'ունենայ նաեւ հրապարակախօսական ելոյթներ: Այդ ելոյթներուն ընթացքին ան կը պաշտպանէ Հայաստանի մէջ նորահաստատ խորհրդային իշխանութիւնը: Այս պատճառով ան կ'ամբաստանուի որպէս «պոլշեիկ»: Կը ստիպուի իտալական նաւով մը փախուստ տալ դէպի Պաթում: Կ'անցնի Խորհ. Հայաստան: Կը գործակցի նոր իշխանութիւններուն հետ: Ազգանազ Մռաւեանի եւ Ալեքսանոր Միասնիկեանի թելադրութեամբ քարոզչական աշխատանք կը տանի Ալակեազի փէշերուն ապաստանած սասունցի գաղթականներուն մօտ <sup>[30]</sup>: Երկար չի մար Խորհ. Հայաստան: Կ.Պոլսոյ վրայով կ'անցնի Ռումանիա, Պուկարիա, Յունաստան, Կիպրոս եւ ի վերջոյ Ֆրանսա՝ ուր կ'ամուսնանայ Փարիզ Վարեմեմեզեանի հետ:

Յաջորդ տարի, վերջնականապէս հայրենիք հաստատուելու մտադրութեամբ կը տեղափոխուի Հայաստան: Սակայն, «նա չկարողացաւ Խորհրդային Հայաստան մնալ եւ գործել, երբ Հայաստանի կառավարութիւնը բարեացակամութեամբ անոր հնչակեան հանգամանքին համար յարմար գործ մը տուաւ, զայն ղեկելով վարժարանի մը մատակարարի պաշտօնին վրայ (sic!), ուր կը գործէր նաեւ իր կիներ որպէս ուսուցչուհի: ... Դեռ ջանի մը տարիներ առաջ Խ. Հայաստանէն արտասահման փախչող Վահագն էր, որ կը գրէր մեր Ֆրանսայի պաշտօնական մարմնոյն թէ՛ «հազիւ հազ ազատեցայ իսկական դժոխքէն»: Իր այս նամակը արդէն իսկ լոյս տեսաւ իր ատենին «Նոր Երկիր»ի մէջ» <sup>[31]</sup>:

1927-ին, Ս.Վահագն վերստին ձեռք կ'առնէ թափառականի ցուպը եւ Հայաստանէն կ'անցնի Պարսկաստան: Թաւրիզի ընկերները «կազմակերպութիւնը զօրացնելու համար» <sup>[32]</sup> կ'առաջարկեն անոր մնալ Պարսկաստան: Սակայն ան կը նախընտրէ վերադառնալ Ֆրանսա: Այդ ճամբուն վրայ, Ս.Վահագն 1928-ին կ'այցելէ Լիբանան, ուր կը մնայ շուրջ տարի մը: Այս միջոցին, անոր ջանքերով 1 Ապրիլ 1929-ին կը զումարուի ՍՂՀԿ Լիբանանի Ա. Պատգամաւորական ժողովը, որն եւ կ'ընտրէ Լիբանանի Շրջանի առաջին

Վարիչ Մարմինը <sup>[33]</sup>:

1934-ին, Մարտչիյի մէջ կը մասնակցի ՍՂՀԿ 9-րդ Համագումարին:

Ս.Վահագն Մարտչիյի մէջ կ'ունենայ թշուառ եւ անօգնական ծերութիւն մը: Յառաջացեալ տարիքին եւ թեւիս կիսանդամալոյծ վիճակին պատճառով անոր կը մերժեն աշխատանքի ընդունիլ: Դժուարութեամբ կը ճարէ պահակութեան գործ մը (7 օր աշխատանք, օրական 14 ժամ, շաբաթական 450 ֆրանքի դիմաց): Ապրուստի հիմնական միջոցը կ'ըլլայ կնոջ համեստ աշխատավարձը, որ որպէս ուսուցչուհի կը ստանար Պոմոնի հայ եկեղեցւոյ կից գործող հայկական երկօրեայ դպրոցէն: Սակայն կուսակցական անհանդուրժողութիւնը, Ս.Վահագնի ընտանիքը կը զրկէ այդ համեստ եկամուտէն:

Համաշխարհային Բ. Պատերազմի տարիներուն ստեղծուած տնտեսական տագնապին պատճառով, Ս.Վահագնի ապրուստը աւելի կը դժուարանայ: Ֆաշիստական գրաւման տարիներուն, վրայ կը հասնի նաեւ «պոլշեիկ» ամբաստանութիւնը: Ս.Վահագն, իր յուշագրութեան մէջ Ֆրանսայի ազատագրութիւնը ֆաշիստական բռնագրաւումէն կը ներկայացնէ որպէս իր համոզումներուն յաղթանակը բռնատիրութեան դէմ:

Կարելի չէ յուզումով եւ ցաւումով չկարդալ, դժուարին այդ մթնոլորտին մէջ Ս.Վահագնի կողմէ թուղթին յանձնուած սա տողերը. «Այդպէս էլ այս տողերը գրողս, 40 երկար տարիներ հայ ժողովուրդին ազատագրութեան տաճարին առջեւ տանջուեցանք, նիւթական, բարոյական նոյնիսկ ֆիզիքականնիս վնասեցինք, ներկայիս փող չունինք, գործ չունինք, ամենայնմար սարդոն ենք դարձած այս մամոնայի ետեւից վագոդ հայերի աչքում»:

1947-ին, Ս.Վահագն իր կնոջ հետ, կարաւաններու առաջին խումբով կը ներգաղթէ Հայաստան:

Կը մահանայ 1948-ին:

Ս.Վահագնի գերեզմանը ցարդ կը մնայ անյայտ:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹՅՒՆ

- [1] «Յնչական Տարեգիրք», Բ. Տարի, Փրովիտես, 1932, «Ս.Վահագն (Կենսագրական Յակիրճ Նօթեր)»:
- [2] «Արարատ», 1963, Մարտ 2. Ա.Շղիկեան, «Փոթորիկին Դիմակալողը՝ Ընկ. Սեբաստացի Վահագն»:
- [3] Ս.Վահագնի յուշերը, որոնք կը կազմեն չորս ձեռագիր տետրեր եւ անշատ էջեր, կը գտնուին հնչական արխիվին մէջ:
- [4] «Արարատ», 1963 Մարտ 3:
- [5] «Կոհակ», 1911 Մարտ 13/26:
- [6] Արի Թօփուզխանեան, «Յուշարձան Ոսուցչապետ Բենիամին Ժամկոչեանին», Երեւան, 2010, էջ 159:
- [7] «Նոր Աշխարհ», 1912 Օգոստոս 28/10 Սեպտեմբեր:
- [8] «Arsiv Belgeleyire Ermeni Faaliveleri 1914-1918», Դ.հ.ս., Ankara, 2006, p. 210-212:
- [9] Դ. Արամեանց, «Անկախ Դայաստան», Կ.Պոլիս, 1919, էջ 19:
- [10] Միջայլէ Վարանդեան, «Մուրատ», Պոսթոն, 1931, էջ 254:
- [11] Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Ա. հ.ս., Պոսթոն, 1925, էջ 501-502:
- [12] Միսաք Թորաքեան, «Օրերու Յետ», Թեհրան, 1982, էջ 395-396:
- [13] Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Բ. հ.ս., Պոսթոն, 1929, էջ 100-101:
- [14] «Յայրենիք», 1952 Յուլիս, թիւ 7. Ե.Խաթանասեան «Մուրատի եւ Սեպուհի Յետ». Նաեւ Սեպուհ... Բ.հ.ս., էջ 144:
- [15] Սեպուհ... Բ.հ.ս., էջ 147:
- [16] Խիկար Բարսեղեան, «Մարքսիզմի Տարածումը Դայաստանում», Բ.հ.ս., Երեւան, 1975, էջ 418:
- [17] «Յուշարձան Նուիրուած ՍԴԿ Զառասանմանին», Փարիզ, 1930. Ս.Վահագն, «Ինչպէս Ինկաւ Պաքոն»:
- [18] Սեպուհ... Բ.հ.ս., էջ 180-181:
- [19] «Զառասանմանկ...». Ս.Վահագն, «Ինչպէս Ինկաւ Պաքոն»:
- [20] Սեպուհ... Բ.հ.ս., էջ 180-181:
- [21] «Յնչական Տարեգիրք», Բ. Տարի, 1932. «Ս.Վահագն (Կենսագրական Յակիրճ Նօթեր)»:
- [22] Աւետիս Թերզիպաշեան, «Անդրանիկ», Փարիզ, 1942, էջ 390-392:
- [23] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Յնչական Կուսակցութեան», Բ.հ.ս., Պէրլուր, 1963, էջ 92 եւ 95:
- [24] «Պալքանեան Մամուլ», 1920, Օգոստ. 1:
- [25] «Պալքանեան Մամուլ», 1920, Յուլիս. 2:
- [26] «Զառասանմանկ...». Ս.Վահագն, «Ինչպէս Ինկաւ Պաքոն»:
- [27] Ս.Վահագնի Փարիզէն գրած 1921 Յունուար 2 եւ Յունուար 19 Թուակիր նամակները ՍԴԿ Եգիպտոսի Գործադիր Մարմնին: Յնչ. արխիւ:
- [28] Ս.Վահագնի Իզմիրէն գրած 1921 Փետրուար 15 եւ Ապրիլ 25 Թուակիր նամակները ՍԴԿ Եգիպտոսի Գործադիր Մարմնին: Յնչ. արխիւ:
- [29] Ս.Վահագնի Ճորճուկայէն գրած 1921 Դեկտ. 6 Թուակիր նամակը ՍԴԿ Եգիպտոսի Գործադիր Մարմնին: Յնչ. արխիւ:
- [30] «Յնչական Տարեգիրք»... էջ 246:
- [31] «Երիտասարդ Դայաստան», 1935 Սեպտ. 28. Մ.Աւետիսեան, «Սեր Պատասխանը»:
- [32] Յայրենիք», 1950, Յունուար, թիւ 1(288). Գրիգոր Շղիկեան, «Փաստաթղթեր Յնչականներու Գործունէութենէն», (Ս.Վահագնի նամակը Գ.Շղիկեանին, Թարիզ, 1927, Սպտ. 12):
- [33] «Արձանագրութիւն-Շրջաբերական ՍԴԿ Լիբանանի Շրջանի Բ. Պատասխանողական ժողովի», Պէրլուր, 1931 Մայիս 13: Յնչ. արխիւ:

## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃԱՆԿԻՒԼԵԱՆ (ԿԱՅԾԻԿ)

Մեծ Եղեռնի թանկագին նահատակներու շարքին կը գտնուի հայ ազգային-ազատագրական պայքարի առաջին սերունդի խիզախ ներկայացուցիչներէն Յարութիւն Ճանկիլեան:

Յ. Ճանկիլեան ծնած է Վան, 1856-ին:


Դպրոց կը յաճախէ շատ կարճ: Կը զբաղի մանրապաճառութեամբ:

Երիտասարդ տարիքին կ'անդամակցի Վանի մէջ գործող «Սեւ Խաչ» կազմակերպութեան: «Սեւ Խաչ»ը թրքական բռնատիրութեան դէմ հայ ժողովուրդի ազատագրական ձգտումները արտայայտող առաջին կազմակերպութիւններէն էր, որուն նպատակն էր «*ժողովուրդին մէջ ինքնապաշտպանութեան ոգին տարածել, իր իրաւանց տեր ընել եւ իբր մարդ ապրիլ*»<sup>[1]</sup>:

1884-ին, իր ետին ձգելով կինն ու երկու որդիները, Յ.Ճանկիլեան կը պանդխտէ Կ.Պոլիս: Կը զբաղի նպարավաճառութեամբ:

Կ.Պոլսոյ մէջ կը շարունակէ պահել Վանէն սկսած իր սերտ յարաբերութիւնն ու գործակցութիւնը Խրիմեան Յայրիկին հետ:

1888-ին, Գրիգոր Ամալարճեանի միջոցաւ կը ծանօթանայ Մեծն Մուրատին եւ մաս կը կազմէ Կ.Պոլսոյ մէջ գործող յեղափոխական



կազմակերպութեան: «Այս խումբը այդ ժամանակի Պոլսոյ ամենէն գործունէայ եւ եռանդուն խումբն էր: Այս շրջանակն էր որ իր մէջ ունէր Հայաստանի գրեթէ բոլոր գաւարներէն Պոլիս գտնուող ընկերներ եւ անոնց միջոցով յարաբերութիւններ հաստատած էր Հայաստանի գանազան քաղաքներու յեղափոխութեան ընդունակ երիտասարդութեան հետ»<sup>92</sup>: Կազմակերպութեան ղեկավար մարմինը Վարիչ Մարմինն էր, որ կը գործեր տասնապետական դրութեամբ: Ան ունէր շուրջ 15 խմբակ: Կազմակերպութիւնը մասնաճիւղեր ունէր Վանի, Մուշի եւ Մեքաստիոյ մէջ:

Այս խումբի աշխատելաձեւին եւ օրուան հոգեբանութեան մասին Յ.Ճանկիւլեան կը պատմէ մանրադէտ մը: Օր մը, ինք եւ Մեծն Մուրատ անյետաձգելի գործով մը պէտք է տեսակցէին Խրիմեան Հայրիկին հետ: Օրը կ'ըլլայ սոսկալի անձրեւոտ: Երկու ընկերները մինչեւ որոշ տեղ մը կը քայլեն տեղատարափին տակ: Սակայն, Սկիւտարի գառնիներէն մինչեւ Ս. Խաչ եկեղեցի ցեխոտ ճամբայն քայլելը անհնար կ'ըլլայ: «Գիտէիք ամենէն դիւրին միջոցը կառքով բարձրանալն էր, բայց կը խորհէիք որ եթէ երբեք մեր ընկերներէն եւ համակիրներէն մէկը մեր կառքով երթալնիս տեսնէր, չէ՞ որ պիտի գայթակղէր, թէ Վարիչ Մարմնոյն անդամները կառքով կը պտըտին: Թերեւս այդ կառքի դրամը մենք մեր անձնական հաշիւէն տուած պիտի ըլլայինք, բայց խնդիրն հոն էր, որ պիտի կարծուէր թէ միշտ շռայլ կերպով կը ծախսենք եւ կ'ապրինք»<sup>93</sup>: Սակայն ճարահատ, ընկերները կը ստիպուին կառք նստիլ: «Հայրիկի սենեակէն ներս մտած միջոցնիս, անոր առաջին գործը եղաւ կօշիկներու նայիլ ու ըսելը.- Այսօր ներելի էր ձեզ կառք նստիլ. եթէ այս օրին չի նստէիք, պիտի կշտամբէի ձեզ»:

Վարիչ Մարմինը բանակցութեան մէջ կը մտնէ «Հայրենիք» օրաթերթի շուրջ համախմբուած մտաւորականներու խումբը ներկայացնող Արփիար Արփիարեանի եւ Լեւոն Բաշալեանի հետ՝ միացման առաջադրանքով: Վերջիններս, մտաւոր պատրաստուածութեամբ կը գտնուէին աւելի բարձր մակարդակի վրայ, ուստի կը հաւակնէին կազմակերպչական ամբողջ մեքենան իրենց ձեռքը կեդրոնացնել, որուն համար սակայն չունէին համապատասխան հմտութիւն եւ անձնագիտութեան ոգի: Միաձուլման փորձը կը ձայնորդէ:

Վարիչ Մարմինն հիմնական գործը կը դառնայ Մարսելյ՝ Մկրտիչ Փորթուկալեանէն «Արմենիա»ի թիւեր եւ ազգասիրական գրականութիւն ստանալ, զանոնք ցրուել ու փոխարժէքը դրկել Մարսելյ: Աշխատանքի այս շրջագիծը Վարիչ Մարմինն չի բաւարարէր: Անոնք փոքր տարրողութեամբ կարգ մը գործնական առաջարկներ կը ներկայացնեն Մ.Փորթուկալեանին: Օրինակ, «կարելոր ձեռնարկ»ի մը համար 20 ոսկի յատկացնել Վանի մասնաճիւղին, կամ նիւթապէս օժանդակել որ Մուշի շրջանէն չորս կամաւոր երիտասարդներ

մեկնին Յունաստան, յունական բանակին զինուորագրուելով ձեռք բերեն զինավարժութիւն եւ վերադառնալով Մուշ՝ այդ ծառայեցնէն երիտասարդութեան պահանջներուն: Նման առաջարկները կտրուկ ձեւով կը մերժուին Մ.Փորթուկալեանի կողմէ, որուն պատճառով անոր հանդէպ Վարիչ Մարմինն մօտ կը յառաջանայ անվտարահուրթիւն:

Յարաբերութիւններու այս մթնոլորտին մէջ, 1890 Մայիսին, որպէս հնչակեան գործիչ Կ.Պոլիս կու գայ Շմաւոն (Գաբրիէլ Կաֆեան): «Կաֆեանը, Պոլիս գալով, նոյնպէս դիմել էր Խրիմեանին, եւ սա նրան ծանօթացրել էր վանեցի Յարութիւն Ճանկիւլեանի հետ, որը յիշեալ Վարիչ Մարմնի ամենաեռանդուն անդամն էր ու նրան ոգի ներշնչողը: Կաֆեանը մի կատարեալ, վաղուց սպասուած Մեսիա է հանդիսանում Ճանկիւլեանի ու իր ընկերների համար»<sup>94</sup>:

Յ.Ճանկիւլեանի միջոցով Շմաւոն կը ծանօթանայ Վարիչ Մարմնի անդամներուն ու անոնց կը ներկայացնէ Հնչակեան Կուսակցութեան ծրագիրը: Կատարուած բանակցութիւններէն ետք, Կ.Պոլսոյ կազմակերպութիւնը իր Վարիչ Մարմնի լրիւ կազմով, տասնեակներով եւ շրջանային մասնաճիւղերով ամբողջապէս կը մտնէ Հնչակեան Կուսակցութեան մէջ: Վարիչ Մարմինը կը դառնայ Կ.Պոլսոյ Հնչակեան Կուսակցութեան առաջին ղեկավար մարմինը:

Շմաւոնի Կ.Պոլիս գտնուած միջոցին, հոն կ'այցելեն հնչակեան գործիչներ Յակոբ Մեղաւորեան, Ալեքսանդր Ռոստոմեան, Ռ.Խանազադեան եւ Ռաֆայէլ Մովսեսեան, որոնք Վարիչ Մարմնին հետ տարած համատեղ եւ անդուլ ջանքերուն շնորհիւ կուսակցական ցանցը կ'աճի ու կ'ընդլայնի մեծ թափով:

Վարիչ Մարմինն ու դուրսէն եկած գործիչները կիսանաբար կ'որոշեն, որպէս առաջին յեղափոխական ելոյթ, կազմակերպել ժողովորային ցոյց մը, առ ի բողոք գաւառի հայութեան անտանելի կացութեան: Տեսնագին կը նախապատրաստուի 1890 Յունիս 15-ի Գում Գաբուի յայտնի ցոյցը: Այդ Կիրակի, ցուցարարները պէտք է հաւաքուէին Մայր եկեղեցին. երիտասարդ մը պէտք է ընդմիջէր եկեղեցական արարողութիւնը եւ խորանէն կարդար նախապէս պատրաստուած Պահանջագիրը: Եկեղեցին դուրս գտնուող ժողովուրդին մէջ պէտք էր ցրուել նոյն Պահանջագրին օրինակները, որ տարբեր անկիւններէ պէտք է ընթերցուէր բարձրաձայն: Ապա, այլ երիտասարդ մը, Ալեքեան Պատրիարքին ընկերակցութեամբ եւ իր ետին ունենալով ցուցարար բազմութիւնը, պէտք է Պահանջագիրը տանէր Սուլթանական Պալատ:

Տարակոյս չկար, որ ցոյցին գլխաւոր դերակատարները եղող երկու երիտասարդներուն մահ կը սպառնար: Տոյցի նախապատրաստական վերջին ժողովին պէտք է Վարիչ Մարմնի կազմէն երկու հոգի վիճակ ձգելով ստանձնէին այդ դերերը: Ժողովին մասնա-

կից Ռ.Խանազատ կը գրէ. «Կարիչ Մարմինն էլ ամբողջովին չպիտի մասնակցէր ցոյցին (իսկ դուրսէն ելած գործիչները ընդհանրապէս հեռանալին Կ.Պոլսէն - Ե.Ճ.), այլ՝ երկու հոգի միայն պիտի ընտրուէին որպէս ցոյցի ղեկավարներ ու կարգադրիչներ: Երբ հարցը եկաւ այդ երկու հոգու ընտրութեան, Յ.Ճանկիլեանը, որը մի շատ ջղային ու գործին խիստ նուիրուած անձնաւորութիւն էր, սկսեց խնդրել որ անպատճառ իրան ընտրենք, ասելով, թէ միեւնոյնն է, ինքը պիտի չկարողանայ իրան զսպել եւ անպայման գործի կը խառնուի: Այդպիսի թախանձագին խնդրանքից յետոյ ժողովը հարկադրուած եղաւ երկու ղեկավարներից մէկը ընտրել ճանկիլեանին»<sup>91</sup>:

Յ. ճանկիլեան Նոյն պահը կը նկարագրէ իր հոգեկան ապրումներուն ընդմէջէն, գրելով. «Տրուած դադարը ուրիշ ժողովներու դադարներուն բնաւ չէր նմաներ. ամէն ոք լուռ ու մուսջ կը մտածէր: Մենեակին մէջ գերեզմանային լռութիւն մը կը տիրէր, ճանճի թռիչք լսելու աստիճան: Կարծիքի կամ գաղափարի փոխանակութիւն չկար: Ես արդէն վաղուց հաշտուած ու համաձայնած էի սրտիս հետ, հետետաքար, այս մասին չէ որ կը մտածէի, կը խորհէի թէ եթէ երբեք վիճակը ինծի չէլլէր, չէ՞ որ խղճիս հետ չպիտի կարենայի հաշտուիլ եւ խիղճս զիս պիտի տանջէր, չէ՞ որ վիճակը քաշուելէ վերջ առարկութիւնս հակատիսիբլինական պիտի ըլլար, ուստի, խղճիս ձայնը, հոգւոյս անձկութիւնը եւ սրտիս տրոփումն իրար խառնած կը մղէին զիս տիրող գերեզմանային լռութիւնը խզել: Արդէն տրուած դադարն ալ լրանալու մօտ էր: Խօսք ժողովի ատենապետին եւ ընկերներուն ուղղելով ըսի. - Ընկերներ, շատ կը փափաքիմ ցոյցին մէջ դեր մը ունենալ: Եթէ երբեք զիս յարմար կը նկատէք եւ եթէ կարելի է առանց վիճակ քաշելու այդ դերերէն մէկը ինծի տաք, ասիկա պարզ առաջարկ մ'է, որ դեռ ժողովը չբացուած կ'ընեն: Ատենապետն իսկոյն ժողովը բացաւ եւ առաջարկս դրաւ ժողովին: Ժողովը միաձայնութեամբ ընդունեց առաջարկս...: Ես այլեւս ուրախ էի, քանի որ նպատակիս հասած էի, իբր հայ ժողովուրդի յետին եւ աննշան մէկ զաւակը, ազգիս եւ հայրենեացս հանդէպ ունեցած պարտականութիւնս կատարելու ժամը հասած էր այլեւս»<sup>92</sup>:

Ցոյցին միւս առաջնորդը ըլլալու համար կամաւոր իր թէկնածուութիւնը կ'առաջարկէ Մուրատ, որ նոյնպէս կ'ընդունուի:

Ցոյցը կը կայանայ, սակայն այն դուրս կու գայ իր ծրագրուած հունէն: Աջըգեան Պատրիարք կը մերժէ միանալ ցուցարարներուն դէպի Սուլթանական Պալատ երթին, փախուստ ու տայ ու կը թաքնուի: Ճանկիլեան կը հետապնդէ գայն: Տեղի կ'ունենայ իրարանցում եւ տուրուովբոց, որուն ընթացքին Յ.Ճանկիլեան Պատրիարքարանին դահլիճի պատէն վար կ'առնէ օսմանեան թուրքան (պետական զինանշանը) եւ Սուլթան Զամիտի նկարը, ու գանոնք

ուղբին տակ առնելով կը կոտորտ: «Այս թուրքան նուիրողը Դայաստանի մէկ ծայրէն միւսը հայոց արիւնք վազցնել կու տար, ինչո՞ւ ուրեմն այդ թուրքան հոն մնար: Ամբիջապէս պատէն վար քաշեցի եւ ջարդ ու փշուր ըրի: Գլուխ գործոց ըլլալով, Մուսայի նման արիւնկզակ ոճրագործ մը «անպատիժ պիտի մնայ» իրաման տուող Զամիտի պատկերն այլեւս ինչո՞ւ պիտի մնար Մուսայէն խողտողուած հայերու Պատրիարքարանին դահլիճին մէջ, ու մէկ ցատկուով պատէն վար առի եւ բզիկ-բզիկ ընելով դրան ետեւ ձգեցի»<sup>93</sup>:

Սպանալիքի տակ Աջըգեան Պատրիարք կը յօժարի առաջնորդել ցոյցը: Յ.Ճանկիլեանի հետ ան կը նստի կառք՝ դէպի Պալատ: Թերթկան բանակը կը միջամտ: «Յանկարծ փողոցը կռուի դաշտ դարձաւ. մերինները դիմադրել սկսած էին, զօրքեք իրենց իրացանները կը գործածէին, իսկ մերինները իրենց ատրճանակները: Երկուքին մէջ սոսկալի կռիւ մը սկսած էր. մերիններն այն ատեն սկսան կատաղի կերպով զօրքերուն վրայ կրակել, երբ տեսան որ վանեցի Մանուկ Նալպանտեան զօրքերու սուիներուն տակ անկենդան գետին փռուեցաւ»<sup>94</sup>: Մանուկին կողքին կ'իյնան Յովհաննէս Դումրիկեանը (տասնապետ) եւ Արմենակ Նազարեթեանը: Ցուցարարներուն եւ զօրքին միջեւ վիրաւորներուն թիւը կ'անցնի 30-ը: Կը սպաննուի նաեւ յայտնի լրտես Ասորի Կարապետը:

Յ.Ճանկիլեան կը ձերբակալուի ցոյցի պահուն: Մեծն Մուրատ մէկ տարի անելի փախստական մնալէ ետք կը յաջողի անցնիլ ժընեւ՝ Կուսակցութեան կեդրոնատեղին:

Շուրջ ամիս մը տեսած հարցաքննութեան ընթացքին, Յ.Ճանկիլեան կը համոզուի որ Աջըգեան Պատրիարքէն սկսեալ մեծ թիւով լրտեսներ կը գործեն կղերական դասին մէջ՝ Սիմոն Եպիսկոպոս, Մամբրէ վարդապետ, Տաճառ վարդապետ, Սուրիաս քահանայ, լուսարար Խաչիկ, եւայլն, որոնց կողքին սովորական քաղաքացի լրտեսներ՝ փաստաբան Խաչիկ Պետրոսեան, Անաստաս, Յարութիւն Նաթուրեան, Արմենակ Դայկունի, եւայլն: Ան իր մեկուսարանէն կը յաջողի կապ պահել դուրսի ընկերներուն հետ եւ այդ մասին տեղեակ պահել անոնց: Յաջորդող ամիսներուն, այդ լրտեսներէն գրեթէ բոլորը կ'ենթարկուին ահաբեկչութեան: Այս մասին Մեծն Մուրատ իր թաքստոցէն Յ.Ճանկիլեանին կը գրէ. «Մեծ հարսնիքի մը հանդէսը տօնելու կը պատրաստուիք: այնչափ փառաւոր ու սքանչելի հանդէսի մը ներկայ չըլլալու համար շատ կը ցաւիք: Միաձայնութեամբ որոշեցինք ձեր մասին վկայութիւն տուողները տեռորի ենթարկել անպատճառ, եւ երկուրէն գործի սկսած ենք: Մատնիչներն անպատիժ պիտի չմնան, ապահով եղիր: Գործը եւ մեր ասպարէզը՝ ցոյցին արթիւ մեր սպասածէն անհամեմատ շատ անելի յառաջ գացած է, այնպէս որ ընկերները չեն բա-

ւեր տրուած եւ խնդրուած ժամադրութեանց երթալու եւ հասնելու: Խուճերն ու կազմապերպութիւնն ահագին ծաւալ ստացած են: Արփիարն իր խումբով եկաւ (խօսքը Ա.Արփիարեանի գլխաւորութեամբ «Չայրեմիք» թերթի շուրջ համախմբուած մտաւորականներուն մասին Է - Ե.Ը.), տրամադրելի ընելով նաեւ իրենց դրամները: Շատ ու շատ զբաղեալ ենք, գիշեր ցերեկ դադար չունինք: Գաճի Պապա (Խրիմեան Չայրիկի կեղծանունը - Ե.Ը.), Մեմֆու Էֆ. (Տոքթ. Թիրեաքեանի կեղծանունը - Ե.Ը.) մասնաւորապէս կը բարեւենք եւ, իսկ ես բոլոր ընկերներուս կողմէ ծակատեղ կը համբուրեմ»<sup>101</sup>:

Դուրսի ընկերներուն յղած իր երկտողներն մէկուն մէջ Յ.Ճանկիւլեան կը գրէ. «Եթէ հայ ժողովուրդը պիտի հասնի իր բաղձանքին, թող իմ մարմինը բաց օդին մէջ գազաններու կեր դառնայ, իսկ եթէ ո՛չ, կը ցաւիմ որ պիղծ ձեռքեր շղթայուած՝ բանտին մէջ պիտի մեռնիմ: Չիս կորստեան մատողները եղան Տաճատ վարդապետի գրութիւնը, Տեր Սուքիասի եւ լուսարարի ստորագրութիւնները: Մնաք բարեա՛ւ...»<sup>102</sup>:

Յ.Ճանկիւլեան կը դատապարտուի մահուան: Սակայն, ռուսական դեսպանին միջամտութեան շնորհիւ (որպէսզի մահապատիժին գործադրութիւնը հայութեան մէջ նոր գրգռութիւններ յառաջ չբերէ), այդ կը փոխարինուի ցկեանս աքսորի, Աքիայի բերդին մէջ (հիւսիսային Պաղեստին):

Աքիայի բանտը Օսմ. Կայսրութեան տարածքին ամենն տաժանելի բանտերն մէկն էր: Յ.Ճանկիւլեան այդ կը համեմատէ դժոխքի հետ: Աքիայի բանտարկեալներէն Պետրոս Տոնապետեան այդ կը նկարագրէ այսպէս. «Մեր ականջներու մօտէն եւ մեր դէմքի վրայէն կը թզան զգուշի ճանճեր, որոնք իրենց այլատեղ ակտիւութեամբ տեղույս մթնոլորտի կենդանի գարդերը կը կազմեն: Դացի եւ քաղցրեղենների վրայ մէկ վայրկեանի մէջ այնքան ճանճեր կը հաւաքուին, որ պարզապէս չես կրնար իմանալ, թէ այդ ճանճամած մակերեւոյթի տակ ի՛նչ բան կը գտնուի: Մոծակները նորածին մորեխի մեծութիւն ունեն եւ իրենց սուլումէն սարսռալի դող կ'անցնի՝ երակներին մէջէն: Լուերը այնպիսի ահռելի չարչարանք կը պատճառեն, որ պիտի կարծես չէ կրած եւ Գրիգոր Լուսաւորիչը հոր Վիրապի մէջ: Երեւակայի մարդածեւ մի մեքենայ, որ ասեղներից բաղկացած է եւ մարդն այդ մեքենայի մէջ դնելով՝ ամէն կողմէն կը ծակծկեն մարմինը գարիւրելի քստումներով,- ճիշդ այնպէս են լուերի խայտումները: Մեր մարմնի մաշկերը կորուսած են իրենց բնական գոյնը: Զաղաքական յանցաւորները ոչ ուրեք այնչափ ծայրայեղ զոհանքների ենթարկուած են, որչափ Աքիայում»<sup>103</sup>:

Այս տաժանակիր պայմաններուն մէջ Յ.Ճանկիւլեանի կողքին Աքիա կը մէկտեղուին հնչակեան յեղափոխականներ Պետրոս Մարիմեան, Գրիգոր Գլինճեան, Պետրոս Տոնապետեան, Միսաք Տազես-

եան, Կարապետ Կեօքտերլեան, Նիկողոս Պալպալեան, Մխիթար Սեֆերեան (Միս Շահէն) եւ ուրիշներ: Կ'ըլլայ պահ մը, երբ Աքիայի հայ բանտարկեալներուն թիւը կ'անցնի 80-ը: Յ.Ճանկիւլեան հայ քաղաքական բանտարկեալներուն մէջ կը դառնայ կեդրոնական դէմք մը: Ան գաղտնաբեր կը նամակակցի Խրիմեան Չայրիկի, Անտիոս Լազարբեկեանի, Արամ Անդրապաշեանի եւ Կ.Պոլսոյ Զնչակեան Վարիչ Մարմինի հետ: Գաղտնի ձեւերով կը ստանայ նաեւ «Զնչակ» եւ «Դրօսիկ»:

Աքիայի բերդարգելակայանը իւրօրինակ այցելութիւն մը կու տայ Մարո Լազարբեկեան: Մարո Աթենքէն ծովու ճամբով կը հասնի Պէյրութ. անոր կ'ընկերանայ ապագային Չէյթունի ապստամբութեան ղեկավար Աղասի (Կարապետ Թուրսարգիսեան), որ Պէյրութէն յետոյ ճամբան կը շարունակէ դէպի Կիլիկիա: Մարո կը մեկնի Գայֆա: Մարոյի նպատակն էր այցելել Աքիայի բանտարկուած ընկերներուն, յատկապէս Յ.Ճանկիւլեանին, եւ եթէ հնարաւոր ըլլայ կազմակերպել անոր փախուստը: Երկու գաղափարակիցները անձնապէս ծանօթ չէին իրարու: Մարո բերդարգելարան կ'այցելէ ռուսական հիւպատոսին եւ փոխ-հիւպատոսին ընկերակցութեամբ: Վերջինս կը խնդրէ Յ.Ճանկիւլեանէն որ իրեն ընկերակցող օրիորդը պտըտցնէ բանտին տարբեր մասերը: Շարունակելով պատմել դիպուածը, Յ.Ճանկիւլեան կը գրէ.

Չզուշաւոր խօսակցութենէն եւ փոխձանօթացումէ մը ետք Յ.Ճանկիւլեան խստի կը պատուիրէ. «Ի սեր Աստծոյ, շուտով հեռացէք այս քաղաքէն, եթէ ոչ կը մատուցիք ու կը ձերբակալուիք եւ կը չարչարուիք: Կը պաղատիմ, հեռացէք, այլեւս բաւական է որչափ տեսնուեցանք. «Չուռնան» («Զնչակ» թերթին կեղծանունը - Ե.Ը.) բռնուեցաւ եւ ատոր համար վիճակ այսքան ծանրացաւ, եթէ շուտով չհեռանաք՝ պիտի ձերբակալուիք, եւ երբ ձերբակալուիկիդ լսեմ՝ վիճակս անելի գէշ պիտի ըլլայ: Մարո, գոնէ ինձի մեղքիդ եւ շուտով հեռացիր:

- Մարոն դողալ սկսաւ»<sup>104</sup>:

Մարո սակայն կը յամենայ վերջնականապէս վերադառնալ. ան կը կաշառէ բանտի տնօրէնն ու պահակները եւ երկու անգամ եւս կը տեսակցի Յ.Ճանկիւլեանի հետ: Ան որոշ գումար մը կը ձգէ Յ.Ճանկիւլեանի մօտ, որպէսզի այդ գործածուի անոր կամ ոեւէ ընկերոջ փախուստի նպատակին: Մարոյի մեկնումէն վերջ է որ բանտին պատասխանատուները կ'իմանան թէ ինչպիսի թանկածրժք «որս» մը բաց ձգած էին...:

1896 Դեկտեմբերին, ընդհանուր ներումով մը Յ.Ճանկիւլեան ազատ կ'արձակուի: Կը մեկնի Պէյրութ, ապա Լառնաքա եւ Ադըբաստանը:

Բանտէն դուրս գալէն ետք, Յ.Ճանկիւլեան անմիջապէս կը մաս-

նակցի ազգային-հասարակական կեանքին: Ան իր գործունեության առջեւ կը դնէ երկու հիմնական պատակ: Առաջին՝ աշխատիլ ամեն գնով յաջողցնել իր զինակիցին՝ Մեծն Մուրատի փախուսող Արեւմտեան Թրիփոլիի (Լիպիա) աքսորավայրէն, եւ երկրորդ՝ միասնականութիւն կամ համագործակցութիւն յառաջ բերել հայ յեղափոխական կուսակցութիւններուն միջեւ:

Իր առաջին նպատակին համար Յ.Ճանկիւեան կը գրէ. «Կար նաեւ ուրիշ կարելորդ եւ կենսական խնդիր մ'ալ եւ պետքը կը զգայի ընկերական պարտականութիւնս կատարել: Նազըմը (Թուրքիոյ զաղտնի ոստիկանութեան տնօրէնը - Ե.Ճ.) ժամանակին թոյլ տուած էր ոչ ընդհանուր ներումին եւ ոչ ալ մեզի հետ ներման արժանանար սիրելի ընկերս Մուրատը, որ դռն կը հեծեր Տրիպոլիսի բանտին մէջ, պետք էր զինք ազատել (փախցնել) բանտէ: Գործը ինքնին վտանգալից էր, բայց ես յօժար էի այդ վտանգն յանձն առնել, ափրիկեան Տրիպոլիս երթալ ու զինք փախցնել, քանի որ արար պաշտօնեաներու նկարագիրը լաւ ուսումնասիրած եւ անոնց հոգեբանութեան տեղեակ էի: Ուրեմն պէտք էր Մուրատին հասցնել ձեռք բերել, իրեն հետ թղթակցիլ եւ պէտք եղած տեղեկութիւնը առնել վերջ գործի սկսիլ: Մուրատի քոյրը՝ օր. Հայկանուշ Աղեքսատրիա էր, իրեն դիմեցի՝ Մուրատի հասցնել առի եւ իսկոյն սկսայ թղթակցիլ»<sup>153</sup>:

Իր այս առաքելութեան մէջ Յ.Ճանկիւեան կ'ըլլայ հետեւողական: Այս մասին կը վկայեն Մուրատի փախուսող կազմակերպելու կապակցութեամբ Հնչակեան Կեդրոնական Կարչութեան յղած նամակը Նշան Տումանեանին, ուր կ'ըսուի. «Ինչ վերաբերում է Պ. Ձհանգիւեանի գրածներին, ձեռք բերուած տեղեկութիւնները բաւականաչափ լոյս սփռեցին նրանց վերայ, այնուամենայնիւ մենք էլի՝ միջոցներ ձեռք կ'առնենք կատարելապէս պարզելու եւ այդ խնդիրը»<sup>154</sup>, ինչպէս նաեւ Կեդրոնական Կարչութեան Մուրատին յղած նամակը, ուր կ'ըսուի. «Կնդրում ենք, թանկագին բարեկամ, բարի եղէք ձեր նամակով պատասխանելու մեր մի քանի հարցումներին: ...2- Արդեօք դուք ձեր հին բարեկամներից մէկին, Պ.Ձհանգիւեանին նամակ գրա՞ծ էք, եւ եթէ այո, ի՞նչ էք գրել ձեր հիւանդութեան եւ նրանից բժշկուելու միջոցների մասին (ծածկագիր է. պէտք է հասկնալ ձեր բանտարկութեան եւ փախուստի միջոցներուն մասին - Ե.Ճ.): Արդեօք գանգաւ յայտնա՞ծ էք մի քանի բժիշկների գործ դրած բժշկական մեթոտների մասին (ծածկագիր. պէտք է հասկնալ արդեօք կասկած ունի՞ք փախուստի կարգ մը ձեւերուն եւ զանոնք գործադրողներուն հանդէպ - Ե.Ճ.): Արդեօք հաւատք է՞ք ունեցած որ այդ մեթոտները գործադրուած լինեն ուղղամտութեամբ, ձեր առողջութեան (ծածկագիր. իմա՞՝ ձեր փախուստին - Ե.Ճ.) համար եւ ոչ թէ ձեզ աւելի վնասելու եւ փճացնելու համար:

Այդ բանի մէջ ո՞րն է ճշմարտութիւնը ձեր կարծիքով, մենք շատ կ'ուզենայինք զիտնալ այդ»<sup>155</sup>:

Ինչ կը վերաբերի Յ.Ճանկիւեանի երկրորդ նառաջադրութեան, ապա յստակ կ'երեւի թէ առաջին օրէն իսկ այդ կը հանդիպի լուրջ խոչընդոտներու: Այս հարցով, տակաւին Լառնաքայի մէջ, ան կը տեսակցի Կերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ղեկավարներն Միրան Սվազլի հետ: Ապա, Աղեքսանդրիոյ մէջ կը տեսակցի վերակազմեալ Լեւոն Մկրտիչեանի եւ դաշնակցական Գարեգին Խաժակի հետ ու կուսակցութիւններու միասնութեան մասին իր պատկերացումները գրաւոր կը ներկայացնէ Պօղոս Լուպար Փաշային, որ կ'արժանանայ վերջինիս հաւանութեան: Այս նպատակով ան կ'երթնէ Բաքի, Լոնտոն, ժընեւ, եւ հանդիպումներ կ'ունենայ Ա.Արփիարեանի, Մ.Տամատեանի, Ա.Նազարբեկեանի եւ «Դիօշակ»ի խմբագրութեան (Ռոստոմ, Վահագ, Արմէն Գարօ) հետ: Իր այս նպատակադրման մէջ ան հանդէս կը բերէ կուսակցական մասնակի մտահոգութիւններէ հեռու, անկեղծ յեղափոխականի մօտեցում: Ան կը նկատուի «յեղափոխական կուսակցութեանց միութեան կամ համերաշխ գործակցութեան առաջին ռահիփրաներէն, նախկին հնչակեան ղեկավար» մը<sup>156</sup>:

Շուրջ տարուան մը վրայ երկարող իր հանդիպումներուն եւ բանակցութիւններուն որպէս արդիւնք, Յ.Ճանկիւեան կու գայ այն եզրակացութեան, որ վերակազմեալները իրենց կեցուածքներուն եւ տեսակէտներուն մէջ անկեղծ ու թափանցիկ չէին: Ան այս մասին յօդուածներով կ'անդրադառնայ Աթենքի «Միութիւն» թերթին մէջ: Կերակազմեալները կ'ալեկոծին եւ անոնց պաշտօնաթերթ «Մարտ»ը, որ Յ.Ճանկիւեանի բանտէն ազատ արձակման առիթով լորձնաշուրթ զովասանքներ ձօնած էր անոր, կը սկսի լպիր եւ անվայել տողերով վարկաբեկի գայն: Բանավեճին մէջ կը ներգրաւուի Վառնայի «Շարժում» թերթը, որուն մէջ Յ.Ճանկիւեանին Լուիբուած իր յօդուածը Երուխան կ'եզրափակէ այսպէս. «Հիմա, երբ ծանր շունչ մը կը փչէ խորշակի պէս, սիրելի՛ ընկեր, կրանիդէ արձանիդ վրայ չի կրնար խամրել այն ծաղիկները, որ հոգիիդ ցովունքները եղան: Թող խարուին միամիտները, դուռն անոնք չես. քու ընկերներդ, որոնց հետ կախաղանի սիւներուն տակէն անցար անխոռով եւ մահուան փսփսուքը լսեցիք, եւ անոնք որ ձեզի կը հետեւէին մօտիկէ, անոնք են որ կը գնահատեն ձեզ: Անոնք են որ անունդ լսածուն պէս դող կ'ելլեն ինչպէս բռնկած սիրտ մը՝ իր սիրեկանի յանկարծական տեսքէն»<sup>157</sup>:

1898-ի ամբան, Թիֆլիսի մէջ հանդիպումներ կ'ունենայ ՀՅԴ-ի ղեկավարներուն հետ, որոնց շարքին Ռոստոմ եւ Սիմոն Չաւարեան: Յ. Ճանկիւեան իր պատրաստակաւութիւնը կը յայտնէ որպէս գործիչ Սասուն մեկնելու: Իրեն կ'առաջարկուի Խրապար-

կային ձեռով անդամակցիլ ԶՅԴ-ին (մինչ այդ, ան կը նկատուէր «դաշնակցութեան բարեկամ»)։ Փոխադարձ այս առաջարկները չեն իրականանար։ Էջմիածնայ մէջ կը հանդիպի Խրիմեան Զայրիկին ու անոր կը յայտնէ Արեւմտահայաստան մեկնելու (առաջին հերթին իր ծննդավայրը՝ Վան, ուր կը գտնուէին մայրը, կինը եւ երկու որդիները) իր նպատակը։ Խրիմեան Զայրիկ խորհուրդ կու տայ հրաժարիլ այդ գաղափարէն։

Կը վերադառնայ Աղեքսանդրիա։ Նոյն տարուան աշնան Աթենքի մէջ լոյս կը տեսնէ Յ.Ճանկիւլեանի՝ վերակազմեալները քննադատող «Դիմակաւորները» գրքովը, որ հանրային կարծիքին մօտ յառաջ կը բերէ որոշակի հետաքրքրութիւն։ Գիրքին մէջ արծարծուած միտքերը կը քննարկուին վերակազմեալներու Բ. համագումարին (Աղեքսանդրիա, 1898 Զոկտեմբեր) կողմէ<sup>191</sup>։

1899 Ապրիլին, Յ.Ճանկիւլեան կը մեկնի Աթենք։ Աշխատանք կը տանի հոն հրատարակուող «Միութիւն» թերթը զօրացնելու եւ տարածելու ուղղութեամբ, որովհետեւ այդ կը քարոզէր կուսակցութիւններու «միութեան» գաղափարը։ Կը յաջողի Ռուսճուրի, Պուրկազի, Բրովատիայի եւ Պաթումի մէջ ստեղծել «Միութեան» յաճնախումբեր։ (Ապագային, Պուլկարիոյ «Միութեան» մարմինները կը դառնան Զայ Սահմանադիր Ռամկավար Կուսակցութեան հիմնադրութեան բաղկացուցիչ մասերէն)։

1900 Ապրիլին, Վառնայի մէջ կը հիմնէ «Երկսեռ Որբախնամ Ընկերութիւն Վասպուրականի» բարեսիրական միութիւնը, որ իր գործունէութեան յաջորդող 6 տարիներուն ընթացքին, տարբեր ձեռնարկներով կ'ապահովէ որոշակի գումար եւ այդ կը յատկացնէ Արեւմտահայաստանի տարբեր գաւառներուն մէջ գործող որբաւոցներուն։

Այդ շրջանին աղմուկ կը հանէ եւ հասարակական հնչեղութիւն կ'ունենայ Վարդոյի զենքերուն հարցը։ Վարդո (Յակոբ Վարդ Պատրիկեան) արեւելահայ երիտասարդ մը, Կ.Պոլսոյ մէջ կը միանայ Զնչակեան Կուսակցութեան եւ Գում Գաբուի ցոյցին յաջորդող ահաբեկչութիւններուն կը մասնակցի որպէս կազմակերպիչ եւ գործադրող։ Մաս կը կազմէ Վարիչ Մարմին։ Երբ իր շուրջ վտանգը կը մեծնայ, ընկերները կը թելադրեն իր մօտ գտնուող կուսակցական կնիքը, կարգ մը փաստաթուղթեր եւ իրեր յանձնել աւելի ապահով նկատուած ընկերներու։ Վարդո կը յամառի։ Կը ձերբակալուի։ Դատարանին առջեւ կ'ունենայ խիզախ կեցուածք<sup>192</sup>։ Որպէս ռուսահպատակ կը յանձնուի ռուսական իշխանութեան։ Իր ձերբակալութեան պատճառով, այն բոլոր իրերը զորս ընկերները կը թելադրէին անհետացնել իր մօտէն՝ կը բռնագրաւուին։ Սա կը նկատուի դաւաճանական վարմունք։ Բանտէն ազատ արձակուելէն ետք կը հաստատուի Վառնա ու իր ազդեցութեան տակ կ'առնէ

«Շարժում» թերթը։ Կը միանայ Դաշնակցութեան եւ կը նշանակուի Պալքասներու շրջանի ԶՅԴ-ի ներկայացուցիչ։ Այդ օրերուն, Պուրկազի մէջ հաւաքուած 12 սնտուկ զենքն ու զինամթերքը, որ պետք է տրամադրուէր արեւմտահայ ազատագրական պայքարին, խորհրդարան պայմաններու տակ կ'անհետանայ։ ԶՅԴ Արեւմտեան Բիւրօն հարցին քննութիւնը կը յանձնէ Ռոստոմիս։ Յ.Ճանկիւլեան եւս կը ներգրաւուի հարցի պարզաբանման եւ զենքերու բացայայտման գործին։ Ան այս կապակցութեամբ վարչական յանձնառութիւն մը չունէր։ Զայ յեղափոխական շարժման հանդէպ անկեղծ մօտեցումն է, որ կը դրդէր զինք հրապարակ հանել անհետացած զենքերը, որուն կարիքը այնքան մեծ էր յեղափոխական շարժման համար։ Ռոստոմ է Յ.Ճանկիւլեան կը դառնան գործակիցներ։ Յ.Ճանկիւլեան իր փնտռուքներուն ընթացքին ձեռք ձգած տեղեկութիւնները մնայնօրէն կը դնէ Ռոստոմի տրամադրութեան տակ։ Յ.Ճանկիւլեան, քանի որ նաեւ տեղեկ էր անցեալին Զնչակեան Կուսակցութեան մէջ ունեցած Վարդոյի զարտուղի կեցուածքներուն, համոզում կը գոյացնէ որ զենքերու անհետացման մէջ Վարդոս զլխաւոր մեղաւորն է։ Յ.Ճանկիւլեան այս մասին հրապարակայնօրէն կ'անդրադառնայ «Իրաւունք» թերթին մէջ։ Բացատրելու համար ինչ-զինք, ան կը գրէ. «Ինչպէս յեղափոխական զինուորի մը պարտականութիւնն է կռուիլ թնատիրութեան դէմ՝ իր ազգին ու հայրենիքին ազատութեան համար, նմանապէս ալ պարտական է յեղափոխական ասպարեզին վրայ սլքտացող կասկածելիները իրենց իսկական գոյնովը ներկայացնել ժողովուրդին»<sup>201</sup>։ Վարդո, «Շարժում»ին մէջ կը պատասխանէ Յ.Ճանկիւլեանին, անձնական վիրատրանքներու ոճով։ Միւս կողմէ, Վարդոյի կուսակցական պատիժ սահմանելու ԶՅԴ-ի որոշումը կը ձգձգուի։ Այս պատճառով Յ.Ճանկիւլեան կը նեղուի։ Իրօք, Վարդոյի հարցը կը քննարկուի 1907-ին, ԶՅԴ 4-րդ Զամագումարին կողմէ։ Վարդո կ'ենթարկուի ահաբեկչութեան։

1904-ին, յաղթահարելէ ետք նիւթական եւ անցագրային դժուարութիւններ, Յ.Ճանկիւլեան իր ընտանիքը Վանէն կը տեղափոխէ Պարսկաստան, ապա Օտեսա ու ծովու ճամբով Վառնա։ Զսան տարուան բաժանումէ ետք կը միանայ կնկան եւ որդիներուն. «Տիկնոջս ձեռքը թօթուելէս վերջ սկսեցի գաւակներուս երեսները համբուրել, առանց գիտնալու եւ զանազանելու Յակոբն ու Զայկը, որովհետեւ երկուքն ալ հասակով չէին տարբերը...», կը գրէ ան։

1906-ին, նամակով մը ՍԴԶԿ Կեդրոնական Վարչութեան իր պատրաստակամութիւնը կը յայտնէ կուսակցական պարտակալութիւններ ստանձնելու։ Նոյն թուին մաս կը կազմէ ՍԴԶԿ Վառնայի մասնաճիւղի վարչութեան։

Օսմանեան Սահմանադրութենէն ետք կ'ըլլայ առաջին վերա-

դարձողներն Կ.Պոլիս: ՄԴԿԿ Կեդրոնական Վարչութեան կողմէ անվիջապա կը նշանակուի Թուրքիոյ Շրջանի լիազօր գործիչ: Իր այս պաշտօնով ան հանդիպումներ կ'ունենայ ազգային մարմիններուն եւ մամլոյ խմբագրութիւններուն հետ. այս առթիւ «Սուր-հանդակ» կը գրէ: «Յարութիւն ճանկիւլեան - Այս անունը մոռցուած չէ հայութեան համար, իբրեւ պարագլուխներն մէկ այն քաջարի ազգասէրներուն որոնք 15 տարի առաջ (պէտք է ըլլայ 18. - Ե.Ծ.) «Գում Գարուի դէպքը» կազմակերպեցին՝ Պատրիարքարանէն վար առնելով Աջոգեան հորէն Պատրիարքին պատկերը գոր ճանկիւլեան բզքտեց ու նետեց: Երկար ատեն բանտի, քցտորի ու տարագրութեան տոռապանքները կրելէ ետքը այժմ Կ.Պոլիս եկած է ճանկիւլեան...: Նոյն բարձր հասակն է, նոյն արեւազուրկ դէմքը, նոյն վառ աչքերը. տարիքին յառաջացումն ու տարագրութեան զոկանքները բնաւ չեն ընկճած, չեն տկարացուցած զինքը: Մազերուն մէջ ճերմակներ խառնուած են, այն ալ շատ քիչ»<sup>[21]</sup>: Այդ շրջանին Յ.Ճանկիւլեան հրատարակ կու գայ նաեւ օրուան կացութեան շուրջ դասախօսական ելոյթներով<sup>[22]</sup>:

1909 Մարտին, կամաւոր երիտասարդներու խումբով մը կը գործակցի Կ.Պոլիս մտնող Ազատարար Բանակին հետ<sup>[23]</sup>: Ամիս մը անց, անոր անունով պոլսահայ թերթերուն մէջ լոյս կը տեսնէ «Պաշտօնական Ազգ» մը, որ կը ծանուցէ թէ Յնչակեան Կուսակցութեան եւ Օսմ. ոստիկան-զօրաց ընդհանուր բնիչ գնդապետ Կալիպ պէյի միջեւ համաձայնութիւն գոյացած է «հայ երիտասարդներն (ակներեւաբար խօսքը կը վերաբերի Ազատարար Բանակին կամաւորաբար օժանդակած երիտասարդներուն.- Ե.Ծ). ոստիկան-զօրաց մէջ մտցնելու համար» (նկատի առնել որ այդ ատեն, տակաւին քրիստոնէաներու զօրակցման օրէնքը ըուէրկած չէր.- Ե.Ծ.)<sup>[24]</sup>:

Նոյն թուին կը մասնկացի ՄԴԿԿ Կ. Պոլիս 6-րդ Դամազումարին եւ կը պաշտպանէ Կուսակցութիւնը օրինական դարձնելու տեսակետը: Կը մասնակցի նաեւ ՄԴԿԿ Տաճկաստանի շրջանի Ա., Բ. եւ Գ. պատգամաւորական ժողովներուն: Գ. պատգամաւորական ժողովին կ'ընտրուի Տաճկաստանի շրջանի Վարիչ Մարմնի անդամ:

Կ'ընտրուի Ազգային Երեսփոխանական ժողովի անդամ, Կետիկ Փաշայի շրջանէն: Իր ստանձնած ազգային-կուսակցական բոլոր պաշտօններուն մէջ ալ, հանդէս կը բերէ պարկեշտ, համարձակ եւ ուղղամիտ կեցածք: Օրինակի համար, երբ Վանայ Աշխանի (Աիկոլ Պողոսեան) գլխաւորութեամբ 337-ն կը կողոպտէ Աղթամարի վանքին հարստութիւնը, այդ ինքնապաշտպանական նպատակներու յատկացնելու համար, Յ.Ճանկիւլեան ծախիլի այս արարքը Ազգային Երեսփոխանական ժողովին մէջ կը քննադատէ այն կիրքով՝ ինչպէս քննադատած էր Վարդոյի արարքը: Անոր այս կեցուածքը Երուանդ Օտեանի երգիծական գրիչին տակ կը ստանայ սա պատ-

կերը. «Վան, Աղթամար, Դաշնակցութիւն, այս երեք բաները միշտ զինքը ջղաձգական նոպաներու կը մատնեն, իսկ երբ այդ երեքը որեւէ խնդրի մէջ միանան իրարու, ա՛յ այն ատեն այդ նոպան իր ծայրայեղ աստիճանին կը հասնի: Իր ընկերները յաճախ կ'աշխատին հանդարտեցնել զինքը, բայց ինք ատելի կը բորբոքի, ատելի կը փրփրի, ատելի կը հերոսանայ... խեղճ մարդ, ո՞րքան կը չարչարուի արդեօք»<sup>[25]</sup>:

Նոյն դէպքին անդրադառնալով, պետական եւ ազգային երեսփոխան, դաշնակցական Կոմս(Վահան Փափագեան) կը գրէ.- «Ահա Գում Գարուի ցոյցի ղեկավարներն եւ հնչակեան պետերն Յ.Ճանկիւլեանը, վանեցի, որ ժամանակին Աքիա բանտ եղած էր. շատ ջղային եւ հին ռեժիմի վերքերը փորփրելու եւ դարմանելու իր թափովը կը պոռոր բարակ ծայնով մը աշխարհի անարդարութիւններու եւ սեւ ցաւերու դէմ. իրմէ դժգոհ մարդու տպաւորութիւնը կը ձգէր: Իրեն կը թուէր թէ աշխարհը չարագործներով լեցուն է. բնական էր իր կրած տառապանքներէն յետոյ...: Մինչեւ այսօր ալ կատակի համար կը գործածուին անոր կողմէ, ազգ. երեսփ. ժողովի մէջ արտասանած «թեւաւոր» խօսքերը՝ «զըմէն կերան», զըմէն թալնեցին»: Խօսքը Իշխանի մասին էր, որ Աղթամար վանքի եկեղեցական ատելորդ զարդերը ծախել տուած էր, հոն միջնակարգ դպրոցի շինութեան ծախսերը հոգելու համար: Բարեհոգի մարդ մըն էր, խոժոռ եւ կնճռոտ դէմքի հակառակ»<sup>[26]</sup>:

Ազգ. երեսփոխանական ժողովին մէջ, մասնաւորապէս կը յիշատակուին, 1912-13 թուականներուն անոր սկզբունքային կեցուածքները իշխանութեան չվստահելու, «թաքիթներէն» հրաժարելու եւ միայն գաւառի հայութեան օրինական զինումը պահանջելու (ինչպէս էին քիւրտերը) ջրուտ կեցուածքները<sup>[27]</sup>:

1913-ին, Կ.Պոլսոյ մէջ կը հրատարակէ «Յիշատակներ Յայկական ճգնաժամէն» գիրքը: Այդ, որպէս յօդուածաշարք, առաջին անգամ լոյս կը տեսնէ «Բիւզանդիոն»ի 1912 Նոյ. 28/11 Դեկտ.- 1913 Մայիս 4/17 թիւերուն մէջ, որովհետեւ «իբր ականատես վկայի մը գրուած, նոյն հեղինակութիւնը սահմանուած է իր որոշ տեղն ունենալու հայկական խնդրոյ վերաբերելու վաւերագրելուն մէջ»: Ապա լոյս կը տեսնէ առանձին հրատարակութեամբ:

1914-ին, Յնչակեան Կուսակցութեան ղեկավարութեան ձեռքակալութեան ատեն, կը ձեռքակալուի նաեւ Յ.Ճանկիւլեան: Դարցաքննութենէն ետք ազատ կ'արձակուի:

1915 Ապրիլ 24-ին, հայ մտաւորականներու ձեռքակալութեան ժամանակ վերստին կը ձեռքակալուի: Կը տարագրուի Այաջ:

Տոքթ. Տաղաւարեանի, Ակնունիի, Խաճակի, Սարգիս Մինասեանի եւ Ռուբէն Չարդարեանի հետ կ'անջատուի մտաւորականներու խումբէն՝ Տիգրանակերտ դրկուելու պատրուակով: Ծամբան բոլորին հետ կը նահատակուի:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] Յ.Ճանկիլեան, «Յիշատակներ Հայկական ճգնաժամէն», թերթօս «Արարատ»ի թիւ 34, Պէյրութ, էջ 45:
- [2] Պետրոս Տեփոյեան, «Միհրան Տամատեան», Պէյրութ, 1964, էջ 36:
- [3] Յ.Ճանկիլեան... էջ 125:
- [4] «Հայրենիք», 1927, Լոյեմբեր 1 (61). Ռ.Խանազատ, «Հայ Յեղափոխական Յուշերից»:
- [5] Լոյս:
- [6] Յ.Ճանկիլեան, ... էջ 170-171:
- [7] Լոյս, էջ 186:
- [8] Լոյս, էջ 195:
- [9] Լոյս, էջ 291:
- [10] «Հնչակ», 1890, Սեպտեմբեր 14:
- [11] «Դրօշակ», 1894, Մարտ. [Պետրոս] Տոնապետեան, «Նամակ Աքիայից»:
- [12] Յ.Ճանկիլեան, ... էջ 402-404:
- [13] Լոյս, էջ 529:
- [14] «Հնչակեան» Կ[ուսակցութեան] Գործադիր Յանձնախումբի (Կեդրական Կարգութիւն- Ե.Ճ.) Նամակը Նշան Տումանեանին», 1902 Մայիս 5: Հնչ. արխիւ:
- [15] «Նամակ Մուրատին», 1902 Մայիս 5: Հնչ. արխիւ:
- [16] Հրաչ Տասնապետեան, «Ռոստոմ-Նամականի», Պէյրութ, 1999, էջ 213:
- [17] «Շարժում», 1898, Յուլիս 15:
- [18] Մենք, «Դիմակաւորները» գրքովը որեւէ հայկական գրադարանի մէջ վրցանք գտնել: Այդ գրքովէն լայն մէջբերումներ կատարուած են Լ.Տ.Ս.Ս.Թ.-ի «Միութեան Կամ Համերաշխութեան Կնդիրը» գիրքին մէջ:
- [19] «Հնչակ», 1891, Փետրուար 25: Նաեւ Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Հնչակեան Կուսակցութեան» Ա. հտ., Պէյրութ, 1962, էջ 60:
- [20] Յ.Ճանկիլեան, ... էջ 638:
- [21] «Բիւզանդիոն», 1909, Ապրիլ 15/28:
- [22] Ե.Օտեան, «Երկեր», Երեւան, 1956, «Մեր Երեսփոխանները», էջ 672:
- [23] Վ. Փափագեան, «Իմ Յուշերը», Ա. հտ., Պէյրութ, 1952, էջ 72-73:
- [24] «Սուրհանդակ», 1908, Օգոստ. 6/19:
- [25] «Սուրհանդակ», 1908, Սեպտ. 10/23:
- [26] «Ազատարար Շարժուն Բանակին Յաղթական Մուտքն Ի Կ.Պոլիս», Կ.Պոլիս, 1909, էջ 163:
- [27] «Ազատամարտ», 1912, Օգոստ. 25/7 Սեպտ. եւ Սեպտ. 8/21: Նաեւ «Լոր Աշխարհ», 1912, Օգոստ. 26/8 Սեպտ.:

## ԳԵՂԱՄ ՎԱՆԻԿԵԱՆ (ՎԱՆԻԿ)

Հնչակեան ընկերվարակա-  
նութեան մարմնացումն է Վա-  
նիկ:

Վանիկ ծնած է Վան, 1889-ին:  
Մանուկ տարիքին կը կոր-  
սընցնէ հայրը եւ կը յանձնուի  
իր մօրեղբօր, հնչակեան յայտ-  
նի յեղափոխական Հաճի Յա-  
կոբ Արծրունիի (Աւետիսեան)  
խնամքին:

Այգեստանի մէջ ան կ'ապրի  
իր մեծ մօր հետ ու կ'աւարտէ  
տեղւոյն ծխական դպրոցը:  
Ապա կը յաճախէ Երամեան  
դպրոցը եւ զայն կ'աւարտէ  
փայլուն ձեւով:

Յ.Արծրունի յաճախակի եւ  
երկարատեւ կը բացակայեր  
տունէն: Ան Վանի եւ Պարսկաս-  
տանի միջեւ Կուսակցութեան  
կապն էր: Անոր մասին դաշ-



նակցական Մալխաս կը գրէ. «Հաճի Յակոբը, ժամանակ մը մեր  
փոխադրական գործին օժանդակներ է անձնուիրաբար: Երբ  
Փայլակը Մակուի շրջանի Քիշմիշ Թեփէ գիւղն էր, փոխադրական  
գործով, Հաճի Յակոբը, որ այդ ժամանակ այդ տեղ կը գտնուէր,  
հնարաւոր աջակցութիւնը չէ զլացեր, օգտակար լինելու: Շատ  
հազուադիւս բացառութիւններէն մէկն է եղեր, որ մէկդի դրած  
կուսակցական նեղ մտայնութիւնը, երբ կրցեր է, օգնէր է մեզի»:

Իր մօրեղբօր կարճատեւ երեւումները տան մէջ եւ անոր ընկերակ-  
ցող զինեալ ֆետայիներու խորհրդաւոր կերպարներն ու կեանքը,  
կը գրգռեն պատանի Վանիկին հետաքրքրութիւնը: Տակաւին

դպրոցական, իր դասարանցիներով ան կը ստեղծե հնչակեան անկախութեան խմբակ մը: «Այնուհետեւ, մենք մեր ժամանակին մէջ մասը կը յատկացնէինք կուսակցական գրականութեան ընթերցումի, խմբական ժողովներու եւ վիճաբանութիւններու»:

Վանիկ նաեւ, «այդ հասակէն իսկ կատարեալ պաշարիւնութեամբ ու գաղտնապահութեամբ կը կատարէր իրեն վստահուած [կուսակցական] յանձնարարութիւնները»<sup>21</sup>:

1907-ին Վանիկ կը մեկնի Կովկաս: Իր փորձերը, Օսմանեան Սահմանադրութենէն անմիջապէս ետք, իր մօրեղբօր հետ կը վերադառնայ Կ.Պոլիս: Տարի մը դեղագործական բաժանմունքին մէջ ուսանելէ ետք, կը հետեւի իրաւաբանական ճիւղին եւ կ'աւարտէ 1914-ին:

Ուսանողական այդ տարիները Վանիկին համար կը դառնան հասարակական կեանքի բեղմնաւոր շրջան մը: 1910-ին անոր ջանքերով կը հիմնադրուի ՍԴԴԿ Կ.Պոլսոյ «Կայծ» Ուսանողական Միութիւնը, որուն առեւտրութիւնը կը ստանձնէ ան: Յաջորդ տարի կը սկսի լոյս տեսնել Միութեան օրկան «Կայծ» ամսաթերթը՝ Վանիկի խմբագրապետութեամբ:

Դժուար է գերազանահատել «Կայծ»ի խաղցած դերը՝ ուսանողները որպէս ապագայ հասարակական գործիչներ պատրաստելու գործին մէջ<sup>22</sup>: Դժուար է նաեւ գերազանահատել Վանիկի դերը «Կայծ»ի հետեւողական ու կազմակերպուած գործունէութեան մէջ: «Կայծ» իր դասախօսութիւններով, վիճաբանական երեկոներով, գրադարանով եւ ամսաթերթով կը դառնայ գաղափարական դպրոց մը, ուր իրենց գաղափարական դաստիարակութիւնը կը ստանան, հասարակական կեանքի առաջին փորձառութիւնը ձեռք կը ձգեն ու գրական թոթովանքները կը կատարեն ապագային յայտնի դարձած շատ մը ազգային-կուսակցական գործիչներ: «Կայծ» աւելի քան 20 հայաշատ քաղաքներու եւ գիւղերու մէջ կ'ունենայ իր ուսանողական եւ աշակերտական մասնաճիւղերը:

«Կայծ»ին Վանիկ կ'աշխատակցի խմբագրականներով եւ ընկերավարական բնոյթի յօդուածներով: Ան հանդէս կը բերէ գիտական-վերլուծական միտք եւ սուր գրիչ: Օրինակի համար, «Ընկերավարական Բախտորական Սենտիկաները Կ.Պոլսոյ մէջ» յօդուածին մէջ, Վանիկ կու տայ Կ.Պոլսոյ մէջ տակաւին նոր սկսող աշխատաւորական արհեստակցական միութիւններուն ճշգրիտ պատկերը ու կ'աւելցնէ. «Չնայած որ Պոլսոյ մէջ կը գտնուին հայ երկու սոցիալիստ կուսակցութիւններ - ՍԴ Դնչակեան եւ ԴՅ Դաշնակցական - եւ անոնց կեդրոնական մարմինները, բայց այնուամենայնիւ նոքա մերձեցում չեն ցուցուցած դէպի այդ բանտարանական կազմակերպութիւնները»<sup>23</sup>: Այլ պարագայի մը, պատասխանելով «Կայծ»ին

յղուած հարցումի մը, Վանիկ անդրադառնալով բարոյագիտութեան փիլիսոփայական բարդ հասկացութեան, կը գրէ. «Մեզ կը հարցնեն, թէ կա՞յ յաւիտենական բարոյականութիւն: Ո՛չ, կը պատասխանենք մենք: Այո՛, կան անհատներ, որոնք կ'ընդունին թէ կայ յաւիտենական բարոյականութիւն: Ատոնք մեթաֆիզիք հայեցողութիւն ունեցողներ, բարոյագետներ են: Նոքա կ'ընդունին, որ այսօրուայ բարոյական հասկացողութիւնը ինչ որ է, նոյնը կը մնայ միշտ, որովհետեւ անոնք խնդիրները խորը, առարկայական կերպով, մաթերիալիստական ուղղութեամբ չեն քննէր: Մենք կ'ընդունինք, որ կենսքը կը փոխուի, որովհետեւ արդիւնաբերութեան միջոցները, տնտեսական միջավայրը եւս կը փոխուին: Կենսքի փոխուելուն հետ կը փոխուի նաեւ անկէ յառաջացած գաղափարաբանութիւնը, ուրեմն է բարոյականութիւնը»<sup>24</sup>: Վանիկի աղմուկ հասած յօդուածներէն մեկն ալ կ'ըլլայ Կ.Մարքսի մահուան 30-ամեակին առիթով հրատարակուած «Կայծ»ի բացառիկ թիւին մէջ անոր ստորագրած «Մարքսիզմը Դայ Կենսքին մէջ»<sup>25</sup> յօդուածը: Յօդուածին մէջ պաշտպանուած այն միտքը, թէ մարքսիզմը հայ կենսքէն ներս առաջին տարածողը եղած է Դնչակեան Կուսակցութիւնը, «Կայծ»ի յաջորդող թիւերուն մէջ կ'առարկէ Ռուսաստանի Բ. Տումայի Թիֆլիսի պատգամաւոր, մենշեւիկ կուսակցութեան անդամ Արշակ Չուրապեան: Վանիկ, երեք շարունակականով կը պատասխանէ Չուրապեանի առարկութիւններուն:

«Կայծ»ի մէջ գրած իր վերջին՝ «Կենսքի Նպատակին Շուրջ» յօդուածին մէջ, Վանիկ կու տայ կենսքի նպատակին հանդէպ իր փիլիսոփայական ըմբռնումը. ան կը գրէ. «Այսպէս նաեւ ժամանակակից կարգ մը փիլիսոփաներ չեն աշխատիր վերլուծել, թէ ինչէ՞ն կրնան յառաջ եկած ըլլալ ներկայ թշուառութիւնները եւ ո՞րն է գաւտնը վերաքննելու արմատական դարմանը, այլ կը սկսին «փիլիսոփայիչել», թէ ինչո՞ւ կենսքը պիտի լինէր եւ մինչէ՞ն ո՞ր պիտի երթայ, ինչո՞ւ տիեզերքը կայ, եւ այլն: Ես չեմ մտնէր այդ հարցերուն մէջ, ատոնց մէջ մխրճուած են շատ ու շատ մեծ փիլիսոփաներ ու սակայն այնտեղ ալ թաղուած են: Ես կ'ուզեմ մտնել անօթութենէ չորացած կուրծքին տակ, այնտեղ մրափող առիւծին բաշէրը թափ տալու համար, ես կ'ուզեմ մտնել արցունքոտ մօր աքէրուն մէջ՝ այնտեղ կայծկլտող հուրը բոցավառելու համար. ես կ'ուզեմ գործ ունենալ աշխատող բազուկներու հետ, անոնք են կենսքի, երջանկութեան արքիւրները: Ահա իմ փիլիսոփայութիւնը»<sup>26</sup>:

1913-14-ին, «Նամակ Կ.Պոլսէն» ընդհանուր խորագրին տակ, Վանիկ քաղաքական յօդուածներով կ'աշխատակցի նաեւ «Դնչակ»ին: Անոր գրած յօդուածներէն յստակ կ'երեւի, որ Վանիկի սեւեռուն նպատակը կ'ըլլայ ձողկել, քննադատել ու վարկաբեկել Իթթիհատ

Վե Թերաքքը կուսակցութիւնն ու անոր վարած ազգայնամուլ քաղաքականութիւնը: Պալքանեան պատերազմի վերջին հանգրուանին, երբ հրապարակ կու գայ նաեւ հայկական նահանգներու բարեկարգութեան հարցը, Վանիկ կը գրէ. «Այս իսկ զօրեղ փաստ չէ՞ միթէ այն մեղկ, շահախնդիր ու կեղծ ազգայնականութեան՝ որու մարմնացած ներկայացուցիչը ու անյողողող պաշտպանն ըլլալ կը թուէր Իթթիհատն Վե Թերաքքը կուսակցութիւնը: Չորս սահմանադրական տարիներուն՝ այդ ողբալի անցեալ ունեցող կուսակցութիւնը, սին յոյսերով ժողովուրդը օրօրելէ, յոխորտ ազգայնականութեամբ գայն յառաջդիմութենէ ետ պահելէ եւ իսլամական մոլեռանդութեամբ գրգռելէ զատ ոչինչ ըրաւ, երբ նոյնիսկ Պոլսոյ զարգացած կեդրոնը մեռնելու մօտ եղող կենդանիի մը հասարակ ինքնապաշտպանութեան ժխթն իսկ չունեցաւ: ... Չարմանալի է թուրք մտաւորականներու մտայնութիւնը: Ամբողջ տեղական ու եւրոպական մամուլը կը զբաղի Թուրքիոյ բարենորոգման խիստ կենսական հարցով, իսկ թուրք մամուլի յայտնի ներկայացուցիչները, որոշ բացառութեամբ, կը պնդեն թէ դեռ բարենորոգումներու ժամանակը չէ, նախ ինքզինքնիս ազատենք սա պատերազմէն ու ապա մտածենք: ... Ու յետաձգման այս քաղաքականութեան տխուր հետրուները դարձեալ իթթիհատականներն են. իրենց մանուկ քաղաքականութեամբը 4 տարի շարունակ հետապնդեցին ազգայնական, հալածող, յետադէմ, հակասահմանադրական ուղղութիւն մը, պատրաստեցին ներկայ պատերազմը, դեռ վերջին օրերը «պատերազմ կ'ուզենք» աղաղակեցին, ու այժմ ալ՝ «բարենորոգումներու ժամանակը չէ» կը պոռան»<sup>71</sup>: 1913 Յունուարին իթթիլաֆական կառավարութեան դէմ Իթթիհատի կատարած պետական հարուածին առիթով Վանիկ կը գրէ. «Երկու ընտրոշ գիծ կայ պետական հարուածին սէ: Առաջին որ իթթիհատականները, որոնք յարմար առիթի կը սպասեին կրկին իշխանութեան գլուխը անցնելու համար եւ պէտք է ըսել իրենց այս դիտումը իրականացնելու, ոչ թէ իսկական հայրենասիրութենէ մղուած գործեցին, այլ զուտ շահախնդրական միտումներէ: Երկրորդ նոյնքան յատկանշական պարագան այն է, որ ներկայ իթթիհատական դահլիճը գրեթէ նոյնութեամբ ընդունեց նախորդին քաղաքականութիւնը, աւելի մեծ չափով նուաստանալով մէկտեղ»<sup>72</sup>:

Վերստին անդրադառնալով Թուրքիոյ մէջ բարենորոգումներ կատարելու անհրաժեշտութեան, Վանիկ կը գրէ. «Բարենորոգումներու բացակայութիւնն էր, որ ստեղծեց հայկական յեղափոխութիւնը, մակերդնական խնդիրը՝ որ ներկայ պատերազմի առիթը հանդիսացաւ, արարական, սիրիական շարժումները, ետայլն: ... Այս բոլորով մէկտեղ կառավարութիւնը կը յամառի իր անհետաքրքրութեան

մէջ. աւելի վատը, կը ջանայ երեւոյթները ծածկել: Երկ իրիկուն յունարէն թերթի մը մէկ խմբագիրը յայտնեց ինձ, թէ կառավարութեան կողմէ իրենց ազդարարութիւն եկած է հայկական ընդհանուր խնդիր մը չներկայացնել, չզբաղի ստով, այլ բաւականանալ միայն դէպքերը իբրեւ մասնաւոր երեւոյթ ներկայացնելով: Ինչո՞ւ այս վախկոտութիւնը «սահմանադրական» կառավարութենէ մը: Վերքը ծածկելու՞ կը բուժուի»<sup>73</sup>: Վանիկ կ'անդրադառնայ նաեւ յետ-սահմանադրական Օսմանեան կայսրութեան երրորդ երեսփոխական կան ընտրութիւններուն եւ կը քննարկէ Պատրիարքարանն ու հայ կուսակցութիւնները: Իրականութիւնը այն էր, որ նախքան ընտրութիւնները, Պատրիարքարանին շուրջ կը կազմուի Միջկուսակցական Յամերաշխական Մարմին մը: Յամերաշխականը կոչ կ'ընէ ժողովուրդին անտեսել ընտրութիւնները եւ չմասնակցի անոնց: Յայութիւնը կ'ընդառաջէ կոչին եւ զանգուածային մասնակցութիւն չի բերեր ընտրութեան: Սակայն, Բ. կարգի ընտրողներու ընտրութենէ ետք, ԳՅԴ-ի առաջարկով, Յամերաշխականը կը թելադրէ պատրիարքին հայ երեսփոխաններու անուններուն շուրջ բանակցութիւններ ունենալ կառավարութեան (իմա՞ Իթթիհատին) հետ: Վանիկ այս կը գտնէ վարկաբեկիչ արարք ու կը գրէ. «Որեւէ երկրի մէջ ընկերվարական կուսակցութիւն մը բանակցութիւններ չի վարեր կառավարութեան հետ» ընտրական խնդիրներու շուրջ, ընդհակառակը կը պահանջէ, որ կառավարութիւնը չմիջամտէ ընտրութիւններուն, որոնք պէտք է կատարուին ժողովուրդին ազատ քուէով: ... Սակայն ի սեր համերաշխութեան եթէ ձեռնպահութիւն յայտարարեցինք, կ'ընդունին իբրեւ զիջողութիւն մը: Բայց անկէ վերջ երբ երկրորդ կարգի ընտրողները «ընտրուեցան» առանց ընտրական պայքարի ու ժողովուրդի մասնակցութեան, անկէ վերջ երբ համերաշխական սեղանի անդամներէն մէկը - ԳՅԴ շնակցութիւնը - զանազան պատճառներով մասնակցութեան հարցը կը բերեր, հնչակեանները պէտք էր պնդէին չմասնակցի, որովհետեւ Յամերաշխականը պատճառ տեղաւ, որ հայ ժողովուրդը չմասնակցի ընտրութիւններուն: Թալաթ պէյ հրամայէ եւ հնչակեան երեսփոխա՞ն ընտրուի: Այլ ո՞ր ընկերվարականն է, որ պիտի կրնայ ըսել, թէ ես իմ կուսակցութեան ներկայացուցիչն եմ, քանի որ իր կուսակցութեան անդամները ընտրութեան չեն մասնակցած: Մեր քաղաքական կուսակցութեանց գործուեցաւ: Ու հոս, որպէս եզրակացութիւն կը հնչէ պատմութեան փոթորիկներուն դէմ նետուած Վանիկի ամօթանքը՝ «Բիւր ամօթ Իթթիհատի գործակիցներուն»<sup>74</sup>:

Վանիկ, իր համարձակ գրիչին կողքին, ժամանակակիցներուն կողմէ կը նկարագրուի որպէս անկեղծ, անձուր, համեստ... եւ

հայարտ: «Անկեղծ՝ ոչ միայն դեպի իր մօտիկ, կուսակցական ընկերները, այլ նաեւ իր ամբողջ շրջապատը, անկեղծ նոյնիսկ գաղափարական հակառակորդներու հանդէպ, որոնց հետ իր ունեցած յարաբերութիւններու ընթացքին անիկա միշտ մնաց իր գաղափարական բարձրութեան վրայ, հեռու կուսակցական նեղմտութենէ եւ մոլեռանդութենէ: Ահա թէ ինչո՞ւ համար զինքը ոչ միայն յարգեցին, այլ նաեւ սիրեցին անխոր թուր անոնք, որոնք իրեն հետ շփում ունեցան կամ ծանօթացան»<sup>117</sup>: Վանիկ նաեւ հայարտ էր, բառին «արժանապատուութեան» իմաստով: «Այս առթիւ արժէ յիշատակել, որ Վանիկը չուզեց նպաստաւորուիլ Ազգային Պատրիարքարանէն, որ այն ատեն գաւառացի եւ կարօտ ուսանողներուն տարեկան քսան ոսկի գումար մը կու տար նպաստելու համար անոնց ուսման: Գեղամ վիրաւորական կը համարէր նպաստընկալի դիրքին մէջ մտնել, մինչ ատիկ իր ծանօթներն եւ հայրենակիցներէն շատեր, առանց վայրկեան մը իսկ տատամսելու, կ'օգտուէին ազգային այդ օժանդակութենէն, հակառակ անոր որ բաղդատմամբ Գեղամի, շատերը ընտանեկան լաւագոյն պայմաններ արդէն ունէին: Անիկա Գեղամի նկարագրին բնորոշ գիծերն մէկն է միայն: Գեղամ, նիւթական խնդիրներու մէջ նոյնքան հպարտ էր նաեւ դեպի իր ընկերները: Նոյնիսկ իր ամենամտերիմ ընկերները չէին կարող նիւթապէս օգնել իրեն: Անիկա կը շիկներ, կը ջղայնանար եւ նոյնիսկ հոգեկան տագնապալի յոյզեր կ'ունենար: ... Երեւակայեցեք, որ կը պատահէր երբեմն երբ անձնական գործածութեան համար մէկ դրուշ իսկ չէր ունենար գրպանը, նոյնիսկ իր սնունդին կամ կամուրջը անցնելու համար: Գեղամ բնաւ չէր մտաբերէր, թէ ծախ գրպանին մէջ դրամ կայ, եւ հետեւաբար կարելի է ժամանակաւորապէս անկէ գործածել եւ դարձեալ վերադարձնել: Գեղամ կ'անգիտանար կուսակցական դրամի գոյութիւնը եւ անկէ տասը փարա իսկ չէր ծախսեր, եթէ նոյնիսկ վատահ ըլլար, թէ կէս ժամ վերջ անձնական դրամ պիտի ստանար եւ հետեւաբար պիտի կրնար պակասը լրացնել: Կարծեմ թէ Գեղամի նկարագրին այս կողմը անհաստատալի եւ առասպելական պիտի թուի շատ շատերուն, մանաւանդ ներկայիս, երբ ազգային, պետական գումարներու ծախսումը նոյնիսկ տեսակ մը աջաբացութիւն համարողներ չեն պակսիր»<sup>118</sup>:

Վանիկ, երկիրդաժութեան հասնող սէր ու յարգանք կը տածէր դեպի Փարամազը: «Գաղափարի միեւնոյն տաճարին երկրպագող այս երկու վարդապետները սակայն, Վանիկն ու Փարամազը, իրենց Աստծոյն միեւնոյն աղօթքը կ'ընէին, մէկը մեղմ ձայնով, մրմունջով, ու միւսը՝ որոտալից, գուցէ սպառնական: Իսկ իրենց պատգամը նոյն շեշտն ու ոգին կը կրէր՝ ինչպէս որ էր իրենց աղօթքը: Միեւնոյն տաճարին մէջ եւ միեւնոյն գաղափարին համար երկու հա-

կոտնեայ ուժեր, մէկը իր հեզութեամբ աստուածային ու զմայլելի, իսկ միւսը իր խորխորութեամբ բռնկող հրդեհ մը յաճախ: Վանիկը յաւիտեական ներողը ու բարեբարոյ, ու Փարամազը հաւատացեալ ոխերիմ մը բոլոր չարիքներու, ու դաժան մերկացնող մը՝ ամէն կեղծիքի»<sup>119</sup>:

Ու կը պատահի նաեւ այն, որ երկու ընկերները կը մտնեն հրապարակային բանավեճի մէջ: Փարամազ ՄԴՅԿ Կ.Պոլսոյ պաշտօնաթերթ «Նոր Աշխարհ» օրաթերթին մէջ յորդոր կու տայ ինչպէս երիտասարդութեան՝ անելի գործակցի թուրք աշխատաւորական-ընկերվարական շարժումներուն հետ: Վանիկ, նոյն թերթին մէջ կը պատասխանէ իր աւագ ընկերոջ, որ այդպիսի փորձեր կատարած են, սակայն թուրք ընկերվարականները լուրջ չեն: Ան կը յիշեցնէ Օսմանեան Սոցիալիստական Կուսակցութեան (որ անդամ էր Սոցիալիստական Միջազգայնականին) պաշտօնաթերթ «Իշթիրաք»-ի պարագան, որ քաջ նամակ գրած էր Կ.Մարքսին... անոր մահէն 25 տարի անց»<sup>120</sup>:

Միւս կողմէ սակայն, Վանիկի կայտը ընկերվարական շարժումներուն հետ, միայն Օսմանեան կայսրութեան սահմաններով չէին սահմանափակուեր: Ասոր լաւագոյն վկայութիւնը անոր մահէն ետք ռուս ընկերվարական եւ Տումայի երեսփոխան Արշէ Սուրաբովի յօդուածն էր գուրցերիական «Պերկեր Թակվախտ» թերթին մէջ, ուր ան վեր կ'առնէր Վանիկի հակապատերազմական համոզումները: Այս յօդուածին տունեալներուն վրայ, 1915 Օգոստոս 16-ին, Խտալիոյ Սոցիալիստ Կուսակցութեան օրկան «Աւանդի»-ն իր «20 Հայ Ընկերվարականներու Կախաղան Բարձրացուիլը Թուրքիոյ մէջ» խորագրեալ յօդուածին մէջ Վանիկը կը ներկայացնէ որպէս «հանճար գաղափարախօս եւ հռետոր»<sup>121</sup>:

Համաշխարհային Ա. Պատերազմին, Վանիկ կը զօրակոչուի բանակ ու կը հետեւի սպայից դպրոցի զօրավարժութիւններուն: Կը ձերբակալուի զօրանոցին մէջ ու կը միանայ Զսաններու փառանգին: «Ու Վանիկի մահը եղաւ հպարտ ու գեղեցիկ, ինչպէս էր կեանքը: Ան մեռաւ քաջութեամբ, ինչպէս վայել է հերոսին՝ արհամարհելով մահը, գամելով դատապարտութեան անարգ սիւնին՝ իր դահիճները, որ միամտութիւնն ունէին սպաննելու իր ըմբոստութեան անմահ գաղափարը, իր դիրաբեկ ու վաղանցուկ մարմնին մէջ: Ես կրնամ, ուրեմն, վկայել հոգիով, որ անմեղ էր Վանիկը, եւ իր դատաւորները բարձրացնելով զինքը կախաղան, գործեցին անարդարութիւններուն Է՛ն անարգն ու Է՛ն վայրագը»<sup>122</sup>:

Վանիկ եւս մանկական բարութեամբ կը հաւատար իր անմեղութեան. այդ պատճառով ալ ան չանսար բարեկամներու եւ ընկերներու տուած երկիրը լքելու կամ թաքնուելու խորհուրդներուն: «Կը

գգուշացնեմ գինքը որ իր հետքը կորսնցնէ ու հեռանայ գինուորական վարժարանէն, որովհետեւ արդար ըլլալը երբեք ապահովութիւն մը չէ թուրք դատարանէն անպարտ ելնելու... Գամոզուած է իր անմեղութեան, որով իր դէմ սկսուած հետապնդութիւնը հեքնութեան ծպիտ մը կը ծաղկեցնէր իր շրթներուն վրայ. կը համոզուիմ ես ալ...»<sup>171</sup>:

Ու այդպէս ալ Վանիկ չ'իմանար, որ «բիր ամօթ Իթթիհատի գործակիցներուն» գրելէ աւելի ծանր յանցանք չէր կրնան գործուիլ...:

## ՕՂՆՕԹՎԳՐՈՒԹԻՒՆ

- [1] Եղուարդ Չոփուրեան, «Զսան Կախաղանները», Կ.Պոլիս, 1921. Զրանդ Գալիկեան, «Գեղամ Վանիկեան»:
- [2] «Արարատ», 2011-ի նոր տարուան բացառիկ. Եղիկ Ճերեճեան, «100 Ամեակ «Կայծ» Ուսանողական Միութեան»:
- [3] «Կայծ», 1911, թիւ 5, Օգոստոս:
- [4] «Կայծ», 1911, թիւ 8, Նոյեմբեր. «Կայծի Թիւ 6-ի Զարցարանին Պատասխանները»:
- [5] «Կայծ», 1913, թիւ 10-11, Ապրիլ-Մայիս:
- [6] «Կայծ», 1914, թիւ 12, Յունիս:
- [7] «Չնչակ», 1913, Յունուար:
- [8] «Չնչակ», 1913, Փետրուար:
- [9] «Չնչակ», 1913, Ապրիլ-Մայիս:
- [10] «Չնչակ», 1914, Մայիս:
- [11] Եղուարդ Չոփուրեան, ... էջ 52:
- [12] Նոյն, էջ 53-54:
- [13] Ե. Չոփուրեան, ... Ա. Սիրվան, «Զսաններն Երկուրը»:
- [14] «Նոր Աշխարհ», 1912, Սեպտեմբեր 7/20:
- [15] Emanuel Aliprandi, «1915, Cronacadi Un Genocidio», pub. My Book, 2009, Italy.
- [16] Ե. Չոփուրեան..., Տիգրան Չաւեն, «Մեր Վերջին Մարտիրոսագրութեան Նախապլանները-Վանիկի Յիշատակին»:
- [17] «Պալքանեան Մամուլ», 1919, Ապրիլ 20. Յովհաննէս Տէլվճեան, «Յիշատակի Ծուէն»: Վանիկի վերջին օրերուն մասին անձնական վկայութիւններ ունի նաեւ Տոքթ. Զայկ Գալճեան, «Արարատ», 1974 Յունիս 3:

## ՎԱՀԱՆ ՊՈՅԱՃԵԱՆ (ՌՈՒԲԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ)

ՄԴ Չնչակեան դրօշին տակ ամբողջ կեանք մը հայ ժողովուրդի ազատագրութեան դատին նուիրած հերոսներու շարքին կը պատկանի Ռուբեն Կարապետեան:


Պատմութեան մէջ միայն իր ծածկանունով ծանօթ՝ Ռուբեն Կարապետեան ծնած է Չմշկածագ, 1874-ին:

Անոր պատանեկութեան եւ ուսման տարիներուն մասին յիշատակումներ չկան:

Ռ. Կարապետեանի Չնչակեան Կուսակցութեան անդամակցութեան մասին եւս տուեալները հակասական են: Ամենէն հաւանականը այն է, որ Ռ. Կարապետեան երիտասարդութեան սանդիսամատին կը գաղթէ Ամերիկա եւ հոն կը մտնէ Կուսակցութեան շարքերը:

Որովհետեւ, Ռուբեն Խանազատ, ակնատեսի վկայութեամբ կը գրէ թէ, երբ Չէթունի ապստամբութեան նախապատրաստութեան համար Կեդրոնական Վարչութիւնը կոչ կ'ընէ Ամերիկայի շրջանին, «որ այնտեղից լաւ կռուող ուժեր եւ գիտակից ու պատրաստի գործիչներ գան», կոչին ընդառաջողներուն եւ Ամերիկայէն Լոստոն՝ Կեդրոնական Վարչութեան ներկայացողներուն շարքին կը գտնուէր Ռ. Կարապետեան<sup>172</sup>:

Թէ ինչո՞ւ Ռ. Կարապետեան իր հետ եկող ընկերներուն նման Լոստոնէն Կիպրոս չի մեկնիր եւ անկէ Կիլիկիա անցնելով Չէթունի ապստամբութեան գործողութիւններուն մէջ չ'երեւիր՝ յայտնի չէ:



Ան որոշ շրջան մը կը մնայ Կեդրոնական Վարչութեան տրամադրութեան տակ ու կը կատարէ անոր յանձնարարութիւնները: Այդ ընթացքին, Կեդրոնական Վարչութեան եւ անոր շուրջ համախմբուած ընկերներուն գաղափարական մթնոլորտին մէջ կը հասունանայ Ռ.Կարապետեանի գաղափարա-քաղաքական կազմաւորումը:

1902-ին, Կեդրոնական Վարչութեան կողմէ գործիչ կը նշանակուի Պուլկարիա (Պուրկազ)<sup>[2]</sup>: Նոյն պաշտօնով կ'այցելէ նաեւ Ռումանիա, «ուր իբր բարեխիղճ եւ ուղղամիտ մարդ յարգուած էր բոլորէն»<sup>[3]</sup>:

1903 Սպտեմբերին, Լոնտոնի մէջ կը մասնակցի Յնչակեան Կուսակցութեան Դ. Զամագումարին, որպէս Ամերիկայի կարգ մը մասնաճիւղերու պատգամաւոր<sup>[4]</sup>:

1904-ին կուսակցական գործիչի հանգամանքով կը կազմակերպէ Օստեսայի շրջանը: Ապա կը վերադառնայ Պուլկարիա<sup>[5]</sup>:

1905 Սեպտեմբերին, Փարիզի մէջ կը մասնակցի Յնչակեան Ե. Զամագումարին<sup>[6]</sup>, ուր կը պաշտպանէ Կուսակցութիւնը մէկ ու միասնական պահելու տեսակետը:

1906-1907-ին, որպէս Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ, կը գործէ Անդրկովկասի՝ մասնաւորաբար Պաքուի մէջ: Այդ տարիներուն, ան կը մասնակցի Պաքուէն դէպի այլ վայրեր գէնքի տեղափոխման աշխատանքներուն:

1908-ին Կեդրոնական Վարչութեան կողմէ կը նշանակուի Եգիպտոսի շրջանի գործիչ:

Նոյն տարին, «պարտականութիւնը զինք կը կոչէ աւելի դժուարին գործի մը, որով կը ստիպուի անակնկալ կերպով հեռանալ Եգիպտոսէն»: Կը մեկնի Պուլկարիա եւ ընկ. Մուսայի<sup>[7]</sup> հետ կը զբաղի դէպի Կ.Պոլիս գէնքեր փոխադրելով<sup>[8]</sup>:

Օսմանեան Սահմանադրութենէն ետք կու գայ Կ.Պոլիս:

1909 Յուլիսին, Կ.Պոլսոյ մէջ կը մասնացի ՍԴԳԿ 2. Զամագումարին, որպէս Պալախանիի (Պաքու) «Ընկեր» մասնաճիւղի պատգամաւոր<sup>[9]</sup>:

1910-ին կուսակցական աշխատանքներով դարձեալ կը գտնուի Պուլկարիա:

Յաջորդող տարիներուն, կազմակերպչական-քարոզչական գործունեութիւն կ'ունենայ Կ.Պոլսոյ եւ Նիկոմիդիոյ (Իզմիր, Օվաճըզ, Պարտիզակ, Ատապազար, Մեծ Գիւղ, Նոր Գիւղ, Եւայլն) շրջաններուն մէջ: Կ'ընտրուի ազգային երեսփոխան Չմշկածագի շրջանէն<sup>[10]</sup>:

1913-ին, ՍԴԳԿ Կէստէնչէի Է. Զամագումարը կ'որոշէ վերադառնալ գործունեութեան ոչ-օրինական ձեւերուն: Զամագումարէն բխած որոշումներուն գործադրութիւնը կը յանձնուի Փարասագին, Տոքթ. Պէննէին, Ս.Վահագնին եւ Ռ.Կարապետեանին:

Ս.Վահագն եւ Ռ.Կարապետեան կը մեկնին Անդրկովկասի տարբեր քաղաքները: Այս մասին Ս.Վահագն իր յուշերուն մէջ կը գրէ. «Ես անցնում եմ Կովկաս տերրորիստ ընկերներին բերելու: ...Սահակեանը (վատահամբաւ լրտես Արթիւր Եասեանը .- Ե.Ը.) անցնում է Պոլիս ազատ իր գործը շարունակելու, ես ոչինչից լուր չունիմ, Սիմֆերպոլում ստանում եմ մի նամակ, Պոլսից գրում են, Վահագնը Պոլիս չէք գար, ձեր նկարները բազմաթիւ ցրում են Պոլիս, Սահակեանը թեզ երեւի մատնած է, դուք կը մնաք եւ հանգանակութեան գործը կը շարունակէք, նաեւ Սիւնիքի բանտարկութեան ազատումի պարագաները: Իսկ տղաները կ'ուղարկէ Պուլկարիա: Ես եւ Ռուբէն Կարապետեանը շարունակում ենք հանգանակութեան դիմումները կատարել: Սիմֆերպոլ, Եպպադորիա, միաժամանակ քննում Սիւնիքի գործը»<sup>[11]</sup>: Ռ.Կարապետեան նոյն աշխատանքները կը կատարէ նաեւ Թեոտոսիայի մէջ<sup>[12]</sup>: Ս.Վահագն կը շարունակէ. «Մենք հանգանակութեան գծով անցնում ենք Սոխումի: Սոխումի Ռ. Կարապետեանը ուղարկում ենք Պոլիս, իբրեւ ամերիկեան հպատակ, որպէսզի մեզ տեղեկութիւններ տայ: Ստանում եմ Պոլսից մի ուրիշ նամակ ներքակ Կարապետեանին: Նամակը գրում են անցիր Վան: Պաթում եմ գնում: Նորից մի նամակ, որ այլեւս Վան գնալը վտանգաւոր է, ամէն կողմեր հեռագրած են թեզ ձեռք անցկացնելու: Ես արհամարհելով շարունակում եմ»:

Շատ հաւանաբար, Ս.Վահագնի ներքակ նամակին մէջ, Ռ.Կարապետեանին ալ նոյն բանը կը թելադրուէր: Բայց արդէն ուշ էր...:

Կ.Պոլսոյ մէջ հնչակեան ղեկավարութեան հետ կը ձեռքակալուի Ռ.Կարապետեան:

Պատարանին առջեւ, ուր ան կ'ունենայ յաճախակի էլոյթներ, կ'ուրանայ ամէն բան: Յատկապէս կը դժժ իր ծանօթութիւնը, գործակցութիւնը կամ կապը Ս. Վահագնին հետ<sup>[13]</sup>. միակը՝ որ Զամագումարի որոշումները գործադրութեան ղնելու որոշուած չորս անձերէն ըլլալով ձեռքակալուած չէր ու կը մնար փախստական:

Կը միանայ Զսաններու փաղանգին:

\* \* \*

Յնչակեան արխիւին մէջ պահուած կը մնան Ռ.Կարապետեանի գրչին պատկանող կարգ մը նամակներ: Որպէսզի ընթերցողը Ռ.Կարապետեանի աշխատելաոճին, ազգային-քաղաքական հարցերու շուրջ անոր հայեացքներուն մասին գաղափար մը կ'ըզմէ, ստորեւ կը հրապարակենք այդ նամակներէն քանի մը հատը:

Գահիրե Յնչ. մասնաճիւղի վարչութեան,  
Սիրելի ընկերներ,

Երեկ (Չորեքշաբթի) երեկոյեան տոքթորից լուր ստացուեց, որ համաձայնում է յորելեանին նախագահել, ուրեմն, նամակ ստանալուդ անմիջապէս երկու վարչութեան կողմից մի հրաւեր ուղարկեցէք նշանակելով օրն ու ժամը, եթէ փրոկրամը պատրաստ է ներփակեցէք:

Երեկ տեղիս ընկերներից մէկը տեղդ գալով մի նամակ յանձնեցի նրան՝ ձեզ համար, յոյս ունիմ ստացած ու հարկ եղածը կարգադրած կը լինեք: Գրքերը յանձնեցէք նրան որ միասին բերէ: Նրա հետ ուղարկեցի 20 տոմսակ:

Ի՞նչ արեցիք յորելեանը, արդեօ՞ք նշանակեցիք օրը, հարկաւոր է արագացնել, մի քիչ թող ժրժրան ընկերները:

Ընկեր Միհրանը թող չմոռնայ պատանիների խումբը հաւաքելու, ինչպէս նաեւ բոլոր ընկերներին...: Ինձ եկած նամակները ուղարկեցէք ծանօթ հասցեով:

Ընկերական սիրալիր բարեւներով

Եգիպ. Գործիչ՝  
1908, Մարտ 13  
Ռ. Կարապետեան  
Աղեքսնդրիա

\* \* \*

Գահիրե Յնչ. մասնաճիւղի վարչութեան,  
Սիրելի ընկերներ,

Ընկ. Խաչիկի հետ ուղարկած նամակը, կապոցն ու պատկերները ստացայ, սակայն ինչ որ աւելի հետաքրքիրն ու հրատապ խնդիրն էր ինձ համար հանելուկ մնաց, թէեւ ընկերոջ միջոցով յայտնել էիք, որ շուտով նամակ գրելու էք, որը դեռ չհասաւ ձեռքս: Ինձ համար ամենակարեւորն էր յորելեանի պատրաստութիւնը, որը շատ ուշացաւ, ընդհակառակը հիմիկ փրոկրամը գոնէ դուրս գալու էր, ինչպէս երեւում է շատ անտարբեր էք վերաբերում դէպի յորելեանկարգադրութիւնը, ապա թէ ոչ այժմ ամեն ինչ վերջացած լինելու էր: Ինչ որ է, յոյս ունիմ կարծածս անտարբերութիւնը երազ եղած ըլլայ:

Տեղս արդէն վերջանալու վրայ եմ եւ գուցէ գալ շաբթու կը մեկնիմ այստեղից, բայց գալուցս առաջ արդեօ՞ք կարելի է պատրաստել մի սենեակ, որ, ի հարկէ ազատուած լինեմ աւելորդ պանդոկի ծախսեր տալուց: Այս մասին, ինչպէս նաեւ յորելեանի, շուտով իմացրէք ինձ:

Վստահ եմ, որ մինչեւ այժմ արդէն հրաւիրած կը լինեք Տոքթորին, որի հասցեն նախորդ նամակիս գրած էի: Նոյնանման մի հրա-

ւեր պիտի անել եւ Տամատեանին: Չմոռնալ ուղարկել փրոկրամներից մի-մի օրինակ բոլոր մասնաճիւղերին:

Ընկեր Երուանդի ուղարկած «Լուսաբեր»ը ստանում եմ կանոնաւորապէս, շնորհակալութիւն: Ինձ եկած նամակները ուղարկեցէք ընկեր Երուանդի մօտ գտնուած հասցեով: Սպասելով ձեր նամակին՝

Ընկերական սիրալիր բարեւներով

Եգիպ[տոսի]  
ժամ[անակաւոր] Գործիչ՝  
1908, Մարտ 20  
Ռ. Կարապետեան  
Աղեքսնդրիա

\* \* \*

Գահիրեի Յնչ. մասնաճիւղին,  
Սիրելի ընկերներ,

Ցաւոք սրտի յայտնում եմ, որ յառաջիկայ ուրբաթ (Օգոստոս 7) օրը մեկնելու եմ Եգիպտոսէն Փարիզ: Զգիտեմ մի անգամ Գահիրե հանդիպիլս անհրաժեշտ է թէ ոչ, այդ մասին, ի հարկէ, կ'իմացնեք: Յամենայն դէպս ես հոգով միշտ ձեզ հետ եմ: Պարտականութիւնը ինձ կոչում է աւելի մի դժուարին գործի, որով ստիպուած եմ անակնկալ կերպով հեռանալ:

Այժմ յեղափոխութիւնը աւելի լուրջ քայլեր պետք է առնէ, մանաւանդ գտնուում ենք սահմանադրութիւն անուանուած մի թակարդի առաջը: Ներկայ սահմանադրութիւնը ոչ այլինչ է, եթէ ոչ ազգերի ինքնուրոյն գաղափարը մեղցնելու եւ ազատագրական շարժումները ի սպառ խեղդելու, եթէ ճշուող ազգերը մի տեսակ կամուրջով եւ դատապարտել մեռելութեան՝ քսան տարուայ այդքան գործը եւ նրանից շահած միջազգային առանձնաշնորհումները: Ո՞վ կը համաձայնուի կամովին սպանանոց գնալու, ոչ ոք: Ճշուող ազգերը այժմ աւելի քան երբեւէ շրջահայեաց պիտի լինեն ու սպասողական դիրք բռնեն ու ամփոփեն իրանց ուժերը ապագային ուժեղ հոսանքով դիմադրելու.- ահա ճշուող ազգերի բռնելիք ուղղութիւնն ու քաղաքականութիւնը:

Ընկերական սիրալիր բարեւներով

Եգիպ[տոսի]  
Առժամեայ Գործիչ՝  
1908, Օգոստոս 3  
Ռ. Կարապետեան

3.9) իմ փալթոս ընկեր Երուանդի մօտն է, խնդրեմ մեկին հետ ուղարկեք, եթե գալող լինի: Կերակազմեալ ընկերներից շատերը գալիս են նրանց հետ ուղարկեցեք: Միհրանի մասին նաեւ յայտնեցեք նրանց:

\*.\*

Տարիներ կ'անցնին ու բանաստեղծը շատ գեղեցիկ քերթուած մը կը նուիրէ Ռ.Կարապետեանին, ուր կ'ընտւի.-

*Ճանաչեք, խնդրեմ - Պոյաճեան Վահան  
Նաեւ Ռուբէն Չմշկածակցի,  
Տեղով ֆետայի - տղամարդ լերան,  
Ցաւի առաքեալ եւ արիածին,  
Խղճի պահապան,  
Բայց եւ կախաղան վաստկած հերոս,  
ԶՍՄՆԻՑ մէկը - արքայ մարտերի,  
Նաւաշինարար - չվառած փարոս  
Նահատակ - նաւագ խլուած ափերի,<sup>144</sup>*

Բանաստեղծը չէր գիտեր, որ յեղափոխական մարտիկի մը բոլոր յատկանիշերէն անկախ, Ռ.Կարապետեան, Օսմանեան «Սահամանադրութիւն անուանուած թակարդին» ակնարկելով եւ Սահամանադրութեան յայտարարութենէն հագիւ ամիս մը անց, «ո՞վ կը համաձայնի կամովին սպանդանոց երթալ» հարցը կու տար իր ընկերներուն ու անմեղունակ պարզութեամբ մը կը պատասխանէր. «Ո՛չ ոք»:

Երանի այդպէս ըլլար:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Հայրենիք», 1928 Ապրիլ, թիւ 6 (66). Ռ. Խանազատ, «Հայ Յեղափոխականի Յուշերից»:
- [2] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Հնչակեան Կուսակցութեան», Բ.հտ., Պէրլուք, 1963, էջ 258:
- [3] Նոյն, էջ 298:
- [4] Ա. Կիտուր, ...հ.Ա., էջ 287:
- [5] Նոյն, էջ 258:
- [6] «Հայրենիք», 1929 Մայիս 7. Ռ. Խանազատ «Հայ Յեղափոխականի Յուշերից»:
- [7] Մուսա՝ Մովսէս Նահապետեան, ծնած է Սեքաստիա: Կ'աւարտէ Խարբերդի Եփրատ Գոլէճը: «Աշխոյժ եւ վառ ուժ մը» (Առաքել Պատրիկ, «Պատմագիրք Յուշամատեան Սեքաստիոյ», Ա.հտ., Պէրլուք, 1974, էջ 646): Կը նուիրուի յեղափոխութեան: Մատնութեան մը հետեւանքով կ'աքսորուի Ափրիկեան Թրիփոլիի Ֆիզան գիւղը: Կարեւոր օժանդակութիւն կ'ունենայ Նոյն վայրը աքսորուած Մեծն Մուրատի աքսորէն փախուստի գործին: Աքսորէն ազատուելէն ետք կը շարունակէ իր յեղափոխական գործունեութիւնը: Օսմ. Սահմանադրութենէն ետք կը նշանակուի Փոքր Հայքի կուսակցական գործիչ: Որպէս այդ շրջանի պատգամաւոր, 1909 Յուլիսին Կ.Պոլսոյ մէջ կը մասնակցի ՍԴՀԿ 2. Համագումարին (Ատենագրութիւն ՍԴՀԿ 2. Համագումարի. հնչ. արխիւ): Կը հաստատուի Պուկկարիա եւ կը պաշտօնավարէ Պագարճըքի ազգ. վարժարանին մէջ: Ապա կը գաղթէ Ամերիկա:
- [8] Ա. Կիտուր, ... Բ.հտ., էջ 258:
- [9] Ատենագրութիւն ՍԴՀԿ 2. Համագումարի: Հնչ. արխիւ:
- [10] Թեղիկ, «Յուշարձան Ապրիլ Զանաչորսի», Բ.տպ., Պէրլուք, 1985, էջ 50:
- [11] Ս.Վահագնի յուշերը: Հնչ. արխիւ:
- [12] «Տեղեկագրութիւն ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Թեոտոսիայի Մասնաճիւղի», 1913 Սեպտ 21: Հնչ. արխիւ:
- [13] «Arsiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri 1914-1918», Genelkurmay ATASE ve Denetleme Baskanligi Yayinlari», Ankara, 2006, p. 190-201:
- [14] Գարուշ Հարեանց, «ANFILADA», Lnu Անճեղու, 2000, էջ 85-88:

# ԱՐՏԱՇԷՍ ՍՈԼԱՔԵԱՆ

Յնչակեան ընկերվարակա-  
նութեան ամենէն մարդասի-  
րական ըմբռնողութեան ներ-  
կայացուցիչն է Արտաշէս Սո-  
լաքեան:

Ա.Սոլաքեան ծնած է Վան,  
1884-ին:

Կը յաճախէ ծննդավայրի  
Երամեան դպրոցը եւ կ'աւար-  
տէ այդ 1901-ին:

Յաջորդ տարին, որպէս հայե-  
րէն լեզուի եւ պատմութեան  
ուսուցիչ կ'ընդունուի նոյն դըպ-  
րոցէն ներս: Միեւնոյն ժամա-  
նակ գծագրութիւն կը դասա-  
ւանդէ պետական դպրոցին  
մէջ: Այդ միջոցին, հեռակայ կը  
հետեւի Սորպոնի համալսա-  
րանին ֆրանսերէն լեզուի դասընթացներուն:

Արտաշէսի հայրը՝ Խաչատուր, կ'ըլլայ Վասպուրականի շրջանի  
առաջին յեղափոխական գործիչներէն, որուն պատճառով ան երկու  
անգամ կը ձերբակալուի ու կը բանտարկուի: Արտաշէսի աւագ  
եղբայրը՝ Արշալիր եւս կ'անդամակցի Յնչակեան Կուսակցութեան:  
Ընտանեկան այս մթնոլորտին մէջ հասակ առած եւ մարդասի-  
րական խոր ըմբռնումներու տեր Արտաշէս, անդամակցելով Յնչակե-  
ան Կուսակցութեան կը դառնայ անոր Վանի շրջանի կարկառուն  
գործիչներէն:

Որպէս ՄԴՅԿ Վանի մասնաճիւղի վարչութեան անդամ, կը ծա-  
ւալէ ազգային-յեղափոխական գործունեութիւն, որուն կողքին հան-  
դէս կը բերէ նրբաճաշակ արուեստագետի բազմաշնորհ ծիրքեր:



Գուրգէն Մահարի անոր մասին կը գրէ.- *«Անա Արտաշէս Սոլաքեա-  
նը, թէ՛ Ներքուստ, թէ՛ արտաքուստ մի փայլուն անձնաւորութիւն,  
տաղանդաւոր մարդ, ոտից մինչեւ գլուխ, ուսուցիչ, թատերագետ,  
դերասան... բայց շէֆ, անպայման շէֆ»<sup>11</sup>*

Որպէս թատերագիր, բեմադրիչ եւ դերասան, Ա.Սոլաքեան մեծ  
զարկ կու տայ Վանի թատերական կեանքին: 1904-ին, Երամեան  
դպրոցի ուժերով կը բեմադրէ իր գրած «Թորոսի Տունը» թատրեր-  
գութիւնը, ուր կը հեքնուի Վանի հայութեան մէջ տեղ գտած յոռի  
բարքերը: Թատերախաղը ժողովրդականութիւն կը գտնէ եւ Վանի  
մէջ մեկէ աւելի անգամներ բեմադրուելէ ետք կը բեմադրուի նաեւ  
Տրապիզոնի, Էրզրումի եւ Կ.Պոլսոյ մէջ<sup>12</sup>: Թուրք մտաւորական-  
ներու փափաքով այն կը թարգմանուի թրքերէնի եւ Վանի մէջ կը  
բեմադրուի թուրք հանդիսատեսին համար: Ա.Սոլաքեան կը բե-  
մադրէ նաեւ միջազգային եւ հայ դասականներու գործեր, ուր ինք  
հանդէս կու գայ Օթելլոյի, Ռոմէոյի, Էռնանի, Պեպոյի եւ այլ գլխա-  
ւոր դերերով:

Իր գծագրական ծիրքերը զարգացնելու համար, Ա.Սոլաքեան  
Փանոս Թերլեմեզեանի մօտ կը հետեւի նկարչութեան դասընթաց-  
ներու: Ան նաեւ իր ընկերական միջավայրին մէջ ծանօթ կ'ըլլայ  
որպէս լաւ երգող եւ նուագող: *«Բացի Պոլսահայ թերթերու իր աշ-  
խատակցութենէն՝ 1906-ին կը հրատարակէ «Անուպ» խմորատիպ  
հանդէսը, յետոյ «Կոչնակը»՝ ուրուն կը միանայ Բրուտեան»<sup>13</sup>*: 1910-էն  
յետոյ, «Արսուլա» գրչանունով կ'աշխատակցի ՄԴՅԿ Ուս. Միութեան  
օրկան «Կայծ»ին:

Բազմաձիրք մտաւորականը ծանօթ կ'ըլլայ նաեւ որպէս հռետոր  
եւ բեմբասաց: *Դաշնակցական ծանօթ գործիչ Խոսրով Թիւֆիւնճե-  
ան, «Յնչակեան սիրուած մտաւորական Արտաշէս Սոլաքեանը»  
կը ներկայացնէ որպէս նուիրեալ մը հայ մշակոյթին. «Գրականու-  
թիւն եւ թատրոն իր տարերքը դարձած էին: Կը գրէր թատրերգու-  
թիւններ եւ կը կազմակերպէր ներկայացումներ: Դեղձան մագերով  
եւ կապոյտ աչքերով, սլացիկ հասակ, գեղանի երիտասարդ մըն էր,  
բարի ժպիտ մը այտերուն: Ան սիրուած էր հասարակութեան բոլոր  
խաւերէն: Մեր ընկերներէն շատեր, որոնք կ'աջակցէին իր  
ձեռնարկներուն, ինծի պէս իր նախկին աշակերտներէն էին»<sup>14</sup>*:  
Խ.Թիւֆիւնճեան նաեւ կը յիշէ որ Վանի 1896-ի ինքնապաշտպանու-  
թեան մէկ ամեակին նուիրած միջ-կուսակցական ձեռնարկի մը,  
Յնչակեան Կուսակցութեան կողմէ ելոյթ կ'ունենայ Ա.Սոլաքեան եւ  
վեր առնելով հայ կուսակցութիւններու համագործակցութեան  
զաղափարն ու ակնարկելով արմենական Աւետիսեանի, հնչակեան  
Մարտիկի եւ դաշնակցական Պետոյի նահատակութեան, իր ելոյթը

կ'աւարտէ երեք կուսակցութիւններու պաշտօնաթերթերուն անունները համադրող սա քառեակով.

*Ու ինկան անոնք*

*Ազատութեան Յնչակը ձեռքերնին*

*Եղբայրութեան Դրօշակին տակ*

*Արմենիա մըմնջելով: <sup>(6)</sup>*

1907-ի վերջաւորութեան Ա.Սուլաքեան կը մեկնի Թիֆլիս, ուր կը մնայ տարիէ մը աւելի: Թիֆլիս կեցութիւնը մեծապէս կը նպաստէ անոր աշխարհահայեացքի ընդլայնման: Կը ծանօթանայ եւ բարեկամական յարաբերութիւն կ'ունենայ հայ ծանօթ հասարակական գործիչներու, գրողներու, խմբագիրներու եւ արուեստագետներու հետ: Թիֆլիսի մէջ կը բեմադրուի անոր «Թորոսի Տունը»: Սիրանուշի հետ կը խաղայ «Էռնան»ի բեմադրութեան մէջ: Ի տես Ա.Սուլաքեանի դերասանական ձիրքերուն, Սիրանուշ խորհուրդ կու տայ անոր խորանալ դերասանական արուեստին մէջ. մինչդեռ, Շիրվան-գաղէ խորհուրդ կու տայ ամբողջապէս նուիրուիլ թատերագրութեան. նախապէս, Փ.Թերլեմեզեանն ալ անոր թելադրած էր նուիրուիլ նկարչութեան...:

Այդ տարիներուն, «Ա.Սուլաք» գրչանունով կ'աշխատակցի «Երկրի Ձայն» շաբաթաթերթին: Անոր գրած ուշագրաւ ուսումնասիրութիւններէն մին կ'ըլլայ «Թիւրքահայ Շարժումը եւ Յարստահարուող Մասսան» յօդուածաշարքը<sup>(6)</sup>: 1908-ին, որպէս Կ.Պոլսոյ «Սուրհանդակ» թերթի թղթակից, Էջմիածնոյ մէջ ներկայ կ'ըլլայ կաթողիկոսական ընտրութեան:

Ա.Սուլաքեան կը վերադառնայ Վան, իր հետ բերելով իր միջոցներով ձեռք ձգուած հայերէն գիրքերու մեծ հաւաքածոյ մը, որուն շնորհիւ Երաման դպրոցի գրադարանը կը դառնայ Վանի ամենէն ճոխ հայկական գրադարանը:

Կը շարունակէ իր կուսակցական եւ մշակութային գործունեութիւնը:

1910-ին կ'ամուսնանայ գեղանի Կալիփսէին հետ, որ կը դառնայ անոր գաղափարի ընկերն ու աջակիցը հասարակական, կրթական, մշակութային գործունեութեան: Վանի մէջ Կալիփսէ կ'ըլլայ առաջին կին դերասանուհին (մինչ այդ, կանանց դերերը կը կատարէին տղամարդիկ):

ՍԴՅԿ Կոստանցայի 7-րդ համագումարի որոշումներուն մատուցածն էր, 1914 Յուլիսին սկսած հնչակեան ղեկավարութեան ընդհանուր ձերբակալութեան, կը ձերբակալուի նաեւ Վանի հնչակեան պատասխանատուները՝ Ա.Սուլաքեան, Աբրահամ Բրուտեան, Ասօ (Տիգրան Օտեան), Կարապետ Տանդեան եւ Յայկակ Երեմիշեան:

Վանի հնչակեան ղեկավարութիւնը, շուրջ ութ ամիս կը մնայ Վանի բանտը՝ սպասելով դատավարութեան: Կատարուած բոլոր միջամտութիւնները ապարդիւն կ'անցնին: Անոր պատճառը թրջական իշխանութիւններուն ձեռքը անցած Ա.Բրուտեանի գրած նամակն էր Փարամագին, ուր կը խօսուէր Կոստանցայի համագումարի որոշումներուն մասին<sup>(7)</sup>:

Բանտին մէջ, Ա.Սուլաքեան գրի կ'առնէ իր բանտային յուշերը եւ զանոնք մաս առ մաս, իրեն այցելողներուն միջոցով կը հանէ բանտէ դուրս, որոնք կը հաւաքուին կնոջը՝ Կալիփսէի մօտ: Վանի ընդհանուր նահանջին, Կալիփսէ մեծ գուրգուրանքով ամուսնոյն բանտային յուշերը կը բերէ Երեւան: Յուշերը սակայն երկար ժամանակ լոյս աշխարհի գալու բախտին չեն արժանանար: Կալիփսէի մահէն ետք, այդ տետրերը կը մնան Արտաշէսի անագ եղբօր, իրաւաբան Արշակիի մօտ, որ իր գաղափարակից ընկերներուն հետ, 1924-ին Կ.Պոլսէն ներգաղթած էր Յայաստան ու դառնորէն «վայելած» ստալինեան աքսորը: Երկար ողիսականէ մը ետք, 2002-ին Ա.Սուլաքեանի «Բանտային Յուշերը» կը հրատարակուին... որոնց մասին ան խանդաղատանքով կը գրէր.- *«Չնտանիս խաւարին կապանքներէն թոյր դէպի ազատութիւն... տառապանքիս, յոյգերուս եւ յոյսերուս միակ ապաւեն՝ դուք, անմահ յուշատետրեր: Այսօր ձեր ազատութեան օրն է: Դուք կ'երթաք դէպի ազատութիւն, իսկ ես կը մնամ զնտանիս տանջարակնի մէջ»:*

Սովորական օրագրութիւն մը չէ Արտաշէս Սուլաքեանի «Բանտային Յուշեր»ը: Բնական է, այնտեղ կան թրջական բանտին արհաւիրքը պատկերող էջեր: *«Այլանդակուած դէմքերը, զազրելի կերպարները, աղանդաւոր, աղտոտ ցնցոտիները, անկրկնելի խեղճութիւնները, լուս, ոչիլը, ապականութիւնը, վիշտը, անօթութենէ կմախքացած մարմինները, հրէշային արտայայտութիւնները, ոճրագործ պատմութիւնները, ախտաբորբոք տնօրէնները, ապականուած մտքերը, շարժող մեռելները մաղեցին, ապականեցին գեղասէր հոգիս»*.- կը գրէ ան:

Բանտային առօրեային կողքին, մարդկութիւնն ու հայ ժողովուրդը յուզող հարցերը ապրումներու, խոհերու եւ մտատանջութիւններու ձեւով կը կազմեն «Բանտային Յուշեր»ուն հիմնական մասը՝ որուն ընդմէջէն երեւան կու գան ընկերվարական-յեղափոխական հեղինակին մարդասիրական եւ հայրենասիրական ըմբռումները:

Սկիզբ առած Յամաշխարհային Ա. Պատերազմը խորապէս կը յուզէ Ա.Սուլաքեանը: *«Մարդակեր զինուորականութիւնը, արեան անկուշտ գահակալները, վայրագ ու նենգ դիւանագետները արեան մէջ կ'ողողեն Գրատի եւ Արուսեակի միջեւ ինկած այս պզտիկ ու*

աննման մուրակը... Մարդկությունը՝ այս դարու խենթացած, այլատերուած, փառամոլ, նիւթացած, խելագար, պաշտօնական մարդկությունը արբեցումի ու կատաղութան նուպային մէջ ինքզինքը կը սպաննէ».- կը գրէ ան, ու մէկ այլ օրագրութեան մէջ կը շարունակէ.- «Բոլորը-բոլորը տոյն աստծոյ անունով կը կռուին, կը սպաննեն, կը թալանեն, կը խաբեն, կ'առեւանգեն ու աստծուն դիմելով՝ կ'արդարացնեն, խիղճերնին կը հանգստացնեն: Ահա թէ ինչու, ես դադրեցայ աղօթել: Ահա թէ ինչու, խլեցիք ինձմէ իմ աղօթքս»:

Աշխարհակոյ այդ պատերազմին մէջ, Ա.Սոլաքեան իր ճակատագիր կը նախատեսէ հայ ժողովուրդին. «Ես գիտեմ, որ մենք, անգամ մեր ամբողջ ժողովուրդը, պիտի գոհ գնանք այս ահաւոր գալիքին».- կը գրէ ան, ու տաս օր ետք գրած օրագիրին մէջ, շարունակելով միտքը կ'աւելցնէ.- «Երանի թէ գիտնայի բոու մը մարդ կը մնա՞) հայի կեանքը շարունակելու համար: Ահա թէ ինչու չեմ կրնար երգել»:

Այլ պարագայի մը, Ա.Սոլաքեան կը ներկայացնէ այն հոգեվիճակը, երբ տարբեր առիթներով իրենց բանտարկեալ ուսուցիչին այցելութեան կու գան Երամեանի եւ պետական դպրոցի աշակերտները: Ի տես այցելութեան եկած հայ աշակերտներուն ան կը գրէ.- «Պիտի ապրինք, պիտի ապրինք սիրելիներս, սա մեր ճգնաժամն է, սա հայի լինել-չլինելու ճգնաժամն է... այսպիսի սերունդ ունեցող ազգ մը չպիտի մեռնի». իսկ թուրք աշակերտներուն այցելութեան առիթով ան կը խորհրդածէ. «Թող սորվին, թող երգեն, թող յառաջ երթան: Մինչեւ որ այդ ժողովուրդը այդ խոր խաւարէն յառաջ տագրուի, մենք չենք կրնար հանգիստ զգալ: Աշակերտը սեղանին վրայ ինձի համար նոյնն է», ու կ'եզրակացնէ գեղեցիկ պատկերաւոր միտքով մը. «աշակերտի, դպրոցի ծայնը իսկական աշխարհի ծայնն է»:

Կը պատահի որ Ա. Սոլաքեան թրքերէն այբուբենը կը սորվեցնէ իր բանտակից անուս եզտի Նադոյին: Նադո կը խոստանայ բանտէն դուրս գալէն ետք ոչխարով մը փոխհատուցել: Սոլաքեան ծիծաղելով կը մերժէ այդ նուէրը: Նադո կը զարմանայ.- «որ ոչխար չտամ, դու ինչի՞ սապապ ինձի համար կ'աշխատիս.

-Նրա համար, որ ես քեզ կը սիրեմ, Նադո:

-Ես՝ եզտի, դուն՝ հայ, ինչո՞ւ կը սիրես:

-Ինձի համար հայ, եզտի, թուրք, ինկլիզ չկայ, ես բոլոր լաւ մարդոց, ճնշուած մարդոց կը սիրեմ»:

Ա.Սոլաքեան ցաւ կ'ապրի, որ իր բանտարկութիւնը խանգարած է իր հարազատներուն անդորրը՝ որոնք ստիպուած են գիշերը-ցերեկին խանուելով այցելել իրեն ու նաեւ պետութեան դռները վազվզել

իր ազատութիւնը ապահովելու համար: Այս խորունկ ցաւին արտայայտութիւններէն մէկը կ'ըլլայ այն օրագիրը, ուր ան կը նկարագրէ իր ծերունագարդ հօր այցելութիւնը բանտ, եւ հանդիպումը իր հետ ճիշդ այն խուցին մէջ՝ ուր ինք պատանի տարիքին այցելած էր իր յեղափոխական հօրը: Այս մասին Ա.Սոլաքեան իր օրագիրներուն տարբեր էջերուն մէջ կը գրէ.- «Այժմ ես եմ բանտը, հայրիկ, դուն կու գաս ինձ տեսնելու: ...Մի յուսար, որ մեզ շուտով արձակելու են կամ կ'արձակեն երբեք: ...Ու ես, հայր իմ, գացի այն ճամբային, որով դուն քալեցիր կանաչ պատանութենէ մինչեւ ծերութիւնդ սպիտակ»:

Ա.Սոլաքեան, իր օրագրութիւններուն մէջ զեղուն սիրոյ զգացումներով կ'անդրադառնայ իր կնոջ եւ զակին՝ Յակոբիկին (իր քնքշակ-քով՝ ճոկոյին, որ Վանի գաղթին կը մահանայ իր մօր գիրկին մէջ): Ա.Սոլաքեանի այդ էջերը սիրերգութիւններ են, որոնց քով շատ մը բանաստեղծներու սիրային քերթուածները կը խոնարհին: Ու այս բնոյթի օրագրութիւններէն մէկուն մէջ ան կը պոռթկայ՝ -*ես չէի գիտեր, թէ այսքան կարելի է սիրել:*

Ա.Սոլաքեանի մարդասիրական հայեացքներուն, անոր մարգարեական նախատեսութիւններուն եւ բանտային գրականութեան մասին ընթերցողին տեղեկութիւնը մեծցնելու նպատակով, ստորեւ կու տանք 1915 Փետրուար 5-ին «Իմ Կտակը» վերնագիրը կրող անոր բանտային օրագրութիւնը.-

«Եկեք, համայն աշխարհի բոլոր տանջուածներ... եկեք, թշուառներ: Մենք ձեզ կը պատմենք այս անհիւրընկալ հեքիաթը, տաճկական բռնապետութեան բանտի հեքիաթը... Եկեք մեզ մօտ, մենք բանտի ոգին ենք, մաքուր ու անբծ:

Մենք ձեզ կը պատմենք հայուն հեքիաթը...

Մենք մեր խօսքերով ձեզ կ'օրօրենք, դուք նիրի կը մտնէք:

Դուք մի վախնաք, կը տեսնէ՞ք ձեզմէ առաջ եկած ենք մենք... Այս աննդարամետի մնայուն ոգիներն ենք, արթուն պահապանները:

«Ամենայն տեղ մահը մէկ է,

Մարդ մի անգամ պիտ մեռնի»

Բայց այնքամ, երբ կը հնչէ ողջակէզի դժբախտաբեր ժամը... Այն-ժամ ժողովուրդի ոգին ենք մենք, դուք ալ մեզի հետ թէն անգիտակ: Մենք ազատութեան ծայնն ենք աննիւթական ու անմահ: Մենք ու դուք բաւական ենք հոգեպէս նրանց վրայ սաւառնելու, իսկ ժողովուրդը՝ ոչ, նա մարմնով, հզօր բազուկներով պիտի ապրի եւ կ'ապրի:

Այստեղ կըլլայ մեր եղբայրական դամբարանը: Այստեղ, որ ան-չափ ու անհամար հայու կեանք է մարուած: Այս պատերը, որ ան-համար մարդոց տառապանք, վիշտ ու արցունք են տեսած: Սա

անցնող թշուառներուն բորբոսն ու ժանգն է:

Դարեր կ'անցնին, տարիներ կը հողովուին, մեր այս եղբայրական գերեզմանին այցի կու գան մերիններէն սկսած բոլոր անոնք, որոնց ամուսինները, զաակներն ու հայրերը ինկան անհաւասար կրիւնի մէջ, ձեռքն ու ոտքը շղթայուած, ինկան արինստ ու անմոռն:

Մեզ այցի կու գան անոնք, որոնց զաակներուն մարմինները անգղերը կերան լեռներուն վրայ, դաշտերուն մէջ անոնց վերջին հառաչը բնութիւնն ընդունեց, բայց չհասցուց անոնց սիրելիներուն:

Ինչ խօսք, որ մեր գերեզմանին այցի կու գան մեր ծնողները՝ սեւազգեստ, չորցած ձեռքերով, կարկամած շուրթերով, սառած աչքերով:

Մեզ այցի կու գան շիկահեր եւ սեւահեր կանայք, տղոց ձեռքերն բռնած, վշտոտ ու անմխիթար, արցունքի հեղեղն՝ աչքերնուն, կեանքի կարօտը սրտերնուն:

Այս եղբայրական գերեզմանին տեղը մրոտած մատուռ մը չպիտի կանգնի: Մեր ածիւններուն վրայ յուշագրերով քարեր չպիտի դրուին: Մեր ածիւններուն վրայ վանք մը չպիտի շինուի սեւազգեստ կրօնաւորներով: Այլ՝ տաճար մը գիտութեան: Դպրոց մը՝ մանուկներու համար, ազատ հայուն դրօշին տակ, հոն պիտի սորվին, պիտի դաստիարակուին մեր, ձեր եւ այլոց երեխաները: Դոն պիտի լսուի անոնց ուրախ ծիծաղը, անոնց աղմուկը... Ա՛խ, աղմուկ դպրոցի, անփոխարինելի հրճուանքն ես կեանքի:

Այնտեղ է, որ պիտի ուսուցանեն մեր կրօնը, իսկական կրօնը, ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան կրօնը յախտեանական ու անխախտ...

Դուք տեսա՞ք հոր կողքին կանգնած այն զանգրահեր գեղանի տղուն (նկատի ունի պատանի Աղասի Խանջեանին.- Ե.Ծ.): Խելօք աչուկներով, խորունկ հայեացքով խոստումնալից այդ տղուն... Դուք տեսա՞ք մեզի այցի եկող այն կայտառ պատանիները, իմ Պետկոյիս (նկատի ունի Պետիկ Թորոսեանը, որ 1933-37 վարեց Խորի. Զայաստանի արդարադատութեան նախարարի եւ գլխաւոր դատախազի պաշտօնները ու դարձաւ ստալինեան բռնատիրութեան զոհերէն.- Ե.Ծ.) որ կու լար իր ուսուցչին համար... Անոնք պիտի կառավարեն մեր ազատ հայրենիքը, անոնք պիտի ծառայեն մեր յաղթանակող ժողովուրդին, անոնք պիտի մեր սկզբունքներով հիմք դնեն լուսաւորութեան գործին: Ապագայ այն դպրոցին ճակատին որպէս յուշարձան պիտի գրուին մեր անունները այս գոհուածներուն, որոնք հիմաքար պիտի ըլլան ապագայ կեանքին աղմկոտ, աղմկոտ ու զուարթ այդ նոր դպրոցին: Ահա թէ որն է այդ հեքիաթը, որն է այն վիշապներով ու դէւերով բռնուած ճանա-

պարիք, որ հայ ժողովուրդը մկանտ բազուկով, սիրտի կորովով եւ սուրի ուժով պիտի անցնի»:

Վանի 1915-ի ինքնապաշտպանութեան օրերուն, իրենց պարտութենէն զագագած թրքական իշխանութիւնները, բանտին մէջ կը խողխողեն հայ անպաշտպան բանտարկեալները՝ որոնց շարքին նաեւ հնչակեան ղեկավարները: Ինքնապաշտպանութեան յաղթական աւարտէն անմիջապէս ետք, խումբ մը զաղափարակիցներ եւ ազգականներ կը փութան բանտ: Այդ խումբի մասնակիցներէն Սիրակ Սարիատեան կը վկայէ. «Բանտի յատակի վրայ իրար կողքին թափուած էին խեղուած, յօշոտուած, կացնահար ու նիզակահար եղած բանտարկեալների մարմիններն ու ընդհանրապէս այդ թշուառ մարմինների զանազան կտորներ - գլուխներ, թելեր, ձեռներ, սրունքներ եւ ոտներ»<sup>[6]</sup>: Մեծ դժուարութեամբ ճանաչելի կ'ըլլան Աբրահամ Բրուտեանի մարմնին մասերը, որոնք կ'ամփոփուին ու Մայիս 4-ին, Իշխանի եւ ինքնապաշտպանութեան ընթացքին զոհուած 12 դիրքապետերու մարմիններուն հետ, համազգային թաղումով կը թաղուին Արարիկ հայրց գերեզմանոցը:

Արտաշէս Սոլաքեանի մարմինը կը մնայ անճանաչելիներու շարքին ու կը թաղուի հաւաքական գերեզմանափոսի մը մէջ:

## ՇՎՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] Գ.Մահարի, «Այրուղ Այգեստաններ», Երեւան, 1966, էջ 337:
- [2] Արտաշէս Սոլաքեան, «Բանտային Յուշեր», Երեւան, 2002:
- [3] Թեոդիկ, «Յուշարձան Ապրիլ (11) Քսանդրոսի» Պետրոս, 1985, էջ 54:
- [4] Խ.Թիւթիւնեան, «Անմահներու Դետ Վասպուրական Մեր Աշխարհիկ Մէջ», Պէտրոս, 1974, էջ 129:
- [5] Նոյն, էջ 90:
- [6] «Երկրի Ձայն», 1907, Գոկտ. 14-Նոյ. 25:
- [7] Ակնարկուած նամակը կը մնայ թրքական իշխանութիւններուն մօտ: Սակայն, հնչակեան արիւնին մէջ կը գտնուին միեւնոյն ժամանակաշրջանին Ա.Բրուտեանի կողմէ Փարամազին գրուած երկու եւ Ասոյի կողմէ դարձեալ Փարամազին գրուած նամակի մը բնագիրները, որոնց մէջ դարձեալ կ'արծարծուին Կոստանցայի ժողովին որոշումները:
- [8] Սիրակ Սարիատեան, «Կեանքիս Յուշերից», Թեհրան, 1961, էջ 159:

# ՄԻՔԱՅԷԼ ՍԵՐԵԱՆ (ՊԱՆԴՈՒԽՏ)

ՄԴ Յնչակեան Կուսակցութեան մարտական դպրոցի ամենէն փայլուն, ամենէն պայծառ ներակայացուցիչներէն է Պանդուխտ:

Պանդուխտ ծնած է 1884-ին, Սշոյ շրջանի Յունան գիւղը:


1903-ին, Յունան գիւղը համիտեական գունդի մը կողմէ հիմնադրուած կը ոչնչացուի եւ բնակչութիւնը կոտորածի կ'ենթարկուի<sup>[1]</sup>: Պանդուխտ կը միանայ Սասնոյ շրջանի Ֆետայական շարժման: Կը մեկնի Պուլկարիա, ուր կը ստանայ զինուորական կրթութիւն<sup>[2]</sup>:

1909-ին կը մասնակցի ՄԴԳ Կ.Պոլսոյ 2. Զամագումարին:

1909-ի Ատանայի Զարդին, Կ.Պոլսոյ շրջակայ հայաշատ

քաղաքներու ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու նպատակով «արդէն որպէս մարտական ոյժ ծանօթ» Պանդուխտ կը շրջի Ատապազար<sup>[3]</sup>, Պարտիզակ<sup>[4]</sup>, ինչպէս նաեւ Քնճլար, Զիրտպէլէն, Իզմիթ, Օվաճըզ եւայլն<sup>[5]</sup>: Իր այցելած վայրերուն մէջ, Պանդուխտ ընկերներուն կը սորվեցնէ յատկապէս ուժանակ պատրաստելու եղանակները:

Կը մեկնի Ամերիկա. կը նուիրուի կուսակցական քարոզական-կազմակերպչական աշխատանքի: Այս մասին առաջին վկայութիւնը տուողներէն Ս.Նուրիան (Եղիա Գրիգորեան, Սիրվարդ) կը գրէ. - «Որոշ չեմ յիշեր, 1909 թէ 10 թուին էր որ ծանօ-



թացայ ընկ. Ս.Պանդուխտին, Ուստր, Թամս Սթրիթի հայկական սրճարանին մէջ: ...Մեր տեսակցութենէն մէկ շաբաթ վերջ կայացաւ ինչպէսեւ հրապարակային ժողովը Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ներքնայարկը, ուր ներկայ եղաւ խումռն բազմութիւն մը: ... Ընկ. Պանդուխտ խօսեցաւ աւելի քան մէկ ժամ «Ի՞նչ է սոցիալիզմը» նիւթին շուրջ, եւ լայնօրէն բացատրեց անոր հասկացութիւնը հանդէպ կրօնի, ընտանիքի, հայրենիքի եւ ազգութեան մասին: Անոր հռետորական ձեւը, մանաւանդ շատ յստակ բացատրութիւնը, պարզաբանութիւնը իր նիւթին, ուժեղօրէն տպաւորեցին ներկաները...: Ընկեր Պանդուխտ կրօնի ու պայքարի սիրահար մըն էր, կարելի է ըսել իսկական հայդուկ մը, որ իր հաճոյքը կ'որոնէ այդպիսի գործերու մէջ: Որպէս այդպիսին՝ տպագրած ուներ «Ինքնապաշտպանութեան Զամար» խորագրով տետրակ մը, որուն մէջ կը խօսէր ինքնապաշտպանութեան այլազան կերպերու, ինչպէս եւ ձեռնառումքի պատրաստութեան մասին»<sup>[6]</sup>: Յնչակեան Կուսակցութեան Ամերիկայի շրջանի գործունեութեան նուիրուած պատմական էջերէն յայտնի կ'ըլլայ որ 1912-ին Պանդուխտ կ'այցելէ Շիքակօ, ուր անոր «բոցավառող ատենախօսութիւնը կը ստուարացնէ մասնաճիւղը Նորանոր անդամներով: Շիքակոյի հայ գաղութի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կը բացուի ակումբ-գրադարան: Նոյնպէս, առաջին անգամ ըլլալով կը կազմուի ինչպէսեւ դերասանական խումբ»<sup>[7]</sup>: Պանդուխտ, կազմակերպչական նպատակներով կ'այցելէ Ռէյսընի<sup>[8]</sup>, Իստ Սենթ Լուիզի<sup>[9]</sup>, Զիլվէնտի<sup>[10]</sup>, Սաուր Միլուոքի<sup>[11]</sup> եւ այլ մասնաճիւղեր: Պանդուխտ կ'այցելէ նաեւ Գանատայի շրջանի ինչպէսեւ մասնաճիւղերը. սակայն, կը պարզուի որ միջ-կուսակցական մրցակցութեան ու նեղմտութեան պատճառով փորձեր կ'ըլլան խանգարել անոր Գանատա այցելութիւնը: Պոսթոնի «Զայրենիք»էն արտատպելով, Կ.Պոլսոյ ԶՅԴ-ի օրաթերթ «Ազատամարտ»ը կը գրէ թէ Պանդուխտի Գանատա այցելութեան ժամանակ տեղի ունեցած դասախօսութեան մը պահուն անհասկացողութիւն ծագած է երկու կուսակցութիւններուն համակիրներուն միջեւ, զոր հարթելու համար երկու դաշնակցականներ այցելած են ինչպէսեւ ներքին, բայց արժանացած են անվայել վերաբերմունքի: Ծագած է վեճ՝ փոխադարձ սպառնալիքներով<sup>[12]</sup>: Կ.Պոլսոյ ինչպէսեւ կիսապաշտօնաթերթ «Կոհակ»ն ալ կը գրէ. - «Գանատայի Ս.Գաթարինէն կը գրեն մեզ, թէ Ամերիկայի շրջանի ինչպէսեւ գործիչ ընկ. Պանդուխտ իր հետ ունենալով Տքթ. Մանուկեան, կազմակերպչական նպատակով Գանատայի ՄԴ Յնչակեան մասնաճիւղերուն այցելելու միջոցին սահմանազուլիսի վրայ ոստիկանութիւնը կ'արգիլէ անոր մուտքը: Զակառակ որ Յնչակ-

եան Ս.- ճիւղերը դրամական եւ բարոյական ամէն երաշխաւորութիւն կը ցուցնեն, բայց կարելի չըլլար ընկերները զանատա մտցնել: Դիմա հաստատուած է որ տեղւոյն դաշնակցականներէն Գրիգոր Իսկէնտերեան կոչուող պարոնը, լսելով մեր ընկերներուն գալը, փութացած է սահմանագլուխ եւ զանոնք իբր անիշխանական մատնած է: Մատնիչը անձամբ Դամթոն, Պրենտֆըրտ եւ Գօլտ պտտելով կը պարծենայ թէ ինք էր որ մատնեց հնչակեանները եւ չթողուց որ անոք զանատա ոտք կոխեն: Նա կը սպառնայ եղեր նոյնպէս, որ եթէ Ս. Գաթարիի հնչակեանները յաջողէին սահմանէն ասդին առնել, ուղղակի ձերբակալել պիտի տայ եղեր անոնց որպէս անարխիստ գործիչ...»<sup>171</sup>: Այսուհանդերձ, Պանդուխտ կ'այցելէ զանատայի շրջանի Գօլտի, Պրենտֆըրտի եւ Ս. Գաթարիի մասնաճիւղերը<sup>172</sup>:

Դամաշխարհային Ա. Պատերազմի սկզբին, Պանդուխտ ամբողջութեամբ կը նուիրուի կամաւորագրութեան աշխատանքին: Ան, այցելելով մասնաճիւղէ-մասնաճիւղ, նախ հրապարակային ելոյթներով կը ստեղծէ խանդավառութիւն եւ ապա կազմակերպչական հանդիպումներով կը լուծէ շատ մը գործնական հարցեր: Այդ շրջանի Պանդուխտի նամակագրութենէն պահպանուած նամակի մը մէջ, գրուած ընկ. Ներսէս Փիլիկեանին, ան կը գրէ. - «Սիրելի ընկեր, ստացայ ձեր 28 թուակիր նամակը որուն մէջ շատ մը կարեւոր խնդիրներ շօշափած էիք. ընկեր, միջազգային համատարած պատերազմին «շնորհիւ» ճանապարհները անանցանելի դարձած են, սակայն Գործադիր Յանձնախումբը արդէն հրաւեր կարողացած է մեկնելու. այդ, ժամանակը հասած է: Ամէն անոնք որ հայրենասիրական տենչով կ'այրուին, պէտք է իրենց պարտականութիւնը կատարեն, նամանաւանդ ձեզ պէս ընկեր մը, որ ծանօթ է ռազմագիտութեան: Ինձ կը թուի թէ Գործադիրը խորհած է ճանապարհների մասին եւ կարգադրած է. ուրեմն պատրաստուիք մեկնելու»<sup>173</sup>: Խօսքէն անցնելով գործի, 1915 Մարտին, ամերիկահայ կամաւորներու առաջին խումբին գլուխը անցած, Արխանկէլսքի վրայով Պանդուխտ կը հասնի կովկասեան ռազմաճակատ<sup>174</sup>:

Սկզբնական շրջանին, Կարսի մէջ Պանդուխտ կը գլխաւորէ Ամերիկայէն ժամանած հնչակեան կամաւորներու 350 հոգիները: Ապա, երբ կը կազմուի կամաւորական 2. գունդը, Պանդուխտ իր խումբով կը միանայ անոր: Կը նշանակուի գունդին փոխ հրամանատար: Գրիգոր Աւարտեանի նահատակութենէն եւ Դայկ Բժշկեանի վիրաւորուելէն ետք, Պանդուխտ կը ստանձնէ գունդի հրամանատարի պաշտօնը: Ընդհանրապէս 1000 կամաւոր հաշուող 2. գունդը կը դառնայ զօր. Պարագոլի հրամանատարութեան տակ

գործող ռուսական բանակին յառաջապահը ու իր կարեւոր մասնակցութիւնը կը բերէ 1915 Դեկտ.-1916 Յունուար «Էրզրումի գործողութեան», որուն որպէս արդիւնք թրքական բանակները ծանր կորուստներ կը կրեն եւ Էրզրումը կը գրաւուի ռուսական բանակին կողմէ:

1917 Փետրուարեան Յեղափոխութենէն ետք, ռուսական բանակը կը սկսի դասալքուիլ ու նահանջել: Ռազմաճակատին վրայ մնացող ռուսական բանակին, հայ կամաւորական գունդերու մնացորդացին եւ արեւմտահայ հայդուկապետներուն ուսերուն կ'իյնայ պաշտպանել Դայաստանի սահմանները: Վերջիններու թուին էր Պանդուխտ. (հայկական ազգ. կորպուսը կը գտնուէր իր կազմաւորման փուլին մէջ): Պանդուխտ իր զօրագունդով կը պաշտպանէ Բարթուզի շրջանը: Թրքական հակադարձակումը չ'ուշանար է Պանդուխտ եւս, ծանր մարտեր մղելով կը նահանջէ դէպի Էրզրում:

1917 Սեպտեմբերին Թիֆլիսի մէջ տեղի կ'ունենայ Դայ Ազգային Դամախորհրդակցութիւնը, որուն կը մասնակցի Պանդուխտ որպէս կամաւորական 6-րդ գունդի ներկայացուցիչ:

Թրքական բանակներուն դիմագրաւելու համար, Ազգ. Բիւրոյի նախաձեռնութեամբ, Թիֆլիսի մէջ, զօր. Անդրանիկի հրամանատարութեան տակ կը կազմուի զինուորական միաւոր մը՝ Դայաստանի Երկրապահ Զօրամասը (ԶԵԶ): ՍԴԴ Աթիֆլիսի Կեդր. Վարչութիւնը, իր 1918 Յունուար 30-ի հեռագրով ՍԴԴ Ամերիկայի շրջանի Կեդր. Վարչի Մարմին կը տեղեկագրէ թէ «Ազգային ժողովի Զինուորական Կոմիտէն, մեր առաջարկութեամբ, ընկեր գաբիդան Պանդուխտին նշանակել է ժեներալ Անդրանիկի բանակին մէջ մի զօրամասի հրամանատար»<sup>175</sup>: Փաստօրէն, մինչեւ Անդրանիկի Էրզրում հասնիլը, ռազմաճակատի գիծին մօտիկ, Սարիղամիշ գտնուող Պանդուխտ կը դառնայ ԶԵԶ-ի իրողական հրամանատարը:

Անոր պարտականութիւն կը տրուի մէկ կողմէ կատարել զօրահաւաք եւ միւս կողմէ հսկողութիւն սահմանել նահանջող ռուսական բանակին լքած զինապահեստներուն վրայ: Այդ շրջանին զօր. Անդրանիկի, Պանդուխտի է ռուս. բանակի հրամանատարութեան միջեւ փոխանակուած զինուորական բազմաթիւ հեռագիրներ ցոյց կու տան, թէ հնչակի դժուարին է պատասխանատու պարտականութիւնը Էր Պանդուխտին կատարածը<sup>176</sup>: Անոր գործը անելի կը դժուարանար, որովհետեւ ռազմաճակատին վրայ կը տիրէր քառս: Ստեղծուած էին շատ մը ազգային, կուսակցական եւ զինուորական մարմիններ, որոնք կը գործէին ինքնագլուխ եւ առանց պահուն լոյսութիւնը գնահատելու: Այս մարմիններու շարքին Դայ Զինուորական Միութիւնը կրցած էր իր ձեռքը դնել բանակի պահեստներուն վրայ,

որոնք կը դատարկուէին սպաներու գրպանները լեցնելու համար: Ժամանակաշրջանի ականատեսներէն շատեր, որոնց թուին Լեւոն Թիթիւնճեան<sup>[19]</sup>, Արսէն Ժամկոչեան<sup>[20]</sup>, Արսէն Մարմարեան (Վահան Թոթովեց)<sup>[21]</sup> կը վկայէն թէ Պանդուխտ ինչպիսի նուիրումով եւ բժախնդրութեամբ կը կատարէր իր ստանձնած յանձնառութիւնը: Հայ ծանօթ պատմաբաններ եւս՝ ինչպիսիք են փրոֆ.ներ Ծատուր Աղայեան<sup>[22]</sup> եւ Արամայիս Մնացականեան<sup>[23]</sup>, ժամանակաշրջանի իրադարձութիւնները վերլուծող իրենց աշխատութիւններուն մէջ, յատուկ կ'անջ կ'առնեն հայրենիքին հանդէպ Պանդուխտի անմնացորդ նուիրումին վրայ:

Պանդուխտ, ինչքան խստապահանջ եւ բժախնդիր, նոյնքան ալ բարեհոգի եւ հոգատար կը գտնուի իր տունն ու տեղը թողած ու հայրենիքի պաշտպանութեան փութացած հայ կամաւորին հանդէպ: Երգումի պաշտպանութեան համար, Պաթումէն 200 հոգիսն խումբ մը, որոնց մէջ Միսաք Թորլաքեան, կը փութան ռազմաճակատ՝ Անդրանիկի մօտ: Տիրող խառնիճազանճին պատճառով տղոց առօրեայ սնունդին հարցը չի լուծուիր, որուն պատճառով անոնցմէ մէկը կը ստիպուի իր գէնքը ծախել: Հինուորական գերագոյն մարմինը, որպէս դասալիք, ենթական կը դատապարտէ գնդակահարութեան: Անոր ընկերներէն խումբ մը, Մ.Թորլաքեանի գլխաւորութեամբ Պանդուխտին միջնորդութիւնը կը խնդրեն: Պանդուխտ կ'ըմբռնէ կացութիւնը եւ իր միջնորդութեամբ վճիռը կը բեկանուի: «Այս միջադէպը պատճառ դարձաւ որ սերտ կապ ստեղծուի շտապի պետ հնչակեան Պանդուխտի հետ, որ բոլորիս փոխադրեց քաղաքին կեդրոնը, զօրանոցի մը մէջ տեղաւորեց եւ մեր պարենաւորումը հայթայթեց»,- կը գրէ Մ.Թորլաքեան<sup>[24]</sup>:

Փետրուար 28-ին Երզրում կ'իյնայ: Ընդհանուր նահանջին, Պանդուխտ եւս կը նահանջէ դէպի Սարիղամիշ: Թրքական բանակին յաջորդ հարուածը կ'ուղղուի դէպի Սարիղամիշ: Պանդուխտ կը կազմակերպէ Սարիղամիշի նահանջը, որուն շնորհիւ հնարաւոր կ'ըլլայ գաղթական բազմութիւնն ու ռուսական բանակին մթերքները ապահով փոխադրել թիկունք:

Սարիղամիշէն յետոյ թրքական բանակները երեք ուղղութիւններով կը շարունակեն իրենց յառաջխաղացքը: Անդրանիկ, իր հանդէպ եղած չարախօսութիւններէն ազդուած, կ'ապրի յուսահատական պահեր ու իր հաւատարիմ զինակիցներով կը հեռանայ ռազմաճակատի տաք գիծին վրայ ու քայլ առ քայլ կը կազմակերպէ Շիրակի եւ Արարատեան դաշտի գիւղացութեան եւ հոն տեղակայուած արեւմտահայ գաղթականութեան ընդդիմադրութիւնը գերակշիռ

թրքական բանակին դէմ: Այս մասին, Մոսկուայի ընկերային գիտութիւններու ակադեմիայի ակադեմիկոս Հենրիք Մելիքեան կը գրէ.- «Պատմական նիւթերի յայտնաբերումը, որանց նորովի անկողմնակալ մեկնաբանումն ու գնահատումը մեզ հանգեցրել է այն հետեւութեան, որ 1918 թ. Մայիսին Շիրուանջուղ-Սոգիւթուլ-Տաշղալա պաշտպանական գծի ստեղծումը, Սոգիւթուլում ու դրա շրջակայ լեռներում Սասունից, Մուշից, Արագածոտնի գիւղերում ապստանած մի քանի տասնեակ հազար փախստականների ու տեղական բնակչութեան գոյապայքարի ոգին, գլխաւոր կազմակերպիչը Պանդուխտն էր՝ Միքայէլ Սեֆերեանը (Պանդուխտին որպէս ազգանուն, Սերեանին զուգահեռ, թիրիմացաբար գործածուած է նաեւ Սեֆերեան ազգանունը.- Ե.Ճ.)<sup>[25]</sup>:

Սոգիւթուլի ինքնապաշտպանութիւնը կազմակերպելէն ետք, Պանդուխտ 200 հեծեալներով կը միանայ Սարդարապատի մէջ թրքական բանակները դիմակայելու պատրաստուող հայկական ուժերուն: Պանդուխտ կը տեղակայուի Արագածի լանջին եւ Մայիս 27-ին, արագ ու անակնկալ յարձակում կը կատարէ թրքական բանակի թիկունքին՝ Չիմնի Ղոռ եւ Թուլքի Տէքէ (թիւ 440 բլուրներ) բարձունքներուն վրայ տեղակայուած թրքական բանակի հրամանատարութեան վրայ: Կը գերեվարէ թուրք հրամանատարներն ու կը լռեցնէ հոն տեղակայուած թնդասօթները: Թրքական բանակը կը մատնուի խուճապի եւ կը դիմէ անկազմակերպ նահանջի: Հայկական բանակի կեդրոնական թելը կ'օգտագործէ առիթը եւ կ'ամրապնդէ յաղթանակը: Պանդուխտ իր հերթին, կը համալրէ իր ջոկատը լեռները ապաստանած Շիրակի դաշտի գիւղացիներով, այդ կը հասցնէ 1000 կռուողի ու կը շարունակէ հալածել թրքական նահանջող բանակը: Հայկական բանակի պաշտօնաթերթ «Ռազմիկ» թերթը, յաղթանակին երկրորդ ամենակին առիթով կը գրէ. «Մեր թնդասօթները մեր շղթայի տեսից ռմբակոծում էին թուրքերին, Պանդուխտը իր 200 հոգի մշեցի ծխաւորներով աջից հարուածում էր օսմանցիներին, խլել էր նրանցից մի թնդասօթ եւ գերի էր վերցրել 4 օսմանցի սպայ: Սարդարապատի մօտ գլխաւոր շղթան առանց մի գնդակ արձակելու եւ առանց մի գոհ տալու մօտեցաւ բլուրին, թուրքերը սարսափած, փախան, թողնելով դիակներ եւ բազմաթիւ վիրաւորներ»<sup>[26]</sup>:

Պանդուխտի նախաձեռնած զինուորական այս փայլուն գործողութիւնը կը նկատուի Սարդարապատի ճակատամարտին յաղթանակը ապահովող ամենէն կարեւոր գործօնը, որուն մասին կ'անդրադառնան պատմաբաններ Յարութիւն Թուրշեան<sup>[27]</sup>, Ծ.Աղայեան<sup>[28]</sup>, Երուանդ Սարգիսեան<sup>[29]</sup>, Սերժ Աֆանասեան<sup>[30]</sup>, Հրանդ Աւետիսեան<sup>[31]</sup>

եւ ուրիշներ:

Սարգսրապատի ճակատամարտէն եւ Պաթումի դաշնագիրէն ետք հայ-թրքական սահմանագիծը կ'ապրի յարաբերաբար խաղաղ շրջան մը: Գոյապայքարը կը տեղափոխուի Չանգեզուր-Ղարաբաղ (եռնաշխարհ՝ ուր կը գտնուէր զօր. Անդրանիկ իր հրամանատարութեան տակ գործող Առանձին Յարուածող Չօրամասով:

Հոկտեմբերին, Պանդուխտ իր խումբով կը բարձրանայ Չանգեզուր ու կը միանայ Անդրանիկին: Այս վերամիացումը կը կատարուի այնպիսի պահու մը, երբ Անդրանիկի հաւատարիմ է փորձառու զինուորականներէն շատեր, տարբեր պատճառներով կը հեռանային անոր զօրամասէն: Պանդուխտի նման փորձառու եւ վստահելի ոյժի մը վերայատնուիլը, նոր եռանդ եւ ոգի կու տայ Անդրանիկին եւ զինուորներուն<sup>[32]</sup>:

Պանդուխտ անմիջապէս կը նշանակուի Ղափանի Ազգային Խորհուրդի անդամ եւ Ղափան-Մեղրի շրջանի Առանձին Յարուածող Չօրամասի ստորաբաժանումներուն եւ տեղական ինքնապաշտպանական ջոկատներուն ընդհանուր հրամանատար:

Նոյեմբերի վերջաւորութեան Անդրանիկ կը շարժի դէպի Ղարաբաղ իսկ Պանդուխտ կը նախաձեռնէ հարաւային Չանգեզուրը թուրք-թաթարական վտանգաւոր որջերէն վտանգագերծելու արշաւը: Պանդուխտ, արագ յարձակողականներով, ոչ միայն կը յաջողի իր նպատակին մէջ, այլեւ՝ «տեղի ժողովուրդին, թէ գաղթականութեան եւ թէ եկած զինուորներին» կեցութեան համար կ'ապահովէ մեծաքանակ աւար<sup>[33]</sup>:

Երբ Անդրանիկ եւ Պանդուխտ Ղարաբաղի եւ Չանգեզուրի մէջ յաղթական մարտեր կը մղէին, Պաքու հաստատուած անգլիական բանակի ընդհանուր հրամանատար զօր. Թոմսոնի պատուիրակները կու գան Անդրանիկի մօտ եւ կը համոզեն անոր դադրեցնել զինուորական գործողութիւնները: Անդրանիկ տեղի կու տայ ու կը վերադառնայ Գորիս: Պանդուխտ սակայն չ'ուզեր բաց թողնել ամիթը եւ կը շարունակէ իր յաղթական յարձակումները: Անդրանիկ իրերայաջորդ քանի մը հրահանգներով կը պարտադրէ Պանդուխտին վերջ տալ ռազմական գործողութիւններուն<sup>[34]</sup>:

Պանդուխտ կը յօժարի: Անոր համար այլեւս Չանգեզուրի մէջ ընելիք բան չէր մնար: 1919 Փետրուարին, համախոհներու խումբով մը կը վերադառնայ Երեւան, ապա Սարիղամիշ:

1920-ին Պանդուխտ Սարիղամիշի մէջ թունաւորումի հետեւանքով կը մահանայ: Այս մասին, Պուլկարիոյ շրջանի հնչակեան օրկան «Պալքանեան Մամուլ»ը, «Պանդուխտի Ոճրագործները Կը Փնտռուին» վերանգրին տակ կը գրէ. «Տարաբախտ ընկ. Պանդուխ-

տի ընկերները դատական իշխանութիւններուն դիմելով պահանջած են որ քննութիւն մը բացուի Պանդուխտը թունաւորող դաշնակցական տերօրիստները երեւան հանելու համար եւ հետապնդում կատարուի ոճրագործներուն դէմ»<sup>[35]</sup>: Հնչակեան այլ մամուլի օրկաններ եւս, որոնց շարքին «Երիտասարդ Հայաստան»<sup>[36]</sup> եւ «Նոր Մերուկ»<sup>[37]</sup> կը պնդեն թէ Պանդուխտի մահը սովորական թունաւորման մը հետեւանքով չէր, այլ ոճրափորձի:

Ժամանակաշրջանի իրադարձութիւնները գեղարուեստական գրականութեամբ ներկայացնող շատ մը գրողներ, որոնց շարքին Եղիշէ Չարենց<sup>[38]</sup>, Խաչիկ Դաշտենց<sup>[39]</sup>, Բագրատ Ուլուբաբեան<sup>[40]</sup>, Յարութիւն Մկրտիչեան<sup>[41]</sup>, իրենց վէպերուն մէջ, խոր յարգանքով կը մարմնաւորեն Պանդուխտի կերպարը:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] «Դրօշակ», 1904, Փետրուար. «Հեռագիրներ» (ուղղուած «Դրօշակ»ի խմբագրութեան):

[2] «Մշակ», 1920, թիւ 6. Լազօ, «Մ. Պանդուխտը»:

[3] Անդրանիկ Կեռեան, «Հալածականի Յուշեր 1914-1918», Պէյրուք, 1964:

[4] «Երիտասարդ Հայաստան», 1921, Օգոստոս 31:

[5] «Երիտասարդ Հայաստան», 1952, Ապրիլ 4:

[6] «Արարատ» 1951 Յունիս 11:

[7] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Հնչակեան Կուսակցութեան», Բ. հտ., Պէյրուք, 1963:

[8] Նոյն, էջ 38:

[9] Նոյն, էջ 50:

[10] Նոյն, էջ 65:

[11] Նոյն, էջ 67:

[12] «Ազատամարտ», 1911, Յունիս 22/5 Յուլիս:

[13] «Կոհակ», 1911, Յուլիս 3/16:

[14] Ա. Կիտուր, ... համապատասխանաբար էջ 79, 81, 83:

[15] ՀԱԱ, ֆ. 408, ց. 1, գ. 32, թ. 1-2:

[16] Մուրատ Կարապետեան, «Հայկական Կամաւորական Խմբերը Եւ Ազգային Գումարտակները Կովկասեան Ռազմաճակատում (1914-1917թթ.)», Երեւան, 1999, էջ 37:

[17] «Երիտասարդ Հայաստան», 1918, Նոյեմբեր 13:

[18] Եղիկ Ճերեճեան, «Պանդուխտ», Պէյրուք, 1999, էջ 33-36:

- [19] Գերսամ Ահարոնեան, «Յուշամատենան Մեծ Եղեռնի», Պէյրուս, 1965. Լ. Թիւթիւնճեան, «Կարոյն Անկումին Ողբերգութիւնը», էջ 814:
- [20] Ա.Ժամկոչեան, «Չօր. Անդրանիկ Կը Պատասխանէ Իր Հակառակորդներուն», Փարիզ, 1945, էջ 84-85:
- [21] Ա.Մարմարեան, «Չօր. Անդրանիկ Եւ Իր Պատերազմները», Կ.Պոլիս, 1920, էջ 307-308:
- [22] Ծ. Աղայեան, «Հոկտեմբերը Եւ Հայ Ժողովուրդի Ազատագրական Պայքարը», Երեւան, 1982, էջ 95-96:
- [23] Ա.Մնացականեան, «Չօրավար Անդրանիկ», Ա.հտ., Մոսկուա, 1991, էջ 188-189:
- [24] Մ.Թորլաքեան, «Օրերուս Հետ», Բ.հտ., Թեհրան, 1982, էջ 393:
- [25] «1918 թ. Մայիսեան Գոյապայքարի Պատմութեան Նոր Էջ (1918 թ. Մայիսեան Բերոսամարտի Եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 85-ամեակի Նուիրուած Գիտաժողովի Լիւթեր)», Հ.Մելիքեան «1918 Թուականի Շիրակի Մայիսեան Գոյամարտը», Երեւան, 2005, էջ 59:
- [26] «Ռազմիկ», 1920, Մայիս 28:
- [27] Յ.Թուրշեան, «Սարդարապատի Բերոսամարտը», Երեւան, 1969:
- [28] Ծ.Աղայեան, «Հոկտեմբերը Եւ Հայ Ժողովուրդի Ազատագրական Պայքարը», Երեւան, 1982:
- [29] «Հայկական Հարց», Երեւան, 1996, էջ 406:
- [30] S.Afanasian, "La Victoire De Sardarabad - Armenie 21-29 Mai 1918", Paris, 1985:
- [31] Հ.Աւետիսեան, «Հայոց Ազգային Միասնութեան Յաղթանակը», Երեւան, 1998:
- [32] Եղիշէ Քաջունի, «Անդրանիկի Եւ Հայկական Առանձին Հարուածող Չօրամասի Հետ», 1976, Լիւ Ճըրզի, էջ 78 եւ 102-103:
- [33] ՀԱԱ, Ֆ.370, ց.1, գ.51, թ.9-10:
- [34] Եղիկ Ճեթեան..., էջ 65-66:
- [35] «Պալքանեան Մամուլ», 1920, Դեկտեմբեր 19:
- [36] «Երիտասարդ Հայաստան», 1921, Մայիս 27:
- [37] Անդրանիկ Կենճեան, «Սոց. Դեմ. Հնչակեան Կուսակցութիւնը Եւ Կիլիկեան Ինքնավարութեան Աքթը, 1919-1921», Պէյրուս, 1958, էջ 293:
- [38] Ե.Չարենց, «Երկիր Նայիրի», «Ե. Չարենց-Երկերի Ժողովածու», Ե.հտ., Երեւան, 1966:
- [39] Խ.Դաշտենց, «Ռանչպարների Կանչը», Երեւան, 1984:
- [40] Բ.Ուլուքաբեան, «Սարդարապատ», Բ.հտ., Պէյրուս, 1988:
- [41] Յ.Սկրտիչեան, «Անյայտ Չինուորի Յիշատակարանը», Երեւան, 1966:

## ԱՆԴՐԱՆԻԿ ԵՐԷՅԵԱՆ (ԴԵՐՃԱՆՅԻ ԱՆԴՐԱՆԻԿ)

Հայրենիքի սահմանները կեանքով պաշտպանելու հնչակեան հաւատաւորներն մեկն է և Նաեւ Անդրանիկ Երեցեան:

Ա.Երեցեան ծնած է Դերճան, 1893-ին:

Պատանի տարիքին կը մասնակցի ծննդավայրի յեղափոխական շարժումներուն, որուն պատճառով կը հետապնդուի եւ փախստական կ'անցնի Ռումանիա: Հոն, Ա. Երեցեան կը միանայ ՍԴ Հնչակեան Կուսակցութեան եւ կը տանի կազմակերպչական գործունեութիւն:

Համաշխարհային Ա.Պատերազմի սկիզբին, աշխոյժ ծելով կը մասնակցի կամաւորագրութեան աշխատանքներուն: Ինք եւս, իր կողմէ իսկ հաւաքագրուած կամաւորական խումբի մը գլուխը անցած, կը մեկնի կրփկասեան ռազմաճակատ: Յաղթահարելէ ետք անցագրային, տնտեսական եւ այլ բնոյթի դժուարութիւններ, Ռումանիայէն կամաւորներու Ա.խումբը՝ 107 կամաւոր,<sup>[1]</sup> կը հասնի Թիֆլիս եւ անոր մեծ մասը Ա.Երեցեանի գլխաւորութեամբ կը միանայ Հնչակեան Կուսակցութեան կողմէ կազմաւորուած կամաւորական 2. գունդին: Կը տեղակայուի Կարս: Մարզումներէ եւ զինավարժութիւններէ ետք, իր նուիրումին, հմտութեան եւ կամաւորներու կողմէ վայելած



յարգանքին պատճառով Ա.Երեցեան կը նշանակուի 3-րդ հարիւրակի հարիւրապետ<sup>[2]</sup>:

Կը մասնակցի Չ. զունդի մղած բոլոր կռիւներուն ու իր ցուցաբերած քաջութեան համար ռուսական բանակի հրամանատարութեան կողմէ կը պարգեւատրուի զինուորական շքանշաններով: Իր ընկերները զինք կը կոչեն «Փոքր Անդրանիկ»՝ առ ի համեմատութիւն գորավար Անդրանիկի:

Այդ օրերուն, Ռուսակոյ շրջանի հնչակեան պատասխանատուներէն Արամ Թորոսեան կ'այցելէ Անդրկովկաս ու իր այցելութիւններու շարքին կը հանդիպի Նաեռ ռուսահայ կամաւորներուն՝ որոնց մէջ Անդրանիկ Երեցեան: Իր ունեցած հանդիպումը ան կը նկարագրէ այսպէս.- «Չպիտի մոռնամ մեր հանդիպումը, ուր ուրախ տրամադրութիւններով մը իրաւամբ կը հպարտանար: Մենք լսելով իր գործերու պատմութիւնը իր ընկերներէն, թէեւ հպարտութիւն կը զգայինք, բայց եւ կարծես կանխատեսելով սեւ չարիքը՝ իրեն զգուշութիւն կը յանձնարարէինք, ան ժպտալով մեզ կը պատասխանէր. «ընկեր ջան, հայրենիքի պաշտպանութեան եւ ազատագրման համար պատենէի վրայ կուրծքէն գնդակ ուտողը անելի շատ ու անելի իբր մարդ կ'ապրի ջան հաճոյքներու հոտած մթնոլորտին մէջ իր կեանքը քաշկոտողը»<sup>[3]</sup>:

Շատ չ'անցնի իր եւ Ա.Երեցեան հերոսի մահով իր արիւնը կը խառնէ հայրենիքի հողին:

Ա.Երեցեանի մարմինը կը փոխադրուի Կարս, ուր տեղի կ'ունենայ զինուորական թաղում: Յետմահու եւս կը պարգեւատրուի զինուորական շքանշանով:

Ա.Երեցեանի մահը յառաջ կը բերէ ընդհանուր սուգ՝ յատկապէս իր ընկերներուն ու զինակիցներուն մօտ: Այդ տրամադրութիւններուն արտայայտիչը ըլլալով, Թիֆլիսի կուսակցական օրկան «Գաղափար», մահախօսական եւ ցաւակցական յօդուածներու շարք մը կը տպէ Ա.Երեցեանի մասին, որոնցմէ կատարուած քաղուածք մը լոյս կը սփռէ Անդրանիկ Երեցեան հայրենասէր մարդուն եւ խիզախ զինուորականին կենաքին ու գործունէութեան վրայ:

\*\*\*

«Կովկասեան ռազմաբեմից - Ա. հայկական բաւալիոնից - Նախկին 6-րդ կամաւորական զունդ-պրապորուշչիկի Բարխադարեանն ուղղէ է հետեւեալ բօթաբեր հեռագիրը. «Յերոսական մահով ինչպէս Անդրանիկ Երեցեան»:

Այսպէս, ուրեմն մի գոհ եւս այն հարիւրաւոր հազարաւոր զոհե-

րին, որոնք նուէր բերուցին թիւրքահայ ճնշուած ժողովրդի արդար դատին: Մէկն եւս այն անկեղծ եւ անձնուէր գործիչներից, որոնք անխարդախ, անզուսպ սիրով նուիրուցին իրենց հայրենակիցների տառապանքները թեթեւացնելու, բռնաբարւած իրաւունքները վերականգնելու վեհ սկզբունքին:

Չկայ այլեւս Դերձանցի Անդրանիկը, որ նիւթական աներեւակայելի զոհաբերութիւններով, հեռաւոր Ռուսակոյից սլացաւ Կովկաս, մտաւ հայկական 6-րդ կամաւորական զունդը եւ իբրեւ հնչակեան քաջարի մարտիկ՝ վաշտապետ կարգուեց նոյն գնդում, լիակատար վստահութիւն եւ յարգանք վայելելով այդ գնդի գանազան ժամանակներում նշանակուած բոլոր հրամանատարներից:

Էրզրումի առման ժամանակ, Մամխաթունի կռիւներում անվեհեր մարտիկի հռչակ ստացած՝ Նա միաժամանակ հազարաւոր փախստականներ պատսպարելով արժանացաւ վերակազմուած 6-րդ գնդի նոր հրամանատարի վստահութեան, որ ապա, իբրեւ աներկիւղ խուզարկու, յանդուգն մարտնչող, հայ ժողովրդի դարաւոր թշնամու ասկերի դաւադրական մահացու գնդակին գոհ դառնալու:

Սակայն ոչինչ... հերոսի անակնկալ մահը նրա անմոռաց եւ նուիրական յիշատակն անջնջելի կը պահուեն իւր հազարաւոր ընկերների եւ գաղափարակիցների վշտացեալ սրտերում<sup>[4]</sup>:

\*\*\*

«Խմբագրութիւնն բազմաթիւ հեռագիրներով եւ նամակներով ցաւակցական եւ դրուատական զնահատումներ է ստանում հերոսական մահով ընկած Անդրանիկ Երեցեանի մասին: Մենք միանգամայն անելորդ ենք համարում այդպիսի ցաւակցական գրութիւնների տպագրութիւնը: Բազմազան ցաւակցական արտայայտութիւնները չեն իսկական հերոսներին անմահացնողը, այլ այն գործունէութիւնը, որ նոքա ունեցել են անցեալում եւ այն անձնուիրութիւնը, որով զոհաբերում են նրանք իրենց երիտասարդ կեանքը՝ թշուառ հայ ժողովրդի փրկութեան համար: Անդրանիկ Երեցեանն անձնուէր գործիչ էր եւ հերոսական մահը գալիս է անմահացնելու նրան: Փառքն ինքն է, որ վազում է հերոսի ետեւից, հարկ չկայ արիեստական միջոցների դիմելու»<sup>[5]</sup>:

\*\*\*

Սարիղամիշ, 28 Յունիսի  
«Բօթաբերի դժբախտ դերի մէջ դրուած ըլլալով, կու գամ հաղոր-

դել Ձեզ նոր անփոխարինելի կորուստ մը եւս: Կարծես հայերուս վիճակուած է մշտապէս կորուստներու, մահերու մասին միայն ծառել:

Անդրանիկին բօթն է, որ գուժկան դառնալով կը հաղորդեմ Ձեզ: Ան ալ ընկաւ, շատերու ետեւէն ա՛ն ալ գնաց, գնաց խտացնելու մեր այնչափ անթիւ, անհամար նահատակներուն շարքը: Եւ քանի՛ քանիներն այսպէս: Սակայն, սա քաջին մահը բոլորովին այլ հանգամանքներու եւ պարագաներու մէջ տեղի ունեցաւ, մինչ կը պատրաստուէր աւելի բուռն եւ եռանդագին կարեւոր ձեռնարկի մը:

Երկու տարուց ի վեր հայկական 2. կամաւորական զնդի վաշտապետ եւ հրամանատար զինուորական խուզարկու հայկական խմբի, արդէն բազմիցս ցոյց տուած էր իւր հերոսական անվեհերութիւնն եւ անձնուիրութիւնը, երբ կը վերակազմուի հայկական առաջին բատալիոնն, որոյ մէջ կը մտնայ եւ ինքն:

Բատալիոնին նոյն իսկ առաջին յաջող ձեռնարկին մէջ ընդդէմ թշնամիներու՝ ան կ'ըլլայ առաջին խոյացող յառաջամարտիկն, որ թշնամուն ցիրուցան կ'ընէ եւ յաղթական դրօշն ծածանելով, միանգամ եւս կը փաստէ կամաւորներուն հերոսական անվեհերութիւնն:

Մանրամասնութիւնները տակաւին կը պակսին:

Այս չափն ստոյգ է, որ Անդրանիկ Երեցեան ինկաւ հերոսին արժանավայել մահով մը, Ռումանիոյ հնչակեան շարքերուն փառք բերելով, որ զինքն ընտրել էին որպէս խմբապետ՝ իրենց ուղարկած կամաւորներուն:

Հերոսական մահով ինկողներն անմահ են եւ Անդրանիկին յիշատակն անմահ պիտի մնայ:

Փառք անոր քաղցր յիշատակին<sup>96</sup>:

\*\*\*

«Տեսայ նրան վերջին պահուն, ձիու վրայ նստած, ռազմաճակատ մեկնելիս:

Նրա վերջին խօսքն էր՝ «գնում եմ կամ պատուով մեռնեմ, կամ պատուով վերադառնամ»:

Մտախոհ էր դեմքը, սիրտը տխուր, բայց, միեւնոյն ժամանակ, մի ինչ որ բարձր զգացմունք նրան մղում էր դէպի իւր սիրած գործը, որը նա գտնում էր այսօր ռազմաճակատում:

Սա նրա անկեղծ հասկացողութիւնն էր եւ այդ պատճառով էլ ես խոնարհում եմ այդ անկեղծութեան առաջ:

Նա եկել էր յանուն այդ գործի հեռաւոր տեղից - Ռումանիայից:

Եկել էր իր տարաբախտ աւերուող վաթանը՝ իւր հայրենակից-

ների դառն բաժակը միասին ընդունելու: Նա եկել էր ոգետրուած, խանդավառ երազներով եւ մեծ յոյսերով: Նա եկել էր այն ոգետրութեան էքստազի ժամանակաշրջանում, երբ գալիս էին ամէնքը: Դժուար էր կացութիւնը եւ առաւել դառնացաւ այդ կացութիւնը Անդրանիկ Երեցեանի համար:

Բայց նա չէր ընկճում, չէր յուսահատում, չէր վիատում, այլ ընդհակառակը, շատ հանգիստ, բայց «այրուած սրտով» վստահատում էր. «Ես մեծ պարտականութիւն ունիմ դեռ կատարելու եւ պիտի կատարեմ, արհամարհելով այդ իմ վսեմ պարտականութեանս առաջ ամէն ինչ»:

Եւ այդ ճշմարիտ եւ ոչ շինծու ու համոզուած բարձր պարտականութեան զգացմունքը՝ դէպի իւր սիրած գործը, սիրելի դարձրեց նրան ինձ:

Ես հաւատացի նրան, հաւատացի միեւնոյն ժամանակ, որ դեռ շատ կան մեր, խառնաշփոթ իսկ, գաղափարական իրականութեան մէջ վաղեմի նուիրուած ու անկեղծ գործիչներ:

Նրանցից՝ Անդրանիկը, Դերճանցի Անդրանիկը իւր խօսքը, իւր վերջին խօսքը կատարեց՝ նա հերոսաբար պատուով մեռաւ: Յանուն նրա անմոռանալի յիշատակին, թող բոլոր մնացողները հետեւեն նրա օրինակին: Գործի ասպարէզում կամ պատուով մեռնեն կամ պատուով վերադառնան...»<sup>97</sup>:

\*\*\*

«Ինկաւ վերջապէս Դեսպէկ լեռներու առիւծը եւ Դերճանի հայութեան պաշտելի Անդրանիկը, հայրենիքի եւ ազատութեան անվեհեր մարտիկը, ո՛րը եւ ինչպէս, բոլորովին անյայտ: Միայն հեռագիրն է, որ խօսեցաւ «Գաղափար»ի միջոցաւ, թէ ինկած է հերոսական մահով: Ինչ անգութ գնդակ, որ համարձակեցաւ խլել քսաներեք տարիներու հնչակեան մարտիկը, բախտը այլեւս չի ժպտեր բռնակալութեան զոհ գնացող ժողովուրդին, կը ջուլէ ազնիւ ու անշահախնդիր հերոսները, որք թողելով իւր ընկերները եւ գաղափարակիցները:

Հեռացաւ ինչպէս հեռացեր էին Փարամազներ, Պենսեներ եւ Ալեքսանդրներ, առանց խղճալու իրենց ետեւէն ողբացող հազարաւոր ընկերների: Իսկական ազատութեան ճանապարհի վրայ օրինակ հանդիսանալու այլատերուած հայութեան:

... Վերջապէս կը հասներ մեծ օրը՝ ռուս-թրքական պատերազմը: Այսպէս Կովկաս, մտաւ հայկական 6-րդ գունդը իբրեւ հնչակեան քաջարի մարտիկ, վաշտապետ կարգուեցաւ՝ վայելելով նոյն գուն-

դի զինուորներուն համակրանքը: Ազպեպայի, Պեոյիքպաշի եւ Չոխուրի պատերազմներուն մէջ մեծ դեր խաղաց նա: Անդրանիկն այնտեղ էր, որտեղ որ միշտ վտանգ կը սպառնար զունդին: ... Երբեք պիտի չմոռնամ այն օրը եւ այն գիշերը, որ Անդրանիկ միայն տասը զինուորներով պատռեց թուրքի շրջան եւ երեք վերստ դէպի ներս՝ Լօլանի զիւղը գնաց եւ երեսուն մէկ հայեր առնելով վերադարձաւ, ուր վիրաւորուեցաւ միայն մէկ կամաւոր՝ Ներսէս անունով: Անդրանիկի անակընկալ մահը վիրաւորեց ամբողջ 6-րդ զունդի զինուորներու սիրտը: Մենք պիտի ողբանք նրա յիշատակը՝ համբոյրներ դրկելով նրա թարմ ոսկորներուն: Յարգանք քու յիշատակիդ, անվեհեր մարտիկ, եւ յարգանք քո ծնողաց եւ քո ազգիդ, որ ծնաւ քեզ»<sup>[1]</sup>:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Յուշարձան Նուիրուած ՄԴՅԱ Բառասամեակին» Փարիզ, 1930. Ա., «Յայ կամաւորական Շարժումը եւ Ռումանահայ Գաղութը»:  
 [2] «Յայկ Բժշկեանի նամակը Մելքոնին»: ՅԱԱ:  
 [3] «Յուշարձան...Բառասամեակին», Ա. Թորոսեան, «Ընկ. Անդրանիկ Երեցեան»:  
 [4] «Գաղափար», 1916 Յունիս 29. «Անդրանիկ Երիցեան»:  
 [5] «Գաղափար», 1916 Յունիս 3. «Յայկական Կեանք»:  
 [6] Նոյն:  
 [7] Նոյն: Խչ. Գուրդկ, «Անդրանիկ Երիցեանի Յիշատակին»:  
 [8] «Գաղափար», 1916 Յունիս 16. Գրիգոր Թումիկեան, «Անդրանիկ Երիցեան»:

# ԳՐԻԳՈՐ ԱԻՇԱՐԵԱՆ

ՄԴ Յնչակեան Կուսակցութեան մարտական ուղիի կերտիչներն է Գրիգոր Աւշարեան:

Գ.Աւշարեան ծնած է 1891-ին, Պաքու, Ղարաբաղի ընտանիք: Յայրը եղած է ռուսական բանակի զօրավար եւ Փեթերգպուրկի սպայական հեծելազօրային դպրոցի պետ, ու փափաքած որ իր կրտսեր որդին հետեւի իր ասպարէզին: Ուստի, Գրիգոր աւարտել է տք նախակրթական ուսումը, կը յաճախէ ու կ'աւարտէ Կազանի զինուորական ուսումնարանը:



Նախքան Գ.Աւշարեանի կեանքին յետագայ հանգրուաններուն անցնելը, նկատել տանք թէ Գ.Աւշարեանի մասին անդրադարձողներն ոմանք, շփոթութիւններ յառաջ բերած են անոր կենսագրութեան մէջ:

Յայրենի պատմաբան Յայկ Յայրապետեան կը գրէ թէ Գ.Աւշարեան, «1901 թուականին փայլուն կերպով աւարտելով վերոյիշեալ դպրոցը (Փեթերգպուրկի սպայական հեծելազօրային դպրոցը.- Ե.Ճ.), 1904 թուականին կամաւոր մեկնում է ռուսական բանակ, որն այդ շրջանին ծանր մարտեր էր մղում ճափոնացիների դէմ»<sup>[1]</sup>:

Աւելորդ է ըսել թէ 1901 թուին 10 տարեկան Գրիգորը դժուար թէ աւարտէր սպայական դպրոցը: Իսկ սպայական դպրոցը աւարտողի մը համար աւելորդ է ըսել «կամաւոր» կը մեկնի բանակ, որովհետեւ այդ իր պարտականութիւնն է:

Յայաստանի Ա.Յանրապետութեան վարչապետ Ալեքսանդր

Խատիսեանն ալ կը գրէ. «Աւարտան Գրիգոր (1916): Ռուսահայ է եւ ծնած է Պաքու: Աւարտած է ռուսական գիմնազիոն եւ ստացած գիւտարական կրթութիւն: Իսկական անձնուէր հայրենասէր մը՝ օժտուած ռազմագիտական բարձր կարողութիւններով: Կամաւորական 6-րդ գունդի հրամանատար: Բասէնի դաշտին մէջ մղուած ճակատագրական կռիւին ընթացքին հերոսաբար կ'իյնայ՝ ապահովելով իր գունդին յաղթանակը: Յնչակեանները կը փորձեն զինք ներկայացնել հնչակեան կուսակցական»<sup>61</sup>:

Այս պարագային, հնչակեանները Գ.Աւարտանը կուսակցակա-նացնելու «փորձ» չէին ընէր: Իրականութիւնն այն է, որ տակաւին 1905 թ.ի հայ-թաթարական կռիւներու ժամանակ «Գրիշան» (Գրիգոր անուան ռուսական փաղակալական ձեւը.- Ե.Ճ.), դեռ աշակերտ, «շփում ունէր հնչակեանների հետ» ու «որքան եւ պատանի յետ մնալ չուզէր իր ընկերներից եւ դիրքերի ամենայնադուրս պաշտպաններից մէկն էր: Փարամազը եւ Մելքոնը շարունակ կրկնում էին.- Գրիշան մի հրաշալի ոյժ է դառնալու, մարտական մի հզօր ոյժ»<sup>62</sup>: Աւելին. ՍՂԳԿ Ե.Յամագումարէն (1905) ետք, դէպավոր ընկերներ հանդիպումներ կ'ունենան Անդրկովկասի եւ Ռուսաստանի մասնաճիւղերուն հետ, բացատրելու համար համագումարի հիմնական որոշումը, որն էր՝ Տաճկաստանի մէջ ազգ.-ազատագրական եւ Ռուսաստանի մէջ ընկերվարական պայքարները մղել համատեղ: Այդպիսի ժողովներէն մէկուն ընթացքին, որուն կը մասնակցէին Փարամազ, Սաքօ (Սարգիս Աղամիրզեան), Լաքօ, Սեւ Մելքոն, Ռուբէն Կարապետեան եւ ուրիշներ, խօսք կ'առնէ տակաւին պատանի Գ.Աւարտանն ու կ'ըսէ. «Ես կարծում եմ՝ մեր ամենաառաջին գործը, մեր սրբազան պարտականութիւնը տաճկահայ դատն է, որից հրաժարուել նշանակում է ոչ միայն դաւաճանել հնչակեան սկզբունքներին, այլեւ այն սրբազան հերոսներին, որոնք զնացին երկիր եւ իրենց անձը զոհեցին... Տաճկահայ դատը սրբագործուած է մեզ համար մեր բազմաթիւ նահատակ ընկերների արիւնք որոնց ուղարկելով դէպի մահ ու կախաղան, մենք խոստացել ենք հետեւել նրանց, մինչեւ մեր տառապեալ երբայրների, տաճկահայերի ազատութիւնը: Հրաժարուել դրանից, նշանակում է՝ դաւաճանել նրանց, որոնք եւ իրենց գերեզմանի խորքերից նզովք կը կարողան մեզ: Ով խնայում է իւր անձը դնել հայրենիքի փրկութեան սեղանի վրայ, ազատ է, ինչ հարկ կայ անտեղի խռովութիւնների: Սուրբ գործը չի մեռնի, ուխտեալ անձնուէրները կը մնան եւ կը շարունակեն այն...»<sup>63</sup>:

Յամենայն դէպս, Յամաշխարհային Ա. Պատերազմին Գ.Աւարտան արդէն ռուսական բանակի սպայ էր եւ կը ծառայէր աստրիական ճակատին վրայ: Կը մասնակցի 23 ճակատամարտերու եւ ցուցաբերած քաջութեան համար կը պարգևատրուի Գեորգեան

Ոսկեայ Սուրով եւ զինուորական շքանշաններով: Կը վիրաւորուի եւ բուժման համար կը վերադառնայ իր ծննդավայրը: Ապաքինու-մէն ետք իրամանատարութեան փափաք կը ներկայացնէ ծառայութիւնը շարունակել կովկասեան ռազմաճակատին վրայ: Յնչակեան Կուսակցութիւնը եւս փափաք կը ներկայացնէ որ Գ.Աւարտան ստանձնէ կամաւորական 6-րդ գունդի հրամանատարութիւնը: Այդպէս ալ կ'ըլլայ:

Գ.Աւարտանի 6-րդ գունդի հրամանատարութիւնը երկար չի տեւէր: Սակայն, այդ կարճ ժամանակամիջոցին ընթացքին, 6-րդ գունդը անոր հրամանատարութեան տակ կ'արձանագրէ շարք մը յաղթանակներ, որոնց մէջ նշանաւորներն կ'ըլլան Տէկերի, Ձորագիւղի, Ազպէպայի ճակատամարտերը: «Մի ռուս զօրայպետ վկայում է, որ Աւարովն ու իր զինակիցները կուում էին առիւծների պէս»<sup>64</sup>:

Կերչին ճակատամարտը սակայն, 6-րդ գունդին, Յնչակեան Կուսակցութեան եւ ընդհանրապէս հայ ժողովուրդին համար շատ սուղ կ'արժէ: 6-րդ գունդը կու տայ հարիւրաւոր նահատակ եւ վիրաւոր: Հերոսի մահով կ'իյնայ նաեւ Գ.Աւարտան:

Հերոսին դիակը կը փոխադրուի Պաքու, ուր տեղի կ'ունենայ ազգային եւ զինուորական փառահեղ թաղում: Այդ մասին Սեդրակ Շահէն կը գրէ. «Բասէնի ճակատամարտէն մէկ շաբաթ յետոյ, յաղթողի դազադին տեսէն 25000 ժողովուրդ կը քալէր: Պաքուն սուգի մէջ էր: Պաքուն հայ եւ ռուս սզացող գունդերու հազարները հիւր-ընկալեց այքառու քաջին, ընկեր Գրիգոր Աւարտանի արժանաւոր յարգանքը տալ: Պաքու լեցուած էին ազգային եւ օտար ներկայացուցիչներ: Կովկասեան ճակատի ընդհանուր հրամանատարի ներկայացուցիչին հետ Փէթրոկրատի կառավարութեան ներկայացուցիչը կը կենար. ու Աւարտանի թաղման թափօրը անգամ Յայ Դատի Յարութիւնն էր՝ մինչ այդ անտարբեր մնացող ռուս ազգին մօտ: Յաղթողը թաղուեցաւ սզալից բարձր յարգանքներով, ու յաղթանակը մնաց անմահ, տեսական, յաւիտեան»<sup>65</sup>:

Գ.Աւարտանի նահատակութեան Ա. տարելիցին, գունդի փոխ-հրամանատար (իսկ Գ.Աւարտանի նահատակութենէն ետք իրամանատար) Հայկ Բժշկեան, «Գաղափար» թերթին մէջ, չորս շա-րունակականով կը նկարագրէ Աւարտանի նահատակութեան վերջին ժամերը: Յօդուածաշարքին վերջինը կը ներկայացնէսք ստու-րեւ... որովհետեւ ակնատեսին, ընկերոջ եւ զինակիցին խօսքե-րուն վրայ աւելորդ կը գտնենք նոր բան աւելցնել:

«Եւ այդպէս էլ եղաւ:

Մեր ծայրագոյն աջ թելի կողմից՝ ուղիղ Ղըզըլ-Դադի ստորոտ-ներից, դուրս եկան մօտ 500 ձիաւոր համիտեականներ եւ սրարշաւ սկսեցին աջ կողմից մեր թիկունքն անցնել: Սոսկալի դրութեան մէջ

եինք, անորոշութիւնը պատել էլ բոլորիս:

Մեզ ոչինչ էր մտում անելու, եթէ ոչ յետ Լախանքել:

Բայց հենց այդ րոպէին Նորից Նշմարեցի ծխի ու փոշու միջից Աւշարեանին, որն ատրճանակը ձեռքին վազում էր մի դիրքից միւսը - խրախուսելով ու քաջալերելով մեր տղերքին, որոնք ծով-քրտիկների մէջ կորած կրակում էին ու կրակում:

Նա երգում էր, բղաւում, այս ու այն կողմ վազվզում էր ցոյց տալով թշնամու ձիաւոր խումբը, որ դէպի մեր աջ թեւն էր արշաւում, ասում էր - փախան, փախան, դէ, տղերք ջան, խփեք, 800-քայլ 500-քայլ...:

Չնայած հազարաւոր կրակոցներին ու որոտումներին՝ նրա զիւ ձայնը տարածուելով մեր դիրքերը, Նոյնիսկ ամենահեռու դիրքերը, ուժ ու եռանդ էր ներշնչում մեզ: Նա ամբողջովին կրակ կտրած, չնայելով ոչ մի վտանգի՝ թռչում էր դիրքից դիրք, այցելում բոլորիս, խրախուսում, փայփայում-ուղղում նշանացոյցը եւ հազարաւոր գնդակների տարափի տակ, անցնում հարեան դիրքերը:

Տեսնելով ձիաւոր համախառնների յամառ արշաւը եւ այն, որ ծայրագոյն աջակողմեան մեր դիրքերը տարակուսել են ու անկարգ հրացանածուրթիւն սկսել, նա լսելի լինելու համար, ամբողջ ուժով բղաւեց.

Ա. հարիւրակի Բ. յիսնեակ աջ կողմ ուղղուիլ, դիր նշանացոյց 800 քայլ - անդադար կրակ:

Ես կրկնեցի նրա հրամանը, որից յետոյ իմ վաշտից մի յիսնեակ սողալով, ուղղուեց դէպի աջ, եւ երեսը դէպի ձիաւորները դարձնելով սկսեց համազարկները. բո՛ւմ, բո՛ւմ...:

Յենց այդ րոպէին մեր թիկունքից լսուեց չորս տիւմանց դաշտային երկու թնդանթների ահեղ որոտը, որոնց մի փութանց մոմբերը սարսափելի տժժոցով անցան մեր գլխի վրայով ու պայթեցին՝ մէկը արշաւող ձիաւորների մէջ իսկ միւսը դիմացի տաճկաց դիրքերու - մահ ու սոսկում սփռելով նրանց շարքերի մէջ:

Շրջակայ լեռները հիմնովին դղրդացին եւ մեր տակի հողը երերաց, այդ սոսկալի որոտից, ուրախութեամբ ու հրճուանքով լցնելով բոլորիս սրտերը:

Իսկ հեռուից մեր թիկունքի կողմից երեսաց արդէն ռուսական կոզակների մի ամբողջ եսկադրոս, որ սուսերամերկ եւ սրարշաւ մեզ օգնութեան էր աճապարում...:

Աւշարեանի ուրախութեանը չափ չկար, տեսնելով մօտեցող օգնութիւնը՝ նա աւելի եւս ոգտորուեց:

«Տղերք ջան, ձեզ մատաղ մի քիչ էլ դիմացեք, ահա, ահա գալիս են օգնութեան»...:

Բայց աւա՛ղ, նա խօսքը չվերջացրեց, երերաց, բռնեց սիրտը եւ հենուեց վրայ հասնող թիկնապահների թետերին... թշնամու ան-

դրը գնդակը ջարդեց նրա թեւը, արմուկից վերեւ, անցաւ ձախ թոքից եւ խրուած մնաց աջ թոքի մէջ: Այլ արիւնը դուրս ճայթեց նրա կողքից, բերկից եւ քթածակերից:

Չնայած ստացած մահաբեր վերքին՝ նա մնաց 5 րոպէ, եւ այդ դիրքով, խապոտ ձայնով ասաց մի քանի խրախուսանքի խօսքեր եւս որից յետոյ նրան ձեռքերի վրայ հազարաւոր սուրացող գնդակների միջով Ազպէպա գիւղը տարան, ուր գտնուում էր մեր վիրակապանոցը...:

Սիրելի հրամանատարի զարկուելու լուրը մի ակնթարթում տարածուեց մեր բոլոր դիրքերում եւ մեր քաջերը վրէժխնդրութեան մոնջումով - ինքնաբերաբար, առանց ազդանշանի ու հրամանի, դուրս ցատկեցին դիրքերից եւ որպէս կիզող լաւա, պոռաւով գրոհ տուեցին դէպի թշնամին:

Բարձրացաւ մի ահագին ժխոր, իրարանցում, գոռում-գոչում որտեղ անհնար էր լինում զանազանել միմեանց:

Արիւնը հոսում էր ինչպէս գետ եւ կռուողները վայր էին ընկնում ինչպէս մանգաղից հնձուող հասկեր...:

Թշնամին թողնելով բազմաթիւ դիակներ եւ վիրաւորներ, փախաւ մագապուրծ, կատաղած կամաւորներից:

Աւելի մանրամասն չեմ յիշում, որովհետեւ ինձ եւս Ազպէպա տարան գլխիցս վերք ստանալու պատճառով, միայն երագի պէս յիշում եմ բանակի ուռաներն ու կեցցէները, որովհետեւ թշնամուն հալածելով մերոնք գրաւել էին Չաթ եւ Դալէկ գիւղերը:

Աւշարեանին եւ ինձ պատգարակներ դրած տարան Պելիկ Պաշի գիւղը, որտեղ տեղաւորուած էր մեր առաջին ռազմական վիրակապանոցը:

Ճանապարհին մենք հանդիպեցինք զօրապետ Կօյտեխկովիին, որը կոզակների զուխն անցած մեզ օգնութեան էր աճապարում:

Նա կանգնեցնելով արշաւող եսկատրօնը մօտեցաւ մեզ, ցած իջաւ ձիուց եւ մօտենալով Աւշարեանի պատգարակին, սկսեց հարցնել նրա որպիսութիւնը եւ վերջի ծանրութիւնը, բայց երբ տեսաւ որ Աւշարեանը չի կարողանում խօսել, այլ միայն տնջում է, կռանալով համբուրեց նրա ճակատը: Իմ տուած մանրամասն գեկուցումը լսելուց յետոյ՝ զօրապետի հրամանով կոզակների եսկատրօնը պատուի կանգնեց եւ մեր պատգարակները նրանց շարքերի միջով առաջ անցան...:

Կէս ժամից յետոյ մեզ հասցրին Պելիկ Պաշի գիւղը, ուր սպասում էին արդէն հրաւիրուած զինուորական երկու բժիշկներ:

Նրանք հապճեպ եւ մեծ խնամքով կապեցին Աւշարեանի վերքերը - մորֆին սրսկելով նրա թետերին:

Մի քիչ յետոյ նա ուշգի եկաւ, եւ չնայած բժիշկների արգելքներին, սկսեց խօսել շրջապատողներինս հետ իր բանակի եւ զինուոր-

ների դրույթան մասին:

Նա շարունակ ջուր էր խնդրում - բայց չէր կարողանում խմել:

Նորից ամրացնելով Աւշարեանի վերքերը, մեզ դնելով պատգա-րակների վրայ տարան Բեզիմենսոյ («անանուս») գիւղը, այդպես էինք անուանում, որովհետեւ մեր քարտեզների մէջ չկար նշանակ-ւած այդ գիւղը):

Ճանապարհին երբ անցանք Շարեանի վարարած գետը, Աւշար-եանի դրույթունն ասելի ու ասելի սկսեց ծանրանալ:

Ոչ բժիշկների սրսկումները եւ ոչ էլ բոլորիս խնամքը չէր օգնում նրա տանջանքների մեղմանալուն: Նա անդադար ծա՛նր ու խոր տնջում էր եւ այս ու այն կողմ շրջւում պատգարակի մէջ:

Չգալով որ մահը մօտ է, նա ձեռքով նշան արեց վաշտապետ Գ-ին (Հայկ Բժշկեան.- Ե.Ճ.) եւ վերջին ուժերը հաւաքելով հանդարտ ու ընդմիջուող ձայնով ասաց.

- Ըեզ եմ յանձնում բանակը - վերցրու գնքերը, կառավարիչ սիրածս բանակը... պահպանիր քեզ կոհներում: Թող Աստուած օրհնէ ձեր բոլորիդ: Երբ կը վերադառնաս, «մնաք բարեւ» կ'ասես իմ առիւծներին, իմ քաջերին... եւ մի րոպէ հանգստանալով Նորից խօսեց:

- «Մեր դիրքերը հօ չէ՞ք տուել թշնամուն, մեզ չէ՞ն յաղթել արդեօք»: Եւ ստանալով բացասական պատասխան, նա մրմնջաց՝ բոլորովին նուաղած ձայնով: - «Փա՛րք Աստծոյ, փա՛րք Աստծոյ»:

Այդ րոպէին վաշտապետ Գ. կռացաւ, Աւշարեանը համբուրեց նրա ճակատը եւ վերջին անգամ բանալով մտած աչքերը, նայեց շրջապատողներին, թեթւակի ժպտաց եւ խոր թառանջ քաշելով՝ ընդմիշտ փակեց աչքերը եւ սլացաւ անմահութեան գիրկը...:

Այս բոլորը տեղի ունեցաւ Շարեան գետի ափին, բաց երկնքի տակ, վերին Բասեն դաշտում, 1915 թուի Յունիսի 23-ին...:

Յաւիտենական հանգիստ իմ սիրելի հրամանատարի թանկա-գին աճիւնին»<sup>7</sup>:

## ՕՎՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] Գ.Հայրապետեան, «Լեկենտար Գայը>>, Երեւան, 1977, էջ 25:

[2] Ա.Խատիսեան, «Քաղաքապետի Մը Յիշատակները», Պետրոս, 1991, էջ 343:

[3] «Գաղափար», 1916 Յուլիս 6. Լ.Լազեան, «Յաղթական Կամար - Գծեր Հայկական 6-րդ Կամավորական Ղևդի Հրամանատար Աւշարեանի Կենսքից»:

[4] «Յուշարձան Նուիրուած ՍԴԿԿ Զառասանմակին», Փարիզ, 1930, էջ 279:

[5] Ծատուր Աղայեան, «Հայ Ժողովուրդի Ազատագրական Պայքարի Պատմութիւնից», Երեւան, 1976, էջ 441:

[6] «Պալքանեան Մամուլ», 1919 Ապրիլ 20. Ս.Շահեւ «Բասեն եւ Արարա»:

[7] «Գաղափար», 1916 Յուլիս 10:

# ՀԱՅԿ ԲԺՇԿԵԱՆ (ԳԱՅ)

Առաջին հայեացքէն կը թուի թէ Հայկ Բժշկեանի մասին ամէն ինչ ըսուած է: Անոր մասին լոյս տեսած են առ նուազն երկու պատկառելի գիրքեր<sup>[1]</sup>, գիտական ուսումնասիրութիւններ<sup>[2]</sup> եւ բազմաթիւ յօդուածներ:

Սակայն կը պարզուի որ Հայկ Բժշկեան-Գայի<sup>[3]</sup> մասին ամէն բան ըսուած չէ: Նոյնիսկ կան կարելոր բաներ, որոնց վրայ այս առիթով հարկաւոր է նոր լոյս սփռել:

Հ.Բժշկեան ծնած է Թաւրիզ, 1887-ին:

Կը յաճախէ Արամեան դըպրոցը: Հայրը՝ Դիմիդրին, կ'ըլլայ շրջանի Հնչակեան Կուսակցութեան առաջին անդամակցողներէ:

1901-ին Բժշկեաններու ընտանիքը կը հաստատուի Թիֆլիս: Հ.Բժշկեան կը յաճախէ Ներսեսեան վարժարանը: 1903-ին, տակաւին 16 տարեկան պատանի, Հայկ կ'անդամակցի ՍԴ Հնչակեան Կուսակցութեան եւ միեւնոյն տարին մաս կը կազմէ Կովկասի փոխարքայ իշխան Գուլիցիւհի ահաբեկչութիւնը ստանձնած խումբին<sup>[4]</sup>:

Հ.Բժշկեան կը տեղափոխուի Պաքու ու կ'աշխատի «Նուպէլ» գործարանին մէջ: Կուսակցական քարոզչի պաշտօնով կը շրջի Պալախանի, Սապունճի եւ Պիպի-Հէյպաթ բանուորական թաղամասերը եւ կը կազմակերպէ բանուորական հաւաքներ: Պալա-



խանիի մէջ կը մասնակցի նաւթարդիւնաբերող բանուորներու արհեստակցական միութեան ստեղծման:

1906 թուականէն, հնչակեան մամուլին մէջ կը սկսին լոյս տեսնել Հայկ Բժշկեան, Յ.Դ.Բժ., Հայկ, Բանուոր Հայկ, Խ.Գ. ստորագրութիւնները կրող անոր յօդուածները՝ ընդհանրապէս նուիրուած Պաքուի բանուորական կեանքին եւ ազգային հրատապ հարցերուն: 1909-ին, ՍՂԳԿ Պալախանիի մասնաճիւղի վարչութեան կողմէ հրապարակուած շրջաբերականի 5-րդ կետին մէջ կ'ըսուի. «Որ նշանակում է մեր կողմէ Բանուոր Հայկին որպէս պաշտօնական շրջիկ-գործակալ եւ արտաքին յարաբերութեան ներկայացուցիչ, որի միջոցով եւ պիտի դիմել մեզ կարիք եղած ժամանակ»<sup>65</sup>: Հ.Բժշկեան իր այս պաշտօնով քարոզչական-կազմակերպչական աշխատանքներ կը տանի յատկապէս բանուորական խումբերուն մէջ՝ որոնք կը կազմէին կուսակցութեան կազմակերպչական կառոյցին հենքը: Այս մասին, անոր նկայացուցած ութ էջեր կազմող տեղեկագիրներէն մէկը, կը յատկանշուի իր յստակութեամբ եւ իրապաշտութեամբ<sup>66</sup>: Այս ընդատակեայ գործունեութեան ընթացքին, Հ.Բժշկեան նաեւ կը հանդիպի ներկուսակցական անհասկացողութիւններու: Պալախանիի հնչակեան «զինուորական մարմին»ը կը ձեռքբալալէ զինը: Հարցին կը միջամտ կուսակցութեան Պաքուի շրջանի զինուորական ընդհանուր պատասխանատու Արծուիկ (Տիգրան Յարութիւնեան)<sup>67</sup>: «Ընկերական» ձեռքբալալութենէն կարճ ժամանակ մը անց, բանուորական ժողովի մը ընթացքին դարձեալ կը ձեռքբալալուի, այս անգամ «ոչ ընկերական»՝ ցարական իշխանութեան կողմէ: Վեց ամիս կը բանտարկուի Պալախուկեան բանտին մէջ:

Ազատ արձակուելէն ետք կը տեղափոխուի Թիֆլիս ուր կը հետեւի հաշուապահական դասընթացքներու: Կ'աշխատի երկաթալուծառի խանութի մը մէջ: Հոս եւս կը մասնակցի բանուորական շարժումներուն: Իր ջանքերով կը հիմնադրուի Առետուր-արդիւնաբերական Ծառայողներու Թիֆլիսի Միութիւնը: 1911 Նոյեմբերին, դարձեալ կը ձեռքբալալուի եւ երեք ամիս Մետեխի բանտը մնալէն ետք կ'աքսորուի Աստրախան, ուր կը հաստատուի նաեւ իր ընտանիքը: Որպէս հաշուապահ կ'աշխատի հայ առետուրականի մը մօտ:

Համաշխարհային Ա. Պատերազմի սկիզբին, Աստրախանի հայութիւնը եւս խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ կամաւորագրութեան հանդէպ: Կը կամաւորագրուի 35 երիտասարդ, որոնք մարզումներէն եւ բժշկական քննութենէն կը պարզուի որ միայն 11 հոգին ատակ է զինուորական կեանքի: Խմբապետ կը նշանակուի Հ.Բժշկեան: Խումբին ճակատ մեկնելու առիթով տեղի կ'ունենայ ողջերթի ժողովրդային հաւաք, ուր տեղի ունեցած ելոյթներուն մէջ յատկանշական կ'ըլլայ Հ.Բժշկեանի հօր՝ Տիմիրիի ելոյթը, որ «լի

զգացմունքով խօսեց եւ արտայայտեց իր անկեղծութիւնը դէպի իր որդին, որ այսօր իր համաձայնութեամբ մեկնում է կռուի դաշտը: Հայրը իր ձեռքով կապեց որդու սուրը եւ ասելով, այսօր քո հարսանեաց հանդէսն է, ահա քո պսակի կանաչ-կարմիրը որը իմ ձեռքով կապեցի իմ սիրելի կտորի՞մ Հայկս»<sup>68</sup>:

Խումբը, Կարսի մէջ կը միանայ իր կազմաւորման եւ մարզումներուն մէջ գտնուող կամաւորական Չ. գունդին: Այս շրջանին, Հ.Բժշկեանի ապրումներուն եւ մտածելակերպին մասին իրական պատկեր մը կու տայ անոր գրած նամակը Պաքու՝ Մելքունին (Մելքուն Ասիլբեկեան-Մոզպետ, Մոզ.). «Ամենասիրելի ընկեր Մելքուն: Երախտագիտական սրբազան պարտքս եմ համարում խորին շնորհակալութիւնս յայտնելու Ձեզ եւ յարգոյ տիկնոջ ուղարկածդ նուէրների համար: Խորին շնորհակալական զգացումներով. [անընթեռնելի բառեր] բառ չեմ գտնում յայտնելու շնորհակալութիւնս: Եթէ կեղտանի մնամ չեմ մոռանայ երբեք ձեզ, քանի որ այս ծանր օրերին չինայեցիք: Վերջապէս կրկին ու կրկին ընդունեցէք իմ խորին ու անկեղծ շնորհակալութիւններս: Մի մեղարդեք ինձ սիրելի ընկ. Մելքուն: Ձեր արեւով երդում եմ թողնէմ անգամ ժամանակ չեմ ունենում ազատ շունչ քաշելու. երեւակայացէք իմ դրութիւնը թէ շտապի կառավարիչ թէ աղիւտանդ (օգնական.-Ե.Ծ.) հրամանատարին թէ քարտուղար, թէ բանակի հաշուապահ, թէ 5-րդ հարիւրակի հարիւրապետ եւ թէ բոլոր գործերուն հսկող, ահա թէ ինչն է պատճառը որ չեմ կարողանում Ձեզ հետ նամակակցել: Մեր բանակի գործերը այժմ շատ լաւ է. ունենք 5 հարիւրակ՝ որոնք հրամանատարներն են.- Ա. հարիւրակ՝ Նշան Միրաքեան, Բ. հարիւրակ՝ Սարգիս Արամազանեան, Գ. հարիւրակ՝ Անդրանիկ Երեցեան, Դ. հարիւրակ՝ Արամ Գրիգորեան, Ե. հարիւրակ՝ Հայկ Բժշկեան: Մեր շտապը կազմուած է այսպէս.- Աղունիկ Զանփուլատեան՝ հրամանատար, Միքայել Մեֆերեան (Պանդուխտ)՝ օգնական, Հայկ Բժշկեան՝ շտապի կառավարիչ եւ հաշուապահ, Արամ Մելիքեան (Հաճի)՝ ծախսարար, Ռուբէն Գրիգորեան՝ հանդերձապահ, 3 գրագիրներ եւ մի շարք մանր ծառայողներ: Հաւանական է որ ամսոյն վերջին գնանք ռազմաբեմ անդառնալիօրէն: Ամէն օր հրացանաձգութեան ենք գնում եւ Կարսի մթնոլորտը դրդեցնում հնչակեան ռազմի երգերով: Շատ ուրախալի տեսարան է ընկ. Մելքուն, երբ մօտ 600 հնչակեան զինուորներ միատարազ, լաւ մարզուած անցնում են քաղաքի փողոցներով «Հեռուոր Երկիր»ը թողացնելով. տեսնել է պետք: Այժմ մեզ մօտ են ընկ. Արծուիկը, Լազօս, ընկ. Ալեքսանը: Եթէ կարելի էր դուր էլ գայիք շատ լաւ կը լինէր. մի քանի օրով միայն: Ինչպէս միշտ, նոյնպէս եւ այժմ, մեր տղերքից մի քանիսի մէջ թեթեւ տարածայնութիւններ են լինում երբեմն, միշտ հաշտեցնում ենք եւ հարցը փակուում է: Ազգային Բիւրօն մեզ չի

օգներ դարձեալ, բայց մենք երջանիկ ենք եւ չափից դուրս գոհ, որ առանց ծանրանալու ազգի վրայ, առանց նրա անուսով ծածկուելու, պարզ ճակատով, հնչակեան դրօշը պարզած կատարում ենք մեր պարտքը եւ զարմացնում մարդկանց թէ ինչպէս մենք քաղցած, տկլոր եւ անփող, բանակ կառուցել ենք ահռելի ու չափազանց օրինակելի: Մոռացայ ասելու պետական դումայի անդամ Պ.Պապաջանովն էր եկել այստեղ մեզ տեսնելու, զարմացաւ մարդը երբ պարագ-զօրահանդէս սարքեցինք, զինուորական պատիւներ տուեցինք, խօստացաւ ամէն կերպ օգնել, նուիրեց 150 ռուպլի: Ուրիշ նորութիւններ չկան. ձրի թերթեր ստանում ենք: Եղբայրս մօտս է: Ուղարկում եմ պատկերս: [..] Եւ յանձնում էր գրուած: Խոնարհ ողջոյսներս տիկնոջը եւ ջերմ համբոյրներ Ձեզ ու զաւակներդ: Սերգեյը այստեղ էր. գնաց թիֆլիս: Ըն Յայկ»<sup>91</sup>:

Կամաւորական 2. գունդը կը կռուի Երզրումի դժուարին ճակատին վրայ ու շարք մը յաղթական ճակատամարտերէ ետք, ռուսական բանակին որպէս յառաջապահ կը մասնակցի Երզրումի գրաման մարտերուն: Բ.Բժշկեան, «Երզրումի ճակատէն» եւ «Ղեպի Երզրում» ընդհանուր խորագիրներուն տակ, ռազմաճակատային թարմ լուրերով կ'աշխատակցի «Գաղափար»ին:

Բ.Բժշկեանի գրած յօդուածները, ռազմաճակատին մասին պատմական վաւերական տուեալներ պարունակելուն կողքին, հրապարակ կը հանեն անոր գրական ճաշակը, հայրենասիրական եւ մարդասիրական համոզումները, հայոց պատմութեան մասին գիտելիքներն ու հաւատքը հայ ժողովուրդի ապագային հանդէպ: Պատմելով Երզրումի ճակատին վրայ խումբ մը ռուս սպաներու հետ իր ունեցած ընկերական հանդիպումին մասին, ան կը գրէ. «Սկսեցի պատմել տեսածս գերեզմանների մասին, համառօտակի պատմելով նմանապէս հայ ազգի սպասելիքները այս պատերազմից, նրա ջանքերը, զոհողութիւնները եւ տուած նիւթական, ֆիզիքական զոհերը: Բանից երեսաց, որ երիտասարդ սպաները հայ կեանքի վերաբերմամբ եւ մանապէս վերջին երկու տարուայ շարժման (կամաւորական.- Ե.Ը.) մասին շատ թիր հասկացողութիւն են ունեցել, որի պատճառով մեծ հետաքրքրութեամբ լսում էին ինձ երբ սկսեցի պատմել հայերի տառապանքը Տաճկահայաստանում, նրա ապստամբական շարժումները եւ հայկական դատի յառաջացման պատճառներն ու հետեւակները»<sup>92</sup>:

1915 Յունիս 22-ին, Շարեան գետակի մօտ մղուած ծանր ճակատամարտին, 2. գունդի հրամանատար Գրիգոր Աւշարեան կը նահատակուի: Նոյն ճակատամարտին, Բ.Բժշկեան կը վիրաւորուի: Բուժուելէն ետք կը հետելի հայ կամաւորական գունդերու սպաներուն եւ հրահանգիչներուն յատուկ զինուորական միամսեայ դասընթացներուն ու կը նշանակուի 6-րդ գունդի հրամանատար: Յու-

ցաբերած քաջութեան համար կամաւորական Գունդերու Գործադիր Կոմիտէն զինք կը պարգեւատրէ Ոսկեայ Թուրով: Ռուսական բանակի հրամանատարութիւնը եւս, Բ.Բժշկեանը կը պարգեւատրէ Գեորգեան երկու Խաչերով եւ Ս.Աննայի չորրորդ աստիճանի շքանշանով:

Երբ երրորդ անգամ վիրաւորուելով բուժման համար կը գտնուէր Սոսկուա, կը պայթի Ռուսական Յեղափոխութիւնը: Հիւանդանոցէն դուրս գալէն ետք Բ.Բժշկեան կը միանայ յեղափոխականներուն եւ կը նշանակուի հրամանատարութեան կից «Ռազմապարեկային» խումբին պետը: Կարճ ժամանակ մը անց կը մեկնի Սամարղանտ, ուր տեղափոխուած էր իր ընտանիքը:

1918-ի սկիզբը, Նորահաստատ խորհրդային իշխանութիւնները, շարք մը հրամանագրերով իրաւունք կու տան Միջին Ասիա բնակող հայութեան, կամաւորական շոկատներ կազմել եւ մեկնիլ Գայաստան թրքական բանակներուն դէմ պայքարելու համար<sup>93</sup>: ՍԴ Հնչակեան Կուսակցութեան կողմէ կամաւորական շոկատներ կը կազմուին Աշխապատի, Սամարղանտի եւ Դաշկենտի մէջ: Սամարղանտի շոկատը, որ վերջնականապէս կը ձեւաւորուի 1918 Փետրուարին, կը դրուի Բ.Բժշկեանի հրամանատարութեան տակ: Ջոկատի նպատակն էր հասնիլ Պաքու՝ Ստեփան Շահումեանի օգնութեան<sup>94</sup>: Սակայն, կռիւներու ընդլայնման պատճառով, դեպի Պաքու տանող ճամբաները կը փակուին եւ Բ.Բժշկեանի շոկատը կը մեկնի Օրենսպուրկ ուր կը միանայ Նորակազմ Կարմիր Բանակին: Բ.Բժշկեան իր զինուորական ճակատագիրը կը կապէ Կարմիր Բանակին, իսկ Գայաստանի փրկութիւնը՝ խորհրդային իշխանութեան:

\*\*\*

Փակագիծ մը:

Պատանի էի. «Հայկ Բժշկեան» պատանեկան միութեան անդամ: Միութենական աշխատանքի խանդավառ մէկ պահուն, տարեց ընկեր մը մօտեցաւ եւ գորովալից ծայրով մը ըսաւ, -տղաս, գիտե՞ս որ ես Հայկ Բժշկեանը անձնապէս կը ճանչնամ. երբ մենք Պոլսոյ մէջ նշեցինք 20-ներուն տարեդարձը, հոն ներկայ եղաւ ան ու ելոյթ ունեցաւ:

Պատանեկան միտքս չըմբռնեց ըստածին տարողութիւնը: Ապագային ալ, երբ կը մտաբերէի տարեց ընկերոջ ըսածը, այդ կը վերագրէի երեսակայութեան կամ սխալ յիշողութեան - այդ թուականներուն Բ.Բժշկեանը Կ.Պոլիս ի՞նչ գործ ուներ: Բայց ամէն բան շրջուեցաւ երբ կարդացի Աշոտ Պատմագրեանի յուշերը, ուր ան կը գրէ թէ 1921-ին երբ Պաթում կ'երթայ, նաւով Կ.Պոլիս մեկնելու համար, Պաթումի մէջ կը հանդիպի երեք հայերու՝ թարիգեցի

Արմենակ Ահարոնեան, Հայկ Բժշկեան եւ Միսաք Վարդավառեան (ինք եւս պարսկահայ ըլլալով իրար կը ճանչնան ու կը խօսակցին): Ապա նոյն հայերուն կը հանդիպի Նաւուն վրայ: Ա.Պատմագրեան կը շարունակէ.- «Մենք շատ զարմացանք տեսնելով որ առաջին երկուսը դրել էին պարսկական մեծ գլխարկներ եւ մանաւանդ Արմենակը կատարելա թաւրիզեցի թուրքի եր նմանում: Մեզ բացատրեցին որ Տաճկաստանում հայերի հանդէպ վատ տրամադրութիւն է տիրում եւ իրենք, առ ի զգուշութիւն, իրենց պարսիկ էին ուզում ներկայացնել»<sup>173</sup>: Ուրեմն... չի բացառուիր որ Հ.Բժշկեան Կ.Պոլիս գտնուած ըլլայ: Եթէ այդ՝ ինչո՞ւ ծպտուած: Չմոռնանք որ այդ շրջանին պոլշեիկ-քեմալական յարաբերութիւնները իրենց տարերջը կ'ապրէին, եւ Գայը Կարմիր Բանակի արդէն փորձուած հրամանատարներէն էր: Բայց արդե՞օք Կ.Պոլիս գտնուած միջոցին ան մասնակցած է Քսաններու տարելիցին: Ինչպէ՞ս կրնար ան իր գաղտնի (ծպտուած) առաքելութիւնը (եթէ կար այդպիսին) համատեղել նման կեցուածքի մը հետ: Այս բոլորը կարելի էր ստուգել միայն ժամանակաշրջանի հայկական մամուլի՝ յատկապէս հնչակեան օրկան «Երկիր»ի էջերէն: Դժբախտաբար, մեզի հասու հայկական գրադարաններուն, ներառեալ Հայաստանի Ազգային Գրադարանին մէջ «Երկիր»ի հաւաքածոները ամբողջական չէին, եւ մեզի հետաքրքրող ամիսներու թիւերը կը պակսէին: Բայց չսպասուած տեղէ մը օգուտբեան կը հասնի Պուլկարիոյ շրջանի հնչակեան օրկան «Պալքանեան Մամուլը», որ իր 1919 Յունիս 16-ի թիւով, «Քսան Կախաղաններու Տարեդարձը - Կ.Պոլսոյ Հայութեան Յարգանքը ՍԴ Հնչակեան Նահատակներուն» յօդուածով (հաւանաբար արտատպուած «Երկիր»էն) կու տայ հանդիսութեան նկարագրութիւնը: Կը պարզուի որ այդ եղած է համազգային բնոյթի եւ ՍԴ Հնչակեան բանախօսին կողքին ելոյթ ունեցած են ՀՍ Ռամկավար, ՀՅՊաշտակցական եւ Վերակազմ. Հնչ. կուսակցութիւններու ներկայացուցիչները: Ապա, «գօր. Անդրանիկի օգնականներէն մէկը՝ հրամանատար Հայկ, փափաք յայտնած ըլլալով արտայայտուելու, խօսեցաւ.- Երբ կռիւի դաշտէն լսեցինք թէ յանուն տուրք գաղափարին Սթանպուլի մէջ կտառփնաւ տին բարձրացրել 20 հնչակեաններ, մեր թեւերը չկախուեցան այլեւս վար, եւ զենքը ձիգ ուղղուած մնաց թշնամիին կուրծքին: Անոնց կախաղանները մեզ խրախուսող ոգիներ եղան մինչեւ վերջը, հրաւիրեց ժողովուրդը ըլլալ միշտ խրոխտ, միշտ մարտական»: Իսկ ո՞վ է «Անդրանիկի հրամանատարներէն» Հայկը. արդե՞օք ան նոյն Հայկ Բժշկեանն է որ ինչպէս Թաւրիզէն Կ.Պոլիս ճամբուն վրայ կիսածպտուած էր՝ կը շարունակէր մնալ կիսածպտուած: Բայց Ա.Պատմագրեան Հ.Բժշկեանի այցը Կ.Պոլիս կը նշէ 1921 թուին, մինչդեռ Քսաններու տարելիցը նշուած է 1919-ին: Հաւանական է որ ծերութեան տարիքին գրած իր յուշերուն մէջ

Ա.Պատմագրեան սխալած ըլլայ. բացառուած չէ նաեւ որ Հ.Բժշկեան մէկէ աւելի անգամներ Կ.Պոլիս այցելած ըլլայ: Յամենայն դէպս, մեզի ծանօթ տարեք ընկերոջ ըսածին, Ա.Պատմագրեանի յուշերուն եւ «Պալքանեան Մամուլի» հաղորդումին մէջ ընդհանուր իրականութիւն մը կայ: Անպայման կայ:

\*\*\*

Կարմիր Բանակին միանալէն ետք, Հ.Բժշկեան կը նշանակուի Ստավրոպոլեան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ, ապա Սիմֆիրոպոլի հաւաքական զօրաբանակի (հռչակաւոր 24-րդ «Երկաթեայ Տիւրքիա») հրամանատար, ապա Ա.Յեղափոխական Բանակի հրամանատար: Իր ջանքերով կը հիմնադրուի Կարմիր Կովկասեան Հեծելազօրային Վարչի Տիւրքիան: Իր զօրքերով հակախորհրդային ուժերուն դէմ կը կռուի Ուլքանիոյ, Լեհաստանի, Չեխոսլաւաքիոյ եւ Գերմանիոյ մէջ: 1920-22 կը հետեւի ռազմական ակադեմիայի դասընթացներուն: 1922-ին կը նշանակուի Խորհ. Հայաստանի զինուորական ժողովրդական առաջին կոմիսար (իմա՝ պաշտպանութեան նախարար), միաժամանակ կը նշանակուի տովետական բանակի յատուկ նշանակութեան զօրամասերու հրամանատար: Հ.Բժշկեանի ջանքերով Հայաստանի մէջ կը բացուի հրամանատարական դպրոց, ուսման եռամեայ ծրագիրով: 1925-29 կը հետեւի ֆրունզէի անուան ռազմական ակադեմիայի դասընթացներուն, կը պաշտպանէ իր աւարտաճառը եւ կը նշանակուի նոյն ակադեմիայի ռազմական արուեստի պատմութեան դասախօս (ապա ամպիոնի վարիչ): Հ.Բժշկեանի գրչին կը պատկանի ռազմական բնոյթի բազմաթիւ գիրքեր, ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ:

1937 Դեկտեմբերին, որպէս հայրենիքի թշնամի կը գնդակահարուի ստալինեան բռնակալութեան կողմէ:

1923-ին, մինչ Հ.Բժշկեան կը վարէր Խ.Հայաստանի պաշտպանութեան նախարարի պաշտօնը, ՍԴ Հնչակեան Կուսակցութիւնը կը գտնուի գաղափարական բնոյթի լուրջ դժուարութեան առջեւ: Այդ թուին, ՍԴՀԿ Թիֆլիսի Կեդրոնական Վարչութիւնը դիմում կը կատարէ Կոմիւնտերնին՝ միանալու անոր: Վերջինս, սա կը նկատուի պատեհ առիթ մը, աշխարհի տարածքին Հնչակեան Կուսակցութիւնը լուծելու համայնավար կուսակցութիւններուն մէջ: Խորհրդային Միութեան մէջ ասկէ փախուստ չկար: Արտասահմանի մէջ սակայն այդ շատ դժուարին փորձ մըն էր: ԱՄՆ-ի մէջ այդ փորձը կը դիմագրաւէ Ներքին եւ արտաքին դժուարութիւնները: Ներքին վեճերու այս մթնոլորտին մէջ, ՍԴՀԿ ԱՄՆ-ի Վարիչ Մարմինը (Նիւ Եորք), կ'որոշէ այս հարցին մասին իմանալ Հ.Բժշկեանի կարծիքը: Այս յանձնարարութիւնը կը տրուի Վ.Մարմնի քարտուղար Սեդրակ Շահէնին, որ 1915-ին որպէս կամաւոր մեկնած ըլլալով կովկասեան

նագմանակատ, անձնապես ծանօթ էր Բ.Բժշկեանին: Ս.Շահեն այս մասին նամակ մը կը յղէ անոր: Իր պատասխան նամակին մէջ Բ. Բժշկեան լակոնական ոճով կը պատասխանէ.- «Ս.Շահեն: Ստացա՞յ Ձեր նամակը: Յայտնում եմ Ձեզի, ուր որ էք հոն մնացէք եւ շարունակեցէք: Դայկ Բժշկեան: 14-5-1923, Երեւան»<sup>149</sup>:

Այդ շրջանին, Դայկ Բժշկեան աւելին չէր կրնար ըսել:

## ՕՎՆՕԹԱՎԳՐՈՒԹԻՒՆ

[1] Ալեքսանդր Դունաւեսկի, «Գայի Գեղեցիկ», Երեւան, 1967: Դայկ Դայրապետական, «Լեկնետար Գայը», Երեւան, 1977:

[2] Շատուր Աղայեան, «Դայկ Բժշկեան (Գայ)-Շենդեան 80-ամեակի Առթիւ», «Պատմա-Բանասիրական Դանդեմ» 1967, թիւ 1. Վ.Օհանեան, «Գայի Յօդուածները Սովետահայ Մամուլում», «Լրագրեր» 1970, թիւ 5. Արամայիս Մնացականեան, «Ռեւոլյուցիայի Դերոցը եւ Չօրհրամանատարը», «Սովետական Դայաստան», 1962 Փետր.6:

[3] Ռուսերէն այբուբէնը «Գ» հնչիւնը չունի, օտար անուններու տառադարձութեան ժամանակ, «Գ» հնչիւնին փոխարէն կ'օգտագործուին «Գ» կամ «Կ» գիրերը: Գայ ծածկանունը, որ Բ.Բժշկեանին տրուած է անոր ռուսական բանակին միանալէն ետք, խորքին մէջ «Դայ» բառին ռուսերէն տառադարձութիւնն է:

[4] «Սովետական Դայաստան», 1962, Փետր. 6:

[5] «Դնչակեան Սոց. Դեմ. Կուս. Պայախանի մասնաճիւղի ժամանակաւոր վարչութեան թիւ 1 շրջաբերականը», 1909 Յունիս 9: ԴԱԱ:

[6] «Տեղեկագիր Պայախանուայ Բոլոր Կմբերի», Բանուոր Դայկ: ԴԱԱ:

[7] «Դնչակեան Սոց. Դեմ. Կուսակցութեան Պայախանուայ Մասնաճիւղի ժամանակաւոր վարչութեան Զեկուցում», Բանուոր Դայկ, 1909 Յունիս 30: ԴԱԱ:

[8] «Դայ Կամաւորների Մեկնումը», Աստրախան, 1914 Դեկտեմբեր 7: ԴԱԱ:

[9] «Դայկ Բժշկեանի նամակը Մեղնոյին» (անթուակիր): ԴԱԱ:

[10] «Գաղափար», 1916 Մարտ 13. Բ. Բժշկեան, «Դեպի Երզրում»:

[11] Վլատիմիր Պետրոսեան, «Ինդերնացիոնալիզմի Դրօշին Դանատարիմ», Երեւան, 1983, էջ 53-61:

[12] Վլատիմիր Պետրոսեան, «Դայաստան. 1918 Թուական», Երեւան, 2007, էջ 21-23:

[13] Աշոտ Պատմագրեան, «Իմ Յուշերից», Պելրուք, 1977, էջ 80-81:

[14] Ս.Շահենի նամակը ՍԴԴԿ Կեդր. Վարչութեան, 24 Դոկտ. 1967, Լոս Անձելոս: Դնչ. արխիւ:


# ԱՆԴՐԱՆԻԿ ԿԷՆՃԵԱՆ

ՍԴ Դնչակեան Կուսակցութեան գաղափարախօս ղեկավարներու շարքին իր վաստակաշատ տեղը ունի Անդրանիկ Կենճեան:

Ա.Կենճեան ծնած է 1873-ին, Ատապազար:

Կը յաճախէ ծննդավայրի Արամեան դպրոցը:

Մեծապէս հոգ կը տանի իր ինքնագարգացման: Որպէս անյազ ընթերցող, կը խորանայ իրաւաբանական, ընկերաբանական եւ գաղափարախօսական նիւթերուն մէջ: Երիտասարդ տարիքի իր գաղափարական որոնումներուն մասին ան կը գրէ. «Անփորձ շրջանի այդ գաղափարական եռելեփին մէջ սակայն, ստոյգն



այն է, որ Ատապազարը՝ որպէս ազգային հայրենիքէն դուրս կամ օտար քաղաք, մեզ ատապազարցիներուս համար, ազգերու իրաւահաստարութեան գաղափարը ամենէն բանաւորը կը թուէր, եւ իտեալիստ հասակի յատուկ մարդկայնական լայն շունչով կ'ուռէին մեր կուրծքերը ընդդէմ ամէն հարստահարութեան, հալածանքի կամ բռնութեան, ըլլան անոնք ներքին թէ արտաքին, քաղաքական, ազգային-ընկերական»<sup>151</sup>:

Ա.Կենճեան կը զբաղի առեւտուրով: Իր պարկեշտ նկարագրին եւ իրաւաբանական հարցերու շուրջ ունեցած գիտելիքներուն շնորհիւ

կը նշանակուի Ատապազարի առեւտրական դատարանի պատուական դատարոյի պաշտօնին: Անոր հասարակական առաջին գործունեութիւնը կ'ըլլայ Ա.Յրեշտակապետ թաղի երիտասարդներով կազմել դպրոցասէր միութիւն մը, որուն նպատակն էր Արամեան դպրոցի կարօտեալ աշակերտներու գրեական պիտոյքները հոգալ: Յամիտեան իշխանութիւնները, երիտասարդներու այս խմբակը «գաղտնի եւ խռովարարական ընկերութիւն» մը նկատելով, կը ձեռքակալեն գանուք՝ շուրջ 30 հոգի: Ա.Կենճեան եւ խումբին մեծ մասը, կարճ ժամանակ մը անց ազատ կ'արձակուին՝ մնայուն հսկողութեան տակ ըլլալու պայմանով: Սակայն խումբի անդամներէն Յարութիւն Ազատեան (Յայր Արթին) եւ հորէն երամեան (որոնք միեւնոյն ժամանակ մաս կը կազմէին Յնչակեան Կուսակցութեան) կը դատապարտուին համապատասխանաբար 9 ամսուան եւ 3 տարուան բանտարկութեան՝ Իզմիրի բանտին մէջ<sup>51</sup>:

Օսմ. Սահմանադրութենէն ետք կը սկսի Ա.Կենճեանի ազգային-հասարակական-կուսակցական գործունեութեան բեղուն շրջանը:

1909 Մարտ 31-ի յետաշրջական շարժման ժամանակ, Ա.Կենճեան պետական միջոցով կը զինէ 30 երիտասարդ, որոնք քաղաքացիական հագուստներով կը մասնակցին սահմանադրութեան պաշտպանութեան: «Նոյն ատեն, կառավարութիւնը քաղաքին պաշտպանութիւնն ալ յանձնած էր հայ ժողովուրդին, ինք չունենալով բաւարար ուժ: Այդ շրջանին ընկեր Պանդուխտ Ատապազար կը գտնուէր, քաղաքին պաշտպանութիւնը կատարեցինք եւ միանգամայն ռումբ եւայլն պատրաստուած էր»<sup>52</sup>:

Սահմանադրութեան շրջանին, Նիկողիմիոյ մէջ (Իզմիր, Օվանճը, Պարտիզակ, Եւայլն), Ա.Կենճեանի գործօն մասնակցութեամբ, ՍԴ Յնչակեան Կուսակցութիւնը կ'ապրի կազմակերպչական վերելք եւ կը դառնայ շրջանի տիրական ուժը: Կուսակցական աշխատանքներուն կողքին Ա.Կենճեան կ'ընտրուի ազգային մարմիններու անդամ, իսկ աւելի ուշ՝ Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամ, Նոյն շրջանէն:

Եթէ մինչեւ Սահմանադրութիւնը Ա.Կենճեան արձակ, չափածոյ եւ թարգմանական գրութիւններով կ'աշխատակցէր «Փունջ», «Ճերիտ Շարքիէ», «Արեւելք», «Բիւզանդիոն», «Ծաղիկ», «Յայրենիք», «Լոյս», «Արեւելեան Մամուլ», «Պարտիզակ» եւ «Փարոս» թերթերուն, ապա, սահմանադրութենէն ետք ան կ'աշխատակցի ինչպէս՝ «Մամուլին»՝ «Ապագայ», «Նոր Աշխարհ» եւ «Կայծ»՝ գաղափարախօսական բնոյթի յօդուածներով: 1910-11, Ասոյի (Տիգրան

Օսեան) եւ Բանուորի (Երուանդ Թփուլզեան) հետ կը խմբագրէ «Երկիր» շաբաթաթերթը:

1912-ի օսմ. երեսփոխանական ընտրութիւններուն, Ա.Կենճեան՝ որ կը հաւատար թէ հակաիթթիհատական պայքարի համար «ընտրութիւնը փրոփականտայի միջոց մըն էր պարզապէս»<sup>53</sup>, ՍԴ Յնչակեան Կուսակցութեան կողմէ թեկնածու կ'առաջադրուի ընդդէմ Իթթիհատի թեկնածուին, Իզմիրի շրջանէն: Բ. կարգի ընտրողներու փոքր տարբերութեամբ մը երեսփոխան կ'ընտրուի Իթթիհատական Վահան Պարտիզականեան, որուն թիկունք կեցած էին ինչպէս Իթթիհատը, այնպէս ալ ՅՅԴ-ն, Վերակազմեալ Յնչակեան Կուսակցութիւնը ու պետական ամբողջ վարչամեքենան: Ընտրական այս արդիւնքը «Նոր Աշխարհ»ը կը նկատէ «բարոյական յաղթանակ»<sup>54</sup>:

1914 Յոկտեմբերին, ինչակեաններու ընդհանուր ձերբակալութեան, կը ձերբակալուի նաեւ Ա.Կենճեան: Անոր տունը կը խուզարկուի եւ ձեռագիրները կը գրաւուին: 12 օր կը բանտարկուի ու բանտակից կ'ըլլայ քսաններէն Վանիկին, Տոքթ. Պենեթին, Ռուբէն Կարապետեանին, Սմբատ Գլըճեանին եւ Աբրահամ Մանուկեանին: Ա.Կենճեան կ'ապացուցէ, որ Մայիս-Յունիս ամիսներուն իր բացակայութիւնը Պարտիզակէն կապուած էր իր առեւտրական գործերուն հետ եւ կուսակցական նպատակներ չէր հետապնդէր: Ազատ կ'արձակուի:

1915 Ապրիլին դարձեալ կը ձերբակալուի եւ Ատապազարի մտաւորականներու, կուսակցական գործիչներու եւ երեւելիներու առաջին կարաւանով կը բռնէ աքսորի ճամբան: Յետգիտէ խումբին կու գան աւելեալ աքսորական նորանոր խումբեր: Յուլիսի սկիզբը, մինչ աքսորականներու խումբը կը գտնուէր Սուլթանիէ քաղաքը, Ա.Կենճեանի հետ կը պատահի նշանակալի դէպք մը, որ իր տեսակին մէջ եզակի է հայ աքսորի պատմութեան մէջ: Ան, Կ.Պոլսէն եկած հրամանագրով մը ետ կը կանչուի իր աքսորէն... որպէսզի դատուի:

Ինչո՞ւ էր այս հրամանագիրը: Յազարաւոր որպէսզի կանխարկներ սպաննող, ժողովուրդ մը ամբողջ ցեղասպանութեան ենթարկող Իթթիհատի իշխանութիւնը, ինչո՞ւ Ա.Կենճեանի պարագային դատական վճիռ կայացնել կ'ուզէր...:

Ա.Կենճեան, աքսորի ճամբայէն կը բռնէ աքսորի յետընթաց ճամբան, խստացուած հսկողութեան տակ: Վերադարձի ճամբան կ'ըլլայ աւելի տառապալի: Ատապազարի մէջ կը բանտարկուի կալանատան վերածուած Ս.Կարապետ Եկեղեցույ եւ անոր յարակից

Ներսեսեան վարժարանին ներքնայարկերուն մէջ՝ ուր արդէն բանտարկուած էին մեծ թիւով ատապազարցի կուսակցական եւ հասարակական գործիչներ: Տանջանքներու եւ սոսկալի բրածեծի միջոցով կը փորձուի Ա.Կենճեանէն խոստովանութիւններ կորզել պահուած զենքերու մասին: Ան կը մնայ անդրդուելի: Կ.Պոլսէն յատուկ այս պարտականութեան համար Ատապազար դրկուած Կարապետ վախճանագիրը համարձակեց իր իրաւունքները: «Պաշտօնիս ու կը սկսի դարձեալ գանակրծել զիս, այս անգամ այլեւս անխտիր ամեն կողմէս կ'իջնեն հարուածները, զուխիս, դէմքիս, ականջիս, եւայլն: Գլուխս կը պատռուի եւ կը սկսի արիւնը հոսիլ», կը գրէ Ա. Կենճեան ու կ'աւելցնէ. «Ժիշդ երեք շաբաթ բանտին մէջ անկողնոյ կը ծառայեմ, առանց մէկ կամ միւս կողմս կարենալ դառնալու, քանի որ ամբողջ մարմինս կաս կապոյտ փտած էր ծեծին տակ»<sup>60</sup>: Անոր կը ստիպեն ստորագրել «Անկախ Հայաստանի մը կազմութեան համար Ս.Սպարհ Գիւլեանի հետ ունեցած յարաբերութեան եւ գործունեութեան մասին Անդրանիկ Կենճեանի կողմէ տրուած տեղեկութիւններ» վերնագիրը կրող գրութեան տակ: Ա.Կենճեան կը մերժէ ստորագրել այդ ու ինք կը պատրաստէ չորս էջնոց վկայութիւն մը, ուր ամբաստանութեան տակ կ'առնէ իթթիհատական իշխանութիւնը:

Բանտարկութեան այդ ծանր օրերուն, անոր այցելութեան եւ մնաց բարեւի կու գան ընտանիքին անդամները... որովհետեւ անոնց եւս տրուած էր աքսորի հրահանգ: Ա.Կենճեան, այդ ծանր օրերու իր զգացումները թուղթին կը յանձնէ այսպէս.-

«... Կ'երթան...

*Բանտս կը քաշուիմ, այլեւս ծննդավայրիս մէջ իսկ օտար մըն եմ, ո՛չ տուն ունիմ, ո՛չ ընտանիք, ո՛չ ազգական եւ ո՛չ իսկ հայ, հայրենակից... Կը փղծկեմ բանտակից ընկերներուս մօտ, կու լա՛մ եւ կը խորհրդածե՛մ...»<sup>61</sup>:*

1915 Յուլիսի վերջը, Ա.Կենճեան, Խորէն Երամեան, Գրիգոր Գայեան (դաշնակցական), Յովակիմ Գապաքեան եւ Միհրան Ճիգմեճեան երկար շղթայով մը իրար շղթայուած կը տարուին Իզմիրի բանտը, ուր Վահան ժամկոչեանի գլխարկութեամբ բանտարկուած էին խումբ մը այլ հնչակեաններ: Զանի մը օր ետք, Ա.Կենճեանի խումբը, որուն կը միանան Արթաքի Գլըճեան, ժամկոչ Կարապետ եւ Կարապետ Փաթուկեան կը տարուին Կ.Պոլսոյ պատերազմական ատեանի բանտը՝ հոն ուր բանտարկուած, դատուած եւ կախաղան հանուած էին Զսանները:

Նախնական հարցաքննութիւններէն կը պարզուի, որ ամբողջ հարցը կը կայանայ ՍԴՀԿ Կեօտունչէի 7-րդ Համագումարին առնուած դաւադրական գործունեութեան որոշումներուն: Այս հունով ալ կ'ընթանայ դատավարութիւնը, որ կ'ունենայ երեք նիստ: Փաստօրէն, սա հնչակեաններու երկրորդ դատավարութիւնն էր՝ որ պատմագրութեան կողմէ արժանի ուշադրութեան արժանացած է:

Դատարանին առջեւ կանգնած ութ մեղադրեալները կ'ամբաստանուին «Անկախ Հայաստանի կազմութեան եւ անջատողական գաղափարներու համար, ռուբեր պատրաստող Խորէն Երամեան, եւ այդ պատրաստութեան գիտակցութիւնն ունեցող եւ դիրացնող Յովակիմ Գապաքեան, Նոյն այդ նպատակին համար զինավաճառութիւն ընող Միհրան Ճիգմեճեան, իրենց մօտ ռուբ պահող Գրիգոր Գայեան եւ Կարապետ Փաթուկեան, այդ մասին անոնց գիտակցաբար դիրութիւն տուող Արթաքի Գլըճեան, ժամկոչ Կարապետ եւ կուսակցական-քաղաքական գործիչ Անդրանիկ Կենճեան, ամենքն ալ միեւնոյն նպատակին ձգտող իրենց արարքներուն համար, պատժական օրէնագիրքի 51-րդ յօդուածի 2-րդ հատուածի տրամադրութիւններուն համաձայն պատիժ կը պահանջէ»<sup>62</sup>: Պահանջուած պատիժը մահապատիժն էր:

Դատավճիռը կը գործադրուի Խ.Երամեանի, Գ.Գայեանի եւ Կ.Փաթուկեանի հանդէպ, որոնց կողքին կուսակցական հանգանակութեան մասնակցելու ամբաստանութեամբ դատապարտուած Հրանդ Աղաճանեան կախաղան կը հանուին Սուլթան Պայազիտ հրապարակին վրայ, 1916 Յունուարին:

Անոնց մէջ իւրօրինակ պարագայ էր Կարապետ Փաթուկեանի պարագան: Ան նախապէս ձերբակալուած էր Զսաններու դատավարութեան ժամանակ եւ անոր ուսերուն կը ծանրանար Կեօտունչէի Համագումարին մասնակցելու եւ անոր որոշումներուն տակ ստորագրելու ամենածանր ամբաստանութիւնը: Սակայն, ան կրցած էր մահապատիժէն ազատիլ իր ունեւոր ազգականներուն տրամադրած «ամենափրկիչ» կաշառքին շնորհիւ: Այս անգամ սակայն ոչ մէկ բան կը «փրկէ» անոր:

Ա.Կենճեան վերստին կը բռնէ աքսորի ճամբան դէպի Տեր Չօր: Զմրան ցուրտին, անպատասպար եւ կիսաքաղց, կը վարակուի թիֆոյիտով: Այդ վիճակին մէջ, Զիւրտ Պաղչէի իր կալանավայրէն կը յաջողի արկածախնդրական փախուստ մը կազմակերպել դէպի Հայէպ, ուր կը հասնի Մարտի սկիզբը ու կը թաքնուի Ազգ. Առաջնորդարանի շէնքին մէջ: Գրաւոր կապ կը պահէ Մեսրէն գտնուող

կնոջը հետ եւ անորմէ կը տեղեկանայ, թէ գաղթի ընթացքին գոհուած են դուստրը, մեծ մայրը եւ եղբոր ընտանիքին անդամները: Ազգ. Առաջնորդարանը խուզարկութեան կ'ենթարկուի եւ ան կը ստիպուի թաքնուիլ այլ վայրեր: Կը յաջողի կինը, երկու որդիներն ու եղբոր դուստրը փախցնել քաղաքավայրէն եւ բերել Զալեպ իր մօտ: Ա. Կենճեանի թաքստոցը խուզարկման կ'ենթարկուի եւ ան վերստին կը ձերբակալուի, կը բանտարկուի ու խիստ հսկողութեան տակ կ'աքսորուի Տէր Զօր: Պատճառը՝ ներքին գործոց նախարարութենէն դրկուած հեռագիրն էր, ուր կ'ըսուէր. «Անդրանիկ Կենճեան, որ իր 4 ընկերներով դէպի Տէր Զօր սեւեք եղած է շուրջ վեց ամիս առաջ, իբր անկախ Զայաստանի կազմութեան անջատողական յեղափոխական (եւ որուն միւս ընկերները ի Պոլիս կախաղան հանուեցան), ցարդ Տէր Զօր չէ հասած: Զալեպի շուրջ փախուստ տուած ըլլալ կը հաստատեն ոստիկանական սեւեքաթի քննութիւնները: Պէտք է ուրեմն խստիւ հետապնդել եւ անմիջապէս դրկել որոշեալ տեղը»<sup>95</sup>:

Տէր Զօրի ճամբուն վրայ, Պապ գիւղին մէջ, Ա. Կենճեան վերստին փախուստ կու տայ: Շրջան մը փախստական մնալէ ետք, Արամ Անտոնեանի եւ Ժիրայր Պասմաճեանի օգնութեամբ, կեղծ փաստաթուղթով կը տեղափոխուի Դամասկոս: Այդ դժուարին տեղափոխութեան ժամանակ կը ստիպուի իր կրտսեր որդին իր հետ չտանիլ, որ կու լայ ու կ'աղերսէ: «Այս արահաւիրքներէն անցնող եւ ապրողներու համար, չիսելագարուիլն ալ հրաշք մըն է»<sup>96</sup>, կը գրէ Ա. Կենճեան:

Շուրջ տարի մը փախստական ու անօգնական կեանք մը անցնելէ ետք, 1917 Օգոստոսին, աշխատանք կը գտնէ երկաթուղագիծի շինարարութեան մէջ, որպէս հուսկարացի տնօրէն Զայատուի քարտուղարը: Իր պաշտօնին բերումով ան տեղեակ կ'ըլլայ թրքական իշխանութիւններուն կողմէ շրջաններ յղուած հեռագիրներուն, որոնցմէ, պատերազմական նախարար Էնվեր փաշային պատկանող յոյժ կարեւոր երկու հեռագիրներ ան կը մէջբերէ իր «Զալածականի Յուշեր» գիրքին մէջ:

1918 Սեպտեմբերին Դամասկոս կը գրաւուի անգլիական բանակին կողմէ: Ա. Կենճեան անմիջապէս կը լծուի ազգային-հասարակական բուն գործունեութեան: Զոկտեմբերին, իր նախաձեռնութեամբ կը կազմուի Ազգային Վարչութիւնը, որուն ատենապետութիւնը կը ստանձնէ ան: «Գործ՝ ո՛չ թէ խօսք» կարգախօսով գործող Ազգ. Վարչութիւնը, իր աղքատախնամի, որբախնամի, այրիախնամի եւ մարդահամարի յանձնախումբերով փաստօրէն կը դառնայ

հայ գաղթականութեան կարիքները հոգացող առաջին ազգային մարմինը: «Շատ ծանր էր հարկաւ ե՛լ պատասխանատուութիւնը, ե՛լ գործադրութիւնը այս գաղափարին: Բայց առանց ըրալէ կորսնցնելու պէտք էր սկսիլ գործի: Ազգային ո՛չ մէկ կազմակերպուած մարմին կար. ամէն բան նոր ի նորոյ կազմելու, ամէն ինչի նոր ի նորոյ ձեռնարկելու էր եւ մանաւանդ բազմապահանջ պէտքերուն մէջ առանց դասաւորում դնելու՝ միաժամանակ ամէնքին ալ գոհացում տալու բնոյթը պէտք է ունենար առաջին քայլերնս»<sup>97</sup>, կը գրէ Ա. Կենճեան:

Այդ շրջանին Ա. Կենճեան կը նախաձեռնէ «Զայ Կեանք» անուով թերթի մը հրատարակութիւնը, որ ձեւով մը գաղթական խլեակներուն միջեւ պիտի խաղար կապի դերը: Թերթը իր ընթերցարան-լսարանով, գիշերային դասընթացքով եւ տեղեկատու դիւանով պիտի ըլլար նաեւ մտաւորական դպրոց մը: Վերջին պահուն, իշխանութիւնները արհեստական պատճառներով հրատարակութեան արտօնութիւն չէն տար:

1918 Նոյեմբերին, Դամասկոս գտնուող կիլիկեցիները, ընդհանուր ժողովի մը ընթացքին կ'ընտրեն մարմին մը, որուն նպատակն էր կամաւորագրութեան, քաղաքական յարաբերութեան եւ այլ միջոցներով նպաստել Կիլիկիոյ մէջ ինքնավարութեան հաստատման: Ա. Կենճեան կ'ընտրուի այդ մարմնին ատենապետ: Իր զոյգ պաշտօններուն բերումով ան կ'ունենայ յարաբերական լայն գործունեութիւն հոգատար իշխանութեան ներկայացուցիչներուն, Սահակ կաթողիկոսի, առաջնորդ Պետրոս Սարաճեանի, Պօղոս Նուպար փաշայի, Եգիպտոսի Զայ Ազգ. Միութեան եւ այլոց հետ: Կ'ունենայ նաեւ յաճախակի հրապարակային ելոյթներ: 1918 Դեկտեմբերին տեղի կ'ունենայ Գատմէ վրանաքաղաքին մէջ ծնած 43 նորածիններու հաւաքական կնուքը: Այս առթիւ, Ա. Կենճեան կը գրէ. «Զայ վերածնունդի հրաշքն էր, որ կը սկսէր մարմնաւորել արդէն իսկ, տառապած աչքերուս առջեւ: Ազաւոր կուրծքս կը սկսէր ուռիլ եւ նոր կեանք ներգգալ»<sup>98</sup>:

Ա. Կենճեան վերջնականապէս ապահով զգալով, կապ կը պահէ Ս. Սապահ Գիւլեանի հետ եւ կը յայտնէ մեծ արհաւիրքէն իր ազատած ըլլալը, որովհետեւ իր փախստական եղած միջոցին լուրեր տարածուած էին իր նահատակութեան մասին: «Երիտասարդ Զայաստան», «Թանկագին ընկերք ազատութեան համար աւելի քան ուրախ» լուրը կը հարդորէ, հակիրճ տալով նաեւ ամուսնւնէր Ա. Կենճեանի կուսակցական անցեալին ու պատերազմի ընթացքին կրած տառապանքներուն մասին<sup>99</sup>:

1919 Մարտին, միակ հայը ըլլալով մաս կը կազմէ «Նպաստի եւ Ներգաղթի Տնօրէնութեան» Դամասկոսի մասնաճիւղի բազմազգեան մարմնին: Իր այս պաշտօնով կ'այցելէ Երուսաղէմ, Պէյրուս, Գահիրէ, Ատանա, Դալէպ, Մերսին, Եայլս: Կը հաստատուի Ատանա եւ հաշուապահի պաշտօն կը վարէ Ֆրանսայի Ընդհանուր Կառավարչութեան ենթակայ տնօրէնութեան մէջ:

Կը սկսի Ա.Կենճեանի կիլիկեան շրջանի ազգային-քաղաքական-կուսակցական բուռն գործունէութեան շրջանը: 1920-21-ին, իր իսկական անունով, անստորագիր կամ «Գրող» ծածկանունով Ա. Կենճեան կ'աշխատակցի «Տարոս»-ին: Կիլիկիոյ քաղաքական անցուղարձեղուն նուիրուած անոր վերլուծական յօդուածները, ընթերցող հասարակութեան կողմէ կը գտնեն լայն ընդունելութիւն, սակայն կը ջղագրգռեն ֆրանսական հոգատար իշխանութիւնները: Վերջիններուս գրաքննչական մեքենան յաճախ կ'արգիլէ Ա.Կենճեանի յօդուածներուն լոյս ընծայումը:

Ա.Կենճեան շատ շուտ կը տեսնէ հայութեան հանդէպ Ֆրանսայի վարած երկդիմի՝ իսկ աւելի ուշ ամբողջապէս դաւաճանական քաղաքականութիւնը եւ այդ սուր կերպով կը քննադատէ իր գրաւոր եւ իրապարակախոսական ելոյթներուն մէջ: Ան, «Ֆրանսական Զաղաքականութեան Դետեւանքներ» յօդուածին մէջ («Տարոս», 1920, Յուլիս) կը գրէ. «Մենք չենք որ «լախտի հարուած»ի տպաւորութիւնը պիտի կրէինք կապիտալիստական դիւանագիտութեան եւ քաղաքականութեան անակնկալ խաղերուն հանդիսատեսն ըլլալով: ... Կիլիկիոյ մէջ Դամասկոսական դաշնակիցները կ'երեւի հայութեան մատուցանել կ'ուզեն «արջի ծառայութիւն», կամ «Յուդայի համբոյր»: Որն ալ ըլլայ շնորհակալ ենք, վասնզի եթէ դեռ կային պորտուական աշխարհի քաղաքականութեան սնանկութեան չհաւատացող հայեր՝ ահա իրենց աչքով կը տեսնեն»<sup>19</sup>: Այլ առիթով մը ան կը քննադատէ Ֆրանսայի Սոցիալիստ Կուսակցութեան օրկան «Լ'Իմանիթէ» («Տարոս», 1920 Յունիս 24), գտնելով թէ. «Այո՛, մենք լսած էինք պետական անձնաւորութիւններու բերնէն, «Դայաստանը տանք, բայց որո՞ն, հոն հայ չկայ», մոռնալով թէ ճիշդ այդ նպատակաւ ջարդած էին 1.5-2 միլիոն հայեր: Բայց ընկերվարական օրկանէ՞ մը լսել նման արտայայտութիւն... պարզապէս զգուշի է»<sup>20</sup>:

Թաւազլոր ընթացող դէպքերուն դիմաց ինքնաւորութիւն եւ նախաձեռնութեան ոգի ցոյց տալու համար, 1920 Օգոստոս 4ին, Դայ Ազգային Խորհուրդը կը յայտարարէ Կիլիկիոյ ինքնավարու-

թիւնը: Միհրան Տամատեանի գլխաւորութեամբ կը կազմուի կառավարութիւն, որուն մէջ Ա.Կենճեան կը նշանակուի ելեւմտական նախարար: Ֆրանսական իշխանութիւնները այդ կառավարութիւնը չեն ճանչնար ու կը լուծարեն գայն:

Յառաջ երթալով իր դաւաճանական քաղաքականութեան մէջ, ֆրանսական հոգատար իշխանութիւնը, 1920 Սեպտեմբերին կը խափանէ «Տարոս» օրաթերթը, Ախարճայի մէջ կը լուծարէ Սարգիս Արմաղանեանի գլխաւորութեամբ կազմուած Դաճընիս օգնութեան մեկնելու պատրաստուող կամաւորներու խումբը, կը հետապնդէ ու կը ձերբակալէ հնչակեան պատասխանատուներ Սեդրակ Շահէնը, Սարգիս Արմաղանեանը, Ֆիրուզ Խանզատեանը, Վահան ժամկոչեան եւ ուրիշներ: Ֆրանսական իշխանութիւններուն նպատակն էր հարուածել կիլիկահայութեան մարտական ոգին՝ Զնչակեան Կուսակցութիւնը: Սակայն ան, իր այդ նպատակը կը ծածկէ պոլշեւիկներու դէմ պայքարի քօղին տակ: Դժբախտաբար, հայ ազգ. միւս կուսակցութիւնները, առանց հարցին խորքը թափանցելու, միջ-կուսակցական մրցակցութենէ մեկնած, իրենց ելոյթներով երբեմն կը նպաստեն այս նենգամտութեան:

Դակահայ այս քաղաքականութեան որպէս հակազդեցութիւն, հնչակեան երիտասարդներ ձեռնառումբէր կը նետեն Ատանայի նահանգապետի բնակարանին եւ Իթթիլաֆ կուսակցութեան ակումբին վրայ: Այս դէպքերուն որպէս հեղինակ, Ա.Կենճեան կը ձերբակալուի եւ զինուորական ատենակի կողմէ անմիջապէս կը դատապարտուի կախաղանի: «Իր գրասենեակին պետը՝ Ժ.Կիզ, իր անձով երաշխաւոր կ'ըլլայ, վստահ ըլլալով թէ գրապարտութիւն է: Ընկերը կ'ազատի»<sup>21</sup>:

Ա.Կենճեան կը շարունակէ իր ազգային-կուսակցական գործունէութիւնը: Լոյսեմբերին ան կը մասնակցի ՍԴԴԿ Կիլիկիոյ Շրջանի Պատգամաւորական Ժողովին: Դեկտեմբերին, Սահակ կաթողիկոսի կողմէ կը նշանակուի Դայ Ազգ. Խորհուրդի անդամ, ուր ան կ'ընտրուի մարմնի ատենապետ:

1921 Փետրուարին, իր աշխատանքի տնօրէնը կ'իմացնէ, թէ պետք է իր հաշուետուութիւնը ներկայացնէ Պէյրութի կեդրոնական մարմնին: Ա.Կենճեան լաւապէս կ'ըմբռնէ, թէ այս իրեն ուղղուած քաղաքավար քաջութիւն էր: Իր պնդումներուն վրայ ֆրանսական իշխանութիւնները կ'արտօսեն, որ իրեն ընկերանաւ ըստանիքին անդամները: Մինչեւ մեկնիլը, Ատանայի հնչակեան ակումբին մէջ իրապարակային երկու բանախօսութիւններով «կը պարզէ, թէ

Ֆրանսական իշխանութեան կողմէ Կիլիկիոյ լքումը վճռուած է, ուստի ազգ. իշխանութիւնը եւ մասնաւորաբար Յնչակեան Կուսակցութիւնը փոթորիկին վերահաս ըլլալը զգացող նաւապետի մը դերը ստանձնելու են: Ապրիլ 26ին Կիլիկիոյ գլխուն սպառնացող վտանգին մասին մտայլ խորհրդածութեամբ, բայց մինչեւ վերջին վայրկեանը իրեն վիճակուած պարտականութիւնը անկեղծ, խիզախ եւ աննկատ կերպով կատարած ըլլալու գիտակցութեամբ կը հեռանայ ընկ. Ա. ԿԷՆՃԵԱՆ Կիլիկիայէն»<sup>[1]</sup>:

Կը հաստատուի Պէյրութ եւ կը շարունակէ իր հասարակական գործունեութիւնը: Սահակ կաթողիկոսին կողմէ կը նշանակուի բանագնաց Սիսի կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի Պատրիարքութեան միջեւ՝ վերջինիս պատկանող կարգ մը թեմերն ու եկեղեցապատկան կալուածները Սիսի Կաթողիկոսութեան փոխանցելու հարցով: Ա. ԿԷՆՃԵԱՆ կը յաջողի իր այս առաքելութեան մէջ: 1926-ին, անդամ կ'ընտրուի Լիբանանի առաջին գաւառական ժողովին, Չահլէի շրջանէ: (Այս ընտրութիւնները կ'անցնին զեղծարարութեան եւ պայքարի մթնոլորտի մը մէջ ու կը նախագծեն գաղութին ապագայ երկպառակութիւնները)<sup>[2]</sup>:

Կարճ ժամանակ մը անց, գաւակներուն բարձրագոյն կրթութիւն ապահովելու համար կը մեկնի Փարիզ. կը հաստատուի հոն եւ յաջորդող տարիներուն կ'ունենայ հասարակական-գրական բեղուն գործունեութիւն: 1929-31 Բագրատ Սիւնիքի եւ Վահրիճ Կեօքճեանի հետ կը խմբագրէ «Յնչակեան Մամուլ» շաբաթաթերթը: Կ'աշխատակցի «Նոր Սերունդ», «Յնչակ», «Սուրիական Մամուլ», «Երիտասարդ Յայաստան», «Գիտական Շարժում», «Պալքանեան Մամուլ», «Արձագանգ Փարիզի», «Նոր Երկիր», «Արարատ», «Յայաստանի Կոչնակ» թերթերուն եւ հանդէսներուն, ինչպէս նաեւ «Կիլիկեան Տարեցոյց», «Սուրիահայ Տարեցոյց», «Յնչակեան Տարեգիրք», «Ուսանողաց Տարեգիրք», «Ամէնուն Նոր Տարեցոյցը» տարեգիրքերուն: Կ'օգտագործէ Դրանիկ, Ներսէս, Չգայնիկ, Ատապազարցի, Ա. եւ այլ ծածկանուններ<sup>[3]</sup>:

1934-ին կը մասնակցի ՍԴՅԿ 9-րդ Յամագումարին, Մարտլլ, ուր կը ներկայացնէ Կուսակցութեան յառաջիկայ քաղաքական գործունեութեան յատկագիծը (platform):

1935-ին Փարիզի մէջ լոյս կը տեսնէ Ա. ԿԷՆՃԵԱՆԻ «Լեօ եւ Յնչակեան Կուսակցութիւնը» գիրքը: Այս աշխատութեան մէջ, Ա. ԿԷՆՃԵԱՆ մարքսիստական դիտանկիւնէն կը քննադատէ Լեօ-ի «Թրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը» գիրքին մէջ տեղ

գտած պատմագիտական հայեացքները, յատկապէս ինչ կը վերաբերի հայ ազգային-ազատագրական պայքարի գնահատման հարցին: Ուշագրաւ պարագան այն է, որ Լեօ-ի հակագիտական հայեացքները բացի Ա. ԿԷՆՃԵԱՆԻ տոյն աշխատութենէն, սփիւռքահայ պատմագրութեան կողմէ լուրջ հակահարուածի չեն արժանանար, երբ անդին, Լեօ-ի հեղինակութենէն շատ անելի պակաս հեղինակութիւններու գրական թէ պատմագրական աշխատութիւնները կ'արժանանան շատ անելի լայն արձագանգի:

1936-ին, դարձեալ Փարիզի մէջ, լոյս կը տեսնէ Ա. ԿԷՆՃԵԱՆԻ «Ազգային Յարց եւ Տաճկահայաստան» գիրքը:

Մինչեւ ծերութիւն, Ա. ԿԷՆՃԵԱՆ իր մասնակցութիւնը կը բերէ հայ ազգային-հասարակական կեանքին ու կը շարունակէ աշխատակցիլ հայ մամուլին:

Կը մահանայ 1957-ին, Փարիզ:

Ա. ԿԷՆՃԵԱՆԻ նամակագրական եւ հրապարակագրական հարուստ արխիւը կը գտնուի Յայաստանի Ազգային Արխիւին մէջ:

## ԾԱՆՕԹՎՈՒԹԻՒՆ

[1] «Արարատ», 1954, Մարտ 9. Ա. ԿԷՆՃԵԱՆ, «Յուշեր եւ Նիշեր»:

[2] Նոյն:

[3] Ա. ԿԷՆՃԵԱՆ, «Յալածականի Յուշեր 1914-1918», Պէյրութ, 1964, էջ 39-40:

[4] «Արարատ», 1953, Մարտ 11. Ա. ԿԷՆՃԵԱՆ «Յուշեր եւ Նիշեր»:

[5] «Նոր Աշխարհ», 1912, Ապրիլ 5/18:

[6] «Յալածականի Յուշեր», էջ 37 եւ 41:

[7] Նոյն, էջ 42:

[8] Նոյն, էջ 59-60:

[9] Նոյն, էջ 111:

[10] Նոյն, էջ 117:

[11] Նոյն, էջ 149:

[12] Նոյն, էջ 178:

[13] «Երիտասարդ Յայաստան», 1919, Ապրիլ 23:

[14] Ա. ԿԷՆՃԵԱՆ, «Սոց. Դեմ. Յնչակեան Կուսակցութիւնը եւ Կիլիկեան Ինքնավարութեան Աքթը», Պէյրութ, 1958, էջ 98:

[15] Նոյն, էջ 110:

[16] Նոյն, էջ 219:

[17] Նոյն, էջ 275:

[18] Միհրան Աղազարեան, «Սիսի Վերջին Աթոռակալը եւ Իր Սեղապարտ Գաւառականը», Պէյրութ, 1926:

[19] Արսէն Կիւրոր, «Պատմութիւն ՍԴ Յնչակեան Կուսակցութեան», Բ. հտ., Պէյրութ, 1963, էջ 605-608:

# ՍԱՐԳԻՍ ԱՐՄԱՂԱՆԵԱՆ (ՄԸՌԸԶ)

Կեանք մը ամբողջ պայքարի փոթորիկներուն մէջ անցուցած հերոսներու շարքին կը պատկանի Սարգիս Արմաղանեան:

Ս.Արմաղանեան ծնած է 1890-ին, Սեբաստիոյ Իսանլու գիւղը:

Պատանի տարիքին կ'անդամակցի Զնչակեան Կուսակցութեան եւ 1906-ին, տեռորի կ'ենթարկէ մատնիչ Քիւրճեանը. կ'ապաստանի Բրզնիկ: Ահաբեկչութիւնը կը բացայայտուի: Ս.Արմաղանեան կռուի կը բռնուի գինք ձեռքակալելու եկող ոստիկաններուն հետ ու կ'ապաստանի Մարգուան: Կ'ուրջ երկու տարի կը մնայ փախստական:

Օսմ. Սահմանադրութենէ ետք, կը զբաղի ծխախոտի մաքսանենցութեամբ: Այդ ճամբուն վրայ, կռուի կը բռնուի ռեժիի (ծխախոտավաճառքի) ոստիկանախումբի մը հետ, ուր կը սպաննուին քանի մը ոստիկաններ: Սա, իր չարաշահութիւններով ծանօթ այն ոստիկանախումբն էր, որուն մասին Փարամազ 1898 Օգոստոսին Վանի դատարանին առջեւ արտասանած իր յայտնի ճառին մէջ կ'ըսէ. «Ծխախոտի ռեժի, նրա պաշտօնեաներ: Սա եւս Զամիտիյի նման մի կազմակերպութիւն է, աւագանների մի խումբ է, որ առանց միջոցների խտրութեան ամեն տեսակ գողութիւն, լրբութիւն կատարում է, ազգաբնակչութեան



վրայ մեծ բեռ դառնալով: Սրա լրբութիւնից գերծ չի մնում եւ իգական սեռի պատիւը, սա է, որ օրը կէս օրին, հրապարակի վրայ ամօթխած կ'ենց, սիրուն աղջկայ ներքնաշորերն է խուզարկում եւ ծխախոտ գտնելու պատրուակով՝ իր լիրբ գազանական կիրքերին յազուրդ տալիս: Գոչի եւ Զամիտիյէ, - տաճկական պետութեան 19-րդ դարու ամենափառաւոր գիտն է»<sup>1)</sup>:

Ս.Արմաղանեան կը վերադառնայ փախստական կեանքին ու 1909-ին կը յաջողի ապաստանիլ Չեռնոգորիա (Ղարատա): Զոն եւս, կռիւի մը ընթացքին կը սպաննէ չաւուշ մը ու կ'ապաստանի Մակեդոնիա: Կը միանայ ապստամբներուն: Ռատովիտի մէջ կը մասնակցի թրքական բանակի սպայական զօրանցի մը ականահարման, որուն հետեւանքով կը սպաննուին շուրջ 30 զինուորականներ: Մաս կը կազմէ Իսթափէնի եւ Չաքըր Եօրկիի հայդուկային խումբերուն, որոնք լուրջ հարուածներ կը հասցնէին թրքական բանակի թիկունքին:

1912, Պալքանեան Ա. Պատերազմին, կը կամաւորագրուի պուլկարական բանակին ու կը միանայ հայկական կամաւորական գունդին: Անդրանիկի հրամանատարութեան տակ կը ստանձնէ «Արարատ» խումբին խմբապետութիւնը: Կիւմիւլճիկայի մօտ, Մագաս Թեփէի վրայ մղուած մարտերուն իր ցուցաբերած քաջութեան համար կը պարգեւատրուի զինուորական շքանշանով:

Զամաշխարհային Ա. Պատերազմին կը փութայ կովկասեան ռազմաճակատ եւ կը միանայ կամաւորական 6-րդ գունդին: 1915 Փետրուարին, գունդի կազմակերպիչներէն Տիգրան Գազանճեան, ՍԴԶ Պաքուի վարչութեան կը գրէ. «Ռումանիայից եկան մեզ հասան 43 կամաւոր ընկերներ, իրենց իբրեւ խմբապետ ունենալով մեր զինուորական ընկեր պուլկարահայ Սարգիսը, որը Պալքանեան Պատերազմում իր ցոյց [տուած] քաջագործութիւնների համար Գեորգեւսկի աստիճանի խաչ ունի ստացած, որ կրում է իւր կրծքին եւ որը խիստ լաւ տպաւորութիւն թողեց մեր հրամանատար Ջանփոլատեանի վրայ»<sup>2)</sup>: Շատ չանցած, Զայկ Բժշկեան իր հերթին, Պաքու՝ Մելքոնի գրած իր նամակին մէջ կը տեղեկագրէ, թէ Ս. Արմաղանեան նշանակուած է 6-րդ գունդի Բ. հարիւրակի հարիւրապետ<sup>3)</sup>:

Ս.Արմաղանեան կը մասնակցի 6-րդ գունդի մղած գրեթէ բոլոր կռիւներուն, որոնք առ հասարակ կ'աւարտին յաղթանակներով<sup>4)</sup>:

Ռուսաստանի Փետրուարեան յեղափոխութենէն ետք, երբ ռազմաճակատը կը սկսի քայքայուիլ, արեւմտահայ խումբ մը հայդուկապետերու կողքին Ս.Արմաղանեան եւս ը լծուի թրքական գերակայ ուժերուն յառաջխաղացքը կասեցնելու պայքարին:

Ս.Արմաղանեանի կովկասեան ռազմաճակատի մարտական գործունեութեան մասին կան կարգ մը ականատեսներու վկայութիւններ, որոնց համադրումով կարելի է պատկերացում կազմել անոր խաղցած դերին մասին:

Միսաց Թորլաքեան, որ նաեւ շրջան մը կռուած է Ս.Արմաղանեանի յիսնեակին մէջ, իր յուշերուն մէջ կը գրէ. «1917 Յոկտեմբեր 17-ին, Ազ Տաղէն դէպի Տրապիզոն անցնիլ կ'ուզէ Ալիս խումբը: Երկար չարչարուելէ եւ զոհեր տալէ ետք, գիշեր մը փշաթելով հիւսուած թուրք սահմանապահ զինուորներու թակարդը կ'իյնան: Կռիւը ճակատագրական կ'ըլլայ: Չոհեր տալով կը նահանջեն եւ ուրիշ վայրէ մը կը յաջողին ոռուտրուն կողմը անցնիլ: Իբրեւ թուրք գերիներ կը բանտարկուին եւ շղթայակապ կ'ուղարկուին Տրապիզոն, ապա Պաթում: Այստեղ, շնորհիւ զօրավար Անդրանիկի եւ ազգային կուսակցութիւններու միջամտութիւններուն, ազատ կ'արձակուին եւ Սարիղամիշէն Սարգիս Արմաղանեանի ձիաւոր խումբին միանալով կ'անցնին Էրզրում, դէպի կռուի ճակատ»<sup>97</sup>:

Իրօք, ամիս մը անց, Ս.Արմաղանեան կ'երեւայ Բաբերդի ռազմաճակատին վրայ: Այս մասին կ'անդրադառնայ ճակատի արեւմտահայ հայդուկապետերէն Սեպուհ (Արշակ Ներսեսեան), որ իր յուշերուն մէջ կը գրէ, թէ իր Բաբերդ գտնուած միջոցին, զինուորական հեռախօսակապով իր հետ կը կապուի Թիֆլիսէն դէռ Նոր Էրզրում հասած Ս.Վահագնը, որ թարմ լուրեր հաղորդելու կողքին, նաեւ կ'ըսէ. «Ոչ մի մարդ. Թիֆլիսում այնչափ խօսեցայ, աղաչեցի, պաղատեցայ, որ Մուրատին (Սերաստացի - Ե.Ճ.) օգնական ուժեր ուղարկեն, բայց ամէն ինչ անօգուտ եղաւ: Ստիպուեցայ մենակ գալ եւ պիտի մեկնիմ Երզնկա (Մուրատի օգնութեան - Ե.Ճ.): Երբ Սարիղամիշէն կ'անցնէի, պատահեցայ Սերոբին եւ Վախթանգին, որոնք 50-ի չափ ձիաւորներ պատրաստած էին եւ Սարգիս Արմաղանեանի հետ շուտով կը մեկնին Բաբերդ: Իսկ Անդրանիկն ալ շուտով կը մեկնի Էրզրում»<sup>98</sup>: Անդրանիկ Էրզրում կը հասնի 1918 Փետրուար 17-ին: Արեւմտահայ կռուողներէն շատեր կը փութան Էրզրում, միանալու համար Անդրանիկի ղեկավարած Զայաստանի Երկրապահ Չօրամասին: Ս.Արմաղանեան եւս, 60 ձիաւորներով, Սարիղամիշէն կու գայ Էրզրում եւ Մակեդոնի խումբին հետ կը մեկնի ռազմաճակատ: Մաքրագործելէ ետք Էրզրումի շրջակայ թրքական զիւղերուն մէջ գտնուող շարք մը վտանգաւոր կէտեր, կ'անցնի Ումուտում, եւ Թոսիկ թրքական զիւղին մօտ կը միանայ Սեպուհի եւ Ս.Մուրատի ուժերուն: Թոսիկի կռիւը կը տեւէ 3 օր. թշնամին կը պարտուի եւ կը նահանջէ<sup>99</sup>:

Որպէս կամաւոր Էրզրումի ճակատը գտնուող ծանօթ կրթական

մշակ Բենիամին ժամկոչեան, Ս.Արմաղանեանի մասին կը վկայէ. «Բայց Անդրանիկ Կարին հասաւ, եւ իր ետեւէն եկան Սարգիս Արմաղանեան եւ ուրթուն ձիաւորներ: Ասոնք գիշեր մը հանգիստ ըրին, բայց յաջորդ առտու Անդրանիկ առաւ իր ձիաւորները ետեւը ու փոթորիկի պէս շրջեցաւ Կարնոյ փողոցները: Ութսուն ձիաւոր ոչինչ են թուրքի վրայ. սակայն ութսուն ձիաւոր ամէն ինչ են, երբ մէկ մէկու ետեւէն՝ փողոցներու մէջէն կը սուրան»<sup>100</sup>: Բ.ժամկոչեան կը շարունակէ. «Անդրանիկ յոյս չուներ Դաշնակցութենէն եւ ռուսահայերէն: Ուստի, աջը դրկեց իր ձիաւորները՝ Սարգիս Արմաղանեանի հրամանատարութեամբ: Իսկ կեդրոնը՝ ինք անձամբ գնաց»<sup>101</sup>: Բ.ժամկոչեան անդրադառնալով Ըլզըճայի յայտնի կռիւին, կը գրէ. «Այդ օրուան կռիւներէն հետեւեալները իմացած եմ: Պ. Սարգիս Արմաղանեան, որ բանակին աջ կողմը՝ Առջեկ գիւղը կը գտնուէր, թրքական բանակին կուրծք տալու ատեն նշուակ կը դառնայ Ըլզըճայէն արձակուած գնդակներու, եւ ճգնաժամային վայրկեաններ կ'անցընէ: Կարին գտնուողները կը պատմէին, թէ Անդրանիկ կը հրահանգէ Մուրատին՝ օգնութիւն հասցնել Արմաղանեանին, բայց Մուրատ գանազան պատրուակներով չի փութար: Անդրանիկ կ'ըսէ. «Արմաղանեանը կը ճանչնամ: Ան պիտի գայ, բայց դուն վատ գործ մը ըրիր»<sup>102</sup>: Ըլզըճայի կռիւին անդրադարձող մէկ այլ պատմագրող կը գրէ. «Արմաղանեան, որ Ըլզըճայի ճակատը կը պաշտպանէր, իր դիմացի ուժը տկար գտնելով յառաջացաւ եւ 4 թուրք զիւղեր ես գրաւեց, որոնք նահանջած էին իր գրոհին առաջ, հակառակ ոտքէն վիրաւորուած ըլլալուն, իր զինուորներուն եռանդը չփճացնելու համար մնաց ճակատի վրայ եւ խրախուսեց գանոնք: Երրորդ օրն էր, հակառակ իր յաջողութեանց, Կարնոյ թղանթները փոխանակ թշնամոյն վրայ արձակուելու, քանի մը հատ ոռմբ արձակեցին իր զինուորներուն վրայ եւ գարնուեցան 3-4 հոգի: Արմաղանեան առանց յուսահատելու քանի մը ձիաւոր դրկեց Կարին, որոնք թղանթ թօթի դիրքը բարձրացան եւ ստուգեցին, որ ոչ ոք կայ: Թղանթթի բանալին իսկ կորսնցուցած եւ փախած են դաւաղիւները»<sup>103</sup>:

Էրզրումը պաշտպանելու եւ թրքական յառաջխաղացքը հոն կասեցնելու զօր. Անդրանիկի բոլոր ճիգերը կ'անցնին ապարդիւն: Էրզրում կ'իյնայ՝ յառաջ բերելով կռուող ուժերու եւ ժողովուրդի քառսային, անկազմակերպ նահանջ մը: Այդ պահուն, Ս.Արմաղանեան կը գտնուէր շրջակայ գիւղ մը՝ Ժողովուրդին գաղթը կազմակերպելու համար: «Գտնուեցան գիւղեր, որոնք դիւցազնաբար ճեղքեցին թուրք շղթան ու հասան կայարան: Այս վերջիններէն էր Սարգիս Արմաղանեան, որ առանց Կարինէն լուր ունենալու, կրցած էր իր քաջերուն հետ հասնիլ հեռացողներուն, ուրախացնելով Անդ-

րանիկը: Չանոնք տեսնելով, Անդրանիկ հրճուանքով ու հանգիստ սրտով կը հեռանայ»<sup>172</sup>:

Ս.Արմաղանեան իր կռուողներով, զօր. Անդրանիկին հետ կը բարձրանայ Լոռիի բարձունքները: Այս միացումը պատահական չէր, ոչ ալ իրավիճակին պարտադրանքը: Դեռ շատ առաջ, երբ Անդրանիկ Էրզրումի պաշտպանութեան համար Հայաստանի Երկրպահի Չորամասը կը կազմէր եւ այդ ճամբուն վրայ բազմապիսի արհեստական խոչընդոտներ կը դիմագրաւէր, Կարս գտնուող Ս. Արմաղանեան նամակով մը իր հաւատարմութիւնը կը յայտնէ Չորավարին, գրելով. «Լորին Մեծութիւն, Ներկայ դրութեամբ յայտնում եմ Ձերոյ գերագանցութեան, որ այստեղ՝ Ղարսում Ձեր տիպիզիի անուան շուրջ հաւաքուած պատրաստ զինուորներ երկու հարիւր յիսուն (250) ձիաւոր եւ չորս հարիւր (400) հետեակ կան: Բացի սրանից կան պատրաստի Մշեցի Մուրատի չորս հարիւր (400) հետեակ զինուորներ, որ պատկանում է Տեյի Ղազարին, Նոյնպէս տրամադիր են մեզ միանալու, թէեւ նրանց մի քանի անգամ սպառնացել են զինաթափ անել, բայց նրանց հետեւեալ պատասխանը տուած են. «Մենք գէներալ Անդրանիկից բացի ոչ ոքի չենք ուզում ճանաչել»: Կան նաեւ բաւական թուով տաճկահայ զինուորներ, որոնք Նոյնպէս պիտի ընդունուին Ձեր տիպիզիի մէջ, համաձայն Ձեր ինձ արած կարգադրութեան, որով լիայոյս եմ թէ շուտով հնարաւոր պիտի լինի լրացնել պէտք եղած թիւը»<sup>173</sup>:

Անդրանիկին միանալէն ետք, Ս.Արմաղանեան կը դառնայ անոր վստահելի զօրականներէն մէկը: Անդրանիկի սեբաստացի կամաւորներէն Յարութիւն Ճօպուլեան կը գրէ. «Անդրանիկ, սեբաստացի կամաւորներուս հանդէպ մեծ համարում ունէր, որպէս հաւատարիմ եւ նուիրուած հայրենակիցների: Ինձ հետ էին մօտաւորապէս հարիւր սեբաստացի կամաւորներ, որոնք այժմ յիշում եմ Փեղիւսեան Յարութիւնը (Յարութեան կոչուած), Կտիկեան Միրիճանը, Կրտտտեան Գեորգը, Պաճագեան Երուանդը, Պէկմէգեան Յակոբը, Օտապաշեան Տիգրանը, Վզվզեց Մեսրոպը, Արմաղանեան Սարգիսը (Մոզզ), որ Անդրանիկի օգնականն էր: Անոր ղեկավարութեամբ սեբաստացի շուրջ հարիւր կամաւորներ Անդրանիկի վստահելի թիկնապահներն էին: Կռուի ամենավտանգաւոր կացութիւնների ժամանակ Անդրանիկ շրջապատուած էր իր այդ վստահելի հարիւրակով: Այսպէս, օրինակ, 1918 թ. Ջալալօղլիի ճակատամարտի ժամանակ, թրքական զօրագնդի մը դէմ, որ Ալեքսանդրապոլը գրաւելուց յետոյ, մեզ կը հետապնդէր, եւ որը վերջ գտաւ մեր ջախջախիչ յարթանակով»<sup>174</sup>:

Անդրանիկ կը յղանայ Լախիջեանի վրայով Պարսկաստան եր-

թալու եւ անգլիական բանակին միանալու ծրագիրը: Ս.Արմաղանեան տարակարծիք կ'ըլլայ եւ կը նախընտրէ Պաքու՝ Ստեփան Շահումեանի օգնութեան հասնելու գաղափարը: Իրարմէ կը բաժնուին:

Ս.Արմաղանեան կը մեկնի Կ.Պոլիս, ուր իր կարեւոր մասնակցութիւնը կը բերէ Մեծ Եղեռնի ընթացքին մատուութիւններ կատարած հայանուններու վերացման գործողութիւններուն»<sup>175</sup>: Ապա կը հաստատուի Ատանա:

1919 Յոկտեմբերէն սկսեալ, Ֆրանսայի հոգատար իշխանութեան ենթակայ հայաշատ քաղաքներուն վիճակը երթալով կը վատթարանայ չէթեական կամ միլի (ազգայնական) շարժման (Մուսթաֆա Զեմալի կողմակիցներ), յարձակումներուն պատճառով:

1920 Փետրուարէն, Հաճըն կը պաշարուի եւ կը նախապատրաստուի ինքնապաշտպանութեան: Հաճնոյ օգնութեան հասնելու համար Ատանայի մէջ տեղի կ'ունենայ կամաւորագրութիւն: «Հաճընէն ընկ. Սարգիս Ճէպէճեան նամակով ու հեռագրով խնդրած ու պահանջած էր, որ անպայման օգնական ուժերու հրամանատար կարգեն ընկ. Ս.Արմաղանեանը»<sup>176</sup>: Հաճնոյ ինքնապաշտպանութեան հրամանատար Ս.Ճէպէճեան ծանօթ էր Ս.Արմաղանեանի զինուորական կարողութիւններուն տակաւին կովկասեան ռազմաճակատէն: Նոյն փափաքը կը յայտնէ նաեւ Հաճնոյ քաղաքապետ Կարապետ Չալեան, որ Ս.Արմաղանեանին անձնապէս կը հեռագրէ. «Ամսիջապէս մեծ ուժով մեկնեցէք: Պ.Պրեմոնիս (Կիլիկիոյ Ֆրանսայի զինուորական կառավարիչ - Ե.Ճ.) հեռագրեցի մեծ քանակութեամբ ռազմանիւթ պիտի տայ: Միասին բերէք: Ուշանալը դաւանանութիւն է: Միտն լուր տուէք, ձեր կամբան մենք կ'ապահովենք»<sup>177</sup>:

Մարտ 16-ին, Ազգ. Առաջնորդարանի մէջ տեղի ունեցած համագալայի ժողովի մը ընթացքին, որուն կը մասնակցին Առաջնորդ Աւլանեան վրդ., Ազգ. Պատուիրակութեան լիազօր Միրիան Տամատեան, Ազգ. Միութեան ու Զաղաքական ժողովի դիւանները, միջկուսակցական մարմինը ու ՍՂՀԿ, ՀՅԴ եւ ՀՍՈՎ կուսակցութիւններէն ներկայացուցներ, կը քննարկուի արշաւախումբի հրամանատարի նշանակման հարցը: «Թեր ու դէմ կարծիքներ չետոյ միաձայնութեամբ կ'ընտրուի ընկ. Սարգիս Արմաղանեանը եւ պատուիրակութիւն մը կը ղրկուի հրամանատարը համագումարին հրաւիրելու: ... Արմաղանեանին հրամանատար ընտրուելու լուրը արեւոյսի մը նման տարածուած էր ամէն կողմ եւ շատեր Հաճընի փրկութիւնը ապահովուած կը նկատէին: Միայն ընդհանուր հրամանատարն էր, որ կասկածով կը նայէր գործին»<sup>178</sup>:

Ապրիլին, ՍՂ Հնչակեան Կուսակցութեան Կիլիկիոյ ղեկավարութիւնը կը գումարէ երկօրեայ ժողովներ, որոնց ընթացքին իր տարբեր

երեսներով կը քննարկէ սպառնացող կացութիւնը: Անուած շարք մը որոշումներու կարգին, «ընկ. Սարգիս Արմաղանեանին կը յանձնուի զինուորական կազմակերպչական աշխատանքը»<sup>191</sup>: Ս. Արմաղանեան, իր զինուորական փորձէն ելած, լաւապէս կ'ըմբռնէ թէ իր պայքարը ժամանակին դէմ էր: Միւս կողմէ սակայն, խանդավառութեամբ սկսած կամաւորագրութիւնը կը սկսի ձգձգուիլ: Ստիպուած կ'ըլլայ ճիհանի վրայով միակը անցնիլ Սիս: Շուտով Սիս կը հասնի կամաւորական խումբեր Կարապետ Լաչինեանի, Սարգիս Թուրսարգիսեանի, Կարապետ Կեօքտերելեանի, Կարդիվառ Ծերեճեանի, Ճիմ Չանգալեանի եւ այլոց գլխաւորութեամբ: Ս. Արմաղանեան կը սկսի կամաւորներու մարզումներուն: «Զիաւոր խումբը, ինքը՝ Արմաղանեան անձամբ կը մարզէր: Անզսպելի ձիերը քսան վայրկեանի մէջ կը զսպէր, կը վարժեցնէր եւ տիրոջը կը յանձնէր»<sup>192</sup>: Այս միջոցին, Սիսի շուրջ հաւաքուած միլիճիները իրենց օղակը կը սկսին սեղմել եւ գնդակոծել Սիսը: Գաճնոյ օգնութեան պատրաստուող կամաւորները կը ստիպուին յաճախակի պատժիչ գործողութիւններ կատարել անոնց դէմ: «Արմաղանեան քանի մը անգամ անզուսպ խոյանքներով յարձակեցաւ անոնց վրայ, լեղապատառ փախուստի մատենելով գանոնք եւ գերիներ բռնելով ֆրանսացիներուն յանձնեց»<sup>193</sup>: Այսօրինակ կոիւներու շարքին նշանաւորներէն կ'ըլլան Սիմոն Զեօփրի-ի եւ Թաւշան-Թեփետի կոիւները: Այս կոիւներուն մասնակից Ասատուր Սաչեան կը յուշագրէ. «Բոլորին հայեացքները ուղղուեցան Արմաղանեանին: Իրապէս, ան յաջողեցաւ այս գործին մէջն ալ: Այս անգամ այլ ռազմավարութեամբ ձիաւորները ցրուեց բլուրին ստորոտը եւ ինքը ձիուն վրայ հեծած արշաւեց դէպի յառաջ, երբ որոշ տեղ մը հասաւ, հրամայեց ձիաւորներուն, որ գրոհ տան: Գրամանը կայծակնային արագութեամբ կատարուեցաւ: Թուրքերը, շուարած այս յանդգնալից քաջութենէն, փախուստ գտաւ ուրիշ բանի վրայ չմտածեցին»<sup>194</sup>:

Կամաւորական խումբը դէպի Գաճնոյ ճամբայ չէլած, ֆրանսական իշխանութեան կողմէ կը զինաթափուի եւ Ս. Արմաղանեան որպէս պոլշեիկ ամբաստանուելով կը ձերբակալուի ու կը բանտարկուի: Յունիսին Սիսը կը պարպուի եւ ժողովուրդը դժուարին պայմաններու մէջ կը գաղթէ Ատանա: Ատանա կը տեղափոխուի նաեւ Ս. Արմաղանեան:

Այս միջոցին Գաճնի վիճակը կը դառնայ օրհասական եւ արտաքին կապը անոր հետ ամբողջապէս կը կտրուի: Կամաւորական զունդով մը Գաճնի պաշարման օղակը քանդելն ու ժողովուրդին նահանջը դէպի Ատանա կազմակերպելը կը դառնայ անյետաձգելի անհրաժեշտութիւն: Վերստին կը ձեռնարկուի կամաւորագրու-

թեան ու դարձեալ որպէս հրամանատար ակնարկները կը կեդրոնանան Ս. Արմաղանեանի վրայ: Ժամանակաշրջանի աշխուժ մասնակիցներէն Բ. ժամկոչեան կը գրէ. «Դաշնակցականները կը ներկայացնէին սերժանտ Գերոզ մը, ռամկավար-վերակազմեալները՝ Ճիմ Չանգալեան, որ ֆրանսական բանակին մէջ էր եւ անոր արտօնուիլը խնդրական էր, քանի որ ֆրանսական զինուորակաւորութիւնը ուղղակի չէր մասնակցէր, հնչակեաններուն կողմէ թեկնածու էր Սարգիս Արմաղանեան: Ամէն հաշիւ մէկ կողմ ձգելով, ամենէն յարմարն էր Սարգիսը, որ արդէն զօր. Անդրանիկին քով ցոյց տուած էր իր արժէքը: Բայց կուսակցամոլութիւնը չէր հանդուրժէր»<sup>195</sup>: Ս. Արմաղանեանի հրամանատար նշանակուիլը նպատակայարմար էր նաեւ մէկ այլ դիտանկիւնէ. «Յոս, անցողակի պէտք է լիշէլ, թէ այս արշաւախումբին ջախջախիչ մեծամասնութիւնը կը բաղկանար հնչակեաններ: Անկէ վերջ 30-ի չափ ռամկավարներ էւ անոնցմէ ալ նուազ թիւով դաշնակցականներէ, մինչ ընդհանուր թիւն էր 500 հոգի»<sup>196</sup>:

Ս. Արմաղանեան կը տատամսի այս ծանր պարտաւորութիւնը ստանձնել: Անոր այս տատամսը պարտականութենէն խուսափելու փորձ չէր, այլ կը բխէր առարկայական լուրջ պատճառներէ. 1) Սիսը գրաւուած էր միլիական ուժերուն կողմէ: Սիսը, Ատանա-Գաճնոյ ճամբուն վրայ կարելու հանգրուան մըն էր: Չայն պէտք էր վերագրաւել կամ շրջանցել, ինչ որ մեծապէս կը բարդացնէր արշաւախումբին գործը, 2) Կամաւորներուն մեծ մասը խանդավառ երիտասարդներ էին, որոնք սակայն չունէին զինուորական փորձ, իսկ արշաւախումբին առջեւ դրուած էր զինուորայէտ բարդ խնդիր, 3) Ինչքանով կարելի էր վստահիլ ֆրանսական իշխանութիւններուն, 4) Զայերու կողմէ իշխանութիւններուն մօտ պոլշեիկ ամբաստանուիլը եւ Ա. արշաւախումբին ձախողութիւնը Ս. Արմաղանեանի մօտ ստեղծած էր հոգեկան խորունկ կսկիծ: Այս բոլորով հանդերձ, ան կը յօժարի ստանձնել պատասխանատու եւ դժուարին այդ պարտականութիւնը: Կամաւորները կը հաւաքուին Ախարճայի մէջ ու կը սկսին իրենց մարզումներուն:

Այդ շրջանին, թուրք չէթները կը սկսին յարձակումներ գործել նաեւ Ատանայի վրայ: Սակայն անոնք, «Շէքիր փաշայի ճակատին վրայ լաւ դաս մը առած էին Սարգիս Արմաղանեանի հրամանատարութեան տակ գործող հայ կամաւորներէն: Թուրքեր այդ կոիւին 400 մետալ տալով ալ չէին համարձակած Ատանայի մօտենալ»<sup>197</sup>:

Միւս կողմէ սակայն, այդ շրջանի Կիլիկիոյ ԳՅԴ-ի գործիչներէն Ասատուր Չալեան, առանց վերոնշեալ առարկայական պատճառներուն անդրադառնալու, Գաճնոյ մեկնող կամաւորներուն հրամա-

Նատարութիւնը ստանձնելու կապակցութեամբ Ս.Արմաղանեանի ունեցած երկմտութիւնը կը ներկայացնէ որպէս կամակորութիւն<sup>[26]</sup>:

Եւ իրականութիւնն ալ կու գայ ցոյց տալու, որ Ս.Արմաղանեան իրաւացի էր իր մտահոգութիւններուն մէջ: 22 Սեպտեմբերին, Ախարճայի հայ կամաւորներուն զօրակայանը կը պաշարուի ֆրանսական բանակին կողմէ, կը ձերբակալուին հոն գտնուող շուրջ 200 կամաւորներ, կը գրաւուի մեծ քանակութեամբ զէնք եւ զինամթերք: Ձերբակալուածները կը տեղափոխուին Մերսիսի ու դաժան պայմաններու տակ նաւով կ'աքսորուին Կ.Պոլիս, Մարոք կամ Ալճերիա: Հալածանք կը սկսի Կիլիկիոյ հայ քաղաքական եւ զինուորական ղեկավարութեան (յատկապէս հնչակեան) հանդէպ: Ս.Արմաղանեան որոշ շրջան մը կը մտայ փախստական: «26 Սեպտեմբեր. - Դեռ ընկերներ Կ.ժամկոչեան (Վահան) եւ Ս. Արմաղանեան պահուած են: Հակառակորդ կուսակցութիւններ՝ ընտանիքով կը հետապնդեն: Հազարապետեանին գրագիրը Նոյն գործին ետեւէ է, բայց Հնչակեան Ուս. Միութեան անդամները եւ Ամառնային Դպրոցի սաները աջալրջութեամբ կը հսկեն»<sup>[27]</sup>: Այս բոլորին զուգահեռ, Հոկտեմբերին, Հաճըն կտրուած արտաքին որբէ օգնութենէ, կ'իյնայ:

Ի վերջոյ կը ձերբակալուի նաեւ Ս.Արմաղանեան ու Մերսիսիէն նաւով Կիլիկիայէն դուրս կ'աքսորուի: Իզմիրի մէջ, որ տակաւին կը գտնուէր յունական բանակին գրաման տակ, ան փախուստ կու տայ նաեւ: Միլիական շարժումը կը սպառնայ նաեւ Իզմիրին ու շրջակայքին: Հոն մէկտեղուած հնչակեան ղեկավարները, Կիլիկիոյ իրենց թարմ փորձէն ելած, լաւապէս կ'ըմբռնեն, թէ դաշնակիցները Իզմիրը պիտի չպաշտպանեն: Ուստի, անոնք համաձայն կ'ըլլան կազմակերպուած նահանջի գաղափարին: Այս տեսակետին շուրջ հնչակեան (յատկապէս Բ.Սիւնիք) եւ յոյն ղեկավարները չեն համաձայնիր: Դժբախտաբար, կարճ ժամանակ անց, պատմութիւնը կու գայ փաստելու հնչակեաններու տեսակետին իրաւացիութիւնը, զոր կը պաշտպանէր նաեւ Ս.Արմաղանեան: Դէպքերու ականատեսներէն Միհաս ճիհանեան կը վկայէ. «Պէտք է յիշեմ Սարգիս Արմաղանեանը, որ Նոյն ճգնաժամային օրերուն կը գտնուէր Գորգ-Աղաճի մէջ (Իզմիրի հայաշատ շրջակայքերէն - Ե.Ճ.), եւ որ Արամ Կայծակի փախստեան Նախորդ երեկոյին հայոց եկեղեցիի բակին մէջ կայացած խորհրդակցութեան ընթացքին առաջարկեց. - Չինե՛լ բոլոր հայերը եւ եթէ կարելի ըլլայ բանակցիլ նաեւ յոյներուն հետ, հայ եւ յոյն քրիստոնէայ բնակչութիւնը պարպելով քաղաքէն, ապահովօրէն առաջնորդել մինչեւ Իզմիր: Այս խոհեմ ծրագիրը, որ կու գար փորձառու հայ սպայէ մը, ընդունելութիւն չգտաւ, որովհետեւ պարզապէս հնչակեան փոքրամասնութեան մը կողմէ ա-

ռաջարկուած էր»<sup>[28]</sup>:

Ս.Արմաղանեան կ'անցնի Յունաստան, ապա Սերպիա ու վերջնականապէս կը հաստատուի Մարսել: Կը կազմէ ընտանիք եւ կ'ունենայ չորս զաւակներ: Կ'անցընէ թշուառ ու չարքաշ կեանք մը, «որովհետեւ նա երբեք չէր զիջէր որբէ կազմակերպութենէ կամ անհատ օժանդակութիւն հայցելու»<sup>[29]</sup>: Սէնթ Անթուան արուարձանին մէջ «կ'ապրէր ան իր անչափահաս զաւակներով պարզ խրճիթի մը, աւելի ճիշդը փայտէ պարագի մը մէջ կը բնակէր, իր ընտանիքին օրապահիկը ճարելու համար, չնայած իր յառաջացած տարիքին, նահանգապետի բեռնակրութիւն կ'ընէր, որպէս սեւ բանուոր: Խեղճութիւն ծայրագոյն աստիճանի մէջ, կեանքը կը քաշքշէր, ո՛չ ոքի վնաս պատճառած էր...»<sup>[30]</sup>:

Համաշխարհային Բ. Պատերազմի աւարտին, երբ Ֆրանսա կ'ազատագրուի ֆաշիստական լուծէն, հրապարակ կու գան համայնավարներ, որոնցմէ «ոչ մէկը հրապարակի վրայ կային, յանկարծ փախչող գերմանացիներուն ետեւէն քանի մը ատրճանակի հարուած տուողները խժալուր աղմուկով մը ասպարէզ իջան, սունկի նման շատցան աժան հերոսները, ապա սովալլուկ գայլերու պէս թրքաբարոյ կողոպուտներ սարքեցին: Անտոյի ձերբակալութիւններու կարգին եղբայրասպանութիւններ եւ կատարեցին, արատաւորները դիմադրական ճակատի պատերազմի սկիզբէն մինչեւ վերջ տարած մաքուր եւ նուիրական աշխատանքները»<sup>[31]</sup>: Ս.Արմաղանեան, իրեն յատուկ խիզախութեամբ, հրապարակայնօրէն կը քննադատէ այս երեւոյթները: Հաւանաբար «չափը կ'անցընէ»: Ուստի, վերոյիշեալ վոհմակէն շուրջ տասը հոգի, ատրճանակներով զինուած, բնականաբար «առանց Ֆրանսական Կեդրոնական Դիմադրական Ճակատի եւ Հայկական Ճակատի Կեդրոնական Մարմնի (որուն ՍԴՀԿ-ի կողմէ մաս կը կազմէր հիւնաւուրց մարտիկ, կետափոյի զնտանները «վայելած» Աբրահամ Արապեան - Ե.Ճ.) գիտակցութեան»<sup>[32]</sup>, տունէն դուրս կը հրաւիրեն Ս.Արմաղանեանը ու զայն կ'առաջնորդեն դէպի ամայի վայր մը: Անոր կ'ընկերանայ կինը՝ Հայկուհին: Ճամբու ընթացքին, Ս.Արմաղանեան ճարպիկ շարժումով մը ինքզինք կը նետէ ցած պատի մը միւս կողմը եւ կը փորձէ անհետանալ պարտէզներուն մէջ: Արձակուած գնդակները աւելի արագ էին: Ս.Արմաղանեան կ'իյնայ վիրաւոր: Ան, իրեն մօտեցող ոճրագործներուն մէջ կը նկատէ Կիլիկիոյ իր նախկին զինուորներէն, որոնցմէ մէկուն կեանքը փրկած էր իր անձնական քաջութեամբ: Իր պարսաւանքի վերջին խօսքերը կ'ուղղէ ոճրագործներու երեսին: Վրայ կը հասնի գնդակներու տարափը:

Կատարուած ոճիրին դրդապատճառը պարզ էր. «Որպէսզի դիւ-

րութեամբ կատարեն իրենց աւագակային կողոպուտը: Որմէ յետոյ ներկայացան հայ առեւտրականներուն «հայրենակից 200 հազար ֆրանք պիտի տաս, եթէ չտաս հետեւանքը դուն շատ լաւ գիտես»: Ահա թէ ո՞ւր է պահուած օձին գլուխը եւ ահա թէ ինչո՞ւ համար քաւութեան նոխազ եղաւ մեր ազնիւ հերոսը»<sup>337</sup>: Ոճրագործներուն տուած բացատրութիւնը պարզ էր ու հաշտ թէ օրուան մթնոլորտին եւ թէ իրենց աւանդութեան: Ա.Արմաղանեան կ'ամբաստանուի Ֆաշիզմի գործակալ: Այս կապակցութեամբ Հայկուհի Արմաղանեանին տուած պատասխանը անպաճոյճ է եւ մեկնաբանութիւններու չի կարօտիր. «Ամուսինս նախ գերմաներէն բառ մը չէր գիտեր, յետոյ մեր տանը սեմէն ներս գերմանացի մը կոխած չէ: Ընդհակառակը, կ'ատեր հոգեպէս զանոնք, որպէս պատասխանատուներ հայկական 1915-ի սարսափներուն, միւս կողմանէ կը հաւատար ռուս կողակներու յաղթանակին, գովելով անոնց քաջատրութիւնը, որոնց հետ միասին կրուած էր Կովկասի ճակատին վրայ, թուրքերուն դէմ: Հարցուցէք Սէնթ Անդրուսի ամբողջ հայութեան, ոչ ոք կրնայ այդ զրպարտութիւնը ընել, եթէ ամուսինս գերմաններու գործակալ ըլլար, օրական 20 կրամ չոր հացով նաւահանգիստի բեռնակիր ըլլալու պէտք չունէր, երբ ծովագերքը գործ ըլլար, քարահանքը աշխատելու չէր ստիպուեր, իր անչափահաս զաւակներուն օրապահիկը ճարելու համար, իր զինուորական կարողութիւնները սպաս կը ղնէր գերմանացիներուն եւ իշխանական կեանք կը վայելէր, գիտէք որ գերմանացիները մոմով կը փնտռէին այդ օրերուն ամուսնոյս պէս զինուորականները»<sup>341</sup>:

Ոճիրէն շուրջ տարի մը ետք, Տիկ. Հայկուհի ականատեսի վկայութեամբ անուանական դատ կը բանայ ոճրագործներուն դէմ: Սակայն, վրայ հասած ներգաղթին, բոլոր ոճրագործները կը ներգաղթեն Խորհրդային Հայաստան, խոյս տալով արդարադատութեան ճիրանէն:

Ու այսպէս, Կիլիկիոյ մէջ դաշնակցականներու եւ ռամկավարներու կողմէ պոլշեիկ ամբաստանուած Ա.Արմաղանեան, պոլշեիկներուն կողմէ կ'ամբաստանուի որպէս ֆաշիստ ու իր կեանքի տեւողութեան ան գերծ կը մնայ միակ ճիշդ «ամբաստանութենէն». «որ բոլորդ ալ գիտէք որ ուխտեալ հնչակեան մըն էր, ժիրայրներու եւ Փարամազներու մոզական շունչով դատախարակուած եւ Զելլոներու մարտական ոգիով մեծցած քաջամարտիկ մը, որուն կռնակը թուրքը շատ քիչ անգամ տեսած էր»<sup>351</sup>:

Յաւալի կատակերգութիւն:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ


- [1] «Արարատ» Երիտասարդական, 1985 Յունիս 15, «Փարամազի ճառը Արտասանուած 1898 Օգոստոս 1-ին, Կանի Զրեական Պատարակին Մէջ»:  
 [2] Տիգրան Գազանճեանի նամակը ԱՂԿԿ Պաշտօնի վարչութեան, Կարս, 1915 Փետր. 5: ՀԱԱ:  
 [3] Հայկ Բժշկեանի նամակը Մելքոնին, Կարս: ՀԱԱ:  
 [4] «Յուշարձան Լուիուած ԱՂԿԿ Զառասանակին», Փարիզ, 1930, էջ 152:  
 [5] Ա. Թորլաբեան, «Օրերուս Հետ», Թեհրան, 1982, էջ 314:  
 [6] Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Ա. հտ., Պոսթըն, 1925, էջ 444-445:  
 [7] Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Բ. հտ., Պոսթըն, 1929, էջ 58-59:  
 [8] Արի Թոփուզիանեան, «Յուշարձան Ուսուցչապետ Բենիամին Ժամ-կոչեան», Երեւան, 2010, էջ 238:  
 [9] Լոյն, էջ 239:  
 [10] Լոյն, էջ 242:  
 [11] Մ.Անտրիսեան, «Հայ Ազատագրական Ազգային Ցիսնամեայ 1870-1920 Յուշամատեն եւ Զօր. Անդրանիկ», Փարիզ, 1954, էջ 183:  
 [12] Ա. Թոփուզիանեան, ... էջ 249-250:  
 [13] Հրաչիկ Իմնուեան, «Անդրանիկի Ժամանակը», Բ. հտ., Երեւան, 1996, էջ 90:  
 [14] Առաքել Պատրիկ, «Պատմագիրք Յուշամատեն Սեբաստիոյ եւ Գաւառի Հայութեան», Ա. հտ., Պելլուք, 1974, էջ 784-786:  
 [15] «Երիտասարդ Հայաստան», 1954, Սեպտ. 17. Դեռ, «Որոշք Սպաննեցի Պաւստաններ Ա. Եասեանը եւ Հմայեակ Արամեանը»: Նաեւ, «Երիտասարդ Հայաստան», 1954, Հոկտ. 29. Հեթում Պալեան, «Դաւանան Արշապիր Եասեանի Սպանութիւնը»:  
 [16] Անդրանիկ Կենճեան, «Սոց. Դեմ. Հնչակեան Կուսակցութիւնը եւ Կիլիկեան Ինքնավարութեան Ազգը», Պելլուք, 1958, էջ 67:  
 [17] Լոյն, էջ 49:  
 [18] Լոյն, էջ 68-69:  
 [19] Լոյն, էջ 44:  
 [20] Արիգոր Թաթուլեան, «Անթեղուած Գաղտնիքներ», Պելլուք, 1967, էջ 266:  
 [21] Լոյն, էջ 267:  
 [22] Ասատուր Սաչեան, (գրեց Արամ Ասպետ), «Դրուագներ Հանույ Գերոսամարտէն եւ Հերոսին Ողիսականը», Պելլուք, 1961, էջ 120:  
 [23] Ա.Թոփուզիանեան, ... էջ 331:  
 [24] Յակոբ Պողոսեան, «Հանճի Ընդհանուր Պատմութիւնը», Լու Անճելու, 1942, էջ 692:  
 [25] Գ. Թաթուլեան, ... էջ 320:  
 [26] Հրաչ Տասնապետեան, «Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան Պատմութեան Համար», Ա. հտ., Բ. տպագ., Պելլուք, 1984. Ա. Չալեան, «Հանճի Ութամսեայ Գոյամարտը»:  
 [27] Ա. Կենճեան, ... էջ 221:  
 [28] Գերսամ Ահարոնեան, «Յուշամատեն Սեծ Եղեռնի», Պելլուք, 1965. Մ. Ծի-հանեան, «Զմիւռնիոյ Աղետը, Գրող-Աղածի Հայոց Ազատումը (1922 Սեպտեմբեր)»:  
 [29] «Արարատ», 1948 Մայիս 12. Մարտիլահայ, «Արժանաւոր Ուզմիկ Ա. Արմաղանեան» (արտատպուած «Լոր Աշխարհ»էն):  
 [30] «Արարատ», 1960 Յունիս 23-24. «Որոշացեալ Ընկեր Ա. Արմաղանեանի եւ Իր Զինակիցներուն Ոգեկոյման Պատարագ»:  
 [31] Լոյն:  
 [32] Լոյն:  
 [33] Լոյն:  
 [34] «Արարատ», 1960 Օգոստ. 10. «Հնչակեան Հերոս Ա.Արմաղանեանի Սպանութիւնը Խումբ Մը Ոճրածին Հայերու Կողմէ. Մանրամասնութիւններ՝ Պատմուած Իր Կողմէ Կողմէ»:  
 [35] «Արարատ», 1960 Յունիս 23:

# ՍԱՐԳԻՍ ԾԵՊԷՃԵԱՆ (ԾԵՊԷՃԻ)

Յնչակեան քաջերու երկար շրթային ինքնատիպ դէմքերն է Սարգիս Ծեպեճի: «Ասպետի տիպար մը, որուն հոգիին մէջ բնաւ երկիրը չկար: Աջբերուն մէջ մշտավատ կրակ, յաւիտենապէս յարաշարժ, անհանգիստ, հին օրերու կտորիճի մարմնացումն էր»<sup>1</sup>:

Սարգիս Ծեպեճեան ծնած է Կեսարիոյ մօտ հայկական գիւղակի մը մէջ, հաւանաբար 1879-ին: Պատանի տարիքին, Կեսարիոյ շուկային մէջ փոքր խանութի մը տէրը կը դառնայ եւ կը զբաղի կտորեղէնի առեւտրով:

Իւրօրինակ կ'ըլլայ Ս.Ծեպեճիի երիտասարդութիւնը: Ան կը դառնայ «խովարտա»: Այդ շրջանին, Կեսարիոյ եւ Փոքր Յայքի շրջաններու ընկերային բարքերուն մաս կը կազմէր խովարտաութիւնը եւ աղջիկ խաղցնելը: Խովարտան քաջ տղայ մըն էր, իզիթ մը, որ իր հովանաւորութեան տակ կ'առնէր անբարոյ կին մը: Խովարտան իր ընկերներուն հետ կը հաւաքուէր մութ անկիւն մը եւ այդ կինը անոնց կը հիւրասիրէր օդի եւ կլկլակ, ապա, անոնց երգերուն եւ երաժշտութեան տակ ան կը պարէր. սա ալ «աղջիկ խաղցնելն էր»: Խովարտաութեան անգիր օրէնքով, տեղի կ'ունենային իրարմէ «աղջիկը փախցնելը»: Խովարտայի մը համար անպատուութիւն եւ արժեզրկում էր, երբ այլ խովարտա մը իր «աղջի-



կը» փախցնէր. ան պէտք է կեանքի գնով պաշտպանէր զայն: Կին փախցնելու այս գործողութիւնը կ'ըլլար միշտ արիւնալի: Ուստի, խովարտան մնայուն կերպով կ'ըլլար ծիւղորդ եւ զինեալ: Քանի որ հայը իրաւունք չունէր ձի նստելու եւ զենք կրելու, ուստի խովարտաութիւնը ձգուած էր թուրքին, քիւրտին, չերքեզին եւ բուլղոյն... բացի հայէն: Սարգիս Ծեպեճի կը խախտէ այս ըմբռնումը եւ կը դառնայ նշանաւոր խովարտա մը: Այս պատճառաւ, ան յաճախակի բախումներու մէջ կը մտնէ այլազգի խովարտաներուն հետ, որոնց համար ան կը դառնայ աչքի փուշ:

1905-ին, խովարտաներու միջեւ հերթական կռիւի մը ժամանակ, Ս.Ծեպեճի եւ իր ընկերը՝ Բարսեղ Պոյաճեան կը սպաննեն թուրք խովարտան ու կը վիրաւորեն անոր ընկերները: Ս.Ծեպեճի կը ձերբակալուի ու կը բանտարկուի: Կեսարիոյ հայ երեսիկները այս կը նկատեն ազգային արժանապատուութեան հարց ու միջամտութիւններով թէ կաշառքով կը փորձեն Ս.Ծեպեճին դուրս բերել բանտէն: Ի գուր: Մինչեւ 1908 Ս.Ծեպեճի կը մնայ բանտ եւ ազատ կ'արձակուի Օսմ. Սահմանադրութեան առիթով տրուած ընդհանուր ներումին:

Սահմանադրութենէ ետք եւս ան կը վայելէ քաջի համբաւ:

Յամաշխարհային Ա. Պատերազմին կը զօրակոչուի բանակ: Կը դառնայ թուրք սպայի մը օգնականը: Իր քաջութեան եւ հաւատարմութեան պատճառով սպան զինք կը վերցնէ իր հովանաւորութեան տակ ու այդ ձեւով ան կ'ազատի հայ միւս զօրակոչիկներուն բաժին հասած սպանդի ճակատագիրէն: Երզնկայի մօտ, թրքական բանակի նահանջին, Ս.Ծեպեճի կը թաքնուի եւ ապա կը միանայ ռուսական բանակին յառաջապահը եղող Անդրանիկի ղեկավարած կամաւորական Ա. գունդին: Սկիզբը, Անդրանիկ Ծեպեճիին հանդէպ կը վերաբերի տարակուսանքով: Ծեպեճի թրքախօս էր եւ դժուար էր հաստատել, թէ ան լրտես մը չէ: Աւելին, ըստ պատմաբան փրոֆ. Արամայիս Մնացականեանի, Ս.Ծեպեճի ռուսական բանակին կողմը անցնելէ ետք, որպէս գերի կ'աքսորուի Սիպիր եւ յետոյ է որ կը վերադառնայ կովկասեան ռազմաճակատը<sup>2</sup>: Այլ պատմաբաններու մօտ այս տեսակետը չենք գտներ: Օրինակի համար ակադեմիկոս Ծատուր Աղայեան կը գրէ. «Ս.Ծեպեճեանը այն կտորիճ զինուորականներից էր, որ ծագումով կեսարացի լինելով, զօրակոչուել էր թրքական բանակ եւ ուղարկուել կովկասեան ճակատ: Նա մայրենի լեզուն չգիտէր, թրքախօս էր, սակայն իր ամբողջ էութեամբ նուիրուած հայրենասէր էր: Երբ տեսաւ հայ մեծ եղեւնը, հայու խողիտողմը, զգազդացաւ, ուժն ու փորձառութիւնը ի գործ դրաւ, լքեց թրքական բանակը, անցաւ կովկասեան հայ կամաւորական

բանակները, գտաւ Անդրանիկին եւ ուխտեց հետեւիլ անոր հաւատամքին ու գործին (Յուշմատեան, էջ 248)»<sup>151</sup>:

Մեր կարծիքով փրոֆ. Մնացականեանի վարկածը շատ հաւանական չէ, որովհետեւ Ս.Ճեպէճի ռուսական բանակին միանալից կարճ ժամանակ մը անց, կամաւորական Ա. գունդին հետ կ'երեւայ Վանի մէջ<sup>152</sup>: Ան, որպէս քաջ կռուող, շուտով կը շահի Անդրանիկին վստահութիւնը:

Ռուսական բանակի ընդհանուր նահանջի ստեղծած դժուարին պայմաններուն մէջ, խումբ մը արեւմտահայ հայդուկապետերու կողքին, Ս. Ճեպէճի կը մնայ սահմանագիծին վրայ, ու կը կռուի թրքական գերագանց ուժերուն դէմ:

Երզնկայի ճակատամարտէն ետք, Ս.Մուրատ Սեպուհին կը պատմէ, թէ «իր հետ եղած զինուորներն առիւծ տարբերութիւն չունին: ...Հապա սա Ճեպէճի Սարգիսը, Կեսարիոյ այդ առիւծը, տե՛ս, նայէ՛, ի՛նչ համեստ է եւ խոնարհ, սակայն կռուի ընթացքին ամենի է եւ կատարի»<sup>153</sup>: Այլ պարագայի մը Սեպուհ ինք անձնապէս կը վկայէ. «Առաւօտուն կանուխ կռիւր վերսկսաւ: Թշնամին ամեն ճիգ կը թափէր վերագրաւելու 6400 բարձունքը՝ մեր նահանջի գիծը կտրելու առաջադրութեամբ: ...Կռիւր ամբողջ օրը չկորսնցուց իր սաստկութիւնը: ...Օրուան կռուի հերոսներն էին Ճեպէճի Սարգիսը ու Չպուրջըցի Միջայլը, որոնք մեր ծախ թելը կը բռնէին եւ թշնամին քշելով ճիւղիսի դիմացի բլուրներուն վրայ ամրացած դիրքերէն լեցուցէր էին ձորի մը մէջ եւ փառաւոր ջարդ մը տուած էին անոր»<sup>154</sup>:

1918 Փետրուարին կը մասնակցի Երզրումի պաշտպանութեան կռիւներուն: Երզրումի նահանջին, «նրանց (ժողովուրդին - Ե.Ճ.) ապահովութեան խնդիրը դրուել էր Մուրատի (Սեբաստացի - Ե.Ճ.) եւ Սարգիս Ճեպէճեանի ջոկատների վրայ»<sup>155</sup>: Մարտին՝ Ս.Ճեպէճի կը մասնակցի Սարիղամիշի կռիւներուն: Ապա, Անդրանիկի գլխաւորած Հայաստանի երկրապահ Չորագունդին հետ կը տեղակայուի Լոռիի բարձունքներուն վրայ: Երբ 1918-ի մայիսեան կռիւներուն թրքական բանակին մէկ թելը կը յառաջանայ դէպի հոն եւ կը փորձէ գրաւել Ջալալօղլուն, «Շրջապատման վտանգը վերացնելու նպատակով թուրքերի դէմ հակազորոհի է գնում Սարգիս Ճեպէճեանի հեծեալների ջոկատը, որը հակառակորդի հետ բախում է Դաւալի շրջանում»<sup>156</sup>:

Ս.Ճեպէճի, Անդրանիկի կողմէ կը նշանակուի իր հրամանատարութեան տակ գտնուող Հայկական Առանձին Հարուածող Չօրամասին ծխաւոր գունդին պետը եւ կ'ընկերանայ անոր դէպի Նախիջեան եւ Չանգեզուր կատարած մարտական երթին: Այդ ճամբուն վրայ մղուած յայտնի մարտերուն մէջ մեծ կ'ըլլայ Ս.Ճեպէճիի դերը:

1918 Յունիսին, Չուլֆայի կամուրջի գրաման կռիւին, Անդրանիկ իր հետ կ'ունենայ Ս.Ճեպէճին եւ անոր 100 հեծեալները<sup>157</sup>: Պարսկական Խոյի գրաման ճակատամարտին, Անդրանիկ կը հրահանգէ Ս.Ճեպէճիին ընթանալ զօրամասին առջեւէն ու Նախայարծակ ըլլալ. ապա կը հրահանգէ հալածել բլուրներուն վրայ դիրքաւորուած թրքական բանակը<sup>158</sup>: Վերոյիշեալ բոլոր պարագաներուն, Ս.Ճեպէճի հանդէս կը բերէ արտակարգ խիզախութիւն:

Առ ի պատրաստութիւն Նախիջեանի գրաման վճռական մարտերուն, 1918 Յունիսին Ապրակունիսի Ս.Կարապետ վանքի զինուորական ժողովին, Ս.Ճեպէճի կը նշանակուի Ա. հեծեալաշտի հրամանատար եւ ռազմադաշտային դատարանի անդամ<sup>159</sup>: Նախիջեանի կռիւն՝ 18-19 Յուլիս, Ս.Ճեպէճիի գունդին կը յանձնարարուի հետախուզութեան պարտականութիւնը: Ան կը մօտենայ թշնամի բանակին իրեն արտօնուած սահմաններէն աւելի եւ ձեռք կը ձգէ երեք թուրք գերի: Գերիներու խոստովանութիւններէն Անդրանիկ կը պարզէ թրքական ուժերուն տեղակայութիւնն ու քանակը եւ ըստ այնմ կը դասաւորէ իր զօրամասը<sup>160</sup>: Հայկական ուժերը չեն կրնար գրաւել Նախիջեանը: Սակայն կը յաջողին Նախիջեանէն դուրս բերել տեղական ինքնապաշտպանական ուժերն ու մեծ թիւով գաղթականութիւն:

Առանձին Հարուածող Չօրամասը կը բարձրանայ Չանգեզուր: Սկզբնական շրջանին, գաղթականներու հոծ բազմութեան մը հետ, Ս.Ճեպէճիի հեծելագունդը կը տեղակայուի Հալիձոր<sup>161</sup>: Հոկտեմբերին, Ս.Ճեպէճի իր հեծեալ հարիւրակով կը մեկնի Մեղրի ու Տոքթ. Պոնաբարդեանի գումարտակին եւ տեղական ինքնապաշտպանական ուժերուն հետ կը փակէ Օրոտուպատ-Չանգեզան թրքական բանակին յառաջացման ճամբան<sup>162</sup>:

Այդ պահէն ետք, Ս.Ճեպէճիի անցած ուղիին մասին կը տրուի երկու կարծիք: Առաջինը այն է, որ Նախքան Անդրանիկին Չանգեզուր-Ղարաբաղ լեռնաշխարհը թողնելը, իր շատ մը հաւատարիմ զօրակիցները՝ որոնք շարքին Ս.Ճեպէճի կը լքեն իրեն: Ս.Ճեպէճի կ'անցնի Պարսկաստան, Մուժամբար-Թաւրիզի վրայով անգլիական բանակներուն միանալու<sup>163</sup>: Միւս կարծիքը, որ աւելի հաւանական կը թուի այն է, որ Ճեպէճի կը մեկնի Երեւան, որմէ Կիլիկիա<sup>164</sup>: Աւելին, Հայաստանի իշխանութիւնները «Անդրանիկի հեծելազօրի հարիւրապետ, քաջ զինուորական Ս.Ճեպէճեանին առաջարկեցին ծառայել իրենց եւ Երեւանի ներքին ապահովութեան պետի պաշտօն ստանձնել: Սակայն Ս.Ճեպէճեանը հրաժարուեց, գնաց Կ.Պոլիս, ապա Չմիւռնիա եւ Կիլիկիա»<sup>165</sup>:

Յամենայն դէպս, այս կամ այն ճամբով, Ս. Ճեպէճի կը հաստատուի

Կիլիկիա:

1920 Յունուարին, երբ ան հիւրաբար իջեանած էր Յաճըն, Պոլսաճեաններու ընտանիքին մօտ, Յաճընյ շուրջ մտահոգիչ դէպքերը կը շատնան: Յաճընյ առաջնորդ Պետրոս արք. Սարաճեան ժողովի կը հրաւիրէ երեւելիներն ու կուսակցական պատասխանատուները: Ժողովին կը հրաւիրուի նաեւ Ա.Ճեպէճի. «Ճեպէճին եկաւ, ծափահարութիւններով ներս առինք»<sup>195</sup>: Ժողովը կը քննարկէ իրավիճակը ու կ'որոշէ նախապատրաստուիլ: Կը կազմուի Ինքնապաշտպանութեան Բարձրագոյն Խորհուրդ՝ 11 անդամներով: Նախագահ կ'ընտրուի արք. Սարաճեան, ատենապետ՝ հնչակեան իին յեղափոխական Միհրան Գայեան, զինուորական ընդհանուր հրամանատար՝ Ա.Ճեպէճի:

Ա.Ճեպէճիի գլխաւորութեամբ կը նշանակուին դիրքերը, կը կազմուին չորս վաշտեր, օժանդակ խումբեր եւ թիկունքի յանձնախումբեր: Յաճըն կը դառնայ ինքնապաշտպանական հնոց մը: Այս մասին Սիսի կայագործի պետը՝ Ռեճեպ Տալքըր, ապագային իր յուշերուն մէջ պիտի գրէր. «Կոմիտէի ժեներալ Անդրանիկի կողմից ուղարկուած Ճեպէճեանը զինուում էր նոյնիսկ հայերի կանանց՝ թուրքերին քնաչնջելու նպատակով»<sup>196</sup>:

Յաճընյ ինքնապաշտպանութեան սկզբնական շրջանին, Ա.Ճեպէճի ոչ միայն կը ղեկավարէ այդ, այլեւ անձնապէս կը մասնակցի վտանգաւոր կռիւներուն: Այդպէս կը պատահի, Րումլուի կռիւին<sup>197</sup>, Գրտետի կռիւին<sup>198</sup>, Զայ Պէլէի կռիւին<sup>199</sup>, եւայլն:

Յունիս 18-ին Ճեպէճի արձակագլխի մը գնդակով կը վիրաւորուի կոնքէն: Ամբողջական պաշարման ենթարկուած Յաճընի պայմաններուն մէջ հնարաւոր չ'ըլլար բուժել վէրքը եւ Ճեպէճի յետ այդ քամուած կը մնայ անկողինին: Այդ վիճակով ան կը շարունակէ վարել ընդհանուր հրամանատարի պարտականութիւնը, ճակատներէն հասնող գէկոյցներուն հիման վրայ: Դոկտեմբերին անօգնական մնացած Յաճընը կ'իյնայ: Յաճըն ներխուժած թրքական բանակին առաջին գործերէն մին կ'ըլլայ տարիներ ամբողջ իր աչքին փուշը դարձած Ա.Ճեպէճիին գլուխը կտրել, գոր կը ցուցարողուի անոր ծննդավայրին՝ Կեսարիոյ փողոցներուն մէջ:

Գերոս Յաճընին հետ կ'իյնայ նաեւ անոր հերոս հրամանատարը:

Ա.Ճեպէճիի նահատակութենէն ետք սակայն, խուլ պայքար մը կը ծաւալի անոր կուսակցական պատկանելիութեան շուրջ: Յնչակեան շատ մը հեղինակներ, որոնք անձնապէս ծանօթ եւ գործակից եղած են Ա.Ճեպէճիին, առանց այսպիսի հարցի մը ուղղակի անդրադառնալու նպատակը ունենալու, կը նշեն Ա.Ճեպէճիի հնչակեան ըլլալը: Անդրանիկ Կենճեան, Ա. Ճեպէճին կը ներկայացնէ որպէս

«կանուխէն հնչակեան»<sup>200</sup>: Արտէս Կիտուր, Անդրանիկի հնչակեան գորապետներուն շարքին կը նշէ Ա. Ճեպէճիի անունը<sup>201</sup>: Կարապետ քին. Գալֆայեան «Կեսարիոյ Յնչակեաններէն» վերնագրին տակ կը տպագրէ երեք անձերէ բաղկացած լուսանկար մը՝ որոնցմէ մին Ա.Ճեպէճի<sup>202</sup>: Բենիամին ժամկոչեան եւս իր հերթին կը կատարէ ուշագրաւ վկայութիւն մը. «Յրամանատարութիւնը (Երզնկայի զինուորական ոյժին.-Ե.Ճ.) առաջարկուեցաւ Սարգիս Ճեպէճեանին: Ճեպէճեան նախ տրամամտեցաւ. բայց իր հնչակեան արձանագրութիւնն ականատես ըլլալով՝ համոզեցիցից որ չմտրժէ: Այս ալ մեր կուսակցամոլութեան մէկ նմոյշը թող համարուի: Բայց ժամանակը՝ թէ Կովկասի եւ թէ Կիլիկիոյ մէջ ցոյց տուաւ անոր զինուորական կարողութիւնը»<sup>203</sup>: Այս բոլորին կողքին, ԶՅԴ-ի կողմէ յատուկ ճիգ մը կը թափուի Ա.Ճեպէճին դաշնակցականացնելու: Ա.Կեսար, իր վերոնշեալ յօդուածին մէջ, Ա.Ճեպէճին կը ներկայացնէ որպէս դաշնակցական: Սակայն ան կ'իյնայ հակասութիւններու մէջ: Նախ կ'ընդունի, որ Ա.Ճեպէճին «չերմ արտայայտութիւններ կ'ընէր հնչակեան քանի մը հերոսական դէմքերու հանդէպ, ինչպէս Ժիրայր, Թորոս, Կիւլպէնկ եւլն» (Ժիրայր, Թորոս (Ճառուկեան) (Զելլօ) եւ Կիւլպէնկ (Յամալեան) Կեսարիոյ շրջանին մէջ գործած հնչակեան ֆետայապետեր են.-Ե.Ճ.), ապա, կը յիշէ անոր հետ ունեցած իր մէկ հանդիպումը, ուր Ա.Ճեպէճի կ'ըսէ. «Ի՛նչ ես նստած, չերթաս ձեր բիւրոյին չայտնե՛ս խնդիրքս»: Դաշնակցական շարքային մը, իր դաշնակցական ընկերոջ «ձեր բիւրոս» չ'ըսէր:

Ա.Ճեպէճիի կուսակցական պատկանելիութեան անդրադարձող վերոյիշեալ անդրադարձները, բոլորն ալ, գրուած են անոր նահատակութենէն յետոյ, երբ չկար կենդանի վկան: Մեր պրպտումները մեզի տարին հոն, ուր կրցանք գտնել Ա.Ճեպէճիի կենդանութեան օրով տրուած վկայութիւն մը: Ամերիկայէն կովկասեան ճակատ մեկնած կամաւորներէն Միրիճան Պոքաճեան, «Երիտասարդ Յայաստան»ին յղած իր նամակ-թղթակցութեան մէջ կը գրէ. «Ժեներալ Անդրանիկի շուրջ մնացողներն էին թրքահայերը.- սերաստացիք, մշեցիք, սասունցիք, շապին գարահիսարցիք, քղեցիք, խնուցիք, պուլանխցիք, կեսարացիք եւ դարաբաղցիք: Այս զինուորներու մեծ մասը սոցիալ դեմոկրատ հնչակեաններ էին: Յնչակեան խմբապետ կեսարացի Սարգիս Ճեպէճեան՝ 350 զինուորներով, սերաստացի Արմաղանեան՝ 400, քարիդան Պանդուխտ մշեցի, սասունցի, պուլանխցի եւ խնուցի կամաւորներու լեզտնով. Յայկ, Պաքուցի Արծուիկ եւ դեռ ուրիշներ, ամէն մէկը իր խումբով մնացին հաւատարիմ եւ գործակցեցան Անդրանիկին»<sup>204</sup>: Աւելորդ է ըսել թէ դժուար, գրեթէ անհնար բան է մէկու մը կենդանութեան խեղա-

թիրել անոր կուսակցական պատկանելիութիւնը:

ՀՀ Դաշնակցութիւնը հերոսներու եւ ֆետայիներու պակասեւ տառապող կուսակցութիւն մը չէ: Ուրեմն, ինչո՞ւ Ա.Ճէպէճին դաշնակցականացնելու այս անելորդ ճիգը: Հարցին անուղղակի պատասխան կու տայ Արամ Սահակեան իր «Հ.Յ.Դաշնակցութիւնը Մերձաւոր Արեւելքի Մէջ» յօդուածով: Նախ ըսենք, որ յօդուածագիրը, ինք եւս դաշնակցական կը դարձնէ Ա.Ճէպէճին, գրելով թէ. «Թանկագին ընկերներ, ինչպէս Ճէպէճին եւ Յովնանը, ուրիշ հազարաւորներու հետ զոհուած էին կոիւներու ընթացքին»<sup>[25]</sup>: Բայց հարցը այս չէ: Յօդուածագիրին համաձայն, յետեղեռնեան սփիւռքի կազմաւորման շրջանին, առանցքային դեր վերապահուած էր Մերձաւոր Արեւելքի հայազարդութեան: Դաշնակցութիւնը պէտք է տիրական ներկայութիւն ունենար հոն, կազմակերպելու համար այդ գաղութները: Բայց «կարելոր պարագան այն էր, որ Մերձաւոր Արեւելք ապաստանած հայ գաղթականութեան մեծագոյն տոկոսը բաղկացած էր կիլիկեցիներէն, այսինքն՝ մեր ժողովուրդի այն մասէն, որուն մէջ Դաշնակցութիւնը անցեալին բաղդատաբար առիթ չէր ունեցած լայն աշխատանք կատարելու»: Պետք էր դաշնակցականացնել կիլիկեցին: Ըստ յօդուածագիրին, այդ կը կատարուի հայրենակցական միութիւններուն ընդմէջէն: Ա.Սահակեան հոս կանգ կ'առնէ: Բայց մեր ենթադրութեամբ, կիլիկեցին դաշնակցականացնելու համար, նպատակայարմար էր առաջին հերթին դաշնակցականացնել պայքարի ու զաղթի ճամբայէն նոր դուրս եկած կիլիկեցիին հերոսները: Եւ քանի որ կիլիկեցին պաշտամունքի հասնող սեր ուներ Ա.Ճէպէճիին հանդէպ՝ մատը կը դրուի անոր վրայ: Դաշնակցական մէկ այլ պատմագիր, Գրիգոր Ամիրեանն ալ կը կատարէ սա դատողութիւնը, «Առանց չափօզանցութեան մէջ իյնալու՝ պիտի ըսեմ, որ եթէ Ճէպէճին դեռ մանկութենէն բախտն ունենար թրծուելու Դաշնակցութեան ծոցին մէջ, մեծ, շատ մեծ հերոս-ղեկավար մը ըլլալու բոլոր յատկութիւնները պիտի ունենար: Սակայն, ուշ սկսաւ փայլիլ հայկական մտայլ հորիզոնին վրայ այս հոյակապ երիտասարդը եւ, աւա՛ղ, այնքան շուտ ինկաւ անհաւասար պայքարի մէջ»<sup>[26]</sup>:

Այս նիւթերը այսօր ժամանակավրէպ են եւ ունին միայն ներ պատմագրական նշանակութիւն: Վերջին հաշուով հերոսը հերոս է ժողովուրդին ու հայրենիքին հանդէպ իր կատարած գործով եւ ոչ թէ իր կուսակցական պատկանելիութեամբ: Այս դիտանկիւնէն,

անելի ոգետորոջ կը մնայ Գեորգ Կառվարենցի «Հաճընի Փառքին» գրուած երգին տողերը.-


*Շեփորդ ինչեցո՛ւր, հերո՛ս Ճէպէճի  
Մահէն չի վախնար ոչ մէկ հաճընցի:*

## ԾՂՆՕԹՎԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Հայրենիք», 1951 Յուլիս, թիւ 7. Ա. Կեսար, «Խոնարի Մեծութիւններ - Աարգիս Ճէպէճեան», էջ 95:
- [2] Ա.Մաքականեան, «Չորավար Անդրանիկ», Բ. հտ., Մոսկուա, 1991, էջ 187:
- [3] Ծ. Աղայեան, «Հայ ժողովուրդի Ազատագրական Պայքարի Պատմութիւնը», Երեւան, 1976, էջ 613:
- [4] «Հայրենիք», 1951 Յուլիս, թիւ 7:
- [5] Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Ա. հտ., Պոսթոն, 1925, էջ 507:
- [6] Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Բ. հտ., Պոսթոն, 1929, էջ 102:
- [7] Հրաչիկ Սիմոնեան, «Անդրանիկի Ժամանակը», Բ. հտ., Երեւան, 1996, էջ 69:
- [8] Ա. Մաքականեան, ... էջ 191-192:
- [9] Նոյն, էջ 202:
- [10] Արսէն Կիտուր, «Յուշեր Ու Փուշեր», Պէյրութ, 1956, էջ 182:
- [11] Հ. Միմոնեան, ... էջ 257:
- [12] Նոյն, էջ 286-293:
- [13] Նոյն, էջ 328:
- [14] Նոյն, էջ 423:
- [15] «Վեմ», 1936, Մայիս-Յունիս, թիւ 3. Յովակ Ստեփանեան «Անդրանիկը Սիւնեաց Երկրում»:
- [16] Հ. Միմոնեան, ... էջ 635:
- [17] Ծ. Աղայեան, ... էջ 699:
- [18] Մետրոպ Շիրտմեան, «Մոռցուած Դեպքեր եւ Դեմքեր Հաճընյ 1920-ի Հերոսամարտէն», Արիտիսիա, 1974, էջ 23:
- [19] Ուրբէն Սահակեան, «Թուրք-Ֆրանսական Ցարաբերութիւնները եւ Կիլիկեան 1919-1921 թթ.», Երեւան, 1970, էջ 188:
- [20] Յակոբ Պողոսեան, «Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը», Լոս Անճելոս, 1942, էջ 643-644:
- [21] Մ. Շիրտմեան, ... էջ 71:
- [22] Ասատուր Սաչեան, «Դրուագներ Հաճընյ Հերոսամարտէն եւ Հերոսին Ողիսականը», Պէյրութ, 1961, էջ 86:
- [23] Ա. Կենճեան, «Սոց. Դեմ. Հնչակեան Կուսակցութիւնը եւ Կիլիկեան Ինքնավարութեան Աքթը», Պէյրութ, 1958, էջ 248:
- [24] Ա. Կիտուր «Պատմութիւն ՍԴ Հնչակեան Կուսակցութեան», Ա. հտ., Պէյրութ, 1962, էջ 471:
- [25] Կ. քին. Գալֆայեան (Ռովի Եղեմի), «Գիրք Ելիջ Հայց», Պէյրութ, 1955, էջ 188:
- [26] Արի Թովուզիանեան, «Յուշարձան Ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանի», Երեւան, 2010, էջ 229:
- [27] «Երիտասարդ Հայաստան», 1919, Յունուար 11: -
- [28] «Հայրենիք», 1951, Փետր., թիւ 2 (301):
- [29] «Հայրենիք», 1951, Նոյ., թիւ 11 (910). Գ. Ամիրեան, «Երկու Ճշդումներ»:

# ԿԱՐԱՊԵՏ ԿԷՕՔՏԵՐԷԼԵԱՆ

ՄԴ Յնչակեան Կուսակցութեան նուիրեալներու շարքին ամենէն փոթորկոտ եւ ինքնադրոշմ կերպարներէն է Կարապետ Կեօքտերէլեան: «Կեօքտերէլեան մին է անոնցմէ, մին՝ կիլիկեան հնչակեանութեան հսկաներէն, որ 1895-ի Չեյթունի ապստամբութենէն մինչեւ ընդհանուր տարագրութիւն, առանց հաշուելու հիւները, չկայ որքէն հայկական դէպք ու շարժում կիլիկեան շրջանակին մէջ, որուն խառնուած չըլլայ իր հմայթոտ անունը, տրամադրելով ոչ միայն իր նիւթականը, այլ նաեւ իր անձը: Պարագայ մը, որ հազուադէպ է հայ հարուստներու մէջ»<sup>1)</sup>:



Կ.Կեօքտերէլեան (յիշատակած է նաեւ Կեօփտերէլեան) ծնած է Ատանա, 1843-ին:

Նախակրթութիւնը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք, Օսմանեան Պանքի Ատանայի մասնաճիւղին մէջ աշխատող իտալացի իրաւագետ եւ ֆրանսագետ պաշտօնեայի մը ծօտ իրաւագիտութեան եւ ֆրանսերէնի անձնական դասեր կ'առնէ: Ինքնաշխատութեամբ կը տիրապետէ նաեւ արաբերէն եւ անգլերէն լեզուներուն: Յետ քննութեան կը վկայուի որպէս իճազէթի (արտօնեալ) փաստաբան:

Կ.Կեօքտերէլեան գաւակն էր ազդեցիկ եւ հարուստ ընտանիքի

ու ժառանգաբար սեփականատէրը դարձած էր մեծ կալուածներու եւ ազարակներու: Ան կը սկսի անձնապէս պաշտպանել իր կալուածային դատերը, որոնք կ'աւարտին ի շահ իրեն: Սա, Կ.Կեօքտերէլեանին կը բերէ հմուտ փաստաբանի հռչակ, որուն պատճառով շատ մը կալուածատէրեր եւ պետական պաշտօնեաներ իրենց կալածային դատերու հետապնդումը կը վստահին անոր: Այս պատճառով, կ'ընդլայնի Կ.Կեօքտերէլեանի անձնական ծանօթութիւններուն շրջագիծը:

Իր անձնական գործին կողքին, Կ.Կեօքտերէլեան կը մասնակցի յեղափոխական շարժումներուն: 1890-ին, Չեյթուն գտնուող Բարթողումէս վրդ. Թագածեան (1895-ի Չեյթունի ապստամբութեան «Վեղարաւոր Յերոսոբ»), առաջնորդ Նիկողոս սրբազանին թելադրութեամբ կը մեկնի Ատանա, Չեյթունի համար իզմիրէն դրկուած գէնքերը ստանձնելու եւ զանոնք գաղտնօրէն տեղափոխելու առաքելութեամբ: Բացի անկէ որ այս լուրը սխալ դուրս կու գայ, Բարթողումէս վրդ. իր հերթին կ'իյնայ հետապնդումներու եւ ձերբակալուելու վտանգին մէջ: Կ.Կեօքտերէլեան, որուն ազարակներէն մեկուն մէջ ապաստանած էր Բարթողումէս վրդ., ճարպկօրէն կը կազմակերպէ անոր վտանգէն դուրս բերումը եւ ապահով վերադարձը Չեյթուն<sup>2)</sup>:

1891 Օգոստոսին, Ատանայի առաջնորդ Մկրտիչ եպս. Վեհապետեանի միջոցով կը ծանօթանայ յեղափոխական նպատակներով Մերսինէն Սասուն մեկնող Միհրան Տամատեանին<sup>3)</sup> ու կը մտնէ Յնչակեան Կուսակցութեան շարքերը: Յակառակ իշխանութիւններուն խստութեան եւ աչալքութեան, Կիլիկիոյ մէջ յեղափոխական շարժումները կ'աճին օրաւոր: Տեղի կ'ունենան զանգուածային ձերբակալութիւններ<sup>4)</sup>: Կը ձերբակալուի նաեւ Կ.Կեօքտերէլեան: Այս մասին «Յնչակ» կը գրէ. «Ատանայի բարձր դասէն Կարապետ Կեօփտերէլեան կորովամիտ եւ արդարասէր երիտասարդ, առանց քննութեան կամ որեւէ հարցուփորձի՝ անցեալ շաբաթ ձերբակալեցին եւ եգիպտական շոգենաւով՝ ոստիկանական խիստ հսկողութեան տակ՝ յաքսոր դրկեցին ի Վերիտօմ (Պէրլութ). գրոյց կը պտըտի որ բերդարգելած են Աքիա, թէ իՆչ յանցանքի համար - յայտնի չէ»<sup>5)</sup>: «Պտոյտ ընող այդ գրոյցները» ճիշդ էին: Մինչ այդ Աքիայի բանտը գտնուող Գում Գաբուի ցոյցի կազմակերպիչներէն Յարութիւն Ճանկիլեան, քաղաքական եւ ոչ-քաղաքական բանտարկեալներուն տարբերութիւնը ցոյց տալու համար իր յուշերուն մէջ կը գրէ. «Բերդարգելեալներուն մէջ կը գտնուէին քանիններ, որոնք ո'չ յեղափոխութենէ, ո'չ հայրենասիրութենէ եւ ո'չ ալ ազգասիրութենէ տեղեկութիւն ունէին, բայց կառավարութիւնը պատեհ

առիթը ներկայացած համարելով իր յեղափոխական բռներ եւ Աքիա աքսորել տուած էր: Իրենց Աքիա հասնելէն քանի մը շաբաթ վերջը յայտնի դարձաւ, թէ ատոնք ինչպիսի՛ նկարագրի տըր մարդիկ են, որ նոյնիսկ հայութեան պատիւ չէր բերել իրենց ընթացքը: Մարիմես, Գիլնճեան, Տոնայետեան, Տագետեան, Կեօքտերէլեան եւ ես արդէն վաղուց մեր համոզումը գոյացուցած էինք ստոյն մասին, բայց քանի որ հայ էին, մենք ստիպուած էինք մեր ներքին աղտերը մեր մէջ մաքրելու»<sup>61</sup>:

Բանտէն ազատ արձակուելէն ետք, Կ.Կեօքտերէլեան կը վերադառնայ Ատանա ու իր անձնական գործին զուգահեռ կը շարունակէ յեղափոխական գործունեութիւնը: 1905-ին դարձեալ կը ձերբակալուի եւ Ատանայի Եղեռնադատ Ատեանին կողմէ դատապարտուելէ ետք կը բանտարկուի տեղւոյն բանտը: Կ.Կեօքտերէլեան բարեկամական կապեր կը ստեղծէ Լահանգապետ Պահրի փաշային հետ, որ Օրմանեան Պատրիարքին հետ ունեցած իր անձնական կապերուն պատճառով յարաբերաբար մեղմ վերաբերմունք ուներ հայերուն հանդէպ: Այս կապերուն շնորհիւ Կ.Կեօքտերէլեան դուրս կը բերուի իր բանտային զգուշի խոցէն եւ կը տեղաւորուի «ժանտարմա գօմանտանլըզը» (ոստիկանական հրամանատարութիւն) շէնքին մէջ գտնուող առանձնասենեակի մը մէջ, որպէս «յատուկ հսկողութեան ներքեւ» գտնուող կալանաւոր: Իր մենարանին մէջ, ուր բանտարկուած կը մնայ ան երկու տարի, Կ.Կեօքտերէլեան ազատօրէն այցելուներ կ'ընդունի: Այս պայմաններէն օգտուելով, կը յղանայ բանտէն փախչելու ճարպիկ ձեւ մը: Ան Կ.Պոլիս սուլթանական արքունիք կը յղէ հեռագիր մը, ուր կ'ըսէ, թէ պետական խիստ կարեւոր գաղտնիք մը ունի յայտնելիք, ուստի կը խնդրէ, որ պետական հրամանագրով մը (իրատէ) տեղեակ պահուի Լահանգապետը, որ ինք կարենայ ներկայանալ Պալատ: Ծրագիրը կը յաջողի եւ Կ.Կեօքտերէլեան ոստիկան սպայի մը հսկողութեամբ կը մեկնի Մերսին, հոնկէ «մախտուսէ» (պետական) շոգենաւով Կ. Պոլիս երթալու համար: Ծովափին, Կ.Կեօքտերէլեան կը վարձէ նաւակ մը, զիրենք մինչեւ նաւ հասցնելու համար: Արաք մակոյկավարը, որ նախապէս կաշառուած էր, փոխանակ «մախտուսէ» նաւուն, զիրենք կը տանի ռուսական նաւ մը: Մինչեւ հսկիչ սպան ըմբռնէ կատարածօրը, Կ.Կեօքտերէլեան արդէն կը յայտնուի նաւուն վրայ: Իսկ այդ օրերուն գործող «գափիթիլասիոնի» օրէնքին համաձայն, Կայսրութեան ծովափին խարսխած օտարերկրեայ նաւերը օսմանեան իշխանութեան եւ անոր օրէնքներուն ենթակայ չէին...: Կ.Կեօքտերէլեան ափ կ'ելլէ Կիպրոս եւ ապա կը տեղափոխուի Մարսիլիա<sup>62</sup>:

Օսմ. Սահմանադրութենէն ետք, հայ միւս վտարանդի յեղափոխականներուն շարքին, ծննդավայր կը վերադառնայ նաեւ Կ.Կեօքտերէլեան: «Վերադարձողներու մէջէն ամենէն բազմամտիս դիմաւորումը կը կատարուի Կարապետ Կեօվտերէլեանի եւ Յակոբ Օհանեանի, վերջինս՝ Եգիպտոս փախած: Կեօվտերէլեան կայարանէն տավուլ-զուռնայով ու փողոցները յորդեցնող ժողովրդային ցոյցով ու գոռում գոչումներով կը բերուի Մայր Եկեղեցի, ուր Առաջնորդարանի պատշգամբէն հայերէն ու թրքերէն ուռուցիկ ճառեր կը կրկնուին, յաղթահարիչ ծափերով: Կեօվտերէլեան նոյն թափօրով կ'առաջնորդուի Ապիտին ճատեսի կոչուած կեդրոնական պողոտայի վրայ իր սեպհական բնակարանը, ուր մինչեւ արշալոյս նուազ, երգ ու խնճոյք կը շարունակուի, դրացի թաղերու թուրքերուն քունն ու միտքը խանգարելով...»<sup>63</sup>:

Վրայ հասած Ատանայի Եղեռնի օրերուն, Կ.Կեօքտերէլեանի անունը կը դառնայ շրթնէ-շուրթ թեւածող ամենէն տարածուած անունը: Ինքը, Կ.Կեօքտերէլեան ձեռնածոյ չէր. սակայն բուն գաղտնիքը կը գտնուէր այլ տեղ: Այդ կը բացայայտէ երիտօրբական շարժման յայտնի պարագլուխներէն եւ այդ շրջանին Իթթիհատ Վէթերաքքը կուսակցութեան իշխանութեան ընդդիմադիր Մուրատ պէյ, երբ Ատանայի Եղեռնէն անմիջապէս յետոյ, իր խմբագրած «Միզան» թերթին մէջ մեկնաբանելով Ատանայի Եղեռնին Իթթիհատի ունեցած դերն ու պատասխանատուութիւնը, ի շարս այլ պատճառներու կը գրէ. «Իթթիհատի քլիւպին կողմէ 18 քաղաքներ հետեւեալ խիստ կարեւոր հեռագիրը յղուած է. «Կեօքտերէլեանը երեք հարիւր զինուած հայ ֆետայիներով ձեր գիւղը պիտի կոխէ, եւ տեղը գտնուող հայերու հետ միացած ընդհանուր ջարդ մը պիտի կատարէ, ուստի անոնք չեկած դուք պէտք եղածը ի գործ դնէք»: Իթթիհատի քլիւպէն տրուած այս ազդարարութեան վրայ ամէն տեղ ի գործ դրուած միջոցներուն զայով.- անոնք միօրինակ են ամէն տեղ, այսինքն՝ Կեօքտերէլիի հայկական ֆետայիներու խումբին յարձակումէն առաջ տեղացի հայերը ջարդել, անոնք գոյքերը եւ հարստութիւնները կողոպտել, տուներն ու կալուածները հրդեհել եւ այլ այս կարգի բարբարոսական արարքներ»<sup>64</sup>: Ատանայի Եղեռնին պատճառը հայերուն վերագրելու իր ճիգին մէջ ալ, Ատանայի միւլֆթի՝ Ահմետ Լուֆֆի, «Խըտմէթ» թերթին մէջ ի շարս այլ պատճառաբանութիւններու կը գրէ.- «Այս դէպքէն 10-15 օր առաջ տունէ մը նետուած 4-5 ձեռք գէնքի վրայ, ոստիկանութիւնը ներս մտնելով քննութիւն կատարելու կը ձեռնարկէ, սակայն կ'ըսեն թէ «Կեօքտերէլին Յեղափոխապետն է, մինչեւ որ չգայ, ո'չ կառավարութեան կ'երթանք եւ ոչ ալ զէնք կը յանձնենք, պարսպ

տեղը մի մօտենաք»<sup>170</sup>:

Երբ մեկ կողմէ Կ.Կեօքտերէլեանի անունը կ'օգտագործուի թուրք ամբօխը գրգռելու, միւս կողմէ ինքնապաշտպանական դիրքերու մէջ մտած հայերու կողմէ ալ այդ կ'օգտագործուի թուրք նախալարձակ ամբօխին մէջ ահ ու սարսափ ստեղծելու համար. ու այսպէս, ամենուրեք կը հնչէ՝ «Կեօքտերէլիի ֆետայիլար կէլիլլար»...: Ֆրանսացի լրագրող Անաստաս Անոսիտիսի համաձայն, այս ահազանգը Ատանայէն մինչեւ Տարսուս հասնի, Կ.Կեօքտերէլեանի խումբին թիւն ալ կը հասնի «15.000 ձիաւորի»<sup>171</sup>:

Ատանայի եղեռնէն ետք, անոր պատասխանատուներն ու յանցագործները բացայայտելու համար կը կազմուին քանի մը պետական յանձնախումբեր: Ասոնցմէ առաջինը կը գլխաւորէր Տիգրանակերտ նահանգի դատաւոր, մոլեռանդ հայատեաց ու կաշառակեր Չիլֆօն: Ասոր գլխաւորութեամբ, միջոցներու մէջ խտիր չի դրուիր հայ բանտարկեալներէն սուտ վկայութիւններ կորզելու համար: Զուրէն ու սուրէն ազատած անմեղ հայեր կ'իյնան Չիլֆօնի նենգ ձեռքը: Ձերբակալուած հայերուն մէջ միայն Կ.Կեօքտերէլեանն է, որ խիզախութեամբ կը հակադարձէ Չիլֆօնի չարագործութիւններուն: Ականատեսին վկայութեամբ, «Ատանայի անզսպելի առիծը, փաստաբան Կեօքտերէլեան Կարապետ Էֆէնտի թանտարկուած առանձնասենեակին մէջն իսկ կը վիճէր եւ կը դողացնէր Չիլֆօնեան խումբը, համոզել ջանալով Պատերազմական Ատանի անդամները հայերու անմեղութեանը մասին, որուն հարցաքննութեան ատեն հանած աղմուկին արծազանգը մինչեւ մեր սենեակը կը հասներ»<sup>172</sup>:

Կ.Կեօքտերէլեան կը դատապարտուի երեք տարուան աքսորի: Սա, իր անուան շուրջ բարձրացած աղմուկին հետ համեմատած փոքր պատիժ մըն էր, մանաւանդ եթէ նկատի առնենք, որ մեղադրուող միւս հայերուն պատիժները կը տարուէրէին 10 տարուան բանտարկութենէն մինչեւ մահապատիժ: «Կեօքտերէլեան Էֆէնտի ազատեցաւ միայն իր խօսելու եւ գրելու մէջ ունեցած չքնաղ կարողութեամբը, հակառակ պարագային շատոնց կախաղան ելած էր»<sup>173</sup>: Եւ ընդհանրապէս, թուրքերու կողմէ իսկ ներկայացուած տեղեկագիրներուն մէջ, Կ.Կեօքտերէլեանի մասին եղած երեւակայական վերագրումները կը բացակայէին: Ատանայի Պատերազմական Ատանի ներկայացուցած տեղեկագրին մէջ, Կ.Կեօքտերէլեան կ'ամբաստանուի, որ «յատուկ նշանառութեան տախտակներ շինելով պարզապէս նշանառութեան վարժութիւններ եւ փորձեր» կատարած է, իսկ Ատանայի նահանգապետ Ճելիտ պէյ, իր տեղեկագրին մէջ Կ.Կեօքտերէլեանը կը մեղադրէ թուրք

սպաննած հայ երիտասարդի մը փախուստը կազմակերպած ըլլալու յանցանքով<sup>174</sup>:

Ձերբակալուած հայերը կը բանտարկուին իր գարշահոտութեամբ հռչակուած դարձած Փայասի բանտին Պօզլու գնտանին մէջ: Ատանայի երեսփոխան Մեծն Մուրատի (Յամբարձում Պոյաճեան) եւ այլոց միջամտութիւններուն շնորհիւ, վեց ամիս ետք հայ բանտարկեալները կը փոխադրուին աւելի ընդունելի պայմաններ ունեցող Ատանայի, Զոռդոսի եւ Պոտրումի բանտերը: Դարձեալ Մեծն Մուրատի միջնորդութեամբ, հայ բանտարկեալներէն ոմանց ներում կը շնորհուի եւ անոնք 1911-ին ազատ կ'արձակուին<sup>175</sup>:

1915-ին, Կ.Կեօքտերէլեան եւս իր ժողովուրդին հետ կը բռնէ տարագրութեան ճամբան: Սակայն, անոր տարագրութեան պատմութիւնը կ'ըլլայ ամբողջապէս տարբեր ուրիշներէն: Կ.Կեօքտերէլեանի նախաձեռնութեամբ կը կազմուի «նուիրուածներու խումբը»: «Կիլիկեան շրջանի հնչակեան երկու գործիչներ, թրքական եթթադանն հրաշքով ազատած երկու իին յեղափոխականներ, մին Կարապետ Կեօքտերէլեան եւ միւսը Ահարոն Գրքեաշարեան, առաջինը փաստաբան, իսկ երկրորդը՝ առամաբուժ, զիրար կը գտնէն աքսորի ճամբուն վրայ, Զալեպի մէջ: Երկու խիզախ հայեր, որոնք մարդկային պատուհասին ու մահուան առջեւ առանց շշմարելու, կը պահեն իրենց պաղարիւնը, եւ կը յաջողին յղանալ փրկարար գործուիւթեան մը ծրագիրը: Իրենց կը միանան Նաե Ալաթիաքի Սարգիսը (Կեօզիւրեան - Ե.Ճ.): Ահա՛ այս երրորդութիւնն է, որ կը հիմնէ «նուիրուածներու» կազմը»<sup>176</sup>: «Նուիրուածներու խումբ»-ին նպատակն էր բարեկամական կապեր ստեղծել ոչ-թուրք ցեղախումբերուն հետ եւ այդ միջոցով ստոյգ մահուան գացող հայ տարագիր բեկորներուն համար արաբական անապատին մէջ ստեղծել «կենսքի ովասիսներ»: Կ.Կեօքտերէլեան, որ քաջածանօթ էր թրքերէնի եւ արաբերէնի, պարտականութիւն կը ստանձնէ բարեկամական կապեր ստեղծել Սինճար լեռան եզտիներու ցեղապետ Զմոյէ Շարոյի հետ (իրարմէ անկախ Նոյն աշխատանքը կը նախաձեռնէ Նաե Պաղտատ հաստատուած Արսէն Կիտուր): Սարգիս Կեօզիւրեան, որ պատանեկութիւնը Ազէ Տաղի քրտական միջապային մէջ անցուցած ըլլալով քաջածանօթ էր քրտական բանի մը բարբառներու, Նոյն գործը կը կատարէ Միսիթիսի քիւրտ ցեղախումբերուն մօտ: Այս աշխատանքին իր մասնակցութիւնը կը բերէ Զանոյ ապագայ քաղաքապետ Կարապետ Զալեան:

Կ.Կեօքտերէլեան կը սիրուի ու կը յարգուի Զմոյէ Շարոյէն եւ ընդհանրապէս եզտիներէն: Վերջիններս անոր կու տան «Շէյխիլ Արմէն» կոչումը: «Շէյխիլ Արմէն...: Սինճարի լեռնականները

մկրտեցին Կեօքտերէլեանը, ու անոնց մեծերը իբր այդ գայն յարգեցին ու խօսեցան անոր հետ: Օրէնսագետ, հողատեր, հօտերրու եւ արօտներու տէր Կեօքտերէլեանը, այդ ազնուական յեղափոխականը, «Չէյխ» անուանումէն երբեք չազդուեցաւ, ընդհակառակն պատիւ նկատեց այդ անուանումը եւ աղանդամուլի մը հպարտութիւնով գայն պահեց աւելի վերջն ալ՝ հայկական շրջանակներու մէջ եւ: Իր հսկայ հասակէն անկախ, փառաւոր եւ այլեխառն մօրուքին չափ տալով՝ ներքին գոհունակութիւն մը կը զգար ան, ու յաճախ, կուրծք լեցնող շունչ մը քաշելով, խղճի պարտքը կատարած մարդու մը երանութիւնը կ'ունենար: Չէ՞ որ Կիլիկեան ընտրանիէն եղող այդ մարդը, երբեմնի սարսափազդու հայ ֆետային, «Չէյխ» դառնալով՝ յեղափոխականի իր ճամբէն ու անոր սրբազան նպատակէն շեղած չէր երբեք, եւ իր այդ քայլով անգամ մըն ալ անձը վտանգած ու իր ցեղին տասնեակ հազար խլեակները փրկած էր: Իր մարմնոյն ամէն կողմը ծակծկող ու ալցօղը գնդակի ու դանակի սպիները, իր գոհաբերութեան չափանիշին կարկառուն փաստերն էին: Ու բանտերէն, կախաղաններէն եւ ջարդերէն աննկուն ու անվիատ, տասնեակ տարիներով հաւատարիմ երկիրաճութիւնով մը գաղափարին ու անոր յաղթանակին ծառայող այդ ընտրեալին համար նորութիւն մը չէր, երբ այս անգամ ալ հարկ եղաւ «Չէյխ»ի մականը ձեռք առնել: Պաշտօնը նոյնն էր, եւ որքան հպարտ էր ան, որ այս անգամ ալ առիթը կը տրուէր իրեն, իր քարոզչական նուիրական գործը կատարելու, ցեղին հունէն դարերով բաժնուած ճիւղերու մէջ, ուր կ'երթար ցանելու սերմերը՝ հայ պատմութեան, քաղաքական տեսիլքին եւ մարդկային իրաւունքներու գիտակցութեան: Իբր օրէնսագետ, իր գործի առօրեայ կեանքին մէջ շատ անգամներ շփում ու յարաբերութիւն ունեցած հարեան այդ լեռնականներուն հետ, ուսումնասիրած եւ քաջածանօթ էր անոնց բարբերուն, հաւատալիքներուն, պատմութեան եւ լեզուին: Իր այս առաքելութեան մէջ, ան անճանաչելի Չէյխ մը դարձած էր, այնքան իսկատիպ ու հարազատ, որ իր ճամբու ընթացքին շատ անգամ կասկածելի թուելով, հետապնդուած բայց ոչ մէկ պաշտօնեայ կարող չեղաւ դպչիլ անոր: «Անգամ մը յաջողիմ Սինճարի դռները բանալ հայ տարագրութեան առջեւ, անկէ ետք թող մենիմ», ըսած էր ան իր հրաժեշտի խօսքերուն մէջ, երբ մեկնած էր Գլուխէն»<sup>177</sup>:

«Տասնեակ հազարաւոր հայեր Սինճար ապաստանեցան եւ վայելեցին Գնոյէ Շարոյի եւ Շէյխ Իսմայիլի ասպնջականութիւնը: Ատիկա «Շէյխիւ Արմեն»՝ Կեօքտերէլեանի շնորհիւ էր...: Գայաստանի եզտի քիւրտերուն դրկած Շէյխ Իսմայիլի կոնդակը, որ Գայաստան դրկուեցաւ Գ. Գանրապետութեան Իրաքի ներկայացուցիչ

Արսէն Կիտուրի միջոցով, զօրեղապէս ամրացուց այդ կապը եւ դիրացուց Սինճարէն Գայաստան ապաստանող խլեակներուն փախուստը (1917-էն սկսեալ)»<sup>178</sup>: Միւս կողմէ «Ազգէ Տաղի տերիչին (Ս. Կեօզիւրեան - Ե. Ե.) ձեռքով ազատագրուածները նոյնպէս Սինճարի լեռնային ճամբով կը հասնէին Մուսուլ եւ անկէ Պաղտատ՝ միանալու Պաքոպայի վրաններուն տակ ապաստանած հայութեան: Անոնք Պաղտատի մէջ իրենց նախնական խնամքը կը ստանային Գայոց Եկեղեցիին բակը եւ կը տեղաւորուէին հայրենասեր պաղտատցիներու տուները»<sup>179</sup>:

«Նուիրուածներու խումբ»ին կողքին կը ստեղծուի նաեւ «Սեւ Թաթ» թռուցիկ խումբը: Ասոր պարտականութիւնն էր մէջտեղէն վերացնել իրենց վայրագութեամբ առաւել աչքի ինկած թուրք պաշտօնեաներն ու իսլամութիւն ընդունած հայ լրտեսները, որոնք իրենց մորթապաշտութեան պատճառով երբեմն աւելի վայրագ էին քան թուրք պաշտօնեաները<sup>180</sup>: «Սեւ Թաթ»ի գործունեայ անդամներէն կ'ըլլան Ս. Կեօզիւրեան (որ ապագային կը կազմակերպէ նաեւ դաւաճան Արթիւր Եասեանի ահաբեկումը), շարքի Աւշար (Գրիգոր Թաթուլեան), ուրֆացի Մարտո (Մարտիրոս), հաճընցի Թորոս Ըրէրճեան, ատանացի Արամ Պերպերեան, մարաշցի Սարգիս Սերայարեան, տիգրանակերտցի Թաթոս, եւայլն: «Սեւ Թաթ»ի գործելանքը կ'ըլլայ աչքերէ հեռու վայրի մը մէջ, բառիս իսկական իմաստով վերացնել, անհետացնել պաշտօնեան կամ լրտեսը, որովհետեւ դիակին բացայայտումը կրնար իր շուրջ աղմուկ բարձրացնել եւ գործի յետագայ ընթացքը խոչընդոտել: «Սեւ Թաթ»ը նաեւ իր անուսով սպառնազիրներ կը դրկէ իրենց չարագործութիւններով հռչակ ստացած ոստիկաններուն եւ պաշտօնեաներուն:

Չինադարաբէն ետք Կ. Կեօքտերէլեան կը գործէ աւելի համարձակ եւ հրապարակային: Անոր նախաձեռնութեամբ 1918 Նոյեմբերին Դամասկոսի մէջ տեղի կ'ունենայ կիլիկեցիներու ընդհանուր ժողով: Սա, կիլիկեցիները համախմբելու եւ անոնց տունդարձը կազմակերպելու առաջին լուրջ փորձն էր: Ժողովը կ'ընտրէ գործադիր յանձնախումբ մը Անդրանիկ Կելճեանի նախագահութեամբ, որուն մաս կը կազմէ Կ. Կեօքտերէլեան: Գործադիր յանձնախումբը կը կազմէ ենթայանձնախումբեր եւ կ'անցնի աշխոյժ եւ խտացեալ աշխատանքի: Սակայն, Կ. Կեօքտերէլեանի նպատակները այլ էին. «Կեօքտերէլեան ընդհանուր խորհրդակցութենէ աւելի իր սեւեռեալ գաղափարը ունի, որուն յաջողութեամբ համար աւելի նիւթական աջակցութեան միայն պէտք ունի եւ յանձնախումբէն կ'անկնկալէ նիւթականին հայթայթումը միայն, որպէսզի իր զինեալ խումբով առաջինը ըլլայ Կիլիկիա (Ատանա) իր ծննդավայրը վերա-

դարձող: Անկէ տարբեր հայեցակէտ չունի, եւ կարծես իրեն համար ատկէ տարբեր ալ պարտաւորութիւն եւ գոյութեան իրաւունք չի կրնար ունենալ այս մեր յանձնախումբը»<sup>[27]</sup>:

1919-ին Կ.Կօքստերէլեան կը մեկնի Ատանա, ուր իր ընկերոջ Կ. Չալեանի հետ կը բանայ փաստաբանական գրասենեակ մը: Իր անձնական գործին կողքին ան ամբողջութեամբ կը նուիրուի ազգային-հասարակական կեանքին: Այդ շրջանին նուիրուած պատմական շատ մը էջերու մէջ կը հանդիպինք Կ.Կօքստերէլեանի անուն: Ան, այդ շրջանին յաճախակի կազմակերպուող հանդէսներուն եւ ժողովրդային հաւաքներուն մէջ կ'երեւայ որպէս բեմբասաց եւ հրետոր<sup>[28]</sup>: Մաս կը կազմէ եւ կ'ատենապետէ միջ-կուսակցական ժողովը<sup>[29]</sup>: Չեկուցաբերի հանգամանքով կը մասնակցի ՄՂԿԿ Կիլիկիոյ շրջանի պատգամաւորական ժողովին<sup>[30]</sup>: Աւելի ուշ, Զանոյ անկումէն ետք, կ'ըլլայ առաջիններէն, որ օգնութիւն կը փութացնէ երկար թափառումներէ ետք Ատանա հասած հաճընցի խլեակներուն<sup>[31]</sup>: Կ'ընտրուի ազգային-քաղաքական ժողովի ատենապետ եւ կը հետապնդէ Առաջնորդարանի կալուածային հարցերը<sup>[32]</sup>:

Այդ շրջանին Կ.Կօքստերէլեանի գործունեութեան բարձրակէտը կը հանդիսանայ, յառաջացեալ տարիքին 100 հոգինոց կամաւորական գունդի մը կազմութիւնը եւ իր առաջնորդութեամբ պաշարուած Զանոյ օգնութեան երթալու համարձակութիւնը: Այս կապակցութեամբ, արշաւախումբին յառաջապահը եղող «Առիւծ» խումբի խմբապետ Գ.Թաթուլեան իր հրամանատարին մասին կը գրէ. «Կարապետ Կօքստերէլեան այդ օրերուն 75 անց, ճեփ-ճերմակ երկար մօրուքով ծերունի մըն էր, միաժամանակ մեծ եւ յայտնի իրաւաբան մը, կը պահէր իր կորովը եւ անխախտ ու անսայթաք հաւատք ուներ իր բազմաչարչար ազգին հանդէպ: Այս սուկայ հերոսը պաշտամունք ուներ իր ազգին գաւակներուն ու հայրենիքին: Կատարեալ անբասիր հայ մարդ, այդ տարիքին մէջ, արիւմարիւրով մահը, ամէն ինչ այք առած, կ'ուզէր անպայման օգնութեան հասնիլ Զանոյ հերոս ժողովուրդին»<sup>[33]</sup>: Ու ճիշդ այս բարոյական կերպարը ընդգծելու համար է որ «Երիտասարդ Զայաստան», Կիլիկիոյ անցքերուն նուիրուած իր յաւելածին մէջ, Կ.Կօքստերէլեանի մասին կը գրէ. «Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան երկաթէ անողոք պայքարը մարմնացնող, փառաւոր լաւագար ծերունի, որու ամենավերջին լուսանկարը անհուն հրճուանքով լոյս կ'ընծայէք «Երիտասարդ Զայաստան»ի ներկայ թուով, օրինակ հանդիսանալու համար կարգ մը այն քծնող, վախկոտ հայերուն, որոնք պէտք է յիշեն միշտ այս պատուական ընկերը, որ

Կիլիկիոյ շրջանի կամաւորական երկրորդ գնդին հրամանատարութիւնը ստանձնած է այդ հասակին մէջ»<sup>[34]</sup>:

Կամաւորական այս խումբը Զանոյ չի հասնիր: Ճամբան բախում կ'ունենայ իրմէ գերակշիռ եւ դիրքաւորուած թրջական բանակին հետ եւ չորս վիրաւոր տալով կը վերադառնայ Սիս ու կը միանայ Սարգիս Արմաղանեանի գլխաւորած կամաւորական գունդին: Այս գունդն ալ մետասաներորդ ժամուն կը զինաթափուի ֆրանսական բանակին կողմէ ու Զանոյ կը մնայ անօգնական: Կ.Կօքստերէլեանի այս նահանջը եւ չափազանցուած ձեւերով կը ներկայացուի թուրք պատմագիրներու կողմէ, որոնցմէ Մուստաֆա Օնար կը գրէ. «Այս հարցէն տեղեակ եղող Օմար Լութֆի, Գատըրլիի մէջ, Կօքստերէլեանին 600 հայերով Սարտ 21-ին Գոզակին օգնութեան գալու մասին կը տեղեկանայ: Ան, իր հետ ունենալով Չոքաքի կառավարիչ Չեքի պէյը եւ Չերքեզ Սեմի պէյը, Գատըրլիէն իր հետ բաւարար զօրք առնելով, Կօքստերէլեանի ճամբան կորելու կ'երթայ, ու այդ մասին կը գրէ. - Այս քաջերը անմիջապէս շարժման մէջ կը դրուին եւ Թումուի բերդը իրենց կեդրոնատեղի ունենալով եկող թշնամիին կը սպասեն: Յաջորդ օրը, Կօքստերէլեանի հետերդրները, աչ ու ձախ կրակելով կ'երեւին: Իրենց սպասող ազգային բանակի քաջարի զինուորները, ամէն մէկը մոնչացող առիւծի մը պէս, թշնամիին վրայ կը յարձակին: Կօքստերէլեանի Գատըրլի զօրքը, այս յանկարծական աղետին դիմաց կը շուարի եւ փախուստէ գատ ուրիշ բանի մասին չի մտածեր: Ան Սիս (Գոզան) կը փախչի, իսկ իրեն ընկերացող ազոանները (sic!), ամէն մէկը մէկ կողմ: Այսպիսով, մեր քաջերը, երես դարձուցած եւ փախուստ տուող թշնամիին իրենց առջեւ առած կը հալածեն: Մեծ թիւով զոհեր խլելէ ետք, ձերբակալուածները ապահով տեղ մը կը բանտարկեն. 113-ն ալ գետին կը փռեն»<sup>[35]</sup>:

Կ. Կօքստերէլեան կեանքի մայրամուտին կը տեսնէ իր սիրած Կիլիկիոյ հայաթափումը: Սրտաբեկ՝ իր ժողովուրդին հետ կը դառնայ աստանդական: «Կիլիկիահայ արտագաղթով Պէրլուք անցաւ, հոն ալ ժողովուրդին շահը պաշտպանելուն համար ֆրանսացիներու կողմէ աքսորուեցաւ Զապէշխատան»<sup>[36]</sup>:

Կ. Կօքստերէլեան փոթորկոտ կեանքէ մը ետք, 1928-ին Եթովպիոյ մէջ սուրիկ-փուսիկ կը հեռանայ այս կեանքէն: Փոթորիկը կը խաղաղի:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆ

- [1] «Յիսամբակ ՍԴ Յնչակեան Կուսակցութեան», Փրովիտես, 1938, էջ 261:  
[2] Բարթողոմէոս Թագաճեան, «Ինքնակենսագրութիւն Բարթողոմէոս Ծ. Վրդ. Թագաճեանի», Երուսաղէմ, 1933, էջ 102-104:  
[3] Պետրոս Տեփոյեան, «Միհրան Տամատեան», Պէյրութ, 1964, էջ 38:  
[4] «Յնչակ», 1892 Յունիս 3:  
[5] «Յնչակ», 1892 Յունիս 16. Կիլիկեցի «Նամակ Կիլիկիայէն»:  
[6] Յ.Ճանկիլեան, «Յիշատակներ Յայկական Ճգնաժամէն», Պէյրութ, էջ 413:  
[7] «Երիտասարդ Յայաստան», 1952 Յունիս 10:  
[8] Բիւզանդ Եղիայեան, «Ատանայի Յայոց Պատմութիւն», Անթիլիաս, 2012, էջ 301:  
[9] Յակոբ Թերզեան, «Կիլիկիոյ Աղետը», Պէյրութ, 1964, էջ 686:  
[10] «Բիւզանդիոն», 1909, Մայիս 13/26. «Ատանայի Աղետին Առթիւ Նոր Զրպարտութիւններ»:  
[11] Ա.Ատոսիտիս (թարգմ. Էմմա Ազարիկեան), «Յայերը եւ Երիտասարդ Թուրքերը - Կիլիկիոյ Կոտորածները», Յալէպ, 2009, էջ 85:  
[12] Յ. Թերզեան, էջ 322:  
[13] Նոյն, էջ 333:  
[14] Նոյն, էջ 618 եւ 632:  
[15] Յակոբ Պողոսեան, «Յաճընի Ընդհանուր Պատմութիւնը», Լոս Անճելոս, 1942, էջ 577:  
[16] Առաքել Զէչեան, «Կարմիր Դրուագներ Յերոսներու Կեանքէն, 1915-1918», Պէյրութ, 1956, էջ 133:  
[17] Նոյն, էջ 140-141:  
[18] Ա. Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Յնչակեան Կուսակցութեան», Ա.հտ., Պէյրութ, 1962, էջ 457:  
[19] Նոյն, էջ 458:  
[20] Գ.Թաթուլեան, «Անթեղուած Գաղտնիքներ», Պէյրութ, 1967, էջ 162-227:  
[21] Անդրանիկ Կենճեան, «Յայածականի Յուշեր», Պէյրութ, 1964, էջ 164:  
[22] Անդրանիկ Կենճեան, «ՍԴ Յնչակեան Կուսակցութիւնը եւ Կիլիկիոյ Ինքնավարութեան Աքթը», Պէյրութ, 1958, էջ 53, 303 եւ 312:  
[23] Նոյն, էջ 68:  
[24] Նոյն, էջ 271:  
[25] Նոյն, էջ 268. Նաեւ Մեսրոպ Շիբրտեան, «Մոռցուած Դեպքեր եւ Դեմքեր Յաճնոյ 1920-ի Յերոսամարտէն», Նիկոսիա, 1974, էջ 100:  
[26] Բիւզանդ Եղիայեան, ..., էջ 687-688:  
[27] Գ.Թաթուլեան, ... էջ 281:  
[28] «Երիտասարդ Յայաստան», 1920 Յուլիս 16:  
[29] Moustafa Onar, «Saimbeyli», 2-ci basım, Adana, 2002, p.245:  
[30] Ասատուր Սաչեան, «Դրուագներ Յաճնոյ Յերոսամարտէն եւ Յերոսի Արդիականը», Պէյրութ, 1961, էջ 288:

## ՅԱԿՈԲ ՂԱԶԱՐԵԱՆ (ԼԱԶՕ)

ՍԴ Յնչակեան Կուսակցութեան գաղափարապաշտ նուիրեալներէն է Լազօ:

Լազօ ծնած է Պայազիտ, 1869-ին:

Կանուխէն կը կորսնցնէ հայրը: 1877-ի ռուս-թրքական պատերազմին, երբ ռուսական զօրքը կը հեռանայ Պայազիտէն, Լազօ իր մօր եւ քրոջ հետ կը բռնէ գաղթականութեան ճամբան դէպի Երեւան, ապա Կարս եւ վերջնականապէս Թիֆլիս, ուր կը ստանայ իր կրթութիւնը:

Երբ 1892-ի վերջաւորութեան Մեծն Մուրատ եւ Ալիզնացի Լեւոն Կովկաս կ'երթան Սասնոյ ապստամբութեան օժանդակութիւն ապահովելու համար, կը հանդիպին հնչակեան պատասխանատուներու հետ: Այս նպատակով տեղի կ'ունենայ ժողով, որուն կը մասնակցին Ղազարոս Աղայեան, Շիրվանզադէ, Ատրպետ, Սարգիս Աղամիրզեան, Սամարցեան, Խաչիկ Վարդանեան, Երուանդ Մինասեան եւ Լազօ: Այս ժողովն ալ կը դառնայ ՍԴԿԿ Թիֆլիսի վարչութիւնը:

Յաւանաբար այդ շրջանին Թիֆլիսի մէջ Լազօ կը զբաղի տպագրական գործով, որովհետեւ Ատրպետ իր յուշերուն մէջ կը գրէ. «Այդ տրամայի մի բաժինը, «Սարրաֆ» վերնագրով հրատարակեցի 1893 թ.ին, որը շարեք իմ սրտակից Յակոբ Ղազարեան-Լազօն»<sup>1</sup>:



1893 Օգոստոսին, Լազո իր տիկնոջ Օլինկայի եւ ընկերոջ՝ Մոզպետի (Մելքոն Ասիլբեկեան) հետ կը տեղափոխուին Թարիզ եւ կարճ շրջան մը կ'իջեւանեն Ատրպետի ընդարձակ տունը: Այդ մասին Ատրպետ կը գրէ. «*Դեռ երկու ամիս էլ չէր անցել, որ Թարիզ եկան իմ սիրելի ընկերները Լազոս եւ կինը Օլինկան, որոնց ընկերակցել էր Մելքոն Ասիլբեկեանը, Թարիզի Կարս թաղում ուսուցչութեամբ պարապելու: Լազոս այնպիսի մոլեռանդ կուսակցական է, որ մինչեւ մահը հնչակեան գաղափարից չի անջատուել, նոյնպէս կինը Օլինկան: Ձերմ հնչակեան է նոյնպէս Ասիլբեկեանը, որ մինչեւ օրս շարքերում եռանդուն գործիչ է: Գրեթէ մի ամիս ինձ մօտ ապրեցան մինչեւ տուն վարձեցինք, իսկ նրանից յետոյ, ամբողջ տարին միասին էինք գործում, օր չէր անցնում որ իրար տուն չյաճախէինք կամ որեւէ գիշեր առանց ժողովի չէինք կարող ապրել»<sup>62</sup>:*

Այդ ժողովներուն որպէս արդիւնք, Թարիզի հնչակեան մասնաճիւղը (կազմուած 1891-ին) նոր թափ կը ստանայ: Մասնաճիւղի առաջին գործերէն կ'ըլլայ ամուր եւ վստահելի կապ ստեղծել Վանի հետ: Այդ կապին ստեղծումէն ետք Թարիզի ընկերներուն նիւթական գոհողութիւններուն եւ աշխատանքին շնորհիւ Թրքահայաստան կ'անցնին (կամ կը փորձեն անցնիլ) Արթիւրի (Օհանջանեան), Մոզպետի, Մարտիկի (Մարուխանեան), Նազարէթ Լուսիկեանի, Յովակ Սարկլանագի եւ այլոց ֆետայական խումբերը:

Որոշ ժամանակ անց Լազո կը տեղափոխուի Ռաշտ, ուր ուսուցչութեան կողքին կը շարունակէ տանիլ կուսակցական-կազմակերպչական գործունեութիւն:

1896 Սեպտեմբերին, Փարիզի մէջ կը մասնակցի Յնչակեան Կուսակցութեան Ա. Համագումարին, որպէս պատգամաւոր Պարսկաստանի (Թարիզ, Արտապիլ, Ղազուին, Ռաշտ) եւ Թիֆլիսի մասնաճիւղերուն<sup>63</sup>: Համագումարին, Լազո կը դիրքորոշուի «Վերակազմեալ» շարժման դէմ: Համագումարէն ծնած Կեդրոնական Վարչութիւնը իր Ա. նիստին Լազոս կը նշանակէ Պարսկաստանի շրջանի լիազօր ներկայացուցիչ<sup>64</sup>:

Շրջան մը Պարսկաստան մնալէ ետք, կը հրաժարի այդ պարտականութենէ եւ կը հաստատուի Թիֆլիս. կը շարունակէ իր կուսակցական-հասարակական գործունեութիւնը: Կ'աշխատակցի «Մշակ», «Խաթաբալա», «Աղբիւր» թերթերուն: 1903-ին հայ եկեղեցապատկան գոյքերու բռնագրաւման ցարական որոշման դէմ ընդդիմութեան եւ Թիֆլիսի մէջ Կովկասի փոխարքայ իշխան Գոլիցինի դէմ կատարուած ահաբեկչութեան պատճառով, Յնչակեան Կուսակցութիւնը կը դառնայ ցարիզմի խիստ եւ ուղղակի հալածանքին ենթակայ: Կուսակցական կեանքը Թիֆլիսի մէջ կը կաղայ: Կարիքը կը

զգացուի նոր, ժամանակաւոր եւ նշանակովի վարչութեան մը ստեղծման (բազմամարդ ժողովներ կատարելը դարձած էր անհնար): Այդ գործը իր վրայ կը վերցնէ հնչակեան յայտնի գործիչ, այդ շրջանին Ռիկայի համալսարանէն տակաւին նորաւարտ Վահան Մարսեան (Ղուկասեան): Ան, այս նպատակին համար կ'ունենայ խորհրդակցութիւններ, որոնց ընթացքին կը պարզէ, թէ հնչակեան բանուորական շրջանակները վերապահ են Լազոյի թեկնածութեան, զայն նկատելով «ազգայնական թեքումներ ունեցող եւ դասակարգային պայքարով չհետաքրքրուող մէկը»: «*Դա ինձ ես յայտնի էր, - կը գրէ Վ.Մարսեան ու կ'աւելցնէ. - բայց նկատի ունենալով, որ տաճկահայ բանուորների որոշ մասը սիրում էր Լազոյին եւ նա նրանց շրջանում մեծ հեղինակութիւն էր վայելում...»<sup>65</sup>, նպատակայարմար կը նկատուի իր Լազո շարունակէ իր վարչական պարտաւորութիւնները: Ան, գործիչի հանգամանքով կ'այցելէ Պաթում եւ Սեւ ծովու այլ քաղաքներ:*

1905-ի հայ-թաթարական կռիւներուն, Լազո որպէս «գինուորական խորհուրդ»ի անդամ, կը ղեկավարէ հայաքնակ թաղամասերու՝ յատկապէս Սոլուլակ փողոցի պաշտպանութեան լծուած հնչակեան զինեալ խումբերը: Նոյն տարին տեղի կ'ունենայ Նաեւ Ռուսական Ա. Յեղափոխութիւնը: Այդ շրջանին Լազո, Թիֆլիսի քաղաքական եւ ապահովական վիճակի մասին, Լ.Լազեան գրչաւնումով, դէպքերուն մասնակիցի վկայութիւններով կ'աշխատակցի «Արշալոյս» օրաթերթին, որոնք կ'արտատպուին արտասահմանի հնչակեան մամուլին կողմէ:

1905 Սեպտեմբերին Փարիզի մէջ կը մասնակցի ՍԴԿԵ Ե. Համագումարին: Ժողովը կը քննարկէ Կուսակցութեան նոր ծրագրին նախագիծը, որուն համաձայն Կուսակցութիւնը պետք է բաժնուէր երկու ինքնուրոյն բաժիններու. Անդրկովկասի եւ Ռուսաստանի մասնաճիւղերը պետք է նուիրուէին միայն սոցիալիստական պայքարին, ընդհուպ անոնց վերջնական միացումը ՌՄԴԿ-ին: Իսկ հայկական հարցի հետապնդումը պետք է ըլլար միայն արեւմտահայութեան հարցը: Համագումարի ընթացքին այս տեսակետը կը պաշտպանէին Կուսակցութեան մէջ այնպիսի եղիտակաւոր դէմքեր, ինչպիսիք էին Աւետիս Նազարբեկեան, Ռուբեն Խանազատ, Յրահատ-Կամսար (Գրիգոր Վարդանեան), Աիրիման (Սարգիս Զալաշեան) եւ այլն: Նոր նախագիծին հակադրուողները կ'ուզէին պահել կուսակցութեան մէկութիւնն ու միասնականութիւնը՝ գործող ծրագրին մօտաւոր եւ հեռաւոր նպատակներուն հիման վրայ: «*Հակառակ հոսանքի գաղափարախօսը Լազոս էր*»<sup>66</sup>, կը գրէ Ռ. Խանազատ իր յուշերուն մէջ: Գրիգոր Եղիկեան, քիչ մը ընդար-

ծակելով Ռ.Խանազատի այս հաստատումը, կը գրե թե Ե. Զամագումարին Կուսակցութիւնը միասնական պահելու կողմակիցներու «գլխին կանգնած էին Թուրքիայի գրեթէ բոլոր մասնաճիւղերի վստահութիւնը եւ կուսակցութեան բոլոր շրջաններում մեծ ժողովրդականութիւն վայելող Արամ (Ալըզպաշեան) եւ Պարսկաստանում եւ Սեւ Ծովի ափերում ժողովրդականութիւն վայելող Յակոբ Ղազարեանը, երկուսն էլ թէեւ ոչ այնքան պատրաստուած, ինչպէս իրենց դէմ պայքարողները, բայց աւելի փորձառու նրանցից»<sup>71</sup>: Զամագումարը, ձայներու նուազագոյն տարբերութեամբ, կը պահէ Կուսակցութեան միասնականութիւնը:

Զամագումարէն ետք, սոր նախագիծի հեղինակները Կուսակցութեան մէջ կը փորձեն հերձուած ստեղծել: Անոնք իրենց տեսակետները պաշտպանող յայտարարութեամբ մը կը դիմեն շարքին ու այդ կապակցութեամբ կը սկսին քարոզչութիւն կատարել: Լազո կ'ըլլայ այդ շարժման դէմ հակադրուող կարեւոր գործիչներէն մին: Ան, իր հակաքարոզչութիւնը կը սկսի երբ տակաւին կը գտնուէր Երուպա: Օրինակի համար, համագումարէն անմիջապէս ետք, ան որպէս «Կովկասեան պատշաճամուր եւ շրջիկ լիազօր Կեդրոնական Վարչութեան» ներկայ կ'ըլլայ Ռուսանիոյ Շումլա քաղաքի ՍՂԻԿ վարչութեան ժողովին: «Վարչութիւնս մի բանախօսութիւն կազմած լինելով տեղւոյս ազգային դպրոցի դահլիճում, հրաւիրեց ընկեր Լազոյին մի ատենախօսութեամբ բացատրել ներկայ հայկական շարժումները: Ընկեր Լազոն ընդունելով մեր առաջարկը, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ մանրամասն բացատրեց յեղափոխական շարժումները, պատմական բոլոր մանրամասնութիւններով, կանգ առնելով Զնչակեան Կուսակցութեան անցեալ եւ ներկայ գործունէութեան վրայ, բացատրեց ծրագիրն ու անցեալ եւ ներկայ դակդիկան»<sup>72</sup>: Դարձեալ համագումարէն անմիջապէս ետք, երբ Ռ.Խանազատ եւ Գ.Վարդանեան ծովու ճամբով կը հասնին Պաթում, քարոզչութեան նպատակով փափաք կը յայտնեն հանդիպիլ ինչպէս շարքին հետ. սակայն, անոնք իրենց դէմ կը գտնեն դիրքորոշուած եւ նախատրամադրուած շարք մը, որովհետեւ մինչ այդ Լազոն անցած էր այդտեղէն: Լազո քարոզչական իր այս աշխատանքը կը շարունակէ Թիֆլիսի, Պաքուի եւ այլ վայրերու մէջ՝ խափանելով ՍՂԻԿ-ը ՌՍԴԲԿ-ի մէջ լուծարելու փորձը:

1906 Մարտ-Ապրիլ ամիսներուն, երբ փորձ կ'ըլլայ հայ-թաթարական բախումներուն կրօնական դիմագիծ տ'ըլլայ, ՍՂ Զնչակեան Կուսակցութիւնը կը հրատարակէ Լազոյի գրչին պատկանող քրտերէն լեզուով երկու թռուցիկներ, որոնք իրենց դրական ազդեցութիւնը կ'ունենան քիւրտ զանգուածին վրայ:

Քանի մը ամիս յետոյ Լազո կը տեղափոխուի Պաթում, կ'աշխատի Մանթաշեանի նաւթարդիւնաբերական ընկերութեան մէջ եւ կազմակերպչական միելնոյն աշխատանքները կը տանի նաեւ հոն<sup>73</sup>: «Շուա ժամանակ մը, որ Պաթումի ինչպէս բանուոր ընկերներու թիւը հասաւ 3000-ի: Պաթումի մասնաճիւղին յաճախ այցելութեան կ'երթար ընկ. Յակոբ Ղազարեանը, մեր շատ սիրուած ու յարգուած մտաւորականներէն, որու մասին արժէ որ առանձին յօդուածով մը արտայայտուիլք»<sup>74</sup>:

Օսմ. Սահմանադրութենէն անմիջապէս ետք Լազո կը մեկնի Կ.Պոլիս: Այդ շրջանին, հայ կուսակցութիւնները յաճախակի կը կազմակերպէին քաղաքական դասախօսութիւններ՝ բան մը որ նորութիւն էր պոլսահայ կեանքին համար: Լազո կ'ըլլայ ինչպէս կարեւոր դասախօսներէն մէկը: Այս մասին «Սուրհանդակ» կը գրէ. «Վերջին ատենախօսն էր ընկ. Լազեան, որ կովկասեան գուարթախուհութիւններով՝ նկարագրեց կովկասեան սահմանադրութեան մէջ ծագած փորձութիւնները, ժողովուրդին մաքառումները՝ ծագած խոչընդոտներուն ու անարդարութիւններուն դէմ, ռուսական քաղաքականութեան հայերը ընկճելու ոգին, Էջմիածնի գոյքերուն գրաւումը, որոնց ներկաները ունկնդրեցին զգացուած հետաքրքրութիւնով եւ գոյոյթով»<sup>75</sup>:

Ազգային-քաղաքական եւ հրապարակագրական գործունէութեան կողքին, Լազո կը գբաղի նաեւ գրականութեամբ: Ան լաւապէս կ'ըմբռնէ հայ եւ քիւրտ ժողովուրդներուն բարեկամական յարաբերութիւններուն անհրաժեշտութիւնը երկու ժողովուրդներուն ճակատագրին համար: Յանկալի յարաբերութիւն մը, որ յաճախ կը խեղդուէր տգիտութեան եւ նախապաշարումներու մէջ: Ռուսի, Լազո իր գրական աշխատանքներուն նպատակը կը դրածն այդ ծառայեցնել քիւրտ ժողովուրդի լուսաւորման: Զայտրէն եւ քրտերէն լեզուներով լոյս կը տեսնեն քիւրտ ժողովուրդի կենցաղը, սովորութիւնները եւ հայ-քիւրտ բարեկամութիւնը արտացոլող Լազոյի «Գուլէ» (1890), «Ֆերօ» (1892) պատմուածքները, «Խոնխոր» (1893) վէպը, «Եա Դաստ» (1904), «Թասիպ» (1899, Պայազիտցի ծածկանունով), «Քիւրտ ճամսի Պատմութիւնը» (1923) փրակները: 1921-ին Լազո կը կազմէ քրտերէն նոր այբուբէն ու կը հիւատարակէ «Շամս» այբբենարանը, որ կ'ունուցանուի Խորի. Զայաստանի դպրոցներուն մէջ: Լազոյի ստեղծագործութեան հիման վրայ 1926-ին կը նկարահանուի «Չարէ» ֆիլմը: Լազո «քրտերէն լեզուով գրել է մի փիւս «Մատանին» խորագրով, ինչպէս եւ «Աղջկայ Վարձքը» երկը»<sup>76</sup>: Զրատարակուած այս գործերուն կողքին, Զայաստանի գրականութեան եւ Արուեստի Թանգարանի մէջ պահուած կը մնայ Լազոյի

հարուստ արխիվը, որուն մէջ՝ «Չըրրի», «Սայրան», «Ասոն Ու Յասոն» պատմուածքները, «Պաստիլ», «Ղալան», «Ջափհարտ Աղլի» թատրերգութիւնները, «Եզտի ժողովուրդը Եւ Յուր Էպոսը» ուսումնասիրութիւնը, «Աուգթ», «Աբուգարտ Բըն Յալալ», «Գյուլէ հաթուն» եւ եզտիական բանահիւսութեան մշակուած այլ նմուշներ, «Ինդեր-նացիոնալ»ի քրտերէն թարգմանութիւնը, եայլն<sup>13</sup>: Քիւրտ մտաւորական Յաճիէ Ճնտին կը վկայէ, թէ «*Լազո մշակութային մեծ աշխատանք է կատարել քիւրտ ազգաբնակչութեան շրջանում*»<sup>14</sup>:

Համաշխարհային Ա. Պատերազմի եւ անոր յաջորդող տարիներուն, Լազո ամբողջապէս կը նուիրուի հայ ժողովուրդի գլխուն պայթած իրերայաջորդ արհաւիրքները դիմակայելու աշխատանքին:

1915 Ապրիլին, Թիֆլիսի մէջ կը մասնակցի ՄՂԿՎ Ռուսաստանի, Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերուն խորհրդածոյցին, որպէս Էնզելի մասնաճիւղի ներկայացուցիչ<sup>15</sup>: Չորրորդ խիստէն ետք Լազո կը նախագահէ խորհրդածոյցը: Համաշխարհային Պատերազմը ստեղծած էր նոր իրավիճակ, որուն դիմաց Կեդր. Վարչութիւնը չէր կրնար մէկտեղուիլ: Ձերբակալուած Փարամազին փոխարինող վարչութեան փոխանդամ Բ.Սինիք (Բագրատ Աւետեան) կը գտնուէր Կովկաս, Ս.Սապահ Գիլեան՝ Եգիպտոս (ապա ԱՄՆ), իսկ Բ.Վարազդատ (Յակոբ Թիւրպեան)՝ Փարիզ: Նամակագրութիւնը պատերազմին պատճառով կ'ուշանար եւ կը գտնուէր խիստ հսկողութեան տակ: Համագումարի մասին մտածելն անգամ աւելորդ էր: Այս պատճառներով խորհրդածոյցը կ'ընտրէ ղեկավար մարմին մը, որպէսզի ան Կեդր. Վարչութեան լիազօրութիւններով վարէ գործերը: Երկաթի (կըշակ Պապեան) եւ Ս.Տաշիրի (Սիմոն Յովսէփեան) կողքին մարմնի անդամ կ'ընտրուի Լազո: Կարճ ժամանակ մը անց այս մարմնին վրայ կ'աւելնայ Վահան Մարսեան ու այդ որպէս Կեդր. Վարչութիւն կը գործէ մինչեւ 1924՝ կուսակցութեան Ը. Համագումարը:

Լազո մաս կը կազմէ նաեւ Կեդր. Վարչութեան կից «գիւտարական մարմին», որուն գլխաւոր պարտականութիւնն էր կազմակերպել կամաւորական աշխատանքները: Ան մեծ ներդրում կ'ունենայ կամաւորական Չ. գունդի կազմաւորման մէջ: Ինք եւս անձնապէս կը մասնակցի Չ. գունդի գործունէութեան, կը գտնուի ճակատային առաջին գիծերուն վրայ, կ'ոգեւորէ կամաւորները եւ ականատեսի վկայութեամբ ճակատային թարմ լուրերով կ'աշխատակցի «Գաղափար»ին՝ որուն խմբագրական կազմին մաս կը կազմէր:

Ցաջորդող տարիներուն, Լազո աշխոյժ մասնակցութիւն կը բերէ

ազգային-քաղաքական կեանքին: 1916 Մայիսին, որպէս կամաւորական Չ. գունդի ներկայացուցիչ, Փետրուկատի մէջ կը մասնակցի Յայկական Համագումարին: 1917 Մայիսին, Երեւանի մէջ կը մասնակցի Արեւմտահայերու Ա. Համագումարին եւ մաս կը կազմէ համագումարի խմբագրական յանձնախումբին: 1917 Սեպտեմբերին, Թիֆլիսի մէջ կը մասնակցի Յայ Ազգային Համախորհրդակցութեան<sup>16</sup>: Նոյն տարին, Թիֆլիսի մէջ, Վ.Մարսեանի հետ կը խմբագրէ «Սոցիալ Դեմոկրատ» պարբերաթերթը<sup>17</sup>:

1917-ի Փետրուարեան Յեղափոխութենէն ետք, ՄՂԿՎ-ը Ռուսաստանի տարածքին կը գործէ օրինական պայմաններու տակ եւ առաջին հերթին, անոր նախաձեռնութեամբ շատ մը քաղաքներու մէջ տեղի կ'ունենան ցարիզմի տապալումը ողջունող ժողովրդային հաւաքներ: Թիֆլիսի մէջ տեղի ունեցած այդպիսի հաւաքի մը ընթացքին, որուն գլխաւոր բանախօսը կ'ըլլայ Լազո, ներկաները իրենց համամտութիւնը կը յայտնեն հինգ կետերէ բաղկացած Յայտարարութեան մը, ուրուն երկրորդ կետին մէջ կը պահանջուէր «ազգային ինքնորոշման» իրաւունք<sup>18</sup>: Այս բանաձեւով, արդէն իսկ կ'ուրուագծուէր նոր պայմաններու տակ ՄՂԿՎ-ի քաղաքական ծրագիրը: Եւ իրօք, նոյն տարուան Յունիսին, Թիֆլիսի մէջ կայացած ՄՂԿՎ Ռուսաստանի, Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերու խորհրդածոյցը, որուն Լազո կը մասնակցի Կեդր. Վարչութեան անդամի հանգամանքով, դէմ կ'արտայայտուի Լենինի գլխաւորած պոլշեիկեան քաղաքականութեան եւ իր համախոհութիւնը կը յայտնէ պուրժուա-դեմոկրատական վարչաձեւին<sup>19</sup>: Լազո կը դառնայ քաղաքական այս արեւելումին հաւատացողն ու ջերմ պաշտպանը:

1921 Փետրուար 25-ին, Սիմոն Վրացեանի գլխաւորած «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ»ի իշխանութեան օրերուն, երբ տակաւին կարմիր պոլշեիկի ջղամիդը հագած քեմալական Թուրքիան Ալեքսանդրապոլի նահանգը գրաւած կը պահէր, Երեւանի մէջ կը կազմուի Միջ-կուսակցական Խորհուրդ, որուն մաս կը կազմեն ՅՅԳ, ՄՂԿՎ, Յայ ժողովրդական, ՄԴ Բանտորական, Սահմանադիր Ռամկավար եւ Սոցիալիստ Յեղափոխական կուսակցութիւնները: Խորհուրդին նախագահ կ'ընտրուի Բախշի Իշխանեան, իսկ քարտուղար՝ Լազո: Խորհուրդը կ'ունենայ երկու բաժանմունք. «*առաջինը պէտք է զբաղուի գործող բանակի համար պարեն ժողովելով եւ հայթայթելով, երկրորդ սեկցիան ժողովրդի եռանդը վառ պահելու համար՝ լայն փրօփականտա եւ ազիտացիա մղելով*»<sup>20</sup>:

Լազոյի այս քայլը ապագային խիստ կերպով կը քննադատուի Հայաստանի պոլշեիկներուն կողմէ, որոնց մէջ Կոմկուսի քարտու-

դար, պատմաբան Աշոտ Յովհաննեսեան կը գտնէ, թէ «Փետրուարեան հակայեղափոխութեան օրերին՝ Երեւանի հնչակեանները հաւատարիմ հպատակութիւն են յայտնել Ս.Վրացեանին»: Ստեփան Սապահ Գիւլեան կ'ընդվզի այս գնահատականին դէմ ու կը գրէ. «Փետրուարեան հակայեղափոխութեան օրերին՝ ընկ. Լազօն, քրտերի այդ լուսաւորիչը, նրանց դպրոցների վարիչը, իր կրթական գործը շարունակեց, չփախաւ: Այս է, որ քարտուղարը, ուռեցնում, «լուս ուղտ է դարձնում», մասնաւորը ընդհանրացնում: Երբ զօր-զօրական չկայ, մարտական ոյժը դուրս է եկել զծից, տիրել է պարտութիւնը... ծերունի Լազօն ի՞նչ պիտի աներ: Հիմա ճակատ ճակատի: «Փետրուարեան հակայեղափոխութեան օրերին՝ Երեւանի հնչակեանները հաւատարիմ հպատակութիւն յայտնեցին...»: Իսկ դու ինքդ, դու, Հայաստանի Կոմունիստ Կուսակցութեան ներկայ քարտուղար, դու ի՞նքդ «այդ օրերին» ի՞նչ արեցիր...: Դու փախա՛ր, փախա՛ր»<sup>[21]</sup>:

Այստեղ, Ս.Սապահ Գիւլեանի հակաճառութիւնը ամբողջական չէ: Խօսքը փախչելու կամ չփախչելու մասին չէ. այլ՝ այդ կը վերաբերի շատ անելի սկզբունքային դիրքորոշման մը: «Փետրուարեան հակայեղափոխութենէն» շատ առաջ վր, 1920 Յոկտեմբերին, թրքական բանակներուն Հայաստանի վրայ կատարած յարձակման օրերուն, վերոյիշեալ կուսակցութիւններէն կազմուած (բացի Հայաստանի Սոց. Դեմ. Բանուորական Կուսակցութենէն, որուն նախագահն էր Բ.Իշխանեան) Միջ-կուսակցական հորհուրդը կը հրապարակէ զօրահաւաքի հրահրող կոչ մը, ուր կ'ըսուի. «Միջ-կուսակցական Մարմինը յայտարարում է սրանով ընդհանուր զօրահաւաք բոլոր գեղք կրելու ընդունակ քաղաքացիներին: Բոլոր կուսակցականները, համերաշխ ու ոգելորուած, կանգնած են իրենց դիրքերուն: Հայ քաղաքացիութիւնը եւս պիտի անխտիր ծառանայ թշնամու հանդէպ որպէս մի մարդ: Ի գէն քաղաքացիներ, մի վերջին ծիգ եւս, յաղթանակը մերն է: Թող կորչի արիւնարքու Զեմալը: Կեցցէ ազատ հայրենիքի պանծալի բանակը»<sup>[22]</sup>: Նոյն դիրքորոշումը Հնչակեան Կուսակցութիւնը կ'արտայայտէ նաեւ հորհրդային իշխանութեան օրերուն: 1920 Դեկտեմբերին, Հայաստանի Յեղկոմը կը փափաքի ՍՂՀԿ-էն գրաւոր իմանալ Հայաստանի առջեւ դրուած կարգ մը քաղաքական հարցերու մասին անոր դիրքորոշումը: Այս առիթով, ՍՂՀԿ Երեւանի վարչութիւնը իր պատասխան նամակին մէջ առաջնահերթ կը նկատէ քեմալական բանակներուն հեռացումը Հայաստանէն, որովհետեւ հորի. Հայաստանը իմբերիալիստական երկիր մը չէ այլեւս եւ «Մուսթաֆա Զեմալը կարող է միանգամայն իրեն ազատ զգալ եւրոպական

իմբերիալիստների դեմ վարած կռուի ընթացքին»<sup>[23]</sup>: Այստեղ խօսքը կը վերաբերի հայրենիքին գոյութիւնն ու անոր հողային ամբողջականութիւնը, հոն հաստատուելիք վարչակարգէն եւ գաղափարա-քաղաքական նախասիրութիւններէն անելի առաջնահերթ նկատելու սկզբունքին, որուն շերտ հաւատացողն էր Լազօ:

1923-ին ՍՂՀԿ Թիֆլիսի Կեդր. Վարչութիւնը դիմում կը կատարէ Մոսկուա, Կոմինդերնի Գործադիր Մարմնին, փափաք յայտնելով անկամակցիլ անոր: Կոմինդերնի ներկայացուցած պայմանները այնպիսին էին, որ անոնց գործադրութիւնը կը նշանակէր աշխարհի տարածքին հնչակեան մասնաճիւղերուն լուծարքը կոմունիստ կուսակցութիւններուն մէջ: Խորհրդային Միութեան տարածքին, այլընտրանքի բացակայութեան պայմաններուն տակ կամ անկեղծօրէն հաւատալով նոր վարչակարգին, շատ մը հնչակեան ղեկավարներ համաձայն կ'ըլլան «խաղաղ» լուծարքին: Լազօ կ'ըլլայ ընդդիմադիրներէն մէկը: Այս կապակցութեամբ ՍՂՀԿ Թիֆլիսի Կեդրոնական Վարչութեան շարքին յղած շրջաբերականին տակ Լազոյի ստորագրութիւնը չ'երեւիր, որ բնաւ պատահականութեան արդիւնք չէր<sup>[24]</sup>: Այդ օրերուն, «շարքային գտման» անուան տակ, կուսակցութեան շարքերէն կը հեռացուին այնպիսի անբասիր կուսակցականներ, ինչպիսիք էին Իսահակ Հովսէօնը (Կեդր. Վարչութեան անդամ Ս.Տաշիրի եղբայրը), Սարգիս Սարգիսեանը (Փառամազի եղբայրը) եւ ուրիշներ: Կատարուած պարտադրանքը ակնհայտ էր: «Մի երրորդ նամակի մէջ, դարձեալ Թիֆլիսից, գրում էին որ «բան չէր մնացել արտաքսէին Կեդրոնական Վարչութեան անդամ Լազոյին: Նա հիմա գրեթէ մենակութեան է դատապարտուել Կեդրոնի մէջ, որովհետեւ դէմ է թարմ հոսանք Կուսակցութեան մէջ մտնելուն»<sup>[25]</sup>, կը գրէ Գ.Եղիկեան:

Վարելի է պատկերացնել այդ օրերուն Լազոյի ապրած կսկիծն ու հոգեկան խռովքը:

Լազօ կը մահանայ 1926-ին, Թիֆլիս:

Լազոյի մահագուժը տալով, Փարիզի հնչակեան «Նոր Երկիր» թերթը, «Վեթերան Ընկերոջ Մը Մահը» վերնագրին տակ կը գրէ. «Ապրիլ 4-ին, Թիֆլիսի մէջ մեռած է հնչակեան վեթերաններէն ընկեր Լազօ (Յակոբ Ղազարեան), որ իր ամբողջ կեանքը նուիրած էր ո՛չ միայն իր սիրած կուսակցութեան գաղափարներու իրականացման, այլեւ եզոխները հայացնելու, քաղաքակրթելու գործին: Լազօ հայերէն տառերը ձեւափոխելով պատշաճեցուցած էր եզոխական հնչումներու: Խաւարի մէջ մնացած եզոխները, շնորհիւ Լազոյի, լոյս աշխարհ կու գան եւ ցարդ կը գործածեն այդ տառերը: Լազօն ունէր գիտական, գեղարուեստական եւ վիպական թատերական

գրուածներ եւ քիւրտ-եզտիական կեանքի պատմութեան, հոգեբանութեան, կեանքին ու կենցաղին նկարագրութիւնները: Ան ազգերու եղբայրակցութեան ճշմարիտ քարոզիչը, հաւատաւորն էր: Լազօ՝ Հայաստանի խորհրդայնացումէն յետոյ, թէեւ մինչեւ վերջ մնաց անհաշտ հակառակորդ պոլշեւիզմի, բայց նուիրուեցաւ շինարարական աշխատանքի: Յարգանք պարտաճանաչ գործիչի յիշատակին»<sup>[26]</sup>:

Գ.Եղիկեան քիչ մը այլ դիտանկիւնէ կը մօտենայ Լազոյի մահուան: Ան կը գրէ. «Բայց կար Լազօս... որ «նա դէմ է եղել կուսակցութեան կեանքում թարմ հոսանք մտցնելուն», այսինքն՝ կուսակցութիւնը համայնավարներու պոչին կապելու...: Մի քանի ամիս յետոյ նա մեռաւ, հաւանօրէն չկարողանալով տանել կատարուած անիրաւութիւններն ու բռնութիւնները կամ ո՛ր գիտէ, որովհետեւ նրա անունը արտասահմանեան հնչակեաններին խաբելու համար այլեւս պետք չէր: Նա գուցէ «սրտի պայթիւն» էր ունեցել կամ որեւէ սրկում էր ստացել իր արեան մէջ «շուտ բժշկուելու համար» (նա հիւանդանոցում մեռաւ), եւ տարել էր իր հետ իր վիշտերը, վրդովմունքները ու «մահուան գաղտնիքը»<sup>[27]</sup>:

\*\*\*

Տարիներ առաջ, խորհրդարանի նամակատուիքէ սկսայ ստանալ «Սիւրկել» պարբերաթերթը (քանի մը թիւ): Լիբանան հրատարակուող, արաբատառ թերթ մըն էր, որ ամբողջապէս նուիրուած էր քրտական հարցերու: Յօդուածներէն մէկը կը վերաբերէր քրտական այբուբենին, ուր յիշուած էր նաեւ Լազոյի անունը, առանց անոր մասին բացատրութիւն մը տալու: Որոշ ժամանակ անց, «Սիւրկել»ի խմբագրութենէն կը ստանամ հեռախօսազանգ մը՝ հետոս հանդիպելու փափաքով: Երիտասարդ աղջիկ մը եւ տղայ մըն են եկողները: Իրենց զիրենց կը ներկայացնեն որպէս Լիբանան ապրող քիւրտեր, որոնք համակիր են Թուրքիոյ մէջ քրտական պայքարին: Կը հետաքրքրուին լիբանանահայութեամբ, Հայաստանի հետ մեր ունեցած կապերով, Ղարաբաղի հարցով, հայկական կուսակցութիւններուն յարաբերութեամբ, եւ այլն, եւ այլն: Կ'ըսեն, թէ մտադիր են այսպիսի հանդիպումներ ունենալ հայկական կուսակցութիւններուն, մամուլի օրկաններուն, հաստատութիւններուն հետ, եւ այլն: Առիթն օգտուելով կ'ըսեմ, թէ իրենց թերթին մէջ հանդիպեցայ Լազոյի անունին. ամբողջապէս անտեղեակ են: Կը խոստանամ Լազոյի անձին եւ հետապնդած նպատակներուն մասին ամփոփ յօդուած մը տալ «Սիւրկել»ին. ուրախութեամբ կ'ընդունին: Իրենց մեկնումէն ետք, անմիջապէս կ'այցելեմ «Արա-

րատ»ի խմբագրատուն եւ խմբագիր ընկ. Աւօ Փռօշուկեանին կը յայտնեմ, թէ նման հանդիպումի մը հանդէպ ուշադիր ըլլայ, որովհետեւ եկողները ՄԻԹ-ի անդամներ են: Իմ խոստումս սակայն կը յարգեմ եւ Լազոյի մասին հակիրճ գրութիւն մը կը պատրաստեմ: Կը փորձեմ կապուիլ «Սիւրկել»ի խմբագրութեան: Տրուած բոլոր հեռաձայնի թիւերը դարձած էին անգործածելի: «Սիւրկել»ն ալ դադրեցաւ յոյս տեսնելէ: Գրութիւնս ալ մնաց տեղ մը, թուղթերուս մէջ...:

\*\*\*

1980-ականներու սկիզբն էր: Խումբ մը ուսանող ընկերներով փախուստ տուիւք Երեւանէն եւ շոգեկառքով մեկնեցանք Թիֆլիս, ներկայ ըլլալու Արարատ-Տիւնամօ Թիֆլիս ֆուլթայլի խաղին: Կանուխ հասանք եւ մինչեւ խաղը ահագին ժամանակ ունեինք: Շրջեցանք հայկական թաղամասը՝ Հապլաւար, այցելեցինք հայոց եկեղեցին, պահ մը կանգ առինք Սայեաթ Նովայի գերեզմանին շուրջ ու բարձրացանք Խոջավանք՝ Հայկական Պանթէոն: Ռաֆֆիի գերեզմանին վրայ սիւնածէ կորթոյն էր, որուն երկու կողմերուն՝ հայ մեծանուններու միատեսակ գերեզմանաքարերը: Մէկ առ մէկ այցելեցի գերեզմանները, իւրաքանչիւրին առջեւ պահ մը կանգ առնելով: Լազոյի գերեզմանի կողքին մոլախոտ բուսած էր: Ձեռքով մաքրեցի մոլախոտերը՝ ինչքան որ կրնայի: Հայոց պատմութեան հանդէպ հետաքրքրութիւն չունեցող ընկերներէս մէկը, հաւանաբար զարմացած կատարած գործէս, մօտեցաւ եւ հարցուց.

- Ո՞ր է:

- Մեր մեծերէն մէկը, - պատասխանեցի:

Ուրիշ ի՞նչ կրնայի ըսել:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] Ատրպետի Յուշերը. ՀԱԱ:

[2] Նոյն:

[3] «Արձանագրութիւն Հնչակեան Յեղ. Կուսակցութեան Ընդհ. Ժողով»ի, 1896: Հնչ. արխիւ:

[4] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Հնչակեան Կուսակցութեան», Ա. հտ., Պէրոյթ, 1962, էջ 271:

[5] «Յիսնամեակ ՍԴ Հնչակեան Կուսակցութեան», Փրովիտենս, 1938: Վ. Մարտեան, «Կովկասեան Վերոյշումներ»:

[6] «Հայրենիք», 1929, Մայիս, թիւ 7. Ռ.Խանազատ «Հայ Յեղափոխականի Յուշերից»:

[7] «Հայրենիք», 1939, Յունուար, թիւ 3. Գ.Եղիկեան «Հնչակեանները եւ Լրանց Պոլշեկներու Հետ Միանալու Փորձերը»:

[8] «Արձանագրութիւն Շումլայի ՍԴԿՎ Վարչութեան Եփսոսին», 1905, Երևան, 15: Հնչ. արխիւ:

[9] «Երիտասարդ Հայաստան», 1906, Օգոս. 8. Լ.Լազեան «Նամակ Պաթումէն»:

[10] «Հնչակ», 1935 Օգոստ. Ռ. «Հնչակեան Գործունէութիւնը Սալմաստ - Ուրմի Գաւառներուն Մէջ»:

[11] «Սուրհանդակ», 1908, Սեպտ. 16/28. «Հնչակեաններու Կիրակիի Հրապարակախօսութիւնը»:

[12] Գառնիկ Ստեփանեան, «Կենսագրական Բառարան», Բ. հտ., Երեւան, 1981, էջ 238:

[13] Գոհար Ազնաւուրեան, «Ուղեցոյց Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի Ֆոնդերի», Երեւան, 1962, էջ 61-62:

[14] «Հայկական Սովետական Հանրագիտարան», Դ. հտ., Երեւան, 1978, էջ 474:

[15] Կրաստանի Ազգային Արխիւ, Ֆ. 2, ց. 1, գ. 3595, թ. 12-14:

[16] Ամատունի Վիրաբեան, «Համահայկական Խորհրդակցութիւններ (1912-1920թ.թ.)», Երեւան, 2004, էջ 138, 234, 286, 290:

[17] Արտաշէս Տէր Խաչատուրեան, «Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Մամուլը», Պէյրուք, 1992, էջ 36:

[18] «Յուշարձան ՍԴԿՎ Զառանգման համար», Փարիզ, 1930. Յուսիկ Գնդունի, «Յարիզմի Տապալումէն Վերջ»:

[19] «Շրջաբերական ՍԴ Հնչ. Կուսակցութեան Ռուսաստանի, Կովկասի եւ Պարսկաստանի Մասնաճիւղերին եւ Ընկերներին»: Հնչ. արխիւ:

[20] «Հայաստանում Սովետական Իշխանութեան Ամրապնդման Պատմութեան Մի Զանի Հարցեր», Երեւան, 1987. Լեւորուշ Խուրշուտեան, «Հայաստանի Ոչ Պրոլետարական Կուսակցութիւնների Գաղափարական-Քաղաքական եւ Կազմակերպական Կրայից (1920-1921 թթ.)»:

[21] Ս.Սապաի Գիւլեան, «Բառերի եւ Եզրերի Բացատրութիւններ», Պոսթոն, 1927, էջ 154:

[22] «Կող», Ազգամիջեան Խորհուրդ, Երեւան, 1920 Հոկտ. 28: ՀԱԱ:

[23] «Հայաստանի Խորհրդ. Իշխանութեան Յեղկոմիս», ՍԴԿՎ Երեւանի Վարչութիւն, 1920, Դեկտ. 11: ՀԱԱ:

[24] «Հայկազեան Հայագիտական Հանդէս», ԻԲ. հտ., Պէյրուք, 2002. Եղիկ Երեմեան, «ՍԴԿՎ-Կոմիսիոն Յարաբերութիւնները»:

[25] «Հայրենիք», 1939, Ապրիլ, թիւ 6: «Հնչակեանները եւ Լրանց...»:

[26] «Նոր Երկիր», 1926, Երևան, 21:

[27] «Հայրենիք», 1939, Ապրիլ, թիւ 6:

## ԲԱԳՐԱՏ ԱԻԵՏԵԱՆ (Բ. ՍԻՒՆԻՔ)

ՍԴ Հնչակեան Կուսակցութեան ջրլուտ եւ յանդուգն ղեկավարներու թուին կը պատկանի Բագրատ Սիւնիք:

Բ.Սիւնիք ծնած է Շուշի, 1875-ին:

Ուսումը կը ստանայ Թիֆլիսի մէջ, ուր 1900-ականներու սկիզբը կը միանայ Հնչակեան Կուսակցութեան: Կը մասնակցի բանտարական-յեղափոխական շարժումներուն, որուն պատճառով կը ձերբակալուի:

Թիֆլիսի մէջ Բ.Սիւնիք կը նշանակուի Կուսակցութեան գաղտնի տպարանին պատասխանատուն (ուր կը տպուէին նաեւ ռուս թէ վրացի յեղափոխականներուն թռուցիկները): Տպարանը իշխանութեան կողմէ կը բացայայտուի եւ Բ. Սիւնիք դարձեալ կը բանտարկուի:

1905-ի հայ-թաթարական կռիւներուն մասնակցող հնչակեան խումբերը կազմակերպելու համար Փարամազի, Ա.Վահագնի եւ այլոց կողքին կը ղրկուի Չանգեզուր եւ Ղարաբաղ:

Հնչակեան Կուսակցութեան Ե. Համագումարէն ետք՝ կը պիտու պանէ Կուսակցութիւնը մէկ եւ միասնական պահելու տեսակետը: Կը մասնակցի Ռուսական Ա. Յեղափոխութեան. նշանաւոր կ'ըլլայ 1906-ին Թիֆլիսի Մայիս 1-եան բազմազգեան ցոյցին անոր յանդուգն ելոյթը: Կուսակցական քարոզչական աշխատանքներ կը տանի նաեւ Պաքուի մէջ, ուր կ'օգտագործէ Սիւնեցի ծածկանուրը:



Օսմ. Սահմանադրութենէն ետք կու գայ Կ.Պոլիս: 1909-ին կը մասնակցի ՄԴԿԿ Կ.Պոլսոյ 2. Համագումարին, ուր Սապահ Գիւլ-եանի, Փարամազի եւ այլոց կողքին կը պաշտպանէ Սահմանադրութեան հաւատ ընծայելու եւ Կուսակցութիւնը իր յեղափոխական-ընդդատակեայ գործելածելին մէջ պահելու տեսակետը<sup>91</sup>: Կը մասնակցի նաեւ ՄԴԿԿ Տաճկաստանի շրջանի պատգամաւորական ժողովներուն:

1909-ին, Կուսակցական գործիչի հանգամանքով կը շրջի Կ. Պոլսոյ մտակայ հայաշատ շրջանները:

1909-1910 որպէս գործիչ կը հաստատուի Տրապիզոն, ուր «օժտուած հռետորական ձիրքով շարք մը դասախօսութիւններ կու տայ նորաշէն եկեղեցիին մէջ»<sup>92</sup>: 1910-ին, Տրապիզոնի մէջ կը հրատարակէ «Կորչի՞ն Սոցիալիստները» գրքոյկը, ուր կը քննադատէ այն մարդկանց, որոնք դէմ էին սոցիալիզմին՝ առանց տարրական գաղափար մը ունենալու այդ գաղափարախօսութեան մասին: «Մեր հակառակորդների հրապարակ թափած փետը-ցփեղղութիւնները վատահեցնում են ինձ համարձակ ասելու, որ նրանք կամ բնաւ չեն կարողացել նրանց հեղինակութիւնները, եւ կամ թէ հանդիպելով իրենց ուղեղին անմատչելի արժէքների թերիաներին, գլորուել են մտքի աղջամուղջի մէջ, եւ այժմ ցաւագարի նման անմիտ ծայներ են արձագանգում»<sup>93</sup>.- կը գրէ Բ. Սիւնիք. (գրքոյկը, յղուածաշարի ձեւով 1911-ին կը տպագրուի «Կոհակ»ի մէջ):

1910-1911-ին որպէս գործիչ կը կազմակերպէ Պուլկարիոյ շրջանի մասնաճիւղերը: Այդ տարիներուն կ'աշխատակցի Կ.Պոլսոյ կուս. օրկան «Ապագայ»ին:

1912-13-ին, նոյն հանգամանքով կը գործէ Խրիմի թերակղզիին մէջ, ուր, 1913-ին, Սեփաստափոլի մէջ կը ձերբակալուի եւ կը բանտարկուի: Այդ տարիներուն կ'աշխատակցի «Նոր Աշխարհ» օրաթերթին:

1913-ին, ՄԴԿԿ Զեօստէնչի 7-րդ Համագումարին կողմէ կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան (Սապահ Գիւլ, Փարամազ, Բ.Վարամազ) առաջին փոխանդամ:

Այդ շրջանին Բ. Սիւնիք Եւելի յաճախակի կ'աշխատակցի «Հնչակ»ին: Բ. Սիւնիքի գրած քաղաքական վերլուծութիւնները ուշադրութեան արժանի են այն պատճառով, որ ան շատ շուտ կը նախատեսէ համաշխարհային մտաւարտ պատերազմ մը ու անոր մէջ փանիսլամիզմի կարեւոր գործօնը: «Հայաստանի շանտաւարութեան գաղափարը՝ որին արդէն համամիտ է երրեակ Համա-ծայնութիւնը, պիտի վերագրել ի թիւս այլոց եւ այն հանգամանքին որ Հայաստանը այդպիսով բաժանում է Պարսկաստանն ու Փոքր Ասիան իրարուց ու այդպիսով նրանց երազած միութեան գաղափարը սպաննում՝ ինչ որ ցանկալի է նաեւ Ռուսաստանին, որը իր

ամենակենսական շահերի պատճառաւ բնաւ չի հանդուրժել համիսլամական գաղափարի զարգացման եւ ամէն կերպ պիտի աշխատի թիրք ազգայնականների խանգարուած մտայնութեան այդ իսկապէս թունաւոր, մահաբոյր, արիւնածարաւ մտքերը մեղցնելու չարաչար կերպով»<sup>94</sup>.- կը գրէ Բ. Սիւնիք: Այլ յօդուածի մը մէջ ան նոյն միտքը զարգացնելով կը գրէ. «Ռուսիան չպիտի նահանջէ՛ այլ պիտի ընդունի մարտահրաւերը: Ռուսիան քաջ գիտէ, որ ռուս-գերմանական պատերազմից ստացուելիք վնասը ամէն պարագայում Եւելի ու Եւելի քիչ պիտի լինի տնտեսական, քաղաքական եւ բարոյական շահերի տեսակետից՝ քան այն, որ կարող է ստացուել Հայաստանի բնաջնջման հետեւանքով՝ մօտ կամ հեռու ապագայում: Մահմետական ծփացող արեւելքում Ռուսաստանի բնական դաշնակից եւ հաւատարիմ յառաջապահը կարող է լինել, եւ է, միմիայն Հայաստանը, որի սպաննուելուց վերջ Ռուսաստանը չպիտի կարողանայ այլեւս արմատապէս խափանել Մարմարայից միջնէ Դնդկաստան մի հզօրագոյն իսլամական պետութեան գաղափարի ծաւալման ընթացքը, եւ նրա մարմին դառնալը ժամանակի խնդիր պիտի լինի»<sup>95</sup>:

Փարամազի ձերբակալութենէն ետք, Կեդր. Վարչութիւնը Բ.Սիւնիքը կը հրաւիրէ Կեդրոնական Վարչութեան լիարժէք անդամութեան: Այս կապակցութեամբ շարքին յղած Կեդր. Վարչութեան շրջաբերականը ուշագրաւ է Բ.Սիւնիքին տրուած գեղուն քննադատութիւնը, բան մը՝ որ սովորական չէ կուսակցական շրջաբերականներուն. հոն կ'ըսուի. «Աւելորդ կը համարենք ընկեր Սիւնիքի մասին կենսագրական տեղեկութիւններ տալը, քանի որ ամէնքիդ ծանօթ է ան, իր բարձրագոյն կրթութեամբը, գմայլելի պերճախօսութեամբը եւ Կուսակցութեան Կովկասի ու Տաճկաստանի շրջաններուն մէջ կազմակերպական ու փրոփականտայի գործերուն մատուցած անզնահատելի ծառայութիւններովը, որոնց համար է Անդիանուր Պատգամաւորական ժողովը, միաձայնութեամբ իր ընկերական յարգանքները արձանագրել է յետոյ՝ (տե՛ս որոշումներ) ընտրած էր զայն որպէս առաջին փոխանդամ Կեդրոնական Վարչութեան: Յանձին ընկեր Սիւնիքի Կեդրոնական Վարչութեան մէջ կ'աւելնայ անխոնջ եւ երիտասարդ Նոր ոյժ մը: Ընկերական ողջոյններով՝ ՄԴԿԿ Կեդրոնական Վարչութիւն Փարիզ, Յունուար 1915»<sup>96</sup>:

Բ.Սիւնիք Կեդր. Վարչութեան կողմէ անմիջապէս կը նշանակուի կամաւորական աշխատանքներու պատասխանատու եւ իր այդ պաշտօնով կը գործէ Թիֆլիսի, Փօթիի, Կարսի եւ այլ քաղաքներու մէջ: Կը հանդիսանայ կամաւորական 6-րդ գունդի կարեւոր կազմակերպիչներէն:

Հայաստանի Հանրապետութեան հռչակումէն ետք, Բ. Սիւնիք կը հաստատուի Երեւան եւ աշխատանք կը գտնէ արտաքին գործոց

նախարարութենն ներս:

Ան մաս կը կազմէ ղեկավար տարբեր մարմիններու: 1919-ին, քաղաքական վերլուծումներով կ'աշխատակցի Թիֆլիսի «Գործաւոր»-ին: Անոր գրած յիշարժան վերլուծութիւններէն է «Փանթուրանիզմ եւ Ղարաբաղ» ծաւալուն յօդուածը: Այդ գրութեամբ Բ.Սիւնիք կը բացատրէ թէ ինչու փանիսլամիզմը իր տեղը զիջած է փանթուրանիզմին եւ «պատառ-պատառ եղած Օսմանեան Կայսրեական Դրօշակի տեղ պայծառած է փանթուրանական իտելի «յեղափոխական» դրօշակը» (նկատի առնենք որ այս յօդուածէն շուրջ մէկուկէտ տարի ետք, Կոմիւնիստներու որոշումով, Պաքուի մէջ տեղի կ'ունենայ Արեւելեան Ժողովուրդներու հանրայայտ Համագումարը): Ապա, Բ.Սիւնիք կը բացատրէ փանթուրանիզմին սպառնացող վտանգը շրջանի բոլոր ժողովուրդներուն ու կը հասնի այն եզրակացութեան, որ փանթուրանիզմի այդ յաղթարշաւին դէմ է որ կը պայքարի «Հայկական Ղարաբաղի համաժողովրդական կամքով, յանդուգն քաջերին յատուկ այդ անդրդուելի վճռորոշումը...», ու յօդուածը կ'աւարտի... «Փառք Ղարաբաղին, փառք» լուզումով<sup>17</sup>:

1920 Սեպտեմբերին, Բ.Սիւնիքի գլխաւորութեամբ ՍՂՀԿ Հայաստանի պատուիրակութիւն մը կը մեկնի Մոսկուա ու կը հանդիպի Լենինի հետ: Հնչակեան պատուիրակութիւնը Լենինին կը փոխանցէ «Տեղեկատուական Հաղորդում Կիլիկեան Հանրապետութեան Իրադարձութիւններուն, Արարատեան Հանրապետութեան Արդի Կիճակին եւ Հայկական Սոցիալ Դեմոկրատական Հնչակ Կուսակցութեան Գործունէութեան Մասին» վերնագիրը կրող 13 էջոց ռուսերէն մեքենագիր տեղեկագիր մը: Բ.Սիւնիքի (ատենապետ) եւ Պ.Գրիգորեանի (ատենադիր) ստորագրութիւնները կրող այդ փաստաթուղթով (որ ցարդ կը մայր անտիպ) ՍՂՀԿ-ը խորհրդային վարիչներէն կը պահանջէ՝ ա. Հայաստանի անկախութեան պաշտօնական ճանաչումը, բ. Ղարաբաղի եւ Չանգեզուրի, որպէս Հայաստանի անքակտելի մասեր, Արարատեան Հանրապետութեան (իմա՝ Հայաստանի Հանրապետութեան) միացումը, գ. Եթէ երկրորդ կէտին գործադրութիւնը անմիջապէս կարելի չէ, ապա մինչեւ հարցին վերջնական լուծումը Ղարաբաղին եւ Չանգեզուրին տալ ինքնավարութիւն Ռուսաստանի հովանաւորութեան տակ: «Տեղեկատուական Հաղորդումը» խիստ ձեւով կը քննադատէ Հայաստանի հանդէպ պոլշեիկներուն վարած ընդհանուր քաղաքականութիւնը<sup>18</sup>: Պատուիրակութիւնը Մոսկուա կը մնայ 21 օր եւ Լենինէն գատ հանդիպումներ կ'ունենայ խորհրդային այլ պատասխանատուներու հետ՝ որոնց շարքին Թրոցքի: Վերջինս, Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցած հողային պահանջները՝ որոնց թուին Ղարաբաղի կցումը Հայաստանին, կը գտնէ «ազգայնական միտումներ եւ ժամանակի ոգիին անհամապատասխան քայլ»,

ուստի «Սիւնիքի ղարաբաղեան տամարը տնկուելով, բախման կու գայ Թրոցքիի հետ: Պատուիրակութիւնը Թրոցքիի բաժանմունքէն դուրս կու գայ մասամբ ընկճուած»<sup>19</sup>: Այդ օրերուն Մոսկուա գտնուող խորհրդային պաշտօնատար, մեկշեւիկ ինդերնացիոնալիստներու կուսակցութեան պատկանող, Բ.Սիւնիքի հայրենակից եւ ինչ ծաւաւոր Ս. Լօրելիի (Ատրէն Երզնկեան), այցելութիւն կու տայ Բ.Սիւնիքին՝ վերջինիս հիւրանոցային սենեակին մէջ: Լօրելի կը վկայէ թէ Բ. Սիւնիք կ'ապրէր ջղագրգիռ պահեր եւ բնաւ զոհ չէր տարուող բանակցութիւններէն: «Սիւնիքը Ղարաբաղի էր: Իր ծննդավայր գաւառի ապագան նրան յուզում էր եւ ուզում էր նրան կապուած տեսնել Հայաստանի հետ»<sup>10</sup>, կը գրէ Ս.Լօրելի ու կ'աւելցնէ. «Սիւնիքը սուր գրիչ էր եւ սրամիտ գրուցակից, խօսակցութիւնը կատակներով համեմող: Ինծ նրա մէջ գրաւում էր մտքի խիզախութիւնը: Նա քաջութիւն ուներ, (հաճելի էր այդ թէ ոչ-հաճելի խօսակցիցին), ասել ինչ մտածում էր, ունենալ իր կարծիքը: Շատ մարդկանց չէ տրուած այս բանը բնութիւնից: Սիւնիքը կողմնակից էր թէ մեր երկրի համար միայն մի մանտաղը թէ տեղին է եւ թէ բնական, որի հովանու տակ ռուսահայի բաղդը վերջին հարիւր տարուայ ընթացքում եղած է այնքան տարբեր թուրքահայ եղբայրների բաղդից»:

Վերադարձի ճամբուն վրայ, արդէ խորհրդային դարձած Պաքուի մէջ Բ.Սիւնիք կը ձերբակալուի եւ կը փոխադրուի Պաքում, ուրկէ առաջին ևսուով կը դրկուի Կ.Պոլիս: Բ.Սիւնիք ափ կ'ելլէ Իզմիր, ուր կը գտնուէր Ֆրանսական իշխանութիւններուն կողմէ Կիլիկիայէն քստրուած Սեդրակ Շահէն: Երկու գաղափարակից ընկերներ կը նախաձեռնեն Իզմիրի շրջանի կազմակերպումը: 1921-ին, Իզմիրի եւ շրջակայքի մասնաճիւղերով (Պալքետեր, Գըրգ Աղած, Մանիսա, Եօտեմիշ եւայլն) կը գումարուի շրջանային պատգամաւորական ժողով ուր կ'ընտրուի «ՍՂՀԿ Փոքր Ասիոյ եւ Կիլիկիոյ Կեդր. Գործադիր Մարմին», որուն ատենապետ կ'ընտրուի Բ.Սիւնիքը: Իր այս պաշտօնով, 1921 Հոկտ. 30-ին, Ուաշինկթօնի մէջ գումարուած հաղադրութեան Համաշխարհային Ժողովին առիթով, Բ.Սիւնիք ԱՄՆ-ի նախագահ Հարտինկին կը յղէ հայ ժողովուրդի իրավիճակն ու ձգտումները ներկայացնող 18 էջոց «Մեմորանտում» մը, ուր ան շեշտը կը դնէ Սեւրի պայմանագրով ԱՄՆ-ի ստանձնած յանձնառութեան գործադրութեան վրայ:

Իզմիրի մէջ ունեցած իր յարաբերութիւններէն եւ շրջաններ կատարած այցելութիւններէն Բ.Սիւնիք կ'եզրակացնէ թէ Ղաշնակիցները Իզմիրը պիտի յանձնեն քեմալականներուն եւ յունական բանակները ի վիճակի չեն պաշտպանելու այդ: «Իզմիրի հայութիւնը գուցէ կարենայ տախտակի մը կտորին չոքիլ եւ ինքզինքը նստել Յունաստան եւ սակայն գաւառի հայութիւնը բացարձակօրէն պիտի կոտորուի»<sup>11</sup>,- կ'եզրակացնէ ան ու իր հրապարակային ելոյթ-

ներուն եւ ժողովներուն մէջ կը պաշտպանէ անմիջապէս Իզմիրը թողնելով արտասահման մեկնելու միտքը: Բ.Սիւնիքի այս կեցուածքը յունական բանակի հրամանատարութեան կողմէ կը նկատուի ժողովուրդին մարտունակութիւնը կոտորելու աշխատանք մը: Փորձ կ'ըլլայ ձերբակալել զինք: Բ.Սիւնիք խոյս կու տայ եւ ինք գործադրելով իր տեսակետը կը մեկնի Կ.Պոլիս: Շատ քիչ թիւով հայեր կը հետին անոր օրինակին: Կարճ ժամանակ անց Բ.Սիւնիքի կանխատեսութիւնը կ'իրականանայ: 1922 Սեպտեմբերին քեմալական զօրքերը, առանց լուրջ ընդդիմութեան, կը գրաւեն Իզմիրը, կը հրկիզեն քաղաքը եւ կը կոտորեն հայ եւ յոյն ազգաբնակչութիւնը: Դաշնակից մարտանաւերը ոչ մէկ միջամտութիւն կը կատարեն:

Բ.Սիւնիք Կ.Պոլսէն կ'անցնի Աթէնք եւ 1924-ին կու գայ Դամասկոս, ուրկէ խումբ մը ընկերներով կը մեկնի Պարսկաստան՝ Խ. Յայաստան երթալու մտադրութեամբ: Անոր կ'արգիլուի Խ. Յայաստան մտնել. աւելին, Բ.Սիւնիք Պարսկաստանի մէջ կը ձերբակալուի եւ կարճ ժամանակի մը համար կը բանտարկուի:

Կը մեկնի Փարիզ, ուր Վահրիճ Կեօքճեանի եւ Անդրանիկ Կենճեանի հետ կը խմբագրէ «Յնչակեան Մամուլ»ը: Կ'աշխատակցի նաեւ «Երիտասարդ Յայաստան»ին:

Կը վերադառնայ Պէյրութ եւ 1930-ին կը խմբագրէ «Լիբանան» թերթը: 1938-ին Լիբանանի շրջանէն պատգամաւոր կ'ընտրուի ՄԴՅԿ Ժ. Համագումարին<sup>[12]</sup>, ուր կ'ընտրուի Կեդր. Վարչութեան անդամ եւ ապա ատենապետ:

Որոշ շրջան մը Փարիզ մնալէ ետք կը վերադառնայ Պէյրութ ու ամբողջապէս կը նուիրուի ազգային-քաղաքական կեանքին: 1950-ին լոյս կը տեսնէ Բ.Սիւնիքի «Ոգորումներ եւ Խորհրդածութիւններ» գրքովը, ուր ան կը փորձէ ամփոփել իր կեանքին քաղաքական-գաղափարական կենսափորձը<sup>[13]</sup>: Բացի վերոնշեալ գիրքերէն, Բ.Սիւնիքի գրչին կը պատկանին «Պասթիլի Անկումը», «Ֆրետրիիս Էնգելս», «Լիպերալներ եւ Սոցիալիստներ», «Նժդէի Զնար» անտիպ գիրքերը:

Բ.Սիւնիք կը նկարագրուի իբրեւ սակաւակեաց, համեստ, սակայն ջղային եւ դիւրագրգիռ անձ: «Ընկ. Սիւնիքը ճանչնալ դիւրին չէր: Չինքը ճանչցող եւ գնահատողները իր ջղային փճակէն յառաջ եկած անդաքտ վերաբերմունքները սիրով կը տանէին»<sup>[14]</sup>.- կը գրէ զինք մօտէն ճանչցող Միհրան Սէֆերեան: Այլ տեղ մը Բ.Սիւնիքի մասին կ'ըսուի.- «Ընկեր Սիւնիքը իր անձին մէջ կը խտացնէ ամուր անհատականութիւն եւ երբեք ճկած չէ աշխարհիկ հաշիւներու ի խնդիր: Սիւնիքը յեղափոխական տղամարդ է»<sup>[15]</sup>:

Բ.Սիւնիք կը մահանայ 1950-ին, Պէյրութ: Անոր մարմինը կ'ամփոփուի ազգ. գերեզմանատան Յնչակեան Պանթէոնին մէջ:

\*•\*

Երեք ընկեր մը կը պատմէ.- Յին Սահակեան դպրոցի սրահին մէջ բազմամարդ ձեռնարկ մը կար. մենք, տակաւին երիտասարդներ, ուղի կեցած էինք սրահին ամենէն ետեւը: Տիրող մթնոլորտն խանդավառուած սկսանք «Յնչակեան Ենք Մենք»ը երգել՝ մեր ճաշակին «բարեփոխելով» այդ՝

*Գացք ու ըսք*

*Էշշէկ Համիտին*

*Կեանքը շատ սուղ է*

*Յնչակ գինուորին:*

Յանկարծ, առաջին շարքը նստած նիհարակազմ ընկեր մը ուղի կանգնեցաւ եւ սկսաւ պոռալ բաներ մը, որ սկիզբը երգի աղմուկին մէջ չէր լսուեր.

-Կեցէ՛ք... լոնցէ՛ք... մենք էշերու դէմ չկրուեցանք: Մենք, մեզմէ շատ աւելի հզօր թշնամիի մը դէմ կրուեցանք. իր ըրածը շատ լաւ գիտցող թշնամիի մը դէմ կռուեցանք... գիտէ՛ք թէ իշուն դէմ կռուողը ի՞նչ կ'ըլլայ... գիտէ՛ք թէ իշուն դէմ կռուողն ու անորմէ պարտուողը ի՞նչ կ'ըլլայ...»

Սրահին մէջ քար լրութիւն կը տիրէր:

Այդ նիհարակազմ ընկերը Բ.Սիւնիքն էր:

## ՏՎՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] Արսէն Կիտուր, «Պատմութիւն ՄԴ Յնչակեան Կուսակցութեան», Պէյրութ, 1962, էջ 323:

[2] Յովակիմ Յովակիմեան, «Պատմութիւն Յայկական Պոստոյի», Պէյրութ, 1967:

[3] Բ.Սիւնիք, «Կորչի՞ն Սոցիալիստները», Տրապիզոն, 1910, էջ 15-16:

[4] «Յնչակ», 1913 Մարտ:

[5] «Յնչակ», 1913 Ապրիլ-Մայիս:

[6] ՀՀԳԿԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ.183, թ.1:

[7] «Գործաւոր», 1919, Ապրիլ 7:

[8] ՀԱԱ, ֆ.1456, ց.1, գ.241:

[9] «Արարատ», 1950 Մուլիս 8. Ս.Շահէն, «Բազարատ Սիւնիքի Կեանքը եւ Գործունէութիւնը»:

[10] «Արարատ», 1950 Նոյեմբեր 10. Ս.Լորեյլի, «Սիւնիքի Յիշատակին»:

[11] «Արարատ», 1950, Յուլիս 9:

[12] Յնչ. արխիւ:

[13] Բ.Սիւնիք, «Ոգորումներ եւ Խորհրդածութիւններ», Պէյրութ, 1950:

[14] «Արարատ», 1950, Մարտ 29. Մ.Սէֆերեան, «Գաղափարական Տերիշ մը՝ Բազարատ Սիւնիք»:

[15] «Յնչակեան Տարեգիրք», Բ. տարի, Փրովիտենս, 1932, էջ 247:

# ԳՐԻԳՈՐ ԵՂԻԿԵԱՆ

ՄԴ Հնչակեան Կուսակցութեան ինքնատիպ գործիչներէն եւ միաժամանակ բազմաժանր մտաւորականներէն է Գրիգոր Եղիկեան:

Գ.Եղիկեան ծնած է 1880-ին, Սեբաստիոյ Նահանգի Կիրասն գիւղը:

Կը յաճախէ գիւղին դպրոցը: Հազիւ 10 տարեկան կը մեկնի Կ.Պոլիս, ուր պանդխտած էր հայրը: Կ.Պոլսոյ մէջ պատանի Գրիգոր ականատես կ'ըլլայ Պոլսոյ ցոյցերուն, յեղափոխական ելոյթներուն եւ անոնց յաջորդող համիտեան շարդերուն: Ինք եւս կարճ ժամանակով մը կը բանտարկուի:

1896-ին կը ստիպուի անցնիլ Կովկաս:

Կը շրջի Սեւ Ծովու ափի քաղաքները՝ Ռոստով, Եկատերինատար եւ այլն: 1897-ին Թիֆլիսի «Տարազ»-ին մէջ լոյս կը տեսնէ անոր առաջին յօդուածը: 1898-ին կը հաստատուի Պաքու: Գ.Եղիկեանի վրայ խորը կ'ազդէ 1902 Մայիս 26-ին Պաքուի Պարպետ հրապարակին վրայ կայացած բանուորական ցոյցը, կազմակերպուած ՍԴՀԿ-ի եւ Ռուսաստանի Սոց. Դեմ. Բանուորական Կուսակցութեան (ՈՍՂԲԿ-ի) կողմէ:

Նոյն տարին Գ.Եղիկեան կը մեկնի Պարսկաստան եւ 1903-ին Տոքթ. Յարութիւն Շէքերճեանի<sup>[1]</sup> միջոցով կը մտնէ Հնչակեան Կուսակցութեան շարքերը:



1904-ին, կը հիմնէ ՍԴՀԿ Ռաշտի մասնաճիւղը, միեւնոյն ատեն կ'աշխատակցի «Նոր Դար», «Մշակ», «Տարազ» եւ «Երիտասարդ Հայաստան» թերթերուն:

Նոյն տարին, կուսակցական աշխատանքներու համար կը մեկնի Պաթում եւ մէկ տարի հոն մնալէ ետք կը վերադառնայ Պարսկաստան:

1906-ին, Գ.Եղիկեան կը հրաւիրուի ԱՄՆ, որպէս «Երիտասարդ Հայաստան»-ի խմբագրապետ ու շուրջ մէկ տարի կը խմբագրէ զայն: Որպէս խմբագիր ան հանդէս կը բերէ հեռատես մտաւորականի յատկանիշներ: Պ.Անդրիասեան գրչանունով, «Կովկասեան Նամականի» ընդհանուր խորագրի տակ, ան հմտութեամբ կը մեկնաբանէ Ռուսաստանի եւ Անդրկովկասի մէջ տեղի ունեցող քաղաքական, յեղափոխական եւ ազգային իրադարձութիւնները: Անոր խմբագրապետութեան ժամանակաշրջանը կը զուգահեռի արտերկրի մէջ երիտթրքական շարժման աշխուժացման տարիներուն: Գ.Եղիկեան կ'անդրադառնայ նաեւ այս երեւոյթին. «Հայ Յեղափոխական Գոնկրէսի Շուրջը»<sup>[2]</sup> յօդուածով, «Անդակտ Գործունէութիւն»<sup>[3]</sup> եւ «Բաւական Է»<sup>[4]</sup> խմբագրականներով, Գ.Եղիկեան կը գտնէ թէ նախքան օսմանեան ընդդիմադիր ուժերու համաժողովին մասնակցիլը, պէտք է կայացնել հայ յեղափոխական կուսակցութիւններու համաժողով: «Մէշէրէթի Յօդուածի Անիթով» գրած յօդուածին մէջ, Գ.Եղիկեան կ'ըսէ. - «Մենք մինչեւ այսօր նրանց (երիտթուրքերուն.-Ե.Ծ.) մէջ տեսել ենք համիլամական գաղափարների արտայայտութիւնը եւ նրանց դաւանանքն է եղել Օսմանեան երկրում ապրող եւ նրա սահմանակից բոլոր ժողովուրդներին ի մի ձուլել, միացնել մահմետական կուլտի (մշակոյթի.-Ե.Ծ.) դրօշի տակ եւ դարձնել միահեծան իսլամական ազգ այդ բոլորը միասին»<sup>[5]</sup>: Իր մէկ այլ՝ «Կովկաս եւ Տաճկահայաստան» յօդուածաշարքին մէջ, Գ.Եղիկեան կը գրէ. - «Վաղը կամ միւս օր իսկ նոյն «յեղափոխական» թուրքերը չայտի կասին կառավարութեան զօրքերի հետ յարձակում գործել հայերի վրայ եւ նորից շարդ տալ սրանց, ինչպէս արին 1895-96 թւերին»<sup>[6]</sup>:

Այդ շրջանին Պաքու հրատարակուող թրքերէն «Իրշատ» թերթին մէջ եւս ան կը գրէ յօդուածներ երիտթրքական շարժման եւ փախկալման անջնջութիւններուն մասին<sup>[7]</sup>:

1907-ին Գ.Եղիկեան կը մեկնի Փարիզ ապա Պարսկաստան ուր կարճ ժամանակ մը մնալէ ետք կը մեկնի Պաքու եւ կը նշանակուի ՍԴՀԿ Ռուսաստանի եւ Անդրկովկասի Գործադիր Յանձնախումբի

նախագահ: Պաքուի մեջ ան կ'ունենայ կուսակցական արդիւնաւետ գործունէութիւն, միեւնոյն ժամանակ կը խմբագրէ Պաքուի Հայոց Կուլտուրական Միութեան օրկաններ «Չակզ»ը եւ «Պատանեկան Գրադարան»ը: Կը շարունակէ աշխատակցիլ «Երիտասարդ Հայաստան»ին:

Օսմ. Սահմանադրութենէն ետք, կը մեկնի Կ.Պոլիս: Որպէս կուսակցական գործիչ կ'այցելէ Պրուսա (ուր կը կազմէ մետաքսագործներու արհեստակցական միութիւն), Մարզուան եւ Փոքր Հայքի շրջաններ: Մաս կը կազմէ «Կոհակ»ի խմբագրութեան: 1909-ին կը մասնակցի ՄԴՀԿ Կ.Պոլսոյ 2. Համագումարին, ուր Մեծն Մուրատի, Ազգապաշտանի եւ Սաքոյի հետ կը պաշտպանէ Կուսակցութեան օրինական գործելաձեւ տալու տեսակետը, ընդդէմ՝ Սապահգիւլի եւ Փարամազի կողմէ գլխաւորուած յեղափոխական գործելաձեւը շարունակել պահանջողներուն: Կը մասնակցի Նաեւ Տաճկաստանի Շրջանի Ա. Պատգամաւորական ժողովին<sup>98</sup>:

1910-ին, որպէս ՄԴՀԿ Կեդր. Վարչութեան լիազօր-ներկայացուցիչ, Գ.Եղիկեան կը վերադառնայ Պարսկաստան՝ Էնզելի: Այս շրջանը Պարսկաստանի Սահմանադրական Յեղափոխութեան վերջին հանգրուանի շրջանն էր: Հրապարակ եկած էին բազմաթիւ կուսակցութիւններ, որոնք կը գտնուէին գաղափարական որոնումներու մէջ: Գ.Եղիկեան պարսկերէնի կը թարգմանէ ՄԴՀԿ-ի ծրագիրը եւ այդ 1910 Հոկտեմբերին կը դառնայ Պարսկաստանի առաջին Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութեան ծրագիրը, որ սկզբնական շրջանին կը կոչուի «ՄԴ Հնչակեան Կուսակցութեան Էնզելի Մասնաճիւղի Իրանի Խումբ»: Կարճ ժամանակ անց, 1911 Յունուարին, խումբը կը դառնայ ինքնուրոյն եւ կը գործէ որպէս Պարսկաստանի Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութիւն<sup>99</sup>: Նոյն շրջանին պարսկերէն «Գիլան» թերթին մէջ լոյս տեսած Գ.Եղիկեանի «Ինչ Կ'ըսեն Սոցիալ Դեմոկրատները» յօդուածաշարքը, վերջիններուս կողմէ լոյս կը տեսնէ առանձին գրքոյկով: Պարսիկ սոցիալ դեմոկրատները որպէս իրենց թիւ 3 հրատարակութիւնը լոյս կ'ընծայեն Նաեւ Գ.Եղիկեանի «Պարսիկ Սոցիալիստ-Դեմոկրատներու Տեսակետները Այսօրուայ Դրութեան Մասին» գրքոյկը<sup>100</sup>:

Էնզելին ետք Գ.Եղիկեան կ'անցնի Ռաշտ, ուր կը տանի սոցիալ-դեմոկրատական քարոզչութիւն: Ռաշտն ետք կ'անցնի Թեհրան ուր կը գործակցի յեղափոխական ուժերուն հետ, որովհետեւ այդ շրջանին հակասահմանադրական ուժերը, գահընկեց Մեհմետ Ալի շահին եւ արտաքսուած արքայազուններէն Սալար-օղ-Տօվլայի

գլխաւորութեամբ սկսած էին հակայարձակում նախապատրաստել<sup>101</sup>: 1913-ին, «Ճշմարտութիւններ Պարսկաստանի Յեղափոխական Շարժման Մասին (Ականատեսի Վկայութիւններ)» ընդհանուր վերնագրի տակ, Գ.Եղիկեան «Երիտասարդ Հայաստան»ի մէջ կը ստորագրէ պատմական տուեալներով հարուստ յօդուածաշարք մը:

Յաջորդող տարիներուն Գ.Եղիկեան Ղազիկի մէջ կը հիմնադրէ հնչակեան մասնաճիւղ. Ռաշտի, Էնզելիի եւ Ղազիկի մէջ հայերէն եւ պարսկերէն լեզուներով կու տայ քաղաքական դասախօսութիւններ: Էնզելիի մէջ կը հիմնադրէ աղջկանց դպրոց:

Համաշխարհային Ա. Պատերազմին, Գ.Եղիկեան համաձայն չի գտնուիր կամաւորական շարժման: Աւելի ուշ, 1917 Յունիսին, Թիֆլիսի մէջ կը նախագահէ ՄԴՀԿ Ռուսաստանի, Անդրկովկասի եւ Պարսկաստանի մասնաճիւղերուն խորհրդաժողովը, ուր կը քննարկուի քաղաքական նոր իրավիճակին հանդէպ կուսակցութեան կեցուածքը: Խորհրդաժողովին, փոքրամասնութիւն մը կը պաշտպանէ ամբողջապէս պոլշեիկներու քաղաքականութեան հաւանութիւն տալու տեսակետը: Սակայն մեծամասնութիւնը, Գ.Եղիկեանի գլխաւորութեամբ կը պաշտպանէ ժամանակաւոր Կառավարութեան հաւանութիւն տալու, պուրժուա-դեմոկրատական կարգերը պաշտպանելու, ինչպէս Նաեւ ազգերու ազատ ինքնորոշման սկզբունքը պաշտպանելու տեսակետները:

1914-1921, Պարսկաստանի Գիլան նահանգին մէջ յառաջ կու գայ ապստամբական շարժում մը, որ կը կոչուի Ճենկալիներու ապստամբութիւն: Շրջանը կ'անցնի Միրզա Զիւլիկ խանի կողմէ ղեկավարուող յեղափոխական ուժերուն ձեռքը: Իրարայաջորդ իրադարձութիւններու պատճառով՝ Պարսկաստանի Սահմանադրական Յեղափոխութիւն (1905-1911), Համաշխարհային Ա. Պատերազմ (1914-1918), Ճենկալիներու Յեղափոխութիւն (1914-1921), Գիլանի շրջանը կը վերածուի ռազմաքաղաքական անկայուն շրջանի մը: Յաջորդաբար շրջան մուտք կը գործեն տարբեր երկիրներու բանակներ՝ ցարական Ռուսիոյ, օսմանեան, անգլիական, խորհրդային Ռուսիոյ եւ Պարսկաստանի կեդրոնական իշխանութեան: Այդ բանակները, ճենկալական յեղափոխութեան տարբեր հանգրուաններուն, մեկնած իրենց ռազմավարական շահերէն, Միրզա Զիւլիկ խանին հետ կ'ունենան թե՛ բարեկամական, թե՛ թշնամական յարաբերութիւններ: 1918 Ապրիլին, օսմ. բանակները կը մտնեն Պարսկաստանի սահմանէն ներս եւ կապեր կը հաստատեն ճենկալիներուն հետ՝ որոնց շարքերուն մէջ արդէն իսկ կային օսմ. բանակի սպա-

ներ: 1920 Մայիսին, ճենկալի-պոլշեիկ դաշինքին շնորհիւ Գիլանի մէջ կը ստեղծուի Պարսկաստանի Սովետական Սոցիալիստական Զանրապետութիւնը, որ կը գոյատեւէ շուրջ մէկուկէտ տարի: Այս խառնակ իրավիճակին մէջ կը վտանգուի Գիլանի հայութեան ֆիզիքական գոյութիւնը: Զայութեան վիճակը կը վատթարանայ նաեւ այն պատճառներով որ Ստեփան Շահումեանի կողմէ գլխաւորաւորաբար Պաքուի Կոմունայի օրերուն, հայութեան դէմ վրէժով լեցուած մեծ թիւով ազերիներ կ'ապաստանին Գիլան. իսկ Պաքուի Կոմունայի անկումէն ետք շրջան կ'ապաստանին շուրջ 10,000 հայեր: Գ.Եղիկեան, որպէս Գիլանի միջ-կուսակցական մարմնի (ՅՅԴ եւ ՍԴԶԿ) նախագահ ու նաեւ անձնական նախաձեռնութիւններով Միրզա Քիւչիք խանին հետ կ'ունենայ բազմաթիւ հանդիպումներ, կը շահի անոր անկեղծ բարեկամութիւնը եւ ստեղծուած բարդ կացութեան մէջ կ'ապահովէ հայութեան անվտանգութիւնը: Այդ շրջանին Գ. Եղիկեանի խաղած բացառիկ դերը մեկնաբանելու համար Արամ Արքուն կը գրէ.- «Եղիկեան միջկուսակցական ժողովի տիրական դէմքն էր: Ան ԿՅԴ-ի տեղական մարմիններուն կողմէ կ'ամբաստանւէր որպէս ինքնազուխ գործող: Նաեւ ԿՅԴ-ի կարգ մը ղեկավարներ անոր հանդէպ կասկածներ ունէին. սակայն ան այս կուսակցութեան մէջ եւս բարեկամներ ուներ: Միւս կողմէ, ան շատ կարեւոր էր եւ կարելի չէր անտեսել զինքը: Ինչո՞ւ այդպէս էր: Եղիկեան պարսիկ լայն շրջանակներուն կողմէ հանրաձանսօթ եւ յարգուած անձ մըն էր շնորհիւ իր նախապատերազմեան գործունէութեան՝ որպէս ուսուցիչ, հրապարակախօս, խմբագիր, թատերագիր, քաղաքական գործիչ եւ Գիլանի մէջ Պարսկաստանի Սոցիալ Դեմոկրատ Կուսակցութեան հիմնադիր: Ան, Կովկասի, Ռուսիոյ եւ Պարսկաստանի մէջ ուներ քաղաքական ազդեցիկ բարեկամներ: Զակառակ որ Եղիկեան պոլշեիկմիս հանդէպ հակակրօնութիւն կ'արտայայտէ՝ իր բարեկամներուն մէջ կային հանրաձանսօթ պոլշեիկներ, ինչպիսիք էին Ստեփան Շահումեանն ու Նարիման Նարիմանովը: Եղիկեան կը խօսէր ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն ինչպէս նաեւ պարսկերէն, հայերէն եւ թրքերէն: Սա կը դիւրացնէր իր հաղորդակցութիւնը անգլիական, ցարական եւ սովետական ուժերուն հետ, ինչպէս նաեւ հնարարութիւն կու տար հետեւելու Գիլանի վերաբերող միջազգային նորութիւններուն: Շատ մը այլ գործունէութիւններու կողքին, Եղիկեան թարգմանիչի դեր կատարեց ճենկալիներու եւ սովետական պաշտօնատարներու միջեւ կայացած կարգ մը կարեւոր հանդիպումներուն ընթացքին: Ան, Գիլանի Զնչակեան

Կուսակցութեան ամենէն կարեւոր եւ ամենէն գործունէայ ներկայացուցիչն էր: Ան միայն Քիւչիկ խանին հետ մօտիկ չէր, այլեւ մօտիկ էր անելի արմատական Իհսանուլլահ խանին հետ՝ որուն կառավարութեան օրով, 1920-ի վերջաւորութեան, ան ստանձնեց պետական պաշտօն (Սովտական իշխանութեան օրով, Իհսանուլլահ խանի գլխաւորած կառավարութեան կողմէ Գ.Եղիկեան կը նշանակուի լուսաւորութեան կոմիսարիատի կեդր. խորհուրդի նախագահ ու իր այդ պաշտօնով ան մեծապէս կը նպաստէ կրթական ցանցի վերելքին.- Ե.Ճ.): Եղիկեան բարդ կերպար մըն էր, որուն համար առաջնահերթ էր օսմանեան հայութեան ազատագրութիւնն ու Կովկասի եւ Պարսկաստանի հայութեան ճակատագիրը: Միեւնոյն ժամանակ ան կը գործէր ի խնդիր Պարսկաստանի ամբողջակաւորութեան պահպանման եւ ընկերվարական նպատակներու համար»<sup>172</sup>:

Պաքուի Կոմունայի օրերուն, Գ.Եղիկեան Միրզա Քիւչիկ խանէն կը լիագորուի Ս.Շահումեանի մօտ միջնորդութիւն կատարել՝ վերջինէս զինական օգնութիւն ստանալու համար: Միեւնոյն ժամանակ ան Ս.Շահումեանէն առաջարկ կը ստանայ Գիլանի մէջ ըլլալ Պաքուի սովետական իշխանութեան ներկայացուցիչը կամ գալ Պաքու եւ ստանձնել «Մեր Օրեր» թերթի խմբագրապետի պաշտօնը: Գ.Եղիկեան երկու առաջարկներն ալ կը մերժէ. («Մեր Օրեր»ու խմբագրապետ կը նշանակուի Սահակ Մուրատեան, որ կը նահատակուի Պաքուի պաշտպանութեան դիրքերուն վրայ):

Ճենկալիներու շարժման, ինչպէս նաեւ հայութեան հետ Քիւչիկ խանին ունեցած յարաբերութեան մասին Գ.Եղիկեան, 1919-20 թուականներուն, «Քիւչիկ հանը եւ Իր Գործը», «Մի կյցելութիւն Քիւչիկ խանին» եւ «Մի Տարի Գիլանում» ընդհանուր վերնագիրներու տակ պատմագրական տուեալներով հարուստ յօդուածաշարքեր կը գրէ Թաւրիզի հնչակեան օրկան «Չանգ»ին մէջ:

Պոլշեիկներու Գիլանէն հեռանալէն եւ Ճենկալիներու ապստամբութեան զապումէն ետք, Գ.Եղիկեան Թեհրանի մէջ կ'ըլխատակցի պարսկական «Սեթարի Իրան» թերթին ուր կը հրատարակէ «17 Ամիս Յեղափոխութիւն Գիլանի մէջ» յօդուածաշարքը, որ կեդրոնական իշխանութեան կողմէ կ'արգիւոյի եւ Եղիկեան կը ստիպուի հեռանալ Թեհրանէն ու հաստատուիլ Ռաշտ:

1923-ին, Գ.Եղիկեան վճռականապէս դէմ կը կենայ ՍԴԶԿը Կոմիսարիատի անդամ դարձնելու եւ զայն Կոմունիստական Կուսակցութեան մէջ լուծելու բոլոր փորձերուն ու կը պաշտպանէ Կուսակ-

ցութեան ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը պահպանելու տեսակետը: Սկզբնական շրջանին ան այս ուղղութեամբ բազմաթիւ շրջաբերականներ (շուրջ 100) կը յղէ Վարիչ Մարմիններուն եւ անհատ ընկերներու: Աւելի ուշ, այս նպատակի քարոզչութեան համար ան կ'օգտագործէ Փարիզի կուս. օրկաններ «Արծազանց Փարիզի»ն եւ «Նոր Երկիր»ը: 1938-1940թթ., Պոսթոնի դաշնակցական օրկան «Յայրենիք» ամսաթերթին մէջ Գ.Եղիկեան «Իմ Յիշողութիւններից» ընդհանուր վերնագրի տակ կը հրատարակէ պատմական տուեալներով հարուստ յօդուածաշարք մը՝ որ իր օրին կը հանէ մեծ աղմուկ: Այդ շրջանին ան կը խմբագրէ նաեւ պարսկական «Իրանէ Խապրի», «Ասիայէ Ուղստա», «Սատատղէ Պաշար» եւ «Իրանէ Ղանուկ» թերթերը: Իր գրութիւններուն մէջ Գ.Եղիկեան ոչ միայն կը պաշտպանէ Յնչակեան Կուսակցութեան ինքնուրոյնութիւնը, այլեւ քննադատելով ստալինեան բռնարարները կը պնդէ որ Խորհ. Միութենէն ներս կիրարկուածը իսկական սոցիալիզմ է՝ այլ բռնատիրութիւն: Օրինակի համար, Թեհրանի մէջ իր տուած դասախօսութիւններէն մէկուն ընթացքին ան կ'ըսէ. - «Պոլշեիկեան շարժումները կարողացան Լենինին հասցնել իշխանութեան, բայց երբեւիցէ չպիտի կարողանան Ռուսաստանում տնտեսական բարօրութիւնը ապահովել եւ քաղաքացիական ազատութիւնը կրկին կեանքի կոչել եւ Ռուսաստանը պիտի ապրի տարիների մի թշուառ կեանք, մինչեւ որ Լենինի եւ իր ընկերների ստեղծած ռեժիմը տապալուի ժողովուրդի բարկութեան յորձանքի ճնշման տակ»<sup>173</sup>: Գ.Եղիկեան կը քննադատէ նաեւ Պարսկաստանի մէկ հատուծին վրայ սովետական իշխանութիւն հաստատելու փորձերը՝ որովհետեւ այդ ժողովրդային լայն խաւերուն նեցուկը չէր վայելեր ու կը սպառնար Պարսկաստանի հողային ամբողջականութեան: Ան դէմ կ'արտայայտուի նաեւ խորհրդային դեսպաններու, հիւպատոսներու եւ պաշտօնակատարներու (որոնց մէջ նաեւ հայեր) Պարսկաստանի (նաեւ պարսկահայութեան) ներքին գործերուն միջամտելու փորձերուն: Այս տեսակետները ան կը պաշտպանէ նաեւ պարսկական թերթերու մէջ:

Գ.Եղիկեանի հակապոլշեիկեան տեսակետները կը շղագրօնէ խորհրդային իշխանութիւնները, որոնց Պարսկաստանի դեսպանատան գործավարները հրապարակ կը նետեն այն ամբաստանութիւնը թէ ան անգլիական իմբերիալիզմի գործակալ մըն է<sup>174</sup>: Անոնք այս ամբաստանութիւնը կը տարածեն հնչակեան շարքերուն մէջ՝ պահանջելով որ ան արտաքսուի կուսակցութենէն<sup>175</sup>: Աւելին,

Ալեքսանդր Միասնիկեան Գ.Եղիկեանին կու տայ «դիակնացած» ածականը<sup>176</sup>: Գ. Եղիկեան իր դէմ նետուած ամբաստանութիւններուն կը պատասխանէ. - «Անգլիացիներին օգտակար եմ եղել իմ ուժերիս չափով: Եթէ անելի շատ ուժ ունենայի, անելի շատ օգտակար կը լինէի նրանց, որովհետեւ նրանք մեր դաշնակիցներն էին թուրքերի դէմ: Ով որ Թուրքիայի դէմ էր, քարեկամս է, եւ ես պատրաստ եմ ամէն կերպ նրան աջակցելու»<sup>177</sup>:

Գ.Եղիկեան, «Նոր Երկիր» թերթին եւ Յնչակեան հրատարակութիւններու եւ մամուլի օրկաններու մէջ, կը շարունակէ բուռն կերպով քննադատել խորհրդային կարգերը, գտնելով որ «սովետական երկրներում սոցիալիստական կարգեր չկան»<sup>178</sup>: Դաշնակցական մամուլը ջերմ հիւրընկալութեամբ կ'արտատայէ գանոնք: Աւելին. Փարիզի «Յառաջ»ը իր խմբագրականին մէջ կը գրէ. «Այս առթիւ ինչպէս չիչէլ հնչակեան վաղեմի գործիչին, Գրիգոր Եղիկեանի այնքան կծու յօդուածաշարքը, որուն վերջին մասը արտատպած ենք այսօր: Տակաւին ոչ մէկ դաշնակցական արտայայտուեցաւ Եղիկեանի բառերով ու մտքերով: Կամ եթէ կ'ուզէր արտայայտուիլ, չգտաւ դաշնակցական թերթ մը որ տպէր»<sup>179</sup>: Գ.Եղիկեան Կուսակցութեան մէջ կը դառնայ վիճայարոյց կերպար մը: Անոր մասին կ'անդրադառնան հնչակեան մամուլի գրեթէ բոլոր օրկանները<sup>180</sup>: Ի վերջոյ, «Պարսկական Յանրագիտարան»ին համաձայն, Գ.Եղիկեան 1938-ին կ'արտաքսուի ՍՂԳԿ-ի շարքերէն<sup>181</sup>:

Իր ազգային, քաղաքական, յեղափոխական, խմբագրական գործունեութեան կողքին, հրապարագրական եւ յուշագրական բեղուն գրչին զուգահեռ, Գ.Եղիկեան կը գբաղի նաեւ գեղարուեստական գրականութեամբ: Անոր գրչին կը պատկանին շուրջ 30 անուն գրական ստեղծագործութիւն.-3 վէպ, 2 վիպակ, շուրջ 10 թատրերգութիւն (որոնցմէ ոմանք թարգմանուած պարսկերէնի ու բեմադրուած հայկական եւ պարսկական բեմերու վրայ), նոյնքան մըն ալ պատմուածքներ՝ ցրուած մամուլի տարբեր օրկաններու մէջ: Վերոյիշեալներու շարքին առանձին հատորներով լոյս կը տեսնեն «Սաբիթ» վէպը, «Թոյն» եւ «Յամբ» պատմուածքները, «Նոր Մարգարէն», «Յուրիդ», «Կին», «Արեան ճանապարհով» եւ «Յարազատներ» թատրերգութիւնները: Գ.Եղիկեան իր գրականութեան նիւթը ընդհանրապէս վերցուցած է հայ ազգ.-ազատագրական պայքարի եւ ընկերային շարժումներու դրուագներէն: Անոր ամենէն յայտնի երկը՝ «Սաբիթ» վէպը նուիրուած է հայ ազատագրական պայքարի ռահվիրայ Ժիրայրի (Մարտիրոս Պոյաճեան)

կեանքին ու գործունեութեան:

Գ.Եղիկեան գործածած է Գ.Մարգարեան, Վ.Թուրեան, Վ.Վասակունի, Պ.Անդրիասեան, Գ.Աստղունի, Մի Զնչակեան եւ հաւանաբար այլ գրչանուններ եւ ծածկանուններ:

Մինչեւ իր կեանքին վերջը, Գ.Եղիկեան կը շարունակէ իր ազգային, քաղաքական, կրթական ու գրական գործունեութիւնը: Կը մահանայ 1951-ին:

Իր մահէն 58-ը տարի ետք, ՍՂԴԿ 19-րդ Զամագումարը, Երեւանի մէջ, կը վերաքննէ Գ.Եղիկեանի կուսակցութենէն վտարման հարցը, նոր տուեալներու լոյսին տակ կը վերաբժեւորէ պատմական այդ ժամանակաշրջանը ու կը վերահաստատէ անոր կուսակցականութիւնը: Ցարդ միակ դեպքը Զնչակեան պատմութեան մէջ: Այս որոշումով, ՍՂԴԿ-ը առաջին հերթին կը վերականգնէ ոտնահարուած արդարութիւն մը:

Իսկ Արդարութեան վերականգման համար ժամանակ եւ վայր գոյութիւն չունին:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

[1] ՍՂ Զնչակեան Կուսակցութեան յեղափոխական առաջին սերունդին կը պատկանի Ցարութիւն Շեքերճեան: Ծնած է 1869-ին Արաբկիրի Բուշնա գիւղը: 1888-ին կ'աւարտէ Պոլսոյ Կեդրոնականը եւ վերադառնալով ծննդավայրը ուսուցչութիւն կը կատարէ Արաբկիրի, Կարբերդի եւ Կապէն-Մատենի մէջ, ուր կը տանի նաեւ յեղափոխական քարոզչութիւն: 1891-ին կը մեկնի ԱՄՆ եւ Ռատորի մէջ կը հիմնէ հնչակեան առաջին մասնաճիւղը եւ հայկական գրադարան մը: Ռուբէն Խանազատի ԱՄՆ այցելութեան, կ'ընկերանայ անոր շրջագայութեան: 1895-ին կը տեղափոխուի Լոնտոն՝ Կուսակցութեան կեդրոնատեղին: «Ծիծաղ» գրչանունով կ'աշխատակցի «Ապտակ» երգիծաթերթին: 1898-ին կ'անցնի Կովկաս եւ ապա Պարսկաստան ու կուսակցական քարոզչութեան նպատակով կ'այցելէ տարբեր քաղաքներ: Կը վերադառնայ ԱՄՆ ու կը հաստատուի Շիքակօ: 1910-ին կուսակցական առաջելութեամբ դարձեալ կը մեկնի Կովկաս, ուր հիւանդութեան մը պատճառով կը մահանայ 1917-ին, Թիֆլիսի մէջ: Որպէս բժիշկ-հիվանդիստ ունի անգլերէն լեզուով աշխատութիւններ իր մասնագիտութեան վերաբերեալ:

- [2] «Երիտասարդ Զայաստան», 1907, Յունուար 16:  
[3] «Երիտասարդ Զայաստան», 1907, Յունուար 23:  
[4] «Երիտասարդ Զայաստան», 1907, Յունուար 30:  
[5] «Երիտասարդ Զայաստան», 1907, Յունուար 9:  
[6] «Երիտասարդ Զայաստան», 1907, Մայիս 8:  
[7] Shukru Hanioghlu, «Preparation For A Revolution», Oxford, 2001, pp. 192 & 437:

[8] «Զնչակեան Տարեգիրք», Ա. տարի, Փրովիտենս, 1931. Մ.Մ., «Գրիգոր Եղիկեան», էջ 189:

[9] Ehsahan Yarshatar, «Encyclopedia Iranica», Costa Mesa, CA., 1998, p. 364:

[10] «Յուշարձան Նուիրուած ՍՂԴԿ Զառասանամեակին», Փարիզ, 1930. Գ.Աստղունի «Ինչպէս Կազմուեց Պարսկաստանի ՍՂ Կուսակցութիւնը», էջ 193:

[11] Houry Berberian, «Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911», 2001, Colorado, p. 143:

[12] «Iranian Studies», volume 30, No. 1-2, Winter/Spring 1997. Aram Arkun, «Armenians And The Jangalis», p. 36:

[13] «Զայկագեան Զայագիտական Զանդես», ԻԲ հտ., Պէյրութ, 2002. Եղիկ Երեւեան, «ՍՂԴԿ-Կոմիւնիզմը Յարաբերութիւնները»:

[14] «Զայրենիք», 18-րդ տարի, Յունուար, թիւ 3, 1940. Գ.Եղիկեան «Զնչակեանները եւ Նրանց Պոլշեիկների Զետ Միանալու Փորձերը»:

[15] «Զայրենիք», 1940, Մարտ, թիւ 5, էջ 134 եւ 145-146:

[16] Ալ. Մարտունի (Ալեքսանդր Միասնիկեան), «Կուսակցութիւնները Գաղութահայութեան Մէջ», Թիֆլիս, 1924, էջ 123:

[17] «Զայրենիք», 1940, Յունուար, թիւ 3:

[18] «Յուշարձան Նուիրուած ՍՂԴԿ Զառասանամեակին», Փարիզ, 1930. Գ.Եղիկեան, «Զնչակեան Կուսակցութեան Զառասանամեակին Առթիւ»:

[19] «Յառաջ», 1934 Ապրիլ 18:

[20] «Սուրիական Մամուլ», 1924 Օգոստ. 17. «Երիտասարդ Զայաստան», 1933 Նոյ. 11. «Երիտասարդ Զայաստան», 1934 Մայիս 26. «Արարատ», 1947 Նոյ. 14:

[21] «Encyclopedia Iranica»,...p. 364:

# ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐԵԱՆ (ԱՐՄԷՆ ԿԻՏՈՒՐ)

Հարուստ եւ բազմաբնոյթ գործունեութեամբ՝ ՄԴ Յնչակեան գաղափարանուէր գործիչներու շարքին մէջ իր ուրոյն տեղը ունի Արսէն Կիտուր:

Ա.Կիտուր ծնած է Պայազադ, 1883-ին:

Կը յաճախէ Էջմիածնի Գեորգեան ճեմարանը զոր կ'աւարտէ 1908-ին: Ուսանողական նստարաններուն վրայ, 1905-ին կ'անդամակցի Յնչակեան Կուսակցութեան: Կը մասնակցի ուսանողական խլրտումներուն: Այս մասին, դէպքերուն ժամանակակից, ազգագրագետ Սարգիս Յայկունի կը գրէ. «Այդ շրջանի աշակերտներ էին նաեւ հնչակեան հակումներով տարուած Գուրգէնը, իր քոյր Արուսեակը, Աքքանազ Մռաւեանը, Թադէոս Աղալբէկեանը, Եղուարդ Ամատունին, Արսէն Կիտուրը, Արտաշէս Տիրացեանը, Երեմիա Բակունցը եւ ուրիշ շատեր: 1906 էր որ Մեսրոպ Մազիստրոսի յետադիմական կարգերու դէմ յեղափոխութիւն յառաջացնող 24 ուսանողներ քստորուեցան եւ Թիֆլիս գացին՝ բնակութիւն հաստատելով Մինսկ փողոցի թիւ 4-ին մէջ, որոնց մէջ էին Գուրգէն Յայկունի, Աղալբէկեան, Եղ. Ամատունի, Տիրացեան, Ա.Կիտուր, թաւրիզցի Կահրամ Փիլոսեան, Արտ. Յովհաննէսեան, Տոնեան եայլն, որոնք սերտ շփում ունեցան բոլոր խմբագրութիւններու հետ եւ լսեցին Ստ. Շահումեանի եւ Ստալինի ճառերը: Այս բոլորը յաղթական վերադարձ ունեցան ճեմարան, տեսուչ ունենալով ո՛չ թէ Մազիստրոսը, այլ Գարեգին վրդ. Յովսէփ-



եանը եւ փոխ տնօրէն Մինաս Պերպերեանը (եղբայրը Յնչակեան Կեդրոնի անդամ Ռուբէն Պերպերեանի) եւ յեղափոխականօրէն խմորեցին ուսանողութեան կեանքը»<sup>1)</sup>:

Կը մեկնի Կ.Պոլիս եւ 1909-1914 կը յաճախէ Կ.Պոլսոյ Պետական Բարձրագոյն Ուսուցչանոցը: 1910-ին աշխոյժ ձեւով կը մասնակցի ՄԴԿ Կ.Պոլսոյ «Կայծ» Ուսանողական Միութեան հիմնադրութեան եւ անոր համանուն ամսաթերթի հրատարակութեան աշխատանքներուն: «Կայծ»-ի մէջ լոյս կը տեսնեն Ա.Կիտուրի գաղափարաստանական եւ փիլիսոփայական յօդուածները: Ան կ'օգտագործէ նաեւ KITARS գրչանունը: Ա.Կիտուր, Նոյն նիւթերով կ'ըլլայ նաեւ ուսանողական միութեան կազմակերպած դասախօսութիւններուն յաճախակի դասախօսներէն: Որպէս «Կայծ»-ի մատենաշար կը հրատարակուին Ա.Կիտուրի երկու գիրքերը՝ «Պատմութեան Փիլիսոփայութիւնը» (1911) եւ «Պատմական Մաթերիալիզմը» (1914): 1912-ին, Ա.Կիտուր քաղաքական նիւթերով կ'աշխատակցի Կ.Պոլսոյ հնչակեան պաշտօնաթերթ «Նոր Աշխարհ» օրաթերթին: Ան իր յօդուածներուն մէջ մասնաւորաբար կը քննադատէ Իթթիհատն ու անոր քաղաքականութիւնը: Այս ծիրէն ներս, ուշագրաս կ'ըլլայ Ա.Կիտուրի «Իթթիհատը եւ Իթթիլաֆը» յօդուածը<sup>2)</sup>, ուր ան կու տայ երկու կուսակցութիւններուն նախընտրական ծրագիրներուն բաղդատականը: Յօդուածն ի յայտ կու գայ թէ Իթթիլաֆ իր ծրագրով շատ ատելի ազատախոհ եւ փոքրամասնութիւններու իրաւունքները յարգող էր քան Իթթիհատը. (դժբախտաբար, ժամանակաշրջանը ուսումնասիրող հայ պատմաբաններուն կողմէ այս յօդուածը համապատասխան ուշադրութեան արժանացած չէ):

Ա.Կիտուր, որպէս պատգամաւոր կը մասնակցի ՄԴԿ Տաճկաստանի շրջանի Ա. (1910), Բ. (1912) եւ Գ. (1914) պատգամաւորական ժողովներուն:

Համաշխարհային Ա. պատերազմին, օսմանեան կառավարութեան հրամանով բոլոր համալսարանաւարտները կը զօրակոչուին բանակ: Ա.Կիտուր եւս կը սկսի յաճախել սպայից դպրոցի Խտացեալ դասընթացքներուն: Նոյն ատեն, ազգային իշխանութեան կողմէ կը նշանակուի Պալքեցեցիի ազգ. դպրոցին տնօրէն: Այդ միջոցին, ՄԴԿ-ի 7-րդ Համագումարի որոշումներուն մատնութեան պատճառով, տեղի կ'ունենան հնչակեան ղեկավարներու ձերբակալութիւնները: ՄԴԿ Կարիք Մարմինը կը նշանակէ երեք հոգիւնց «դատական յանձնախումբ» մը, կազմուած Ա.Կիտուրէ, Վահան Զէյթունցեանէ եւ Ասատուր Էլճանեանէ, որուն պարտականութիւնը կ'ըլլայ «շփման մէջ մտնելով գաղափարակից փաստաբաններու եւ բարեխիղճ դատաւորներու հետ, պիտի փաստին թէ Տաճկաստանի ՄԴ Յնչակեան մասնաճիւղերը դէմ եղած են իլլեկլալիզմի քաղաքականութեան, հետեւաբար անիրաւ տեղ անոնք կը բանտարկուին»<sup>3)</sup>:

Մինչ այդ, կրթական նախարարութեան կողմէ, Ա.Կիտուր որպէս

ընթացաւարտ պետական ուսուցչանոցէն, կը նշանակուի Պաղտատի պետական վարժարանին ուսուցիչ: Մեծն Մուրատի խորհուրդով, կը հրաժարի իր ազգային եւ կուսակցական պարտաւորութիւններէն ու կը մեկնի Պաղտատ: Ուսուցչութիւն կը կատարէ Սուլթանիէ դպրոցին մէջ: Կը մասնակցի ազգային կեանքին. կ'ընտրուի թաղական խորհուրդի անդամ եւ կը նշանակուի Թարգմանչազ դպրոցի վերատեսուչ:

1915-ին, Ա.Կիտուր Պաղտատի մէջ կը ձերբակալուի եւ կը բանտարկուի: Արաբ ազգայնական սպաներու աջակցութեամբ՝ որոնցմէ շատերուն զաւակները աշակերտ էին իրեն՝ կը յաջողի փախչիլ բանտէն: Նոյն սպաներուն օգնութեամբ, որպէս պոլսեցի թուրք-իթթիլաֆական սպայ՝ Չասան անուով, կը միանայ Նեճեֆի եւ Զերպալայի մէջ գործող ապստամբապետ Աճեմիի ուժերուն. (Ա.Կիտուր արաբերէն լաւ չէր գիտեր եւ չէր կրնար ինքզինք կեղծել որպէս արաբ): Այս շրջանին մասին Ա.Կիտուր իր յուշերուն մէջ կը գրէ. «Ամիսներ տեւեց Աճեմիի հակաբանակային խափանարարութիւնը: Թուրք էլ Ամարայէն փախչող թուրք դասալիքները կ'անկետացուէին եւ անոնց զենքերով կը զինուէին արաբները, որոնք յարմար առիթին կը սպասէին կռնակէն հարուածելու համար թուրք բանակը, երբ անգլիացիք յառաջանային: Պարենաւորումի գործը կը կազմակերպէի: Փաթթած կակու ու քէֆէն, որ այդ առնետուան Արաբիոյ թուրք սպաներու համազգեստն էր: Կը կրէի նաեւ ենթասպայի համազգեստ: Թուրք զինուորը կ'որսացուէր իբր սեւ աղուէս, որուն մորթը այնքան յարգի էր: Ստիպուած էի երթալ մինչեւ Եփրատ գետին ափերը, ուր կը գտնուէին Ռակիներու թեքքէները եւ անոնց միջոցով սննդեղէն հասցնելու ապստամբ արաբներուն: Ռակիներու իշխանութիւնը կը տարածուէր մինչեւ Տեր Չօր եւ Ռաքքա»<sup>61</sup>: Այս միջոցին, Ա.Կիտուր ականատեսը կ'ըլլայ արաբական անապատներուն մէջ թրքական բարբարոսութեան զոհ գացող հայ ազգի ողջակիզումին: Ան, իր հնարաւորութեան սահմաններուն մէջ կ'օժանդակէ գաղթականներուն եւ կը կատարէ որբահաւաք: Ան բարեկամական անկեղծ կապեր կը ստեղծէ Սինճար լեռան եզտիներու շէյխ Միր Իսմայիլի հետ: Հայ գաղթականները փրկելու ճիգի մեծապէս օգտակար հանդիսացած տոյն բարեկամութեան մասին, տարիներ անց, Հայաստանի եզտիներու առաջնորդ շէյխ Չասան Չասանեան, ՄԴՀԿ 16-րդ Համագումարի բացման Նիստին կը յայտարարէ. «Հնչակեանների եւ եզտիների գործակցութիւնը, սկսուելով 19-րդ դարի վերջին քառորդում, առաւել զարգացել է 1915-20 թուականներին: Եզտիների Միր Իսմայիլի եւ Հնչակեան Կուսակցութեան պատասխանատուներից՝ Արսէն Կիտուրի համատեղ գործողութիւններն են եղել այդ զարգացման հիմքը: Ա. Կիտուր եւ Միր Իսմայիլի փայլուն գործերից մեկն այն է, որ նրանք 1918 թուականին 600 հայ ընտանիքների, եւթադանից փրկելու նպա-

տակով, որոշել են նրանց տեղափոխել Եզտիաբնակ գիւղերում, մինչեւ որ կարողանան անվտանգութեան պայմաններում հայրենադարձել: Այդ նպատակով նրանք դիմել են անգլիական հրամանատարութեանը՝ զինուժ խնդրելով: Ա.Կիտուրի եւ Միր Իսմայիլի դժուարին ու վտանգաւոր, սակայն ազգանուէր գործը պատկուում է յաջողութեամբ ինչպէս 600 հայ ընտանիքներ, այնպէս էլ բազմաթիւ եզտիներ փրկուում են արևմտարու թշնամու կտտորածից»<sup>62</sup>:

Զարքաշ եւ թրքառական կեանքին պատճառով, Ա.Կիտուր կը վարակուի մալարիայէ: Կը ստիպուի վերադառնալ Պաղտատ եւ կեղծ ինքնութեամբ մտնել հիւանդանոց: Մինչ այդ, անոր ձերբակալութիւնն ու երկար ժամանակ բացակայութիւնը հրապարակէ, ենթադրել տուած էր թէ ան եւս նահատակուած է: Մինչեւ իսկ կարգ մը թերթեր կը տպէն անոր կախադանման լուրը...: Իրեն ծանօթ հայ եւ արաբ ազգայնական բժիշկներ կը յայտնաբերեն Ա.Կիտուրի ինքնութիւնը, որոնց յատուկ խնամքով ան կ'ապացինի: Այդ շրջանին Պաղտատի մէջ օսմանեան կեդրոնական իշխանութեան ազդեցութիւնը խիստ տկարացած էր ու քաղաքին իրողական տերերը արաբ ազգայնականները դարձած էին: Վեջիններս կը զգեստեն Ա.Կիտուրի ձերբակալման հեղինակ լրտես Թեւֆիկը, որ կրցած էր երկրորդ անգամ ըլլալով գտնել անոր հետքերը: Պայմանները թոյլատու կ'ըլլան որ Ա.Կիտուր մտնէ ազգային-հասարակական կեանքին մէջ ու հետապնդէ զինք մտաւանջող գլխաւոր մտահոգութիւնը՝ հաւաքել Միջագետքի անապատին մէջ տակաւին ողջ մնացած հայու բեկորները: Այս նպատակին համար ան կը հիմնէ «Միջագետքի Տարագրելոց Պաշտպան Մարմին»ը: Կը վերստանձնէ Սուլթանիէ դպրոցի ուսուցչական պաշտօնն ու Ազգային վարժարանի տեսչութիւնը:

Ա.Կիտուր կը գործակցի արաբ իթթիլաֆականներու եւ կէլանիներու հետ: Ասոր կողքին, ան իր աշակերտներէն կը կազմէ խմբակ մը ու անոնց կը բացատրէ սոցիալիզմի սկզբունքները: Այս խմբակէն ապագային դուրս կու գան Իրաքի ծախակողմեան շարժման շատ մը ղեկավարները, որոնց շարքին՝ Իրաքի Համայնավար Կուսակցութեան հիմնադիր Հուսէյն Ալ Ռահիպի<sup>63</sup>:

Այդ օրերուն Պաղտատի թեմի Առաջնորդ Փառնէ ծ. վրդ. Մելքունեան, Ա.Կիտուրի ազգային-քաղաքական գործունեութեան մասին իր տեղեկագիրին մէջ կը գրէ. «ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐ - 27-28 տարեկան ռուսահայ յայտնի լեզափոխական եւ յառաջդիմական մտաւորական մըն է, որ գիտէ հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն, ռուսերէն եւ անգլերէն (գոր կը սորվի) լեզուները: Իբր կրթական մեծ գործիչ եւ իբր վկայաշէ Պոլսոյ պետական բարձրագոյն «Տար Իւլ Մուալլի-իթ»-էն: Անատոլիի եւ Ռումելիի հայաբնակ կեդրոն քաղաքներուն մէջ գործեր տեսնելէ, կրթական դաստիարակչական (եւ քաղաքական) կարեւոր բարեկարգութիւններ ի գործ եւ ի յոյց ղնելէ վերջ,

1914-ին Պաղտատ պետական (Սուլթանիէ) վարժարանին ուսուցիչ որդուած էր: Այս առիթով իր ներկայութիւնը եւ կարողութիւնը մեծապէս գնահատուած եւ օգտակար եղած է արաբ եւ տեղոյն հայ գաղութին համար: ...Գաղափարապաշտ բան մըն է դեռ եւս հիմա»:

1917-ին, Ա.Կիտուր թարգմանիչի պաշտօն կը կատարէ Պաղտատ մտած անգլիական բանակի հրամանատար գոր. Մօտի քով: Այս պաշտօնին բերմամբ, ան առիթ կ'ունենայ յարաբերութեան մէջ մտնելու Պարսկաստան յառաջացած ռուսական բանակի հրամանատարութեան հետ: Կ'անցնի ռուսական բանակին կողմը: Ապա, իր ետին ձգելով կիսն ու երեք ամսական դուստրը, վտանգալից ճամբորդութեամբ մը կը հասնի Թիֆլիս, ուր Ազգային Բիւրոյին եւ ազգային-կուսակցական այլ մարմիններու կը զեկուցէ Միջագետքի անապատներուն մէջ գտնուող հայ ժողովուրդի բեկորներուն մասին:

Ա.Կիտուր, անմիջապէս կը միանայ Արեւմտահայ հորհուրդի աշխատանքներուն, որուն գլխաւոր նպատակներն էին հետապնդել Արեւմտահայ դատը եւ զբաղիլ զաղթականներու հարցերով:

Արամ Մանուկեանի թելադրանքով, որպէս «Պայագիտ-Ալաշկերտ շրջանի լիագոր ներկայացուցիչ», կը մեկնի ծննդավայրը՝ Պայագիտ, կազմակերպելու համար նահանջող ռուսական բանակներուն պատճառով անպաշտպան մնացած շրջանի ինքնապաշտպանութիւնը: Ան, դժուարին պայմաններու տակ, ծեռնհասօրէն կը կատարէ այդ առաքելութիւնը, միեւնոյն ժամանակ շրջահայեաց քաղաքականութեամբ մը ապահովելով շրջակայ եգիտներուն, ասորիներուն եւ քիւրտներուն չեզոքութիւնը: Այդ մասին Ռուբէն Տեր Մինասեան կը գրէ. - «Արսէն Կիտուրի շնորհիւ էր որ ստացուեց եգտի շէյխի կոնդակը եգիտներին ուղղուած, որով կը յանձնարարուէր բոլոր եգիտներն իրենց բաղդը կապել հայութեան եւ Յայաստանի հետ եւ հայ կուլտուրան ընդունիլ իբր իրենց սեփականութիւնը: Այդ կրօնական հրովարտակը, գրուած եգտի կրօնական եւ աշխարհական պետի կողմից, ուներ իր բարոյական մեծ նշանակութիւնը եւ Յայաստանի հայ, եգտի միացումը մասամբ այդ հրովարտակին կը պարտինք: Ասորիների հետ Յայաստանի կապակցութիւնը տարուում էր Լեւոնի, Արսէն Կիտուրի եւ այլոց կողմից: Ան ունեցաւ իր քաղաքական նշանակութիւնը, որովհետեւ 60000 ասորիների շահագրգռութիւնը Վանից հարաւ գտնուող շրջաններով, մեզ դնում էր դաշնակցի վիճակի մէջ: Ի զուր չէն անցած թէ նախկին եւ թէ վերջին թափած քանքերը»<sup>71</sup>:

Թրքական գերակշիռ ուժերու հարուածներուն տակ Պայագիտ կ'իյնայ: Ա.Կիտուր կը կազմակերպէ Ալաշկերտի, Պայագիտի եւ Վանայ շրջակայ գիւղերէն հասած զաղթականութեան նահանջը՝ նախապէս գոր. Սմբատի եւ Վանեցի Մանուկի հետ վտանգագերծելէ ետք Բարթող լեռան լանջերը գրաւած քրտական աւազակա-

խումբերը:

Մինչեւ 1918 Մարտ, Ա.Կիտուր կը զբաղի զաղթական բազմութիւնները Արագածի ստորոտը գտնուող Փարպի, Ագարակ, Զախսի ինչպէս նաեւ Սեւանայ լիճի ափին գտնուող Նոր Պայագիտ գիւղերը տեղաւորելով՝ յիշեալ շրջանները թուրք եւ քիւրտ հրոսակախումբերէն վնասագերծելէ ետք:

Կը մասնակցի Սարդարապատի ճակատամարտին՝ որպէս պահեստապետ:

Կարճ միջոց մը կը գործակցի Պանդուխտի ծիւղոր գունդին հետ, որմէ ետք կը միանայ գոր. Անդրանիկի Յատուկ Գարուածող Չորամասին: Կ'ընկերանայ Անդրանիկին դէպի Նախիջեւան կատարած անոր զինուորական արշաւին: Կը մասնակցի Պողազ Զետէի, Զուլֆայի, Խոյի եւ այլ կռիւներուն:

Կը բաժնուի Անդրանիկէն որ (կը բարձրանայ Չանգեզուր) եւ կը վերադառնայ Երեւան: Դարձեալ կը լծուի Արեւմտահայ հորհուրդի աշխատանքներուն: 1919 Յունուարին կը մասնակցի Արեւմտահայ Բ. Գամազումարին եւ կը վարէ ժողովի քարտուղարի պարտականութիւնը: Կ'ընտրուի Արեւմտահայ հորհուրդի գործադիր մարմնի անդամ: Արեւմտահայ հորհուրդէն նշանակուած 12 երեսփոխաններուն կարգին, տեղ կը գրաւէ Զայաստանի Զանրապետութեան հորհրդարանին մէջ: 1919 Մայիս 28-ին կը մասնակցի Միացեալ Զայաստանի հռչակման պատմական ակտին:

հորհրդարանի առաջին նիստին կ'որոշուի ներկայացուցիչ մը որդել Միջագետք եւ Կիլիկիա, կազմակերպելու համար հայ բեկորներու ներգաղթը Զայաստան: Վարչապետ Խատիսեան այդ առաքելութիւնը կը յանձնէ Ա.Կիտուրին՝ անոր տալով Պաղտատի մէջ Զայակական Զանրապետութեան ներկայացուցիչի կոչում:

Այազային, պատմաբանը պիտի գրէր. - «Կառավարութիւնը զաղթականութեան խաբելու համար միայն փառլամենտում անուանապէս 3 միլիոն ռուպլի ներգաղթին յատկացնելու որոշում կայացրեց: Իրականում ոչ մի կոպէկ էլ չտրամադրեց այդ գործին, եւ, ինչպէս ճիշդ կերպով հետագայում գրում է Ա.Կիտուրը, դա կատարուեց «տաճկահայ պատգամաւորներու, հետեւաբար մեր ետեւը կանգնած 400000 զաղթականութեանը քնացնելու» եւ ոչ թէ իսկապէս միջագետքահայ տարագիրներին օգնելու համար»<sup>72</sup>:

Ա.Կիտուր կը վերադառնայ Պաղտատ եւ յաջորդող տարիներուն, անոր քանքերուն շնորհիւ, շուրջ 20000 հայորդիներ կը տեղափոխուին Զայաստան: Կը նշանակուի Ազգ. Թարգմանչաց դպրոցի տնօրէն ու կը մասնակցի ազգային-հասարակական կեանքին: Անկի ուշ, հորհրդային Զայաստանի կողմէ կը նշանակուի ԳՕԿ-ի (Զայաստանի Օգնութեան Կոմիտէ) ներկայացուցիչ: 1925-ին, ԶՅԴ Իրաքի Կոմիտէին կողմէ կը նշանակուի «Դրօշակ» պաշտօնաթերթի Միջագետքի ներկայացուցիչ<sup>73</sup>:

1936-ին, որպես «համայնավար» կը վտարուի Իրաքէն ու կարճ ժամանակ մը կը հաստատուի Գալէպ: 1937-ին կու գայ Պէյրուս եւ կը նշանակուի «Արարատ» օրաթերթի առաջին խմբագրապետը: Ա. Կիտուր, «Վերջերս, Պաղտատէն փոխադրուելով Պէյրուս խմբագրած է ձեռնհասօրէն «Արարատ» թերթը, որ իր ուժեղ խմբագրականներով օրուան քաղաքական անցուղարձերու շուրջ հետաքրքրութեամբ կը կարդար ժողովուրդը: Կարգ մը պատմառևերով սակայն ստիպուեցաւ ակամայ հեռանալ իրեն այնքան սիրելի խմբագրութենէն կրկին նետուելու համար դաստիարակչական ու կրթական ասպարէզը, ընդունելով Գալէպի Կիլիկեան վարժարանի տնօրէնութեան պաշտօնը»<sup>[10]</sup>: 1938-40 Գալէպի Կիլիկեան վարժարանի տնօրէնութիւնը, «կը վարէ ձեռնհասօրէն»<sup>[11]</sup>: Կը տեղափոխուի Լիբանանի Չահլէ գիւղաքաղաքը եւ 1940-42 կը ստանձնէ Ազգ. Պալքճեան վարժարանի տնօրէնի պաշտօնը:

1942-ին կը հաստատուի Պէյրուս եւ մինչեւ 1957, ընդմիջումներով կը խմբագրէ «Արարատ» օրաթերթը: «Արարատ»-ի էջերուն մէջ Ա. Կիտուր յատկապէս կը քննադատէ կայսերապաշտութիւնը եւ այդ քաղաքականութեան կողմնակիցները ու միւս կողմէ կը պաշտպանէ հայ ազգ.-ազատագրական պայքարն ու գործիչները՝ անոնց դէմ եղած անտեղի քննադատութիւններէն, որոնք կու գային Խորհ. Դաշնաստանէ եւ սփիւռքի պահպանողական շրջանակներէն:

Աշխոյժ ձեռով կը մասնակցի ազգային-հասարակական-կուսակցական կեանքին: 1962-ին, ոճրագործ տարրեր, իր փոխարէն ահաբեկութեան կ'ենթարկեն ու ծանրօրէն կը վիրաւորեն իր գաւակը՝ Սուրէնը: 1965-ին, հրաւիրեալի հանգամանքով Պէյրուսի մէջ կը մասնակցի ՍԴԳ 11-րդ Դամագումարին: Պէյրուսի մէջ լոյս կը տեսնեն Ա. Կիտուրի պատմագրական բնոյթի աշխատութիւնները՝ «Յայ Ազատագրութեան ճանապարհին» (1949), «Յուշեր Ու Փուշեր» (1956), «Սրբագրեցէք Յանուն Արդարութեան» (1956), «Պատմութիւն Ս.Դ. Զնչակեան Կուսակցութեան» (Ա. եւ Բ. հատորներ՝ 1962, 1963): Ա. Կիտուրի գրչին կը պատկանին նաեւ գաղափարախօսական բնոյթի գրքոյկներ:

Գաղափարապաշտ բայց ոչ կուսակցամով՝ Ա. Կիտուր ինքն իր մասին կը գրէ.- «Սփիւռքահայ կուսակցական կեանքին մէջ՝ մինչեւ այսօր դեռ կան մարդիկ որ հարց կու տան՝ «Արտէս Կիտուր դաշնա՞ն էր, որ քոնսիւլ դարձաւ, ռամկավա՞ր էր, որ Բարեգործականի վերերան դարձաւ, համայնավա՞ր էր՝ որ Իրաքէն քստորուեցաւ, հնչակեա՞ն էր՝ որ «Արարատ»-ի խմբագիր էր հնչակեան պատմագիրքի հեղինակ դարձաւ»: Չկրցի ինքզինքս հասկննէլ տալ որ իրաւ հայ մը, իսկական մարդը պարտաւոր է գործակցիլ ամեն հայանպաստ եւ մարդապաշտական շարժումներուն»<sup>[12]</sup>:

Կը մահանայ 1976-ին եւ կը թաղուի Պէյրուսի ազգ. գերեզմանատան Զնչակեան Պանթէոնին մէջ:

\* \* \*

1974-ին, Ա. Կիտուր կ'ըլլայ երիտասարդներու ստուար խումբի մը՝ որուն մէջ տողերս գրողը, կուսակցական օժման կնքահայրը: Ան, իր հակիրճ ելոյթի աւարտին կ'ըսէ. «Տղաներս, այս օրուընէ դուք իրաւունք ունիք քայլ առ քայլ բարձրանալու կուսակցական, ազգային թէ քաղաքական կեանքի աստիճաններէն վեր եւ այդ ճամբուն վրայ ձեր կողքին ունենալու Կուսակցութեան թիկունքը: Բայց գիտցած եղէք որ ինչքան ալ բարձրանաք, Զնչակեան Կուսակցութեան համար բարձրագոյն պատուանդանը կը մնայ կախաղանի պատուանդանը: Դուք պատրաստ էք անոր»:

Այո՞ - կը պատասխանուի միաբերան:

## ԾԱՆՕԹԱՎՈՐՈՒԹԻՒՆ

- [1] «Արարատ», 1966, Յունիս 1. Ա. Կիտուր «Կովկասի Զնչակեաններու Գործունէութիւնը Սիւսցեալ Դաշնաստանի Անջութեամբ»:
- [2] «Նոր Աշխարհ», 1912, 7/20 Մարտ:
- [3] Ա. Կիտուր, «Պատմութիւն ՍԴ Զնչակեան Կուսակցութեան», Ա. հտ., էջ 376:
- [4] Ա. Կիտուր, «Յուշեր եւ Փուշեր», Պէյրուս, 1956, էջ 45:
- [5] «Զնչակ Դաշնաստանի», 1995, Նոյ. 11:
- [6] Hanna Batatu, «The Old Social Classes and the Revolutionary Movements of Iraq», Princeton University Press, New Jersey, 1982, էջ 372-374 եւ 392-393:
- [7] Ռուբէն, «Յայ Յեղափոխականի Սը Յիշատակները», Բ. տպ., 7-րդ հտ., Պէյրուս, 1979, էջ 172:
- [8] Զովիկ Մելքիսեթեան, «Յայրենիք-Սփիւռք Անջութիւնները եւ Դաշնեանդարձութիւնը», Երևան, 1985, էջ 78:
- [9] «ԶՅԴ Իրաքի Կոմիտէին Նամակը «Դրօշակ»-ի խմբագրութեան», 1925, Օգոստոս 6: ԶՅԴ արխիւի հիմնարկ:
- [10] Եղիա Տօլպագեան, «Լիբանանահայ Պատկերազարդ Օրացոյց», Դ. Տարի, 1939, էջ 197:
- [11] Ռուբէն Տիրաբեան, «Յուշամտեան Կիլիկեան Կրթ. Դաստատութեան - 75 Ամեակ», Գալէպ, 1996, էջ 191:
- [12] «Արարատ», 1967 Դեկտ. 21. Ա. Կիտուր «Պատասխան Խ. Թիւթիւնեանի Նոր Յերիւրանքներուն»:

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Ա. Աթանասեան 25  
Արիկ Վարդանեան 64  
Արրահամ Արապեան 207  
Արրահամ Բրուտեան 108, 151-153, 157  
Արրահամ Մանուկեան 189  
Ազիզ 60  
Ալեքսան 181  
Ալեքսան Արզուեան (Վահե) 76, 78, 79  
Ալեքսանդր Աթաբեկեան 19  
Ալեքսանդր Դունաեսկի 186  
Ալեքսանդր Խատիսեան 173, 178, 263  
Ալեքսանդր Ծատուրեան 19  
Ալեքսանդր Միասնիկեան (Ալ. Մարտունի) 118, 255, 257  
Ալեքսանդր Ռոստոմեան 123  
Ալեքսանդր ՏԵՐ Վարդանեան 97  
Ալիզոնացի Լեւոն 73, 229  
Ալյոշա Ջափարիձե 84  
Ա. Կեսար 215, 217  
Ա. Կ. Կիլկալենկեան 56  
Ակնունի (Խաչատուր Մալումեան) 133  
Ակոբովիչ 108  
Ահարոն Գրքեաշարեան 223  
Ահմատ Լութֆի 221  
Ահմատ Միրզա շահ 91  
Աիրիման (Սարգիս Բալաշեան) 8, 16, **80-88**, 231  
Աղասի (Կարապետ Թուր Սարգիսեան) 6, 18, 42, 44, 48, 75, 79, 127  
Աղասի Խանջեան 156  
Աղունիկ Ջանփոլատեան 181, 199  
Աճեմի 260  
Ամատունի Վիրաբեան 17, 40, 240  
Անաստաս 125  
Անաստաս Առոսիտիս 222, 228  
Անդրանիկ (Զոր. Անդրանիկ Օզանեան) 99, 103, 111-114, 117, 120, 161, 162, 164, 166, 168, 184, 199-202, 205, 209, 211-215, 263  
Անդրանիկ Երեցեան (Դեռճանցի Անդրանիկ) **167-172**, 181, 217  
Անդրանիկ Կենճեան 165, 166, 187-197, 209, 214, 225, 228, 246  
Անդրանիկ Փոլատեան 17  
Անուշ 41, 42, 45  
Աստոն Ռշտունի 46  
Անտրե Ընիլե 29  
Աշրգեան պատրիարք 124, 125, 132  
Աշոտ Խումարեան 23  
Աշոտ Մելքոնեան 5  
Աշոտ Յովհաննեսեան 236  
Աշոտ Պատմագրեան 183, 184, 186  
Աշուղ Զիւանի 106  
Այաի (Պետրոս Գմզրմեան) 74, 75  
Առաքել Եղիկեան 103, 120

Առաքել Պատմագրեան 37  
Առաքել Պատրիկ 149, 209  
Առաքել Զէչեան 228  
Ասատուր Էլճանեան 261  
Ասատուր Զալեան 205, 209  
Ասատուր Ռոստոմեան (Շահեւ) 37  
Ասատուր Սաչեան 204, 209, 217, 228  
Ա. Սիրվան 142  
Ասլան 71  
Ասլանեան վրդ. 203  
Ասորի Կարապետ 125  
Աստուածատուր 103  
Ասցանազ Մռաւեան 118, 258  
Ասօ (Տիգրան Օւռեան) 108, 152, 157, 188  
Ա. Վարազեան 79  
Ատոմ Ասլանեան 46  
Ատրպետ 23, 33, 36, 51, 229, 230, 239  
Արաքօ (Առաքել Մսիխարեան) 73  
Արամ Անտոնեան 192  
Արամ Ալըզաշեան 11, 13, 36, 51, 61, 127, 232, 250  
Արամ Ասպետ 209  
Արամ Արամեան 23  
Արամ Արքուն 252, 257  
Արամ Գրիգորեան 181  
Արամ Թորոսեան 168, 172  
Արամ Ինճիկեան 40  
Արամ Կայծակ 206  
Արամ Մանուկեան 262  
Արամ Մելիքեան (Դանի) 181  
Արամ Նազարեթեան 34  
Արամ Պերպերեան 225  
Արամ Սահակեան 216  
Արամայիս Մնացականեան 162, 166, 186, 211, 212, 217  
Արթաքի Գլոճեան 190, 191  
Արթուր Եասեան 109, 145, 209  
Արթուր Օհանջանեան (Արտուազդ) 5, 8, **41-48**, 230  
Արի Թոփուզխանեան 120, 209, 217  
Արիստակէս 45  
Արիստակէս Ճենազեան 59, 61  
Արիֆ 68  
Արխիլե 71  
Արծուկ (Տիգրան Յարութիւնեան) 7, 16, 84, 180, 181, 215  
Արման Բուդաղեանց (Ա. Սիւնեցի) 95  
Արմենակ Ահարոնեան 184  
Արմենակ Դայլունի 125  
Արմենակ Նազարեթեան 125  
Արմենակ Շահնուրատեան 23  
Արմենակ Զակունճեան 68  
Արմեն Գարօ 129  
Արշակ Ալաոյանեան 17, 56, 72  
Արշակ Չուրապեան 137

Արշակ Չոպանեան 78, 79  
Արշակ Պապեան (Երկաթ) 38, 234  
Արշակ Պողոսեան 115, 117  
Արշաիր Եասեան - Տես Արթուր Եասեան  
Արշաիր Սոլաքեան 150, 153  
Արշե՛ն Սուրաբով 141  
Արուսեակ 258  
Արսեն Ժամկոչեան 162, 166  
Արսեն Կիտուր 8, 17, 32, 40, 46, 48, 64, 94, 103, 120, 134, 149, 165, 197, 215, 217, 223, 225, 228, 239, 247, **258-265**  
Արսեն Մարմարեան (Վահան Թոթովեց) 162, 166  
Արսեն Տիրան 79  
Արտաշես Յովհաննեսեան 258  
Արտաշես Սոլաքեան 17, 108, **150-157**  
Արտաշես Տեր Խաչատուրեան 240  
Արտաշես Տիրացեան 258  
Արփիար Արփիարեան 46, 64, 78, 79, 122, 126, 129  
Անտիս Թերզիպաշեան 120  
Անտիս Նազարբեկեան (Լեռնեց) 6, 16, 20, 21, 27, 28, 29, 32, 43, 44, 77, 83, 85, 127, 129, 231  
Անտիսեան Ակրտիչ 151  
Անտիք Իսահակեան 23, 36, 51  
Աօ 102  
Աօ Փոշոլեան 239

Բագրատ Ուլուբաբեան 165, 166  
Բախշի Իշխանեան 235, 236  
Բարթոլոմէոս վրդ. Թագաճեան 219, 228  
Բարխաղարեան 168  
Բարսեղ Դարբինեան 100  
Բարսեղ Չաքարեան (Լեւոն) 19, 20, **26-32**  
Բարսեղ Պոյաճեան 211  
Բենիամին Ժամկոչեան 107, 120, 201, 205, 209, 215, 217  
Բիզանդ Եղիայեան 228  
Բ. Համբարձումեան 102  
Բ. Սիւնիք (Բագրատ Անտեան) 106, 108, 145, 196, 206, 234, **241-247**  
Բ. Վարազդատ (Յակոբ Թիւրաբեան) 36, 234, 242  
Բրանդես 23

Գաբրիէ Լազեան 64  
Գաբրիէ Սայմանեան (Սամուէլ) 64  
Գալուստ Արխանեան 8, 13, 48, **57-64**, 237  
Գալուստ Սիւրմենեան 63, 64  
Գայ - Տես Հայկ Բժշկեան  
Գայագճի Օղլու Ալի 68  
Գաննիկ Ստեփանեան 240  
Գ. Աստղուկի - Տես Գրիգոր Եղիկեան  
Գարա Մուրգա 33  
Գարաօղլու 60  
Գարեգին Խաժակ (Չագալեան) 129, 133  
Գարեգին Չիթեան 77, 77

Գարեգին վրդ. Յովսէփեան 258  
Գեղամ Վանիկեան - Տես Վանիկ  
Գեղարդ 79  
Գերսամ Անարունեան 103, 166, 209  
Գեորգ Խուտինեան 42, 48  
Գեորգ Կառվարեց 217  
Գեորգ Կրտստեան 202  
Գեորգ Չուպար 23  
Գեորգ սերժանտ 205  
Գեորգ Վելեան 61  
Գիմինի 64  
Գևէլ վրդ. Գալեմբերեան 100  
Գոլիցին 179  
Գոհար Ազնաուրեան 40, 240  
Գոչօղլու Անմատ 61  
Գուդուկ (Քրիստափոր Վարդանեան) 37, 38  
Գուրգեն (Գարեգին Ակրտիչեան) 37, 38  
Գուրգեն Հայկունի 258  
Գուրգեն Մահարի 151, 157  
Գրիգոր Ամիրեան 115, 216, 217  
Գրիգոր Ամպարճեան 121  
Գրիգոր Արծրունի 42, 43  
Գրիգոր Անտեան 35  
Գրիգոր Աւշարեան 160, **173-178**, 182  
Գրիգոր Գայեան 190, 191  
Գրիգոր Գլինճեան 11, 74, 126, 220  
Գրիգոր Եղիկեան 94, 95, 120, 231, 238, 240, **248-257**  
Գրիգոր Թաթուկեան 209, 225, 226, 228  
Գրիգոր Թումիկեան 172  
Գրիգոր Իսկէնտրեան 160  
Գրիգոր Լուսաւորիչ 126  
Գրիգոր Խերպէլեան 13  
Գրիգոր Ճելալ 99  
Գրիգոր Նալպանտեան - Տես Ս. Վահագն  
Գրիգոր Չախուռեան 23  
Գրիգոր Վարդանեան (Հրահատ Կամսար) 51, 99, 231, 232

Դանիէլ Չաւուշ 61  
Դաւիթ Անանուն Տեր Դանիէլեան 81, 88  
Դեմբա 10, 11  
Դեմսլի 10, 11  
Դեռճանցի Անդրանիկ - Տես Անդրանիկ Երեցեան  
Դետ 209  
Դիմիորի Բժշկեան 179, 180

Եղուարդ Ամատունի 258  
Եղուարդ Չովուրեան 142  
Եզնիկ եպս. Ապահունի 12  
Եւլեն Պաղտասար 60  
Եղիա Գրիգորեան - Տես Սիրվարդ  
Եղիա Տօլպագեան 265

Եղիկ ճերձեան 4, 5, 8, 142, 165, 240, 257  
Եղիշէ Չարենց 165, 166  
Եղիշէ Զաչունի 166  
Եռսուֆ 68  
Եռսուֆ ոստիկանապետ 13  
Երեմիա Բակունց 258  
Երկաթ - Տես Արշակ Պապեան  
Երուանդ 147, 148  
Երուանդ Թովուզեան (Բանուոր) 189  
Երուանդ Խաթանասեան 115, 120  
Երուանդ Մեսիայեան 17  
Երուանդ Մինասեան 229  
Երուանդ Շահազիզ 23  
Երուանդ Պաճազեան 202  
Երուանդ Պէլլերեան 64  
Երուանդ Սարգիսեան 163  
Երուանդ Փամպուզեան 95  
Երուանդ Քասունի 56  
Երուանդ Օտեան 46, 48, 69, 72, 78, 132, 134  
Երուխան 129  
Եփրեմ խան (Դաւիթեան) 90-92  
Եփրեմ Կաճառեան (Ա. Ռուբէնի) 36

Չապէլ Եսայեան 72  
Չարացի Յովսէփ 68  
Չարեան 112  
Չաքէ 98  
Չաքէ Գլըճեան 59, 61  
Չեքի պէլ 227  
Չիլֆօ 222

Էհսան Եարշադար 258  
Էմանուէլ Ալիփրանտի 142  
Էմիլ ճոն (Միքայէլ Ստամպուլցեան) 37, 38  
Էմմա Ազարիկեան 228  
Էսկեր փաշա 192  
Էտուարտ Կրանվիլ Պրաուն 89  
Էսմեր Փեհիլան 59

Թաղէս Ամիրեան 86, 87  
Թաղէս Աղալբէկեան 258  
Թաթոս 225  
Թալաթ պէլ 139  
Թահա Նիազի Զարաճայ 56  
Թաշաճեան 78  
Թեֆիկ 261  
Թեոդիկ 99, 103, 149, 157  
Թիրաքեան 126  
Թոմսոն 164  
Թորոս Ճերձեան 225  
Թորոս քին. Սաթամեան 75

Թումիկ Արթին (Յարութիւն Թումայեան) 12  
Թորոցի 244, 245

Ժան Ժորժե 22  
Ժան Լոնգէ 21  
Ժիրայր (Մարտիրոս Պոյաճեան) 12, 28, 50, 208, 215, 255  
Ժիրայր Պասամճեան 192  
Ժիլ Կետ 20  
Ժ. Կիզ 195

Իհսանուլլահ խան 253  
Իշխան - Տես Վանայ Իշխան  
Իպրահիմ պէլ 190  
Իսահակ Գովլեան 37, 91, 94, 237  
Իսթափեան 199

Լազօ (Յակոբ Ղազարեան) 37, 38, 165, 174, 178, 181, 229-240  
Լարոպ 21  
Լենդրուշ Խորշուտեան 240  
Լենին 23, 115, 235, 244, 254  
Լեռնեց - Տես Աւետիս Նազարբէկեան  
Լերմոնտով 36  
Լեւոն 262  
Լեւոն Բաշալեան 122  
Լեւոն Թիթինճեան 162, 166  
Լեւոն Մինասեան 95  
Լեւոն Սկրտիչեան 46, 129  
Լեօ 196, 197  
Լ. Լազեան - Տես Լազօ  
Լորման 66

Խան - Տես Ռուբէն Խանազատ  
Խաչատուր Մելքոնեան 59  
Խաչատուր Սղաքեան 150  
Խաչատուր Բերեմեան 58, 59  
Խաչիկ 146  
Խաչիկ Դաշտեց 165, 166  
Խաչիկ լուսարար 125  
Խաչիկ Պետրոսեան 125  
Խաչիկ Վարդանեան 23, 36, 51, 229  
Խաչիկ Ֆետրգճեան 68  
Խիկար Բարսեղեան 120  
Խմբապետ Աւօ (Աւետիս Գասպարեան) 97, 98, 103  
Խորով Թիթինճեան 151, 157  
Խորէն Այվազեան 103  
Խորէն Երամեան 188, 190, 191  
Խորէն Շիշմանեան 61, 62  
Խուլիեցի Առաքել 73  
Խչ. Գուրով 172  
Խրիմեան Դայրիկ 11, 121-123, 126, 127, 130

Ծառուր Աղայեան 162, 163, 166, 178, 186, 211, 217

Կալիպ պեյ 132

Կալիփսէ 152, 153

Կայծակ Առաքել (Տիգրան Ապաճեան) 111

Կանտ 29

Կառուցի 21

Կարապետ Գաբիկեան 15, 103

Կարապետ Թումայեան 12, 50, 51, 55, 56

Կարապետ ժամկոչ 190

Կարապետ Լաչինեան 204

Կարապետ Կեօքտէրէեան 8, 74, 127, 204, **218-228**

Կարապետ Ղումրիկեան 13

Կարապետ Սինասեան 67

Կարապետ Չալեան 203, 223, 226

Կարապետ Տանդէեան 108, 152

Կարապետ Փաթուկեան 190, 191

Կարապետ քին. Գալֆայեան (Յովիւ Եղեմի) 215, 217

Կարլ Լիպկնեխտ 10, 22

Կարնո 103

Կարո (Յովսէփ Սարաֆեան) 81, 82, 88

Կացին 48

Կիլիկեցի 228

Կիւպէնկ Յամալեան 215

Կ. Մարքս 22, 137, 141

Կոմս (Վահան Փափազեան) 133, 134

Կորին 64

Կօլեսնիկով 177

Հազարապետեան 206

Հաճի Գեորգ 61

Հաճի Կարապետ Մանուկեան 71

Հաճի Նազիկ 110

Համիտ սուլթան 125

Համր (Արամ Գրիգորեան) 37, 77, 78

Հայկ Բժշկեան 5, 6, 8, 87, 88, 160, 172, 175, **179-186**, 199, 209, 215

Հայկ Գալճեան 142

Հայկ Էփէսոսի 70

Հայկ Հայրապետեան 173, 178, 186

Հայկ Ճանկիւլեան 131

Հայկակ Երեմիշեան 108, 152

Հայկանուշ Պոյաճեան 128

Հայկուհի Արմաղանեան 207, 208

Հայտու 192

Հաննա Պաթաթու 265

Հասան Հասանեան 260

Հարտինկ 245

Հեթում Պալեան 209

Հենրիք Մելիքեան 163, 166

Հերիք 51

Հիսնի պեյ 109

Հմայակ Արամեանց 109, 117, 120, 209

Հմայակ Խուշպուլեան 42

Հմոյէ Շարո 223, 224

Հովիկ Մելքիսեթեան 265

Հուսէյն Ալ Ռահիալ 261

Հուրի Պերպերեան 94, 95, 257

Հոֆման 51

Հրանդ Աղաճանեան 191

Հրանդ Աւետիսեան 163, 166

Հրանդ Գալիկեան 110, 142

Հրանդ Օտեան 46

Հրաչ Տասնապետեան 48, 56, 134, 209

Հրաչեայ Մարալ (Գրիգոր Ղարիպեան) 51

Հրաչիկ Սիմոնեան 95, 209, 217

Ղազարոս Աղայեան 23, 35, 36, 51, 229

Ղեմո 60

Ղուկաս 59

Ղուկաս Աղբար (Տեօվէթեան) 101

Ղուկաս Ճանիկեան (Ճանիկ, Ճինկօ) 59-62

Ճանիկ - Տես Սահակ ժամկոչեան

Ճեփտ պեյ 222

Ճիմ Չանգալեան 204, 205

Ճին Թորոս 75

Ճովանիուլի 34

Մ. Աւետիսեան 120

Մ. Աւետիսեան 209

Մ. Գ. Ֆերահեան 56

Մ. Կորգի 83

Մ. Ճիհանեան 209

Մալիքզատէ 93

Մալիխաս 135

Մալիխաս (Գրիգոր Բաղախեան) 37

Մակեդոն 200

Մամբրէ վրդ. 125

Մամիկոն Ազնաւորեան 64

Մանուէլ Մոզեան 92, 95

Մանուկ Նալպանտեան 125

Մանուկեան 159

Մատթէոս խան Մելիքեան 92

Մարգար Կարժապետ (Ամիրեան) 11

Մարգար Վոսմեան (Ատոմ Ասլանեան) 46

Մարգար Քեպապճեան 117

Մարգարիտ 80

Մարկոս Բոցարիս 43

Մարսիլախայ 209

Մարտիկ Սարուխանեան 151, 230

Մարտիրոս Տէր Ստեփանեան 79

Մարտո (Մարտիրոս) 225

Մարո Նազարբեկեան 19, 127  
Մաքսուտ Միմոն պէյ 46, 48  
Մելիք Փարսաղանեան 112  
Մելքոն Անիբեկեան - Տես Մոզպետ  
Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան) 6, 11, 12, 48, 120-122, 124, 125, 128, 134, 149, 223, 229, 250, 260  
Մեղրեցի Միսաք 104  
Մենտոր 64  
Մետրոպ Սազիստորոս 258  
Մետրոպ Շիքոսեան 217, 228  
Մեհմետ 60  
Մեհմետ Ալի շահ 250  
Մեվլետ 65, 66  
Միհրան 146, 148  
Միհրն Աղազարեան 197  
Միհրան Գայեան 7, 75, 214  
Միհրան Չեկիւճեան 29  
Միհրան Ծիզմեճեան 190, 191  
Միհրան Մանիսաճեան 29  
Միհրան Սեֆերեան 246, 247  
Միհրան Սվազլ 129  
Միհրան Տամատեան 3, 11, 46, 48, 129, 134, 147, 195, 203, 219, 228, Միւսա Գոճայեան 79  
Միւսա Ծիհանեան 206  
Միւսա Միւսսեան 65, 67  
Միւսա Չերազ 42, 43, 52  
Միւսա Պերպերեան 19, 23, 259,  
Միւսա Օղլու (Յովհաննես Միւսսեան) 28, **65-72**, 105  
Միսաք Գլոճեան 61  
Միսաք Թորլաքեան 113, 120, 162, 166, 200, 209  
Միսաք Վարդավառեան 184  
Միսաք Տազեան 126, 220  
Միր Իսմայիլ (Շեյխ Իսմայիլ) 224, 260  
Միրզա Քիչիկ խան 251, 253  
Միրիճան Կետիկեան 202  
Միրիճան Պոյաճեան 215  
Միքայէլ Նալպաստեան 18  
Միքայէլ Վարանդեան 26, 29, 32, 120  
Միքայէլ Տիրպերեան 61  
Մխիթար Պոնտացի 52  
Մխիթար Տեր Նշանեան 29  
Միս Շահէն (Մխիթար Սեֆերեան) 5, **73-79**, 127  
Մկրտիչ Բեզարեան 34  
Մկրտիչ եպս. Վեհապետեան 219  
Մկրտիչ Թիւրքմեճեան 59  
Մկրտիչ Ղարամկըրեան 59, 60  
Մկրտիչ Փորթուկալեան 11, 122  
Մշեցի 79  
Մշեցի Մուրատ 202  
Մոզպետ (Մելքոն Անիբեկեան) 7, 37, 172, 178, 181, 186, 199, 209, 230  
Մոզաֆֆերետին շահ 90

Մուհամմետ Ալի շահ 90  
Մուսա 125  
Մուսա (Մովսես Նահապետեան) 144, 149  
Մուսթաֆա Քեմալ 71, 203, 236  
Մուսթաֆա Օսար 227, 228  
Մուրատ Խրիմեան - Տես Սեբաստացի Մուրատ  
Մուրատ Կարապետեան 165  
Մուրատ պէյ 221  
Մուրատ սուլթան 93  
Մուրատ Տերտերեան - Տես Ս. Մուրատ  
Մօլլա Մուլէյման 66  
Մօտ 262

Յակոբ Արծրունի (Աւետիսեան) 99, 109, 135  
Յակոբ Թերզեան 228  
Յակոբ Խանքերեան 68  
Յակոբ Ղազարեան - Տես Լազօ  
Յակոբ Ճանկիկեան 131  
Յակոբ Մեղաւորեան 11, 122  
Յակոբ Ուրումեան 67, 68, 70  
Յակոբ Պեկմեզեան 202  
Յակոբ Պօղոսեան 79, 209, 217, 228  
Յակոբ քին. 62  
Յակոբ Օհանեան 221  
Յակոբիկ Սուլքեան (Ճօկօ) 155  
Յարութիւն Ազատեան (Հայր Արթին) 188  
Յարութիւն Թումայեան 28, 29, 48  
Յարութիւն Թուրշեան 163, 166  
Յարութիւն Ճանկիկեան (Կայծիկ) 11, 17, 52, 74, 79, **121-134**, 219, 228  
Յարութիւն Ծօպուլեան 202  
Յարութիւն Մկրտիչեան 117  
Յարութիւն Մկրտիչեան 165, 166  
Յարութիւն Նաթուրեան 125  
Յարութիւն Շեքերեան 248, 256  
Յարութիւն Փեհլիւսեան (Յարութեան) 202  
Յ. Էլմար (Յոսեփ Յովհաննեսեան) 90, 94, 95  
Յ. Լազեան 88  
Յովակ Ստեփանեան 217  
Յովակիմ Գապաքեան 190, 191  
Յովակիմ Յովակիմեան 247  
Յովհաննես Աճեմեան 17  
Յովհաննես Գայաեան 12, 49-56  
Յովհաննես Թումանեան 35, 40  
Յովհաննես Ղամբիկեան 125  
Յովհաննես Միւսսեան - Տես Միւսա Օղլու  
Յովհաննես Տեվեճեան 142  
Յովնան 216  
Յովսէփ Թրզրեան 56  
Յովսէփ Յակոբեան 67, 68  
Յովսէփ Նալպաստեան 109  
Յուրայ 194

Յունան Դարթան 19  
Յուսիկ Գնդունի 240

Նադո 154  
Նազարեթ Լուսիկեան 11, 230  
Նազեհի Ս. Մուրատ (Դարբինեան) 100, 103  
Նազըմ փաշա 47, 128  
Նարիման Նարիմանով 252  
Ներսես 172  
Ներսես Փիլիկեան 160  
Նիկողոս եպս. 219  
Նիկողոս Պալապանեան 127  
Նինա Զանանեան 14  
Նշան 66  
Նշան Կենճեան 59  
Նշան Միևսեան 71, 72  
Նշան Միրաքեան 110, 181  
Նշան Պեյիևեան 66, 67, 72  
Նշան Տումանեան 128, 134  
Նշան Բեշիշեան 58-61, 64

Շենիկցի Գրգո (Գրիգոր Մոսեան) 73  
Շելիս Խամայիլ - Տես Միր Խամայիլ  
Շելիսիկ Արմեն - Տես Կարապետ Կեօքտրեյեան  
Շեքիր փաշա 205  
Շիրին Ալի 65, 66, 72  
Շիրվանզադե 23, 35, 152, 229  
Շիւքրի Յանիօղլու 257  
Շմաուն (Գաբրիել Կաֆեան) 9-17, 50, 58, 59, 123  
Շուշա-օդ-Տովա 93

Ոնտիոնու Անրեան 23  
Ռոստոլ (Տիգրան Իզմիրլեան) 37, 77, 78  
Ռիլյեմ Լիպկեխտ 22  
Ռնճեան 78

Չաքըր Եօրկի 199  
Չգանեան 68  
Չելլո (Թորոս Շառուկեան) 51, 208, 215  
Չերքեզ Սեմի պեյ 227  
Չոլպիս Վահագն - Տես Ս. Վահագն  
Չպուլբուցի Միքայել 212

Պաղտասար 67  
Պաղտասար Զորոյլեան 111  
Պանդուխտ (Միքայել Սերեան) 4, 5, 8, 37, 158-166, 181, 188, 215, 263  
Պ. Անդրիասեան - Տես Գրիգոր Եղիկեան  
Պապաշանով (Միքայել Պապաշանեան) 182  
Պարադով 160  
Պաքուեցի 88  
Պ. Գրիգորեան 244

Պետկո (Պետիկ Թորոսեան) 156  
Պետրոս արք. Սարաճեան 193, 214  
Պետրոս եպս. 11  
Պետրոս Մարիմեան 46, 74, 126, 220  
Պետրոս Մելիք Անդրիասեան (Պետրոս Խան) 89-95  
Պետրոս Մինասեան 56  
Պետրոս Պուտաքեան 59  
Պետրոս Տեփոյեան 48, 134, 228  
Պետրոս Տոնապետեան 74, 126, 134, 220  
Պետո (Ալեքսանդր Պետրոսեան) 151  
Պէնևե - Տես Տոքթ. Պէնևե  
Պիժակ վրդ. 97  
Պլեխանով 10, 19, 21, 23, 27, 83  
Պոնաբարդեան 213  
Պրեմուն 203  
Պոզոս Էլպեկեան 61  
Պոզոս Միևսեան 65, 66  
Պոզոս Նուպար փաշա 129, 193  
Պոզոս Սուլթան-Շահ 22  
Պոշնագ 60

Ջալալտ (Կարապետ Ղըր Փանոսեան) 75  
Ջանիդատեան - Տես Աղունիկ Ջանիդատեան  
Ջաւադ Բեկ Բալուդեան 23

Ռ. 103, 240  
Ռակովսկի 21  
Ռաֆայել Մովսեսեան 91, 123  
Ռաֆայել Պատկանեան (Գամառ Զաթիպա) 19  
Ռեշատ պեյ 109  
Ռեճեպ Տալքըր 214  
Ռոստոմ 56, 129, 131, 134  
Ռուբեն Գրիգորեան 181  
Ռուբեն Չարդարեան 133  
Ռուբեն Խանազատ (Նշան Ղամբուրեան) 6, 11, 13, 16, 17, 23, 27, 32, 36, 42-44, 48, 51, 56, 81, 85, 88, 123, 124, 134, 143, 149, 231, 232, 240, 256  
Ռուբեն Կարապետեան (Վահան Պոյաճեան) 108, 109, 143-149, 174, 189  
Ռուբեն Շիշմանեան - Տես Տերսիմի Բեռի  
Ռուբեն Պերպերեան 18-25, 26, 27, 32, 36, 43, 45, 47, 51, 259  
Ռուբեն Սահակեան 217  
Ռուբեն Տեր Միևսեան 262, 265  
Ռուբեն Տիրարեան 265

Սագունի (Սաղաթել Գեորգեան) 37, 77, 79  
Սալար-օդ-Տովա 24, 95  
Սահակ ժամկոչեան (ճանիկ) 61  
Սահակ կաթողիկոս 193, 195, 196  
Սահակ Մատինեան 34  
Սամարեան 229  
Սամբա 21  
Սայիտ 107

Սատտար խան 106  
 Սարգիս Ալթըզուլանճեան 68  
 Սարգիս ԱղաՄիրզեան (Սաքո) 20, 23, 27, 174, 229, 250  
 Սարգիս Արմաղանեան (Մըռըզ) 181, 195, **198-209**, 227  
 Սարգիս Թուր Սարգիսեան 204  
 Սարգիս Կասեան (Տըր Գասպարեան) 36  
 Սարգիս Կեօզիւրեան 223, 225  
 Սարգիս Գայկունի 258  
 Սարգիս Ճեպեճեան (Ճեպեճի) 203, **210-217**  
 Սարգիս Մինասեան 133  
 Սարգիս Մուրատեան 253  
 Սարգիս Նախուրեան 58, 59  
 Սարգիս Պողոսեան 56  
 Սարգիս Սարգիսեան 237  
 Սարգիս Սերայտարեան 225  
 Սարգիս Զայաշեան - Տես Ահրիման  
 Սարգիս Օննիկեան 103  
 Սեբաստացի Մուրատ (Խրիմեան) 72, 98, 101, 111-117, 120, 200, 201, 212  
 Սեդրակ 47, 48  
 Սեդրակ Աւագեան 17  
 Սեդրակ Շահին (Շահինեան) 175, 178, 185, 186, 195, 245, 247  
 Սեդրակ Պալեան 34  
 Սեպուհ (Արշակ Ներսեսեան) 111-116, 120, 200, 209, 212, 217  
 Սեբեյ 182  
 Սեբժ Աֆանասեան 163, 166  
 Սերոբ 200  
 Սերովբէ Զեօտեան 60  
 Սեւ Գարեգին 104  
 Սեւ Մելքոն 174  
 Սեւ Սանդրո (Ալեքսանդր Ստեփանեան) 23, 51  
 Ս. Թորոսեան 25  
 Սիմոն եպս. 125  
 Սիմոն Չաւարեան 42, 45, 48, 129  
 Սիմոն Գախումեան 35  
 Սիմոն Նաղիորեան 11  
 Սիմոն Վրացեան 88, 235, 236  
 Սիսակ Օհանեան 34  
 Սիրակ Սարիատեան 157  
 Սիրանուշ 152  
 Սիրվարդ (Ս. Նուրիան, Եղիա Գրիգորեան) 158  
 Սիւզան Գորնեզ 10  
 Ս. Լօրելի (Սուրեն Երզնկեան) 86, 88, 245, 247  
 Ս. Կեսար 215  
 Սմբատ 262  
 Սմբատ Գլըճեան 189  
 Սմբատ Շահագիզ 19  
 Սմբատ Ռատիկեան 76, 79  
 Ս. Մուրատ (Խորախոնցի Մուրատ, Մուրատ Տըրտէրեան) **96-103**  
 Սուկրատ Խան Գելոֆեանց 94, 95  
 Սողոմոն Կարմիրեան 67  
 Սուրեն Կիստուրեան 264

Սուրեն Պարթեւեան 56  
 Սուրեն Սուրենեան (Ղազարոս Կալոզեան) 12, 17, 46  
 Սուքիաս վրդ. 125, 126  
 Ս. Վահագն (Գրիգոր Նալպանտեան) **104-120**, 144, 145, 149, 200, 241  
 Ս. Տաշիր (Սիմոն Գովկեան) **33-40**, 94, 99, 234, 237  
 Ստալին 84, 88, 115, 258  
 Ստեփան Ծաղիկեան 115, 116  
 Ստեփան Շահումեան 87, 115, 116, 183, 203, 252, 253, 258  
 Ստեփան Շահպազ 79  
 Ստեփան Սապահ Գիւլեան 6, 15, 17, 22, 25, 71, 72, 77, 99, 103, 190, 193, 234, 236, 240, 242, 250  
 Սոսի Գուգարց (Արսեմ Նաղիորեան) 37

Վալիքո 91  
 Վախթանք 200  
 Վահագն Նալպանտեան - Տես Ս. Վահագն  
 Վահան Չլթոնցեան 259  
 Վահան Թորոսեան - Տես Արսեմ Մարմարեան  
 Վահան Ժամկոչեան 190, 195, 206  
 Վահան Մազմանեան 64  
 Վահան Մարտեան (Ղուկասեան, Մարտ) 37, 38, 98, 231, 234, 235, 240  
 Վահան Պարտիզպանեան 189  
 Վահան Պոյաճեան - Տես Ռուբեն Կարապետեան  
 Վահան Փափագեան - Տես Կոմս  
 Վահապ 129  
 Վահե - Տես Ալեքսան Արզուեան  
 Վահրամ Փիլոսեան 258  
 Վահրիճ Կեօքճեան 196, 246  
 Վայեան 21  
 Վանայ Իշխան (Նիկոլ Պողոսեան) 132, 133, 157  
 Վանեցի Մանուկ 262  
 Վանիկ (Գեղամ Վանիկեան) **137-142**, 189  
 Վարդան (Յարութիւն Խանիկեան) 75, 76  
 Վարդան (Սարգիս Մեհրապեան) 110  
 Վարդան Աւետիսեան 17, 25  
 Վարդան Վարդանեան 19, 25  
 Վարդան վրդ. Արոխտրեան 61  
 Վարդիվառ Ճեբեճեան 204  
 Վարդո (Յակոբ Վարդ Պատրիկեան) 130-132  
 Վզվզեց Ստրոպ 202  
 Վլատիմիր Պետրոսեան 186  
 Վուլգարիս 43  
 Վրթանես Փափագեան 61, 64  
 Վ. Օհանեան 186

Տաղաւարեան 133  
 Տաճատ վրդ. 125, 126  
 Տատաշ պեկ 70  
 Տեյի Ղազար 202  
 Տերսիմի Զեռի (Ռուբեն Շիշմանեան) 13, 61, 63  
 Տիգրան Գազանճեան 95, 115, 199, 209

Տիգրան Չաւեն (Զուգասզեան) 142  
Տիգրան Օտապաշեան 202  
Տիգրան Օտեան - Տես Ասօ  
Տոքթ. Պեննէ (Պետրոս Թորոսեան) 109, 144, 171, 189  
Տօնեան 258  
Տօնիկ Տօնիկեան 118

Բաֆֆի 32

Յուլակ 79  
Յուլակ Սարկաւազ 230

Փայլակ 135  
Փանոս Թերլեմեզեան 151, 152  
Փառն Ծ.Վրդ. Մելքոնեան 261  
Փարամազ (Սատթեոս Սարգիսեան) 6, 96, 98, 106, 107, 109, 140, 141, 144, 153, 157, 171, 174, 198, 208, 209, 234, 237, 241-243, 250  
Փարիզ Կարենմեզեան 118  
Փիլիկ 13  
Փրոֆ. Թումայեան - Տես Կարապետ Թումայեան  
Փօլ Լաֆարզ 20, 22

Քեռի (Արշակ Գաֆաֆեան) 110  
Քերոպէթ Քեօսեան 58  
Քեթ Խիւտա Խան 97  
Քեսկէն Օսման չաուշ 72  
Քեօն-Օրլի 100  
Քիւչիկ Յասան 66  
Քիւրտ Սարգիս (Սարգիս Գեորգեան) 68  
Քիւրճեան 198  
Քոսրօ Չաքուրի 89, 94  
Քրիստափոր Միքայէլեան 42

Օլիսկա 230  
Օկոստ Պեպէլ 20, 25  
Օմար Լութֆի 227  
Օսման 109  
Օսման պէյ 67  
Օրմանեան պատրիարք 220  
Օրջոնիկիժէ 91

Ֆ. Էնգելս 21  
Ֆիլրուզ Խանգատեան 230  
Ֆլորա Կարդանեան 37, 91

## ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

### ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՌՎ ԳԻՐՔԵՐ

Արիկ Կարդանեան, «Մեծուրի Առիժը», թերթօս Արարատի, (Ա. տպագր. Կ.Պոլիս, 1911), Պէյրութ, 1960:  
Ալեքսանդր Դունաւեսկի, (թարգ. Կիզէն Խեչումեան), «Գայի Յետքերով», «Հայաստան» հրատարակչ., Երեւան, 1967:  
Ալեքսանդր Խատիսեան, « Զաղաքապետի Մը Յիշատակները», մատենաշար ԳՅԴ Չաւարեան Ուս. Միութեան թիւ 6, Պէյրութ, 1991:  
Աղասի, «Մոռցուած Յերոսներ», թերթօս Արարատի թիւ 15, Պէյրութ, 1952:  
Ամատունի Կիրաքեան, «Համահայկական Խորհրդակցութիւններ (1912-1920)», հրատ. ԶԱԱ, Երեւան, 2004:  
Անաստաս Առուսիտիս, (թարգ. Էմմա Ազարիկեան), «Հայերը եւ Երիտասարդ Թուրքերը - Կիլիկիոյ Կոտորածները», հրատ. Բերիոյ Հայոց Թեմի «Այգ» մատենաշար թիւ 8, Հալէպ, 2009:  
Անդրանիկ Կենճեան, «Լեօ եւ Յնչակեան Կուսակցութիւնը», հրատ. ՍԴՀԿ Լիբանանի Կարիշ Մարմին, Փարիզ, 1935:  
Անդրանիկ Կենճեան, «Հալածականի Յուշեր 1914-1918», թերթօս Արարատի թիւ 43, Պէյրութ, 1964:  
Անդրանիկ Կենճեան, «Սոց. Դեմ. Հնչակեան Կուսակցութիւնը եւ Կիլիկեան Ինքնավարութեան Աջը 1919-1921», թերթօս Արարատի թիւ 27, Պէյրութ, 1958:  
Անդրանիկ Փօլատեան, «Պատմութիւն Հայոց Արաբկիրի», Նիւ Եորք, 1969:  
Աշոտ Պատմագրեան, «Իմ Յուշերից», Պէյրութ, 1977:  
Առաքել Պատրիկ, «Պատմագիրը Յուշամատեան Սեբաստիոյ եւ Գաւառի Հայութեան», Ա.հտ., հրատ. Համասերաստահայ Վերաշինաց Միութեան, Նիւ Եորք, Պէյրութ, 1974:  
Առաքել Զէչեան, «Կարմիր Դրուագներ Յերոսներու Կեանքէն, 1915-1918», թերթօս Արարատի թիւ 20, Պէյրութ, 1956:  
Ասատուր Սաչեան (գրեց Արամ Ասպետ), «Դրուագներ Հանձնյա Յերոսամարտէն եւ Յերոսին Ողիսականը», Պէյրութ, 1961:  
Արամ Ինճիկեան, «Յովհաննէս Թումանեան», հրատ. ՀՍՍՀ ԳԱ Մանուկ Արեղեանի Անուան Գրականութեան Ինտիդուտի, Երեւան, 1969:  
Արամայիս Անաքականեան, «Չորավար Անդրանիկ», Բ.հտ., «Վերնատուն» հրատարակչ., Մոսկուա, 1991:  
Արի Թոփուզխանեան, «Յուշարձան Ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանի», հրատ. Սահակեան Կարժարանի Լախիկն Սաներու, Երեւան, 2010:  
Արշակ Ալպոյաճեան, «Պատմութիւն Եւրոկիոյ Հայոց», հրատ. Նիւ Եորքի Եւրոկիոյ Կրթասիրաց Միութեան, Գահիրէ, 1952:  
Արշակ Ալպոյաճեան, «Պատմութիւն Հայ Կեսարիոյ», հրատ. Կեսարիոյ եւ Շրջակայից Հայրենակցական Միութեան Գահիրէի Մասնաճիւղի, Գահիրէ, 1937:  
Արսէն Ժամկոչեան, «Չօր. Անդրանիկ Կը Պատասխանէ Իր Հակառակորդներուն», Փարիզ, 1945:  
Արսէն Կիտուր, «Հայ Ազատագրութեան Ճանապարհին», տպ. Օսիպար Փրեւ, Պէյրութ, 1949:

Արսեն Կիտուր, «Յուշեր Ու Փուշեր», Բ. տպագր., տպ. Արարատ, Պեյրուք, 1956:  
Արսեն Կիտուր, «Պատմություն ՄԴ Յնչակեան Կուսակցութեան», Ա.հտ., հրատ. ՄԴԳԿ Պատմագրութեան Կեդր. Յանձնախումբի, Պեյրուք, 1962:  
Արսեն Կիտուր, «Պատմություն ՄԴ Յնչակեան Կուսակցութեան», Բ.հտ., հրատ. ՄԴԳԿ Պատմագրութեան Կեդր. Յանձնախումբի, Պեյրուք, 1963:  
Արսեն Կիտուր, «Սրբագրեցեք Յանուն Արդարութեան», տպ. Արարատ, Պեյրուք, 1956:  
Արսեն Մարմարեան (Վահան Թոթովեց), «Զօր. Անդրանիկ Եւ Իր Պատերազմները», Կ.Պոլիս, 1920:  
Արսեն Տիրան, «Միսո Շահէն Աէֆէրեան», տպ. «Ձայն Չայրենեաց», Պոսթոն, 1903:  
Արտաշէս Սուլպեան, «Բանտային Յուշեր», հրատ. Վասպուրականի Չայրենակցական Միութեան, Երեւան, 2002:  
Արտաշէս Տէր Խաչատուրեան, «ՄԴ Յնչակեան Կուսակցութեան Մամուլը (1887-1992)», հրատ. ՄԴԳԿ Տիրուհի Ու. Երիտ. Միութեան, Պեյրուք, 1992:  
Աւետիս Թերզիպաշեան, «Անդրանիկ», տպ. «Ա. Տէր Յակոբեան», Փարիզ, 1942:  
Բագրատ Ուլուքաբեան, «Սարդարապատ», Բ.հտ., «Չայ Գիրք» մատենաշար թիւ 2, Պեյրուք, 1988;  
Բագրատ Միւսիք, «Կորչին Սոցիալիստները», Տրապիզոն, 1910;  
Բագրատ Միւսիք, «Ոգորումներ Եւ Խորհրդածութիւններ», թերթոս Արարատի թիւ 11, Պեյրուք, 1950:  
Բարթոլոմէոս Թագաճեան, «Ինքնակենսագրութիւն Բարթոլոմէոս Ծ.Վրդ. Թագաճեանի», հրատ. Զ. Յ. Միութեան, Երուսաղէմ, 1933:  
Բիւզանդ Եղիայեան, «Ատանայի Չայոց Պատմութիւն», Բ.տպագր., հրատ. Կիլիկիոյ Չայոց Կաթողիկոսութիւն, Անթիլիաս, 2012:  
«Բնութեան Դեմ - Գաղատիոյ Դատավարութիւն», հրատ. Յնչակեան Կուսակցութեան թիւ 10, Աթէն, 1894:  
Գաբրիէլ Լազեան, «Դեմքեր Չայ Ազատագրական Շարժումէն», տպ. «Յուսաբեր», Գահիրէ, 1949:  
Գաբրիէլ Սալմանեան (Սամուէլ), «Ազատագրութեան Զահակիրները», թերթոս Արարատի թիւ 31, Պեյրուք, 1960:  
Գալուստ Միւսնեան, «Երզնկա», Գահիրէ, 1947:  
Գանիկ Ստեփանեան, «Կենսագրական Բառարան», Բ.հտ., «Սովետական Գրող» հրատարակչ., Երեւան, 1981:  
Գարուշ Գարեանց, «ANFILADA», Լոս Անճելոս, 2000:  
Գերսամ Ահարոնեան, «Յուշամատեան Մեծ Եղեռնի», հրատ. Չարթոսք օրաթերթի, Պեյրուք, 1965:  
Գերզ Խուտիճեան, «Չայ Յեղափոխական Դաշնակցութեան Ծնունդը», հրատ. «Արտագերս», Երեւան, 2000:  
Գոհար Ազնաւուրեան, «Ուղեցոյց Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանի Գրական Ֆոնդերի», հրատ. ԳՍՄԳ ԳԱ Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանի, Երեւան, 1962:  
Գուրգէն Մահարի, «Այրուող Այգեստաններ», «Չայաստան» հրատարակչ., Երեւան, 1966:  
Գրիգոր Թաթուլեան, «Անթըղուած Գաղտնիքներ», Պեյրուք, 1967:  
Եղուարդ Չոփուրեան, «Զսան Կախաղանները», հրատ. «Երկիր» մատենա-

շարի թիւ 1, Կ.Պոլիս, 1921:  
Եղիկ Ծեղեճեան, «Պանդուխտ», Պեյրուք, 1999:  
Եղիշէ Չարեց, «Երկերի Ժողովածու», Ե.հտ., հրատ. ԳՍՄԳ ԳԱ Մանուկ Աբեղեանի Անուն Գրականութեան Ինստիտուտի, Երեւան, 1966:  
Եղիշէ Զաջունի, «Անդրանիկի Եւ Չայակական Առանձին Չարուածող Չօրամասի Գետ», Սիւ ճըրսի, 1976:  
Երուանդ Մեսիայեան, «Դրօշին Տակ», Սիւ Եորը, 1918:  
Երուանդ Միրիճեանեան, «Սուէտիոյ Ֆետայիներէն Զեռին» Սարգիս Պալայեան», թերթոս Արարատի թիւ 45, Պեյրուք, 1957:  
Երուանդ Փամպուրեան, «Սիւթեր ԳՅԴ Պատմութեան Գամար», Թ.հտ., հրատ. ԳՅԴ Բիւրօ, Պեյրուք, 2012:  
Երուանդ Օսեան, «Երկեր», հրատ. Չայպետիրատ, Երեւան, 1956:  
Երուանդ Օսեան, «12 Տարի Պուսէն Դուրս», թերթոս Չարթօսքի, Պեյրուք, 1937:  
Զապէլ Եսայեան, «Մուրատի Ծամբորդութիւնը», տպ. «ՆԵ-Փրես», Երեւան, 1990:  
Թեոդիկ, «Յուշարձան Ապրիլ (11) Զսանչորսի», Բ.տպագր., հրատ. Յեղասպանութեան 70-Ամեակի Լիբանանահայ Կեդր. Մարմին, Պեյրուք, 1985:  
Խաչիկ Դաշտեց, «Ռանչպարների Կանչը», Երեւան, 1984:  
Խիկար Բարսեղեան, «Մարցսիսի Տարածումը Չայաստանում», Բ.հտ, հրատ. ԳՍՄԳ ԳԱ Պատմ. Ինստիտուտի, Երեւան, 1975:  
Խոսրով Թիւթունճեան, «Ամմահներու Գետ Վասպուրական Մեր Աշխարհին Մէջ», տպ. Սեւան, Պեյրուք, 1974:  
Ճատուր Աղայեան, «Չայ Ժողովուրդի Ազատագրական Պայքարի Պատմութիւնը», հրատ. ԳՍՄԳ ԳԱ Պատմ. Ինստիտուտի, Երեւան, 1976:  
Ճատուր Աղայեան, «Չոկտեմբերը Եւ Չայ Ժողովուրդի Ազատագրական Պայքարը», հրատ. Երեւանի Պետ. Գիտելութեան Ինստիտուտի, Երեւան, 1982:  
Կառուցիկ, (թարգ. Արիման), «Միլիթարիզմը Եւ Բանուոր Դասակարգը», հրատ. «Յնչ. Յեղափ. Սօցիալ-Դեմոկրատ. Կ.-թեան» «Ընկեր» Մասնաճիւղի թիւ 7, Ռուսնոյ, 1904:  
Կարապետ Գաբրիէլեան, «Եղեռնապատում», Բ.տպագր., հրատ. Կիլիկիոյ Չայոց Կաթողիկոսութիւն, Անթիլիաս, 2002:  
Կարապետ քնն. Գալֆայեան (Գովի Եղիսի), «Գիրք Ելից Չայոց», Պեյրուք, 1955:  
«Չայ Ժողովուրդի Պատմութիւն», Զ.հտ., հրատ. ԳՍՄԳ ԳԱ Պատմ. Ինստիտուտի, Երեւան, 1981:  
«Չայաստանում Սովետական Իշխանութեան Ամրակուման Պատմութեան Մի Զանի Չարքեր», հրատ. Երեւանի Պետ. Գիտելութեան Ինստիտուտի, Երեւան, 1987:  
Չայկ Չայրապետեան, «Լեկնետար Գայը», «Չայաստան» հրատարակչ., Երեւան, 1977:  
«Չայակական Չարք», Չայկ. Գիտելութեան Գլխ. Խմբագրութիւն, Երեւան, 1996:  
«Չայակական Սովետական Գիտելութեան», Գ.հտ., Երեւան, 1978:  
«Չայակական Սովետական Գիտելութեան», Ե.հտ., Երեւան, 1979:  
«Չայրենի Երգարան», հրատ. ՄԴԳԿ Փոքր Չայոց Մասնաճիւղի, Պեյրուք, 1957:  
Չմայեակ Արամեան, «Անկախ Չայաստան», Կ.Պոլիս, 1919:  
Չովիկ Մելքիսեթեան, «Չայրենիք-Արիւտը Անչլութիւնները Եւ Չայրենադարձութիւնը», հրատ. Երեւանի Պետ. Գիտելութեան Ինստիտուտի, Երեւան, 1985:

Հրանդ Աւետիսեան, «Հայոց Ազգային Միասնութեան Յաղթանակը», հրատ. ԳԱԱ Պատմ. Ինստիտուտի, Երեւան, 1998:

Հրաչ Տասնապետեան, «Ռոստոմ-Նամականի», հրատ. ԶՅԴ-ի, Պէյրուս, 1999:

Հրաչ Տասնապետեան, «Սիմոն Չաւարեան», Բ.հ.տ., հրատ. ԶՅԴ-ի, Պէյրուս, 1992:

Հրաչիկ Սիմոնեան, «Ազատագրական Պայքարի Ուղիներում», Դ.հ.տ., հրատ. Երեւանի Պետ. Համալսարանի, Երեւան, 2010:

Հրաչիկ Սիմոնեան, «Անդրանիկի Ժամանակը», Բ.հ.տ., ԿԱԻՍԱ, Երեւան, 1996:

Մ.Աւետիսեան, «Հայ Ազատագրական Ազգային Ցիսնամեայ 1870-1920 Յուշամատեն եւ Չոր. Անդրանիկ», Փարիզ, 1954:

«1918թ. Մայիսեան Գոյապայքարի Պատմութեան Նոր Էջ (1918թ. Մայիսեան Հերոսամարտի եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 85-ամեակի Նուիրում Գիտաժողովի Նիւթեր)», Երեւան, 2005:

Մարտիրոս Ազնաւուրեան, «Երզնկայի Յեղափոխական Խմբումները եւ Զեռիի Խումբին Կազմութիւնը», Տիբրոյտ, 1973:

Մարտիրոս Տեր Ստեփանեան, «Զաչբուր Պայտեմիքը (Դրուագ Մը Հերոսական Չորը-Մարզապանէն)», հրատ. Չորը-Մարզապանի Ինքնապաշտպանութեան 75 Ամեակի Ոգեկոչման Հանդիսութեանց Գործադիր Մարմնի, Պէյրուս, 1984:

Ա. Մարտունի (Ալեքսանդր Միասնիկեան), «Կուսակցութիւնները Գաղթա-հայութեան Մէջ», Պետ. Հրատարակչ. Թիւ 190, Թիֆլիս, 1924:

Մերոպ Ընդրոմեան, «Մոռցում Դեպքեր եւ Դեմքեր Հաճնոյ 1920-ի Հերոսամարտին», Լիկոսիա, 1974:

Միհրան Աղազարեան, «Միսի Վերջին Աթոռակալը եւ Իր Մեղապարտ Գաւառակալը», Պէյրուս, 1926:

Մինաս Գոճայեան, «Պատմութիւն Չորը-Մարզապանի (Տորթ-Եոյ) Գիւղա-քաղաք Մը Կիլիկիոյ Մէջ», հրատ. Լոս Անճելոսի Չորը Մարզապանի Հայրենակ-ցական Միութեան, Լոս Անճելոս, 2006:

Միսաք Թորլաքեան, «Օրերու Հետ», Սասուն հրատարակչ., Թեհրան, 1982:

Միջալէ Վարանդեան, «Մուրատ», տպ. «Հայրենիք», Պոսթոն, 1931:

Միջալէ Վարանդեան, «Վերածնունդ Հայրենիքը եւ Մեր Դերը», հրատ. ԶՅԴ-ի, Ժընև 1910:

Մուրատ Կարապետեան, «Հայկական Կամաւորական Խմբերը եւ Ազգային Գումարտակները Կովկասեան Ռազմաճակատում (1914-1917թթ.)», հրատ. ԳԱԱ, Երեւան, 1999:

Յ.Էլմար, «Եփրեմ», հրատ. Թեհրանի Հայոց Թեմական Խորհուրդի, Թեհրան, 1964:

Յակոբ Թեղեան, «Կիլիկիոյ Աղետը», թերթոս Այգի թիւ 46, Պէյրուս, 1964:

Յակոբ Սկրտիչեան, «Անյայտ Չինուորի Յիշատակարանը», Երեւան, 1966:

Յակոբ Պօղոսեան, «Հաճնի Ընդհանուր Պատմութիւնը», հրատ. Հաճնի Հայրենակցական Վերաշինաց Միութեան Կեդր. Վարչ., Լոս Անճելոս, 1942:

Յարութիւն Թուրշեան, «Սարդարապատի Հերոսամարտը», «Հայաստան» հրատարակչ., Երեւան, 1969:

Յարութիւն Ծանկիլեան, «Յիշատակներ Հայկական Ծնածամեն», թերթոս Արարատի թիւ 34, (Ա. տպագր. Կ.Պոլիս, 1913), Պէյրուս:

«Յիսնամեակ Երիտասարդ Հայաստանի», հրատ. ՍՂՀԿ Ամերիկայի Շրջանի, Լիւ Շորը, 1953:

«Յիսնամեակ ՍՂ Հնչակեան Կուսակցութեան», հրատ. ՍՂՀԿ Կեդր. Վարչ. Թիւ 25, Փրովիտենս, 1938:

Յովակիմ Յովակիմեան, «Պատմութիւն Հայկական Պոստոսի», Պէյրուս, 1967:

«Յուշարձան Նուիրում ՍՂ Հնչակեան Կուսակցութեան Զառանգմանակին», հրատ. ՍՂՀԿ Ֆրանսայի Շրջանի, Փարիզ, 1930:

Նազենի Ս.Մուրատ եւ Առաքել Եղիկեան, «Խորոխնցի Ս.Մուրատ», տպ. Տոնիկեան, Պէյրուս, 1969:

ՆԱՍՐ, «Միութեան Կամ Համերաշխութեան Խնդիրը», հրատ. «Հայրենիք» թիւ 8, Պոսթոն, 1909:

Շաւարշ Շիշմանեան, «Կիլիկեան Սուէտիա եւ Հայ Յեղափոխութիւնը», թերթոս Արարատի թիւ 45, Պէյրուս, 1957:

«Պետրոս Միւսսեան, «Պատմագիրը Կիւրիսի», հրատ. Կիւրիսի Հայրենակ-ցական Միութեան, Պէյրուս, 1974:

«Պետրոս Տեփոյեան, «Միհրան Տամատեան», թերթոս Չարթոսքի թիւ 52, Պէյրուս, 1964:

Ռուբեն Սահակեան, «Թուրք-Ֆրանսական Յարաբերութիւնները եւ Կիլիկեան 1919-1921 թթ.», հրատ. ՀՍՄՀ ԳԱ Արեւելագիտութեան Սեկտոր, Երեւան, 1970:

Ռուբեն Տիրարեան, «Յուշամատեն Կիլիկեան Կրթ. Հաստատութեան - 75 Ամեակ», հրատ. Կիլիկեան Շրջանակի Խնամակալութեան, Հայէլ, 1996:

Ռուբեն, «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները», Բ.տպագր., Է.հ.տ., Համազգայինի Վահէ Մեթեան Տպարան, Պէյրուս, 1979:

Սարգիս Պօղոսեան, «Թըքահայ Սպայի Մը Օրագիրը», Բ.հ.տ., Փարիզ, 1947:

Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Ա.հ.տ., տպ. «Հայրենիք», Պոսթոն, 1925:

Սեպուհ, «Էջեր Իմ Յուշերէն», Բ.հ.տ., տպ. «Հայրենիք», Պոսթոն, 1929:

Սիրակ Սարիատեան, «Կեանքի Յուշերից», տպ. Նայիրի, Թեհրան, 1961:

Սուրբատ Խան Գելոֆեանց, «ԿԱՅՑ-ՍՂ Հնչ. Կուսակցութեան Գործունեու-թիւնից. Թող Փաստերը Խօսին», հրատ. ՍՂՀԿ Ամերիկայի Շրջանի Գործ. Յանձն. Լիւ Շորը, 1915:

Սուրեն Պարթեւեան, «Արարա-Հայկական Լեզիոնը», Աղեքսանդրիա, 1919:

Ստալին, «Ընդհանուր Երկեր», Ա.հ.տ, Երեւան, 1946:

Ստեփան Շահապազ, «Արփիար Արփիարեան», Պէյրուս, 1987:

Ստեփան Սապահ Գիւլեան, « Փոքր Հայի Յիշատակներ», Գահիրէ, 1916:

Ստեփան Սապահ Գիւլեան, «Բարեդի եւ Երեդի Բացատրութիւններ», հրատ. ՍՂՀԿ Ամերիկայի Շրջանի Կեդր. Վարչի Մարմնի, մատենաշար «Երիտասարդ Հայաստան» թիւ 30, Պոսթոն, 1927:

Վարդան Աւետիսեան, «Հայ Հասարակական Մտքի Չարագման Մարքս-Լենինեան Փուլի Սկզբնաւորումը», հրատ. Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի Հայկ. Բաժանմունք, Երեւան, 1976:

Վլատիմիր Պետրոսեան, «Ինդերնացիոնալիզմի Դրօշին Հաւատարիմ», «Հայաստան» հրատարակչ., Երեւան, 1983:

Վլատիմիր Պետրոսեան, «Հայաստան 1918 Թուական», Երեւան, 2007:

Վրդանես Փափազեան, «Հաճի Պէլ», թերթոս Արարատի թիւ 32, Պէյրուս, 1961:

«Բառասնամեակ Երիտասարդ Հայաստանի», հրատ. ՍՂՀԿ Ամերիկայի Շրջանի, Լիւ Շորը, 1944:

## ՕՏԱՐ ԼԵԶՈՒՌՎ ԳԻՐՔԵՐ

«Arsiv Belgeleyire Ermeni Faatliyetleri 1914-1918», Genelkurmay ATASE ve Denetleme Baskanligi Yayinlari, Ankara, 2006.

Cosroe Chaqueri, «The Armenians of Iran», Harvard University Press, USA, 1998.

Hanna Batatu, «The Old Social Classes and the Revolutiomyary Movements of Iraq», Princeton Univesity Press, New Jersy, 1982.

Houry Berberian, «Armenians and the Iranian Constitutional Revolution of 1905-1911», Westview Press, 1911.

Moustafa Onar, «Saimbeilli», 2-ci basim, T.C. Adana Valiligi Kultur Yayinlari, Adana, 2002.

Emanuel Aliprandi, «1915, Cronacadi Un Genocidio», pub. My Book, Italy, 2009.

Shukru Hanioglu, «Preparation for a Revolution», Oxford University Press, 2001.

Ehsahan Yarshatar, «Encyclopedia Iranica», Costa Messa, CA Mazda Publishers, 1998.

Serj Afanasian, «La Victoire De Sardarabad-Armenie, 21-29 Mai, 1918», Paris, 1985.

## ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԵՐ, ՏԱՐԵԳԻՐՔԵՐ, ԲԱՑԱՈՒԿՆԵՐ

«Ermeni Arastirmalari», 2003-2004, no 12-13:

«Iranian Studies», 1997, vol. 30, no.1-2, winter/spring:

«Ալլայօւ-Օրացոյց», Փարիզ, 1935:

«Արարատ» Բացառիկ, Պէյրուս, 2011:

«Լրաբեր», Երեւան, 1970, թիւ 5:

«Հայկազեան Հայագիտական Հանդես», թիւ ԱԹ., Պէյրուս, 1998:

«Հայկազեան Հայագիտական Հանդես», թիւ ԻԲ, Պէյրուս, 2009:

«Հնչակեան Տարեգիրք», Ա. տարի, հրատ, ՍՂՀԿ Ամերիկայի Շրջանի, Փրովիտենս, 1931:

«Հնչակեան Տարեգիրք», Բ. տարի, հրատ, ՍՂՀԿ Ամերիկայի Շրջանի, Փրովիտենս, 1932:

«Նորք», Երեւան, 1922, թիւ 22:

«Պահակ» Բացառիկ, Պոսթոն, 1921:

«Պատմա-Բանասիրական Հանդես», Երեւան, 1967, թիւ 1:

«Լիբանանահայ Պատկերազարդ Օրացոյց», Եղիա Տուպագեան, Դ.Տարի, Պէյրուս, 1939:

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

«Ազատամարտ» Կ.Պոլիս, ՀՅԴ օրաթերթ

«Անահիտ» Փարիզ, անկախ ամսաթերթ

«Արարատ» Պէյրուս, ՍՂՀԿ օրաթերթ

«Արարատ Երիտասարդական» Պէյրուս, ՍՂՀԿ Ուս. Միութեան պարբերաթերթ

«Բիւզանդիոն» Կ.Պոլիս, անկախ օրաթերթ

«Գաղափար» Թիֆլիս, ՍՂՀԿ օրաթերթ

«Գործաւոր» Թիֆլիս, ՍՂՀԿ օրաթերթ

«Դրօշակ» ՀՅԴ պաշտօնաթերթ

«Երիտասարդ Հայաստան» Պոսթոն-Նիւ Եորք ՍՂՀԿ եռօրեայ

«Երկիր» Թիֆլիս, ՀՅԴ շաբաթաթերթ

«Երկիր» Կ.Պոլիս, ՍՂՀԿ օրաթերթ

«Երկրի Ձայն» Թիֆլիս, անկախ շաբաթաթերթ

«Չանգ» Սոֆիա, ՍՂՀԿ շաբաթաթերթ

«Չարթօնց» Պէյրուս, ՈւՎԿ օրաթերթ

«Ժամանակ» Կ.Պոլիս, անկախ օրաթերթ

«Կայծ» Կ.Պոլիս, ՍՂՀԿ Ուս. Միութեան ամսաթերթ

«Կոհակ» Կ.Պոլիս, ՍՂՀԿ շաբաթաթերթ

«Հայաստանի Կոչակ» Նիւ Եորք, անկախ շաբաթաթերթ

«Հայրենիք» Պոսթոն, ՀՅԴ ամսաթերթ

«Հնչակ Հայաստանի» Երեւան, ՍՂՀԿ շաբաթաթերթ

«Հնչակ» ՍՂՀԿ պաշտօնաթերթ

«Մշակ» Թիֆլիս, անկախ օրաթերթ

«Ցառաջ» Փարիզ, ՀՅԴ օրաթերթ

«Նոր Աշխարհ» Կ.Պոլիս, ՍՂՀԿ օրաթերթ

«Նոր Դար» Թիֆլիս, անկախ օրաթերթ

«Նոր Երկիր» Փարիզ, ՍՂՀԿ շաբաթաթերթ

«Նոր Կենցաղ» Լոնտոն, Կերակազմ. Հնչակ. կիսամսեայ

«Պալքանեան Մամուլ» Ուուստոնգլ՝Սոֆիա, ՍՂՀԿ շաբաթաթերթ

«Սովետական Հայաստան» Երեւան, Համայնակար օրաթերթ

«Սուրիական Մամուլ» Հալեպ, ՍՂՀԿ օրաթերթ

«Սուրիանդակ» Կ.Պոլիս, անկախ օրաթերթ

«Վեմ» Փարիզ, ՀՅԴ ամսաթերթ

## ԱՐԽԻՒԱՅԻՆ ՆԻՒԹԵՐ

Լայնօրէն օգտագործուած են նիւթեր Հայաստանի Ազգային Արխիւն (Երեւան) եւ Հնչակեան Արխիւն (Պէյրուս):

Մասնակի ձեւով օգտագործուած են նիւթեր ՀՅԴ Արխիւի Հիմնարկէն (Պոսթոն), Գրականութեան եւ Արուեստի Ռեսուրսի Արխիւն (Երեւան) եւ Վրաստանի Ազգային Արխիւն (Թիֆլիս):

